ԱՐՏԱՇԵՍ
ՈՍԿԵՐՉՅԱՆ

ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

КНИГА ДОЛЖНА БЫТЬ
ВОЗВРАЩЕНА НЕ ПОЗЖЕ
УКАЗАННОГО ЗДЕСЬ СРОКА .

891.99(09) Եսիհ Էմին. Ա.Ա.93
Պ-93 Պետր. գան. Արր.
Արր. Եսիհ Էմինի ա
կան հայացքներ

ԱՐՏ. ՈՍԿԵՐՉՅԱՆ

8 +
ՀԱԿ
ՅԿՊ1(032 Ճաւհայաւ)
ջնջուած է 1961 թ.

ՍՏ. ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԱՑՔԸՆԵՐԸ

II
A 31862
41183





ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
1947

АРТАШЕС ВОСКЕРЧЯН

ЛИТЕРАТУРНЫЕ ВЗГЛЯДЫ
СТЕПАНА ШАУМЯНА

(на армянском языке)

Армгиз, Ереван, 1947



ԳԼՈՒԽ I

ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Շահումյանի գրական-քննադատական հոդվածները սերտորեն կապված են նրա հասարակական-քաղաքական կրքոտ պայքարի հետ և նրա պարտիական գործունեության անբաժանելի մասն են։ Ս. Շահումյանի, ինչպես և Սուրեն Սպանդարյանի գրական-քննադատական հոդվածների գոյության մասին շատերը տեղեկություն չունեն, և այդ մասամբ հասկանալի է։ Ս. Շահումյանը գրել է գերազանցապես քաղաքական թեմաների շուրջը. նա հրապարակախոս է, քաղաքագետ և ամենից առաջ հայտնի է որպես քաղաքական դործիչ-բոլշևիկ։ Սակայն նրան նվազ չափով գիտեն որպես փայլուն գրաքննադատական հոդվածների հեղինակի, որպես մի մարդու, որը ուներ սուր գրիչ, քննադատական հոտառություն և գեղարվեստական ճաշակ։ Նա վիթխարի գիտելիքների տեր էր գրականության բնագավառում և ջերմորեն սիրում էր այն։ Եվ այդ ունի իր պատմությունը։ Դեռ պատանի հասակից Ս. Շահումյանը առանձին հետաքրքրություն է հանդես բերում դեպի գրականությունը։ Գրող Արազին, որ Ս. Շահումյանի ընկերն է եղել Թիֆլիսի Ռեալական ուսումնարանում, իր հիշողություններում պատմում է.

«Դպրոցական տարիներում Շահումյանը, բացի դեպի հասարակական-պատմական խնդիրներն ունեցած հետաքրք-

գրությունից, առանձին սեր ուներ դեպի գրականությունը։ Նա գրական նյութը ճաշակ ուներ և այն հազվագյուտ ընթերցողներից էր, որոնք համակվում են գրվածքով, կարծես հեղինակի հետ «ապրում են»։ Նա աստիճանաբար կարդում էր ռուս և օտար ականավոր հեղինակներին։ Սիրում էր բանաստեղծությունը։ Նրա մոտ գնալով, հաճախ լսում էի այս կամ այն բանաստեղծից կտորներ. նա արտասանում էր զգացմունքով։ Կլասիկ բանաստեղծներից կարդում էր Բայրոնին, Գյոթեին, Հայնեին, Շեքսպիրին, ռուսներից՝ Պուշկինին, Լերմոնտովին, Նեկրասովին։ Հայ բանաստեղծներից ևս հաճախ լսում էի նրանից Ա. Խահակյանի տողերը.

Ա III 31862

Տիեզերքի պերճ հյուսվածքն եմ,
Իմ մեջ արևն է փայլում...

4493

Հետագայում նրա ուշադրությունն էր գրավում ռուս հեղափոխական բանաստեղծ «Նարոդովոլեց» Յակուբովիչը, որը գրում էր Սիբիրից Պ. Յա. ստորագրությամբ։ Հայ գրողներից այդ տարիներին նա արդեն կարդացել էր Րաֆֆու, Շիրվանզադեի, Նար-Դոսի գրվածքները»[1]։ Երիտասարդ Շահումյանի գրական հայացքների ձևավորումը ընթացել է ռևոլուցիոն քաղաքական հայացքների ձևավորման հետ զուգահեռ։ Շահումյանի առաջին ուսուցիչները, որոնց անմիջական ազդեցությամբ ձևակերպվել են նրա գրական հայացքները, եղել են ռուս մեծ ռևոլուցիոն-դեմոկրատները՝ Բելինսկին ու Չերնիշևսկին, որոնց նա իրավացիորեն համարում է մտքի տիտաններ։ Վերջիններիս նկատմամբ Շահումյանը միշտ բարձր հիացմունքով է արտահայտվել և հատուկ սեր տածել։

Դեռևս Թիֆլիսի Ռեալական ուսումնարանում սովորելու շրջանում (1892—1898 թ.) երիտասարդ Շահումյանը ակտիվ կերպով հետաքրքրվում է գրական-հասարակական հարցերով, կազմակերպում է աշակերտական խմբակներ, զեկուցումներ է կարդում ռուս և հայ հրապարակախոսների ու

1 «Մարտակոչ», 1925 թ., № 213։

ՀԱՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳՐԱԴԱՐԱՆ

քննադատների՝ Բելինսկու, Նալբանդյանի, Գ. Արծրունու մասին։ Մեզ հասած նրա այդ շրջանի նամակները և ժամանակակիցների հիշողություններն ակնհայտորեն ցույց են տալիս, թե ինչպիսի՛ կրքով ու ուշադրությամբ էր նա հետևում գրական-հասարակական կյանքին։

Հենց այդ շրջանից էլ սկսած երիտասարդ Սեւինյանը սկսում է լրջությամբ ու սիստեմատիկաբեն ուսումնասիրել հայ, ռուս և եվրոպական կլասիկների, գրողների ու քննադատների ստեղծագործությունները և նրանց ազդեցությամբ սկսում է մշակել իր էսթետիկական հայացքները, ավելի ճիշտ՝ առաջին հիմնաքարը դնում այդ ասպարեզում։ Նա հատկապես տարվում է Բելինսկիով և Չերնիշևսկիով, որոնց ազդեցությունը նրա մտավոր զարգացման վրա հսկայական է։ Հենց այդ տարիներին է դրվում գեղարվեստական գրականության և քննադատության բնագավառին վերաբերող նրա գիտելիքների ամրակուռ հիմքը, որը հետագայում իր սքանչելի պտուղներն է տալիս։ Մի նամակում (դեկտեմբեր, 1896 թ.) ուղղված իր ապագա կնոջը՝ Տեր-Գրիգորյանին, երիտասարդ Սեւինյանը գրում է. «Ես գրել եմ ձեզ, կարծեմ, որ այս տարի մտադիր եմ լավ ծանոթանալ եվրոպական և, կարելի է ասել, նույնիսկ համամարդկային երեք հանճարների (Շեքսպիր, Շիլլեր և Գյոթե) գրվածքների հետ։ Կարդացել եմ արդեն և լավ գիտեմ Շեքսպիրի մի քանի գլխավոր գործերը, ինչպես՝ «Համլետ», «Մակբեթ», «Ռոմեո և Ջուլիետա» և «Ինչպես կուզեք»։ Այսօր պետք է կարդամ Շիլլերի «Ավազակներ» դրաման։ Ես Ձեզ կուղարկեմ Շիլլերի կենսագրությունը և մի քանի ուրիշ գործեր»։ Մի այլ նամակում (1899 թ.) Շահումյանը հաղորդում է նույն այդ հաստիտուտում, որ ինքը լինելով Ռիգայում՝ «ծանոթացել է Զոլայի, Գյուի դը-Մոպասանի, Անատոլ Ֆրանսի հետ և այլն»։ Նրա այն ժամանակվա և հետագա գրագրությունների մեջ առանձնահատուկ տեղ են գրավում նրա ասույթները ժամանակակից ռուս գրողների մասին. Չեխովի, Կորոլենկոյի,

Գորկու, Վերեսաևի և այլոց անունները հաճախ են հիշվում Ս. Շահումյանի նամակներում։

«Мир божий»-ի հունվարի համարում,—գրում էր Ս. Շահումյանը Ռիգայից (1899 թ.),—լավ-լավ բաներ շատ կան, որոնք նույնպես հափշտակելի են, ինչպես «Два счастья»-ն կամ «В поисках света»-ն, իսկ «Русское богатство»-ի նոր համարների համարում մի հրաշալի բան կա, որը խորհուրդ կտայի կարդալ, այն է՝ «Необходимость»»—Կորոլենկոյի»։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Վերեսաևի երկերի դնահատականը, որի մասին խոսք կլինի քիչ հետո։

Այդ փաստերը փայլուն ապացույց են այն բանի, որ Ս. Շահումյանի մեջ դրականության հանդեպ բավականին ցայտուն կերպով դրսևորվել է դեռևս պատանեկան տարիներից։ Այդ ժամանակվանից սկսած նա սիստեմատիկորեն և խորապես ուսումնասիրում էր անցյալի մեծ դրողների ստեղծագործությունները և ուշադիր հետևում գեղարվեստական դրականության նորություններին, աշխուժորեն արձագանքում, պլեխանովապես նամակների միջոցով, դրական երևույթներին, աշխատում էր որպես թարգմանիչ, գրում էր գեկուցումներ ռուս և հայ քննադատների ու հրապարակախոսների մասին (Բելինսկի, Նալբանդյան և այլն)։ Այդ շրջանին է վերաբերում Գորկու «Մեկ անգամ աշնանը» նշանավոր պատմվածքի թարգմանությունը, որը առանձին գրքով լույս տեսավ 1901 թ.։ Նրա ժամանակակից հայկական մամուլը դրական դնահատական տվեց այդ թարգմանությանը։

Այդ շրջանի՝ աշակերտական և ուսանողական շրջանի, նամակների ուսումնասիրությունը, ինչպես և ժամանակակիցների հիշողությունները, ցույց են տալիս, թե ի՛նչ ուղղությամբ էր ընթանում երիտասարդ Շահումյանի դրական հայացքների ձևավորումը։ Արդեն այդ ժամանակ նա հանդես է գալիս որպես արվեստի ռեալիստական սկզբունքի ջերմ պաշտպան, վճռականորեն մերժում է ռեակցիոն ռոմանտիզմը և բարձր է դնահատում արվեսաի և դրականության ճանաչողական ու դաստիարակչական նշանակությունը։

Իր նամակներից մեկում՝ գրված 1896 թվին, այսինքն, երբ հեղինակն ընդամենը 18 տարեկան էր, սրտի խորին դառնությամբ է հիշում նա իր դիտած մի ներկայացում, երբ նրա մասնակից դերակատարներից և «ոչ մեկը չէր հասկանում նախ իր դերը և ապա առհասարակ ինչ բան է բեմը, թատրոնը, դեղարվեստը։ Այդ րոպեին,—սարկազմով ավելացնում է Շահումյանը,—«հասարակությանը դեղարվեստի միջոցով կրթելու» գործին իբր թե կոչված այդ դերասաններն՝ մարդկության այդ ուսուցիչները, չափազանց զզվելի և միևնույն ժամանակ չափազանց ողորմելի էին թվում ինձ»։[1]

Այս պահանջկոտությունը արվեստի դաստիարակչական բարձր նշանակությունը չհասկացող, չըմբռնող դերասաններից, նրա թունոտ սարկազմը նրանց հասցեին, որոնք իրենց անելուրջ մոտեցմամբ նսեմացնում, վարկաբեկում են արվեստը, որն իրավացիորեն ճանաչված է որպես հասարակության դաստիարակման կարևոր գործոն,—բնորոշ է երիտասարդ Շահումյանի դրական-էսթետիկական հայացքների համար։ Այս փաստը ցույց է տալիս, որ Ստեփանը դեռ այդ շրջանում շատ խորն էր ըմբռնում արվեստի, հատկապես ռեալիստական արվեստի ուժն ու դաստիարակչական նշանակությունը, նրա ճանաչողական դերը։ Հենց նույն նամակում մենք կարդում ենք թատրոնի մասին հետևյալ արժեքավոր տողերը. «Թատրոնը հասարակական կյանքի ճիշտ արտահայտիչը պետք է լինի. որպես մի հայելի՝ նա պետք է ներկայացնի այդ կյանքը ճշտությամբ, այնպես, ինչպես որ նա է,—գրում է քննադատը և ավելացնում դերասանների մասին. «Ներանք ցույց են տալիս մեզ մեր իսկական պատկերները» բեմում։

Երիտասարդ Շահումյանը պաշտպանելով հանդերձ արվեստի օգտակարության տեսությունը՝ միաժամանակ խորապես զգում ու ըմբռնում էր գրականության, պոեզիայի գեղեցկությունը, նրա էսթետիկական արժանիքները, հանդես բերելով նուրբ ու զարգացած ճաշակ։ Իր գրական ըմբռնումները մշակելով արվեստի բարձր նմուշների ուսումնասիրու-

---

1 «Խորհրդային արվեստ», № 20, 1935, Երևան։

թյամբ, նա բացորոշ ձևով զանազանում է իսկական գրականությունը այն արտադրանքներից, ինչ սրհամարհանքով անվանում է «թխաբանություն», այսինքն անորակ, խոտան գրվածքներ։ Նա մի յուրատեսակ ոգևորություն է արտահայտում ու բուռն սեր տածում դեպի գրականությունը, հատկապես պոեզիայի բարձր արտադրանքները, ընդգծում նրանց գեղեցկությունն ու բարոյական ներգործող ուժը, ազդեցությունը։

Նույն թվին (1896 թ. նոյեմբերի 14) գրած մի այլ նամակում մեջ բերելով Թումանյանի «Անուշ» չքնաղ պոեմի առաջին վարիանտից մի քաղվածք, հեղինակն անկեղծ ոգևորությամբ շարադրում է իր հայացքները պոեզիայի մասինն նկատի ունենալով հարցի կարևորությունը մենք այն մեջ ենք բերում ամբողջությամբ։ Ահա այդ տողերը.

«Հիանալի բան է էդ անդեր «ПОЭЗИЯ»-ն՝ բանաստեղծությունը։ Մարդ կարդալիս (ի հարկե ոչ թե մի թխաբանություն, այլ իսկական գեղարվեստական ստեղծագործություն կարդալիս) բոլորովին փոխվում, վերանում է... հոգին լցվում է մի անասելի քաղցր՝ բերկրանքով և, հետզհետե լայնանալով, մեծանալով, մոռացնել է տալիս մարդկային կյանքի բոլոր կեղտերը՝ նրա ախտն ու մուրը, բարձրացնում է մեզ մեր ամենօրյա ցածրությունից և շրջապատում է մեզ մի լուսեղեն քողով, որը յուր շափազանց փայլով արգելում է տեսնել հիշած ախտն ու մուրը։ Բայց կան մարդիկ, որոնք հերքում են գեղարվեստի ուժը, բանաստեղծությունը հիվանդոտ երևակայության ախտ են համարում. դրանք, գուցե և, ուղիղ են մասամբ, այսինքն այն չափով, թե գեղարվեստը մարդկային կյանքի անհրաժեշտ պայմաններից մեկը չէ՝ поэзия не есть насущный хлеб для человека[1]։ Դա, գուցե և, ուղիղ է, բայց հերքել նրա ուժը, ստախոս երևակա անվանել այն բոլոր մարդկանց, որոնք ասում են, թե իրենք զմայլվում են գեղարվեստով, դա իմ կարծիքով սխալ է։ Դա նշանակում է չիմանալ, որ մարդուս «լավի և վատի», «սքանչելիի և զզվելիի» հասկացողությունները նրա կրթությունից են

---

1) Պոեզիան ամենօրյա հաց չէ մարդու համար։

կախված։ Լավ է, թե՝ վատ, դրա մասին չեմ խոսում, բայց այս բոպեիս ես այնպես եմ կրթված, այնպես են կազմված իմ սիրտն ու միտքը, որ գեղարվեստը՝ «բարին, գեղեցիկն ու ճշմարտությունը», շատ մեծ ազդեցություն են ունենում ինձ վրա։ Այդ մարդկանց այնպես կրթում են, կամ իրենք իրենց այնպես կրթում, որ գեղարվեստը ոչ մի ազդեցություն չի ունենում դրանց վրա. այդ բանի վրա հիմնվելով նրանք հանդգնում են ծաղրել այն մարդկանց, որոնք խոնարհվում են գեղարվեստի առաջ»։

Որքա՜ն անկեղծ զգացմունք ու ոգևորություն կա այս տողերում, արվեստի, պոեզիայի էսթետիկական և բարոյական կոչմի ինչպիսի՜ խորը և նուրբ ըմբռնում։ Երիտասարդ հեղինակը հետևելով իր առաջին դրական ուսուցիչներին, հատկապես Բելինսկուն, կարող էր զմայլվել գեղարվեստով, նա իսկական բանաստեղծությունը համարում է «բարու, գեղեցիկի և ճշմարտության մարմնացում», որը մարդու հոգին լցնում է քաղցր բերկրանքով և մոռացության է տալիս մարդկային կյանքի բոլոր կեղտերը, ախտն ու մուրը։

Այդ տողերի իմաստը ճիշտ ըմբռնելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ երիտասարդ Շահումյանի նույն շրջանի ընդհանուր դրական հասկացողությունները։ Հակառակ դեպքում կարելի է հանգել այն թյուր եզրակացությանը, թե երիտասարդ հեղինակը, տարվելով պոեզիայի գեղեցկությամբ ու բարոյական ընմբռնումներով, անհրաժեշտ չափով չի շեշտել արվեստի դաստիարակչական դերը, տուրք է տվել արվեստի վերացական, ռոմանտիկական սկզբունքին և այն, ինչ Չերնիշևսկին սահմանել է արվեստի համար՝ «կյանքի նկատմամբ դատավճռի» դեր խաղալ, գնահատել այն,—չի պահպանել։ Այո, կրկնում ենք, եթե սահմանափակվենք միայն անձնական նամակի հիշյալ հատվածով, կարելի է այդպիսի եզրակացության գալ, որովհետև երիտասարդ հեղինակի այդ տողերը կարող են այդպիսի տպավորություն թողնել. բայց, երբ վերցնում ենք այդ հա-

գործողությունը նրա նույն շրջանի դրական էսթետիկական ըմբռնումների ընդհանուր կապակցության մեջ, հեշտությամբ կարող ենք խուսափել այդպիսի հետևությունից և հասկանալ, որ երիտասարդ հեղինակը կանգնած է արվեստի ռեալիստական սկզբունքի վրա. նրա համար արվեստը կյանքի ճշմարիտ արտացոլումն է։ Այդ մենք տեսանք թատրոնի մասին արտահայտած նրա կարծիքները քննելիս։ Եվ դա էլ եղել է նրա համար ղեկավարող սկզբունք այդ շրջանում։

Երբ մենք խոսում ենք երիտասարդական շրջանի նրա դրական ըմբռնումների ու հետաքրքրությունների մասին, այդ բնավ չի նշանակում, որ Շահումյանն այդ ժամանակ արդեն ունեցել է ձևակերպված, վերջավորված դրական հայացքներ և ղեկավարվել է դրանցով։ Բնա՛վ ոչ, այդ նշանակում է միայն, որ Շահումյանը դրականությամբ հետաքրքրվել է, այն էլ լուրջ և սիստեմատիկորեն, դեռ աշակերտական (Թիֆլիսի Ռեալական ուսումնարանի) և ուսանողական (Ռիգայի) շրջանում։ Եվ այդ ընթացքում հաճախ, գլխավորապես նամակների միջոցով, դրսևորվել են նրա նոր սաղմնավորվող դրական հայացքները. նա թողել է հետաքրքիր ու արժեքավոր դիտողություններ արվեստի և առանձին գրողների ու դրական երևույթների մասին։ Այդ բոլորի ի մի հավաքումը հնարավորություն կտա պարզաբանելու երիտասարդ Շահումյանի դրական ըմբռնումների ձևավորման ուղին, նրա զարգացումը դեպի մարքսիստական գրականագիտության դիրքերը։ Այստեղ մենք կարող ենք միայն նշել, որ երիտասարդ հեղինակը զերծ չմնալով հանդերձ արվեստի, գրականության խնդիրների վերացական ըմբռնումներից՝ հիմնականում պաշտպանում է նրա ռեալիստական ուղղությունը և բարձր է գնահատում այն, ելնելով առաջավոր քննադատության, հատկապես ռուս ռևոլյուցիոն դեմոկրատ լուսավորիչների էսթետիկական ժառանգությունից։

Այդ հանգամանքն էլ իր խոր կնքիքն է դրել Շահումյանի նույն շրջանի դրական ըմբռնումների ու գնահատությունների վրա։

Այս առումով խիստ հետաքրքրական են հեղինակի կարծիքները եվրոպական և ռուսական առանձին կլասիկների ու ժամանակակից աշքի ընկնող գրողների մասին։ Մենք նրա այդ շրջանի նամակներում հաճախ ենք հանդիպում այնպիսի անունների, ինչպիսիք են՝ Շեքսպիրը, Գյոթեն, Շիլլերը, Զոլան, Մոպասանը, Պուշկինը, Տուրգենևը, Կորոլենկոն, Չեխովը, Գորկին, Վերեսաևը և ուրիշները իրենց դիպուկ բնորոշումներով։ Պակաս հետաքրքրական չեն Շահումյանի կարծիքները նաև առանձին հայ գրողների ու գրական երևույթների մասին. Խ. Աբովյանը, Րաֆֆին, Դ. Աղայանը, Հովհ. Թումանյանը և այլն ստանում են իրենց գնահատականը։ Եվ այդ գնահատականները ոչ միայն բացահայտում են հեղինակի գրական-էսթետիկական ըմբռնումները, համակրանքն ու հակարանքը, այլև նրա նոր ձևավորվող ռևոլուցիոն քաղաքական դիրքորոշումը։

Սակայն, բացի գրական հետաքրքրությունից, երիտասարդ Սահյանն ուներ և այլ ձգտումներ, որոնք ամենից շատ էին հուզում նրան։ Նա հետաքրքրվում էր հասարակական-քաղաքական հարցերով։ 90 թվականներին երիտասարդ Ս. Շահումյանը, որ դեռ մարքսիստ չէր, զգում է իրեն ժամանակի հասարակակարգի անարդարացիությունը, որը վիթխարի ծանրությամբ ճնշում էր այն ամենը, ինչ կենդանի էր և կենսունակ և ելք էր փնտրում դրանից։ Դեռևս դպրոցական նստարանի վրա նա նպատակ է դնում ճանաչել կյանքը, ուսումնասիրել այն։ Կյանքը նրան անսահմանելի էր թվում։ Պատանու այդ ապրումների մասին բավական պարզությամբ պատմված է նրա այն նամակում, որտեղ նա խոսում է թատրոնի և դերասանների մասին (1896 թ.)։ Խոստությամբ հարձակվելով ժամանակակից հասարակության և մարդկանց վրա՝ նա գրում է. «Ձեզ հայտնի է, որ իմ անձիս վրա ես շատ եմ մտածում, հետևում եմ ուշադրությամբ իմ մտավոր և բարոյական աշխարհի զարգացման գործին և աշխատում եմ, ինքս ինձ վրա դիտողություններ անելով, հասկանալ ինչ

բան է մարդս և այն դիվային մեխանիզմը, որ կոչվում է «կյանք»... Եվ իսկապես՝ ի՞նչ կարող է լինել ավելի լուրջ, ավելի նշանավոր զգացմունք, քան ինքնահաճությունը, ինքնագիտակցությունը, երբ կարելի է այսպես ասել»: Շարունակության մեջ նամակի հեղինակը դրսևորել է մեզ արդեն հայտնի բացասական վերաբերմունքը դեպի այն չհասկացող դերասանները, որոնք «ճեղքում էին օդը իրենց ձեռքերով» և զվարճացնում հիմար հասարակությանը...»: Այս առնչությամբ նա հիշում է Ժակի խոսքերը՝ Շեքսպիրի «Ինչպես կուզեք» կոմեդիայից.

«Աշխարհը համայն մի բեմ է միայն
Եվ մարդիկ ու կանայք սոսկ դերասաններ,
Ամեն մեկն ունի յուր մուտքն ու ելքը
Եվ մի մարդ յուր կյանքում խաղում է շատ դեր:

«Մի զարմանալի մտախաղով (ассоциация идей) հիշեցի ես հանկարծ մարդկության ամենամեծ հանճարի՝ Շեքսպիրի, արտահայտած այդ խոսքերը,—գրում է երիտասարդ Շահումյանը,—որ մի քանի շաբաթ առաջ կարդացել էի և կարծես նոր էի հասկանում: Այո, այս աշխարհը թատրոն է, նույնպիսի մի թատրոն, որը հինգ րոպե առաջ դրավել էր իմ ամբողջ ուշադրությունը. այս մարդիկ ոչնչով չեն զանազանվում այդ դերասաններից, որովհետև չեն հասկանում իրենց դերերը, նրանք «ապրող մարդկանց» դերերն են կատարում և չգիտեն ինչ բան է «մարդը», ինչ բան է «կյանքը»: Չեն հասկանում և չեն կարող հասկանալ, քանի որ չեն էլ ուզում մտածել այդ բանի մասին, ինչպես այդ դերասանները իրենց դերերի մասին... Ճանապհիր քեզ շշնջաց սրտիս մեջ մի ձայն... դուրս արի խայտառակ քաոսից, թոթափիր քեզնից այդ մահաբեր խավարը, որի մեջ դանվել ես դու մինչև այժմ, և որում խարխափում են քո բոլոր շրջապատողները... մի խոսքով՝ ապրիր գիտակցաբար, ճանապհիր քեզ»... Ահա իմ առաջ դրած ամենագլխավոր խնդիրը, որը միշտ և

ամեն տեղ լինում է ինձ հետ»[1]: Երջապատող կյանքի նկատմամբ եղած սուր դիտողությունը երիտասարդ Ս. Շահումյանին (ինչպես երևում է նամակից) չի տանում դեպի հոռետեսական եզրակացություններ: Հարցասեր պատանին խորազնին կերպով ելք է փնտրում ստեղծված փակուղուց դուրս գալու համար, ոչ թե հոռետեսության մեջ, որը տանջում էր այն ժամանակվա շատ երիտասարդ մարդկանց հոգին, ոչ թե ինքնասպանության մեջ, որը փոքրոգի մարդկանց գործն էր, այլ կյանքի վերակառուցման համար մղվող պայքարի մեջ: Նա հանդես է բերել ուժեղ կամք և կյանքի բուռն սեր, պայքարել է այդ սիրո համար: Ա.Հա Տեր-Գրիգորյանին գրած Շահումյանի (1896 թ.) նամակի տողերից. «Իսկ քո այն հարցին, թե ավելի լավ չէ՞ մեռնել, քան թե այսպես ապրել, ես պատասխանում եմ անկեղծ՝ ոչ, հարկավոր է ապրել, մահ փնտրելը կատարյալ փոքրոգություն է, որ ամոթ է բերում քեզ, կռվել, հաղթել և հաղթած դարձյալ ապրել և ապրել»: Այսպիսի խորհուրդ էր տալիս 18-ամյա պատանի Ստեփան Շահումյանը (ծնվել է 1878 թ. Թիֆլիսում): Հետագայում Ս. Շահումյանը դառնում է հասարակական-քաղաքական կյանքի փակուղուց դուրս գալու ճշմարիտ ուղին: 1898 թ. ավարտելով Թիֆլիսի Ռեալական ուսումնարանը, 1900 թ. նա մտնում է Ռիգայի պոլիտեխնիկումը, որտեղ սովորում է մինչև 1902 թիվը: Ռիգայում եղած ժամանակ 21-ամյա Շահումյանը հետաքրքրվում է սոցիալիզմի հարցերով, «հիմնավորապես ծանոթանում է բանվորական շարժմանը». այդ մասին նա հաղորդում է իր նամակներից մեկում (1899 թ.). «Ես բացի պոլիտեխնիկումի համար պատրաստվելուց, պարապում եմ և ուրիշ առարկաներով: Հիմնավոր կերպով ծանոթացա բանվորական շարժման հետ, այն հասարակական շարժման հետ, որ կրում է սոցիալիզմ անունը»[1]:

---

1 Նամակը հրապարակված է «Խորհրդային արվեստի» 1935 թվի նոյեմբերի 1-ի № 20-ում: Ս. Շահումյանի նամակներից մեջ բերված հատվածները վերցված են նույն այդ ամսագրի 1936 թվի հունվարի 15-ի համարում հրապարակված նյութերից:

Այդ շրջանից սկսվում է Շահումյանի ակտիվ ռևոլյուցիոն գործունեությունը։ Ինչպես գրում է ընկեր Ա. Միկոյանը, Շահումյանը «վաղ է հետաքրքրվում հասարակական կյանքով։ Դեռ Թիֆլիսի Ռեալական ուսումնարանում նա կազմակերպում է աշակերտական խմբակներ։ Դեպի քաղաքականությունն ունեցած այդ ջերմ հետաքրքրությունը արդեն Ռիգայի պոլիտեխնիկումում ստանում է ակտիվ ռևոլյուցիոն գործունեության ձև, որի համար և արձակվում է այնտեղից իբրև «անբարեհույս»։

Շահումյանին չհաջողվեց ավարտել ինստիտուտը։ Ադմինիստրացիայի կարգադրությամբ նրան հեռացրին ինստիտուտից ուսանողության մեջ ռևոլյուցիոն գործունեություն ծավալելու համար և արտաքսեցին հայրենիք։

Այսպիսով, Շահումյանը գրական հետաքրքրությունների հետ զուգընթաց, ավելի ուժեղ հետաքրքրություն է հանդես բերում հասարակական-քաղաքական պայքարի հարցերի նկատմամբ, ակտիվ մասնակցություն է ունենում համառուսական ուսանողական ռևոլյուցիոն շարժմանը և երիտասարդ հասակում զինվորագրվում է բանվոր դասակարգի ազատագրության համար պայքարող մարտիկների բանակին։ Զևավորվող այդ ռևոլյուցիոն հայացքներն էլ իրենց կնիքն են դնում նրա գրական ըմբռնումների վրա, պայմանավորում դրանք։ Այդ կարելի է հաստատել թեկուզ Խ. Աբովյանի և Րաֆֆու մասին արտահայտած կարծիքներով։

Դեռևս Թիֆլիսի Ռեալական ուսումնարանում աշակերտած ժամանակ (1897 թ.) Շահումյանը բարձր է գնահատում հայ նոր գրականության ուշեղվի հիմնադիր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը, գտնելով, որ այդ գիրքը «սրբազան ոգևորությամբ է լցնում կարդացողի սիրտը», որ դա «ամբողջովին հեղինակի արցունքով» է շաղախված և «ամբողջովին բանաստեղծության և անկեղծ ոգևորության արտադրություն է»։

Այդտեղ, այս արժեքավոր տողերում, որոնք խիստ կարևոր են երիտասարդ հեղինակի՝ դեպի մեծ լուսավորիչն ու-

նեցած վերաբերմունքի պարզաբանման համար, բացակայում է դրվածքի հասարակական արժեքավորումը, սահմանափակված է լոկ միայն ընդհանուր վերացական ու բարոյախոսական դնահատականով։ Այլ կերպ է Շահումյանը վարվում Բաֆֆու «Կայծեր»-ն արժեքավորելիս, երկու տարի հետո, Ռիգայի ուսանող եղած ժամանակ (1899 թվին գրած մի նամակում)։ Նախ և առաջ, նա վճռականորեն դեմ է արտահայտվում այդ վեպի մասին տարածված այն կարծիքներին, թե այդ «դիրքը ամբողջ մի էպոխա է կազմել հայ ինտելիգենցիայի կյանքում», և որ «մեր ռևոլուցիոն շարժման ամենաթունդ գարկերից մեկն է եղել», իր գարմանքն է արտահայտում այդպիսի տեսակետների առթիվ, հետո ավելացնում. «Ձեր առաջ նստած է մի հեքիաթաբան դերվիշ, պատմում է, փչում է, ինքը ոգևորվում, երևակայական փիլիսոփայություններ է անում ու էլի շարունակում է փչել»։

Այս խիստ բացասական վերաբերմունքը Բաֆֆու գրական ուղղության, նրա ռոմանտիզմի նկատմամբ, ինչպես երևում է, անմիջապես պայմանավորված է դեպի Բաֆֆին ու նրա վեպի հասարակական-քաղաքական ուղղությունն ունեցած հեղինակի բացասական դիրքորոշումով։ «Կայծեր»-ի հիշյալ դնահատականի մեջ երիտասարդ ռևոլուցիոները դրսևորում է ոչ միայն ռոմանտիզմի նկատմամբ ունեցած իր մերժողական վերաբերմունքը, այլև տալիս է վեպի հասարակական-գաղափարական արժեքավորումը, որքան դա հնարավոր է եղել մի անձնական նամակում, դրանով էլ պայմանավորում է իր ժխտողական վերաբերմունքը բաֆֆիական նացիոնալիստական ռոմանտիկայի հանդեպ։ Մեր տրամադրության տակ եղած նամակների այդ հատվածները աներկմիտ կերպով ցույց են տալիս, թե ինչպիսի դարգացում է տեղի ունենում երիտասարդ Շահումյանի դրական ըմբռնումների ու մոտեցումների մեջ, որոնք իրենց հերթին անդրադարձնում են նրա ձևավորվող քաղաքական ռևոլուցիոն հայացքները։ Այս տեսակետից ուշագրավ է և վ. Վերեսաևի «Առանց ճանապարհի» («Без дороги») վիպակի բնութագիրը

տրված նույն 1899 թվին։ Խորհուրդ տալով ապագա կնոջը կարդալ անկեղծության ու պարզության շնչող այդ գրվածքը՝ երիտասարդ հեղինակը միաժամանակ անհրաժեշտ է համարում նշել նրա հիմնական գաղափարական ուղղությունն ու արժանիքը։ «Դա նոր գրողների մեջ,—կարդում ենք նրա նամակում,—աչքի ընկնող հեղինակ է, իսկ իմ հիշատակած գրվածքը նրա գլուխ-գործոցն է համարվում. իսկ իմ կարծիքով միակ գրվածքն է, որը սակայն հեղինակի համար դափնիներ է հյուսում։ Այդտեղ շոշափում է ժամանակակից երիտասարդության հոգու ամենանուրբ թելերին զարկող հարցը—ի՞նչ պետք է անի, ինչի՞ պետք է հավատա, ի՞նչ ճանապարհով պետք է ընթանա ինքնազոհության պատրաստ մարդը»[1]։

Վերևասևի հիշյալ գրվածքին նվիրված արժեքավոր այս տողերը ոչ միայն բնութագրում են տվյալ գրողին, նրա գրական առավելությունները՝ պարզությունն ու անկեղծությունը, որոնք, ինչպես Շահումյանն է ասում, «խորը համակրանք են ներշնչում դեպի հեղինակը», այլև նրա ստեղծագործության գաղափարական բովանդակությունը և հասարակական արժեքը։ Այսպիսով վերացական, գերազանցապես գրական ու էթիկական գնահատականներից ու որակումներից Շահումյանն ասպիճանաբար անցնում է գրական երկերի ու երևույթների հասարակական ու գաղափարական նշանակության արժեքավորմանը։ Դեմոկրատական, լուսավորական էսթետիկայի ազդեցությամբ ռեալիստական արվեստին գերակշռություն տալու սկզբունքը հեշտացնում է այդպիսի մի անցումը։ Գրական հայացքների այդ էվոլուցիան, որն իր հերթին արտացոլում է նրա քաղաքական հայացքների ձևավորման ընթացքը և պայմանավորվում նրանով, իր բնական զարգացմամբ հասնում է գրականության դերի ու նշանակության մարքս-լենինյան ըմբռնմանը, դասակարգային էության գնահատությանը։ Հենց դրանումն է նրա գրական հայացքների զարգացման բուն իմաստը։

---

[1] «Խորհրդային արվեստ», № 1, 1936 թ.։

Այդ նոր շրջանում, երբ Շահումյանը Ռիգայում ջանասիրությամբ ուսումնասիրում էր սոցիալիզմի մարքսյան ուսմունքը, ծանոթանում է նաև բանվորական շարժմանը և հատուկ քայլերով կանգնում է մարքսիզմի դիրքերի վրա։ Ահա այդ ավելի հասուն շրջանում Շահումյանը դրականությունն ու արվեստը դիտում է որպես իդեոլոգիայի սպեցիֆիկ ձևեր, որպես հասարակական-քաղաքական դասակարգային պայքարի զենք և դրական երևույթները քննարկում է ու լուսաբանում մարքսիզմի դիրքերից, պատմության մատերիալիստական ըմբռնմամբ։

Երբ մի կողմ թողնենք նրա մեջամտությունը «Մուրճ»-ի և «Մշակ»-ի միջև եղած բանակռվին, որտեղ նա քարկոծում է անձնական միտումներ ունեցող հրապարակախոսներին, ապա առաջին ցայտուն ելույթն այդ ուղղությամբ պետք է համարել նրա նշանավոր հոբելյանական ճառը Ղազարոս Աղայանի 40-ամյա գործունեության առթիվ՝ 1902 թվի մայիսին։ Ինչպես հայտնի է, արտաքսվելով Ռիգայից՝ Շահումյանը վերադառնում է Թիֆլիս։ Այդ ժամանակ Թիֆլիսում տոնում էին Ղազարոս Աղայանի 40-ամյա հոբելյանը։ Ռևոլուցիոն-մարքսիստական հայ երիտասարդության անունից հոբելյանական նիստում կրքոտ ճառով հանդես է գալիս Ստեփան Շահումյանը։ Հոբելյանը կազմակերպող բուրժուա-նացիոնալիստական ինտելիգենցիան հնարավորություն չի տալիս Շահումյանին ավարտելու իր խոսքը։ Շահումյանի հոբելյանական ճառը խիստ քաղաքական բնույթ էր կրում և ուղղված էր ցարական ինքնակալության և հայկական նացիոնալիստական ինտելիգենցիայի դեմ։ Գրական հարցերին Շահումյանը մոտենում էր քաղաքական, պարտիական տեսակետից։ Անողոք քննադատության ենթարկելով ցարական Ռուսաստանի գոյություն ունեցող սոցիալ-քաղաքական կարգերը, հայկական բուրժուական ինտելիգենցիայի ստորաքարշությունը և սահմանափակվածությունը՝ Շահումյանը ռևոլուցիոն պայքարի կոչ էր անում ընդդեմ ցարիզմի բռնակալական ռեժիմի։

Որպես համոզված մարքսիստ, նա գտնում է, որ գրագիտությունը պետք է ծառայեցնել այդ վեհ գործին, ցարիզմի և կապիտալիզմի խորտակման համար մղվող պայքարին։

Դիմելով Աղայանին՝ երիտասարդ ռևոլյուցիոները բարձր պաթոսով բացագանչում է.

«Ազգային կուլտուրական գործունեության փոխարեն, որին դուք նվիրել եք առավելապես ձեր ուժերը, մենք քաղաքական, հեղափոխական կռիվ ենք քարոզում։ Բուրժուական «ազգասիրության» ու «ազատամտության» փլատակների վրա մենք կարմիր, պրոլետարական դրոշ ենք պարզում, որի վրա դրում ենք առայժմ՝

Կռի՛վ բռնակալության դեմ,

Կեցցե՛ քաղաքական-ազատությունը...»։

Շահումյանն այդ ճառում հանդես է գալիս, ինչպես ինքն է նշում առաջաբանի մեջ, «նոր աշխարհայացքով զինված, ուսյալ նորագույն հեղափոխական ավազանում մկրտված մեր ուսանող երիտասարդության» անունից։ Այսպիսով նրա հոբելյանական ճառը, ըստ էության, այդ նոր, մարքսիստական աշխարհայացքով զինված ռևոլյուցիոն երիտասարդության գրական ու քաղաքական ելույթն է, նրա յուրատեսակ մի մանիֆեստը,—պատմական խոշոր նշանակություն։ Ինչպիսի թերություններ ու թույլ տեղեր էլ որ ունենա նրա այդ ճառը, իսկ այդպիսի թույլ տեղեր կարելի է նշել երիտասարդ ռևոլյուցիոների այդ ելույթում[1], այնուամենայնայ-

---

1 Այդ թերություններից հիշենք միայն երկուսը՝ կարևորները։ Առաջինը՝ երիտասարդ Շահումյանը ռուս ռևոլյուցիոն-դեմոկրատներին (Բելինսկուն, Չերնիշևսկուն, Դոբրոլյուբովին և այլն) անվանում է ազատամիտներ, լիբերալներ, թեև այդ բառը գործ է ածում պատմական առումով, այսինքն՝ նրա մեջ ռևոլյուցիոն բովանդակություն է դնում։ Որքան էլ վերապահում է արված, այնուամենայնիվ տերմինոլոգիական անճշտությունն ակնհայտ է։ Ընդհանրապես պետք է նկատել, որ լիբերալիզմի որակումը, որպես «միայն գործունեության եղանակ» և ոչ որպես «դավանանք, ոչ էլ ծրագիր», ինչպես և 1861 թվի գյուղացիական ռեֆորմի և դրա հետ կապված տարբեր հասարակական հոսանքների դիրքի բնութագիրը թերի է և չի բավարարում այդ հարցերի մեր ներկա ըմբռնումներին։ Այդ թերությունը Շահումյանը հետագայում, հասուն շրջանում հաղթահարել և վերանայել

նիվ դրանք ոչ մի կերպ չեն կարող նսեմացնել նրա պատմական արժանիքներն ու խոշոր նշանակությունը: Ավելին, այդ ճառը կարող է համարվել նրա հեղինակի գրական-քաղաքական հասունության լավագույն վկայագիրը, և դա վիթխարի նշանակություն ունի բոլոր նրանց համար, ովքեր ուսումնասիրում են Շահումյանի կյանքն ու հասարակական-քաղաքական ու գրական գործունեությունը: Նա ոչ միայն կոչ է անում տապալել բռնակալության լուծը, ոչ միայն պահանջ է դնում գրողների առաջ ճեռք բերել հետևողական և առաջադեմ աշխարհայացք (հակառակ դեպքում նրանք դատապարտված են կործանման) և գրականության ու արվեստի հարցերը դիտում է պրոլետարիատի պայքարի տեսակետից, այլև նշում է գրականության զարգացման սերտ առնչությունը՝ քաղաքական աղատության հետ:

«Մեր կարծիքով,—ասում է Շահումյանը,—նա, ով ուզում է, որ հայ ժողովուրդը գրականություն ունենա, նա պիտի ամենից առաջ կռիվ հայտարարի այն պայմաններին, քաղաքական այն կարգերի դեմ, որոնք արգելում են ժողովրդի, այդ հասարակական օրգանիզմի աղատ բնական զարգացումը»:

է հիշյալ հարցերի լենինյան դնահատականի ոդով («Արդիապանությունը և հետանկարներ» հոդվածը, երկեր, հ. I, էջ 184): Երկրորդ նկատողությունը վերաբերում է Միր. Նալբանդյանի և Գր. Արծրունու անունները միատեղ հիշատակելուն: Շահումյանի ճառից կարելի է ստանալ այն տպավորությունը, որ կարծես նա մի մակարդակի վրա է դնում ռևոլյուցիոն-դեմոկրատ Նալբանդյանին և լիբերալ Արծրունուն: Ճիշտ է, Արծրունին որպես հրապարակախոս ունեցել է մի շարք առավելություններ, որով նա տարբերվել է իր ողորմելի հաջորդներից, որոնց անխնա մատակում է Շահումյանն իր հիշյալ ճառում: Բայց այդ բոլորը դեռ հիմք չեն տալիս նրանց անունները միատեղ հիշատակել: Ճառի այդ թույլ տեղը նույնպես լիովին խմբագրվել ու հաղթահարվել են հեղինակի ավելի հասուն շրջանի գործունեության մեջ: Վերջին հարցի առնչությամբ հետաքրքիր է Սուրեն Սպենդարյանի հիշատակին նվիրված հոդվածը («Մեր Սուրենը»), որը կարևոր նշանակություն ունի XIX դարի հայ հասարակական մտքի մարքսիստական գնահատության համար: Այստեղ Շահումյանը լիովին ժխտաղակար դիրք ունի դեպի Ս. Նազարյանցը, Գ. Արծրունու և մյուս լիբերալների հասարակական-քաղաքական հայացքները, որը միանգամայն ճիշտ է:

Շահումյանի այս ճառի հիմնական ու պատմական նշանակությունը ոչ միայն այն է, որ այնտեղ դրսևորված են երիտասարդ ռևոլյուցիոների քաղաքական-մարքսիստական տեսակետները, այլև այն, որ Շահումյանի բերանով առաջին անգամ հայ իրականության մեջ շարադրված են դրականության ու արվեստի դերի ու նշանակության մարքսիստական ըմբռնման կարևոր սկզբունքները։ Այդ փորձը վկայում է, որ նա հայ մարքսիստական դրականագիտության հիմնադիրն է և առաջին ներկայացուցիչը։ Սա է այդ ճառի երկրորդ կարևոր, պատմական արժեքը։

Այդ ճառից հարյուր խմորատիպ օրինակ թողնելով իր ընկերներին՝ Շահումյանը նույն թվին մեկնում է արտասահման (Բեռլին) ուսումը շարունակելու։ Արտասահմանումն էլ նա ծանոթանում է Լենինի հետ և դրանով վերջնականապես որոշվում է նրա կյանքի ուղին։ Նա դառնում է պրոֆեսիոնալ ռևոլյուցիոներ և 1904 թվին վերադառնում է Անդրկովկաս, որպես արդեն ձևակերպված մարքսիստ- լենինիստ, բոլշևիկ։ Այստեղ նա աշխատում է ընկեր Ստալինի անմիջական ղեկավարությամբ, որպես նրա մերձավոր գինակիցը և դրսևորում է թեորետիկ մարքսիստի, կրակոտ հրապարակախոսի և տաղանդավոր պարտիական կազմակերպչի իր բոլոր ընդունակությունները։ Շահումյանի կապը և նամակագրությունը Լենինի հետ, վերջինիս քննադատական դիտողությունները Շահումյանի մի նամակի առթիվ[1], ինչպես և նրա անմիջական աշխատանքը ընկեր Ստալինի ղեկավարությամբ, հնարավորություն են տալիս նրան է՛լ ավելի խոր և բազմակողմանի կերպով յուրացնելու մարքսիզմի մեծ ուսմունքը և փայլուն դործունեություն ծավալելու հանուն բոլշևիկյան պարտիայի տեսական ու քաղաքական սկզբունքների պաշտպանության՝ ընդդեմ նրա ամեն տեսակ թշնամիների։

Անդրկովկասում սկսվում է մի նոր, հարուստ և բեղմնավոր շրջան Շահումյանի կյանքում, նրա ռևոլյուցիոն-քաղաքական գործունեության ու գրական հրապարակախոսության

---

1 Լենին, երկեր, հ. XVII, էջ 89։

ասպարեզում։ Այդ շրջանումն է, որ նա գրում է իր մի շարք արժեքավոր տեսական աշխատությունները մարքսիստական փիլիսոփայության, դասակարգային պայքարի տեսության և ազգային հարցի մասին[1]։ Նույն այդ շրջանումն է Շահումյանը գրում և իր գրական-քննադատական հոդվածները հայ և ռուս գրականության և առանձին գրողների մասին։ Գրական այդ հոդվածների իմաստը կարելի է ճիշտ ու լրիվ ըմբռնել միայն այն դեպքում, եթե այդ քննադատական ելույթները դիտենք հեղինակի մարքս-լենինյան մեթոդոլոգիայի լույսի տակ։

---

1 «Դասակարգերը ժամանակակից եվրոպական հասարակության մեջ» (1905 թ.), «Էվոլյուցիոնիզմը և ռևոլյուցիոնիզմը հասարակական գիտության մեջ» (1905 թ.), «Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան» (1906 թ.), «Ազգային կուլտուրական ավտոնոմիայի մասին» (1914 թ.), «Ինտելիգենցիան և նացիոնալիզմը» (1916 թ.) և այլն։

ԳԼՈՒԽ II

ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑԱԾՔՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՄԱԼՆԵՐԸ

I

Նախքան Ստեփան Շահումյանի գրականագիտական հայացքների բնութագրմանն անցնելը, անհրաժեշտ է շարադրել այդ հայացքների մեթոդոլոգիական հիմունքները, ծանոթանալ նրանց փիլիսոփայական նախադրյալներին։

Շահումյանը բազմակողմանիորեն զարգացած բոլշևիկ էր, կրթված մարքսիստ-լենինիստ։ Նա տիրապետում էր մարքսիստական-մատերիալիստական ամբողջական աշխարհայացքին։ Իզուր չէ, որ Լենինը ազգային հարցի վերաբերյալ Շահումյանին գրած նամակում (դեկտեմբերի 6, 1913 թ.) նրան դասում է շարքը այն ընկերների, որոնք «հատկապես խորամիտ են և զբաղվում են տվյալ հարցով»[1]։ Իսկ Սերգո Օրջոնիկիձեն «Բագվի 26 կոմունարների պայծառ հիշատակին» հոդվածում Շահումյանին անվանում է «թեորետիկական մարքսիզմի ծանր հրետանի»[2]։ Եվ իսկապես Շահումյանը թեորետիկ մարքսիստ էր։ Անմիջական պրակտիկ ռևոլյուցիոն գործունեությունը և մշտական հալածանքը հնարավորություն չտվեցին Շահումյանին ավարտելու իր մտա-

---

1 Լենին, Երկեր, հ. XVII, էջ 89։

2 Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, Մոսկվա, 1939 թ., էջ 151։

հղացած թեորետիկական աշխատությունները, մասնավորապես, «Տիեզերական թուրթակը» խորագիրը կրող այն հոդվածների շարքը, որոնք ուղղված էին դաշնակցության տասաբան վարանդյանի դեմ և ուրիշ փիլիսոփայական հոդվածներ, որոնք մեզ չեն հասել: Բայց այն, ինչ Շահումյանը կարողացավ անել Թիորիայի բնագավառում և ինչ թողել է մեզ, բավական պայծառությամբ բացահայտում է նրա աշխարհայացքի հիմունքները, նրանց մարքսիստական-մատերիալիստական էությունը:

Այժմ, երբ մենք թերթում ենք Շահումյանի այնպիսի տեսական աշխատություններ, ինչպիսիք են՝ «Դասակարգերը ժամանակակից արոպական հասարակության մեջ» (1905 թ.) «Էվոլուցիոնիզմն ու ռևոլուցիոնիզմը հասարակական դիտության մեջ» 1905 թ.), «Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան» (1906 թ.), «Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին» (1914 թ.), «Ինտելիգենցան և նացիոնալիզմը» (1916 թ.) և այլն, աչքի են զարնում Շահումյանի մոտեցման խորությունը և լայնությունը քննարկվող հարցերի նկատմամբ: Նա հանդես գալիս որպես մարքսիստական-լենինյան հայացքների տաղանդավոր մասսայականացնող և ջերմ պաշտպան: Շահումյանի թեորետիկական հոդվածների իսկական էությունը պատկերացնելու և նրանց նշանակությունը ճիշտ գնահատելու համար հարկավոր է դիտել դրանք ոչ թե այսօրվա տեսակետից (այդ իհարկե անհրաժեշտ է, սակայն բավարար լինել չի կարող), այլ այն ժամանակվա հայ իրականության կոնկրետ-պատմական իրադրության տեսակետից: Շատ բան, որ Շահումյանը ասել է դասակարգերի և դասակարգային պայքարի, էվոլուցիոնիզմի և ռևոլուցիոնիզմի, ինտելիգենցիայի և ազգային հարցի մասին, բոլոր այդ աստիճները մեզ կարող են թվալ պարզ, մատչելի, լուծելու համար առանձնահատուկ աշխատանքի կարիք չունեցող: Բայց այդպես չէր այն ժամանակ, երբ գրվել են այդ աշխատությունները. մեզ այժմ պարզ թվացող հարցը պարզաբանելու համար պահանջվում էր հսկայական եռանդ, և կատա-

դի ու տևական դիսկուսիաների առարկա էր դառնում։ Երբ մենք այդ աշխատությունների գնահատմանը մոտենում ենք՝ հաշվի առնելով կոնկրետ-պատմական իրադրությունը (իսկ այդ անհրաժեշտ է), այն ժամանակ Շահումյանի աշխատությունների նշանակությունը էլ ավելի ակներև է դառնում։ Բայց այդ ամենևին չի նշանակում, թե Շահումյանի տեսական կամ գրականագիտական-քննադատական աշխատությունները միայն պատմական արժեք ունեն, որ դրանք կորցրել են իրենց նշանակությունը արդիականության համար։ Ընդհակառակն, Շահումյանի այդ աշխատությունները, ինչպես կտեսնենք ներքևում, չեն կորցրել իրենց մեծ նշանակությունը և՛ մեր օրերի համար։

XIX դարի և XX դարի սկզբի հայ իրականության մեջ եղած հասարակական մտքի և հասարակական հոսանքների պատմության մարքս-լենինյան լուսաբանության համար չի կարելի Շահումյանի ասույթների կողքով անցնել, նրանք խիստ անհրաժեշտ են տվյալ հարցերի մարքսիստական հետազոտության համար։ Եվ դա հասկանալի է։ Մշտական կապը և դրագրությունը Լենինի հետ և համատեղ աշխատանքը ընկեր Ստալինի ղեկավարությամբ՝ օգնեցին Շահումյանին մարքսիզմի տեսակետից ճշտորեն գնահատել հասարակական հոսանքները և երևույթները հայկական իրականության մեջ։ Շահումյանը բավականաչափ կրթված մարքսիստ էր, որպեսզի գնահատեր այդ երևույթները ուսուցիոն մարքսիզմի ոգով, հանուն պրոլետարական ուսուցյիայի։ Ահա թե ինչու Շահումյանի թեորետիկական և ընդհանրապես ողջ հրապարակախոսական ժառանգությունը վիթխարի նշանակություն ունի, որի վրա պետք է աշխատել, որը պետք է ուսումնասիրել։

Մարքսն ու Էնգելսը սիրում էին ասել, որ իրենց ուսմունքը դոգմա չէ, այլ գործողության ղեկավարություն։ Կա դոգմատիկ և ստեղծագործական մարքսիզմ։ Շահումյանը ստեղծագործական մարքսիզմի ներկայացուցիչ էր և կոմունիզմի մեծ հիմնադիրների ուսմունքը դիտում էր ոչ որպես

դոգմա, այլ գործողության ղեկավարություն։ Շահումյանը հենց այդպես էր հասկանում մարքսիզմը։ Հասարակական երևույթները գնահատելիս՝ նա կիրառում էր մարքսիստական-մատերիալիստական մեթոդը՝ դիալեկտիկան։ Առանց դիալեկտիկայի իսկական մարքսիզմ լինել չի կարող։ «Դիալեկտիկան մարքսիզմի հոգին է»[1],—սովորեցնում է ընկեր Ստալինը։ Շահումյանը ճիշտ հասկացավ դիալեկտիկական մեթոդի դերն ու նշանակությունը բոլշևիկյան պարտիայի համար։ Նա «Ազգային հարցը Ռուսաստանում» հոդվածում (1906 թ.) ընդգծում է դիալեկտիկական մեթոդի դերը, նրա առավելությունները մետաֆիզիկական մեթոդից, և դիալեկտիկական մեթոդը անվանում է ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի ուժն ու պարծանքը։ «Այն, ինչ որ ճշմարիտ է ընդհանրապես, կարող է երբեմն սխալ լինել մասնավորապես։ Մենք դիտենք, որպես մարքսիստներ, որ բացարձակ վերացական ճշմարտություններ չկան, որ ճշմարտությունը միշտ կոնկրետ է, մեզ համար չկա «այո՛ այո՛ և ոչը ո՛չ»[2]։ Հանդես գալով ֆորմալ տրամաբանության օրենքների, մետաֆիզիկ մտածողության դեմ՝ Շահումյանը դրանց հակադրում է դիալեկտիկական մեթոդը։ Պատմությունից վերցրած օրինակներով նա ապացուցում է երևույթների նկատմամբ դիալեկտիկական մոտեցման գիտական բնույթը։ Ահա Լեհաստանի հարցը։ Երբ Լեհաստանը ապրստամբեց 60-ական թվականներին, Կարլ Մարքսը կողմնակից էր նրա լիակատար անջատմանը Ռուսաստանից։ Բայց հետագայում ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիան՝ ինքնակալության դեմ մարտնչողների ուժերը մասնատող այդպիսի անջատումը համարում էր սխալ և չէր պաշտպանում, որովհետև Լեհաստանի պայմանները և շահերը և, ամենից առաջ, միջազգային պրոլետարիատի շահերը այլ էին 60-ական թվականներին, քան XIX դարի վերջին և XX դարի

---

1 Ստալին, Լենինիզմի հարցերը, 1939 թ., 11-րդ հրատ., Մոսկվա, էջ 247։

2 Շահումյան, Երկերի ժողովածու, հ. I, էջ 96, 1925 թ.։

ակզբին։ «Այն, ինչ որ օգտակար էր այն ժամանակ, վնասակար է այժմ և այլն։ Ահա թե ինչ է նշանակում, որ «ընդհարտությունը միշտ կոնկրետ է», որ պետք է միշտ ինկատի ունենալ ժամանակի և տեղի պայմանները։

Ջինված՝ այդ տեսակ մտածելու, հասարակական հարցերը քննելու այդ մեթոդով,—«սոց.դեմ.-ի ուժը և հեղափոխությունը կազմող դիալեկտիկական մեթոդով»[1] մեր պարտիան լուծում է ազգային և այլ բարդ հարցեր։

Մի այլ տեղ («Ազգային կուլտուրական ավտոնոմիայի մասին») ընդդիմանալով հայ նացիոնալ-սոցիալիստներին, որոնք ազգային հարցը լուծում էին ընդհանրապես, առանց հաշվի առնելու տվյալ ազգային հարցի կոնկրետ բովանդակությունը, Շահումյանը ամենից առաջ այդ փորձերին հակադրում է հարցի մարքսիստական-դիալեկտիկական մոտեցումը։ «Մարքսիզմը,—ասում է Շահումյանը,—չունի և չի կարող ունենալ ամենաբուժիչ ռեցեպտ ազգային հարցում։ Մարքսիզմի համար, եթե ցանկանում եք, գոյություն չունի մեկ ազգային հարց, նա հավաստում է ազգային հարցերի գոյություն։ Այլ կերպ ասած, մարքսիզմը լուծում է ազգային հարցը յուրաքանչյուր առանձին դեպքում, նրա առանձնահատուկ և կոնկրետ դրսևորումների մեջ, և ոչ թե ընդհանրապես, ժամանակից և իրադրության պայմաններից անկախ»[2]։

Մարք-լենինյան մեթոդով, բոլշևիկյան պարտիայի ուժն ու պարծանքը հանդիսացող դիալեկտիկական-մատերիալիստական մեթոդով զինված էր մոտենում Շահումյանը ժամանակի հասարակական կյանքի ամենաբարդ հարցերի լուծմանը։ Ոչ միայն ազգային հարցում, այլև դասակարգային պայքարի այլ երևույթների մեջ, թեորիայի և գրականության հարցերում Շահումյանն ամբողջովին կիրառում է դիալեկտիկական մեթոդը։ Բայց այդ մեթոդը ոչ մի հաջողություն ունենալ չէր կարող, եթե Շահումյանը չգիտենար հասարա-

---

1 Շահումյան, *Երկերի ժողովածու*, հ. I, էջ 98, 1925 թ.։

2 Շահումյան, «Հոդվածներ և ճառեր», 1923 թ., ռուսերեն, էջ 43—44։

կության զարգացման ամբողջ մեխանիզմը և նրա դիալեկտիկական բնույթը, դասակարդային պայքարի էությունը, որպես հասարակական պրոգրեսի բովանդակության և շարժիչ: Որպես մարքսիստ-լենինիստ՝ Շահումյանը ոչ թե ընդհանրապես դիալեկտիկական մեթոդի կողմնակից էր, չէ՞ որ դոյություն ունի և Հեգելի իդեալիստական դիալեկտիկան, այլ հենց մարքսիստական-մատերիալիստական դիալեկտիկայի, պատմության մատերիալիստական ըմբռնման կողմնակից էր: Նրա «Էվոլուցիոնիզմն ու ռևոլուցիոնիզմը հասարակական դիտության մեջ», որ գրված է 1905 թ., նվիրված է մարքսիստական սոցիոլոգիայի՝ պատմական մատերիալիզմի հիմնավորմանը: Այդ հարցից էլ սկսենք:

Ըստ մարքսիստական «պատմության մատերիալիստական ըմբռնման»,—ասում է Շահումյանը,—սկզբնական, այլ կերպ ասած, պատմության շարժիչ գործոնը համարվում է տնտեսական գործոնը: Մնացած բոլորը, այսպես կոչված իդեոլոգիական գործոնները՝ կրոնը, բարոյականությունը, դիտությունը, իրավունքը, հանդես են գալիս իբրև սկզբնականից ծնունդ առած երկրորդական գործոններ: Խոսելով արտադրողական ուժերի մասին՝ Շահումյանն ընդգծում է օբեկտիվ ռեալ աշխարհի արտացոլումը մարդկանց գլխում, հանդես գալով արտացոլման մարքս-լենինյան թեորիայի պաշտպանությամբ՝ նա գրում է.

«Արտադրողական այդ ուժերը օգտագործելիս՝ մարդիկ որոշ հասարակական կամ արտադրական հարաբերություններ են սահմանում իրար մեջ: Դեպի բնությունն ու մեկը մյուսի նկատմամբ սահմանված փաստական հիմունքների վրա է միայն առաջանում այդ հարաբերությունների որոշակի ըմբռնումը: Իրականությունը, ռեալ, օբեկտիվ աշխարհն արտացոլվում է մարդկանց գլխում և կերպարանավորվում է որպես կրոնական, դիտական, իրավական և այլ տեսակետներ, որոնք, իր հերթին, մարմնացվում են որպես հասարակական հիմնարկներ, եկեղեցիներ, պետություն և այլ հաստատություններ:

Հասարակության արտադրողական ուժերն անընդ-

հատ ծավալվում և փոփոխվում են։ Դրանց համեմատ՝ նոր-յած արտադրողական ուժերի ձևերին՝ փոխվում են նաև մարդկանց արտադրական փոխհարաբերությունները ու նրանց հարաբերությունները աշխատանքի պրոցեսում։ Այդ հանգամանքի հետևանքով փոփոխություն է առաջանում նաև հասարակական գիտակցության մեջ—երևան են գալիս նոր դաղափարներ, կրոնական և իրավական նոր նորմաներ։ Այս-տեղից պարզ է, թե ինչ մտքով են պատմության սկզբնական շարժիչ ֆակտորները համարվում հասարակական արտադրո-ղական ուժերն և արտադրական հարաբերությունները, կամ այլ խոսքով՝ հասարակության տնտեսական ստրուկտուրան։ Մնացյալ իդեոլոգիական ֆակտորները փոփոխվելով՝ ընթա-նում են դրանց հետևից, հարմարվում դրանց և այդպիսով երե-վան են գալիս որպես երկրորդական, դրացնից բխող ֆակ-տորներ։ Հասարակական տնտեսական ստրուկտուրան դա այն հիմքն է, որի վրա կառուցվում է իդեոլոգիական «վեր-նաշենքը»[1]։

«Վերնաշենքը» համարելով երկրորդական, «բազիսից» բխող, Շահումյանը մատնանշում է նրա հակադարձ ներգոր-ծությունը «բազիսի» վրա և ցույց է տալիս այդ ներգոր-ծության դիալեկտիկական բնույթը։ Բնորոշելով հասարակա-կան կյանքի տնտեսական հիմքը, որի զարգացումը տեղի է ունենում «տարերայնորեն», այսպես ասած՝ հասարակական գիտակցությունից, դասակարգերից և մարդկանց կամ-քից անկախ, Շահումյանը շեշտում է իդեոլոգիայի, կոլեկ-տիվ գիտակցության նշանակությունը, «դասակարգերի և դասակարգային պայքարի դերը», որպես վճռական գործոնի հասարակական զարգացման մեջ։ Այս մասին Շահումյանը գրում է.

«Բոլորովին այլ բան ենք մենք տեսնում իդեոլոգիայի բնագավառում։ Այստեղ դեր է խաղում հասարակական, կո-լեկտիվ գիտակցությունը, որը միշտ ետ է մնում անհատա-կան գիտակցությունից և ամեն մի էպոխայում տարբեր ձև-վավորում է ստանում, մարմնանալով հասարակական հիմ-

1 Շահումյան, Երկերի ժողովածու, հ. I, էջ 41—42։

նարկութիւններում։ Այն կոլեկտիվները, որոնց միջոցով արտահայտվում է հասարակական գիտակցությունը, կոչվում է դասակարգ (класс)։ Դասակարգերը այն մասերն են, որոնց բաժանում է հասարակությունը արտադրողական պրոցեսում։ Դրանք միատարր են իրենին (однородные в себе), խմբավորում են միատեսակ վիճակական դրություն ու շահեր ունեցող մարդկանց և տրամագծորեն հակադիր են դեպի հասարակության այլ նման մասերը։ Ամենաուժեղ և կյանքում իշխող դասակարգը արտադրողական պրոցեսում իր կոլեկտիվ կամքը հասարակական կամք է դարձնում, մարմնացնում է այդ հասարակական ու պետական հաստատությունների մեջ, որոնք նրա ձեռքին դառնում են հետագա դասակարգային պայքարի միջոցներ։ Այդպիսով պետությունը (ներկա դեպքում բոլորից շատ այդ «իրավական վերնաշենքն» է մեզ զբաղեցնում) պատմության մեջ միշտ հանդես է եկել որպես դասակարգային տիրապետության կազմակերպություն։ Բայց, ինչպես մենք գիտենք, կյանքը շարունակ առաջ է շարժվում. հասարակության արդյունաբերության ուժերը անընդհատ աճելով՝ առաջացնում են հասարակական նոր համբավորումներ, կյանքի են կոչում նոր դասակարգեր, նոր շահեր, ձգտում են հայտնաբերում նոր «վերնաշենքեր» ստեղծելու, նոր, այլ տեսակի իրավական կազմակերպություններ հիմնելու և այլն։ Հին, իշխող դասակարգերը պաշտպանելով գոյություն ունեցող կարգերի հետ սերտ կապված իրենց կենսական շահերը՝ չեն կարողանում հոշոտակամ դիջել իշխանությունը,—և մենք տեսնում ենք, որ կրկին դասակարգային կռիվ է առաջ գալիս, վերջ ի վերջո հաղթությունը նորից ուժի կողմն է անցնում։

Ահա այստեղ է, որ հասարակական տարերային էվոլուցիոն զարգացումը փոխարինվում է անխուսափելի կատակլիզմներով, ցնցումներով, հեղափոխություններով, որոնք վերացնում են մարդկանց փաստական հարաբերություններին չհամապատասխանող, հասարակության հետագա զարգացումը կասեցնող հին «վերնաշենքը» (Շահումյան, երկերի ժո-

ղվածոե, հ. I, էջ 43—44)։ Շահումյանի այս հատվածներում տրված է պատմության մարքսիստական-մատերիալիստական ըմբռնման իր ժամանակի համար խոր բնութագրությունը, համառոտ ձևով շարադրված է մարքսիստական սոցիոլոգիայի էությունը։

Մարքսիստական սոցիոլոգիայի այդ շարադրման մեջ մեզ համար և մեր թեմայի համար առանձնապես հետաքրքրականէ և կարևոր Շահումյանի դրույթը՝ օբեկտիվ, ռեալ աշխարհը մարդկանց գիտակցության մեջ արտացոլվելու մասին, ինչպես նաև այն մասին, որ իդեոլոգիան հասարակական և կոլեկտիվ գիտակցությունէ և արտահայտում է ռեալ գոյություն ունեցող և գործող դասակարգերի շահերը։

Այստեղ Շահումյանը պաշտպանում է արտացոլման մարքս-լենինյան թեորիան, որն այնպես խորազնին և բազմակողմանիորեն մշակել ու զարգացրել է Լենինը «Մատերիալիզմ և էմպիրոկրիտիցիզմ» հանճարեղ աշխատության մեջ։ Շահումյանի այդ դրույթներին մենք դեռ կվերադառնանք և վերադառնալու ենք հաճախակի, որովհետև դրանք կազմում են ճանաչողության մարքս-լենինյան թեորիայի հիմնաքարը և առանց դրանց անհնարին է ըմբռնել Շահումյանի մյուս դրույթները, օրինակի համար նրա պնդումը ազգային կուլտուրայի դասակարգային բնույթի մասին, պրոլետարական գրականության ծագման և զարդացման հնարավորության մասին նույնիսկ կապիտալիստական հասարակակարգի պայմաններում։

Էվոլուցիոնիզմը ռևոլուցիոնիզմին հակադրելու և նրանց միջև դիալեկտիկական միասնությունը չտեսնելու փորձերը Շահումյանը վճռականորեն հերքում է որպես ոչ գիտական և հանդես է գալիս ընդդեմ թե՛ ռևոլուցիայի անհրաժեշտությունը բացասող հասարակական զարդացման լիբերալ-ռեֆորմիստական ըմբռնման և թե՛ նրա բունտարային-ավանտյուրիստական ըմբռնման, երբ արհամարհում են էվոլուցիայի օրենքները, հաշվի չեն առնվում կյանքի ռեալ պայմանները։ Շահումյանը հանդես է գալիս ընդդեմ ռևիզիո-

նիստ Բերնշտեյնի, սոցիոլոգ Ջոմբարտի և այլ կեղծ մարքսիստների և սոցիոլոգների, որոնք «իրենց հայտարարում են «պատմության մատերիալիստական ըմբռնման» կողմնակիցներ, ոչ մի կերպ չեն կարողանում հաշտեցնել էվոլուցիոնիզմը... «Zusammenbruch»-ի[1] թեորիայի հետ, «սոցիալական ռևոլուցիայի» հետ և իրականում դառնում են բանվոր դասակարգի սխերիմ թշնամիներ: «Այսպիսով, էվոլուցիոնիզմը ռևոլուցիոնիզմի» հետ հաշտեցնելու անզորությունը, «բալիսի» և «վերնաշենքի» փոխհարաբերության թյուր ըմբռնումը բերում հասցնում է այդ «մարքսիստներին» մարքսիզմի լիակատար ժխտման և դարձնում նրանց՝ բանվոր դասակարգի այդ «բարեկամներին», բանվոր դասակարգի ամենակատաղի թշնամիներ, որոնք ջանում են ուղղել իրենց զենքը ժամանակակից պրոլետարական շարժման սրտին»[2]:

Որպես բոլշևիկ ռևոլուցիոներ, Շահումյանը ընդհանուր թեորետիկական դրույթներից անում է պրակտիկ-քաղաքական եզրակացություններ, տալիս է ռևիզիոնիստների և մարքսիզմի այլ թշնամիների թեորետիկական ելույթների քաղաքական բնութագրությունը: Եվ դրանումն է Շահումյանի ուժը որպես մարքսիզմի-լենինիզմի թեորետիկական-քաղաքական հիմունքների պաշտպանի: Մատերիալիզմի խեղաթյուրման մի այլ ձև Շահումյանը համարում է բիոլոգիայի զարգացման օրենքների մեխանիստական տեղափոխությունը սոցիոլոգիայի բնագավառը և այդ օրենքների ոչ ճիշտ, միակողմանի ըմբռնումը:

«Ժամանակակից սոցիոլոգիական պլրոցը,—ամփոփում է իր հիմնական եզրակացությունը Շահումյանը,—որի հիմնապիրն է կարլ Մարքսը, վերացրել է հասարակական գիտությունից սրա համար այնքան վնասակար այդ շփոթությունը և այդպիսով ուղիղ և արդյունավետ ճանապարհ է բացել հասարակական գիտության զարգացման առաջ: Ժամանակակից սոցիոլոգիական էվոլուցիոնիզմը ոչ միայն չի բացատում հե-

---

1 Կործանում:

2 Ս. Շահումյան, Երկերի ժողովածու, հ. I, էջ 40:

զարգացման պրոցեսում դրանք համարում է էվոլյուցիայի հիմնական մոմենտ»[1]:

Սրանք են Շահումյանի հիմնական եղրակացությունները և հետևությունները: Շահումյանից մեջ բերված դրույթներից պարզ է, որ նա ամբողջովին կողմնակից է մարքսիզմի մատերիալիստական փիլիսոփայության տեսակետին և հանդես է գալիս որպես նրա ջերմ պաշտպանն ու պրոպագանդիստը:

Կարելի է պատկերացնել, թե ինչպիսի՞ վիթխարի նշանակություն են ունեցել Շահումյանի այդ հոդվածները հայ իրականության մեջ: 1905 թ. ռևոլյուցիայի եռուն շրջանում Շահումյանի ելույթները հասարակական զարգացման մարքսիստական թեորիայի լիբերալ-ռեֆորմիստական և ավանտյուրիստական-բունտարային ըմբռնման դեմ՝ դրական մեծ նշանակություն են ունեցել: Բայց այդ ելույթներով չի սահմանափակվում մարքսիզմի փիլիսոփայական հիմքերի պաշտպանությունը:

Ինչպես երևում է անտիարտ մի հոդվածից, որ մեզ հաջողվեց գտնել մի ընկերոջ մոտ (այժմ դա տրված է ՀՍՍՌ Գիտ. Ակադեմիայի Գրականության Ինստիտուտին), Շահումյանը կրկին վերադառնում է այդ հարցին: Այդ հոդվածում Շահումյանը վերլուծում է սուբեկտիվիզմի, Շոպենհաուերի վլունտարային իդեալիզմի դիրքերից կատարվող մարքսիստական մատերիալիզմի քննադատությունը: Ինչպես կարելի է ենթադրել՝ հոդվածը գրված է ռեակցիայի տարիներին: Հենց այդ շրջանում, ուժեղացող ռեակցիայի աղդեցության տակ, ինտելիգենցիայի լայն շերտերը դարձան դեպի ռեակցիոն փիլիսոփայությունը և կոչ արեցին ետ գնալ դեպի Շոպենհաուերը և ռեակցիոն փիլիսոփայության այլ արտահայտությունները: Մախիզմը և էմպիրիոմոնիզմը, որոնց

---

1 Ս. Շահումյան, Երկերի ժողովածու, հ. I, էջ 39:

ուշնշանակող քննադատությունը տվել է Լենինը «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» նշանավոր գրքում, ռեակցիայի արտահայտությունն էին փիլիսոփայության բնագավառում։ Ռուսական մախիստները, ինչպես ապացուցեց Լենինը, ուղղակի էին ենթարկում մարքսիստական փիլիսոփայությունը մարքսիզմի ֆրագելոգիայի ներքո։ Դա փիլիսոփայական ռևիզիոնիզմի ծաղկման ժամանակաշրջան էր։ Ամենայն հավանականությամբ Շահումյանի հոդվածը նույնպես վերաբերում է այդ շրջանին։ Նրա մեջ Շահումյանը քննադատում է Շոպենհաուերի փիլիսոփայական դրույթները, որոնք օգտագործում էին մատերիալիզմի թշնամիները մարքսիստական մատերիալիզմը ռևիզիայի ենթարկելու, արատավորելու համար։

«...այդ կոչը («Հետ դեպի Շոպենհաուերը»),—գրում է այդտեղ Շահումյանը,—միանգամայն արդիական դարձավ այն ժամանակից ի վեր, երբ սկսեց մեզնում ծաղկել ռևիզիոնիստական մտածողությունը։

... Ինչպես հաճախ՝ վերջին տարիների ընթացքում մեզ վիճակված է եղել հիշել նրա մասին, երբ առաջանում էին խառնաշփոթ, խոսակցություններ դետերմինիզմի կամ ինդետերմինիզմի մասին՝ պատմական մատերիալիզմի անարգման համար։ Իհարկե Շոպենհաուերը, որպես իսկական ֆիլիստեր, գտնում էր, որ մարդը միշտ եղել է ֆիլիստեր և կմնա այդպիսին միշտ,—և դրա համար էլ բացասում էր ամեն մի պատմական զարգացում և դրանք բոլորը մոբիլիզացնում էր ընդդեմ պատմական մատերիալիզմի»։ Այդ հոդվածից երևում է, թե ինչ կողմից է Շահումյանը մոտենում նեխվող կապիտալիզմի ռեակցիոն փիլիսոփաներից մեկի՝ Շոպենհաուերի քննադատությանը։ Շոպենհաուերի մելանխոլիզմը և պեսիմիզմը, ինչպես և Ֆրիդրիխ Նիցշեի գերմարդու քարոզը,—սուբեկտիվ վոլյունտարիստական իդեալիզմի դրսևորումն է և լրացնում է մեկը մյուսին։

Շոպենհաուերի պեսիմիզմը և Նիցշեի էգոիզմը միևնույն դրամի երկու կողմերն են, միևնույն էության՝ կապիտալիզմի

անկման ու փոման տարբեր արտահայտությունները, որ բնորոշում են իմպերիալիզմի էությունը: Այդ ոգով է քննադատում Նիցշեի էգոիզմի քարոզը և գերմարդու թեորիան Շահումյանի խմբագրությամբ լույս ընծայվող բոլշևիկյան հայկական «Կայծ» թերթը: «Հենրիկ Իբսենն» հոդվածում մատնանշելով Նիցշեի էգոիզմի և Իբսենի ինդիվիդուալիզմի միջև եղող սկզբունքային տարբերությունը՝ հոդվածի հեղինակը գրում է. «Բրանդեսը իրավմամբ նկատում է Նիցշեի ազդեցությունը Իբսենի վրա. սակայն պետք է զանազանել Նիցշեի էգոիզմը Իբսենի անհատականությունից: Նիցշեն պաշտպան է միայն հզոր և ընտրյալ անհատին, որ կյանքի կռվում կարողանում է խորտակել թուլին և խեղճին՝ հոգուստ իր եսական շահերի բարգավաճման, նա պահանջում է չբարձրացնել խորտակվող սայլը, այլ ընդհակառակը մի հարվածով փութացնել նրա անկումը, ուրիշ խոսքով, Նիցշեն էգոիստ է և այն էլ արիստոկրատ էգոիստ»[1]:

Մեր կողմից վերը շարադրված Շահումյանի թեորետիկական հայացքներում ձևակերպված են նրա գրականագիտական հայացքների նախադրյալները: Առանց հաշվի առնելու այդ ընդհանուր մեթոդոլոգիական դրույթները, չի կարելի լիակատար պատկերացում կազմել Շահումյանի գրականագիտական հայացքների մասին, ըմբռնել նրանց նշանակությունը: Սակայն կա և մեկ ուրիշ բնագավառ, որը պակաս կարևոր չէ այդ իմաստով. խոսքը Շահումյանի՝ ազգային հարցի թեորետիկական մշակման մասին է: Այդ հարցը սեր-

---

1 «Կայծ», № 22, 1906: Օգտագործելով հիշյալ հոդվածը, որի հեղինակը դեռ ստույգ չի պարզվել, մենք պետք է վերապահում անենք, որ այն դիտում ենք որպես լրացուցիչ նյութ, որն օգնում է պարզաբանելու Շահումյանի թեորետիկական և գրականագիտական դիրքերը:

Այդ հոդվածը տպագրվել է բոլշևիկյան թերթում, որի խմբագիրն է եղել Շահումյանը: Նույնիսկ, եթե վերջնականապես պարզվի, որ նրա հեղինակը Շահումյանը չէ (ստորագրված է գերմաներեն Շ. տառով), միևնույն է՝ այդ հոդվածը կարելի է օգտագործել որպես լրացուցիչ կամ օժանդակ նյութ, որն այսպես թե այնպես, եթե ոչ ուղղակի, ապա անուղղակիորեն կապված է Շահումյանի անվան հետ:

տորեն կապված է դրականության և առհասարակ ազգային կուլտուրայի հետ և նրա կողքով անցնելը անհնարին է՝ մեզ հետաքրքրող հարցի ճշգրիտ լուծման համար, և մենք այդ կապակցությամբ էլ կխոսենք՝ մի կողմ թողնելով ազգային հարցի մանրազնին վերլուծությունը և նրա շահումյանական ըմբռնման լիակատար դնահատականը:

II

Ազգային հարցին Շահումյանը մոտենում է որպես մարքսիստ-լենինիստ և այն լուծում է լենինյան-ստալինյան ըմբռնման ոգով:

Մենք արդեն ասեցինք, որ Շահումյանը բացահայտեց «վերնաշենքի», մանավանդ իդեոլոգիական վերնաշենքի դասակարգային էությունը՝ որպես զանազան դասակարգերի շահերի արտացոլում: Հասարակական գիտությունները, տվյալ դեպքում ազգության մասին եղած գիտությունը, ամենից ավելի է մերձենում այդ օրենքին: Եվ Շահումյանը, հետևելով Լենինին, ճշտորեն մատնացույց է անում հասարակական գիտությունների, մասնավորապես ազգային հարցի թեորիայի դասակարգային էությունը: Ի՞նչ է ազգը, ո՞րն է նրա էությունը, ինչո՞ւ մարդիկ այդպես շատ են զբաղվում այդ հարցով և վերջապես ինչպե՞ս լուծել այդ հարցը: Այդ հարցերին զանազան գիտնականներ տարբեր պատասխաններ են տալիս: «Ճշմարտությունը մեկ է, սակայն պատասխանները մի քանիս,—ասում է Շահումյանը: Եվ այդ միանգամայն հասկանալի է. ազգային հարցը **հասարակական** հարց է և, որպես այդպիսին, շոշափում է զանազան հասարակական դասակարգերի շահերը: Եվ ամեն մի դասակարգ, հանձինս իր թեորետիկների, ցանկանում է, որ ճշմարտությունը այնպես լինի, ինչպես այդ ձեռնտու է իրեն, այդ դասակարգին:

Եթե մի որևէ դասակարգի շահերին համապատասխանում է իսկական ճշմարտությունը, մյուս դասակարգերը ձգտում են քողարկել, խճճել և չճանաչել այդ ճշմարտությու-

նր։ Նրա «երկու անգամ երկու հավասար է չորսի» ճշմարտությունը,—ասում է մի ուրիշ դիտանական (Շահումյանը նկատի ունի Լենինին), շուշափեր մի որևէ դասակարգի շահերը, հավասարացած կարելի էր լինել, որ մինչև օրս այդ ճշմարտությունը ճանաչված և ընդունված չէր լինի բոլոր մարդկանց կողմից»[1]։

Ճշդորոշելով բացահայտելով հասարակական գիտությունների և առհասարակ իդեոլոգիայի դասակարգային և պարտիական էությունը, ուղղակի հենվելով Լենինից բերված մեջբերման վրա՝ Շահումյանը ցույց է տալիս ազգային հարցի դասակարգային էությունը։ Շահումյանը, որպես ուրվագրի մարքսիզմի ներկայացուցիչ, գտնում է, որ ազգը կոնկրետ-պատմական զարգացման արդյունք է, և, որպես կոնկրետ-պատմական երևույթ, «ունի իր պատմությունը, սկիզբը, վերջը»[2] (Ստալին)։ Ազգությունը բնական և հավերժական չէ։ Առանձին ազգերի հանդես գալը և ձևավորումը կապված է ապրանքային արտադրության հետ, կապիտալիզմի զարգացման, արշավանքի հետ, որը խորտակելով ժողովուրդների ֆեոդալական մասնատվածությունը՝ անտեսական կապերի զարգացման և ուժեղացման միջոցով, ստեղծեց բուրժուական ազգային պետությունը։ Ազգային հարցը բուրժուազիայի դեմ պրոլետարիատի մղած դասակարգային պայքարի ընդհանուր հարցի մի մասն է, և այդ հարցը արմատական ձևով կարող է լուծել միայն հաղթական պրոլետարական ռևոլյուցիան։ Այսպիսին է ազգային հարցի մարքսիստական լուծումը, որ պաշտպանում է Շահումյանը։

Այդ ամրակուռ մարքս-լենինյան թեորետիկական բազայի վրա կանգնած՝ Շահումյանը քննադատում է և ջախջախում մարքսիզմին հակադիր ազգային հարցի զանազան բմբռնումները և անխնայորեն մերկացնում է ազգության նացիոնալիստական մեկնաբանությունը։ Ժխտելով ազգության՝

---

1 Շահումյան, Երկերի ժողովածու, հ. 1, էջ 71—72։

2 Ստալին, «Մարքսիզմ և ազգային-գաղութային հարցը», 1932 թ., էջ 6, Մոսկվա

նացիոնալիստական մեկնաբանությունը իրեն «ազգային ինքնագիտակցության», «ազգային գաղափարի», «ազգային ոգու» արտահայտություն՝ Շահումյանը գտնում է, որ «Ազգությունը մի կողմից մի որոշ բնական երևույթ է, իր բնական՝ նյութեղեն կամ հոգեբանական բովանդակությամբ, մյուս կողմից՝ մի որոշ հասարակական երևույթ, հասարակական հարաբերություն է։ Ուրիշ խոսքով, մի կողմից՝ նա միևնույն տերիտորիայի վրա խմբված, շատ թե քիչ ընդհանուր ծագումով կապված, միևնույն լեզվով խոսող, շատ թե քիչ ընդհանուր կրոնով, բարքերով ու տրադիցիաներով ապրող միլիոնավոր, երբեմն տասնյակ և նույնիսկ հարյուր միլիոնավոր մարդկանցից բաղկացած մի բազմություն է, մյուս կողմից՝ նա մի հասարակական կամ պետական օրգանիզմի տեսակն է»[1]։ Ազգի այդ բնորոշումը ճիշտ է, մարքսիստական։ Սակայն Շահումյանը չի տվել այդ հարցի սպառիչ, ամբողջական ձևակերպումը։ Տվյալ հարցի լիակատար, խոր մարքսլենինյան բնորոշումը տվել է ընկեր Ստալինը իր՝ «Մարքսիզմը և ազգային հարցը» հանճարեղ աշխատության մեջ։ Այդ աշխատության մեջ ընկեր Ստալինը տալիս է ազգի կլասիկ բնորոշումը։

«Ազգը դա պատմականորեն կազմավորված կայուն ընդհանրություն է լեզվի, տերիտորիայի, տնտեսական կյանքի և պսիխիկական կերտվածքի, որն արտահայտվում է կուլտուրայի ընդհանրության մեջ»[2]։

Շահումյանը հենվելով ազգային հարցի լենինյան-ստալինյան ըմբռնումից՝ «Ազգային կուլտուրական ավտոնոմիայի մասին» իր բրոշյուրի մեջ գլխավոր ճակատամարտ է տալիս հայկական նացիոնալ-սոցիալիստներին, մենշևիկներին, որոնք սկսել էին քարոզել և պաշտպանել ռեակցիոն ու վնասակար, նացիոնալիստական սկզբունքներով տոգորված ազգային կուլտուրական ավտոնոմիան։ Ըստ Շահումյանի՝ «նրանց շրթներին կուլտուրայի ընդհանուր հասկացողությու-

---

[1] Շահումյան, Երկերի ժողովածու, հ. 1-ին էջ 75—76։

[2] Ստալին, «Մարքսիզմ և ազգային-գաղութային հարցը», էջ 9։

նը սատանիկ նեղացվում է», և, կուլտուրա ասելով, նրանք հասկանում են միայն ազգային կուլտուրան, և կուլտուրայի սոցիալ-դասակարգային բնույթը նացիոնալիստները չեն ընդունում։

«Բայց ինչո՞ւ են նրանք այդքան սիրել կուլտուրա խոսքը։ Որովհետև,—պատասխանում են նրանք,—ամեն կուլտուրա ազգային է։ Նա իր սկիզբը առնում է ազգային առանձնահատկություններից... Դպրոցական գործում, դրականության մեջ, առհասարակ «կուլտուրական բնագավառում» իշխում է ազգային լեզուն։ Հետևապես պարզ է,—մտածում են Դ. Ա.-ները,—որ կուլտուրան միշտ ազգային է։

Որքա՜ն ծանծաղամիտ պետք է լինել կամ, լավագույն դեպքում, որքա՜ն կուրացած պետք է լինել նացիոնալիստական ֆրազայից՝ այս տեսակ հանճարեղ անհեթեթություններ ասելու համար։ Եվ այդ մարդիկ հավատացած են, որ իրենց բերանով խոսում է ինքը մարքսիզմը»[1]։

Առաջ քաշելով կուլտուրայի այդպիսի ըմբռնումը, այդ նացիոնալիստները ելնում էին նրանից, որ «Ազգության հիմնական հատկանիշը լեզուն է»[2]։ Մերկացնելով կուլտուրայի և ազգության վերաբերյալ այդ խորապես ռեակցիոն-նացիոնալիստական ըմբռնումը՝ Շահումյանը դրան հակադրում է կուլտուրայի մարքս-լենինյան ըմբռնումը։ Ըստ Շահումյանի՝ կուլտուրան դասակարգային բնույթ ունի, գոյություն չունի և չի կարող գոյություն ունենալ մաքուր ազգային կուլտուրա այնտեղ, որտեղ դասակարգային պայքարն է որոշում հասարակական զարգացման ընթացքը և ելքը։ Ինքը ազգային հարցը կամ «ազգային կոխվը դասակարգային կռվի արտահայտություններից մեկն է, որ նա տնտեսական և քաղաքական բնույթ ունի, թե իր ծագումով և թե իր նպատակներով»[3]։ Շահումյանը վճռականորեն հերքում է նացիոնալիստների փորձերը «դուրս բերել հասարակական դասակար-

---

1 Շահումյան, Երկերի ժողովածու, հ. II, էջ 31—32։

2 Նույն տեղ, էջ 39։

3 Նույն տեղ, էջ 40։

գերի կովի շրջանառությունից»[1] լեզուն, կուլտուրան և ազգային հարցը առհասարակ, կուլտուրան ներկայացնել որպես դասակարգերից դուրս, վերդասակարգային կատեգորիա։

«Այո՛, մենք ընդունում ենք,—ասում է Դ. Ա-նը,—դասակարգային կռիվ «քաղաքական և տնտեսական հարցերի մեջ», բայց կուլտուրան չէ՞ որ միշտ ազգային է։ Չէ՞ որ հայ լեզուն ընդհանուր «բարեմասնություն է թե՛ հայ բանվորի և թե՛ հայ բուրժուայի ու տերտերի համար»[2]։ Այսպիսով ամբողջ հարցը նացիոնալիստները հանգեցնում են ազգային լեզվին. իսկ ազգային լեզուն ավյալ դեպքում ազգային կուլտուրայի ձևերից մեկն է և ոչ թե նրա բովանդակությունը, ոչ թե նրա էությունը։ Այսպիսով, նացիոնալիստներն անտեսելով բովանդակությունը՝ հետաքրքրվում էին միմայն ձևով։ Ավելին, նրանք բովանդակությունը զոհաբերում են այդ ձևին, իսկ կուլտուրայի բովանդակությունը, նրա դասակարգային բնույթը մթագնում են, քողարկում։ Մինչդեռ «Այդ տարրական ճշմարտությունը, որ կուլտուրան որոշվում է իր դասակարգային բովանդակությամբ և ոչ ազգային արտաքինով, միանգամայն անհասկանալի է մնացել մեր «մարքսիստների» համար,—նկատում է Շահումյանը։ «Ֆեոդալական կուլտուրա», «բուրժուական կուլտուրա», «պրոլետարական կուլտուրա»—այդ բոլորը դատարկ հնչյուններ են նրանց համար։ Նրանք ճանաչում են միայն «ազգային կուլտուրա»,—որը այն էլ... «սկիզբն է առնում ազգային աղանձնահատկություններից !)...»[3]։

Շահումյանը հաճախ է խոսում և ճշգրտորեն ընդգծում բովանդակության, կուլտուրայի դասակարգային էության առաջատար դերը։ Խոսելով դպրոցի մասին՝ Շահումյանը կրկին մատնացույց է անում ամենակարևորը՝ դաստիարակության դասակարգային բնույթը։ «Այստեղ էլ՝ կրթական գոր-

---

1 Շահումյան, Երկերի ժողովածու, հ. II, էջ 37։

2 Նույն տեղ, էջ 37։

3 Նույն տեղ, էջ 32։

ծում, այդ «կուլտուրական բնագավառում»՝ ավելի կարևորը դասակարգային միջուկն է և ոչ ազգային կեղևը, էությունը՝ և ոչ ձևը։ Որքա՞ն էլ կարևոր լինի լեզվի խնդիրը, նա, համենայն դեպս, մի մասն է միայն, և համեմատաբար երկրորդական մասը դպրոցների վրա ծանրացած ընդհանուր դասակարգային քաղաքականության[1]։ Դպրոցական գործը առհասարակ և լեզվի հարցը մասնավորապես, ըստ Շահումյանի «կարևոր գենքերից մեկն է կռվող դասակարգերի ձեռքին, և ոչ մի դասակարգ այնքան տխմար չի դառնվի, որ կամովին տա իր ձեռքից այդ գենքը»[2]։

Դժվար չէ նկատել, որ այդ հասկացողությունների հիմքում ընկած է արտացոլման մարքսիստական-լենինյան թեորիան, որը պաշտպանում է Շահումյանը։ Գոյություն չունի միասնական ազգություն։ Ազգությունը տրոհված է դասակարգերի, որոնցից յուրաքանչյուրն ունի իր դասակարգային բնույթը և իր իդեոլոգիան, որը վերջին հաշվով արտացոլում է նրանց տնտեսական և սոցիալ-քաղաքական ձգտումները։ Կուլտուրան, բառի նեղ հասկացողությամբ, հոգևոր կուլտուրա է, որոշ դասակարգերի շահերի արտահայտությունը։ Պրոլետարիատը, չնայած իր ճնշված դրությանը կապիտալիստական հասարակարգում, այնուամենայնիվ ստեղծում է հոգևոր կուլտուրայի որոշ տարրեր ոչ միայն քաղաքական պայքարի բնագավառում, որն անհամեմատ զարգացած է, այլև գրականության և արվեստի բնագավառում։ Այդ է վկայում՝ Մաքսիմ Գորկու, Հակոբ Հակոբյանի ստեղծագործությունների Շահումյանի բնութագիրը, որպես պրոլետարիատի ձգտումների և պայքարի գրական արտահայտություն։ Այսպիսով, միասնական ազգային կուլտուրայի կեղծ հասկացողությունը, որպես ազգային ոգու և առանձնահատկությունների արտահայտություն, վճռականորեն հերքում է Շահումյանը և նրան հակադրում ազգային կուլտուրայի լենինյան-ստալինյան ըմբռնումը, որպես որոշ դասակարգերի շահերի արտահայտություն։

1. Շահումյան, Երկերի ժողովածու, հ. II, էջ 35—36։
2 Նույն տեղ, էջ 37։

«Երկու ազգ գոյություն ունի յուրաքանչյուր ժամանակակից ազգության մեջ, կասենք մենք բոլոր նացիոնալ-սոցիալիստներին,—գրում էր Լենինը 1913 թվին։ Երկու ազգային կուլտուրա գոյություն ունի յուրաքանչյուր ազգային կուլտուրայի մեջ»[1]։ «Յուրաքանչյուր ազգային կուլտուրայի մեջ կան, թեև չզարգացած վիճակում, դեմոկրատական և սոցիալիստական կուլտուրայի տարրեր, որովհետև յուրաքանչյուր ազգի մեջ կան աշխատավորներ և շահագործվող մասսա, որի կյանքի պայմանները անխուսափելիորեն ծնում են դեմոկրատական և սոցիալիստական իդեոլոգիա։ Սակայն յուրաքանչյուր ազգի մեջ կա նույնպես բուրժուական կուլտուրա (իսկ մեծ մասամբ նաև սևհարյուրակային և կղերական), ընդ որում ոչ թե սոսկ «տարրերի» ձևով, այլ գերապետող կուլտուրայի ձևով»[2]։

Ազգային հարցի և մասնավորապես ազգային կուլտուրայի մասին լենինյան հայացքները հետագա զարգացում ստացան ընկեր Ստալինի աշխատություններում։

Ընկեր Ստալինը տալիս է ազգային կուլտուրայի դասակարգային էության կլասիկ բնորոշումը։ «Ի՞նչ է ազգային կուլտուրան ազգային բուրժուազիայի դերիշխման պայմաններում,—ասում է ընկեր Ստալինը.—իր բովանդակությամբ բուրժուական, իր ձևով ազգային կուլտուրա, որի նպատակն է՝ թունավորել մասսաներին նացիոնալիզմի թույնով և ամրապնդել բուրժուազիայի տիրապետությունը։ Ի՞նչ է ազգային կուլտուրան պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում.—իր բովանդակությամբ սոցիալիստական և ըստ իր ձևի ազգային կուլտուրա, որի նպատակն է՝ դաստիարակել մասսաներին ինտերնացիոնալիզմի ոգով և ամրապնդել պրոլետարիատի դիկտատուրան»[3]։ Լենինի և Ստալինի թեորետիկական խորը դրույթների լույսի տակ պարզ է դառնում, որ Ստեփան Շահումյանը կանգնած էր ճիշտ դիրքերի

---

1 Լենին, Երկեր, հ. XVII, էջ 143։

2 Նույն տեղ, էջ 137։

3 Ստալին, «Մարքսիզմը և ազգային-գաղութային հարցը», էջ 194։

վրա, երբ բացահայտում էր ազգային կուլտուրայի դասակարգային էությունը և ցույց էր տալիս բուրժուազիայի առաջատար դերը ձևի համեմատությամբ՝ կուլտուրայի մեջ։ Այսպիսով կուլտուրայի, ինչպես և այլ հարցերում, Շահումյանը ելնում էր դասակարգային պայքարի մարքս-լենինյան թեորիայից և իդեոլոգիայի, արվեստի և գրականության պարտիականության սկզբունքից։

III

Դասակարգային պայքարում որոշակի, կարևոր դեր է խաղում ինտելիգենցիան։ Դասակարգային պայքարի տեսակետից է Շահումյանը վերլուծում և գնահատում ինտելիգենցիայի դերը, նրա պրոգրեսիվ կամ ռեակցիոն էությունը՝ ժողովուրդների հասարակական զարգացման պատմության մեջ։ Գոյություն ունեցող կարծիքը, ըստ որի ինտելիգենցիան է «երկրի աղը», որ նա պրոգրեսիվ ուժ է ամեն մի հասարակության մեջ՝ Շահումյանի կարծիքով կարիք է ղգում խիստ սահմանափակման և վերապահման՝ ոչ ամեն տեղ, ոչ ամենուրեք և ոչ ամեն հասարակության մեջ։ Շահումյանը կոնկրետ դիալեկտիկական մոտեցում է ցուցաբերում նաև ինտելիգենցիայի դերի գնահատման հարցում։ Ինտելիգենցիան ունենալով իր պրոֆեսիոնալ շահերը՝ միշտ էլ ներտորեն կապված է եղել որոշ դասակարգի հետ և ծառայել է տվյալ հասարակական դասակարգին, արտահայտելով վերջինիս ձգտումները և շահերը։ Ինտելիգենցիայի պրոգրեսիվ կամ ռեակցիոն լինելը Շահումյանը ճշտորեն կապակցում է այն հասարակական դասակարգի պրոգրեսիվ և ռեակցիոն լինելու հետ, որին ծառայում է ինտելիգենցիան։ Երբ բուրժուազիան իր օբեկտիվ պատմական դրությամբ պրոգրեսիվ էր, պրոգրեսիվ էր և նրա ինտելիգենցիան։ Շահումյանն իր թեզի ապացուցման համար ճշտորեն մատնացույց է անում այն դերը, որ խաղացել են եվրոպական ժողովուրդների կյանքում ֆրանսիական բուրժուական ռևոլուցիային նախորդող ժամանակաշրջանում «լուսավորիչները», «էնցիկլո-

պեդիստները»—Դիդրոն, Ռուսոն, Վոլտերը, Հելվեցիուսը, Հոլբախը, Լամետրին և նրանց շուրջը խմբված ինտելիգենցիան, 1848 թ. «երիտասարդ Գերմանիան»—Բյոռնեի, Հայնեի, Գուցկովի, Հերվեղի, Ցրկլիպրատի սերունդը, Մածձինիի դրոշի տակ գործող խիղախ «երիտասարդ Իտալիան» և այլն: Այդ ինտելիգենցիան, Շահումյանի կարծիքով, իր ժամանակին վիթխարի պրոգրեսիվ գործ է կատարել: «Դրանք են եղել այն առաջավոր գնդերը, որ իրենց համարձակ գաղափարական կռվով միջնադարյան ֆեոդալական ու կղերական մութ աշխարհայեցողության ու նախապաշարմունքների դեմ՝ նախապատրաստել են առաջադեմ բուրժուազիայի տիրապետությունը և նոր ու հարուստ կուլտուրայի ծաղկումն ու զարգացումը XIX դարում: Դրանք են եղել, որ, ըստ հայտնի արտահայտության, իրենց «քննադատական զենքով» հնարավոր են դարձրել գալիք «զենքի քննադատության» հաղթությունը»[1]: Այլ, միանգամայն հակադիր դեր խաղաց իրենց ժողովուրդների կյանքում իմպերիալիզմի, առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի ինտելիգենցիան: Բացառություն է կազմել միայն մարքսիստական-ռևոլուցիոն ինտելիգենցիան, որը, ցավոք սրտի, համեմատաբար փոքրաթիվ է եղել. նա ոչնչացնող քննադատության իր ենթարկում բուրժուական հասարակական գիտությունները՝ քաղաքատնտեսությունը, պատմական գիտությունը, փիլիսոփայությունը և բարձրացնում էր բանվորական մասսաների գիտակցականությունը մինչև իրենց շահերի ըմբռնման մակարդակին. «...Այդ ինտելիգենցիան մի խոշոր առաջադիմական գործ է կատարում, որ երբեք չի մոռացվելու պատմության մեջ»[2],—գրում էր Շահումյանը 1916 թ.: Մինչդեռ, ինտելիգենցիայի գերակշռող մասը «իր ամբողջ հասարակական աշխարհայացքով ու գործունեությամբ մի վիթխարի խոչընդոտ է ժողովուրդների առաջադիմության համար: Իր ամբողջ գաղափարական ուժը նա ծա-

---

1 Շահումյան, Երկերի ժողովածու, հ. II, էջ 98—99:

2 Նույն տեղ, էջ 100:

ռալեցնում է այսօր բուրժուազիայի շահերին, նա ամեն քանք գործ է դնում, դիտակցաբար և անգիտակցաբար, կեղծելու հասարակական դիտուքյունը, հասարակական ճշմարտուքյունները, մթագնելու ժողովրդական մասսաների գիտակցուքյունը, արդարացնելու նրանց առաջ՝ զանազան աշքակապուքյունների ու խաբեբայուքյան միջոցով՝ շահագործուքյան ու բռնուքյան վրա հիմնված այժմյան հասարակարգը»[1]։ «Իսկ իր ահագին մեծամասնուքյամբ ինտելիգենցիան,—գրում է Շահումյանը,—ինժեներներ, փաստաբաններ, դատավորներ, բժիշկներ, ուսուցիչներ, գրողներ, դերասաններ և այլն,—դրանք համարյա բոլորը գտնվում են բուրժուազիայի բանակում և սպասավորում են իշխող դասակարգերին։ Եվ այդ շատ հասկանալի է. նախ և առաջ, դրանք մեծ մասամբ բուրժուական ընտանիքների ու միջավայրի ծնունդ են և, ապա, բացի դրանից, իրենց անմիջական պրոֆեսիոնալ շահերով ամբողջովին կապված են բուրժուազիայի հետ»[2]։

Այդ տողերի մեջ Շահումյանը պատում է բուրժուական ինտելիգենցիայի և մասնավորապես գրողների և արվեստի գործիչների դիմակը՝ ցույց տալով նրանց «կախվածուքյունը կապիտալիստների դրամապարկից» (Լենին), որ նրանք կեղծավորաբար թաքցնում են՝ իրենց ներկայացնելով բացարձակապես ազատ, վերդասակարգային և վերպարտիական։ Կարդալով բուրժուական ինտելիգենցիայի հասցեին ուղղված Շահումյանի մերկացնող բնութագրուքյունը՝ չի կարելի չհիշել Լենինի «Պարտիական կազմակերպուքյունը և պարտիական գրականուքյունը» վայրկյան հոդվածը, գրված դեռ 1905 թ., որպեսզի հասկանանք Շահումյանի իրավացիուքյունը ինտելիգենցիայի նկատմամբ։ «Կորչե՛ն անպարտիական գրականագետները, կորչե՛ն գերմարդ գրականագետները», կոչ էր անում Լենինը, խորապես հիմնավորելով գրականուքյան պարտիականուքյունը և դասակարգային

---

1 Շահումյան, Երկերի ժողովածու, հ. II, էջ 99։

2 Նույն տեղ, էջ 101։

բնույթն ու էությունը։ Լենինը անխնա մերկացնում էր բուրժուական գրողների և հրապարակախոսների կեղծ ֆրազները ինտելիգենցիայի՝ դասակարգերից և դասակարգային պայքարից բացարձակապես ազատ լինելու մասին։ «Դուք ազա՞տ եք արդյոք ձեր բուրժուական հրատարակչից, պարոն գրող,—հարցնում է Լենինը,—ձեր բուրժուական հասարակությունից, որը ձեզնից պահանջում է պոռնկագրություն շրջանակների և նկարների մեջ, պոռնկություն՝ որպես «լրացում» «սրբազան» բիզնեսի։ Չէ՞ որ այդ բացարձակ ազատությունը բուրժուական կամ անարխիստական ֆրազ է (որովհետև անարխիզմը որպես աշխարհայացք շուռ տրված բուրժուականություն է)։ Ապրել հասարակության մեջ և հասարակությունից ազատ լինել չի կարելի։ Բուրժուական գրողի, արվեստագետի, դերասանուհու ազատությունը սոսկ քողարկված (կամ կեղծ քողարկվող) կախումն է դրամապարկից, կաշառվելուց, ապրուստից։ Եվ մենք՝ սոցիալիստներս մերկացնում ենք այդ կեղծիքը, պոկում ենք կեղծ ցուցանակները. ոչ թե նրա համար, որպեսզի ստանանք անդասակարգային գրականություն և արվեստ (այդ հնարավոր կլինի միայն անդասակարգ սոցիալիստական հասարակության մեջ), այլ նրա համար, որպեսզի երեսպաշտական՝ ազատ, իսկ իրականում բուրժուազիայի հետ կապված գրականությանը հակադրենք իսկապես ազատ, բացահայտորեն պրոլետարիատի հետ կապված գրականություն»[1]։ Գրականության էության մասին լենինյան այդ խոր բնութագրությունից հետո հասկանալի է դառնում ոչ միայն Շահումյանի կողմից ինտելիգենցիային տրված գնահատականը, այլև նրա դրույթը հասարակական գիտությունների և առհասարակ իդեոլոգիական «վերնաշենքի» պարտիականության և դասակարգային բնույթի մասին։

Հետաքրքրական է Շահումյանի մեկ ուրիշ դրույթ ևս, որը կապված է ինտելիգենցիայի դերի գնահատման հետ։ Շահումյանը բացահայտում է բուրժուական աշխարհայացքի

---

1 Լենին, Երկեր, հ. VIII, էջ 389։

երեք շրջան կամ էտապ։ Մենք արդեն գիտենք, ի՛նչպես է նա գնահատում ինտելիգենցիայի դրական և բացասական դերը, նրա պրոգրեսիվ լինելը անցյալում (բուրժուազիայի վերելքի շրջանում) և ռեակցիոնությունը՝ իմպերիալիզմի էպոխայում։ Այդ թեզը Շահումյանը հիմնավորել է՝ ելնելով բուրժուազիայի պատմական էվոլուցիայի մարքս-լենինյան ըմբռնումից՝ պրոգրեսիվ-ռևոլուցիոնականությանը հաջորդում է փտումն ու ռեակցիոնականությունը, որն ավելի լրիվ դրսևորվեց իմպերիալիզմի և պրոլետարական ռևոլուցիայի դարաշրջանում։ Այդ դիրքերից է նա գնահատում և բուրժուազիայի իդեոլոգիան, բաժանելով այն երեք էտապի՝ դեմոկրատիզմ, լիբերալիզմ և իմպերիալիզմ, որը համապատասխանում է իրեն իսկ՝ բուրժուազիայի զարգացմանը և նրա էվոլուցիայի արտահայտությունն է։ Ըստ Շահումյանի՝ նացիոնալիզմը բուրժուական իդեոլոգիայի հատկանիշներից մեկն է և նրա անհրաժեշտ մասը։ Կապված լինելով բուրժուազիայի պատմական զարգացման հետ՝ նացիոնալիզմը նույնպես փոփոխության է ենթարկվել։ «Լիբերալիզմից առաջ բուրժուազիան,—գրում է Շահումյանը,—ապրել է դեմոկրատիզմի շրջանը, այժմ նա ապրում է իմպերիալիզմի շրջանը, որ բուրժուազիայի տիրապետության վերջին շրջանն է. նացիոնալ-դեմոկրատիզմ, այնուհետև նացիոնալ-լիբերալիզմ, իսկ այժմ նացիոնալ-իմպերիալիզմ։ Նացիոնալիզմը եղել է և կա—այն տարբերությամբ միայն, որ նախկին առաջադիմական և հեղափոխական նացիոնալիզմը դարձել է այժմ մի ծայրահեղ հետադիմական իդեոլոգիա...

Նացիոնալիզմը նույնպես «իմանենտ է» բուրժուական աշխարհայացքին ու բուրժուական պրակտիկային, ինչպես ինտերնացիոնալիզմը—նոր ընկերվարական աշխարհայացքին։ Ով չի հասկացել այդ, ով կարծում է, որ կարելի է ժխտել լիբերալիզմը, իմպերիալիզմը, բայց պահպանել նացիոնալիզմը, ով խոսում է «առողջ» և «անառողջ» նացիոնալիզմի մասին և փորձում է զանազան սոփեստություններով հաշտեցնել նացիոնալիզմը ինտերնացիոնալիզմի և առհասա-

րակ ընկերվարական նոր աշխարհայացքի հետ, նա ոչինչ չի հասկացել ոչ լիբերալիզմից և ոչ էլ այդ նոր աշխարհայացքից»[1]։ Հակադրելով իրար երկու թշնամի դասակարգերի թշնամի աշխարհայացքներ (ինտերնացիոնալիզմը նացիոնալիզմին) Շահումյանը ցույց է տալիս, որ նացիոնալիզմի, ինչպես և առհասարակ ողջ բուրժուական իդեոլոգիայի կրողը և նրա քարոզողը ինտելիգենցիան է, որը արհեստականորեն բորբոքել է ազգային զգացմունքներ։ «Իր նացիոնալիզմի մեջ նա շատ անգամ, եթե ոչ միշտ, ավելի հեռու է գնացել, քան այդ հարկավոր է եղել բուրժուական հասարակության շահերի տեսակետից»[2]։ Եվ այդ հանգամանքը՝ ինտելիգենցիայի ծայրահեղ բացասական դերը, Շահումյանը բացատրում է այն յուրահատուկ պայմաններով, որոնց մեջ նա դնվել է որպես առանձին բուրժուական խավ, որը և որոշում է նրա պրոֆեսիոնալ անմիջական տնտեսական շահերը։ Մինչդեռ ինտերնացիոնալիզմի կրողը ռևոլյուցիոն պրոլետարիատն է և նրա առաջավոր ավանդարդը՝ բոլշևիկյան պարտիան։

Սրանք են Շահումյանի հիմնական թեորետիկ դրույթները, որոնք նկատի պետք է ունենալ ներկա դեպքում։

Ինչպես ընթերցողը կարող է նկատել, մեր հեղինակի այդ տեսակետները անմիջականորեն կապված են պրակտիկայի հետ, հանդիսանում են նրա գրականագիտական հայացքների տեսական հիմքը։

Առանց այդ հայացքների անհնարին է լիակատար և ճշգրիտ պատկերացում կազմել Շահումյանի անմիջական գրականագիտական սկզբունքների մասին։ Եվ իսկապես, ինչպե՞ս կարելի է գնահատել գրականությունը, առանց գիտենալու, որ նա լինելով իդեոլոգիայի ձև, ոչ միայն արտացոլում է իրականությունը, այլև ակտիվ հասարակական զենք է այս կամ այն դասակարգի ձեռքին։ Առանց իդեոլոգիայի պարտիականության թեորիայի չի կարելի հասկանալ գրականության դասակարգային և պարտիական էությունը, նրա ակ-

---

1 Շահումյան, Երկերի ժողովածու, հ. II, էջ 102—103։

2 Նույն տեղ, էջ 103։

տիվ, ներդործոն և ճանաչողական նշանակությունը։ Վերջապես կուլտուրայի ձևի ու բովանդակության մարքսիստական թեորիան, որը պաշտպանում է Շահումյանը ընդդեմ կուլտուրայի նացիոնալիստական մեկնաբանության, անմիջականորեն վերաբերում է և գրականությանը։ Առանց ընդհանուր գաղափար ունենալու պրոլետարական կուլտուրայի մասին, անհնարին է հասկանալ այն գնահատականը, որ նա տալիս է Գորկուն, Հակոբ Հակոբյանին՝ հիմնավորելով պրոլետարական գրականության զարգացման օրինաչափությունը նույնիսկ կապիտալիզմի պայմաններում։ Այդ բոլոր հայացքների հիմքում դրված է իրականության արտացոլման մարքս-լենինյան թեորիան։

ԳԼՈՒԽ III

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐԸ ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

Ստեփան Շահումյանի գրական հայացքները ձևավորվել են լուսավորական էսթետիկայի անմիջական ազդեցության ներքո. նրա գրական առաջին ուսուցիչները եղել են Բելինսկին, Չերնիշևսկին, Դոբրոլյուբովը և Պիսարևը: Բայց իր զարգացման մեջ նա չի մնացել լուսավորական էսթետիկայի դիրքերում, այլ առաջ է գնացել, և մարքսիզմի լույսով, պատմության մատերիալիստական ըմբռնմամբ է դիտել գրական երևույթները: Հաղթահարելով ռուս հեղափոխական լուսավորիչներին հատուկ պատմական որոշ սահմանափակությունը՝ Շահումյանը չի ժխտել և չէր էլ կարող ժխտել նրանց էսթետիկական սկզբունքները: Ընդհակառակը, Բելինսկու, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի ու Պիսարևի ժառանգությունը նրա համար մարդկային ոգու մեծ արտահայտությունն էր: Ջուր չէ, որ 1902 թվին, Դ. Աղայանի հոբելյանի առթիվ պատրաստած ճառում նրանց անվանել է տիտաններ և նրանց ժառանգությանը մեծ նշանակություն է տվել՝ երիտասարդության հեղափոխական-քաղաքական դաստիարակության գործում: Իսկ հետագայում Բելինսկու ու Չերնիշևսկու անունները նա իրավամբ դասում էր այնպիսի խոշոր բոլշևիկ ուսուցիչների թվում, ինչպիսին է Սուրեն Սպանդարյանը: Սրանով Շահումյանը ընդգծում էր լենինյան այն

միաքը, ըստ որի այդ ռևոլուցիոն դեմոկրատ լուսավորիչները մարքսիստների՝ բոլշևիկների, նախորդներն էին: Նրանք մարքսիստների նախորդներն էին նաև մարքսիստական էսթետիկայի բնագավառում: Նրանց էսթետիկական հայացքները կազմում են այն արժեքավոր ժառանգությունը, որի վրա աշխատել է և աշխատում է մարքս-լենինյան քննադատությունը:

Մարքսիստական էսթետիկայի տեսակետից՝ դրականությունը դաշափարախոսական երևույթ է, արտացոլում է որոշ դասակարգերի շահերը և հանդիսանում է դասակարգային պայքարի զենք: Գրողը, արվեստագետը այդ պայքարի ակտիվ մասնակիցն են: Այս կամ այն գրողի, ինչպես ընդհանրապես որևէ հասարակական գործչի, գնահատելու համար պետք է ելնել ոչ թե նրանից, թե ի՛նչ է տվյալ գործիչը մտածում իր մասին, այլ նրանից, թե ի՛նչ դաշափարներ է նա քարոզում, որո՛նք են նրա քաղաքական ու փիլիսոփայական հայացքները, մի խոսքով՝ ո՛րն է նրա աշխարհայացքը: Այսպես է նայում հարցին և Շահումյանը:

«Առաջին հարցը,—գրում է Շահումյանը Աղայանի հոբելյանի առիթով պատրաստած ճառում,—որ ծագում է հասարակական գործչին գնահատելիս, այն է, թե ի՛նչ դավանանքի տեր է եղել նա, ի՛նչ սովորություններ է պաշտել իր կյանքում և ի՛նչ գործնական հասարակական ծրագիր է ուներել իր ձեռքին»: Ուղիղ տասը տարուց հետո նա նույն հարցին անդրադառնում է «Փափաղյանը պատմագետի դեմքում» հոդվածում, պահանջելով գրողից ունենալ լուրջ պատմական աշխարհայացք:

Տվյալ հասարակական գործչի-գրողի դրական կամ բացասական դերը, պրոգրեսիվ կամ ռեակցիոն լինելը, ըստ Շահումյանի, որոշվում է նրա պաշտպանած հայացքներով: Եթե գրողը պրոգրեսիվ հայացքների կողմնակից է և պաշտպանում ու քարոզում է դրանք իր աշխատություններում և ընդհանրապես հասարակական գործունեության մեջ՝ ապա ավելի խոշոր է նրա նշանակությունն ու հասարակական կշիռը, նա կարող է հսկայական ազդեցություն ունենալ

մասսաներին առաջավոր գաղափարախոսության ոգով դաստիարակելու ու զարգացնելու գործում, նա դրական դեր է խաղում տվյալ ժողովրդի հասարակական զարգացման մեջ։

Մեր առաջ են XVIII դարի ֆրանսիական էնցիկլոպեդիստ-լուսավորիչների օրինակները՝ Վոլտեր, Ռուսո, Դիդրո, Հելվեցիուս, Հոլբախ, Դ'Ալամբեր, կամ 1848 թ. դեմոկրատական առաջավոր և ռևոլյուցիոն գրողները՝ Բյորնե, Հայնե և այլն, որոնք միջնադարյան ֆեոդալա-կղերական խավարամտության ու սնապաշտությունների դեմ մղած իրենց համարձակ գաղափարական պայքարով հսկայական դրական դեր խաղացին ոչ միայն իրենց ժողովուրդների, այլև ողջ մարդկության զարգացման մեջ։ Նրանք,—ինչպես ճիշտ նկատում է Շահումյանը,—նախապատրաստեցին XIX դարի «նոր ու հարուստ կուլտուրայի ծաղկումն ու զարգացումը»։

Հիշատակելով այս անունները՝ Շահումյանը նպատակ չունի խորանալ, ամեն մեկին առանձին բնութագիր տալ, նրանց ներքին հակասությունները, տարբերություններն ու տարակարծությունները բացահայտել։ Նա վերցնում է նրանց որպես ամբողջության, որպես իրենց ժամանակի առաջավոր ու ռևոլյուցիոն գաղափարախոսության ջահակիրների։ Եվրոպական գրականության մեջ այդպիսի խոշոր գործիչներից մեկը գերմանացի հրապարակախոս Լյուդվիգ Բյորնեն է (1818—1918), որին Հայնեն անվանել է «ռևոլյուցիոն փոթորկի զանգ»։ Շահումյանը լավ ծանոթ էր Բյորնեի երկերին և հաճախ մեջբերումներ էր անում դրանցից։ Շահումյանը Բյորնեին համարում է ռևոլյուցիոն հրապարակախոս, անցած դարի 20—30-ական թվականների գերմանական ռեակցիայի դեմ բոցաշունչ մարտնչող։

Շահումյանը Ղ. Աղայանի հոբելյանական ճառում մեջ է բերում նրա խոսքերը. «Ոչ մի ինքնասեր, փոքր ի շատե իրեն հարգող գրող չի համաձայնի գրել այնպիսի պայմաններում, երբ նրա վրա իշխում է ցենզուրական կամայականությունը,—ասում է Լյուդվիգ Բյորնեն 40-ական թվականների Գերմանիայի վերաբերմամբ, որը այժմյան Ռուսաս-

ատանի նախատիպն է։ Եվ ինքը՝ «Երիտասարդ Գերմանիայի» այդ այուներից մեկը,—ավելացնում է Շահումյանը,—չկարողացավ համակերպվել ցենզուրական պայմաններին, փախավ Ֆրանսիա և այդտեղից, ազատ մամուլի միջոցով, իր «Փարիզյան նամակներով» և այլ հրապարակախոսական հոդվածներով կարողացավ կատարել իր նշանավոր դերը Գերմանիայի վերածնության գործում»։ Լյուդվիգ Բյորնեն, ինչպես և դաշափարական պայքարի նրա ընկերներ, և նույնիսկ նրա մեծ նախորդը՝ Լեսինգը, չնայած գերմանական և այլ ժողովուրդների վերածնության գործում մատուցած մեծ ծառայություններին, իրենց ժամանակի զավակներն էին։ Նրանց առաջադիմականությունն ու revolutionականությունը խիստ չափավոր էին, նրանք պատմականորեն սահմանափակ գործիչներ էին։ Եվ դա հասկանալի է. ֆրանսիական, ինչպես և գերմանական լուսավորիչները հող պատրաստեցին շահագործող դասակարգի հաղթանակի համար։ Նրանց պայքարի հետևանքը եղավ բուրժուազիայի հաղթանակն ու տիրապետությունը. բուրժուազիան, ինչպես մարքսիզմի կլասիկներին հետևելով հաճախ ասել է Շահումյանը, շահագործման մի ձևը՝ ֆեոդալականը, փոխարինեց մի ուրիշով՝ կապիտալիստականով։ «Ավելի քան հարյուր տարի առաջ,—գրում է Շահումյանը,—բուրժուազիան իր հեղափոխությունների ժամանակ հռչակեց «ազատություն, հավասարություն, եղբայրություն» լոզունգը. բայց խոստացածի փոխարեն ժողովրդին տվեց միայն կապիտալիստական արկության ծանր շղթաները... Կուլտուրայի խոշորագույն նվաճումները, որոնք բուրժուական հեղափոխությունների հետևանքն են, օգուտ տվին միայն իշխող դասակարգերին» («Современная жизнь» 1911, № 1)։ Բայց դրա համար նրանք հանցավոր չեն. դա տեղի ունեցավ հակառակ ֆրանսիական (բուրժուական) հեղափոխության առաջնորդների ցանկության, որոնք աչքաթող արին կյանքի ռեալ պայմանները,—գրում է Շահումյանը.—նրանք նախօրոք չէին կարող մտածել այդ մասին։ Այս պատմական սահմանափակու-

թյունը հատուկ էր բուրժուական իդեոլոգներին և բխում էր նրանց դասակարգային բնույթից։ Այնուամենայնիվ, այս հանգամանքը ոչ մի կերպ չի կարող նվազեցնել ոչ բուրժուազիայի առաջադիմականությունը նրա վերելքի և բուրժուական ռևոլյուցիաների ժամանակաշրջանում, ոչ էլ բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիաների գաղափարախոսների մեծ նշանակությունը։ Լինելով կապիտալիստական զարգացման արդյունք և իրենց գաղափարախոսական արմատներով կապված լինելով բարձրացող բուրժուազիային՝ XVIII դ. ֆրանսիական լուսավորիչները, ինչպես և Sturm und Dreng-ի գերմանական գործիչները կամ 40—60-ական թվականների ռուս լուսավորիչները բուրժուազիայի շահախնդիր իդեոլոգներ չէին։ Ահա ինչպես է բնութագրում Լենինը եվրոպական և ռուս լուսավորիչներին ու նրանց դարաշրջանը.

«Չի կարելի մոռանալ, որ այդ ժամանակ, երբ գրում էին XVIII դ. լուսավորիչները (որոնց հանրաճանաչ կարծիքը բուրժուազիայի առաջնորդների շարքն է դասում), երբ գրում էին 40-ից մինչև 60-ական թվականների մեր լուսավորիչները,—բոլոր հասարակական հարցերը հանգում էին ճորտատիրական իրավունքի և նրա մնացորդների դեմ պայքարելուն։ Հասարակական-տնտեսական նոր հարաբերությունները և նրանց հակասությունները դրա համար էլ այն ժամանակ դեռ սաղմնային վիճակում էին, ուստի և բուրժուական գաղափարախոսների մեջ ոչ մի շահախնդրություն երևան չէր գալիս։ Ընդհակառակը, և՛ Արևմուտքում, և՛ Ռուսաստանում նրանք միանգամայն անկեղծորեն հավատում էին հանուր բարեկեցության և անկեղծորեն տեսնում էին այն, անկեղծորեն չէին տեսնում (մասամբ դեռ չէին կարող տեսնել) հակասություններ այն իրավակարգում, որն աճել էր ճորտատիրականից» (Լենին, հ. II, էջ 315)։

Շահումյանն առանձնապես զբաղվել է ռուս ռևոլյուցիոն-դեմոկրատ լուսավորիչների՝ Գերցենի, Բելինսկու, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Պիսարևի պատմական դերի գնահատությամբ։ Այդ գրողներին գնահատելիս՝ նա ղեկավարվում

է մեր նշած չափանիշով։ Յուլյ տալով ու քննադատելով XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ սահմանափակ, բթամիտ ինտելիգենցիայի ռեակցիոն էությունը, Շահումյանը հակադրում է նրան Բելինսկու, Չերնիշևսկու, Պիսարևի տիտանական դեմքերը։ Բայց պետք է նշել, որ երիտասարդ Շահումյանը, առանձին դեպքերում, դեռ տերմինաբանական հստակություն չունի (Աղայանին նվիրված հոբելյանական ճառում)։ Revolutsyon-demokratsya լուսավորիչներին նա անվանում է լիբերալներ։ Հետագայում, ինչպես նշել ենք, այդ տերմինաբանական անորոշությունը վերանում է։ Այդ բառով նա հասկանում էր հասարակական հնացած իրավակարգի դեմ պայքարելու «ամենառադիկալ ձևերը»։ Այլ կերպ ասած՝ այդ բառը նա դործ է ածում պատմական իմաստով և revolutsyon ճիշտ բովանդակություն է դնում նրա մեջ։ «Որը մի ժողովուրդ դառնում է աննորմալ քաղաքական ու հասարակական պայմաններում, նա ծնում է իր միջից դժգոհ տարրեր, որոնք կռիվ են հայտարարում տիրող կարգերին։ Նայած ժամանակի և տեղի պայմաններին, այդ կռիվը կարող է տարվել երբեմն խաղաղ ու օրինական, երբեմն արմատական, հեղափոխական միջոցներով։ Համենայն դեպս, երկու եղանակն էլ ցանկալի են, երկու եղանակի կռիվն էլ առաջադիմական է, եթե կռվողները չեն դադարում կռվողներ լինելուց, եթե նրանց հաջողվում է հարվածներ հասցնել հին կարգերին և ազատ քարոզել նորերը։ Բայց այնպիսի երկրներում, ինչպիսին է Ռուսաստանը, միայն բացառիկ պատմական մոմենտներ են լինում, երբ լիբերալ, ազատամիտ կուսակցությունը կարող է առաջադիմական կուսակցություն լինել։ Այդպիսի մոմենտներ էին, ի միջի այլոց, 40-ական ու 60-ական թվականները Ռուսաստանում։ Բելինսկին ու նրա ընկերները կարողացան այնքան նշանավոր դեր կատարել ռուսաց կյանքում, որովհետև նրանք հնարավորություն ունեին, շնորհիվ մի քանի պատմական հանդամանքների, հարվածելու ճորտատիրական կարգերին և ազատության դաղափարներ պատվաստելու լեգալ դրականության միջոցով» (Գ. Աղայանին նվիրված հոբելյանական ճառից)։

Ինչպես տեսնում ենք՝ երիտասարդ Շահումյանի հայեացքը ճիշտ է։ Այդ տերմինի մեջ նա ունղուցիոն ճիշտ բովանդակություն է դնում։ Երիտասարդ Շահումյանը ճիշտ է դնահատում ռուս ունղուցիոն դեմոկրատների դերը, նույնիսկ այնպիսի նրբություն է նկատում, ինչպես Գերցենի չափավոր դերը Չերնիշևսկու և Դոբրոլյուբովի համեմատությամբ։ Նա գրում է. «Չնայած իրենց համեմատական ազատության՝ 40-ական, 60-ական թվականների գործիչները չէին բավականանում միայն լիբերալ գործունեությամբ, միայն լեգալ դրականությունով։ Երբ նրանք չէին կարող տպագրել տալ այն, ինչ որ ուզում էին ասել ռուս հասարակությանը, դիմում էին ազատ մամուլին։ Այդպես էին անում Բելինսկին, Պիսարևը, Չերնիշևսկին՝ 40-ական և 60-ական թվականների այդ հսկաները։ Բելինսկու մի նամակ-հոդվածի պատճառով տասնյակ մարդկանց, այդ հոդվածը տարածողներին, տաժանակիր աշխատանքների դատապարտեց կառավարությունը։ Իրեն՝ Բելինսկուն ազատեց պատժից, դուցե մահվան պատժից, միայն բնական մահը։ Պիսարևը չորս տարի նրանց Պետրոպավլովսկի բանտում, Չերնիշևսկին 14 տարով տաժանակիր աշխատանքների դատապարտվեց... և այլն, և այլն։ Տասնյակներով ու հարյուրներով կարելի է թվել այդպիսի անունները... Լեգալ «Современник»-ը նրանց ձեռքին, մանավանդ Դոբրոլյուբովի ու Չերնիշևսկու օրով ավելի համարձակ ու ավելի արմատական է եղել, քան Գերցենի Լոնդոնում հրատարակվող հեղափոխական «Колоколъ»-ը։ Ռուս ազատամիտները դիմել են թերթերին ու ամսագրերին, երբ հնարավոր է եղել նրանց միջոցով խոսել ընթերցողների ավելի լայն շրջանի հետ, հայտնել նրանց տարիների աշխատանքով, ուսումնասիրությամբ ձեռք բերված ու տանջանքներով սրբագործված համոզմունքներ ու ճշմարտություններ։ Նրանք չեն գրել այն, ինչ որ թույլ կտան տպագրելու, այլ գրել են այն, ինչ որ պահանջ են ունեցել գրելու, ինչ որ չէին կարող չգրել,—և հասցրել են իրենց գրածները ժողովրդին

երբեմն լեզալ պրականության միջոցով, երբ այդ հնարավոր է եղել, երբեմն էլ ազատ մամուլի միջոցով։

«Այսպիսով,— եզրակացնում է Շահումյանը,— ռուս լիբերալները մի քաղաքական կուսակցություն են կազմել, որը դժգոհ է եղել տիրող կարգերից, խստիվ հալվածել է այդ կարգերը և ունեցել է իր իդեալը ապագայի վերաբերմամբ, որը նա քարոզել է իր հրատարակությունների միջոցով, իր գրվածքների ամեն մի տողով»։ Պարզ է, թե խոսքն ինչի մասին է։ Այս բացառիկ մեծ դերը, որ խաղացել են Բելինսկին, Գերցենը, Չերնիշևսկին, Դոբրոլյուբովը, Պիսարևը ռուս ժողովրդի պատմության մեջ, բացատրվում է նրանով, որ նրանք առաջավոր ու պրոգրեսիվ աշխարհայացքի կրողներն էին, ռևոլյուցիոն դասակարգերի քարոզիչներ։ Հենց դրանով էլ բացատրվում է այդ գրողների խոշոր ազդեցությունը ռուս ռևոլյուցիոներների մի քանի սերունդների վրա։ Նրանք ամենից ավելի խոր ու հարազատ կերպով են արտացոլել իրենց ժամանակի ժողովրդական հոծ զանգվածների շահերը՝ պայքարելով ֆեոդալա-ճորտատիրական իրավակարգի դեմ և դարձել են իրենց ժամանակի ու ժողովրդի համար ամենաառաջավոր գաղափարների ջահակիրներն ու մունետիկները։ Նրանց մեծության գաղտնիքը հենց դրա մեջ է։ Շահումյանի կարծիքով՝ հասարակական լավ գործիչ կամ գրող չի կարող լինել նա, ով կանգնած չէ իր ժամանակի առաջավոր գիտությունների ու գաղափարների բարձրության վրա։ Իրեն ժամանակակից գրողների համար Շահումյանն անհրաժեշտ էր համարում ձևոք բերել «գիտական հայացքներ հասարակության ու ժողովուրդների զարգացման օրենքների մասին», գտնում էր, որ նրանք պարտավոր են ուսումնասիրել և հասկանալ իրենց ժողովրդի առաջադիմության պայմանները, ընդվել հասարակական որոշ ծրագրով. հակառակ դեպքում հասարակական գործիչը, գրողը կամ հրապարակախոսը չի կարող դրական դեր խաղալ իր ժողովրդի առաջադիմության գործում, երիտասարդ սերնդի զարգացման ու ձևավորման գործում։ Շահումյանի համար գրողի կշիռն ու ազդեցությու-

նը հասարակական կյանքում սերտորեն կապված է նրա աշխարհայացքի հետ, կախված է նրա գաղափարախոսության էությունից. հասարակական գործչի նշանակությունը գնահատելու չափանիշը նրա աշխարհայացքն է։ Ռուս դեմոկրատների ազդեցությունը այդքան ուժեղ էր ժողովուրդների մտավոր զարգացման վրա այն պատճառով, որ նրանք իր ժամանակին ամենաառաջավոր գաղափարախոսության չահակիրներն ու պրոպագանդիստներն էին։ Երբ մարքսիզմը մուտք գործեց Ռուսաստան, ապա մարքսիստական աշխարհայացքն սկսեց ավելի ազդեցություն ունենալ, քան դրա նախորդների գաղափարները։ Եվ դա հասկանալի է. մարքսիզմը աշխարհի ամենաառաջադեմ դասակարգի՝ պրոլետարիատի, ամենագիտական ու հետևողական աշխարհայացքն է։

Բաքվի Սովետի 1918 թ. հուլիսի 15-ի նիստին արտասանած ճառում, խոսելով Պլեխանովի մահվան մասին և նշելով, որ ռուս դեմոկրատիայի ուսուցիչ Պլեխանովը արդեն մի քանի տարի առաջ է մեռել, Շահումյանն այսպես է բնորոշում մարքսիստ Պլեխանովի նշանակությունը.

«Գ. վ. Պլեխանովը էր և մնում է ռևոլյուցիան մարքսիստական դպրոցի ամենաականավոր ներկայացուցիչներից մեկը։ Նրա գրքերով դաստիարակվել են ռուս ինտելիգենցիայի ամբողջ սերունդներ. նույնիսկ Բելինսկին, Դոբրոլյուբովը և Չերնիշևսկին այնպիսի հսկայական ազդեցություն չեն ունեցել ռուս ինտելիգենցիայի մի շարք սերունդների վրա, ինչպես Գ. վ. Պլեխանովը»[1]։

Պլեխանովի անձնական հատկություններն անշուշտ մեծ նշանակություն ունեն. բայց նրա հսկայական ազդեցությունը երբեք չի կարելի բացատրել անձնական հատկություններով, տաղանդով, անկախ նրա աշխարհայացքից։ Պլեխանովի՝ ռուս ինտելիգենցիայի մի շարք սերունդների վրա գործած այդպիսի խոր ազդեցության պատճառը բացատրվում է ամենից առաջ նրանով, որ նա ժամանակին ամենա-

---

[1] С. Шаумян, Статьи и речи, 1917-1918 гг. Баку, 1929, стр. 197.

առաջավոր աշխարհայացքի ու գաղափարախոսության չահապիրն էր, մասսայականացնողը և պաշտպանը։

«Վինում են հասարակության առաջավոր ուժերի շահերին ծառայող նոր, առաջավոր գաղափարներ ու թեորիաներ,—գրում է ընկեր Ստալինը,—նրանց նշանակությունն այն է, որ հեշտացնում են հասարակության զարգացումը, նրա առաջընթացը, քանի որում է՛լ ավելի մեծ նշանակություն են ձեռք բերում, ինչքան ավելի ճշգրտորեն են արտացոլում հասարակության նյութական կյանքի զարգացման պահանջները» (Ստալին, «Լենինիզմի հարցերը», էջ 546)։ Ընկեր Ստալինի այս խոսքերում տրված է հասարակության, ժողովուրդների կյանքում առաջավոր գաղափարների խաղացած դերի կլասիկ բնորոշումը։ Իրենց դարն ապրած գաղափարները, հին գաղափարներն ու թեորիաները չէին կարող դրական դեր խաղալ ժողովրդի պրոգրեսիվ զարգացման մեջ։ Ընդհակառակը, «նրանք արգելակում են հասարակության զարգացումը»։ Այստեղ հսկայական նշանակություն ունեն և՛ պատմական մոմենտը, և՛ սոցիալ-քաղաքական պայմանները։ Բայց և այնպես, քարոզվող աշխարհայացքի էությունը, որակն է որոշում ժողովրդի հասարակական զարգացման վրա գործած նրա ազդեցության ուժն ու խորությունը։

Այս ամենը ընդհանուր հարցադրման կարգով։

Այժմ մենք պետք է քննության առնենք մի այլ հարց, այն է՝ ինչպե՞ս է այս ընդհանուր սկզբունքները կիրառում Շահումյանը գեղարվեստական գրականության բնագավառում։

Աշխարհայացքի և գեղարվեստականության հարցը մեծ հարց է։ Այս հարցի շուրջը մեծ դիսկուսիաներ են եղել և դեռ լինում են. բայց ասել, որ ընդհանուր, միասնական հայացք է կազմվել այդ մասին՝ հազիվ թե հնարավոր է։ Բայց մարքսիստական էսթետիկայում, ընդհանուր սկզբունքներով՝ աշխարհայացքի և գեղարվեստականության դերը, նրանց փոխհարաբերությունը իր գիտական հիմքն ունի։ Շահումյանն էլ իր հոդվածներում ընդհանուր ձևով շոշափում է

այս հարցերը։ Շահումյանին (որպես մարքսիստ քննադատի) ամենից առաջ հետաքրքրում է գրողի սոցիալ-դասակարգային դեմքը, իսկ ստեղծագործության արվեստը նա սերտորեն կապում է գրողի երկերի գաղափարական բովանդակության հետ։ Բայց գրողի ստեղծագործության դասակարգային բնույթը Շահումյանը դիտում է ոչ շաբլոն ու գռեհիկ կերպով, որովհետև տվյալ հեղինակին վերցնում է դասակարգային պայքարի, նրա ժամանակաշրջանի սոցիալական միջավայրի բարդ պայմաններում և միայն այդ ժամանակ է որոշում հեղինակի սոցիալ-դասակարգային պատկանելիությունը։ Ահա Տոլստոյի օրինակը։ Հայտնի է, որ այնպիսի մարքսիստ քննադատ, ինչպիսին է Պլեխանովը, Տոլստոյին համարում էր ազնվականության գրող, չհարանալով 70-ական թվականներից սկսած նրա աշխարհայացքում տեղի ունեցող պրոցեսների մեջ։ Միայն Լենինը իր հանճարեղ հոդվածներում ցույց տվեց Տոլստոյի աշխարհայացքի բեկման իսկական իմաստը՝ գտնելով, որ Տոլստոյը անցավ նահապետական գյուղացիության կողմը, դարձավ նրա տրամադրությունների ու գաղափարների արտահայտիչը։ Շահումյանը բացահայտում է Տոլստոյի ստեղծագործության մեջ եղած հակասությունները ու բեկումը՝ ընդհանուր առմամբ Լենինի ոգով և Լենինի հոդվածի ազդեցությամբ։ Տոլստոյի ստեղծագործության և ուսմունքի մեջ եղած բեկումը Շահումյանը բացատրում է ժողովրդական ընչազուրկ զանգվածների՝ նրա վրա գործած ազդեցությամբ, որոնց վիշտն ու տառապանքը տեսնում էր Տոլստոյը և խորապես կարեկցում։ Ավելին՝ Շահումյանը Տոլստոյին հայտարարում է «ընչազուրկ զանգվածների ազնիվ և անկեղծ բարեկամ»։ Ընչազուրկ զանգվածներ ասելով՝ Շահումյանը, հասկանալի է, նկատի ուներ ոչ թե բանվոր դասակարգը, որի պայքարը խորթ էր Տոլստոյին, այլ ամենից առաջ գյուղացիությունը, որն այդ ժամանակ դեռ նահապետական պայմաններում էր գտնվում։ Որոշելով գրողի դասակարգային բնույթը, Շահումյանը դնահատում է նրա ստեղծագործության գաղափարական բովանդակությու-

նը, բացահայտում է նրա իսկական իմաստը՝ չդիմելով ստեղծագործության դասակարգային բնույթի ընդհանուր ու շաբլոն հավաստումներին։ Շահումյանի խորաթափանցությունը Տոլստոյի նկատմամբ՝ գրական երևույթների դիալեկտիկական կոնկրետ մոտեցման և վերլուծման օրինակ է։ Մենք դեռ հատկապես կքննարկենք Տոլստոյի մասին գրած Շահումյանի հոդվածները։ Այստեղ հիշատակենք միայն հետևյալը. ելնելով մարքսիստական-լենինյան ընդհանուր մեթոդոլոգիական դրույթներից, Շահումյանը խիստ քննադատության է ենթարկում Տոլստոյի ռեակցիոն հայացքները և բոլոր նրանց, որոնք իդեալականացնում էին այդ հայացքները՝ Տոլստոյին հայտարարելով «մեծ մտածող և կյանքի ուսուցիչ»։ Շահումյանի համար Տոլստոյը մեծ է իր դեղարվեստական երկերով. նա գեղարվեստական հանճարեղ երկերի՝ «Պատերազմ և խաղաղություն»-ի, «Աննա Կարենինա»-յի, «Հարություն»-ի, «Տերն ու ծառան»-ի և այլն հեղինակն է։ Սակայն քննադատելով Տոլստոյի ռեակցիոն ուսմունքը, Շահումյանը դրանք չի անջատում գեղարվեստական երկերից, ինչպես արել են որոշ քննադատներ, այդ թվում և Պլեխանովը։ Ընդհակառակը, նա բացահայտում է մեծ դրողի թե՛ գեղարվեստական երկերի և թե ուսմունքի մեջ եղած խոր հակասությունը, նշելով, որ «Աննա Կարենինա»-յի, «Պատերազմ և խաղաղություն»-ի և այլ գործերի, նույնիսկ նրա ամենահակղբնական գործերի մեջ առկա են Տոլստոյի ուսմունքի շատ տարրեր՝ Շահումյանը բացահայտում է «Տոլստոյի կյանքում ու գրվածքներում եղած անհամար հակասությունները»։

Տոլստոյի ուսմունքն իր ամբողջությամբ ռեակցիոն լինելով հանդերձ՝ ունեցել է քննադատական, պրոգրեսիվ տարրեր։ Ջարին չհակառակելու քարոզներով և մեր աշխարհիկ ողջ կյանքը, ողջ կուլտուրան ժխտելով հանդերձ՝ Տոլստոյը, գրում է Շահումյանը, մերժում էր տերտերականությունը և մահապատիժը՝ մերկացնելով իր ժամանակակից հասարակական, քաղաքական իրավակարգը, մանավանդ եկեղեցական աստը։

«Տոլստոյի նույնիսկ կրոնական երկերում,—գրում է Շահումյանը,—կան բուրժուազիայի և իշխանության դեմ ուղղված բազմաթիվ մերկացնող էջեր»:

Տոլստոյի «Ո՞րն է իմ հավատը» գրքի մասին գրած ամփոփ կոնսպեկտի մեջ Շահումյանը մեծ տեղ է հատկացնում նրա գրական կորիզի բացահայտմանը: Քաղվածքներ անելով վերոհիշյալ գրքից և քննարկելով Տոլստոյի շարադրած՝ քրիստոսի հինգ պատվիրանները, Շահումյանն անում է իր դիտողությունները: «Եվ ով ուզում է դատ բանալ քո դեմ և վերցնել քո շապիկը՝ վերնազգեստդ էլ տուր նրան և այլն» (4-րդ պատվիրան) բառերից հետո Շահումյանը նկատում է՝ «իմաստը՝ դատարանի և պատժի ժխտումն է»: Ձևսեցնեք, որ ասված է՝ «Սիրիր քո մերձավորին և ատիր քո թշնամուն» (5-րդ պատվիրան): Իսկ ես ասում եմ ձեզ,—գրում է Տոլստոյը,—«Սիրեցնեք ձեր թշնամիներին, օրհնեցեք ձեզ անիծողներին...», սրա իմաստն է,—բացատրում է Շահումյանը,—հավասարապես սիրել հրեաներին և ոչ-հրեաներին, ժողովուրդների թշնամանքն ու պատերազմները ժխտող սեր»:

Շահումյանի այս ծանոթությունները ցույց են տալիս, թե ինչպիսի խորամտությամբ է նա մոտեցել Տոլստոյին: Եվ դա հնարավորություն է տվել նրան բացահայտել Տոլստոյի ուսմունքի հակասականությունը նույնիսկ նրա կրոնական գործերում և գտնել կրոնական կեղևի տակ թաքնված դրական, ռացիոնալ կորիզը:

Եթե Տոլստոյն ունենար միայն ռեակցիոն աշխարհայացք և ոչ մի դրական, քննադատական բան չպարունակեր այն, ապա հազիվ թե նա ստեղծեր այնպիսի հանճարեղ գեղարվեստական գործեր, որոնք «մի քայլ առաջ մղեցին մարդկության գեղարվեստական զարգացումը» (Լենին): Տոլստոյի աշխարհայացքի առաջադեմ տարրերը սնուցել են նրա գեղարվեստական հանճարը, նրա ռեալիստական ու քննադատական մոտեցումը իր ժամանակի երևույթներին, նախապըրյալներ են ստեղծել ծաղկեցնելու այդ հզոր տաղանդը:

Եթե կրոնական զղջումները, ինքնակատարելագործման ու բարոյական վերածնման տեսությունը մանրացնում էին

Տոլստոյին, ապա ընդհակառակը, նրա քննադատական մոտեցումը ժամանակի իրականությանը մարմնավորվեց բարձրարվեստ ստեղծագործության մեջ և ընդունեց առողջ ռեալիզմի բնույթը՝ պատռելով ամեն տիպի դիմակները։ Լենինը բարձր էր գնահատում Տոլստոյի այդ ռեալիզմը։ Շահումյանը ժխտելով ու քննադատելով Տոլստոյի ռեակցիոն ուսմունքը, բարձր է գնահատում նրա ռեալիզմը, նրա ուսմունքի և ստեղծագործության քննադատական կողմը, նրա գեղարվեստական հանճարը, որը սնվում էր Տոլստոյի աշխարհայացքի առաջադեմ տարրերով։

Կրոնական կամ այլ տիպի ռեակցիոն դաղափարների մեջ Շահումյանը չի տեսել և չէր կարող տեսնել գեղարվեստական ոգեշնչման աղբյուր, գեղարվեստական մեծ ընդհանրացումների հիմունքներ. դաղափարական կամ քաղաքական ռեակցիան չի կարող ստեղծագործական խթան, շարժուղ նախասիկզբ դառնալ։ XX դարի ռուս գրականության պատմությունը չափազանց բնորոշ է այս տեսակետից։ XX դարի նախահեղափոխական շրջանի ռուս գրականության խայտաբղետ, բայց գորշ ֆոնի վրա բարձրանում է մի վեհատեսիլ, սքանչելի դեմք՝ Ալեքսեյ Մաքսիմովիչ Գորկու դեմքը, որ, ինչպես Շահումյանն է գրել, «պրոլետարական գրականության զարդն ու պարծանքն է»։

Գորկու ստեղծագործության աղբյուրը պրոլետարիատի պայքարն էր երջանիկ կյանքի համար։ Հանձին Գորկու պրոլետարիատի գեղարվեստական հանճարը գտավ իր ադեկվատ արտահայտությունը։ Գորկին ոչ միայն պրոլետարիատի մեծ արվեստագետն էր, այլև նրա ու բոլոր աշխատավոր մասսաների ազատագրության համար մարտնչողը։ Այս հանդամանքը լավ բացահայտված է Շահումյանի հոդվածում։ «Ինչքան ավելի է Գորկին անհամակրելի դառնում տիրող դասակարգերին, բուրժուական ինտելիգենցիային, այնքան ավելի մոտիկ ու սիրելի է դառնում բանվորներին, պրոլետարական ինտելիգենցիային, ընդհանրապես «դեմոսին»։ Նա խստորեն առանձնացնում էր նրան իր ժամանակի գրողներից

ոչ միայն որպես պրոլետարական գրող-արվեստագետի, այլև բարոյական մաքրության ու նրբազգացության տեր անձնավորության։

Ինչո՞ւ տաղանդավոր գրողների մասսայից այդպես առանձնացնում էր միայն Գորկին, ինչպե՞ս բացատրել այդ երևույթը։ Գրողի անձնական հատկությունները, մեծ տաղանդն անշուշտ այս խնդրում փոքր դեր չեն խաղում, բայց միայն սրանով բացատրել լրիվ չէր լինի։ Վճռական դեր է խաղում այն հանգամանքը, որ Գորկին «խիստ ուժեղ էր կապել իրեն՝ իր գեղարվեստական մեծ երկերով՝ Ռուսաստանի և ողջ աշխարհի բանվորական շարժման հետ» (Լենին), որ իր ոգեշնչումն սառնում էր պրոլետարիատից՝ աշխարհի ամենահեղափոխական դասակարգից և դարձել էր նրա պայքարի, ձգտումների ու տենչերի արտահայտիչը։ Միայն այս պլանով կարելի է հասկանալ Գորկու ստեղծագործական մեծությունը, գնահատել նրա հաջողությունը որպես մեծ արվեստագետի։ Շահումյանի համար Գորկու գեղարվեստական մեծությունը սերտորեն կապված է պրոլետարիատի պայքարի և աշխարհայացքի հետ։ Ինչպես ճիշտ դրել է Շահումյանի դեկավարած սոցիալ-դեմոկրատական «Պայքար» թերթի աշխատակից և նրա փենակից Ա. Մռավյանը, «Պրոլետարական աշխարհայացքը և աշխարհաղգայողությունը Գորկու ստեղծագործություններին տվել է հզոր թափ և հարստացրել է այն»։ Սա ոչ միայն Ա. Մռավյանի անձնական կարծիքն է, այլ դա կարելի է հավասարապես համարել և Շահումյանի կարծիքի արտահայտությունը։ Դրական կերպով գնահատելով առաջավոր աշխարհայացքի դերը գեղարվեստական արժեք ստեղծելու գործում, Շահումյանը հասկանում էր, որ ոչ միշտ և ոչ ամենքին կարող է հաջողվել տեսակետ կերպով համադրելու իր առաջադեմ գաղափարները և ոչ ամեն մի առաջավոր գաղափարախոսության ջահակիր ու պրոպագանդիստ կարող է գեղարվեստական մեծ գործ ստեղծել։ Այս հարցի խորությունն ու բարդությունը պարզ էր Շահումյանին։ Լինելով գեղարվեստական ստեղծագործության խոր

գաղափարականության կողմնակից, Շահումյանը դրանով հանդերձ ժխտում է մերկ հրապարակախոսությունը, ձևի անկատարությունն ու լեզվի անկանոնությունը: Այս մասին բավական նյութ են ընձեռնում Հակոբ Հակոբյանի «Նոր առավոտ» պոեմի լուսանցքների վրա Շահումյանի արած դիտողությունները: Իր ստեղծագործական խառնվածքով Հակոբյանը քաղաքացի բանաստեղծ էր: Նրա պոեզիայի պաթոսը պրոլետարիատի պայքարն էր, նրա կյանքը, ձգտումները, հրճվանքն ու տենչերը: Հակոբյանի ստեղծագործությանը դրական գնահատական տվին Շահումյանն ու Սպանդարյանը: 1910 թ. Հակոբյանը, որ մինչ այդ էլ բանաստեղծություններ էր գրում, տպագրեց «Նոր առավոտ» պոեմը և մի օրինակ ուղարկեց Շահումյանին, Բաքու, ուր նա այդ ժամանակ աշխատում էր: Ուշադրությամբ կարդալուց հետո, Շահումյանը, ինչպես դիտողություններից է երևում, դո՞հ չի եղել պոեմից և իր դիտողություններով վերադարձրել է հեղինակին՝ վերամշակելու: Շահումյանի դիտողությունները դրող-ընկերոջ նկատմամբ հոգատար վերաբերմունք ունենալու գայտուն օրինակ են և ուսուցող բնույթ ունեն:

Այդ դիտողությունների էությունն այն է, որ գեղարվեստական ձևը, արտահայտչական միջոցները հեղինակի քարոզած դաղափարախոսության մակարդակին չէին: Պրոլետարիատի կյանքից պոեմ գրելու համար պետք է համապատասխան ձևեր և արտահայտչական միջոցներ գտնել: Շահումյանը, որպես մարքսիստ-լենինյան, քաջ գիտեր, որ կուլտուրայի և դրականության դաղափարական-դասակարդային բովանդակությունն են որոշում ձևը և գերիշխող էր ճանաչում բովանդակությունը ձևի նկատմամբ: Նա դեմ էր, որ ձևի, ֆորմալիստական արվեստասիրության համար տուժեր բովանդակությունը: Բայց էսթետիկական ուսմունքներն ուսումնասիրած Շահումյանի համար պարզ էր, բովանդակությունը չի կարող դոյություն ունենալ առանց ձևի, որ արվեստում ձևի ու բովանդակության մեջ պետք է ներդաշնակու-

թյուն լինի, այլապես արվեստ չի առաջվի։ Ճիշտ այդպես էլ մերկ տենդենցը, առանց համապատասխան գեղարվեստական ձևի, թեկուզ և առաջադեմ սկզբունքներ արտահայտի, չի կարող գեղարվեստականորեն արժեքավոր ճանաչվել և իսկ հուզականությամբ ներգործել ընթերցողների վրա։ Սա շոշափելիորեն տեսնվում է պոեմի լուսանցքների վրա արած Շահումյանի դիտողություններից։ Հետաքրքրական է նշել և հետևյալ փաստը. Շահումյանի մասին Հակոբյանի գրած հիշողություններում ասվում է, որ Շահումյանը պոեմի հետ ուղարկել էր նաև երեք գիրք բելգիական մեծ բանաստեղծ է. Վերհառնի գործերից, հավանաբար հոգ տանելով իր ընկեր-բանաստեղծի գրական կրթության մասին։

Մի ուրիշ օրինակ. Իբսենի մասին «Կայծ» բոլշևիկյան թերթում տպագրած հոդվածում, մատնանշելով նրա ռեալիզմը կյանքի անցյալն ու ներկան պատկերել կարողանալը, հեղինակը դրականորեն է խոսում Իբսենի՝ որոշակի տեսակետը թաքցնել կարողանալու մասին. «Նա չի սիրում հայտնել իր հայացքը. չէ՞ որ նա չի սիրում կուսակցություններին և հետևաբար սուբեկտիվիզմը. նա առարկայական՝ օբեկտիվ է. նա մեզ տալիս է համամարդկային դպացումներ, թողնելով եղրակացությունները յուրաքանչյուրի հայեցողությանը։ Այդ պատճառով ոչ մի հեղինակի գրվածքները մեզ այնքան մտածել չեն տալիս, որքան Իբսենինը։ Համառ մանկավարժը, իր դասերը լարանում ավանդելուց հետո, աշակերտներին զբաղման նյութ է տալիս և տան համար։ Եվ իրոք. ո՞վ կարող է Իբսենի որևէ գործը բեմի վրա դիտել և թատրոնից դուրս գնալ առանց մտազբաղման, առանց հարցերի ու վիճաբանությունների» («Կայծ», 1906, № 22)։ Հոդվածագրի համար Իբսենի ստեղծագործության խոր գաղափարականությունը հենց նրանով է արժեքավոր, որ այդ գաղափարականությունը սքողված է գեղարվեստական ձևի տակ, մարմնացած է ադեկվատ կերպարների մեջ, որից էլ առաջանում է նրա դրամաների ներգործող ուժը։

«Ինչքան ավելի են թաքնված հեղինակի հայացքները,

այնքան լավ է դա արվեստի գործի համար»,— սովորեցնում է Էնգելսը (Մարքս—Էնգելս, «Արվեստի մասին»):

Շահումյանն իր հոդվածներում էլ հանդում է նույն եղրակացության: Նրա վերոշարադրյալ հայացքները, ինչպես տեսնում ենք, համընկնում են Էնգելսի պահանջներին.— տենդենցը պետք է թաքնված լինի արվեստի ստեղծագործության մեջ: Գրականության մեջ այդ դրությունը բխում է արվեստի բնույթից, գեղարվեստական գրականության յուրահատկությունից: Արվեստի ու գրականության բնույթն ու յուրահատկությունը խորապես հասկանալը, ստեղծագործական պրոցեսի բարդությունների ըմբռնումը Շահումյանի գրա-քննադատական ելույթների մեծ արժանիքն է:

Շահումյանի այս հոդվածները որոշակիորեն աչքի են ղարնում և նրանով, որ դրանց մեջ ընդգծված է կլասիկների ռեալիստական, քննադատական վերաբերմունքի առավելությունը դեպի իրականությունը, նրանց խորաթափանցությունը կյանքի երևույթների մեջ:

Հասարակական գործչի և գրողի համար Շահումյանը պարտադիր էր համարում կենսաճանաչությունը. առանց կյանքը խոր ու բազմակողմանի կերպով ճանաչելու և ուսումնասիրելու, գրողը չի կարող կենդանի կերպարներ, ճշմարտացի գործեր ստեղծել: Նվ դա հասկանալի է: Մարքսիտական գրականությունից հայտնի է, որ իր ժամանակի կյանքն ու մարդկանց լավ ճանաչելը կօգնեն գրողին, հակառակ նույնիսկ նրա քաղաքական ռեակցիոն նախապաշարումներին՝ ստեղծելու ռեալիստական հիանալի գրականություն, լինելու քննադատական ռեալիզմի ներկայացուցիչ:

Անհրաժեշտ է նկատել, որ իրականության երևույթներին քննադատաբար մոտենալը կլասիկների մոտ միշտ էլ ոգեշնչման խթան է եղել, հետևաբար գեղարվեստական տեսակետից մեծ և ուժեղ երկեր ստեղծելու աղբյուր: Գրողի քաղաքական ռեակցիոն նախապաշարումները, նախ, նույնացված չեն նրա ողջ աշխարհայացքի հետ, ապա, իրականության գեղարվեստական ճանաչողությունը հաճախ դուրս է

գալիս այս կամ այն հեղինակի քաղաքական կամ կրոնական նախապաշարումների շրջանակից: Տոլստոյի, Բալզակի կամ Գոգոլի օրինակն այս իմաստով խիստ ուսանելի է ու ընորոշ: Շահումյանն ունի ասույթներ, որոնք հիմք են տալիս կարծելու, որ նրան խորթ է այն գեհենացնող մոտեցումը, երբ գեղարվեստական, կամ նույնիսկ փիլիսոփայական մտածողությունը, նույնացվում է հեղինակի քաղաքական հայացքներին: Ըստ Շահումյանի՝ առանձին դեպքերում կարող են հակասություններ լինել այս կամ այն հեղինակի գեղարվեստական-ռեալիստական մոտեցման և տեսական ու քաղաքական հայացքների, տակտիկական դիրքի միջև: Այս տեսակետից հետաքրքրական է այն գնահատականը, որ տալիս է Շահումյանը Պլեխանովին 1906 թ. նրա մի օպորտունիստական ելույթի առթիվ. «Պլեխանովը ցույց տվեց մեզ իր սխալ օրինակով, որ կարելի է լինել շատ լավ թեորետիկ, բայց անընդունակ դառնվել բաղաքական ղեկավար լինելու կատակցության համար՝ նրա ակտիվ գործունեության ժամանակ, որ կարելի է օրթոդոքս հեղափոխական մարքսիստ լինել տեսական հարցերում, բայց շնորհիվ իրականության բյուր ըմբռնման — ծայրահեղ օպորտունիստ դառնալ տակտիկայի մեջ (Երկեր, հ. I, էջ 143): Մենք գիտենք, Շահումյանն էլ, իհարկե, լավ է իմացել, որ քաղաքականության մեջ այդ երևույթը երկար շարունակվել չի կարող, որ քաղաքական կամ տակտիկական օպորտունիզմը չինական պարիսպով չի անջատվում թեորիայից, փիլիսոփայական օպորտունիզմից, և ընդհակառակը, թեորիայի մեջ արտահայտվող օպորտունիզմը ի վերջո դառնում է քաղաքական օպորտունիզմ: Առաջինի համար Պլեխանովի օրինակը բավական համոզիչ է[1]: Երկրորդի համար կարելի է նշել Բոգդանովի օրինակը, որի օպորտունիզմը փիլիսոփայության մեջ մախիզմի և էմպիրիոկրիտիցիզմի չարաբաստիկ փիլի-

---

[1] Մոտ տասը տարի հետո Շահումյանը Պլեխանովի տեսական ու քաղաքական օպորտունիզմի մասին գրեց. «Դրանք հանգեցրին այն բանին, որ նա մոռացավ հեղափոխական ուսմունքը»:

տուփայության պաշտպանությունը ի վերջո վերածվեց քաղաքական օպորտունիզմի։ Բայց տվյալ դեպքում խոսքը սրա մասին չէ, այլ այն, որ լինում են դեպքեր, մոմենտներ, երբ այս կամ այն գործչի մոտ կարող է հակասություն ծագել, մերթ երկարատև, մերթ կարճ, հարցի քաղաքական-տակտիկական և տեսական-փիլիսոփայական մոտեցման միջև։

Եթե նման հակասություններ կարող են ունենալ հասարակա-քաղաքական գործիչները կամ բնագետները, ինչպես այդ մասին ասել է Լենինը, ապա ինչո՞ւ հակասությունը չի կարող լինել գեղարվեստական ստեղծագործության ներկայացուցիչների՝ գրողների մոտ։ Նրանք հակասություններ ունենալու նույնիսկ ավելի հող ունեն, քան առաջինները։ Ռեալիստ-արվեստագետը հենվում է իրականության վրա, գեղարվեստական կերպարներ ստեղծելիս՝ ելնում է օբեկտիվ ռեալ իրականությունից։ Եթե հեղինակի քաղաքական կամ փիլիսոփայական հայացքները զուգադիպում են զարգացման օբեկտիվ ընթացքին և խոտոր չեն նրանց, եթե հեղինակի աշխարհայացքը հիմնված է գիտական սկզբունքների վրա և օգնում է նրան ճիշտ հասկանալու երևույթները, ապա խոսք չի կարող լինել հակասությունների մասին։ Բայց ոչ միշտ և ոչ ամենքը կարող են այդպիսի ներդաշնակություն ունենալ։ Գրականության պատմությունից հայտնի են և այլ դեպքեր։ Ռեալիստ գրողը հավատարիմ մնալով իրականության ճշմարտացի պատկերման սկզբունքին, կերտում է գեղարվեստական տեսակետից լիարժեք երկեր, հակառակ նույնիսկ իր կրոնական ու քաղաքական նախապաշարումներին, ռեակցիոն հայացքներին։ Հանրածանոթ օրինակ է Բալզակը, որի հակասությունները այնքան հանճարեղ կերպով բացահայտել է Էնգելսը։ Քաղաքական համոզմունքներով լեգիտիմիստ լինելով, Բալզակն «ստիպված էր իր սեփական դասակարգային համակրանքին ու քաղաքական նախապաշարումներին հակառակ գնալ», ստեղծելով ռեալիստական մեծ երկեր, որոնք այնքան բարձր էին գնահատում Մարքսն ու Էնգելսը («Արվեստի մասին», էջ 164)։

Շահումյանի առանձին ասույթներից երևում է, որ նա էլ հնարավոր է համարում առանձին դեպքերում հակասություններ գրողի իրականության գեղարվեստական ճանաչման և հրապարակախոսական-քաղաքական ելույթների միջև, այսինքն՝ գրողի գեղարվեստական գործունեությունը չի նույնացնում նրա քաղաքական կամ հրապարակախոսական գործունեության։ Հասարակական գիտակցության այս տեսակների մեջ նա հավասարություն չի դնում, թեև իրար էլ չի հակադրում։

Իր ստեղծագործության մեջ գրողը տալիս է կյանքի, ժողովրդի վարք ու բարքի ռեալիստական-ճշմարտացի պատկերումը, մինչդեռ իր հրապարակախոսական, քաղաքական ելույթներով տալիս է նույն իրականության սխալ, կեղծ պատկերը։ Այդպես է եղել և խոշոր հայ բանաստեղծ ռեալիստ Հ. Թումանյանի հետ։ Շահումյանը բարձր էր գնահատում Թումանյանի ստեղծագործությունը՝ ռեալիզմի, ճշմարտացիության ու կենսասիրության համար։ Բայց 1913—14 թ. թ. գրած բանաստեղծի մի քանի հոդվածները բացահայտորեն հակասում են նրա ստեղծագործական գործունեությանը։ Եվ Շահումյանը նշում է այդ հակասությունը, անվանելով նրան «նշանավոր բանաստեղծ և վատ հրապարակախոս» (Հատ. II, էջ 62)։ Շահումյանի այս դրույթները լիակատար հիմք են տալիս անելու վերոհիշյալ մեր եզրակացությունները։ Սրանով նա սկզբունքորեն թույլ է տալիս հակասություններ կլասիկների գեղարվեստական ու քաղաքական մտածողության միջև, մոտավորապես այնպիսի հակասություններ, որ բացահայտել է Էնգելսը Բալզակի մոտ։ Շահումյանը նախատեսել է և մի այլ տիպի «հակասություն», երբ գեղարվեստական ստեղծագործությունը չի համընկնում գրողի քաղաքական դիրքին։ Այս տիպի հակասության օրինակ է հայ գրականության մեջ Րաֆֆին։ Շահումյանը չի նշում Րաֆֆու գեղարվեստական ստեղծագործության և քաղաքական-գաղափարական դիրքի հակասությունը. այս իմաստով, նոր շրջանի բոլոր հայ գրողներից ամենա-

միաձույլն ու ներդաշնակը (որոշ շրջանում) գուցե Բաֆֆին է, բայց նա հավասարարժեք չի համարում Բաֆֆու գործունեության երկու կողմերը։ Եթե գաղափարախոսական և քաղաքական պլանում Շահումյանը ժխտում է Բաֆֆու ժառանգությունը, համարելով նրան բուրժուա-նացիոնալիստական հոսանքի այուններից մեկը (տե՛ս «Մեր Սուրենը» հոդվածը, 1916 թ.), ապա այլ կերպ է խոսում նրա գեղարվեստական ստեղծագործության մասին, համարելով նրան «հայ հասարակության սիրելի ու ճանաչված հեղինակներից մեկը» («Армянский сборник»-ի առթիվ գրած հոդվածը՝ 1916 թ.)։ Եվ հասկանալի է։ Բաֆֆու ստեղծագործությունն ավելի մեծ է ու բազմազան, քան նրա քարոզած հայացքները։ Գեղարվեստական ստեղծագործության մեջ, բացի ընդհանուր գաղափարներից, կան նաև կենդանի կերպարներ, ռեալ իրականության տիպիկ պատկերներ, որով երկը տարբերվում է հեղինակի քաղաքական ուղղակի քարոզներից ու հրապարակախոսական ելույթներից, դառնում է գեղարվեստականորեն ավելի արժեքավոր ու հետաքրքրական։

Այս տեսակետից հետաքրքրական է համեմատել Շահումյանի հայացքները Չերնիշևսկու հայացքների հետ։

Ռուս մեծ մտածողը մի հոդվածում քննարկելով Օստրովսկու «Աղքատությունն արատ չէ» կոմեդիան, նշել է, որ պիեսի հերոսը՝ Լյուբիմ Տորցովը, առանձին վերցրած, հավատարիմ է իրականությանը, բայց կեղծ հայացքով համակված պիեսում նա ուժեղացնում է այդ հայացքը և դրանով էլ կեղծ տպավորություն է գործում։ «Դա առաջանում է նրանից,—եզրակացնում է Չերնիշևսկին,—որ բացի առանձին անձերից, գեղարվեստական երկում լինում է ընդհանուր գաղափար, որից (և ոչ թե առանձին անձերից) էլ կախված է երկի բնույթը»[1]։ Չերնիշևսկու այս խիստ կարևոր ու հետաքրքրական գրականագիտական դրույթը կօգնի լուսաբանելու մեզ հետաքրքրող հարցը։

Վերցնենք Դոստոևսկու «Դևերը»։ Վաղուց ապացուցված

---

1 Чернышевский, Избр. Соч. в одном томе, էջ 171.

ու հանրաճանաչ է այս վեպի ռեակցիոն լինելը։ Բայց քննադատությունն ընդհանրապես ճիշտ նշելով վեպի ռեակցիոն լինելը, դրանից առաջ չի գնացել, չի խորացել և ցույց չի տվել վեպի ընդհանուր (ռեակցիոն) գաղափարը և կերպարների (որոնք ռեալիստական են և համապատասխանում են իրականությանը) միջև եղած ներքին հակասությունը։ Այլ կերպ ասած՝ բավականաչափ չեն բացահայտված վեպի թեմայի, հերոսների և նույնիսկ այժմեական դծի ռեալիստականության, ճշմարտանմանության և գաղափարների միջ եղած հակասությունները։ Պարզ է, որ Դոստոևսկին գրել է այդ վեպը, նպատակ ունենալով վարկաբեկել, ցնխոտել ռևոլուցիոն-դեմոկրատական սոցիալիստական շարժումը։ Վեպում եղած հակասությունները միայն առիթ են տալիս մտածելու, որ վեպի հիմքը կազմող դեպքերը որևէ ընդհանուր բան չունեն սոցիալիզմի ու ռևոլուցիայի հետ։ Պատմությունից հայտնի է, որ «Դևեր» վեպում նկարագրված դեպքերի նախատիպը այսպես կոչված «Նեչաևի գործն» է եղել։ Քննադատական գրականության մեջ վաղուց արդեն հաստատված են վեպի պերսոնաժների նախատիպերը։ Նիկոլայ Ստավրոգինը՝ Բակունինն է, Պյոտր Վերխովինսկին՝ Նեչաևը, Շատովը՝ ուսանող Իվանովը և այլն։ Մի քանի քննադատներ ռեակցիոն են համարում վեպը նրա համար, որ դրա մեջ տեսնում են մի պասկվիլ Նեչաևի և նրա գաղտնի ընկերության մասին, ըստ որում այդ գաղտնի ընկերությունը նրանք համարում են սոցիալիստական, ռևոլուցիոն-դեմոկրատական կազմակերպություն։ Բայց սա, ավա՜ղ, խոր մոլորություն է։ Մարքսն ու Էնգելսը վաղուց են ապացուցել, որ Բակունինի էմիսար Նեչաևը և նրա գաղտնի ընկերությունը որևէ ընդհանուր բան չեն ունեցել սոցիալիզմի և ընդհանուր ռևոլուցիոն-դեմոկրատական շարժման հետ. ընդհակառակը, յուրօրինակ մի ավանտյուրա էր թաքնված սոցիալիզմի և ռևոլուցիոն կազմակերպության դրոշի. տակ, ոչ մի ռևոլուցիոն ու սոցիալիստական բան չունենալով։ Այն փաստաթղթերը, որ Մարքսն ու Էնգելն ուսումնասիրեցին Նեչաևյան «գաղտնի կազմա-

կերպության» պատմությունը գրելիս, լիովին հաստատում են արկածախնդիր Նեչաևի և նրա գաղափարական ոգեշնչող Բակունինի իսկական էությունը։

«Նեչաևն այնպես էր վարում իր գաղտնի ընկերության գործերը, որ բնականաբար կասկած էր ծագում ողջ կազմակերպության լրջության նկատմամբ»,—գրում են Մարքսն ու Էնգելսը։

«Այս բոլոր մանկական ու ինկվիզիտորական եղանակները կասկած հարուցեցին ուսանող Իվանովի մեջ՝ կոմիտեի դոյության և այդ այնքան փառաբանված կազմակերպության հզորության նկատմամբ։ Նա սկսեց կռահել, որ ամեն ինչ հանգում է մարդկանց անհեթեթ շահագործման և վիթխարի խաբեություն է»[1]։

«Երբ Բակունինն ազատեց իրեն Ռուսաստան գնալու պարտավորությունից՝ revolutsian անձամբ ղեկավարելու համար,—հեգնանքով գրում են Մարքսն ու Էնգելսը,—որի անխուսափելի պայթյունը նա գուշակել էր, ապա Եվրոպայում նա այնպես էր գործում, որ կարծես «սատանա էր նրա տեղ» մեջը»[2]։

«Ջորանոցային կոմունիզմի ի՞նչ հիանալի նմուշ»,—գրում են պրոլետարիատի մեծ ուսուցիչները՝ Բակունին-Նեչաևի ծրագրային փաստաթղթերը մեջ բերելուց հետո։ Մարքսն ու Էնգելսը նկարագրելով Նեչաևի չարաբաստիկ դաղտնի ընկերության պատմությունն ու գործունեությունը, բացահայտեցին նրա իսկական կերպարանքը։ Սրանից հետո հազիվ թե տեղին կլինի Նեչաևին և նրա կազմակերպությունը նույնացնել revolutsian կազմակերպությունների հետ և, հիմնվելով միայն դրա վրա, Դոստոևսկու պատկվիլը revolutsian հայտարարել։

Դոստոևսկու revolutsionությունն այն չէ, որ նա ծանաչում է Նեչաևշչինան. ընդհակառակը, դա դրական կողմն է,

---

[1] *Маркс и Энгельс*, Альянс социалистической демократии и международное товарищество рабочих. 1940, стр. 89.

[2] Նույն տեղ, էջ 92։

որը վեպին տալիս է ռեալ գծեր և վեպը դարձնում է գեղարվեստական: Նեչաևյան կազմակերպությունն արժանի է ծաղրի: Դոստոևսկու ռեակցիոնությունն այն է, որ նա նեչաևշչինան նույնացնում էր ընդհանուր ռևոլյուցիոն-դեմոկրատական շարժման հետ. վեպը համակված է հենց այդ ընդհանուր գաղափարով: Վեպում տեղի ունեցող իրադարձությունների և գործող անձանց ռեալությունը հակասության մեջ է հիմնական գաղափարի հետ, որը ռեակցիոն է: Երբեմն, նյութի աղճեցության տակ, Դոստոևսկին հարկադրում է հերոսներին զբաղվել ինքնամերկացմամբ: Երբ Պյոտր Վերխովինսկին, ինքնագոսպման և զգաստության բոպեին, ասում է՝ «ես ի՞նչ սոցիալիստ եմ, ես սրիկա եմ», ապա Դոստոևսկին հակասում է ինքն իրեն, Նեչաևի ավանտյուրան սոցիալիզմի և ընդհանրապես դեմոկրատական շարժման հետ նույնացնելու իր ընդհանուր գաղափարին: Եվ եթե, գեղարվեստական տեսակետից, «Կարամազով եղբայրներ»-ի հետ միասին, վեպը ուժեղ տպավորություն է թողնում, ինչպես գրում էր Գորկին[1], ապա դա տեղի է ունենում շնորհիվ թեմայի, իրադարձությունների ռեալության, որոնք և հակասության մեջ գտնվելով հիմնական գաղափարի հետ, վեպը դարձնում են հետաքրքրական: Վեպի ուժը ոչ թե ընդհանուր գաղափարների մեջն է, այլ ռեալ բովանդակության, վեպում նկարագրած անձանց և գործողությունների մեջ: Այդ հակասությունն առաջանում է նրանից (հիշենք Չերնիշևսկու դրույթը), որ գեղարվեստական ստեղծագործության մեջ, բացի առանձին գործող անձերից, որոնք համապատասխանում են իրականությանը, լինում է ընդհանուր գաղափար, որից (և ոչ թե առանձին անձերից) կախված է ստեղծագործության բնույթը:

Երբ Շահումյանը բացասում է Բաֆֆուն գաղափարական-քաղաքական տեսակետից, բայց ընդունում է նրա տաղանդը, երկերի գեղարվեստական արժանիքը, ճիշտ է վար-

---

1 *Горький*, "Несобранные литературно-критические статьи", էջ 105:

վում, որովհետև, բացի գաղափարախոսական-քաղաքական, նույնիսկ ամենաանընդունելի գրվածքներից, նրա վեպերում կա իրականության հատիկ, դեպքերի, անձանց, մարդկանց նկարագրություն, որը նրա երկերը դարձնում է գեղարվեստական արժեք։ Այս մասին շատ լավ է ասել ինքը՝ Բաֆֆին իր մի հոդվածում, խոսելով հրապարակախոսության և գեղարվեստական երկի տարբերության մասին, նա գրում է. «Շատ հասկանալի է, որ ժամանակակից հարցերը քննվում են, վիճաբանվում են ժամանակակից մամուլի և գրականության այլ ճյուղերի մեջ։ Բանաստեղծը կատարյալ իրավունք ունի բոլորից օգուտ քաղելու։ Բայց բանն այն է, որ այս և այն հարցը լրագրի մեջ քննվում է առաջնորդող հոդվածի ձևով, ամսագրի մեջ քննվում է ամսագրական հոդվածի ձևով, բայց վեպի մեջ նա բոլորովին ուրիշ կերպարանք է ստանում։ Եվ դրա մեջն է վիպասանի առավելությունը, որ նա լրագրի արտահայտած մերկ մտքից ստեղծում է կյանք, մարմին և հոգի է տալիս նրան, շոշափելի կերպով ներկայացնում է մեզ... Բանաստեղծը խլում է թե՛ թղթի վրա և թե՛ շրջապատող մթնոլորտի մեջ տարածված մտքերը, պարզում է և իր սեփական գույնը տալով, վիպական կենդանի ձևով վերադարձնում է մեզ»[1]։ Հենց սրանով էլ Բաֆֆին տարբերվում է հրապարակախոս Արծրունուց՝ հայ բուրժուական լիբերալիզմի մյուս խոշոր ներկայացուցչից։ Եթե վերջինիս ժառանգությունից մենք հրաժարվում ենք, ապա այդ չենք կարող անել Բաֆֆու ժառանգության նկատմամբ, թեև Բաֆֆին քաղաքական տեսակետից պատկանում է Արծրունու խմբին՝ բուրժուա-նացիոնալիստական հոսանքին։ Եվ դա հասկանալի է։ Ընդգծելով գրականության քաղաքական ու դասակարգային բնույթը, Շահումյանը հանդես է գալիս այն գռեհկացնողների դեմ (Շալյապինիկովի տիպի), որոնք նույնացնում են գրականությունն ու քաղաքականությունը, չտեսնելով նրանց յուրահատուկ տարբերությունը։

Դեռ 1905 թվին Լենինը սովորեցնում էր, որ «պրոլետա-

---

1 «Մշակ», № 149, 1883 թ.։

րիատի պարտիական գործի գրական մասը չի կարող շաբլոնն կերպով նույնացվել պրոլետարիատի պարտիական գործի մյուս մասերի հետ»։ «Անվիճելի է,—գրում էր Լենինը,—որ այս գործում անպայման անհրաժեշտ է ապահովել անձնական նախաձեռնության անհատական հակումների լայն ասպարեզ, մտքի ու ֆանտազիայի, ձևի ու բովանդակության լայն ասպարեզ» (Լենին, հ. VII, էջ 387)։ Լենինյան դրույթների լույսի տակ՝ պարզ է դառնում Շահումյանի մեթոդոլոգիական դիրքի ճիշտ լինելը։ Այս գրականագիտական ասույթների պարզ շարադրումը, նրանց հանրագումարը ցույց են տալիս, թե ինչքա՜ն լայն հայացք ուներ Շահումյանը գեղարվեստական ստեղծագործության նկատմամբ։ Շահումյանը խորապես թափանցում էր արվեստագետ գրողի ստեղծագործության խորքերը, բացահայտում ստեղծագործության հոգեբանական հիմունքները, հասկանում գրականության նրբությունն ու բարդությունը, նրա յուրահատկությունը և թույլ էր տալիս հնարավոր զիգզագներ գեղարվեստական գրականության մեջ։ Շահումյանը գրականության և ընդհանրապես արվեստի ամեն տեսակ սխեմատիկ և պարզեցված մոտեցման դիտակից թշնամի էր։ Նա առում էր մտացածին, համայնապարփակ սխեմաներն ու դեղատոմսերը արվեստի երկերի գնահատման ու մեկնաբանման գործում։ Նա պահանջում էր պատմական կոնկրետ մոտեցում հասարակական երևույթներին, այդ թվում և գրականությանը, և մինչև կյանքի վերջը հավատարիմ մնաց այս դիալեկտիկական մեթոդին։ Գրականության մեջ Շահումյանը գնահատում էր կյանքի ռեալիստական պատկերումը, բարձր էր գնահատում դա, բայց նա գնահատում էր նաև վաղ շրջանի Գորկու իսկական ռևոլուցիոն ռոմանտիզմը։ Սակայն Շահումյանը մերկացնում էր հայ ինտելիգենցիայի ռեակցիոն ռոմանտիզմը, ինտելիգենցիա, որ հայրենասիրական ֆրազների տակ թաքցնում էր իր բուրժուական, շահախնդրական նպատակը։

«Նա իրավամբ գտնում է,—գրում է Շահումյանը մի ընկերոջ 1916 թվին գրած հոդվածների առթիվ,—որ հայ «ազգասերների» վերջին զարհուրելի ոճիրը ոչ պատահականու-

թյուն է և ոչ էլ «ռոմանտիզմից» առաջացած մի սխալ։ Հայ ինտելիգենցիայի համար «ազգասիրությունը» պարզապես հացի խնդիր է.—և այդ ոչ միայն բառիս պատմա-փիլիսոփայական իմաստով, այլև առօրյա դեհիկ անձնական մըտքով։ Եղել են, իհարկե, իսկական «ռոմանտիկ» առանձին անհատներ..., բայց հայ ինտելիգենցիան, իբրև ամբողջություն, իր տաճկա-հայկական պրոպագանդով և իր նացիոնալիստական գործունեությամբ Ռուսաստանում ծառայել է միայն իր և «ազգասիրաբար» իրեն կերակրող կովկասահայ բուրժուազիայի շահերին՝ զոհաբերելով նրանց վերջին երկու տասնամյակների ընթացքում հայ ժողովրդական մասսաների առաջադիմությունը, իսկ նորերս նրանց ֆիզիքական գոյությունը»։ Այս տողերի մեջ մահավճիռ է տրված հայ նացիոնալիստական ինտելիգենցիային և այն գրողներին, որոնք իրենց ռոմանտիկ ստեղծագործությամբ դարձան նացիոնալիստական-ռոմանտիկական պրոպագանդայի շեփորահարներ, լինելով նաև նացիոնալիստական պարտիայի ակտիվ գործիչ։ Կասկած չկա, որ Շահումյանը խստիվ դատապարտում է հայ ինտելիգենցիայի ռեակցիոն-ազգայնական ռոմանտիկան. և դա վերաբերում է ոչ միայն քաղաքական գործիչներին, այլև գրականագետներին, որոնք իրենց երկերով ծառայում էին այդ պրոպագանդային։ Դա մեծագույն ոճիր էր ժողովրդի նկատմամբ։

Գրականության նպատակն ու խնդիրները, նրա էությունը որոշելիս՝ Շահումյանն ելնում էր Բելինսկու, Չերնիշևսկու ռևոլուցիոն-դեմոկրատական էսթետիկայից և զարգացնում այն։ Շահումյանի կարծիքով գրականությունը հասարակական-դաստիարակչական մեծ ուժ ունի։ Նա պատկանում է ժողովրդին, արտահայտում է նրա ցանկությունները, խոհերը ու ձգտումները։ Որպեսզի գրականությունը կարողանա կատարել իր հասարակական օգտակար դերը՝ անհրաժեշտ է քաղաքական ազատություն։ Մասնավորապես շոշափելով հայ գրականության զարգացման հեռանկարները, Շահումյանը ճիշտ նկատում է քաղաքական ու ազգային ազատության և

հայ ժողովրդի տաղանդների ու ընդհանրապես հոգևոր կուլտուրայի ծաղկման կապը։

«Մեր կարծիքով,—գրում է Շահումյանը դեռ 1902 թվին,—նա, ով ուզում է, որ հայ ժողովուրդը գրականություն ունենա, պիտի ամենից առաջ կռվի հայտարարի այս պայմանների, քաղաքական այն կարգերի դեմ, որոնք արգելում են ժողովրդի—այդ հասարակական օրգանիզմի ազատ, բնական զարգացումը։ Նա պիտի աշխատի այնպիսի պայմաններ ստեղծել, որ ժողովրդի միջից դուրս եկող մարդիկ—Բաֆֆիներն ու Շիրվանզադեները անհատներ չլինեն, այլ խմբեր, մասաներ։ Մի երկրում, որտեղ չկա խոսքի ու մտքի ազատություն, որտեղ ժողովուրդը շնորհիվ տիրող պետական քաղաքականության՝ աղքատ է ու տգետ, և քաղաքակրթության բարիքները վայելելու արտոնությունը պատկանում է միայն փոքրաթիվ ապահով դասակարգի, որտեղ օրենքի տեղ տիրում է ցեներալական կամայականությունը, գրականությունը չի կարող զարգանալ»։ «Գրականությունը չի կարողանա հասարակական դեր կատարել, չի կարողանա երբեք ժողովրդի անփափականությունը դառնալ, նրա հոգևերի ու մտքերի թարգմանը, նրա ցավերի դարմանը։ Այնտեղ բուն կդնեն զանազան բախտախնդիրներ, անկոչ առաջնորդներ, որոնք գրականությունը, թերթը, ամսագրերը կծառայեցնեն ոչ թե ժողովրդին, այլ միայն իրենց շահերին» (Դ. Աղայանի հոբելյանին նվիրված ճառից)։

Շահումյանի այս դրույթը, որ նա ասել է իր ուսուցիոն-մարքսիստական գործունեության արշալույսին, բացառիկ կարևորություն ունի։ Շահումյանի վերոհիշյալ տողերից ուսուցիոն պաթոս է հառնում։ Պարզ խոսքեր են դրանք, բայց ինչքա՜ն խոր ճշմարտություն կա այդտեղ։ Այս դրույթը ցույց է տալիս երիտասարդ Շահումյանի քաղաքական-մարքսիստական հասունությունը, գրականության ու արվեստի նրա խոր ըմբռնումը։ Խոսելով գրականության մասին, Շահումյանն այն չի անջատում արվեստի այլ ձևերից, նրա համար արվեստի ստեղծագործության բոլոր տեսակները մի ամբողջություն են կազմում։

Այնպիսի պայմանները, որոնց դեպքում գրականությունն ու արվեստը պատկանեին ժողովրդին և լինեին նրա կյանքի, ձգտումների ու պայքարի արտահայտիչը, ժողովրդական տաղանդների ծաղկումը կարող էր ստեղծել միայն պրոլետարական հաղթական revolution, որ սոցիալ-քաղաքական անարդարության հետ միասին վերջնականապես լիկվիդացիայի ենթարկեց ազգային ճնշումը: Ստալինյան Կոնստիտուցիայի դրոշի տակ տեղի ունեցող ազգային կուլտուրաների ծաղկումը Սովետական Միության մեջ կարող է Շահումյանի դրույթի ճշտության լավագույն ապացույցը լինել:

Գրականության սոցիալ-քաղաքական ու ճանաչողական նշանակությունն ու դերը որոշելիս՝ Շահումյանը ելնում էր Բելինսկու ու Չերնիշևսկու էսթետիկական սկզբունքներից, բայց զարգացնում էր դրանք պրոլետարիատի գիտական աշխարհայացքի հիման վրա: Մարքսիզմի ու լենինիզմի կլասիկները վիթխարի նշանակություն էին տալիս ժողովրդի ստեղծագործ ուժերի ծաղկումին՝ պրոլետարական revolution հաղթանակից հետո: Միաժամանակ նրանք առանձնապես ընդգծում էին արվեստի ու գրականության սոցիալ-ճանաչողական նշանակությունը:

Ահա թե ինչ է պատմում Կլարա Յետկինը Լենինի «Արվեստը մասսաներին» լոզունգի մասին. «Բայց,—շարունակեց Լենինը,—կարևոր է ոչ թե մեր կարծիքը արվեստի մասին: Կարևոր չէ նաև այն, թե ինչ է տալիս արվեստը միլիոններով հաշվվող բնակչության ընդհանուր թվի մի քանի հարյուրին, նույնիսկ մի քանի հազարին: Արվեստը պատկանում է ժողովրդին: Նա իր ամենախոր արմատներով պետք է հասնի աշխատավորական մասսաների ամենահոծ զանգվածներին: Նա պետք է հասկանալի ու սիրելի լինի նրանց: Նա պետք է համախմբի այդ մասսաների զգացումները, միտքը և կամքը, բարձրացնի նրանց: Նա պետք է արվեստագետներ արթնացնի նրանց մեջ ու զարգացնի» (Կ. Յետկին, «Հիշողություններ Լենինի մասին», էջ 19):

Շահումյանի գրական կոնցեպցիան կառուցված է մարքսիստական-լենինյան աշխարհայացքի, գիտական սկզբունք-

ների վրա։ Շահումյանն առանձնապես ընդգծում էր գեղարվեստական ստեղծագործության, դրականության ու արվեստի ճանաչողական ու դաստիարակչական նշանակությունը։ Այս տեսակետից հետաքրքրական է Շահումյանի վերաբերմունքը դեպի թատրոնը։

***

Դեռ պատանեկական տարիներից Շահումյանը հրապուրվում էր թատրոնով։ Նա չափազանց հետաքրքրվում էր թատրոնով ու սիրում այդ արվեստը իր ամբողջ բազմազանությամբ։ Նա չէր սահմանափակվում թատերական ներկայացմամբ, որպես հանդիսատես, այլ ջանում էր խորանալ նրա էության ու նշանակության մեջ, բացատրել նրա նպատակը։

Եվ Շահումյանը հասնում է իր նպատակին, ուսումնասիրելով թատրոնն ու դրամատուրգիան իր ժամանակի առաջավոր էսթետիկայի լույսով։ Նա կարդում է մեծ դրողների ստեղծագործությունները և դրանց հիման վրա էլ դաստիարակում է իր գեղարվեստական ճաշակը։ Եվ դա անում է պլանավորված ձևով, նախօրոք նշված պլանով։

Շահումյանը չի բավականանում մեծ դրողների ու դրամատուրգների երկերն ուսումնասիրելով։ Նա խմաստավորում է դրանք և որոշում թատրոնի դերն ու նշանակությունը հասարակության ու ժողովրդի կյանքում։ Պատանի Շահումյանը խորապես հասկացել էր ռեալիստական, բարձորակ թատրոնի և ընդհանրապես արվեստի դաստիարակչական մեծ դերը։ Երիտասարդական ավյունով նա հարձակվում էր թատրոնի բարձր կոչումը չհասկացող ապուշների, վատ դերասանների վրա։ Ինչպես վերն ասացինք, դեռ 1896 թվին Շահումյանը որոշում է թատրոնի սոցիալ-դաստիարակչական և ճանաչողական մեծ նշանակությունը։ Դա ցույց է տալիս, թե երիտասարդ Շահումյանը ինչքա՜ն խորապես ու ճիշտ է հասկացել թատրոնի էությունը, նրա դաստիարակչական ու ճանաչողական նշանակությունը։ «Մարդկության ուսուցիչներ»—այսպես է որոշում բեմի խոհա-

կան դերասանների դերը։ Իսկ իրենց կոչման բարձրության վրա չգտնվողները ապաշնորհ կերպով խոտան են ստեղծում, դառնում զզվելի։ Պետք է արդարացնել դերասանի վեհ կոչումը, թատրոնը պետք է դաստիարակչական դպրոց լինի, ծառայի ոչ թե «բուրժույազիկների» ընտրյալ վերնախավին, ինչպես մի անգամ արտահայտվել է Շահումյանը, այլ ժողովրդական զանգվածներին։ Կապիտալիստական հասարակության մեջ դա անհնար է, մանավանդ ցարական Ռուսաստանի ճնշված ժողովուրդների համար։ Առանց քաղաքական ու ազգային ազատության, առանց սոցիալիստական ռևոլուցիայի թատրոնը չի կարող զարգանալ ճնշված ժողովրդի մեջ, ինչպես հայերն են, չի կարող ծառայել իր վեհ նպատակներին, չի կարող հոծ զանգվածների դաստիարակչական կենտրոնը լինել։ Աղայանի հոբելյանի առիթով պատրաստած ճառի մեջ Շահումյանը ազգային թատրոնի, ինչպես և գրականության զարգացման ամենակարևոր պայմանը համարում է քաղաքական ազատությունը, որը ձեռք պետք է բերվի պրոլետարական հաղթական ռևոլուցիայով։

«Նույնը պետք է ասել թատրոնի մասին։ «Թատրոնը, գեղարվեստը,—ասում է նույն Բյորնեն,—չի կարող ծաղկել Գերմանիայում, մինչև չիշի ազատության հուլը»։ Այստեղ էլ կարող են երևան գալ շնորհքով դերասաններ (Աբելյանի նման), կամ նույնիսկ հանճարներ (Ադամյանի նման), կարող ենք ունենալ տաղանդով կերտված պիեսներ, բայց երբեք ներկա պայմաններում մենք չենք ունենա մշտական, կարգին, բնական զարգացման ճանապարհի վրա դրված ճշմարտական թատրոն, երբեք չենք ունենա իսկական ազգային գեղարվեստ։ Թատրոնը մի կերպ քաշ կտա իր գոյությունը շնորհիվ զանազան կոմիտեների մուրացկության, բայց ոչ մի դեր չի կարողանա կատարել հասարակական տեսակետից։ Նա կծառայի միայն իբրև զվարճության միջոց մեր «ազատամիտ», կրթված Буржуйчик-ների համար, որոնք իրենց տիկինների հետ, «բարեգործական նպատա-

կով» ներկայացումներ կտան և «հասարակական գործիչներ-ի» փառք կվաստակեն»:

Շահումյանի հարվածները դիպուկ են, և նախասովետական շրջանի հայ թատրոնի բնութագիրն, այսպես ասած՝ անթերի է: Ադամյանի, որպես իրոք հանճարեղ դերասանի, և սեփական դերակատարման ռեալիստական դպրոց ստեղծած Աբելյանի գնահատականը ցույց է տալիս Շահումյանի խորաթափանցությունը, հետաքրքրությունների լայնությունը: Շահումյանն իրավացի է, երբ գրում է, որ ֆեոդալա-կապիտալիստական իրավակարգի տիրակալության օրոք, ազդային ճնշման պայմաններում հայ ժողովուրդը, ինչպես նաև ցարական Ռուսաստանի այլ ճնշված ժողովուրդները, չէր կարող իրոք ազգային, ժողովրդական արվեստ ու գրականություն, իսկապես ժողովրդական թատրոն ստեղծել: Դա հնարավոր է միայն պրոլետարիատի և աշխատավորների հաղթանակի դեպքում. հաղթանակած ժողովուրդները կըստեղծեն արվեստի ու գրականության ծաղկման բոլոր պայմանները: Եվ այն ժամանակ թատրոնը, ինչպես և արվեստի այլ ձևերը լիովին կպատկանեն ժողովրդին՝ ու կծառայեն նրա դաստիարակությանը: Շահումյանը բարձր էր գնահատում թատրոնի դաստիարակչական նշանակությունը: Լինելով թատրոնի ջերմ սիրող, նա իր զավակներին խորհուրդ էր տալիս թատրոն գնալ, դիտել կլասիկ և ժամանակակից հեղինակների գործերի լավ ներկայացումները: Շահումյանը աքսորավայրից (ուր մնաց մինչև ռևոլուցիան) դիմելով իր «սիրելի զավակներին», հարցնում է. «Ինչպե՞ս եք ժամանակ անցկացնում, ինչպե՞ս են պարապմունքները: Քո բացիկը, սիրելի Սուրիկ, ստացել եմ... Թատրոն գնո՞ւմ եք. դա անհրաժեշտ է, որդյակներս: Բելինսկին իր հոդվածներում մի տեղ հարցնում է. «Թատրոն գնո՞ւմ եք. օ՜, գնացեք, գնացեք և մեռեք՝ եթե կարող եք»[1]: Նա շատ տարվող մարդ էր: Ես, իհարկե, ոչ ոքի խորհուրդ չեմ տա մեռնել թատրոնում, բայց

---

1 Հիշյալ տողերը վերցված են մեծ քննադատի «Գրական երազանքներ» հոդվածից (տես՝ Белинский, Избр. Соч., հ. I, էջ 55):

դնալ անհրաժեշտ է։ Պետք է համենայն դեպս տեսնել այն ամենը, ինչ բեմադրում են կլասիկներից՝ Շեքսպիր, Շիլլեր, Իբսեն, Օստրովսկի, օպերաներ և այլն։ Իսկ նոր պիեսները՝ բանիմացների խորհրդով» («Коммунист», Թիֆլիս, Երևան, 1935 թ.)։ Այս նամակը բնութագրում է Շահումյանին ոչ միայն որպես սիրող ու հոգատար հոր, այլև որպես թատերական արվեստը մեծապես գնահատողի։

Թատրոնի ու դրամատուրգիայի ավելի ծավալուն գնահատական նրանք տալիս «Հենրիկ Իբսեն» հոդվածում, որը թեև մեծ չէ (ընդամենը հինգ մեքենայատիպ էջ), բայց դրա արժեքը այն է, որ հակիրճ ձևով տրված է հանճարեղ դրամատուրգներից մեկի խոր բնութագիրը, ընդհանրացված են նրա բարդ ու հակասական ստեղծագործության ու գործունեության հիմնական հարցերը։ Գնահատման ու ընդհանրացման ուժով այդ հոդվածը կարող է համեմատվել միմիայն Իբսենի մասին Պլեխանովի դրած հոդվածին, որի հետ շատ նման դրույթներ ունի. (երկուսն էլ տպված են 1906 թվին)։ Նախընթաց էջերից մասամբ հայտնի է այդ հոդվածը, այստեղ կարող ենք ավելի ծանոթանալ նրա հիմնական դրույթներին.

«Մեռավ ներկայիս ամենամեծ դրամատուրգը. մեռավ առաջնակարգ բանաստեղծներից մեկը։ Ո՞վ պիտի փոխարինե նրան...», այսպես է սկսվում հոդվածը։

Հոդվածագիրը գնահատում է Իբսենի գաղափարների ինքնատիպությունը և մտքերի խորությունը, քննադատական ռեալիզմը, կապիտալիստական հասարակության մարդկանց բացասական կողմերը անկեղծորեն մերկացնելու և թատրոնը բարքերի ու դաստիարակության դպրոց դարձնելու կարողությունը։

«Նա ամենից լավ է ըմբռնել Շիլլերի այն պահանջը, որ թատրոնը պետք է բարոյական հաստատություն դարձնել։ Նա ամենից լավ է հասկացել, որ թատրոնը ոչ այլ ինչ է, բայց եթե կյանքի դպրոցը։ Իբսենը—այդ դպրոցի հմուտ ուսուցիչը՝ իր հետաքրքիր դասախոսություններով շատ ազակերտներ կրթեց և շարունակում է կրթել, հետաքրքիր այն

տեսակետից, որ դա մեր կենդանի, առօրյա կյանքն է. առօրյա կյանքը՝ իր հրատապ հարցերով, որոնք ամբողջ գործողության ընթացքում լարում են մեր ուշն ու միտքը և մեզ անխղում մի րոպե անգամ մեր ուշադրությունը չթեքել գործողության վայրից... Մի փոքրիկ գործողության մեջ մեր առաջ պատկերանում է իրականության մի ամբողջ պատկեր, իր անցյալով ու ներկայով, այնքան բնական, որ երբեմն գործողության պահասությունն անգամ անկարելի է թառնում մեզ համար, ո՞ւր մնաց թե տաղտկալի»:

Բարձր գնահատելով Իբսենի դրամատիկական արվեստը, նրա ստեղծագործության կենսայնությունն ու ռեալիզմը, Հոդվածագիրը համառոտակի բնութագրում է նաև նրա իդեոլոգիական դիրքը, բացահայտում է նրա հակասություններն ու ինդիվիդուալիզմը: Ըստ հեղինակի՝ Իբսենը անհատապաշտ է, անհատի կատարյալ անկախության ու ազատության ամենաջերմ պաշտպան. «Անհատի ինքնիշխան ավտոնոմիան, ահա այն դեվիզը, այն կարդինալ գաղափարը, որ դեբիշխող է Իբսենի գրեթե բոլոր աշքի ընկնող գրվածքների մեջ«,—ասում է նա: Բայց Իբսենը անհատի ազատության իր քարոզի մեջ այնքան հեռու է գնում, որ կտրվելով սոցիալ-քաղաքական իրականությունից, ընկնում է անարխիական ուտոպիզմի մեջ: «Ամենևին բանականության պահանջն չէ,—մեջբերում է հեղինակը Իբսենին,—որ անհատը լինի քաղաքացի, ընդհակառակն՝ պետությունը անհատի անեծքն է... Թող կորչի պետությունը, ես կուզեի հեղափոխության մասնակցել»: Իբսենը քարոզում է,—ասում է Հոդվածագիրը,—որ անհատը պետք է ազատ լինի իր ներքին անկախությունը կաշկանդող կապերից և ինքը լինի իր վրա իշխողը, իրեն դատողն ու դատապարտողը, փոխանակ իրեն ենթարկելու հասարակության ավանդական կարգերին և նրա մասշտաբով ղեկավարելու իրեն»:

Այս տողերում Հոդվածագիրը ճիշտ է քննադատում Իբսենի անարխիստական հայացքները, որոնք կապված էին նրա ծայրահեղ անհատապաշտության ու անհատի պաշտամունքի հետ: Ինչպես նշեցինք, այս հարցերում

Հոգվածագիրն ու Պլեխանովը շատ նման դրույթներ ունեն։ Քննարկելով Իբսենի «Դոկտոր Շտոկման» պիեսը, Պլեխանովը նկատում է. «Եվ պետք է խոստովանել, որ այս տիրադները իրոք հիշեցնում են անարխիստների դատողությունները։ Դրանք են հիշեցնում նաև Իբսենի շատ հայացքները։ Հիշեցնեք, օրինակ՝ ինչպես Իբսենն ատում էր պետությունը։ Նա գրում էր Բրանդեսին, որ «սիրով կմասնակցեր ռևոլյուցիային՝ ուղղված իրեն ատելի այդ հաստատության դեմ»։

Իբսենի աշխարհայացքին հատուկ անարխիստական տարրերը բխում են նրա անհատապաշտությունից։ «Իբսենը ինքնասեր է և ո՛չ ոքասեր։ Իբսենը ինտիվիդուալիստ լինելով հանդերձ՝ ալտրուիստական և դեմոկրատական հայացքներին հակառակ չէ»,—ասում է «Կայծ» թերթի հոդվածագիրը։

Իբսենի ստեղծագործության դրական վիճելի նշանակությունը նրա դրամատիկ վարպետության, դաղափարականության, քննադատական ոգու, ճշմարտասիրության մեջ է։ Ցույց տալով Իբսենյան դրամայի արժանիքները և քննադատելով ինդիվիդուալիզմն ու անարխիզմը՝ հոդվածագիրը ստանձնապես չի խոսում նրա ստեղծագործության թերությունների մասին, և հազիվ թե հնարավոր էր դա լրագրային հոդվածում՝ նկարագրի մեջ։ Սակայն Իբսենյան ինդիվիդուալիզմի ու անարխիզմի քննադատությունը բանալի է տալիս հասկանալու նորվեգիացի մեծ դրամատուրգի ստեղծագործության թերությունները։ Նրա թերությունները նշում է և Ենգելսը՝ Պաուլ Էռնստին գրած հայտնի նամակում (1890 թ., հունիսի 5)։ Նորվեգիական մանր բուրժուազիային՝ ազատ դյուղացու որդուն, բարձր դասելով գերման խոշոր քաղքենիության համեմատությամբ՝ Ենգելսը գրում է. «Ճիշտ այդպես էլ մանր-բուրժուական շրջանին պատկանող նորվեգիացի կինը անհամեմատ բարձր է գերման քաղքենուհուց։ Եվ ինչպիսի թերություն էլ ունենան Իբսենյան պիեսները, այնուամենայնիվ, դրանց մեջ արտացոլված է, թեև փոքր, ուժեղ բնավորություններ ունեցող մանր-բուրժուական աշխարհը» (Մարքս—Ենգելս, «Արվեստի մասին», էջ 30)։

Եթե Ենգելսը միայն ակնարկում է Իբսենյան պիեսների

հնարավոր թերությունները, բարձր գնահատելով նրա ռեալիզմը և ուժեղ բնավորությունների հաղթանակը, ապա Պլեխանովն ավելի մանրամասն և, մեր կարծիքով, ճիշտ է ցույց տալիս Իբսենի «խիստ տանջալի ու անելանելի հակասությունները» (հ. XIV, էջ 218), նրա կերպարների և ընդհանրապես դրամատուրգիայի թերությունները, որոնք կապված են նրա ինդիվիդուալիզմի և «մարդկային ոգու» անարխիստական ընդվզումի հետ: «Երբ մարդը գնահատում է «ընդվզումը» ի սեր «ընդվզման», երբ չի հասկանում, թե ինչի է հանգելու ընդվզումը, այդ ժամանակ նրա քարոզը անհրաժեշտաբար դառնում է մշուշապատ: Եվ եթե նա մտածում է պատկերներով, եթե նա արվեստագետ է, ապա նրա քարոզի մշուշայնությունը անպայման կհանգի նրա պատկերների անբավականաչափ որոշակիության: Գեղարվեստական երկի մեջ կմխրճվի վերացականության ու սխեմատիզմի տարրը: Եվ այդ բացասական տարրն անկասկած առկա է, ի մեծ վնաս դրանց համար, Իբսենի բոլոր գաղափարական դրամաներում» (Պլեխանով, հատ. XIV, էջ 194):

Չի կարելի չհամաձայնել Պլեխանովի այս գնահատականին: Ինչպես Պլեխանովը, այնպես էլ հոդվածագիրը բարձր են դասում Իբսենի դրամատիկական տաղանդը: Իբսենյան դրամայի ուժը նրանք տեսնում են նրա հուզող գաղափարականության ու կենսունակության, ճշմարտացիության ու ռեալիզմի մեջ:

Իբսենի ժամանակակից բուրժուական ու քաղքենիական հասարակության այլանդակ կողմերի նկատմամբ նրա քննադատական վերաբերմունքի մասին խոսելով, մեր հոդվածագիրը գրում է. «Եվ այս ամենը նա այնքան կենդանի ու հրատակ է ցուցադրում մեզ, ինչպես մինչ այժմ ոչ մի գրողի չի հաջողվել»:

Իսկ Պլեխանովը նույնքան բարձր է դասում նրա պատկերների գաղափարական ու հոգեբանական խորությունը՝ չնայած դրանց թերություններին: «Որպես դրամատուրգ՝ նա համարյա թե բարձր էր իր բոլոր ժամանակակիցներից,— գրում է Պլեխանովը և ավելացնում,—նրա ուժեղ կողմը մանր-

բուրժուական հերոսների աննման պատկերումն է։ Այստեղ նա անզուգական հոգեբան է։ Նրա երկերի այս կողմի ուսումնասիրությունը անհրաժեշտ է մանր-բուրժուազիայի հոգեբանությունն ուսումնասիրել ցանկացող ամեն մեկի համար» (Պլեխանով, հ. XIV, էջ 228)։

Սրանք են Շահումյանի հիմնական դրույթները թատրոնի ու դրամատուրգիայի մասին։

Գրականության ու արվեստի մասին նրա ունեցած հայացքների շարադրությունը ցույց է տալիս, թե ինչպես Շահումյանը Բելինսկուն, Չերնիշևսկուն ու Դոբրոլյուբովին հետևելով, նախապատվություն է տալիս ռեալիստական արվեստին, որն արձագանքում է իր ժամանակի կենսական հարցերին և տալիս է կյանքի երևույթների ճշգրիտ նկարագրությունը։ Ելնելով դրանից էլ նա որոշում է քննադատության խնդիրները։

Վերոհիշյալ նամակում Բելինսկու անվան հիշատակումը և նրա հոդվածից հիշողությամբ արած մեջբերումները թատրոնի վերաբերյալ՝ պատահական չեն և ցույց են տալիս, թե ինչպես էր Շահումյանը սիրում ռուս մեծ քննադատին, ինչպես էր տիրապետում և հարգում նրա թանկարժեք ժառանգությունը։ Եվ դա հասկանալի է։ Բելինսկին Շահումյանի հոգեհայրերից մեկն էր։ Մոլեդին Վիսարիոնի անունը հաճախ է հիշատակվում Շահումյանի հոդվածներում, ելույթներում և նամակներում։ Բելինսկու օրինակով Շահումյանը ջանում էր սովորեցնել հայ երիտասարդությանը սկզբունքային մոտեցում ունենալու գրական ու հասարակական հարցերը գնահատելիս, լինել գաղափարական ու անկախ, չդառնալու համար կույր գործիք բուրժուական-նացիոնալիստական ինտելիգենցիայի ձեռքում։

«Բայց եթե այդ հետաքրքիր չի եղել նրանց համար,— գրում է Շահումյանն Աղայանի հոբելյանի առթիվ պատրաստած իր ճառի մասին,—շատ հետաքրքիր պետք է լինի, անշուշտ, ճշմարիտ ու ազատ խոսքի կարոտ հայ ընթերցողների համար,—մանավանդ մեր՝ մոլորված, գլուխը կորցրած,

միջակ (հայ պլրոցներն ավարտած) ինտելիգենցիայի համար, որը զուրկ լինելով որևէ աշխարհայացքից ու կենդանի հավատից, կամ անգործության է մատնված, լքված ու հուսահատված կամ ընկը ու խաղալիք է դառնում մեր պաշտոնական, դիպլոմավոր ինտելիգենցիայի ձեռքին։ Դրանց համար, մենք կարծում ենք, շատ հետաքրքիր և շատ օգտակար կլինի իմանալ, թե ինչ է մտածում մեր հասարակական խընդիրների մասին նոր աշխարհայացքով զինված, ուսաց նորագույն հեղափոխական ավազանում սկրսված մեր ուսանող երիտասարդությունը»։

Շահումյանը ձգտում էր անկաղմակերպ երիտասարդությանն ազատել բուրժուա-նացիոնալիստական ինտելիգենցիայի ազդեցությունից՝ իր ճառում ընդգծող քննադատության ենթարկելով վերջինիս։

Ճշմարտություն որոնող Բելինսկու պատկերը չի լքում Շահումյանին. նա միշտ հիշում է Բելինսկու գաղափարական credo-ն՝ մնալով հավատարիմ մնալով իր համոզմունքներին ու սկզբունքներին, «իր գրական խղճին»։

Հայտնի է Իվանովին գրած Բելինսկու նշանավոր նամակը. «Ես ծախում եմ ինձ ամեն մի պատահողի—Սենկովսկուց սկսած մինչև Բուլգարինը,—միայն, իհարկե, առանց ընկնելու իմ մտածելու եղանակը և արտահայտության ձևերը, մի խոսքով առանց ճնշելու իմ գրական խիղճը, որը ինձ համար այնքան թանկ է, որ ամբողջ Պետերբուրգում մինչև անգամ մոտավոր գումար չի գտնվի նրան առնելու համար։ Եթե գործն այնտեղ հասնի, որ ինձ առաջարկեն ընտրել երկուսից մեկը—պահպանել համոզմունքի անկախություն ու ինքնուրույնություն կամ սովամահ լինել,—ես բավականաչափ ուժ կունենամ, որպեսզի ավելի շուտ սատկեմ շան նման, քան կենդանի տեղովս շների կերակուր դառնամ»[1] (Թարգմ. Ս. Շահումյանի)։

Բելինսկու օրինակով Շահումյանն անողոք կերպով

---

[1] Белинский,—Письма, т. I, էջ 311։

քննադատում էր հայ լիբերալ նացիոնալիստական ինտելիգենցիային, ցույց էր տալիս նրա գաղափարական ոչնչությունը, չափավորությունն ու ստրկամտությունը։ Միայն այդպիսի քննադատությամբ կարելի էր մաքրել ճանապարհը՝ ռևոլյուցիոն-մարքսիստական աշխարհայացք տարածելու և նրա ազդեցությունն ու գաղափարական հաղթանակն ապահովելու համար։ Հենց սրան էլ ձգտում էր Շահումյանը իր ռևոլյուցիոն գիտակից գործունեությունն սկսելիս։

Պայքարելով բուրժուական նացիոնալիստների, կարիերիստների և մարքսիզմի բոլոր թշնամիների ու falsifikatorների դեմ՝ հանուն գրական բարքերի մաքրության, Շահումյանն իր առաջ ուներ Բելինսկու ու Չերնիշևսկու բյուրեղանման ու պայծառ դեմքերը։ Նա կոչ էր անում. «Ել հարկավոր է հարվածել ու հալածել նրանց ոչ միայն նրա համար, որ նրանք շահագործում են ու ապականում այդ մեծ ուսմունքը, այլև հանուն գրական բարքերի մաքրության առհասարակ, հանուն Բելինսկու, Չերնիշևսկու մեզ թողած արբբազան գրական ավանդների։ Գրականությունը մի տաճար է, ուր կարելի է մտնել միայն մաքուր խղճով և ազնիվ միտումներով։ Իսկ երբ մարդիկ մոտենում են այդ տաճարին մանր փառասիրական տենչերով, շահադիտական նպատակներով և խաբեբայական հակումներով,—դա ամենամեծ ոճրագործությունն է, որ կատարվում է ժողովրդի դեմ»։

Բոլշևիկ քննադատի այս խոսքերն ընդգծում են գրականության բարոյական մեծ ուժը։

Շահումյանը բարձր էր պահում Բելինսկու ու Չերնիշևսկու գրական դրոշը։ Նա հանդես էր գալիս հանուն գրական բարքերի մաքրության, հանուն ռուս մեծ քննադատ-ռևոլյուցիոներների արբբազան ավանդների։ Քննադատի այս ջերմ կոչը բնութագրում է նրան իսկ։ Այս կրքոտ կոչի մեջ է ամբողջ Շահումյանը։ Բելինսկու ու Չերնիշևսկու գրա-քննադատական տրադիցիաներն ու ավանդները շնորհիվ Շահու-

մյանի՝ ունեին ջերմ, կրքոտ պաշտպան ու կիրառող։ Այս հանգամանքն փայլ ու հրապույր է տալիս Շահումյանի գրաքննադատական ելույթներին, որոնց մեծ արժեքն ու նշանակությունն անվիճելի է։ Շահումյանի գրա-քննադատական ժառանգությունը, այն, որ նա թողել է այս բնագավառում, բավական ցայտուն կերպով բնորոշում է Շահումյանին, որպես գրականության խոր գիտակի ու գնահատողի, որպես խոշոր գրականագետ մարքսիստի։

ԳԼՈՒԽ IV

ԼԵՎ ՏՈԼՍՏՈՑԸ ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՄԲ

Ռուս մեծ գրող Լև Տոլստոյի ուշադրությունը Հոքելյանը 1908 թվին և մանավանդ նրա մահը 1910 թվին լայն արձագանք գտան ռուսական կայսրության հեռավոր ծայրամասերում և մարզերում։

Անդրկովկասը, մասնավորապես նրա արդյունաբերական կենտրոն Բաքուն, որը միաժամանակ և ողջ Ռուսաստանի հիմնական արդյունաբերական օջախներից մեկն էր, չմնաց և չէր կարող հեռու մնալ այդ իրադարձություններից։ Ընդհակառակը, Բաքուն աշխուժորեն և բուռն թափով արձագանքեց Տոլստոյի հոբելյանին և այնուհետև նրա մահվան։ Այդ ժամանակաշրջանին է վերաբերում բոլշևիկյան և լիբերալ-բուրժուական մամուլի միջև մղվող պայքարը Լև Տոլստոյի գործունեության, նրա ուսմունքի, քարոզի գնահատման շուրջը։ Այն պայքարը, որ բորբոքվեց Անդրկովկասի մամուլի էջերում Տոլստոյի, ինչպես և Գորկու շուրջը, ուներ դասակարգային խոր արմատներ։ Դա բուրժուազիայի և նրա մենշևիկյան գործակալության դեմ պրոլետարիատի, բոլշևիկների մղած ընդհանուր դասակարգային պայքարի առանձին, բայց պայծառ արտացոլումն էր։ Հնարավորություն չունենալով այս գլխում վերլուծել բոլշևիկյան և լիբերալ թերթերի միջև եղած վիճաբանությունը 1908 թվին, ես այստեղ կանգ-

մանափակվեմ Տոլստոյի մասին Շահումյանի գրած հոդվածների քննարկմամբ միայն։

Շահումյանի հոդվածները Տոլստոյի մասին խիստ արժեքավոր են։ Նրանք գրված են Տոլստոյի մասին Լենինի գրած հոդվածների ոգով։ Բնութագրելով կառավարական և լիբերալ-բուրժուական մամուլի դիրքը Լ. Տոլստոյի վերաբերյալ և անողոքաբար մերկացնելով նրանց երեսպաշտությունը, Լենինը գրում էր. «Նայեցեք, թե ինչպես են գնահատում Տոլստոյին լիբերալ թերթերը։ Նրանք չանում են մի կերպ դուրս գալ նեղ վիճակից այն անհամեմատ, կազմոննի-լիբերալ, հնամաշ-պրոֆեսորական ֆրազներով՝ «քաղաքակիրթ մարդկության ձայնի», «աշխարհիս միահամուռ արձագանքի», «ճշմարտության, բարության դաղափարների» մասին և այլն, որոնց համար Տոլստոյն այնպես անխնա խարազանում էր—և շատ իրավացի էր խարազանում—բուրժուական պիտության»[1]։

Շաբլոն ֆրազների և քաղաքակիրթ կեղծիքի վարպետները, ինչպես մատնանշում է Լենինը, խուսափում են, չեն կարողանում «...պարզ և որոշակի կերպով արտահայտել իրենց գնահատականը Տոլստոյի այն հայացքների վերաբերմամբ, որ կապված են պետության, եկեղեցու, հողի մասնավոր սեփականության, կապիտալիզմի հետ, և չեն կարող բնավ ոչ այն պատճառով, որ ցենզուրան նրանց խանգարում է,—ընդհակառակը՝ ցենզուրան նրանց օգնում է դժվարին կացությունից դուրս գալու,—այլ այն պատճառով, որ Տոլստոյի քննադատության մեջ եղած յուրաքանչյուր դրույթը մի ապտակ է բուրժուական լիբերալիզմին...»[2]։ Մեծ դրողի՝ իրեն ժամանակակից իրականության քննադատական, մերկացուցիչ հայացքների բացահայտ գնահատման փոխարեն լիբերալները առաջին պլանի վրա քաշեցին այն, թե Տոլստոյը «մեծագույն խիղճն է»։ «Մի՞թե սա մի դատարկ ֆրազ չէ,—հարցնում է Լենինը,—որ հազար ու մեկ ձևով կրկնում են և

---

1 Լենին, «Հոդվածներ Տոլստոյի մասին», ռուս. հրատ. էջ 18, 1939 թ.։
2 Նույն տեղ, էջ 19։

«Նովոյե Վրեմյան» և բոլոր նրա նմանները։ Մի՛թե սա չի նշանակում զանց առնել դեմոկրատիայի և սոցիալիզմի այն բոլոր կոնկրետ խնդիրները, որ առաջադրել էր Տոլստոյը։ Մի՛թե սա առաջին պլանը չի քաշում հենց այն, ինչ որ արտահայտում է Տոլստոյի նախապաշարմունքը, այլ ոչ թե նրա բանականությունը, հենց այն, ինչ որ նրա մեջ պատկանում է անցյալին, այլ ոչ թե ապագային, քաղաքականության նրա ժխտմանը, նրա բարոյական ինքնակատարելագործման քարոզին, այլ ոչ թե նրա բուռն բողոքին ընդդեմ ամեն տեսակի դասակարգային տիրապետության»[1]։

Տիրապետող դասակարգերի և նրանց հրապարակախոսական շեփորահարների՝ դեպի Լև Տոլստոյը և նրա քարոզները ունեցած վերաբերմունքի լենինյան բնութագրությունը ամբողջովին և լիովին վերաբերում է և Անդրկովկասին, մասնավորապես Բաքվի լիբերալ-բուրժուական մամուլին։ Այդ մամուլը «քաղաքակիրթ» կեղծիքի և լիբերալ երեսպաշտության տարածման գործում երբեք ետ չէր մնում իր կենտրոնական նախատիպերից։ Այդ գործում առանձնապես աչքի էր ընկնում «Баку» թերթը՝ նրա հրատարակիչ-խմբագիր Ն. Վերմիշևի գլխավորությամբ։ Լիբերալ-կադետական երեսպաշտները ահագին աղմուկ բարձրացրին մեծ գրողի մահվան կապակցությամբ։ Նրանք գրում էին, խոսում Տոլստոյի մասին, դովերգում նրան ոչ այնքան որպես մեծ արվեստագետի, որքան մեծ մտածողի, որպես «կայնքի ուսուցչի»։ Այդ թերթի էջերում Տոլստոյին մեծարում էին հենց նրա թուլության, նրա քարոզների, ուսմունքի համար։ «Ըստ էության Տոլստոյի ուսմունքը մի փառահեղ տեսարան է և բարձր բանականության, որը ձգտում է ընդհանուրի բարօրությանը, ձգտում է երկիրը վերածել մարդկային երջանկության լուսապայծառ դրախտի» («Баку», 1910 թ., մարտի 27, № 69)։ Ահա այն լիբերալ բուրժուական կեղծավոր սուտը, որը քողարկվում էր անբովանդակ և մաշված ֆրազների տակ։ Բաքվի լիբերալները ընթանալով իրենց մոսկովյան և պետերբուրգյան եղ-

---

1 Լենին, «Հոդվածներ Տոլստոյի մասին», էջ 19, 1939 թ.

բայրների տրորված կածաններով՝ Տոլստոյին անվանում էին «մարդկային սիրո և ճշմարտության մեծ առաքյալ» («Баку», № 259, նոյեմբերի 14, 1910 թ.)։ Ինքը՝ ոչ անհայտ Վերմիշևը, Տոլստոյի հիշատակին նվիրված սգո հանդիսավոր նիստում, երևան հանեց Տոլստոյի ռեակցիոն հայացքների նկատմամբ լիբերալների ունեցած համակրանքի իսկական էությունը և հանուն Տոլստոյի կոչ արեց ներհակ դասակարգերին համերաշխել, դասակարգային հաշտություն կնքել։ «Նա (Տոլստոյը) մեզ ասում էր, որ թշնամությունը և չարամտությունը հակառակ են մարդկային հոգուն, նրա սերը նրա անքակտելի բովանդակությունն է, նրա ամենահզոր, ամենալավ շարժիչը։ Նա մեզ չի խոսել այն անտագոնիզմի մասին, որը բաժանում է դասակարգերին և ժողովուրդներին, այլ ուսուցանել է մեզ նրանց մեծ համերաշխությունը, որը համակված է սիրով և մարդկայնությամբ, հավատալով, որ համերաշխությունը և սերը շատ շուտով մարդկությանը կառաջնորդեն դեպի ընդհանուր երջանկությունը» («Баку» № 259, նոյեմբերի 14, 1910 թ.)։

Այդ լիբերալն իր համախոհների նման խույս էր տալիս պետության, եկեղեցու, հողի մասնավոր սեփականության, կապիտալիզմի և այլի վերաբերյալ Տոլստոյի քննադատությունը դնահատելու խնդրից։ Սակայն, փքված՝ անբովանդակ և շաբլոն ֆրազներով, մաշված լիբերալ հայտնություններով, նա դիտմամբ թաքցնում էր իր ժամանակվա իրականության Տոլստոյի քննադատության էությունը և լուրջ ու դիտուն մարդու տեսք ընդունելով, առաջին պլանի վրա էր դնում մեծ գրողի թույլ, ռեակցիոն հայացքները, մեծարում էր դրանք, և բաղցր ձայնով երգում «մարդկության ընդհանուր երջանկության» մասին, որը իբրև թե ձեռք է բերվելու պրոլետարիատի և բուրժուազիայի դասակարգային հաշտության ճանապարհով՝ «ընդհանուր սիրո հիման վրա»։

Այդ լիբերալ խաբեբաների հնամաշ-ռեակցիոն քարոզները, նրանց քաղցր երգերը «մարդկության ընդհանուր երջանկության» մասին սգո հանդիսավոր օրերին՝ լռեցին, երբ

«Баку» թերթի խմբագրությունն ստացավ մի «Նամակ Լ. Ն. Տոլստոյի հիշատակի մեծարման առթիվ»։ Այդ նամակը «Ընթերցողի տարակուսանքը» հակիրճ վերնագիրն ուներ («Ընթերցող» ստորագրությամբ). «տարակուսող ընթերցողը», բնութագրելով այն ընդհանուր տպավորությունը, որը առաջ բերեց ռուս մեծ գրողի մահը, ինչպես և մամուլի ու հասարակության դանազան խավերի վերաբերմունքը դեպի նա, մատնանշում էր, որ գրողների նշանավոր «անթաղակիր արքայի» մահը տիրաբար իր վրա է բևեռում ամբողջ աշխարհի ուշադրությունը։ Ոչ միայն ժուռնալիստները, գրողները, այլև ամեն պրոֆեսիաների և դիրքի տեր մարդիկ այդ մահվան առթիվ շատ են խոսում ու մտածում։

«Աշխարհը որբացավ», կրկնում են ամեն տեղ և ամենախոր և անկեղծ վիշտն են արտահայտում այդ, ըստ երեվույթին բոլորի համար ծանր կորուստի առթիվ։ «Աշխարհը որբացավ»—չկա մեծ գրողը, մեծ գեղագետը, մեծ մարդը և քաղաքացին։ Ավելին՝ չկա այլևս,—և դա կարծես ամենից շատ է մարդկանց վիշտ պատճառում—մեծ մտածողը, մեծ «ուսուցիչը կյանքի»։ Այսպես են խոսում բոլորը»։

Ինչպե՞ս վերաբերվեց Բաքվի տեղական հասարակությունը մեծ գրողի մահվանը։ Այդ առթիվ նամակի հեղինակը գրում է. «Իր վիշտն արտահայտելու մեջ մյուսներից հետ չմնաց նաև մեր քաղաքը։ Ե՛վ մեր լրագիրը, և՛ մեր գրական-դեղարվեստական խմբակը, և՛ քաղաքային դուման, և՛ ամբողջ աղգաբնակչությունը, սկսած խոշոր կապիտալիստ Հ. Զ. Թաղիևից, որ հանգուցյալի այրուն հեռագիր է ուղարկել, և վերջապես մի քանի հումբ բանվորներով՝ բոլորն էլ արձագանքեցին այդ դեպքին։ Եվ նորից՝ ի դեմս Տոլստոյի բոլորը ողբում են ոչ միայն և նույնիսկ ոչ այնքան մեծ գրողին, գեղագետին և այլն, որքան մեծ մտածողին և կյանքի ուսուցչին։ Այդ հանդամանքը իմ մեջ, այս տողերը գրողիս մեջ, որը լի է խորը հարգանքով դեպի հանգուցյալի հիշատակը,—առաջացնում էր և առաջացնում է մեծ տարակուսանք»։ Այդ

տարակուսող «ընթերցողը» Ստեփան Շահումյանն էր[1], որը օգտագործելով բուրժուական մամուլի էջերը, մերկացրեց լիբերալների և նրանց կողմնակիցների ստոր կեղծավորությունը։ Շահումյանի նամակը նման չէ այն սովորական նամակներին, որոնք ուղարկվում են խմբագրության հերքման համար։ Դա մի փայլուն, գրա-քննադատական հոդված է,

---

1 Որ իրոք այդ նամակ-հոդվածը Շահումյանինն է, դա երևում է ոչ միայն ոճից և բովանդակությունից, այլև ժամանակակիցների հիշողություններից։ Ընկեր Մինասը իր հիշողությունների մեջ այդ մասին գրում է հետևյալը. «Այդ ժամանակ մենք թերթ չունեինք, հետևապես քննել Ստեփանը ստիպված էր նույն «Բաքու» թերթում գրել մի հոդված «Ընթերցողի երկմտությունը» («Недоумение читателя») վերնագրով. Ստեփանը իր հոդվածում մոտավորապես հետևյալ միտքն էր արտահայտում. նախ այն բոլոր հեռագրերն ու հոդվածները նա համարում էր ֆորմալ, շինծու և ոչ իրականությունից բխած արտահայտության հետևանք... չի կարող պատահել, որ Լև Տոլստոյի մահը հավասար ցավ պատճառի թե՛ միլիոնատիրոջը, թե՛ ցարական չինովնիկներին, թե՛ հոգևորականությանը, թե՛ գյուղացուն և թե՛ բանվորին։

Այդ հոդվածը ամբողջ նման պայթեց բուրժուա-ինտելիգենցիայի գլխին, ամենքը խոսում էին այդ «խայտառակ հոդվածի» մասին։ Չնայած այդ հակայական ոռնոցին, ոչ ոք չհամարձակվեց մամուլի միջոցով հրապարակ գալ և պատասխանել Ստեփանին, չնայած որ այդ ժամանակներս «Բաքու»-ն բավականին հարուստ էր բուլվարային հրապարակախոսներով։ Ինքը՝ «Բաքու» թերթի խմբագիր Վերմիշևը իր վրա էր վերցրել Ստեփանի այդ հոդվածին պատասխանելու ինիցիատիվը և այդ մասին հայտնել էր իրեն Ստեփանին, բայց չնայած ընկեր Ստեփանի մի քանի անգամ հիշեցումներին, որ ինքը անհամբեր սպասում է իր հոդվածի պատասխանին, բայց... Վերմիշևը մինչև այսօր էլ դեռևս չի պատասխանել։ Ընկեր Շահումյանն առանց նրանց պատասխանին՝ պատրաստել էր մի ավելի ևս խիստ պատասխան («ՀԿ(բ)Պ Պարտարխիվ, «Շահումյան Ս. Գ., ֆոնդ № 7, էջ 37 38)։

Ընկեր Մինասի այս արժեքավոր հիշողությունը փարատում է բոլշևիկների հնարավոր կասկածանքները։ Բայց նա որոշ հշտման կարիք ունի։ Ինչպես հայտնի է հոդվածի բովանդակությունից, Շահումյանը խիստ քննադատության է ենթարկում «Բաքու» թերթի լիբերալ, կեղծավոր և ռեակցիոն դիրքը Լև Տոլստոյի նկատմամբ։ Խմբագրությունը տպագրելով Շահումյանի նամակը, ծանոթագրության մեջ խոստանում է պատասխանել «Ընթերցողին»։ Թերթի խմբագիր-հրատարակիչ Ա. Վերմիշևը մի քանի օր հետո նույն թերթում պատասխան է տպագրում Շահումյանի դեմ «Տոլստոյը պ. Ընթերցողի դատարանի առջև» վերնագրով, բայց հոդ-

գրված նամակի ձևով: Այդ նամակի և Տոլստոյի մասին գրած այլ հոդվածների մեջ Շահումյանը դրսևորում է իրեն որպես նրա ստեղծագործության խոր գիտակ և վերլուծող-հետազոտող: Տոլստոյի ստեղծագործությանը, ինչպես և նրա քարոզների քննադատությանը նա մոտենում է որպես կրքոտ բոլշևիկ և լենինյան հոդվածների ոգով գնահատում է Տոլստոյին, հանձին նրա տեսնելով և՛ մեծ արվեստագետի ու մերկացնողի, և՛ բարոյախոսի ու քարոզչի: Նա իր նամակում գրում է. «որ ի դեմս Տոլստոյի աշխարհը կորցրեց իրոք հանճարեղ գեղագետի, մարդկային հոգու ճանաչողի, «Պատերազմ և խաղաղություն», «Աննա Կարենինա», «Հարություն», «Տերն ու ծառան» և դեղարվեստական այլ երկեր կերտողին, որոնց ազնվացնող և վսեմացնող ազդեցությունն իրենց վրա զգացել են միլիոնավոր մարդիկ—դա վեր է ամեն մի կասկածից և վեճից: Որ այլևս չկա արդի հասարակական-քաղաքական և հատկապես եկեղեցական կեղծիքի խոշորագույն թշնամին և մերկացնողը—դա ևս հայտնի է բոլորին»:

Այնուհետև քննադատը նշում է հետևյալ փաստը. «Այն մարդիկ, որոնք կարդացել են Տոլստոյի հանճարեղ երկերը և հեղինակի հետ խորին վիշտն են զգացել նրա գործող անձերից որևէ մեկի մահվան նկարագիրը կարդալիս», նրանք, բնական է, «... չեն կարող վիշտ չզգալ հենց իրեն՝ Տոլստոյի մահվան առթիվ, որ գերազանցում էր իր բոլոր գործող անձանց, որպես նրանց կերտողը, որ նրանց բոլորին ընդգրկում էր իր ոգեյուն, խորը հոգում»: Այդ բոլորից հետո Շահումյանը միանգամայն տեղին ավելացնում է. «Առանց ցավի չեն կարող մտածել Տոլստոյի մահվան մասին նաև նրանք, որոնց համար թանկ է պայքարը ժամանակակից կեղծիքի դեմ, տիրող սարսափների դեմ»:

վածի շարունակությունը չի տպագրվում (հավանաբար ընկ. Մինասի ակնարկը այդ շարունակությանն է վերաբերում). խմբագրությունն ի վիճակի չի լինում Ընթերցող-Շահումյանի առաջադրած հարցերին ըստ էության պատասխանելու: Իսկ ընկեր Մինասի հիշատակած Շահումյանի պատասխան հոդվածը, ցավոք սրտի, մեզ չի հաջողվել հայտնաբերելը:

Շահումյանի այդ տողերի մեջ, Տոլստոյին տրված այդ գնահատականի մեջ զգացվում է լենինյան հոդվածների ոգին։

«Բայց տարօրինակ է,—շարունակում է նա,—որ վերևում հիշված կատեգորիայի մարդիկ չեն բավականանում Լ. Ն. Տոլստոյի մատուցած այդ անկասկած մեծ ծառայություններն ընդունելով։ Նրանք համարյա թե բոլորը Տոլստոյին հանկարծ հայտարարեցին նաև ուսուցիչ, և հետևաբար, իրենց էլ՝ նրա աշակերտներն ու հետևողները»։ Շահումյանը, որ հիանալի գիտեր Տոլստոյի ուսմունքը, լավ էր ըմբռնում այն, ուսումնասիրել էր Տոլստոյի ստեղծագործությունները և խորապես ծանոթ էր նրանց, արդարացի է վարվում այդ ստեղծված իրադրության մեջ, երբ «տարակուսող» ընթերցողի անվան տակ քննադատում է Տոլստոյի ռեակցիոն հայացքները և բոլոր նրանց, ովքեր իդեալականացնում էին նրա հայացքների այդ կողմը։ Մասնավորապես նա մերկացնում է լիբերալ խաբեբաներին և երեսպաշտներին։ Եվ նա անում էր դա Տոլստոյի ուսմունքի երկվությունը, խորը հակասականությունը բացահայտելով։

«Տոլստոյի ուսմունքը,—ասված է «Նամակի» մեջ,—միայն բողոք չէ ընդդեմ տերտերականության, միայն տառապած հոգու ճիչ չէ, որ արտահայտվեց «Չեմ կարող լռել» բառերով։ Եվ մեկը, և մյուսը նրա ուսմունքի մեջ մասնակի էպիզոդներ են. դա միայն նրա ուսմունքի նեգատիվ (բացասական) կողմն է, դա ավելի ճիշտ, Տոլստոյի առանձին վարմունքներն են, որոնք թեև տրամաբանորեն կապված են նրա ուսմունքի հետ, բայց կարող են քննության առնվել և դնահատվել անկախ այդ ուսմունքից»։

Ինչպես երևում է վերև նշված փաստերից և մասնավորապես հենց նոր մեջբերված պարբերությունից՝ Շահումյանը վճռականորեն հերքում է Տոլստոյի ուսմունքը, համարում է այն ռեակցիոն։ Սակայն նա Տոլստոյի ստեղծագործությունը վերլուծում է բազմակողմանիորեն և այդ պատճառով գտնում է նրա մեջ դրական կորիզ, քննադատական տարրեր։

Մի այլ հոդվածում խոսելով այն մասին, որ Տոլստոյը իր կրոնը դիտում էր սոսկ որպես փրկարար դաղտնիք, քննադատը ուղղակի մատնանշում է նրա կյանքի ու հայացքների հակասականությունը: «Անկասկած դրանով են բացատրվում այն բազմաթիվ հակասությունները, որ կան Տոլստոյի կյանքում և դրվածքների մեջ», կամ՝ «Տոլստոյի նույնիսկ կրոնական գրվածքներում կան բազմաթիվ փայլուն մերկացնող էջեր՝ ուղղված բուրժուազիայի և իշխանությունների դեմ» («Մի քանի խոսք լ. Ն. Տոլստոյի կրոնի մասին»[1]): Մատնանշելով Տոլստոյի հայացքներում եղած հակասականությունը, որոնք ամբողջությամբ վերցրած ռեակցիոն բնույթ ունեն, նա դրանց մեջ առանձնացնում է քննադատական տարրերը: Այդ հարցում Շահումյանը մոտիկ է կանգնած Լենինին, այդ հարցի առթիվ տված նրա գնահատականին: «Տոլստոյի ուսմունքն անպայման ուտոպիական է և ըստ իր բովանդակության՝ ռեակցիոն է բառիս ամենաստույգ և ամենախոր նշանակությամբ,—գրում է Լենինը:—Սակայն այստեղից բնավ չի բխում ոչ այն, թե այդ ուսմունքը սոցիալիստական չի եղել և ոչ էլ այն, թե նրա մեջ չեն եղել քննադատական այնպիսի տարրեր, որոնք ընդունակ են արժեքավոր նյութ մատակարարելու՝ առաջավոր դասակարգերի լուսավորման համար»[2]: Ելնելով ընդհանուր այդ սկզբունքային դրույթներից՝ Շահումյանը փայլուն կերպով, բոլշևիկյան տրամաբանության ուժով մինչև վերջը մերկացնում է լիբերալների ստորաքարշությունը և նրանց գարշելի կեղծավորությունը:

«Տոլստոյը միայն տերտերականության ու մահվան պատիժը չէ, որ ժխտում էր: Նա ժխտում էր նաև մեր ամբողջ «աշխարհիկ կյանքը», մեր ամբողջ կուլտուրան: Տոլստոյը Քրիստոսի աշակերտն էր և քրիստոնեության ուսուցիչը: Երեսուն տարվա ընթացքում նա քարոզում էր և քարոզում էր ոչ թե կատակով, ոչ թե խոսքի համար, այլ նրա համար, որ մարդիկ կատարեն քարոզածը՝ հրաժարումն սե-

---

1 «Գրական թերթ», №28, 1935 թ.:

2 «Հոդվածներ Տոլստոյի մասին», էջ 44, 1939 թ.:

վականությունից, պետական կազմակերպությունից, եկեղեցուց, դատարաններից, ընտանիքից, այն բոլորից, ինչով որ մենք ապրում ենք, դառնվելով այդ հաստատությունների արդի ձևերի նկատմամբ այս կամ այն հարաբերության մեջ, մենք բոլորս, որ Տոլստոյին «ուսուցիչ» ենք անվանում»:

Իսկապես, Տոլստոյը հանուն իր իդեալների առաջարկում է մարդկանց հրաժարվել սեփականությունից, որպես երկրի վրա չարիքի դևսավոր աղբյուրից: «Ով ահա ես ինձ հարց եմ տալիս,—ասում է Շահումյանը,—արդյոք կարո՞ղ են մարդիկ, որոնց բոլոր իդեալները հիմնված են սեփականության և հարստության վրա, որոնց ամբողջ կյանքը հիմնված է սեփականության և հարստության վրա, որոնց ամբողջ կյանքը հիմնված է օրենքների ժողովածուի վրա, որը շատ տարվա տաժանակիր աշխատանք է սահմանում թափառաշրջիկության համար և հաճախ մահվան է դատապարտում էքսպրոպրիացիայի (այսինքն՝ ուրիշ մարդկանց սեփականությունից զրկելու) համար, այդպիսի մարդիկ կարո՞ղ են արդյոք գիտակցաբար և անկեղծորեն Տոլստոյին «ուսուցիչ» անվանել...»:

Այնքան դիպուկ է սա ասված, որ խփում է կապիտալիստների և նրանց դրական լակեյների ոչ թե հոնքին, այլ ուղղակի աչքին, որոնք երեսպաշտորեն Տոլստոյին անվանում էին իրենց «ուսուցիչը»:

Սակայն Շահումյանը դրանով չի սահմանափակվում, նա շարունակում է դիպուկ հարվածներ հասցնել իր հակառակորդներին: «Հանուն չարին ու բռնությանը չհակառակվելու» Տոլստոյն առաջարկում է չընդունել պետական իշխանությունը, երդումը, զինվորագրությունը, դատական հաստատությունները, բանտերը: Մի՞թե այդ բոլոր բժիշկները, փաստաբանները, վաճառականները, լրագրերի խմբագիրներն ու հրատարակիչները և այլն, բոլոր նրանք, որոնք ընդունում են, և այն էլ ոչ թե վախից, այլ խղճի մտոք,—և՛ պետական իշխանությունը, և՛ զինվորագրությունը, որոնք ամեն օր միլիոնավոր բերաններով երդվում են և դատում իրենց դատարաններում և «ճշտագործներին» բանտերն են նետում,—

«մի՞թե նրանք անկեղծ են, երբ ողբում են «կյանքի մեծ ուսուցչի», «սիրո ուսուցչի» մահը։

Վարպետորեն կազմված այս հարցերի պատասխաններըը, որոնք իրենց տրամաբանության ուժով ջարդ ու փշուր են անում կեղծավոր շաղակրատներին և բուրժուական ինտելիգենտներին, տալիս են հենց իրենք այդ հարցերը։ Այո, իհարկե այդ բուրժուական լիբերալ ինտելիգենտները անկեղծ չեն, երբ ողբում են «կյանքի մեծ ուսուցչի» մահը։ Ավելին, նրանք կեղծավորներ են, ստախոսներ և անարգներ. նրանք պանկանում են խաբել ժողովրդին. ահա ինչպես են հնչում Շահումյանի պատասխանները այդ հարցերին, և դրանում ևս նա անտարակույս միանդամայն համամիտ է Լենինյան մոտեցմանը։ «Այդ հարկավոր է ըմբռնել՝ առաջ ընթանալու համար,—գրում է Լենինը։—Այդ առաջշարժմանը խանգարում են բոլոր նրանք, որոնք Տոլստոյին հայտարարում են «ընդհանուր խիղճ», «կյանքի ուսուցիչ»։ Այդ կեղծիք է, որը դիտակցաբար տարածում են լիբերալները, որոնք պանկանում են օգտագործել Տոլստոյի ուսմունքի հակահեղուցիոն կողմը։ Այդ կեղծիքը Տոլստոյի, որպես կյանքի ուսուցչի մասին, լիբերալների հետևից կրկնում են և մի քանի նախկին սոցիալ-դեմոկրատներ»[1]։

Լենինյան այդ դրույթների լույսի տակ պարզ է դառնում Տոլստոյի մասին տարածված ռեակցիոն հայացքների շահումյանական քննադատության կարևորությունն ու խիստ քաղաքական բնույթը։ Չէ՞ որ լիբերալ-բուրժուական և մենշևիկյան հրապարակախոսության այդ սին աղաղակների ազդեցությամբ բանվորների որոշ խմբեր նույնպես Տոլստոյին ընդունեցին որպես «կյանքի ուսուցիչ»։ Այդ առթիվ Շահումյանը նույնպես տարակուսանք է արտահայտում։ Վերլուծելով Տոլստոյի ուսմունքի համապատասխան դրույթները, որոնք վճռականորեն հակասում են բանվոր դասակարգի շահերին, Շահումյանը ասում է.

«Տոլստոյի համար դոյություն չուներ մեր ժամանակա-

---

1 «Հոդվածներ Տոլստոյի մասին», էջ 30։

կից կյանքի ամենասոսկալի պրոբլեմը, միլիոնավորների գործազրկությունը, որոնք ցանկանում են աշխատել, որպեսզի «արժանի վինեն անվելուս», բայց նրանց աշխատանք չի տրվում. նրա համար գոյություն չուներ այդ միլիոնավորների և նրանց ղավակների կիսաքաղց և քաղցած վիճակից մեռնելու պրոբլեմը, որոնք ամեն օր պաշտոնապես դրանցվում են ոստիկանական և ամեն մի այլ տեսակի վիճակագրության կողմից»: Մինչդեռ Տոլստոյը հավատացնում էր, որ «ոչ ոք չի մեռել և չի մեռնելու քաղցից»: Իսկ, մյուս կողմից, մուրացկան լինելը, շրջմոլիկ լինելը ամենամեծ երջանկությունն է աշխարհումս: Եվ այդ պատճառով մեկ անգամ ընդմիշտ «ոչ մի պայքար կերակրվելու, կյանքի լավագույն պայմանների համար, այլ սեր, ներումն ամենի և խոնարհություն ու հեզություն...»:

«Եվ ահա ես ինձ կրկին հարց եմ տալիս,—ասում է Շահումյանը,—մի՞թե Տոլստոյին, որն այդպես հասկանում էր, կամ, ավելի ճիշտ, այնքան տարօրինակ կերպով չէր ըմբռնում ժամանակակից կյանքի ամենահիմնական հարցերը, բանվորները դիտակցորեն կարող են «կյանքի ուսուցիչ» անվանել: Մի՞թե նրանք կարող են նրան համարել «մեծ մտածող», երի առաջ, որպես մտածողի, հարկավոր է «ամբողջ մարդկության հետ» խոնարհվել»:

Այստեղ խիստ կարևոր է հետևյալ փաստը. Շահումյանի այն ասույթը, որ Տոլստոյը ըմբռնեց ժամանակակից կյանքի ամենահիմնական հարցերը, այսինքն՝ բանվոր դասակարգի շարժումը և պայքարը ռևոլուցիայի համար՝ լիովին համընկնում են լենինյան դրույթին, համապատասխանում են դրան: Դեռ 1908 թ. Լենինը գրում էր. «որ այդպիսի հակասություններ մեջ Տոլստոյը չէր կարող բացարձակապես ըմբռնել ո՛չ բանվորական շարժումը և նրա դերը սոցիալիզմի համար մղվող պայքարում, ո՛չ էլ ռուսական ռևոլուցիան, այդ ինքնըստինքյան ակներև է»: Շահումյանի մի շարք դրույթների նմանությունը լենինյան դրույթներին, ինչպես մատնանշեցինք, պատահական չէ, այդ հարցին մենք դեռ կվե-

բադառնանք, իսկ այժմ կրկին դիմենք Շահումյանի «Նամակին»։

Ջուգադրելով Տոլստոյի ուսմունքի հիմնական թեզերը լիբերալների կեղծ և երեսպաշտական պնդումներին, բոլշևիկ քննադատը հմտորեն մերկացնում է նրանց մանեվրները, Տոլստոյի ուսմունքի հակառևոլուցիոն կողմն օգտագործելու նրանց փորձերը։ Եվ, կրկին հիշելով տեղական հերոսներին, Շահումյանը հարցը շեշտակի է դնում. «Տեղական մամուլը և տեղական ճառախոսները, որոնք խոսել են Տոլստոյի մահվան առթիվ, մինչև օրս բոլորովին չեն փորձել լուծելու այդ հնարավոր տարակուսանքները։ Նրանք Տոլստոյին անվանել են և անվանում են մեծ մտածող, մեծ բարոյագետ, մեծ ուսուցիչ, բայց բոլորովին մեզ չեն ասում, թե ինչո՞ւ համար են այդպես անվանում»։

«Ընթերցող»-Շահումյանի նամակը «Баку» թերթի խմբագրությանը հանկարծակիի բերեց։ «Ընթերցողն» իր խոսքն ասաց շատ որոշակի, համոզիչ, տրամաբանորեն և փաստարկված։ Համառորեն պահանջեց լիբերալ շաղակրատաններից և խաբեբաներից պատասխանել տարակուսող ընթերցողի հարցերին։ Նամակը տպագրվեց «Баку» թերթում խմբագրական բնորոշ ծանոթագրությամբ. «Այս նամակի պատասխանը կտրվի թերթի մոտակա համարներից մեկում»։ Մի քանի օր հետո թերթի խմբագիր-հրատարակիչ Վերմիշևը վերջապես որոշեց կատարել իր խոստումը և հանդես եկավ պատասխան հոդվածով։ Հոդվածը կոչվում էր «Տոլստոյը պ. Ընթերցողի դատաստանի առջև»։ Տպագրվեց միայն հոդվածի առաջին մասը։

Վերմիշևը ի՞նչ կարող էր ասել, ի՞նչ կարող էր հակադրել Շահումյանին։ Պատասխան հոդվածում նա գրում է. «Ինչո՞ւ և ինչպե՞ս մարդիկ կարող են Տոլստոյին անվանել մեծ մտածող և կյանքի ուսուցիչ»։ Այսպիսի տարակուսելի հարցով է դիմում պ. Ընթերցողը իր նամակում, որ տպագրված է մեր թերթի № 277-ի մեջ»։

Եվ նա փորձում է պատասխանել այդ հարցին։ Սակայն նրա պատասխանից, ինչպես պետք է ենթադրել, ոչինչ

դուրս չի գալիս։ Վերմիշևը կարող էր միայն մի ավելորդ անգամ ևս կեղծել, շպարվել ընթերցողի առջև, կուրացավել, որպեսզի մի կերպ դուրս գար իր համար անհարմար դրությունից, որի մեջ նրան դրել էր «Ընթերցողը» իր հարցերով։ Իրականում այդպես էլ եղավ։ Վերմիշևը և նրա հետ մեկտեղ բոլոր տեղական լիբերալները ցույց տվեցին իրենց ամբողջ դաղափարական անանկությունը։ Սակայն նրանք չէին ցանկանում խոստովանել դա։ «Մեծ արվեստագետ, միևնույն ժամանակ և մեծ ուսուցիչ է»,—ահա այն պատասխանը, որ տվեց լիբերալ թերթը։ Սակայն ինքը՝ հոդվածի հեղինակը, անհարմար վիճակի մեջ ընկավ իր պատասխանից, որովհետև դա պատասխան չէր, այլ խուսափում ուղղակի պատասխանից։ Եվ նա շտապեց ելք գտնել, հայտարարելով որ «ինքը ընթերցողի հետ միասին ելնում է միևնույն նախադրյալներից Տոլստոյի գնահատման հարցում»։ «Ամբողջ մեր ասածը վերաբերում էր Տոլստոյ արվեստագետին և ժամանակակից անարդարությունները քննադատող Տոլստոյին,—գրում էր այդ մանր լիբերալը,—ելնելով այդ տեսակետից, ըստ երևույթին դյուրին է ընդհանուր լեզու գտնել ընթերցողի հետ, որովհետև մեր ելակետները միևնույն են»։

Այդ կեղծիք էր, խաբեբայություն։ Այդպիսի ընդհանուր ելակետներ Տոլստոյի ոճականքի գնահատման հարցում, ինչպես մատնանշեցինք, չեն եղել և չէին կարող լինել «Ընթերցողի» և Վերմիշևի, բոլշևիկների և լիբերալների և նրանց օպորտունիստական ձայնափողերի միջև ոչ միայն այդ բառի «նեղ», այլև «լայն» իմաստով։ Դա լիբերալ շազակրատի փորձն է, լարախաղացությունը, որի օգնությամբ նա և իր բարեկամները ձգտել են սքողել հարցի իսկական էությունը և մի կերպ դուրս գալ իրենց համար անհարմար դրությունից։ Բայց ավա՜ղ, նույնիսկ այդ նրանց չհաջողվեց։ Նրանք իրենք շփոթվել էին և ոչինչ չէին կարողանում պատասխանել «Ընթերցողին»։ Այդ երևում է այն փաստից, որ պատասխան հոդվածը մնաց անավարտ։ Վերմիշևը հոդվածի վերջում հայտարարում էր. «Այժմ տեսնենք, թե Տոլստոյն իր ուս-

մանքով ինչ է տվել մարդկությանը այդ բառի ամենանեղ իմաստով, սակայն այդ մասին մյուս անգամ»:

«Баку» թերթի ընթերցողներն իզուր էին սպասում այդ հոդվածի շարունակությանը, որտեղ հեղինակը պետք է ըստ էության պատասխաներ: Թերթի խոստումը չիրագործվեց, հոդվածի շարունակությունը չերևաց թերթում: Վերմիշևը, ինչպես երևում է, հարկ համարեց չպատասխանել, չվերադառնալ այլևս «Ընթերցողի» հարցերին: Եվ այդ, պետք է ընդունել, նրա կողմից բանական էր: Նա և նրա բարեկամները, ինչպես ասում են, անձնապես բռնվել էին հանցանքի մեջ և ոչինչ չէին կարող ըստ էության առարկել և պատասխանել: Նրանց պատասխանը ինքնամերկացում էր լինելու: Եվ նրանք այնքան խելոք գտնվեցին, որ չցանկացան մի ավելորդ անգամ ևս մերկացվել: Սհա թե ինչու դերադասեցին լռել, քան ըստ էության պատասխանել: Եվ մեկը, և մյուսը ցույց ավելցին լիբերալ երեսպաշտների լիակատար անանկությունը և միևնույն ժամանակ այն հարվածների ուժն ու հիմնավորվածությունը, որ նրանք ստացան բոլշևիկ «Ընթերցողից»՝ Ստեփան Շահումյանից:

Երկրորդ հոդվածում («Մի քանի խոսք Տոլստոյի կրոնի մասին», տպված առաջին անգամ 1911 թ. «Современная жизнь»-ում) Շահումյանը հատկապես վերլուծում է Տոլստոյի կրոնը, կատարում է նոր դիտողություններ Տոլստոյի կրոնի վերաբերյալ և, որ ամենակարևորն է, մի շարք դրույթներ է առաջ քաշում, որոնք Շահումյանին էլ ավելի մերձեցնում են Տոլստոյի լենինյան գնահատականներին:

Նախ Տոլստոյի կրոնի մասին:

«Տոլստոյի կրոնի մեջ կա մի կողմ,—գրում է Շահումյանը,—որը, որքան մեզ հայտնի է, քննադատությունը դեռևս չի շոշափել: Մենք ի նկատի ունենք, եթե կարելի է այսպես արտահայտվել, այդ կրոնի դիտակցական կամ մտացածին բնույթը: Մինչդեռ Տոլստոյի կրոնի այդ կողմը մեծ նշանակություն ունի պարզելու համար այն, թե ինքը Տոլստոյը սուբեկտիվորեն, իր դիտակցության խորքում ինչպես էր նայում իր կրոնին. նրա այդ կողմը մեծ նշանակություն ունի

նաև պարզելու համար ընդհանրապես կրոնի իմաստն ու արժեքը»:

Այդ հարցը լինելով խիստ հետաքրքիր՝ կարիք ունի ավելի մանրամասն վերլուծության: Նվ մենք ձեռնամուխ կլինենք այդ հարցի պարզաբանմանը:

Ի՞նչով է հիմնավորում Շահումյանն իր դրույթը: Ամենից առաջ նա վերհիշում է Տոլստոյի «Ո՞րն է իմ հավատը» գրքի (1883 թ.) այն հատվածները, որտեղ նա ընդունում է, որ ինքը աշխարհում ապրել է 35 տարի, բացի 15 մանկական տարիներից, 35 տարին ապրել է որպես «նիհիլիստ՝ որևէ հավատ չունենալու իմաստով», այսինքն եղել է անհավատ մարդ: «Սրանից հինգ տարի առաջ,—գրում է Տոլստոյը այդ գրքում,—ես հավատացի Քրիստոսի վարդապետությանը, և իմ կյանքը հանկարծ փոխվեց»: Այս խոսքերը գրվել են 1883 թվին: «Հետևապես,—գրում է Շահումյանը,—այն բևեռումը, որ կատարվել է Տոլստոյի կյանքում, իր կրոնական «արթնացումը» կամ «հարությունը», նա վերագրում է 1878 թվին: Նույնը, ինչ որ այստեղ է ասվում, նա բազմիցս կրկնում է նաև իր մյուս գրվածքներում»:

Որպես օրինակ Շահումյանը մատնանշում է «Աննա Կարենինա» վեպը, որտեղ «...ի դեմս Լևինի հեղինակը պատկերում է իրեն»: Լևինը պատմում է, թե ինչպես իր համար «...հանկարծ բացվում է «կյանքի իմաստը», երբ նա ճանաչում է աստծո ճշմարտությունը, որն, ըստ Լևին-Տոլստոյի, «սիրտ մեջ է»:

Հօգուտ իր դրույթի Շահումյանը բերում է և ուրիշ լուրջ փաստարկներ: Դա Տոլստոյի օրագրի 1855 թ. մարտի 5-ի գրանցումն է, որ բերված է Բրյուկովի գրքում: Օրագրում մատնացույց է արվում, թե ինչպես Տոլստոյը խորհեց ստեղծել մի «նոր կրոն», «գործել դիտակցորեն՝ մարդկանց կրոնով միացնելու համար, ահա հիմնական միտքը, որը հույս ունեմ ինձ կոգևորի»:

Նվ այնուհետև քննադատը պարզաբանում է «Կանաչ ձողի» էությունը: Այդ փաստերից և փաստարկումներից հե-

տո Շահումյանը անում է իր համոզիչ եզրակացությունը մեծ գրողի «կրոնի փիտակցական և մտացածին բնույթի մասին»։

«... Տոլստոյը դեռևս 1855 թվին գիտեր,—գրում էր Շահումյանը,—որ 23 տարի հետո «հանկարծ» կհավատա աստծուն, որ նրա «հավատը» հենց քրիստոնեությունն է լինելու, որ դա լինելու է քրիստոնեության մի հատուկ տեսակը, որը «համապատասխան է լինելու մարդկության զարգացմանը», այսինքն՝ «խորհրդավոր, միստիկ տարրերից զուրկ», որ այդ «հավատը» երանություն է խոստանալու ոչ թե ապագայում, ոչ այն աշխարհում, այլ այստեղ, երկրի վրա։ Այստեղ մենք ընթերցողի ուշադրությունն ենք հրավիրում Տոլստոյի արտահայտությունների՝ «նոր կրոն հիմնադրելու», «մարդկանց կրոնով միացնելու համար գիտակցորեն դործելու» ցանկության վրա, թե ինքը կարող է «հրապարակել» և «իր կյանքը նվիրել այդ մեծ միտքն իրագործելուն»։

Այդպիսի բնույթ է կրում և «Կանաչ ձողի» պատմությունը։ Այդ բոլորը զուգադրելով Տոլստոյի՝ «ճանաչողության կրոնական եղանակի», հայտնության և այլի մասին եղած պնդումների հետ, որոնք հակասում են իրար, Շահումյանն ասում է. «Մենք կարծում ենք, որ ճշմարտության դեմ չենք մեղանչի և չենք վիրավորի Տոլստոյի հիշատակը, եթե ասենք. այո, իր աշխույժ երևակայությամբ, դեպի մարդիկ ունեցած իր սիրով, իր անսահման բարությամբ Տոլստոյը հնարել է իր կրոնը և ինքն ուրախանում էր դրանով և մեր գլուխն էլ տանում...»։

Շահումյանը չսահմանափակվեց դրանով. նա առաջ գնաց, և, ինչպես պետք էր ենթադրել, հանդեց վճռական եզրակացության, հայտարարելով, որ Տոլստոյը «չի ունեցել կատարյալ հավատ դեպի այն կրոնը, որ նա այդպես կրքոտ կերպով ու հափշտակությամբ քարոզում էր»։ «Ինչպես արդեն պետք է որ պարզ լինի վերևում բոլոր ասածներից, Տոլստոյն ինքը, մեր կարծիքով, իր հոգու խորքում հավատացող մարդ չի եղել»,—նկատում է Շահումյանը և ավելացնում. «Տոլստոյը իր կրոնին նայում էր միայն որպես մի փերկարար գաղտնիքի, որ գրված էր կանաչ ձողի վրա»։

Այդպիսի հայացքը Տոլստոյի կրոնի նկատմամբ՝ շատ կողմերով հետաքրքրական է և նոր հարցադրումների ու խորհրդածությունների առիթ է տալիս։

Ավելին, այսպիսի վճռական կարծիքը Տոլստոյի անհավատության մասին իր ժամանակի քննադատության համար նորություն էր։ Շահումյանը ոչ միայն հայտարարում է այդ, այլև մեծ գրողի ստեղծագործությունների վերլուծության հիման վրա հաստատում է իր թեզը։ Այդ հարցադրումը հարստացնում է մեր պատկերացումը Տոլստոյի կրոնական զարգացման մասին։ Հետաքրքիր ու ուշագրավ է այստեղ հիշել այն զուգադիպությունը, որ կա այդ հարցում Շահումյանի և պրոլետարական մեծ գրող Մաքսիմ Գորկու կարծիքների միջև։ Արդեն «Դիտողություններ Տոլստոյի մասին» հետաքրքիր հիշողությունների մեջ, որն արժանացել է Լենինի դրական վերաբերմունքին, Գորկին նույնպես գալիս է այն եզրակացության, ինչ Շահումյանը։ Բայց ավելի որոշակի Տոլստոյի անհավատության, անաստվածության մասին Գորկին արտահայտվել է հիշողություններից առաջ գրած մի նամակում։ Այդ նամակում, որը հիմք է դարձել նրա «Դիտողությունների» համար, շարադրել է իր տպավորությունները ռուսական հողի մեծ գրողի հետ ունեցած առաջին հանդիպման մասին։ 1900 թվին Չեխովին հասցեագրած այդ նամակում մենք կարդում ենք.՝«Ես բոլորովին չէի համաձայնում, որ նա աթեիստ է, թեև զգում էի այդ, բայց հիմա երբ լսեցի, ինչպես է նա խոսում Քրիստոսի մասին և տեսա հավատացողի համար շատ խելոք նրա աչքերը,—դիտեմ, որ նա իրոք աթեիստ է և այն էլ խորապես։ Չէ՞ որ դա այդպես է»[1]։

Այն, ինչի հանգել է Գորկին՝ Տոլստոյից ստացած անմիջական տպավորության, կենդանի կապի ու շփման միջոցով, դիտելով մեծ գրողին կենցաղում, նույն այդ եզրակացությանը հանգել է Շահումյանը՝ բնավ անձնական ծանոթություն չունենալով վերջինիս հետ, այլ ելնելով միայն նրա ստեղծագործությունների գիտական-մարքսիստական անալի-

---

[1] «Литературная критика», №11, 1935 թ., էջ 120։

դից։ Այս փաստը շատ պերճախոս է։ Նա ցույց է տալիս, թե որքան լավ էր իմանում Շահումյանը դրականությունը և որքան խորն էր ուսումնասիրել նա մեծ դրողի ստեղծագործությունները՝ միաժամանակ հանդես բերելով ինքնուրույն մոտեցում հարցին և մտքի խորաթափանցություն։

Ինքը՝ Շահումյանը, Տոլստոյի «նոր կրոն» ստեղծելու հարցը ուղղակի կապում էր Տոլստոյի աշխարհայացքի վրա ժողովրդական մասսաների ունեցած ազդեցության հետ, այլ խոսքով, Տոլստոյը ստեղծեց իր «նոր կրոնը» տատապյալ ժողովրդական մասսաների, «նահապետական գյուղացիության» (Լենին) անմիջական ազդեցության տակ, արտահայտելով վերջինիս արամադրությունները։ Մեջ բերելով Մարքսի այն խոսքը, որ կրոնը դա մի ձգտում է՝ ստեղծել «խաբուսիկ» երջանկություն, որը փոխարինելու է ժողովրդի «իրական» երջանկությանը», Շահումյանն իր կողմից ավելացնում է. «Այս խոսքը լիովին հարմարվում է նաև Տոլստոյի կրոնին»։ Եվ այդ հասկանալի է, որովհետև Տոլստոյը նույնպես որոշեց ժողովրդի համար ստեղծել խաբուսիկ երջանկություն «նոր կրոնի» ձևով։

Սակայն ի՞նչ հանգամանքների ազդեցությամբ տեղի ունեցավ այդ բեկումը Տոլստոյի հայացքների մեջ։

«Տոլստոյը տեսնում էր ժողովրդական մասսաների աղքատությունը, վիշտն ու տանջանքը,—պարզաբանում է Շահումյանը, բացահայտելով նրա աշխարհայացքի բեկման և կրոնի սոցիալական հիմքերը։—Անկեղծորեն և խորապես խղճում էր նրանց, ամբողջ սրտով զգում էր նրանց վշտի և տառապանքների սարսափը, բայց առջևում ոչ մի ելք չէր տեսնում (նրա ամբողջական ազնվական հոգեբանությունը թույլ չէր տալիս տեսնելու այդ ելքը). ժողովրդի համար «իսկական» երջանկություն ստեղծելու հնարավորությանը չհավատալով, նա որոշեց ստեղծել նրա համար «խաբուսիկ» երջանկություն»։ «Տոլստոյը տեսնում է,—շարունակում է իր բացատրությունը Շահումյանը,—որ մարդիկ պայքարում, կռվում են աղքատության ճիրաններից դուրս գալու, հասարակական ավելի լավ պայմաններ ստեղծելու համար։ Տոլս-

տոյը չի հավատում այս աշխարհում որևէ բան փոխելու հնարավորությանը։ Դրա համար էլ նա չի ուզում շոշափել հասարակական պայմանները՝ համարելով դրանք բոլորովին անկարևոր»։

Շահումյանի այս փայլուն տողերի իմաստը, ճիշտն ասած, նույնն է, ինչ Լենինը անվանել է «տոլստոյական ձեռնպահություն քաղաքականությունից, տոլստոյական հրաժարում քաղաքականությունից, նրա նկատմամբ հետաքրքրության բացակայություն»։ Դրա մեջ Լենինը տեսնում էր նահապետական դյուղի անողնաշար և «անտեսարար մոժիկի» քարացած վախկոտության արտացոլումը[1]։ Այլ բառերով, բայց ըստ էության նույնն է ասում Շահումյանը վերևում բերված հատվածներում։ Այդ տողերը խիստ արժեքավոր են և խոր միտք են պարունակում։ Տոլստոյը, Շահումյանի կարծիքով, կանգնեց աշխատավոր ժողովրդի կողմը, իր քննադատության մեջ արտացոլելով տառապող և ընչազուրկ մասսաների տրամադրությունները։ Այդ միտքը ավելի պարզորոշությամբ արտահայտված է նույն այդ հոդվածի մի ուրիշ տեղում, որտեղ Շահումյանը հանձին մեծ գրողի տեսնում է «ընչազուրկների այդ անկասկած ազնիվ և անկեղծ բարեկամին»։

Տոլստոյի՝ որպես ընչազուրկ, աշխատավորական մասսաների, այսինքն՝ նահապետական դյուղացիության ձգտումների արտահայտչի մասին եղած հայացքը, որպիսին նա դարձավ աշխարհայացքային ճգնաժամի հետևանքով, առաջին անգամ արտահայտել է Լենինը և հանճարեղորեն մշակել Տոլստոյի մասին գրած հոդվածներում։ Իսկ դա հիմնական, կենտրոնական հարց է Տոլստոյի գնահատման գործում և պայմանավորում է բոլոր մնացած հարցերը։

«Տոլստոյը կանգնած է նահապետական, պարզամիտ դյուղացու տեսակետի վրա, Տոլստոյը փոխանցում է նրա հոգեբանությունն իր քննադատության, իր ուսմունքի մեջ։ Տոլստոյի քննադատությունը հենց այն պատճառով է լեցված այդքան խոր ղգացմունքով, այդպիսի կրքոտությամբ, համո-

[1] «Հոդվածներ Տոլստոյի մասին», էջ 10։

չէ ուժով, թարմությամբ, անկեղծությամբ, ժողովրդական մասսաների ըշխառության իսկական պատճառները գտնելու և «մինչև արմատը» հասնելու անվեհերությամբ, որովհետև այդ քննադատությունն իրոք որ արտահայտում է այն միլիոնավոր գյուղացիների հայացքների բեկումը, որոնք դեռ նոր-նոր էին ազատագրվել ճորտատիրությունից և տեսել էին, որ այդ ազատությունը հավասար է քայքայման, սոված մահության, քաղաքային «տականքների» շրջապատում սպասող անապատան կյանքի և այլ նորանոր սարսափների...»[1]։ Լենինյան հանճարեղ գնահատության լույսի տակ Տոլստոյի ոսմունքը և գեղարվեստական ստեղծագործությունը միանգամայն այլ տեսք են ընդունում։ Տոլստոյի հայացքների սխեմի՝ որպես «վերացական քրիստոնեական անարխիզմի» մասին եղած ոչ ճիշտ պատկերացումը և նրա մասին մի շարք այլ նման անհեթեթ պնդումներով լի արտահայտությունները լենինյան հոդվածների հզոր հարվածների տակ վերջնականապես չախչախվեցին և դեն շպրտվեցին։ Տոլստոյի մասին Լենինի տված գնահատականը, նրան որպես «ռուսական բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիայի հայելի» բնորոշելը՝ հանճարեղ գիտական հայտնագործություն է գրական-քննադատության բնագավառում և մնում է որպես գրական երևույթների մարքսիստական վերլուծության չգերազանցված օրինակ։

Դա ծառայել և շարունակում է ծառայել որպես մարքսիստական գրականագիտության ղեկավար սկզբունք ոչ միայն Տոլստոյի գնահատման հարցում, այլև այլ կարգի բարդ գրական երևույթների պարզաբանման համար։

Տոլստոյի մասին Շահումյանի հոդվածների հիմնական արժեքը և նրանց գլխավոր նշանակությունն այն է, որ Շահումյանը Տոլստոյի գործունեության մեջ գլխավորը որոշելիս, նրան գնահատելիս, հենվում է լենինյան սկզբունքների վրա, գնում է Լենինի ետևից, Տոլստոյին համարելով ընչազուրկների անկեղծ բարեկամ, որը բուրժուա-կալվածատիրական կարգերի իր քննադատության մեջ արտահայտել է

1 «Հոդվածներ Տոլստոյի մասին», էջ 27։

ժողովրդական մասսաների տրամադրությունները, վիշտը և տառապանքները։ Շահումյանի ասույթները Տոլստոյի հակասությունների, ուժի հանճարեղության և թուլության մասին, ինչպես տեսանք, տոգորված են լենինյան հոդվածների ոգով։ Չնայած այդ հանդամանքին՝ Շահումյանի հոդվածները մեծ դրողի մասին չեն հասնում ուսուցչի հոդվածների բարձրությանն ու խորությանը։ Լենինը Տոլստոյին դիտեց որպես ռուսական ռևոլյուցիայի հայելի, նրա ուժի և թուլության արտահայտություն. Շահումյանի մոտ այդ հարցը չի մշակված, թեև նրա ասույթները տրամաբանական զարգացմամբ միայն կարելի է հանգեցնել լենինյան այդ ընդհանրացումներին։ Եվ դա Շահումյանի հոդվածների հիմնական թերությունը պետք է համարել։ Անկախ այդ տարբերությունից, Շահումյանը մեծ դրողին հիմնականում գնահատել է լենինյան ոգով։ Հետաքրքրական է նշել, որ դաղափարական այն մերձեցումը, որ կա Լենինի և Շահումյանի հոդվածների միջև, գոյություն չունի այլ մարքսիստներին պատկանող աշխատությունների մեջ, որոնք Տոլստոյի մասին գրել են Լենինից առաջ և նրանից հետո (խոսքը նախահեղափոխական ժամանակաշրջանին է վերաբերում)։ Ես նկատի ունեմ, իհարկե, ոչ թե մենշևիկներին իրենց բոլոր տարատեսակություններով, որոնք իրենց համարում էին մարքսիստներ, իսկ իրականում մարքսիզմի ոխերիմ թշնամիներն էին, այլ անցյալի այնպիսի գործիչների (Պլեխանով, Մերինգ, Ռոզա Լյուքսեմբուրգ), որոնք չնայած իրենց սխալներին և մարքսիզմից կատարած լուրջ նահանջներին, ունեն որոշակի ծառայություններ մարքսիզմի և պրոլետարական ռևոլյուցիոն շարժման հանդեպ։ Եթե Շահումյանի դրույթները հիմնականում համընկնում են Տոլստոյի վերաբերյալ լենինյան գնահատականին, եթե բոլշևիկ Շահումյանը իր մեծ ուսուցչի գաղափարական աղդեցության տակ այդ հարցում ըստ էության պաշտպանում է լենինյան դիրքերը, այստեղ ոչ մի զարմանալի բան չկա։ Ընդհակառակը՝ դա շատ բնական է և այլ կերպ լինել չէր կարող։

ԳԼՈՒԽ V

ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԸ ԵՎ ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻՆ

Մաքսիմ Գորկին եղել է ուս այն մեծ գրողներից մեկը, որոնց Շահումյանը նվիրել է հատուկ աշխատություն: Նրա ասույթները պրոլետարական մեծ գրողի մասին խիստ հետաքրքրական են ոչ միայն քննադատի գրականագիտական ընդհանուր հայացքները բնորոշելու տեսակետից, այլև այն պատճառով, որ Գորկու պաշտպանությանը նվիրված նրա ելույթները ամենասերտ կերպով կապված էին Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պայքարի հետ, պայծառորեն արտահայտում էին Մաքսիմ Գորկու հանդեպ եղած լենինյան վերաբերմունքը:

Մաքսիմ Գորկու լենինյան բնութագիրը, իբրև «պրոլետարական արվեստի անպայման խոշորագույն ներկայացուցչի, որը նրա համար շատ բան է արել և դեռ շատ բան կարող և անել»[1], որպես մի գրողի, որն «իր մեծ գեղարվեստական երկերով չափազանց ամուր է կապվել Ռուսաստանի և ամբողջ աշխարհի բանվորական շարժման հետ»[2], դարձավ Ստեփան Շահումյանին, ինչպես և այլ բոլշևիկների համար ելակետային և ղեկավարող սկզբունք՝ մեծ գրողի ստեղծագործության գնահատման գործում: Եվ իրոք, Ս. Շա-

---

1 «Լենինը և արվեստը», 1933 թ., էջ 106:

2 Նույն տեղ, էջ 105:

Հումյանը Գորկու մասին գրած իր հոդվածներում հանդես է գալիս որպես լենինյան հայացքների ջերմ պաշտպան։

Հայ պրոլետարական պոեզիայի հիմնադիր Հակոբ Հակոբյանը Ս. Շահումյանի մասին գրել է. «Ես հիշում եմ,— ռուս գրողներից նա ամենից շատ սիրում էր Մ. Գորկուն, եվրոպական գրողներից՝ Վերհարնին, հայ գրողներից՝ Հովհաննես Թումանյանին»։

Դեռ ուսանող եղած ժամանակ, Շահումյանը ջերմորեն հետաքրքրվում է Գորկու երկերով, սիրում է դրանք և փորձում թարգմանել հայերեն։ Նա հաջող կերպով թարգմանեց Գորկու «Մի անգամ աշնանը» պատմվածքը և հրատարակեց առանձին գրքով 1901 թ.։ Գորկին հայերեն թարգմանվել է դեռևս Շահումյանից առաջ, բայց այդ թարգմանությունները տպագրվել են միայն հայ պարբերական մամուլում։ Առանձին գրքույկով առաջին անգամ լույս ընծայվեց Շահումյանի թարգմանությունը, որը գրական վերաբերմունքի արժանացավ ժամանակի քննադատության կողմից։

Շահումյանի վերաբերմունքը դեպի Գորկին քաղաքական խորը բնույթ է կրում։ Այդ բոլշևիկ-ռևոլյուցիոները հանձին Գորկու տեսնում էր ժողովրդական ազատագրության համար մղվող պայքարի իսկական մարտնչողի։ Բուրժուական մամուլը Անդրկովկասում, ինչպես և ամենուր, զրպարտում էր Գորկուն և հալածում նրան։ Դեռ Գորկու պաշտպանությանը նվիրված Շահումյանի ելույթից առաջ Անդրկովկասի բոլշևիկները 1908 թ. Սուրեն Սպանդարյանի հոդվածով հակահարված հասցրին Գորկու հանդեպ եղած բուրժուական մամուլի զրպարտիչ հարձակումներին, բնորոշելով դրանք որպես «Մ. Գորկուն կրունկից կծելու փորձ»[1]։

1911 թ. Բաքվում լույս է տեսնում «Современная жизнь» բոլշևիկյան շաբաթաթերթը։ Այդ ամսագրին մասնակցում էր նաև Վ. Ի. Լենինը՝ լույս ընծայելով իր «Մարքսիզմը և «նաշա զարյա» հոդվածը, որ ուղղված է լիկվիդատորների

---

1 Ս. Սպանդարյան, «Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր», Երևան, 1939 թ., էջ 128։

դեմ։ Այդ շաբաթաթերթի 3 համարը լույս տեսավ միայն, շուտով իշխանությունների կարգադրությամբ փակվեց։ Այդ առթիվ Լենինը գրում էր Գորկուն. «Բաքվում «Современная жизнь»-ը նույնպես ձերբակալել են և խեղդել»[1]։

Հենց այդ ամսագրում Ստալին կեղծանվան տակ լույս տեսավ Շահումյանի «Գրական դիտողությունը Մաքսիմ Գորկու մասին» հոդվածը («Современная жизнь», (1911 թ., № 1)։ Այդ հոդվածում Շահումյանը անողոքաբար մերկացնում է Բաքվի բուրժուական մամուլի նողկալի և զրպարտիչ հարձակումները պրոլետարական գրողի դեմ։ Այդ հոդվածը գրելու անմիջական առիթը հանդիսացավ բուրժուական «Баку» թերթի ելույթը Գորկու դեմ։ Շահումյանի պատասխանը տարբերվում էր սովորական գրական-բանավիճական հոդվածներից և պրոլետարական մեծ գրողի ստեղծագործության քաղաքական խոր ընդհանրացումն էր։

«Մաքսիմ Գորկին,—գրել է Շահումյանը,—ռուս բանվորների սիրելին է։ Եվ դա միանգամայն հասկանալի է։ Դուրս գալով ժողովրդական «ստորին» խավից, լինելով ինքնուս գրող, նա իր մեջ զարգացրեց խոշոր գեղարվեստական տաղանդ։ Ապա, հասնելով գրական փառքի բարձունքներին, դառնալով պաշտոնական ընթերցող հասարակության կուռքը՝ նա եկավ իր բնական զարգացման ընթացքով բանվորների մոտ, որոնց բերից իր գեղարվեստական տաղանդը, կանգնեց նրանց հետ մի դրոշակի տակ, դարձավ նրանց երդիչն ու կենսագիրը»։ Այս գնահատականից երևում է, որ Շահումյանը որոշ տարբերություն է դնում Գորկու գրական զարգացման սկզբնական, վաղ շրջանի և հետագայի միջև։ Ըստ քննադատի Մաքսիմ Գորկին երբեք չի դասվել կյանքի արդի տերերի բանակում, երբեք չի եղել «հրճվողների ու պարապ զրուցողների շարքում»։ Բայց մինչև 1905—1906 թվականները իր վաղ շրջանի ստեղծագործությամբ Մաքսիմ Գորկին «Դեռևս չձևակերպված, վարդապետն, դեմոկրատական ըմբոստ տրամադրությամբ» էր համակված։ Այդ հանգա-

---

1 «Լենինի նամակները Մ. Գորկուն», Մոսկվա, 1933 թ., էջ 55։

մանքը շփոթության մեջ էր դցել բուրժուական ինտելիգենցիայի, քննադատության որոշ անշրջահայաց շերտերին: Նրանք այլ բան էին ուզում տեսնել Գորկու ստեղծագործության մեջ և այլ հեռանկարներ ու հույսեր էին կապում նրա հետ: Բայց խորապես սխալվեցին. արդեն առաջին շրջանի ռևոլուցիոն ռոմանտիկական ստեղծագործություններով, որոնց հասարակական իմաստը ի վիճակի չեղան ըմբռնելու բուրժուական քննադատության մի շարք ներկայացուցիչներ, Գորկին ասես երկաթե ձողով քանդում էր հին հասարակության, ցարական, բուրժուական հասարակության հիմքերը և գրական մրրկահավի իր հատկությամբ ազդարարում հասունացող-բարձրացող ռևոլուցիոն փոթորիկը: Եվ այն պայթեց:

1905 թ. ռևոլուցիայի շրջանում, երբ հնչեց Գորկու հզոր ձայնը, որը կոչ արեց պաշտպանել ռևոլուցիան, մարտնչել ցարական ինքնակալության և բուրժուազիայի դեմ, Շահումյանի խոսքերով ասած, «երբ Գորկին ներկվեց վառ-կարմիր գույնով», բուրժուական հասարակության և քննադատների վերաբերմունքը դեպի Գորկին խիստ փոխվեց: Եվ դա հասկանալի է: Նրանց աչքում Գորկին միանգամից զրկվեց իր նախկին «հմայքից»: Երեկվա «երկրպագուների» սերը փոխարինվեց Գորկու նկատմամբ տածված սառնությամբ, դժգոհությամբ և նույնիսկ ատելությամբ: «Ներկայումս,—ավելացնում է Շահումյանը,—դուք չեք գտնի ոչ մի այսպես կոչված «առաջադիմական» թերթ, մայրաքաղաքի կամ գավառական, որ ժամանակ առ ժամանակ, այս կամ այն ձևով, դիտակցաբար, թե անդիտակցաբար, վրիժառու չլիներ Գորկուց, նրա համար, որ նա երես դարձրեց «հասարակությունից» և գնաց բանվորների մոտ»:

Այստեղից հասկանալի է, թե ինչու միջոցների մեջ առհասարակ խարխլյուն չզնող բուրժուական մամուլը կանգ չի առնում նույնիսկ ամենաանթույլատրելի հերյուրանքների առջև, որպեսզի վրեժ լուծի Գորկուց: «Այդպիսի ձևերի նմուշները,—նկատում է հոդվածի հեղինակը,—մենք տեսնում ենք ի միջի այլոց նաև մեզանում՝ Բաքվում»:

Շահումյանը խստորեն և դիպուկ մերկացնում է «Баку» թերթի վարձկան գրչակների այդ «պրիմմները»։ Վերհիշելով այդ թերթի գրախոսներից մեկի հերոսաբարոյական ոճաձգությունը՝ Շահումյանը նկատում է, որ այդ գրախոսի օրինակին է հետևել այդ թերթի մի ուրիշ աշխատակից՝ Գր. Ստարցևը։ «Նրա նորերս գրած ֆելիետոնը Գորկու վերջին երկու պատմվածքների («Տրտունջներ», «Մորդովկա») մասին, բուրժուա-ինտելիգենտական «ճշմարտության» այնպիսի տիպիկ նմուշ է Գորկու վերաբերյալ, որ մենք այն նոտանդն կերպով հանձնարարում ենք ընթերցողի ուշադրությանը»։ Շահումյանն իր հոդվածում ապացուցում էր, որ ֆելիետոնիստը իր փուքեռանդությամբ հասնում է իրոք քրեականության։ Կեղծելով Գորկու պատմվածքների բովանդակությունը՝ բուրժուական քննադատը նրան վերագրում է դանազան մտացածին բաներ և զրպարտում Գորկուն։

«Տրտունջներ» պատմվածքում (վերնագրի տակ փակագծում նշված է՝ «Սպայի հիշողություններ») Գորկին նկարագրում է, թե ինչպես սպան դանդատվում է զինվորներից, զինվորական շինել հագած գյուղացիներից ու բանվորներից և ասում, որ ռուսը չի կարող լինել սոցիալիստ։ Այդ բանի համար նրան ինչ-որ բան պակասում է։ «Ես չեմ հավատում սոցիալիզմին և այլն»։

Այնուհետև սպան իր դանդատների մեջ հարձակվում է ռուս հրիտասարդության առաջնորդների վրա, մեղադրում է նրանց ամենամահացու հանցանքների մեջ, անվանում է խաբեբաներ, դավաճաններ, քիչ է մնում անվանի մարդասպաններ ռուս հրիտասարդության նկատմամբ։

Դանդատվող սպայի այդ «փիլիսոփայությունը» Ստարցևը վերագրում է Գորկուն՝ նրան նույնացնելով սպայի հետ. ահա թե ինչ է գրում նա Գորկու պատմվածքի մասին. «Գորկին ոչ մի բառ չի ասում սպայի դանդատի դեմ և ստացվում է այն տպավորությունը, կարծես թե Գորկին նրա հետ ան-

պայման (?) համաձայն է։ Եվ այլ կերպ ինչպե՞ս կարող է»[1]։

Շահումյանը վճռականորեն հերքում է Ստարցևի զրպարտիչ հարձակումները Գորկու դեմ և վերլուծելով պատմվածքի բովանդակությունը՝ թունոտ սարկազմով նկատում է. «Եվ ահա հանդես է գալիս Ստարցևը, որը Գորկուն հոմանիշ է դարձնում սպային, հավատացնում է ընթերցողին, որ սպայի բերանով խոսում է ինքը Գորկին... Եվ... ո՛վ ճակատագրի ծաղր, Ստարցևը զրահավորվում է պաշտպանելու համար սոցիալիզմը, պաշտպանելու համար ռուս գյուղացուն և բանվորին Գորկու հարձակումներից և զրպարտություններից։ Կարո՞ղ եք երևակայել, ընթերցո՛ղ, այդ պատկերը»։

Բուրժուական թերթի աշխատակիցն այնուհետև կեղծում է Գորկու մի այլ պատմվածքը («Մորդովկա»), կրկին ընդունելով՝ բանվորներին Գորկու «գանգատներից», «զրպարտություններից» պաշտպանողի կեցվածք։ Ստարցևի մեկնաբանությամբ Գորկու պատմվածքի հերոս բանվոր-սոցիալիստ, պարտիական աշխատանքին նվիրված Պավել Մակովը, կնոջ ազդեցությամբ, հրաժարվում է պարտիայից և իր իդեալներից։ Խեղաթյուրելով պատմվածքի բովանդակությունը՝ ֆելիետոնիստը այստեղ հետապնդում է որոշակի նպատակ՝ վերադրել Գորկուն «հիասթափություն և գանգատներ», «հաստատել», որ Գորկին «զրպարտում է բանվորներին»։ «Բայց, բաց արեք, ընթերցո՛ղ,—ասում է Շահումյանը, «Современный мир»-ի առաջին համարը (այս տարվա) և կարդացեք այդ լավ պատմվածքը։ Տեսեք, թե ի՞նչ հեքիաթներ է պատմում ձեզ Ստարցևը...

Գորկին նկարագրում է և նկարագրում է ճշգրիտ ու շնորհալից՝ առաջավոր բանվորների կյանքում սովորական երկպառակություններն ընտանիքի հետ և այն հոգեկան դրաման, որ նրանք վերապրում են։ Այստեղ կան այդ դրամայի բոլոր փոխանցումները, բայց ոչ մի խոսք, ոչ մի ակնարկ չկա այն մասին, թե Պավելն իբր պարտված դուրս եկավ,

---

[1] «Баку», փետր. 11, 1911 թ., № 33։

թե նա փոխել էր դաղափարները կնոջ գեղեցիկ մարմնի հետ (ինչպես պնդում է ֆելիետոնիստը, Ա. Ո.), Պավել Մակովը մինչև պատմվածքի վերջը մնում է նույնը, ինչպես սկզբում էր։

Պատմվածքի սկզբից մինչև վերջը ո՛չ Պավելի, ո՛չ էլ հեղինակի գլխում հարց անգամ չի ծագում այն մասին, իբր թե պետք է առհասարակ ընտրել երկուսից մեկը—ընտանիքը կամ բանվորական գործը։ Այդ հարցն ամենևին չի շոշափվում պատմվածքում»։

Մինչդեռ դրպարտության վարպետ Ստարցևը կեղծում և խեղաթյուրում է Գորկու պատմվածքի բովանդակությունը։ Մերկացնելով բուրժուական քննադատության նման պրիմիտիվը՝ բոլշևիկ Շահումյանն այդ փաստերից ընդհանուր եզրակացություն է հանում. «Կարևորն է այն, որ բոլոր նման «քննադատները» խոսելով բանվորական դրող Գորկու մասին, ինչպես նաև առհասարակ այն բոլորի մասին, ինչ վերաբերում է բանվորներին, ոչ մի կերպ չեն կարողանում խուսափել պիտակցորեն թե անդիտակցորեն ստից, խեղաթյուրումներից, դրպարտություններից»։

Այնուհետև հիշելով Գորկու հոդվածը «Ինքնուս դրողների մասին», Շահումյանը իրավացիորեն ասում է, որ դա ուժդին ապտակ է «Ստարցևին և նրա նման ասպետներին»։ Քննելով այդ հոդվածը՝ քննադատ-բոլշևիկը մատնանշում է Գորկու սերտ կապը ժողովրդական մասսաների, հասարակության դանազան խավերից ելած իր բազմաթիվ թղթակիցների հետ. «Հազարավոր թելեր ձգվում են գիտակից կյանքի համար արթնացող «ժողովրդի ծոցից ելած» գրականության համար հետաքրքրվող մարդկանց սրտերից դեպի իրենց պանծալի եղբայրակիցը՝ ինքնուս դրող Մաքսիմ Գորկին»։

Շահումյանը ցույց է տալիս մեծ դրողի իսկական սերը և մշտական ուշադրությունը դեպի իր թղթակիցները։

«Հոդվածի յուրաքանչյուր տողի մեջ,—ասում է Գորկու մասին,—նկատելի է հեղինակի զարմանալի նուրբ, ազնիվ

հոգին՝ լցված անսահման սիրով դեպի «սարսափելի կյանքի մարդիկ», ինչպես ինքը արտահայտվում է նրանց մասին։

Ռուս գրականության մեջ, համենայն դեպս արդի գրականության, մենք չգիտենք մի այլ գրողի այդ աստիճան բարոյական, նրբազգաց ու մաքուր, ինչպես Գորկին է։ Հարկավ, մենք այդ ասում ենք ոչ միայն վերոհիշյալ հոդվածի հիման վրա, այլ նկատի ունենալով նրա բոլոր գրվածքները, նրա ամբողջ գրական գործունեությունը»[1]։

Քաղվածքներ բերելով սկսնակ գրողների երկերից՝ Շահումյանը մատնացույց է անում, թե որքա՜ն «կորովալից և ինքնավստահ է հնչում» մասսաների անմիջական ձայնը, «հասարակ, անկեղծ մարդկանց» ձայնը։ Եվ այդ փաստերը նա համառորեն կապում է կենդանի կյանքի, ուղղակիորեն պայքարի կենսական հարցերի հետ։ Օգտագործելով այդ նյութերը՝ նա ապացուցում է, որ «մեզանում՝ Ռուսաստանում, այսպես կոչված, «մասսաների ռեակցիա», ռեակցիա ներքնից դոյություն չունի։ Մեր ռեակցիան զերազանցապես կառավարական է»։ «Կրկնում ենք,—ասում է նա,—Գորկու չորս հարյուր թղթակիցները Ռուսաստանի բոլոր անկյուններից միայն հաստատում են այդ անտարակուսելի փաստը»։

Գրական այդ նյութերը Շահումյանն օգտագործում է ռեակցիայի դեմ մղվող պայքարում և նրանց միջոցով մերկացնում է բանվոր դասակարգի և նրա՝ գրողի նկատմամբ եղած բուրժուական քննադատության կեղծիքը և զրպարտությունը։

Յուրաքանչյուր անգամ Գորկուն իր ամբողջ վեհությամբ, որպես խոշորագույն արվեստագետի և աշխատավորական մասսաներին կապիտալիստական ճնշումից ազատագրելու համար մղվող պայքարի կրքոտ մարտիկի՝ Շահումյանը դրա հետ մեկտեղ ծիծաղում է բուրժուական թերթերի և քննադատների ողորմելի փորձերի վրա, որոնք Գորկուն պատկերում էին որպես հիասթափվածի, հուսալքվածի, դանդաղողի, բանվորներին դրպարտողի։ 1911 թվականի իրադրության մեջ,

1 Շահումյան, «Երկերի ժողովածու», հ. II, էջ 69։

ները բոլորը չէին, որ կարողանում էին ըմբռնել Գորկու դերը, որպես ռևոլուցիայի մրրկահավի, որպես բանվոր դասակարգի մեծ արվեստագետի, Անգլովվիասի բոլշևիկյան մամուլում հրապարակվում է խիստ բովանդակալից, ռևոլուցիոն կրքով լի մի հոդված, որի մեջ հեղինակը պաշտպանում է Գորկու վերաբերյալ լենինյան հայացքները։

Դրվատելով մեծ գրողի ստեղծագործությունները, պաշտպանելով նրան բուրժուական քննադատության զրպարտիչ հարձակումներից՝ Շահումյանը, սակայն, հանդես է բերել պարտիական սկզբունքայնություն, չի թաքցրել և Գորկու թերությունները, ցույց է տվել դրանք։ «Դա,—ասում է Շահումյանը,—մարքսիստական քննադատության կողմից արդեն նկատված Գորկու ոչ բավարար սկզբունքային տոկունություն է, նրա մեջ հետևողական մարքսիստական պարզ մտածելակերպի բացակայություն է»։

Այդ թերությունները, նրա «ոչ բավարար սկզբունքային տոկունությունը» և տատանումները, որ արտահայտվել էին ռեակցիայի շրջանում, հետագայում, 1917 թ. ռևոլուցիայի շրջանում, նույնպես իրենց զգալ տվին։ Միայն Լենինի և Ստալինի քննադատության և նրանց գաղափարական ազդեցությամբ Գորկին հաղթահարեց իր այդ տատանումները և վերջնականապես դարձավ սովետական ռևոլուցիայի մեծ պաշտպանը։

Դեռևս 1911 թվին մատնանշելով հանդերձ մեծ գրողի այդ տիպի տատանումների փաստը՝ Շահումյանն անհրաժեշտ էր համարում ընդգծել, որ Գորկու գործունեության մեջ գլխավորը, էականը, կարևորը այդ թերությունները չեն, այլ այն, որ նա իր հոգու բոլոր թելերով կապված է աշխատավոր մասսաների, հատկապես բանվոր դասակարգի հետ, նրա պայքարի զինակիցն է՝ իր վիթխարի ստեղծագործություններով ու ռևոլուցիոն գործունեությամբ։

Այդ բոլոր կարևոր հատկանիշների համար էլ նա վայելում էր Լենինի և Ստալինի սերն ու համակրանքը, արժանանալով նրանց դրական գնահատականին։ Գորկու նույն այս հատկությունները նկատի ունենալով՝ հիացմունքով է խոսել

Շահումյանը նրա մասին, բացագանչելով. «Գորկին պրոլետարական գրականության գարդն ու պարծանքն է»: Եվ Գորկու քննարկվող հոդվածը, և նրա մյուս նոր երկերը, վերևում նշված «Տրուռնջները» և «Մարդովկան», նույնպես և նրա սքանչելի մինիատյուրները նեապոլի գործադուլավորների և նրանց երեխաների հանդիպման մասին ճեռնովայում, որոնք լույս ընծայվեցին «Հեքիաթներ» վերտառությամբ, է՛լ ավելի մոտեցրին Գորկուն բանվորներին:

Եվ բանվորները հպարտությամբ կարող են հայտարարել.

«Այո, Գորկին մերն է. նա մեր արվեստագետն է, մեր բարեկամը ու դինակիցը աշխատանքի ազատագրության վեհ պայքարի մեջ»[1]:

Այսպիսին է Գորկու դերի և նշանակության ծավալուն դնահատականը՝ տրված անդրկովկասյան բոլշևիկյան մամուլի կողմից դեռևս 1911 թ.: Այդպիսի պաթոսով կարող էր դրել Գորկու մասին միայն բոլշևիկ քննադատը՝ Լենինի և Ստալինի հավատարիմ դինակիցը: Ինչպե՞ս վերաբերվեց բուրժուական մամուլը բոլշևիկյան քննադատության այդ եղանակին: «Баку» թերթի խմբագիր Վերմիշևը հանդես գալով «Современная жизнь» շաբաթաթերթի դեմ՝ մեղադրում էր նրա խմբագրությանը, որ նա զբաղված է հայհոյանքներով, և շաբաթաթերթը իր տպարանում տպագրելու համար պայման էր առաջադրում, որ վերջինս չհայհոյի իրեն և իր թերթին: Շահումյանը «Վիրավորված անմեղության» հոդվածով պատասխանում է այդ մեղադրանքին և դիմելով Վերմիշևին՝ գրում է. «...Մենք հարցնում ենք ձեզ—այն, ինչ դուք այնտեղ տեսել եք և ինչ լույս է տեսել «Современная жизнь» № 1-ում (Ստալինի հոդվածը Գորկու մասին, որտեղ մերկացվում են «Баку» թերթի քննադատական հնարքները) դա քննադատությո՞ւն է, թե հայհոյանք: Եթե «Баку» թերթն ունի այնպիսի միամիտ ընթերցողներ, որոնք հավատում են պ. Վերմիշևի անկեղծությանը, թող իրենք կարդան հիշյալ

---

1 Շահումյան, «Երկերի ժողովածու», հ. II, էջ 76:

հոդվածը և դառնն իրենց խմբագրի մասին» («Современная жизнь», № 3, 1911 թ.)։

Սակայն սրանով հարցը չի սպառվում։ Շահումյանի այդ հոդվածը ունենում է և այլ արձագանքներ։ «Баку» բուրժուական թերթի վարձկան և մինչև վերջը մերկացված գրչակները դերադասեցին ուղղակի և ըստ էության բանավեճի մեջ չմտնել այդ հոդվածի հեղինակի հետ։ Բայց դա չխանգարեց Ստարցևին շարունակելու իր զրպարտիչ աշխատանքը։ Այս անգամ նա դիմեց Պլեխանովի օգնությանը։ Գաղտնի բանավեճի մեջ մտնելով Շահումյանի հետ՝ Ստարցևը ոչ առանց հիմքի օգտագործեց Պլեխանովի հոդվածը Գորկու մասին, փորձեց դրանով «հիմնավորել» իր ելույթը Գորկու բոլշևիկյան դնահատականի դեմ։

Այդ շատ հետաքրքրական փաստ է։ Գորկու դեմ ունեցած իր հերթական ելույթում այս քրոնաջան զրպարտիչը թաքնվելով Պլեխանովի թիկունքում՝ գրում էր. «Օրերս լույս տեսած Գ. վ. Պլեխանովի «Պաշտպանություն» դեպի հարձակում» գրքում ի միջի այլոց կա մի գլուխ Գորկու մասին։ Հետաքրքրական գլուխ է։ Առանձնապես խորհուրդ եմ տալիս կարդալ նրանց, ովքեր քիչ մնաց մահացու հանցանք համարեն որևէ քննադատական վերաբերմունք դեպի Գորկին (ընթերցողը կռահում է թե ո՛ւմ է ակնարկում նա. Ա. Ո.)։

«—Նա, ասում են, պրոլետարական գրող է... պրոլետարիատի երգիչը...

Սակայն, ահա ինչ է գրել ռուս սոցիալ-դեմոկրատիայի ճանաչված առաջնորդ Գ. վ. Պլեխանովը Գորկու հենց այդ պրոլետարականության մասին։ Որպես արվեստագետ, նա, իհարկե, բարձր է դասում Գորկուն, նույնիսկ շատ ավելի բարձր, նրան դնելով Տոլստոյի, Դոստոևսկու և Գոգոլի շարքում»։

Վերարտադրելով Պլեխանովի հայտնի բացասական կարծիքները Գորկու մասին, որպես մտածողի և հրապարակախոսի, Ստարցևը չարամտորեն եզրակացնում է. «Այսպիսին

է ուրեմն Գորկին որպես սոցիալիզմի քարոզիչ և հրապարակախոս՝ Պլեխանովի նկարագրությամբ»։

«Այդ դրության,—եզրակացնում է Ստարցևը,—իմարկե կմիանան բոլորը, ում համար թանկ է մեր գեղարվեստական դրականության ճակատագիրը, ով սովոր չէ այն բաժանելու բուրժուականի և պրոլետարականի և ով ամենից բարձր է դասում ազատ (՞) գեղարվեստական ստեղծագործության գեղեցկությունը։ Որովհետև եթե աշխարհում մի բան կա, որ վեր է կանգնած դասակարգային պայմանականությունից, ապա դա միայն հավերժական գեղեցկությունն է» («Баку», ապրիլի 7, 1911 թ.)։

Կապիտալիստական հասարակության «ազատ գեղարվեստական խոսքի» կեղծ, դատարկ, լիբերալ ֆրազը և ռեակցիոն շաղակրատությունը «արվեստի ապատուսակարգային բնույթի» մասին, ինչպես և այդ լիբերալչիկի կարծիքները Գորկու պլեխանովյան գնահատության վերաբերյալ՝ խոսում են իրենք իրենց մասին. Գորկու մենշևիկյան վատաբանությունը միանդամայն համապատասխանում էր պրոլետարական մեծ գրողի՝ բուրժուական ղրպարտողների դիրքերին։ Վերջիններս իրենց սուր և սիստեմատիկ հալածանքում ջանասիրությամբ օգտագործում էին մենշևիկների ելույթները Գորկու դեմ։ Տվյալ դեպքում ողորմելի Ստարցևի կողմից Պլեխանովին վկայակոչելը, բոլշևիկյան քննադատությունից պաշտպանվելու նպատակով, միանգամայն բնորոշ է։ Գորկու ստեղծագործության մենշևիկյան գնահատության համահունչությունը այն ֆշնամական գծին, որն ամբողջ ժամանակ կիրառել է բուրժուական քննադատությունը Գորկու նկատմամբ, այնքան ակնհայտ է, թեկուզ և վերևում մատնանշված օրինակի մեջ, որ հետագա ապացուցման կարիք չի զգացվում։ Միայն Լենինը, բոլշևիկները վճռականորեն հանդես եկան հանուն Գորկու պաշտպանության՝ ընդդեմ բուրժուական և մենշևիկյան քննադատության։ Միայն Լենինը, նրա աշակերտները և զինակիցները ճշմարտությունն ասացին Գորկու՝ իբրև պրոլետարական մեծ գրողի մասին։ Մինչ-

դեռ բուրժուական վարձկան ժուռնալիստների և բուրժուական թերթերի ելույթները Գորկու լենինյան-բոլշևիկյան գնահատության դեմ միանդամայն համահնչուն են մենշևիկների ելույթներին։

Շահումյանն արդեն հնարավորություն չուներ պատասխանելու Գորկու դեմ ուղղված նոր զրպարտիչ հարձակումներին։ Շուտով «Современная жизнь»-ը փակվեց, իսկ Շահումյանը ձերբակալվեց։

Սակայն Շահումյանի վերաբերմունքը դեպի Գորկին չի սահմանափակվում վերևում նշված հոդվածով։ Նրա հետագա ասույթները ոուս մեծ գրողի մասին միշտ եղել են խոր հարգանքով և անկեղծ սիրով լի։ Շահումյանը և մյուս բոլշևիկները Գորկու ստեղծագործության ակտիվ մասնակցություն ունեցողները հանդիսացան հայ իրականության մեջ։ Նրանք թարգմանեցին Գորկու մի շարք երկերը և գրեցին բազմաշուք հոդվածներ նրա մասին։

Միայն 1916 թվականին հայկական «Պայքար» թերթի էջերում, որի խմբագրության կազմում դեկավար դեր էին խաղում այն ժամանակ Շահումյանը, Ա. Մոամյանը և ուրիշներ, Գորկու ստեղծագործություններից թարգմանվեցին և տպագրվեցին ավելի քան 16 երկ, գլխավորապես «Հեքիաթներ Իտալիայի մասին» շարքից։ Պրոլետարական պոետ Հակոբ Հակոբյանը դեռևս 1914 թ. առանձին գրքով իր թարգմանությամբ հրատարակեց Գորկու երկու հեքիաթները։ Գորկու ստեղծագործության, մասնավորապես նրա «Հեքիաթների» նկատմամբ եղած այդ մեծ հետաքրքրությունը միանգամայն հասկանալի է։ Գորկուն գրած Լենինի նամակում մենք կարդում ենք այդ առթիվ.

«Սքանչելի հեքիաթներով դուք շատ և շատ օգնեցիք «Звезда»-յին և այդ ինձ արտասովոր ուրախություն պատճառեց»[1]։ Գորկուն ուղղված մի այլ նամակում Լենինը գրում է. «Ավ կլիներ ունենալ ռևոլուցիոն թռուցիկներ «Звезда»յի հեքիաթների ձևով»[2]։

1 Լենինի նամակները Գորկուն, էջ 10, 1933 թ.։

2 Նույն տեղ, էջ 59։

Բոլշևիկները կազմակերպեցին Գորկու հեքիաթների թարգմանությունները և առհասարակ մասսայականացրին նրա ողջ ստեղծագործությունը. այդ հեքիաթները, Շահումյանի ճշգրիտ արտահայտությամբ, «Գորկուն ավելի մոտեցրին բանվորներին»:

Սակայն Գորկու ստեղծագործության մասսայականացումը հայ ժողովրդի մեջ՝ չէր սահմանափակվում միայն թարգմանություններով: Նույն այդ թերթի էջերում երևան եկան գրախոսություններ և հոդվածներ Գորկու ստեղծագործության մասին: «Հեքիաթները» առանձին գրքով հրատարակվելու կապակցությամբ բոլշևիկ Ա. Մռավյանը «Պայքար» թերթում գետեղեց մի մեծ գրախոսություն: Բարձր գնահատելով Գորկու ստեղծագործությունը և նրա դերը պրոլետարական դասակարգային ինքնագիտակցության զարգացման գործում՝ գրախոսության հեղինակը «Հեքիաթները» բնութագրում է հետևյալ խոսքերով. «Կախարդական ոչինչ չկա «Հեքիաթների» մեջ, նրանք կյանքի ստեղծած հեքիաթներն են. բովանդակությունը՝ Իտալիայի աշխատող մարդկանց առօրյան, նրանց մաքերն ու հույզերը, ուրախությունն ու տրտմությունները: «Հեքիաթները» ողողված են խոր, մարդկային անկեղծ սիրով և մարդարեական հավատով դեպի մարդկության պայծառ ապագան: Ամբողջ գրքից բուրում է մի զարմանալի ու վարակիչ լավատեսություն, կենսաթրթիռ աշխարհի զգացում:

Ո՞վքեր են Գորկու հերոսները—ժողովուրդը, ժողովրդական մասսան, բանվորներ, բանվորուհիներ, ձկնորսներ, գեղջուկներ, գեղջկուհիներ, երեխաներ»:

Այնուհետև կոնկրետ վերլուծության ենթարկելով առանձին հեքիաթները՝ գրախոսն ընդգծում է «Հեքիաթների» հեղինակի գեղարվեստական վարպետությունը մասսայական տեսարանների, գործադուլների և առանձին բանվորների կերպարների ցուցադրման գործում, իսկ եզրափակման մեջ ընդգծում է, որ Գորկու հերոսները զգում են իրենց մեծ գործի գժվարությունը, բայց օժտված են կամքի ուժով և առանց տա-

տանման շարունակում են իրենց ծանր պայքարը երջանիկ կյանքի համար («Պայքար», մարտի 6, 1916 թ.)։

Այդ նույն թերթում զետեղված է Ս. Շահումյանի գրախոսությունը Գորկու ղեկավարությամբ լույս տեսնող «Летопись» ամսագրի 1916 թվի հունվարյան համարի մասին։ Գրախոսության մեջ ասվում է. «Մաքսիմ Գորկու մոտիկ աշխատակցությամբ հրատարակվող «Летопись»-ը իրավամբ համարվում է ներկայումս ամենալուրջ և ամենահետևողական դեմոկրատական ամսագիրը և, կարելի է ասել, նա միակն է, որ հավատարիմ է մնացել միջազգային դեմոկրատիայի բարձր սկզբունքներին...»։

Շահումյանը խորապես զգում էր Գորկու ստեղծագործությունների էսթետիկական արժանիքները և բարձր գնահատում նրանց նշանակությունը։ Այս տեսակետից ուշագրավ է նրա խոսքը ամսագրի գեղարվեստական բաժնի մասին, որտեղ մենք կարդում ենք.

«Ներկա համարի գեղարվեստական բաժնի գլուխը, ինչպես միշտ, Գորկու պատմվածքն է՝ «В людях» («Ծառայության մեջ») վերնագրով, որը դեռ շարունակվում է։ Այդ գրվածքն ինքնակենսագրական բնույթ է կրում և վերաբերում է Գորկու պատանեկական տարիներին։ Նրա «Детство»-ի («Մանկություն») հետ միասին, որը լույս է տեսել առանձին գրքով, այդ աշխատությունն, անշուշտ, գրավելու է աչքի ընկնող տեղ ռուսական գեղարվեստական գրականության ամենափայլուն գործերի շարքում։ Գորկու ամեն մի տողը կարդացվում է մեծ էսթետիկական հաճույքով ու հետաքրքրությամբ») «Պայքար», 11 սեպտեմբերի, 1916 թ.)։

Քննադատի կանխատեսումը լիովին արդարացավ։ Գորկու ինքնակենսագրական հիշյալ վիպակներն իրոք աչքի ընկնող տեղ են գրավում ռուսական գեղարվեստական գրականության ամենափայլուն գործերի շարքում։

Շահումյանը խորապես զգաց Գորկու ստեղծագործության գեղարվեստական հմայքը, քաջ ըմբռնեց Գորկու դերը բանվոր դասակարգի և ամբողջ աշխատավոր ժողովրդի ազա-

տագրական պայքարում։ Ամեն անգամ, երբ խոսքը վերաբերում է Գորկուն, Շահումյանը նրա մասին խոսում է անկեղծ հիացմունքով ու սիրով։

Ռուս մեծ գրողի անունը միշտ նրա կողմից արտասանվել է առանձին համակրանքով։ Հետևելով Լենինին և Ստալինին, բոլշևիկ Շահումյանը գիտակցաց, ըմբռնեց Գորկու վիթխարի դերը և ցանկացավ, որ ժողովրդական լայն մասսաներին նույնպես հասկանալի ու ըմբռնելի լինի Գորկու մեծությունը, որպես խոսքի հանճարեղ վարպետի և մարդկության երջանկության համար պայքարող անխոնջ մարտիկի, կեղեքված ժողովուրդների բարեկամի և պինակցի։

1916 թ., երբ Գորկու խմբագրությամբ լույս տեսավ «Հայ գրականության ժողովածուն», Շահումյանը դրան նվիրեց մի մեծ հոդված։

«Նորերս լույս տեսած այս ժողովածուն,—գրում է նա այդտեղ,—առաջինն է մի շարք ժողովածուների թվում, որ նվիրված են լինելու Ռուսաստանում ապրող մանր ազգերի գրական ստեղծագործությունների տեսությանը։ Վայելուչ է, որ Մաքսիմ Գորկին հղացել է այդ գեղեցիկ միտքը՝ ծանոթացնել ռուս հասարակությանը նրա հետ մի քաղաքական կյանքով ապրող մանր ազգերի գրականության հետ։ Այն հայկական ժողովածուին հետևելու են լատիշական, ֆիննական, թուրքական, հրեական, մալոռուսական և այլ ժողովածուները»[1]։

Այս գիտողությունից հետո Շահումյանը քննադատում է ժողովածուի աշխատակիցներին, որոնք թաքցրել էին Գորկուց հայ պրոլետարական պոետ Հակոբ Հակոբյանի ստեղծագործությունները և տեղ չէին տվել նրան ժողովածուի մեջ։ Գնահատելով Հակոբյանի ստեղծագործությունը, Շահումյանն ասում է, որ նա «անշուշտ պետք է տեղ գտներ այդ ժողովածուի մեջ։ Մաքսիմ Գորկու աշխատակիցները ոչ միայն պետք է հասկանան, որ այդ հարկավոր է անել, այլ պետք է ուրախությամբ անեին այդ»։

---

1 Շահումյան, «Երկերի ժողովածու», հ. II, էջ 77։

Այդ շարեցին և չցանկացան տանել ժողովածուի խմբագրության մեջ խցկված փոքրոգի, մանր-բուրժուական նացիոնալիստական-ինտելիգենտական թափթփուկները, որոնց համար խորթ էր պրոլետարական պոետի ստեղծագործությունը:

«Որքան անախորժ ու ցավալի է տեսնել այդ փոքրոգությունը՝ կապված այնքան մեծ ու ազնիվ հոգու տեր Մաքսիմ Գորկու անվան հետ»:

Գնահատելով ժողովածուն որպես ընդհանուր առմամբ հաջողությամբ կենսագործված մի նախաձեռնություն՝ հեղինակը հոդվածի վերջում ասում է.

«Բայց չենք կարող միևնույն ժամանակ չավելացնել, որ միջազգայնության մաքուր զգացմունքների և ձգտումների դրոշակակիր Մաքսիմ Գորկին արժանի էր այդ կողմից ավելի լավ աշխատակիցների:

Սակայն այստեղ ոչ ոքի մեղադրելու իրավունք չունենք, եթե լիներին ասպարեզում համապատասխան ուժեր, երևի Մաքսիմ Գորկին հարկադրված չէր լինի օգնականներ փնտրելու՝ ազգայնական տեսակետից դեռ չազատագրված կիսամարքսիստների, սուտ մարքսիստների և ոչ մարքսիստների շրջանում»[1]:

Այսպիսին են Շահումյանի հիմնական ասույթները Մ. Գորկու մասին: Ինչքա՜ն ջերմություն և սեր կա այդ կարծիքների մեջ. նրանք տոգորված են հեղինակի անկեղծ և ջերմ զգացմունքով դեպի մեծ դրողը:

Ստեփան Շահումյանը, իրոք, բոլոր ուսա դրողներից ամենից շատ սիրել է Մաքսիմ Գորկուն: Եվ դա, ինչպես համոզվեցինք, պատահական և անցողիկ չէր: Դա խորաթափանց բոլշևիկ քննադատի մշտական, կրքոտ սեր էր դեպի մեծ արվեստագետը և բանվոր դասակարգի ու ամբողջ աշխատավոր մարդկության մեծ գործի համար մղվող պայքարի դինամիկը:

Դա մի սեր էր, որ Գորկու նկատմամբ կարող էր տածել

---

1 Շահումյան, «Երկերի ժողովածու», հ. II, էջ 85:

միայն աշխատավորության մեծ առաջնորդների՝ Լենինի և Ստալինի հավատարիմ աշակերտն ու զինակիցը։

Իր հերթին Մաքսիմ Գորկին հարգանքով է վերաբերվել Շահումյանի նման մեծ ռևոլյուցիոների հիշատակին։ Ընկեր Ա. Շչերբակովին (այն ժամանակ Գրողների Միության պատասխանատու քարտուղար) հանցեագրած մի նամակում (1935 թ. փետրվարի 18) Գորկին խորհուրդ է տալիս հրատարակել ազգային գրականություններին նվիրված ալմանախներ. այնտեղ, բացի գրական նյութերից, «տպագրել վրացի նարոդնիկների, պարսկական ռևոլյուցիայի մասնագետների կենսագրությունները, ինչպես նաև կենսագրություններն այնպիսի հայերի, որպիսիք են՝ Շահումյանը, Կամոն, Նարիմանովը և ուրիշները։ Եթե յուրաքանչյուր ալմանախում լինեն մեկ-երկու այդպիսի հոդվածներ, դա չափազանց էֆեկտավոր կլինի» Մոսկվայի Գորկու Թանգարանի նյութերից)։

Մտահոգված լինելով գրական կադրերի ու երիտասարդության ինտերնացիոնալիստական դաստիարակության հարցով, մեծ գրողը այդ գործի համար կարևոր է համարում Շահումյանի նման ռևոլյուցիոներ բոլշևիկի կենսագրության մասսայականացումը։

Այս փաստն անհրաժեշտ է հիշել, երբ խոսքը վերաբերում է Շահումյանի և Գորկու փոխհարաբերությանը։

ԳԼՈՒԽ VI

ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԸ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԸ

Ստ. Շահումյանի վերաբերմունքը հայ գրականության և ընդհանրապես հայ հասարակական ու մտավոր զարգացման պատմության նկատմամբ սկզբունքային խոշոր նշանակություն ունի։ Այս հարցը տակավին հետազոտման առարկա չի դարձել, մինչդեռ նրա կարևորությունը խիստ ակներև է։ Պետք է նկատի ունենալ, որ առաջին անգամ Շահումյանն է մարքս-լենինյան մեթոդը կիրառում հայ ժողովրդի պատմության ու գրականության, առանձնապես XIX դարի և XX դարի սկզբի գրականության զարգացումը լուսաբանելիս։

Հայ գրականության, նրա պատմության և առանձին գրական երևույթներին նվիրված նրա հոդվածները աչքի են զարնում մի հիմնական հատկությամբ. դա այն հետևողական պայքարն է հայկական նացիոնալիզմի ամեն տեսակի արտահայտությունների դեմ, որ մղել է Շահումյանը հայ իրականության մեջ։ Պայքարի այդ ուղղությունը կարմիր թելի նման անցնում է համարյա նրա բոլոր հոդվածների միջով և իր հերթին պայմանավորում է հայ գրականությանը նվիրված նրա հոդվածների հիմնական բնույթն ու արժեքը։ Եվ դա պատահականություն չէ, այլ Կովկասի պայմաններում շատ բնորոշ մի հանգամանք, որի վրա ժամանակին ուշադրություն է դարձրել ընկեր Ստալինը։ Բնութագրելով սո-

ցիալ-դեմոկրատական կազմակերպությունների զարգացման առանձնահատկությունները Կովկասում, ընկեր Ստալինը այդ առթիվ գրել է հետևյալը։ «Իրենց ելևէջ տալու հենց սկզբից (90-ական թվականների սկիզբը) կազմակերպությունները Կովկասում խստորեն ինտերնացիոնալ բնույթ էին կրում։ Միասնական կազմակերպությունը վրացի, ռուս, հայ ու մուսուլման բանվորներին, որոնք համերաշխ պայքար են մղում ընդհանուր թշնամիների դեմ,—այսպես էր պարտիական կյանքի պատկերը... Այդ օրվանից Կովկասյան սոցիալ-դեմոկրատիան աճեց նացիոնալիզմի դեմ մղած պայքարում։ Վրացական սոցիալ-դեմոկրատները պայքարում էին «իրենց» նացիոնալիստների, նացիոնալ-դեմոկրատների և ֆեդերալիստների դեմ. հայ սոցիալ-դեմոկրատները՝ «իրենց» դաշնակցականների դեմ. մուսուլմանականը՝ պանիսլամիստների դեմ» (Ստալին, Երկեր, հատոր II, էջ 287—288)։

Ընկեր Ստալինի այս կարևոր դրույթի լույսի տակ պարզ է դառնում, թե ինչո՛ւ բոլշևիկ-մարտիկ Շահումյանի հոդվածները տոգորված են հականացիոնալիստական ոգով և ուղղված են հայկական նացիոնալիզմի ամեն տեսակ արտահայտությունների դեմ։ Եվ իրոք, Շահումյանի հոդվածները,—լինեն դրանք նվիրված ինտելիգենցիայի դերին, թե հայ ժողովրդի ու նրա դրականության պատմությանը, ազգային հարցի ընդհանուր ըմբռնմանը, թե առանձին գրողներին,—համակված են պրոլետարական, մարտնչող ինտերնացիոնալիզմի պայծառ ու վեհ գաղափարներով։

Հայկական նացիոնալիզմի և նրա կրող նացիոնալիստական պարտիաների, հատկապես դաշնակցության դեմ պայքարը իր խոր կնիքն է դրել նրա գրական ելույթների վրա, պայմանավորելով նրանց ընդհանուր բնույթը, ուղղությունը։ Եվ դա էլ մեծ ռևոլուցիոների գրական ժառանգության կարևոր արժանիքներից և ուշագրավ կողմերից մեկն է։ Ինչպես Շահումյանն է գրել մի առիթով, նացիոնալիզմը ամենավտանգավոր թշնամին է երիտասարդ բանվորական շարժման համար՝ Անդրկովկասի նման մի բազմազգ երկրամա-

ումն՝ ելնելով այդ սկզբունքից և հետևելով Լենինի ու Ստալինի ցուցումներին՝ Շահումյանը, Սպանդարյանը, Միկոյանը և մյուս հայ մարքսիստները ծավալում են հետևողական պայքար ևոլուցիոն շարժման այդ ամենավտանգավոր գաղափարախոսության դեմ հայ իրականության մեջ, կազմակերպելով աշխատավոր մասսաներին պրոլետարական ինտերնացիոնալիզմի պանծալի դրոշի շուրջը։

Պայքարի այդ ուղղությունն ու նպատակասլացությունը ընթերցողը հեշտությամբ կարող է նկատել և հայ գրականությանը ու հասարակական մտքի պատմությանը նվիրված Շահումյանի հոդվածներում։ Այդ հարցերի քննությանն ու բնութագրմանը Շահումյանը մոտեցել է մարքսիզմ-լենինիզմի դիրքերից՝ տալով այդ ուսմունքի գործադրման փայլուն օրինակներ։

Հիշենք մի քանի կարևոր փաստեր։

I

Պայքարելով հայ ժողովրդի պատմության ու գրականության երևույթների մարքսիստական ըմբռնման համար՝ Շահումյանը քննադատական կրակի տակ է առնում նախաևոլուցիոն հայ իրականության, հատկապես մտավորականության համար բնորոշ, տիրացուական իդեոլոգիան, որպես բուռ ու սահմանափակ ռեակցիոն նացիոնալիզմի արտահայտություն։ Այս առումով որքա՜ն արժեքավոր ու այժմեական է Շահումյանի մեր կողմից մի անգամ արդեն հիշված հոդվածը՝ «Վ. Փափազյանը պատմագիտի դերում» խորագրով, գրված 1912 թվին։ Այս փայլուն հոդվածում հեղինակը, թերևս առաջինը հայ իրականության մեջ, քննադատորեն է վերանայում հայ ժողովրդի հնագույն պատմության արտիկիոն, նացիոնալիստական-կղերական, այլ կերպ ասած՝ տիրացուական կոնցեպցիան, քարը քարի վրա չթողնելով նրանից. քննադատը առաջադրում է մարքսիստական երիտասարդության՝ «վերագնահատել բոլոր եղած արժեք-

ները» և լուսաբանել հայ պատմությունը՝ նոր գիտական, մարքսիստական մեթոդի օգնությամբ։

Խոսելով մեր պատմության աղբյուրների մասին և նշելով, որ նրանք չեն տալիս անհրաժեշտ նյութ հայ ժողովրդի պատմության հնագույն շրջանի գիտական, մարքսիստական ուսումնասիրության համար, ինչպես նաև այդպիսի լուրջ ձեռնարկության հետ կապված դժվարությունները՝ Շահումյանն ավելացնում է. «Համենայն դեպս առաջուց կարող ենք ասել, որ նրանցից (պատմական աղբյուրներից) շատ ավելի պիտանի ու հետաքրքիր տեղեկություններ կարելի է քաղել, քան այդ արել են մինչև այժմ «ազգային» գրողները։ Բայց այդ բանին ձեռնամուխ պետք է լինի մեր նոր մարքսիստական երիտասարդությունը։ Կոչված լինելով, ինչպես ամեն տեղ, ուր նա երևան է գալիս «վերագնահատելու բոլոր եղած արժեքները», նա, զինված պատմության մատերիալիստական ըմբռնման նոր գիտական մեթոդով՝ պետք է ուսումնասիրե եղած թե՛ հայկական և թե՛ օտարազգի ուղղակի և կողմնակի պատմական աղբյուրները և լույս սփռե մեր պատմական անցյալի վրա։ Փափագյաններից այդ ուղղությամբ, իհարկե, ոչինչ չի կարելի սպասել»[1]։

Առաջին անձնավորությունը, որ այդ նոր գիտական, մարքսիստական մեթոդով է մոտեցել հայ պատմության ու գրականության հարցերին, եղել է ինքը՝ Շահումյանը։ Եվ նրա պահանջը մեծ կարևորություն ունեցող հարց է։ Նա իր հոդվածում տալիս է հիմնական մեթոդոլոգիական դրույթներ հայոց պատմության մարքսիստական ուսումնասիրության համար, միաժամանակ քննադատելով այդ պատմության նացիոնալիստական կոնցեպցիան։ Այդ կոնցեպցիայի կրողները «խոսում են շարունակ Հայաստանի մասին, որպես մի ամբողջական պետական-հասարակական մարմնի մասին, և ընթերցողը միշտ այն տպավորությունը պետք է ստանա, որ նա նման է եղել ժամանակակից ամբողջական աղգային պետություններին, ինչպես Ռուսաստանը, Գերմանիան և

---

1 «Սովետական գրականություն», № 11, 1941 թ.

այլն»։ Բայց դա, ըստ Շահումյանի, չի համապատասխանում պատմական իրողությանը։ «Հայաստան կոչվածը ներկայացնելիս է եղել իրոք բազմաթիվ ինքնուրույն պետական մարմիններ, տարբեր տնտեսական վիճակով, տարբեր սոցիալական հարաբերություններով, հետևապես տարբեր շահերով... պ. Փափազյանը և մյուսները, որոնց համար կա միայն «Հայաստան» բառը և ավելի ոչինչ, իհարկե չեն կարող ոչինչ ասել նրա առանձին ինքնուրույն մասերի ներքին դասակարգային կազմի ու դասակարգային կռիվների մասին...»։ Այդ տիպի պատմաբանները լավագույն դեպքում սահմանափակվում են միայն արտաքին դեպքերի, կռիվների ու թագավորների քաջագործությունների նկարագրությամբ և նրանց թվում է, թե միակ կարևորը պատմության մեջ այդ դեպքերն են։ «Ժողովուրդների կյանքը, նրանց պատմության ընթացքը պայմանավորողն ու որոշողը,—գրում է Շահումյանը,—ոչ թե այդ արտաքին դեպքերն են, որքան էլ աղմկահույզ ու էֆեկտավոր լինեն դրանք, այլ ժողովրդական մասսաների առօրյա, ընթացիկ, «խաղաղ» տնտեսական կյանքը, նրանց արդյունաբերական պրոցեսը, նրանց ներքին դասակարգային հարաբերությունները»։ Այս դեպքում արված է պատմության մատերիալիստական վերլուծության բանալին, որը ժխտում է հայոց անցյալի նացիոնալիստական իդեալականացման փորձերը։

Քննության առնելով «Բաքվի Հայոց Կուլտուրական միության» հրատարակությամբ լույս տեսած ինը բրոշյուրները՝ «Դրվագներ հայոց պատմությունից» ընդհանուր սերիայով, Շահումյանը հաստատում է իր այդ թեզը և մատնանշում, որ «այդ բոլորը միասին և յուրաքանչյուրն առանձին վերցրած՝ ոգևորված ներբողներ են հայ իմաստուն և ժողովրդասեր թագավորների, իշխանների, հոգևորականների հասցեին», և անխնա մերկացնում է հայկական ինտելիգենցիայի բովանդակ «պատմական-փիլիսոփայությունը», որը հանգում է հենց այդ դեպքերի գովերգմանը։

«Եվ այսպես, ամբողջ հայ պատմությունն ըստ մեր

«պատմաբանների»,—գրում է Շահումյանը,—ներկայացնում է ոչ այլ ինչ, եթե ոչ բարի և չար հրեշտակների կռիվների, մի կողմից, ազգասեր ու առաքինի հայ թագավորների, իշխանների և, մյուս կողմից, ազգուրաց, ազգի դավաճան թագավորների ու իշխանների կռիվների պատմություն... Եթե չլինեին ներքին «հերկպառակությունները», «դավաճանությունները», հայ ազգին ոչ ոք չէր կարող դիպչել և նա կապրեր իր բարի հրեշտակ թագավորների ձեռքի տակ գոհ ու երջանիկ:

«Հերկպառակությո՜ւն, որքա՜ն զոհեր է տարել նա հայ ժողովրդից, որքա՜ն թշվառություններ է պատճառել հայոց աշխարհին...»:

Այս զգացված ազգասիրական ողբը պատկանում է հանդուցյալ Եղիշե Թումչանին, բայց այդ տողերի մեջ կարելի է ամփոփել Կուլտուրական միության հրատարակած բոլոր ինը դրքուլկների բովանդակությունը.... Այդ խոսքերի մեջ ամփոփվում են մեր ամբողջ «ազգային» պաշտոնական ինտելիգենցիայի, գրողների պատմական աշխարհայացքը. նրանց մտածելակերպը, նրանց բովանդակ, այսպես ասած, «պատմա-փիլիսոփայությունը»:

Մերկացնելով այդ փիլիսոփայությունը, բոլշևիկ քննադատը ցույց է տալիս, որ Փափազյանը և ընկերները չեն հետաքրքրվում դավաճանությունների, հերկպառակությունների, անմիաբանությունների պատճառներով, որովհետև նրանք հարցերին մոտենում են հայ կրոնավորի տեսակետով, որպես հավատացյալ քրիստոնյաներ, իսկ այդպիսի պատմաբանների համար նախախնամությունն ինքն է ամեն ինչ անօրինում. «այնտեղ, որտեղ մարդիկ իրենց հոգու մեջ արդեն կրում են բարվո և չարի սերմերը, ուր նրանք ի սկզբանե անտի բաժանված են այծերի ու դառների, պարզ է, որ պատճառները քրքրելու ոչ մի կարիք չկա... «բայց որ XX դարում, ինքն իրեն առաջադեմ ու դեմոկրատ համարող գրողը, ինչպես պ. Փափազյանն է, կամ նույնիսկ իրեն «սոցիալիստ» համարող, ինչպես Ե. Թումչյանը, միանգամայն

բավականանում են այդ միամիտ կղերական տեսակետով, կամ՝ ինչպես արժանի արհամարհանքով անվանում է այդ տեսակետը մեր նոր պրոլետարական ինտելիգենցիան՝ տիրացուական աշխարհայացքով,—դա անպայման շատ ցավալի է»:

Ի հակադրություն այդ տիրացուական մոտեցման, երբ ի մի են խառնված պատմությունը, առասպելն ու գրոլի երևակայության պտուղները, Շահումյանը հիշեցնում է մարքսիստական այն ճշմարտությունը, թե «պատմությունն այն ժամանակ է դադարում լինել հեքիաթ, հասարակ պատմվածք և դառնում է իսկապես պատմություն, երբ նրա մեջ հայտնի անցքերի, դեպքերի, պատմական անձնավորությունների գործունեությունը ենթարկվում են լուրջ քննական լուսաբանության, երբ ցույց է տրվում անցքերի ու մարդկային գործողությունների պատճառական կապը և օրինաշափությունը»:

Մինչդեռ նացիոնալիստական պատմագրությունը իր սահմանափակ պատմահայեցողությամբ, որը սպասվում է թագավորների, իշխանների, հոգևոր հայրերի իդեալականացմամբ, անկարող է պատասխան տալ այն հարցերին, թե ի՛նչն է պատմության ներքին ուժը, դեպքերի ու գործող անձանց արարքների դրդիչ պատճառները: Այդ հարցին Շահումյանը որոշակի պատասխան է տալիս և դրանով ուղղություն նշում հայ ժողովրդի պատմության դիտական ուսումնասիրության համար: Մարքսիստական ըմբռնմամբ դեկավարվող Շահումյանն առաջադրում է և հայոց եկեղեցու դերի գնահատության հարցը. դա կղերական պատմիչների ու կղերամիտ նացիոնալիստական պատմագրության կողմից խճողված այն հարցն է, որը թերևս բոլորից շատ կարիք ուներ դիտական մարքսիստական լուսաբանության: Չէ՞ որ մեր օրերում էլ դեռևս գտնվում են տիրացուորեն մտածող մարդիկ, որոնք հայ ժողովրդի պատմության հիմնական շարժիչ ուժը, նրա կուլտուրայի և դրականության հիմնական կրողն ու զարգացնողը, որպես մի վերդասակարգային հաստա-

տությունն և համազգային մի գործոն, համարում են հայ եկեղեցին ու նրա սպասավորներին՝ սկսած հնադույն շրջանից։ Շահումյանը հարցին այլ կերպ է մոտենում։

«Հայտնի է,—գրում է նա,—որ IV և V դարերում հայկական քաղաքական կյանքի խոշոր գործոններից մեկը եղել է քրիստոնեական եկեղեցին։ Այդ շրջանի մասին խոսողը ամենից առաջ որոշ կարծիք պետք է ունենա այդ եկեղեցու կատարած պատմական դերի մասին։ Դրական ու առաջադիմակա՞ն էր արդյոք այդ դերը, հոգևորականության մղած հունասիրական քաղաքականությունը, թե ավելի խելացի ու օգտակար էր ժողովրդի բարօրության տեսակետից պարսկական կուսակցության (Վասակ Սյունի իշխանի և այլոց) քաղաքականությունը,—այդ ամենից առաջ պարզ պետք է լինի գրողի համար»։

Այս հարցին պատասխանելը Շահումյանի հոդվածի նպատակներից դուրս է եղել և նա չի անդրադառնում դրան։ Նա նշում է միայն փաստը և այն, որ IV և V դարերում հայ քաղաքական կյանքի խոշոր գործոններից մեկը եղել է քրիստոնեական եկեղեցին և պահանջ է դնում պատմագրության առաջ՝ ոչ թե սարկամատրեն հետևել կղերականության հորինած առասպելներին, այլ գիտականորեն բացատրել այդ երկու պարտիանների պատմական դերը, նրանց քաղաքականության առաջադիմականությունը կամ հետադիմականությունը, ելնելով ժողովրդի բարօրության տեսակետից։

Շահումյանի առաջադրած այդ հարցը դեռևս սպասում է իր լուծմանը։ Այդ հարցի պատասխանը պետք է տա մարքսիստ պատմաբանը և գիտական փաստերը վերլուծելով պսակազերծ անի քրիստոնեական եկեղեցու իդեալականացման ու գունազարդման բոլոր փորձերը, որոնց արձագանքները, որքան էլ դա տարօրինակ ու զարմանալի թվա, հանդիպում ենք նույնիսկ մեր սովետական հրատարակություններում մեջ։

Շահումյանը չի ժխտում քրիստոնեական կրոնի կուլտուրական առաջադիմական նշանակությունը հայոց պատ-

մության հնագույն շրջանում։ Փափազյանի բրոշյուրների վերլուծությունից հոդվածագիրը եզրակացնում է, որ «քրիստոնեությունը դժվարությամբ է տարածվել Հայաստանում», և ավելացնում. «Քրիստոնեությունը, այդ «ստրուկների կրոնը» բոլորովին ուրիշ բնույթ, ուրիշ կերպարանք է ընդունում հայոց երկրում։—Նվ նա տարածվում է նույնիսկ Հայաստանում ոչ թե միայն քարոզով, քարոզիչների նահատակվելով, այլ «հրով ու սրով»։ Փափազյանը պատմում է, որ Մեսրոպ Մաշտոցն անգամ, ինչպես և մյուսները, քարոզների ժամանակ, երբ ժողովուրդը չէր հետևում նրանց, «ի գործ էին դնում թշվառացնող գավազանը, բանտ, տանջանք և գիլլոտին»՝ «վայրենի, խուժադուժ, բթամիտ և կոշտ հեթանոսների վրա» ազդելու համար։ Որքան կենդանի, ռազմական ուժ է մացնում ուրեմն իր հետ Հայաստան քրիստոնեությունը»,—եզրակացնում է մեր հեղինակը։ Սա անշուշտ պետք է դիտել որպես առաջադիմական երևույթ։ Դա պայմաններ է ստեղծում շփվելու ավելի առաջավոր կուլտուրա ունեցող ժողովուրդների հետ և միաժամանակ ստեղծելու և զարգացնելու ազգային կուլտուրա։ Բայց տիրացուական պատմագրության ներկայացուցիչները մի կողմ թողած այդ երևույթի բնութագիրը, ամեն կերպ իդեալականացնում ու սրբադործում են հայկական եկեղեցու հոգևոր հայրերին՝ հայ հին կուլտուրայի ներկայացուցիչներին, ինչպես այդ արված է «Մեծն Ներսեսի» հետ, համարելով նրան «հայոց ազգի պահպան հրեշտակ», կամ Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի նկատմամբ և այլն։ Շահումյանը դեմ էր դրան, այդ իդեալականացմանը։ Նկատի ունենալով այդ բոլորը, նա նշում է, որ «այդ գրքույկները իրենց թագավորների, «մեծամեծների» ազգօգուտ գործունեության դրվատումով, հայոց աշխարհի հրաշալի անցյալի իդեալականացումով ոչինչ չտալով հանդերձ ընթերցողների մտքին, կշռյին և կզարգացնեն նրանց կույր ազգասիրական զգացմունքները։ Այսինքն կանեն ճիշտ այն, ինչ որ անում են ռուս և այլ ազգի նացիո-

նալիսանների «պատրիոտական» (այսինքն հայրենասիրական, ազգասիրական) հրատարակությունները»։

Շահումյանն այդ հարցին, այսինքն՝ թե ինչպես նման հրատարակությունները վնասակար դեր են խաղում ռևոլյուցիոն շարժման մեջ, անդրադառնում է և իր մի այլ հոդվածում («Բոյկոտիստները և լիազորների խորհուրդը»)։ Քննադատելով բոյկոտիստների դիրքը՝ Շահումյանը դիմում է նացիոնալիստ ղեկավարների կողմից խաբված հայ բանվորներին, ասելով, որ՝ ձեզ դրդեցին դեպի այդ սխալ քայլը «Գրիգոր Լուսավորիչի զանազան կենսագիրները»։ «Այդ ղեկավարները մինչև օրս զանազան աստվածահաճո գործերով էին զբաղված,—ս. Մեսրոպի, ս. Գրիգոր Լուսավորչի և ուրիշ նման սրբերի մասին դրքեր էին գրում։ Դեռ մի քիչ առաջ նրանք գովաբանական խոսքեր էին շռայլում մեռած կաթուղիկոսի հասցեին, նրա հոգու վեհության ու կատարած մեծ ռևոլյուցիոն գործունեության համար... և հանկարծ,—օ՜ զարմանք, նրանք անհրաժեշտ գտան խառնվել Բաքվի բանվորների՝ նավթարդյունաբերողների դեմ մղած պայքարի մեջ և նույն թանաքով ու նույն գրչով սկսեցին բրոշյուրներ գրել խորհրդի, կոլեկտիվ պայմանագրերի և այլ նման բաների մասին»։

Ինչպես կարելի է նկատել, Շահումյանի սարկազմը այս դեպքում ուղղված չէ Մեսրոպ Մաշտոցի դեմ, այլ նրանց դեմ, ովքեր նրան դարձրել են մեռյալ սրբություն, գրել են նրա մասին տիրացուական դատարկաբանություն՝ բնավ վեր չհանելով նրա, որպես պատմական անձնավորության և հայ կուլտուրայի հնագույն շրջանի ականավոր գործչի իսկական դերը։ Այդ հարցի վրա լույս է սփռում և մի այլ փաստ։

Շահումյանի տետրակներում պահպանված անտիպ փաստաթղթերը ցույց են տալիս, թե որքա՜ն բարձր է գնահատել նա հայոց հին գրականության սկզբնական շրջանը, որի խոշորագույն ներկայացուցիչն է հայ տառերի գյուտի հեղինակ Մեսրոպ Մաշտոցը։ Այդ ասույթը շատ կարևոր է։ Նրա արխիվում պահված տետրակներից մեկի մեջ սեփական

ձեռագրով հայերեն գրված է հետևյալը. «Կիսավայրենի, վաչկատուն ժողովուրդները հրում են հայերին Արևելքից։

Հայ գրականության սկիզբը շատ է հարուստ ու բեղուն և շարունակությունը աղքատ ու աներշ»։ Ինչպես պետք է ենթադրել՝ սա առանձին դիտողություն է, կոնսպեկտիվ մի միտք, որը չափազանց արժեքավոր է։ Շահումյանի այդ ասույթի մեջ ամփոփված է պատմական մի ճշմարտություն։ Հայ գրականության բարեխիղճ հետազոտողներից, օրինակ՝ Վ. Բրյուսովը, օբեկտիվորեն հանգել է այն տեսակետին, որը համընկնում է Շահումյանի եզրակացությանը։ Երբ մեր հեղինակը խոսում է հայ գրականության սկզբի և շարունակության մասին, շարունակությունն ասելով նկատի չունի, իհարկե, XIX դարը, որը ապրում էր ծաղկման շրջան, չնայած ազգային ճնշմանը, և առաջադրեց խոսքի մեծ վարպետներ։ Այստեղ խոսքը, հավանաբար, վերաբերում է XVII և XVIII դարերի հայ գրականությանը, երբ իրոք գրավոր գրականությունը ճգնաժամ էր ապրում և չէր առաջադրում նշանավոր դեմքեր։ Եթե մենք համեմատենք V դարը, որը եղել է նրա ծաղկման շրջանը (հայ գրականության այսպես կոչված «Ոսկե դարը», ինչպես ասվում է հետազոտական գրականության մեջ), և նույնիսկ հայ գրականության վաղ վերածննդի շրջանը, որը առաջադրեց հիանալի պոետների մի ամբողջ պլեադ (Նարեկացի, Գրիգոր Նարեկացի և այլն), XVII և XVIII դարերի հետ՝ պատկերը խստորեն փոխվում է։ Այդ վերջին դարերում հայկական գրավոր պոեզիան և գրականությունը, որպես ամբողջություն, անկում է ապրում։ Հրապարակում մնում են միայն ժողովրդական երգիչ-աշուղները, որոնց հանճարեղ ներկայացուցիչն է Սայաթ-Նովան (XVIII դար)։

Գրավոր գրականության փոխարեն զարգանում է ժողովրդական երգիչների պոեզիան և ընդհանրապես ժողովրդական ստեղծագործությունը։ Այդ երևույթն ունի անկասկած իր պատմական և սոցիալական պատճառները, որոնց քննությամբ մենք այստեղ չենք զբաղվի։ Կհիշենք միայն, որ

---

1 ՀԿ(բ)Կ պարտարխիվ, «Շահումյանի ֆոնդ», գործ № 3։

Սայաթ-Նովան վայելում էր Շահումյանի խորը համակրանքն ու սերը։ Եվ նրա մի երգից երկու տող՝

Իմ սասածը ուրիշ տիպ է, ուրիշ տիպ,
Քո սասածը ուրիշ դիպ է, ուրիշ դիպ…

Շահումյանը մեջ է բերում իր «Ազգային կուլտուրական ավտոնոմիայի մասին» բրոշյուրի մեջ և հարմարեցնելով բնագրատուբյանը՝ օգտագործում է այդ ավտոնոմիայի պաշտպան նացիոնալիստի դեմ։

Շահումյանի նման վերաբերմունքը դեպի հայ հանճարեղ ժողովրդական երգիչ Սայաթ-Նովան պատահական չէ։ Դա ցույց է տալիս ոչ միայն այն, որ ռևոլուցիոներ բոլշևիկը լավ էր իմանում նրա ստեղծագործությունները, երգերը, այլև այն, որ նա բարձր էր գնահատում այդ երգերը և անհրաժեշտ համարում օգտագործել նրա պատկերները իր գաղափարական պայքարում։ Այս փաստը կարելի է համարել Սայաթ-Նովայի և նրա պոեզիայի ամենաբարձր գնահատականը։

Սրանով ամենանափակվում են Շահումյանի՝ մեզ հայտնի ասույթները՝ հայոց հին պատմության ու գրականության մասին։ Նրանք վկայում են, թե ինչպիսի խորաթափանցությամբ էր Շահումյանը մոտեցել հայ ժողովրդի և նրա գրականության պատմության հարցերին՝ զինված մարքսիզմ-լենինիզմի մեթոդով։ Հայոց հին պատմության հարցերին նվիրված հոդվածը, ինչպես և այլ նկատողությունները, խոր բապես այժմեական նշանակություն ունեն և պահպանել են իրենց ամբողջ արժեքը նաև մեր օրերի համար։ Մինչդեռ այդ հոդվածի լուրջ ուսումնասիրությունը և նրանով ղեկավարվելը կկանխեր շատ սխալներ, որ թույլ են տվել մեր երիտասարդ պատմաբանները՝ «Հայ ժողովրդի պատմությունը» գրելիս։

Հայոց պատմության վերաբերյալ Շահումյանի այդ արժեքավոր դիտողությունները, որոնք նրա մարքսիստական մեկնաբանության բանալին են, անհրաժեշտ ուշադրության չեն առել մեր երիտասարդ սովետական պատմաբանները։

II

Հայ ժողովրդի, նրա կուլտուրայի ու հասարակական մտքի պատմության նոր շրջանին (XIX դար և XX դարի սկիզբ) վերաբերող Շահումյանի ասույթները լինելով հետևողական շարունակությունը նրա ընդհանուր մարքսիստական կոնցեպցիայի՝ աչքի են ընկնում պարտիական-քաղաքական սրությամբ ու նպատակասլացությամբ։

Այդ ասույթների մեջ կարևոր տեղ է գրավում XIX դարի և XX դարի սկզբի հայ հասարակական մտքի տարբեր հոսանքների և առանձին դրողների բնութագիրը։

Շահումյանի աշխատություններն այս տեսակետից արժեքավոր նյութեր են տալիս և աչքի են ընկնում խորիմաստությամբ։ Նրանք սկզբունքային կարևոր նշանակություն ունեն հայ հասարակական մտքի ու գրականության (համեմատած դեպ ռուսահայերի, որոնց և վերաբերում են Շահումյանի գրեթե բոլոր մեզ հայտնի ասույթները) պատմական դարգացման մարքս-լենինյան լուսաբանման համար։ Շահումյանի այդ դրույթների էությունն ու նշանակությունը կարելի է հասկանալ միայն այն ժամանակ, երբ նկատի ունենանք, որ հայ ժողովուրդը, ինչպես և ցարական Ռուսաստանի մյուս փոքրաթիվ ժողովուրդները, ապրում էին քաղաքական, ուստի և մտավոր այն կյանքով, ինչ որ ռուս ժողովուրդը։ Այս պատճառով էլ հայ հասարակական միտքը և գրականությունը XIX դարում կազմավորվել են ռուս հասարակական մտքի ու գրականության անմիջական ազդեցությամբ, և նրա հոսանքները մոտավորապես համապատասխանել են ռուսական հասարակական հոսանքներին։ Եվ դա հասկանալի է։

Նոր պայմաններում որոշիչ գործոնը Հայաստանի անցումն էր ռուսական իշխանության ներքո։ Այս պատմական փաստը նոր էջ բացեց հայ ժողովրդի պատմության ու հոգևոր կուլտուրայի զարգացման մեջ, բարերար ազդեցություն ունեցավ ընդհանրապես հայ գրականության ու կուլտուրայի զարգացման վրա։

Հայ ժողովուրդն, իհարկե, որևէ լավ բան չէր կարող ակնկալել ռուսաց ցարից, ինչպես և նրա իշխանության տակ գտնվող մյուս ժողովուրդները։

Ցարական Ռուսաստանի նվաճողական քաղաքականությունն Արևելքում անկասկած ռեակցիա էր, և զուր չէր, որ Մարքսն ու Էնգելսը այնպես դատապարտում էին այդ քաղաքականությունը՝ ջանալով ուղղորդիոն դեմոկրատական ուժերի մի զորեղ պատվար ստեղծել ռուսական ցարիզմի նվաճումների դեմ՝ Արևելքում։ Բայց, չնայած այդ հանգամանքին՝ Մարքսն ու Էնգելսը ժամանակին նշել են Ռուսաստանի «իսկապես առաջադիմական լինելը» արևելյան ժողովուրդների համար՝ Արևելքի և «ծույլ, շլյախտային Լեհաստանի» համեմատությամբ։ «Ռուսաստանի տիրապետությունն...—գրել է Էնգելսը 1851 թվին,—քաղաքակրթիչ դեր է կատարել Սև և Կասպից ծովերի նկատմամբ, Կենտրոնական Ասիայի, բաշկիրների ու թաթարների համար։ Ռուսաստանը ծույլ, շլյախտային Լեհաստանի համեմատությամբ, հենց իր բնույթով էլ լուսավորության և մանավանդ արդյունաբերության շատ ավելի տարրեր է ընդունել իր մեջ» (Մարքս—Էնգելս, Նամակներ, էջ 52, 1931 թ., ռուս.)։

Նույնը կարող ենք ասել Հայաստանի մասին։ Չնայած ռուսական ցարիզմի քաղաքական նպատակների ռեակցիոն էությանը, այնուամենայնիվ միացումը Ռուսաստանին՝ դրական նշանակություն ունեցավ Հայաստանի համար։ Ցարական Ռուսաստանը՝ շահերի Պարսկաստանի համեմատությամբ ավելի փոքր չարիք էր հայ ժողովրդի համար XIX դարի սկզբին։ Հայաստանի մտնելը ռուսական պետության կազմի մեջ օբեկտիվորեն առաջադիմական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար այն իմաստով, որ այդպիսով ապահովվում էր նրա ֆիզիկական գոյությունը, որ վտանգի տակ էր Պարսկաստանի և Թյուրքիայի տիրակալության ներքո, և հայ ժողովուրդը հնարավորություն էր ստանում շփվել ռուս ժողովրդի և նրա առաջավոր կուլտուրայի հետ։ Այս հողի վրա շատ տասնամյակների ընթացքում ա-

ճեց ու ամրացավ հայ ժողովրդի ու նրա լավագույն ներկայացուցիչների սերը դեպի ռուս մեծ ժողովուրդը և նրա հզոր կուլտուրան։

Եվ իրոք, ռուս մեծ ժողովրդին միանալը, նրա ռևոլուցիոն կուլտուրայի հետ շփվելը փրկարար նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար։ Այդ օրվանից հայ ժողովրդի բախտը ձուլվեց ռուս ժողովրդի բախտին։

Մտնելով ռուսական ցարիզմի իշխանության ներքո՝ հայ ժողովուրդն իհարկե չազատվեց ազգային ճնշումից, ընդհակառակն՝ ազգային ճնշումն այլ ձևեր ընդունեց և Ռուսաստանի ժողովուրդների մեջ ազատագրական ձգտումների ուժեղանալուն զուգընթաց ուժեղացավ և նրանց դեմ ուղղված ճնշումն ու կամայականությունը։ Սակայն ֆեոդալա-բյուրոկրատական միապետության կրոնի տակ տնքում էին ոչ միայն ազգային փոքրամասնությունները, այլև ռուս մեծ ժողովուրդը, որ վաղուց ձևակոխել էր ինքնակալության ու ճորտատիրության դեմ պայքարելու ուղին։ Այս տեսակետից 60-ական թվականների նշանավոր ազատագրական շարժումը առանձին տեղ է գրավում Ռուսաստանի (և Հայաստանի) պատմության մեջ։

Բնութագրելով 60-ական թվականների հասարակական տարբեր դասակարգերի դիրքերը՝ Լենինը գրել է. «Ճորտատերերի ու լիբերալների տխրահռչակ պայքարը, որ այնքան ուռճացրել ու նախշել են մեր լիբերալ ու լիբերալ-նարոդնիկական պատմաբանները, իշխող դասակարգերի ներսում, մեծ մասամբ կալվածատերերի ներսում տեղի ունեցող պայքար էր բացառապես զիջումների չափի ու ձևի համար։ Լիբերալները նույնպես, ինչպես և ճորտատերերը, կանգնած էին կալվածատերերի սեփականությունն ու իշխանությունը ճանաչելու հողի վրա՝ վրդովմունքով դատապարտելով այդ սեփականությունը ոչնչացնելու, այդ իշխանությունը իսովին տապալելու վերաբերյալ ամեն տեսակ ռևոլուցիոն մտքերը... 1860-ական թվականների լիբերալները և Չերնիշևսկին ներկայացուցիչներ են երկու պատմական տենդենց-

ների, երկու պատմական ուժերի, որոնք, այդ ժամանակից սկսած մինչև ընդհուպ մեր ժամանակը, որոշում են նոր Ռուսաստանի համար մղվող պայքարի ելքը» (Լենին, հատոր XV, էջ 143—144)։

Ահա այս երկու պատմական տենդենցները, պատմական երկու ուժերը իրենց արտահայտությունն ունեցել են և հայ իրականության մեջ։ Հայ ժողովուրդը հեռու չի մնացել 60-ական թվականների ազատագրական շարժումից։ Հայ ժողովրդի լավագույն զավակները միացել են այդ շարժմանը։ Դրա համար էլ հայ լիբերալների և հատկապես ֆեոդալա-կղերական ռեակցիայի դեմ ուղղուցիոն դեմոկրատիայի մղած պայքարն առանձնապես սաստկացավ 60-ական թվականների ազատագրական շարժումից։ Հայ ժողովրդի լավագույն զավակները միացել են այդ շարժմանը։ Դրա համար էլ հայ լիբերալների և հատկապես ֆեոդալա-կղերական ռեակցիայի դեմ ուղղուցիոն դեմոկրատիայի մղած պայքարն առանձնապես սաստկացավ 60-ական թվականներին։

Վաթսունական թվականները Հայաստանի ու հայ գրականության համար բացառիկ կարևոր նշանակություն ունեն։ Դա հասարակական նոր ձգտումների ու «ազգային զարթոնքի» վերելքի շրջան էր հայ գրականության ու մամուլի համար։ Այդ վերելքի նշանը գեղարվեստական նոր երկերի ու տպավոր նոր խոսքի երևան գալն էր, որ իր հերթին նպաստում էր հայ ժողովրդի «ազգային ինքնագիտակցության» և հասարակական-քաղաքական ու կուլտուր-լուսավորական ձգտումների զարգացմանը։ 1858 թվին առաջին անգամ լույս տեսավ Ն. Աբովյանի «Վերք Հայաստանի» նշանավոր վեպը, որ գրված էր 1840 թվին։ Նույն 1848 թվին սկսեց հրատարակվել «Հյուսիսափայլը», որի դեկավարներն էին Մ. Նալբանդյանը և Ստ. Նազարյանցը։ Այս երկու հրատարակությունները բացառիկ դեր խաղացին եվրոպական լուսավորության ու կուլտուրայի հիմունքները ֆեոդալա-կղերական ռեակցիայից պաշտպանելու և այդ լուսավորությունը հայ իրականության մեջ տարածելու գործում։

Աբովյանի անձնավորությամբ ու ստեղծագործությամբ, ինչպես հայտնի է, հայ ժողովրդական դանդվածները երբեք չեն դադարել հետաքրքրվելուց։ Այս տեսակետից արժեքավոր ու հետաքրքիր է երիտասարդ Շահումյանի վերաբերմունքը նրա նկատմամբ։ Իր մի նամակում երիտասարդ Շահումյանն արտացոլել է հայ մեծ լուսավորչի նկատմամբ եղած համաժողովրդական սերը։ Այդ նամակը մենք հիշատակեցինք առաջին գլխում։ Այստեղ անհրաժեշտ է ամբողջությամբ մեջ բերել այն խոսելով Աբովյանի երկերի ժողովածուի հրատարակության մասին՝ Շահումյանը այդ նամակում (1897 թ.) ասում է.

«Ջեմ հիշում, գրել եմ արդեն քեզ թե ոչ, որ լույս է տեսել այս մոտիկ ժամանակներս Խաչատուր Աբովյանի գրվածքների ժողովածուն։ Այդտեղ կա նաև հռչակավոր «Վերք Հայաստանին», որ մի հազվադյուտ բան էր առաջ։ Ես հիշում եմ՝ հինգ-տաս ռուբլի էին առաջարկում իմ մի ընկերոջը նրա պատառոտած «Վերք Հայաստանիի» համար, իսկ այժմ, թե այդ և թե շատ ուրիշ գրվածքներ մի հատուկոր գրքով կարելի է ձեռք բերել ընդամենը մեկ ռուբլով։ Աչքի առաջ ունեցեք նաև այն հանգամանքը, որ ոչ միայն կըրճատված չէ «Վերք Հայաստանին», այլև մինչև անգամ լրացված. այն հիանալի և բավական մեծ-մեծ կտորները, որ արգելել էր նախկին ցենզուրան (ձեր ունեցած) հրատարակության մեջ, այժմ լիովին թույլատրված են։ Գիրքը հրատարակված է հեղինակի որբացած թոռների համար։ Բայց ինչո՞ւ այսքան երկար կանգ առա այս գրքի վրա. երևի որովհետև այս վերջին օրերս շատ եմ ներշնչվում նրանով։ Որքան հրաշալի բան է, սիրելի քույրերս, որքան սրբազան ոգևորությամբ է լցվում կարդացողի սիրտը։ Ահա ձեզ մի գրվածք, որ ամբողջովին «հեղինակի արցունքով» է շաղախված, ամբողջովին բանաստեղծություն ու անկեղծ ոգևորության արտադրություն է»[1]։

Աբովյանն ու իր վեպը արժանի են երիտասարդ ուսուցչի

---

1 Ե. Արովյան, «Ընտիր երկեր», հ. I, էջ VII, 1939 թ.։

ցիոների՝ Շահումյանի, այս բարձր գնահատականին։ Կարելի է պատկերացնել, թե ինչպիսի՛ հսկայական տպավորություն կարող էր գործել «Վերք»-ի առաջին՝ 1858 թվի, հրատարակությունը, քանի որ միակ աշխարհիկ ու ազգային վեպն էր այն ժամանակ։

Վեպը հրատարակվելուց առաջ տարածվում էր ձեռագիր արտագրություններով։ Նրա առաջին հրատարակությունը հսկայական կարևորություն ունեցող իրադարձություն էր. նա ուժեղացնում էր վեպի ազդեցությունը և շատ կողմերով կանխորոշում հայ գրականության ու լեզվի հետագա զարգացման ուղիները։ «Վերքը» լինելով հեղինակի հայրենասիրական տրամադրության պտորկումը, իր հերթին արծարծում ու զարգացնում էր ընթերցողների մեջ սեր դեպի հայրենիքը, ժողովուրդը, կուլտուրան ու լուսավորությունը։ Աբովյանի ու նրա վեպի ազդեցությունն իր ընթերցողների մտավոր զարգացման վրա հսկայական էր։ Այդ վկայում է Պռոշյանն իր հուշերում։

Մեր մյուս խոշոր գրողներն ու բանաստեղծները (Հ. Թումանյան և այլն) նույնպես կրել են Աբովյանի բարերար ազդեցությունը և բարձր են գնահատել նրա դերն ու նշանակությունը հայ գրականության պատմության մեջ։ Այս հայտնի փաստերը հիշելով, ուզում ենք ընդգծած լինել այն միտքը, որ նաշատուր Աբովյանը իր վեպի հրատարակումով, որպես առաջադեմ լուսավորիչ, գործոն ու կենդանի մասնակցություն է ունեցել 60-ական թվականների ֆեոդալա-կղերական ռեակցիոն հոսանքի դեմ մղվող պայքարին՝ հանուն նոր գրականության ու գրական նոր լեզվի, հանուն նոր լուսավորության։ Այդ պայքարին մասնակցում էին թե՛ արմատական դեմոկրատները (Միք. Նալբանդյան), թե՛ լիբերալ լուսավորիչները (Ս. Նազարյանց և այլք)։ Նկատվում է մի հետաքրքրական երևույթ, որը հիշեցնում է «Современник» ամսագրի պատմության առանձին մոմենտներ, երբ դասակարգային ուժերի սահմանագծումից առաջ այդ ամսագրին ռե-

վոլուցիոն դեմոկրատների հետ միասին աշխատակցում էին և լիբերալներ Տուրգենևը, Գրիգորովիչը և ուրիշներ։

Մոտավորապես այդպիսի երևույթ ենք նկատում և հայ իրականության մեջ. «Հյուսիսափայլը» դեմոկրատների ու լիբերալների օրգանն էր. պաշտոնական խմբագիրը լիբերալ պրոֆեսոր Մտ. Նազարյանցն էր, իսկ գլխավոր աշխատակիցը, որը և տոն էր տալիս հանդեսին, դեմոկրատ Նալբանդյանն էր։ Կարելի է ասել, որ դա լիբերալների ու դեմոկրատների ժամանակավոր բլոկ էր՝ լուսավորության ընդհանուր թշնամու դեմ։ Մինչև 1860 թվականը հրատարակվող «Հյուսիսափայլը» գրաղվում էր գլխավորապես եվրոպական լուսավորության պրոպագանդայով, թարգմանաբար տպագրում էր եվրոպական և ռուս կլասիկներին, պատմության ու բնագիտության վերաբերող հոդվածներ։ Այդ բոլորից բացի՝ ակտիվ պայքար էր մղում ժողովրդին հարազատ ու հասկանալի նոր լեզվի ու գրականության համար՝ հակեղեցական սխոլաստիկ կրթության ու գրաբարի դեմ։ «Հյուսիսափայլը» կոչնականից էր հակեղեցու ռեֆորմի՝ ըստ «լուսավոր դարու» նոր պահանջների։ Հանդեսի լուսավորական ուղղության գլխավոր թշնամիները, բնականաբար, ֆեոդալա-կղերական ռեակցիոներներն էին, որ մոլեգնորեն պաշտպանում էին հինն ու փտածը... Հանուն նոր լուսավորության, նոր լեզվի ու գրականության, դասախոսականության նոր սկզբունքների մղած «Հյուսիսափայլ»-ի պայքարը անկասկած գրական ու առաջադիմական երևույթ էր և ուղի էր հարթում հայ գրականության ու լեզվի հետագա զարգացման համար, որն իր գագաթնակետն հասավ Րաֆֆու, Շիրվանզադեի, Հ. Թումանյանի, Իսահակյանի և այլոց ստեղծագործության մեջ։

Սակայն 60-ական թվականների լուսավորական շարժումը մեզ մոտ միատարր չէր. ընդհակառակն, լուսավորիչների մեջ սկզբունքային խոր տարաձայնություններ կային, որոնք հետագայում, գյուղացիական ռեֆորմի նախօրյակին ու դրանից հետո դասակարգային սրված պայքարի կապակցությամբ, հանգեցին կատարյալ պառակտման։ Մտ. Նա-

զարյանցը կուլտուր-լուսավորական հարցում ընդհանրապես առաջադիմական դիրք էր գրավում, բայց Նալբանդյանի համեմատությամբ նրա լուսավորական ծրագիրն անգամ մեծ թերություններ ուներ և խիստ չափավոր էր։ Այլևս չեմ խոսում նրա քաղաքական դիրքի մասին, որն այդ ժամանակվա ռևոլյուցիոն իրադրության մեջ նման էր ռուս լիբերալների դիրքին, ռեակցիոն էր և ըստ էության չէր տարբերվում հայ կղերա-ֆեոդալական կլիկի ցարասիրական դիրքից։ Ֆրանսական բուրժուական ռևոլյուցիային վերաբերող հոդվածում Նազարյանցը բացահայտորեն հանդես է գալիս հասարակական հասունացած հարցերի լուծման ռևոլյուցիոն մեթոդի դեմ և պաշտպանում է սոցիալական ռեֆորմների սկզբունքը։

Հետաքրքրական երևույթ ենք նկատում այստեղ։ Հանդես գալով, թեկուզ և ոչ հետևողականորեն, չափավոր կերպով կղերա-ֆեոդալական կլիկի դեմ՝ հանուն նոր լուսավորության ու գրականության՝ Նազարյանցն այնուամենայնիվ վճռական քաղաքական հարցում լռելյայն համերաշխում էր իր հակառակորդների հետ և բացասում Նալբանդյանի ռևոլյուցիոն տակտիկան։ Սա հայ լիբերալիզմի բնորոշ գիծն է։ Իր գոյության ընթացքում հայ լիբերալիզմը, սկսած Ստ. Նազարյանցից, Գրիգոր Արծրունուց ու նրանց հետնորդներից, երբեք չի բացասել տերտերականությունը, կղերականությունը։ Նրա պահանջները սահմանափակվել են միայն եկեղեցու ռեֆորմով՝ առանց ձեռք տալու, ինչպես Արծրունին էր գրում, «եկեղեցու և կրոնի հիմքերին»։ Եկեղեցու տգետ ու հետամնաց սպասավորների վոխարեն նրանք ցանկանում էին ունենալ կրթված ու կուլտուրական հոգևորականներ։ Եվ երբ եկեղեցու ռեֆորմը ձեռք բերվեց, երբ կղերական հոսանքի ներկայացուցիչների զգալի մասը հասարակական զարգացող հարաբերությունների ազդեցությամբ աստիճանաբար և աննկատելիորեն որոշակի տուրք սկսեց ու նույնիսկ հաշտվեց «լուսավոր դարու» պահանջին ընդառաջելու հետ (ապա թե ոչ՝ վտանգ կար ամենայն վստահություն կորցնել ժողովրդական զանգվածների մեջ) և դարձավ նոր զարգացող բուրժուազիայի ու կապիտալիզմի պաշտպանը, ահա այդ

շրջանից ի վեր իր պարբերականներն ու դրքերը նույնպես սկսեց հրատարակել գրաբարի փոխարեն աշխարհաբար։

Այսպիսով, սուր տարաձայնություն առաջացնող հարցը՝ լեզվի և եկեղեցու հարցը, լուծվեց հօգուտ զարգացող նոր հասարակական հարաբերությունների, և հայ լիբերալիզմն ու կղերական հոսանքի ազդեցիկ խմբերը արդեն 70—80-ական թվականներին գրկախառնվեցին, ընդհանուր լեզու գտան։ Կղերականության ու լիբերալիզմի պայքարը դրանով չադադարվեց անշուշտ, նա շարունակվեց և հետագայում, բայց այդ պայքարն արդեն այլ բնույթ ուներ։ Կղերական ռեակցիայի դիրքերն այդ նոր շրջանում խախտվել էին, նրա մնացորդները այլևս լուսավորության համար սպառնալիք չէին ներկայացնում։ Բուրժուական հոսանքը կղերականների մեջ շատ ուժեղ էր։ Բայց դրանից, պետք է նկատի ունենալ, որ կղերականության ոգին սավառնում էր լիբերալիզմի վրա, որը, ինչպես ճիշտ նկատել է Շահումյանը, «չի ուզում և չի կարող բաժանվել այդ կղերական «տիրացուական» «ազգասիրությունից» (Ս. Շահումյան, Երկերի ժողովածու, հատոր I, էջ 111)։ Հայ լիբերալիզմի այս բնորոշ կողմը, նրա մշտական կապը կղերականության հետ իր սաղմնային վիճակով տեսնում ենք դեռևս 60-ական թվականներին։ Այս մերձեցումը մենք տեսնում ենք լիբերալ Նազարյանցի մոտ, որը դատապարտում էր Նալբանդյանի ռևոլյուցիոն վարքագիծը՝ համարելով նրա արարքները «հիմար անձնապաստանություն և անձնասեր ամբարտավանություն», «օդից առած ցնորք» (Մ. Նալբանդյան, Երկեր, հատոր 1-ին, էջ 24, 1903 թ.)։ Նալբանդյանի ու Նազարյանցի, ռևոլյուցիոն-դեմոկրատ լուսավորչի և լիբերալ լուսավորչի միջև արմատական տարբերություն կար, տեղի էր ունենում դասակարգային տարբեր խմբավորումների շահերն արտացոլող պայքար։ Նալբանդյանը հայ ժողովրդի ազատագրական ձգտումները միացնում էր ռուսական ազատագրական շարժմանը, որի գլուխն էին կանգնել ռուս ժողովրդի մեծ զավակներ Չերնիշևսկին ու Դոբրոլյուբովը։ Նալբանդյանը բարեկամ էր Գերցենին ու

Օգարյովին և գտնվում էր Չերնիշևսկու դաշտիարական ազդեցության տակ։ Նա համառուսական ազատագրական շարժման ականավոր գործիչներից մեկն էր։ Այս բոլորը նկատի ունենալով միայն հասկանալի ու պարզ կդառնան այն բարձր գնահատականները, որ ավել են Շահումյանը և ուրիշ հայ մարքսիստ բոլշևիկները Նալբանդյանին՝ հակադրելով նրան հայ բուրժուական լիբերալիզմի-նացիոնալիզմի սյուներին։

Նալբանդյանը մտավոր զարգացմամբ հասավ իր ժամանակակիցների ամենակրթված և խելամիտ մարդկանց մակարդակին, դարձավ նախամարքսյան շրջանի համազված մատերիալիստ։ Հայ ժողովրդի բոլոր առաջավոր տարրերը հավաքվում էին նրա շուրջը։ Ինչպես հայտնի է՝ դեռ նրա կենդանության օրոք Թիֆլիսի հայ երիտասարդությունը կազմակերպել էր «Երիտասարդ Հայաստան» միությունը, որ համամիտ էր Նալբանդյանի ռևոլյուցիոն-դեմոկրատական սկզբունքներին[1]։ Հայ երիտասարդության ու դրողների հաջորդ սերունդները կրել են նրա ուժեղ ազդեցությունը։ Նրանք չէին մոռանում Նալբանդյանի դիմումը «Հայկական երիտասարդությանը», որին «ջերմ սիրով» նվիրված էր նրա գլխավոր աշխատությունը՝ «Երկրագործությունը»։

«Մեր ազգի անցածը սխուր էր, այն օրերի պատմական հիշատակներից արտասուք է հոսում,—գրում է Նալբանդյանը։—Մեր ազգի ներկան թշվառ է, տարկությունը և աղքատությունը բարձրաձայն խոսում են այստեղ։ Եթե հույս ունենք ապագայի վրա, նորա երեսեցուցիչը դուք եք, ձեզանից կախվում է ազգի ապագան, և ձեզ վրա է մեկ հույսը... Թողեք մեռելներին թաղել յուրանց մեռելներին, նոցա արևը մտած է, իսկ դուք կենդանի եք և ապագայի արշալույսը ձեր գլխի վրա է բացվում։ Ձեր սակավաթիվ լինելը, համեմատելով պետքերի շատության, թող չվհատեցնի ձեզ, այն մարդը, որն զգում է յուր անձը կենդանի, պիտի հարի ձեզ, որովհետև կյանքի հոսանքը միայն մի ընթացք ունի՝ դեպի առաջ։

---

[1] Տես—Մ. Նալբանդյան, «Անտիպ երկեր», էջ 310։

Հառա՛ջ... այնտեղ միայն կարող ենք հանդիպել մեր ազգի կենսատորոզ և որոտընդոստ հարության» (Միք. Նալբանդյան, Երկերի լրիվ ժողովածու, հատոր 3-րդ, էջ 41, 1940 թ.):

Դա ռևոլուցիայի կոչ էր, որից վախենում էին ռուս և հայ լիբերալները: Նրանց կենդանական վախը ռևոլուցիայից ամենից ավելի ցայտուն կերպով տեսանք առաջին ռուսական ռևոլուցիայի ժամանակ:

Երբ մենք հակադրում ենք Նալբանդյանի աքանչելի կյանքը, նրա ռևոլուցիոն-մարտական գործունեությունը հայ լիբերալիզմի այուների ողորմելի գործունեությանը՝ ապա ավելի վառ է դառնում սահմանազատման այն գիծը, որ անց էր կացնում Շահումյանը հայ դեմոկրատիզմի ու լիբերալիզմի միջև: Հայաստանում և Անդրկովկասում բանվորական շարժման ու մարքսիստական կազմակերպությունների երևան գալուց առաջ, հայ իրականության մեջ կար երկու հիմնական հոսանք, երկու հիմնական տենդենց՝ դեմոկրատական ու լիբերալ, որն ընդհանուր լեզու էր գտել կղերականության հետ:

Հիշենք Լենինի բնորոշումը. «1860 թվականի լիբերալները և Չերնիշևսկին ներկայացուցիչներ են երկու պատմական տենդենցների, երկու պատմական ուժերի, որոնք, այդ ժամանակից և ընդհուպ մինչև մեր ժամանակը, որոշում են նոր Ռուսաստանի համար մղվող պայքարի ելքը»:

Նալբանդյանը հայ իրականության մեջ արտահայտիչն էր այն տենդենցի, որ Լենինը բնորոշում էր Չերնիշևսկու անունով: Չերնիշևսկուց, ինչպես և Նալբանդյանից հետո, ռևոլուցիոն-դեմոկրատական շարժումը Ռուսաստանում և Հայաստանում սկսեց թուլանալ: Ռևոլուցիոն—դեմոկրատական շարժման հետագա ավելի բարձր վերելքն արդեն կապված է բանվորական շարժման և մարքսիստական, սոցիալ-դեմոկրատական խմբակների կազմակերպման և մարքս-լենինյան պարտիայի գործունեության հետ: Հայ հասարակական հոսանքները բնորոշելիս (սոցիալ-դեմոկրատիայի և բանվորա-

կան շարժման երևան գալուց առաջ) Շահումյանի անցկացրած գիծը ցույց է տալիս, նախ, որ նա ուղղություն դեմոկրատ Նալբանդյանին համարում է իր նախորդը, և երկրորդ՝ վճռականորեն բացասում է լիբերալ-նացիոնալիստական հոսանքը իր գաղափարական-քաղաքական ժառանգությամբ։ Հայ բուրժուական նացիոնալիզմի ժառանգորդն անդրկովկասյան իրականության մեջ՝ դարձավ դաշնակցությունը, մինչդեռ Նալբանդյանը և ընդհանրապես ռուս ուղղություն դեմոկրատները բոլշևիկների նախորդներն են։ Այստեղ պետք է շեշտել, որ Շահումյանը գաղափարական ժառանգության հարցը դնելով՝ այն լուծում է մարքս-լենինյան ոգով։ Երի նա նացիոնալ-լիբերալիզմը համարում է հայ իրականության մեջ դաշնակցության նախորդ, դրանով դեռ ևս հավասարության նշան չի դնում լիբերալիզմի և դաշնակիզմի միջև, այլ միայն շեշտում է նրանց նույն սոցիալ-դասակարգային բանակին պատկանելու հարցը։ Դեռևս 1906 թվին «Կայծ» թերթում՝ որպես առաջնորդող տպված իր մի հոդվածում Շահումյանը անդրադառնալով «ընտրական պայքարին» և այն ազմուկին, որ տեղի է ունենում հայկական լիբերալների օրգան «Մշակ»-ի և դաշնակների օրգան «Հորիզոն»-ի միջև, գտնում է, որ 14—15 տարի սրանից առաջ կամրողիկոսական ընտրությունների ժամանակ, երբ, մի կողմից, կանգնած էին մշակականները, մյուս կողմից՝ նոր-դարականներրը, նրանց բանակրուվի ու պայքարի մեջ ավելի հասարակական իմաստ և դաղափարական բովանդակություն կար, քան այժմյան այդ ընտրություններին, այն պայքարի մեջ, որ տեղի ունի «Մշակ»-ի և «Հորիզոն»-ի միջև ազգային «Սահմանադիր ժողովի» ընտրության կապակցությամբ։ Այս վերջիններիս պայքարում Շահումյանը կարևոր սկզբունքային քաղաքական դաղափարական տարբերություն չի տեսնում, որովհետև երկուսին էլ համարում է հայ բուրժուազիայի հարաշատ զավակներ, «մեկնույն մեդալի երկու կողմեր, թեև այն միակ տարբերությամբ, որ նրանց մի մասը սիրահար է քնքույշ

Ժպիտների, մյուսը՝ բռունցքի ու վառոդի («Կայծ», № 45, 1906 թ.)։

Այս կարևոր գնահատականը լույս է սփռում ժառանգության հարցի վրա և մերկացնում է նախ՝ հայկական լիբերալիզմը՝ «մշակականությունը», ևսոլուցիոն հոսանք ճանաչելու ռեակցիոն փորձերը, ապա ցույց տալիս դաշնակցության բուն էությունը որպես ռազմական նացիոնալիզմի, որը ներծծված է հայդուկիզմով և բանդիտիզմով։

Այսպիսով, ելնելով Ստ. Նազարյանցի նացիոնալ-լիբերալիզմը Գրիգոր Արծրունու և Րաֆֆու միջոցով հասնում է Քրիստափոր Միքայելյանին՝ դաշնակցության հիմնադրին, ապա Նալբանդյանի ևսոլուցիոն տրադիցիաների պաշտպաններն են՝ Շահումյանը և Սուրեն Սպանդարյանը։ Այս է հայ իրականության մեջ հասարակական մտքի պատմական զարգացման էությունը, որ բազմապիսի կեղծումների է ենթարկվել ի հաճույս բուրժուական նացիոնալիզմի։ Բուրժուա-նացիոնալիստական և մենշևիկյան-սպեցիֆիկյան պատմաբանները ու քննադատները քիչ ճիգ չեն թափել ծուռ հայելու մեջ ցույց տալու հայ հասարակական մտքի զարգացումը։ Նրանց նախասիրած գործելակերպն այն էր, որ նրանք ամեն կերպ թաղում էին Նալբանդյանի իրոք ևսոլուցիոն տրադիցիաները, ճղնում էին մոռացության տալ նրա ևսոլուցիոն գաղափարները։ Լավագույն դեպքում նրան համարում էին Նազարյանցի աշակերտն ու գործակիցը և ընդհանրապես բուրժուա-նացիոնալիստական լագերի ներկայացուցիչը (այսինքն նույնացնում էին լիբերալ-բուրժուական գործիչների հետ), ըստ որում բուրժուական լիբերալիզմի այդ սյունները պատվանդանի վրա էին բարձրացվում, նրանց հայտարարում էին ևսոլուցիոներներ, գովերգում էին ամեն եղանակներով։ Այս հարցում կատարյալ համերաշխություն կար դաշնակցական ու մենշևիկյան-սպեցիֆիկյան քննադատության միջև։ Հետագայում նույն բանն էին կրկնում ժողովրդի մերկացված թշնամիները։ Միայն մարքսիստական քննադատությունը, ի դեմս Շահումյանի, տալիս է բուրժուական լիբերալիզմի ու նրա սյուների գնահատման ճիշտ դրույթներ։

Բոցաշունչ բոլշևիկ Սուրեն Սպանդարյանի մահվան առթիվ բանտից գրած հոդվածում Շահումյանն ասում է.

«Սուրենը պատկանում է հայ ծադում ունեցող այն նոր-գաղափարական երիտասարդությանը, որ կտրել է իր բոլոր գաղափարական կապերը հայ աղգային ինտելիգենցիայի նախկին սերունդներից և ոչինչ չունի սովորելու նրանցից: Սուրենը Ռուսաստանի նոր, համապետական կյանքի, ավելի հեռու՝ միջազգային կյանքի, միջավայրի ծնունդ է: Նրա ուսուցիչները չեն եղել և չէին էլ կարող լինել Ստ. Նազարյանը, Արծրունին, Բաֆֆին, Քրիստափոր Միքայելյանը: Նրա հոգևոր հայրերն ու ուսուցիչները եղել են Չերնիշևսկին, Բելինսկին, Պլեխանովը, Հեռո Մարքսը, Էնգելսը, Կաուցկին»[1]:

Ս. Սպանդարյանի այս բնութագրի մեջ, որը կարող է և Շահումյանի բնութագիրը լինել, կա չափազանց կարևոր մի դրույթ, որին մինչև հիմա արժանի ուշադրություն չի դարձված և որն ըստ արժանվույն չի գնահատված: Շահումյանի այս դրույթը հաստատում է նախ՝ մեր այն միտքը, որ հայ բուրժուական լիբերալիզմի՝ Նազարյանցի, Արծրունու, Բաֆֆու գաղափարա-քաղաքական ժառանգորդը դաշնակցությունն է, որի հիմնադիր Ք. Միքայելյանին Շահումյանն իրավացիորեն դասում է բուրժուական լիբերալիզմի-նացիոնալիզմի այդ սյուների կողքին, և, երկրորդ՝ հայ լիբերալիզմը «դեմոկրատական ու ռևոլուցիոն» չէր, ինչպես շեփորում էր մենշևիկյան և բուրժուա-նացիոնալիստական քննադատությունը: Սա հայ լիբերալիզմի մասին Շահումյանի տված գնահատականի ամենակարևորն ու հիմնականն է: Սրանով որոշվում է Շահումյանի և մի ուրիշ եղբակացությունը՝ բուրժուական լիբերալիզմի-նացիոնալիզմի գաղափարա-քաղաքական ժառանգության բացասումը: Երբ Շահումյանն ասում ու ընդգծում է, որ Ստ. Նազարյանցը, Արծրունին, Բաֆֆին և Քրիստափոր Միքայելյանը չէին եղել և չէին էլ կարող լինել բոլշևիկ ռևոլուցիոներ Ս. Սպանդարյանի ու-

---

1 «Պայքար», № 30, 1916 թ.:

սուցիչները, ապա դա շատ բան է նշանակում։ Շահումյանի կարծիքով ոչ մի դաղափարական կապ չկա ու չի կարող լինել բոլշևիկ ռևոլյուցիոների ու հայ լիբերալ-նացիոնալիստական ինտելիգենցիայի միջև. վերջինս ռևոլյուցիոն-դեմոկրատական չէր, նրա դաղափարա-քաղաքական ժառանգությունից ամբողջովին հրաժարվում էր Շահումյանը և միանդամայն ճիշտ էր վարվում։

Լիբերալ-նացիոնալիստական ինտելիգենցիայի մեջ առանձնակի տեղ է գրավում Բաֆֆին իր դեղարվեստական ստեղծագործությամբ։ Ինչպես հետո կտեսնենք՝ Շահումյանը այլ կերպ է դիտում Բաֆֆու դեղարվեստական ժառանգությունը, մեխանիկորեն չի նույնացնում վիպասանի դաղափարա-քաղաքական դիրքի հետ։

Այլ է Շահումյանի վերաբերմունքը Խ. Աբովյանի և Մ. Նալբանդյանի նկատմամբ։ Նացիոնալիստական քննադատությունը սովորաբար հայ հասարակական մտքի այս խոշորագույն ներկայացուցիչներին դասում էր բուրժուական լիբերալիզմի վերոհիշյալ սյուների կողքին և չէր տեսնում ու չէր ուզում տեսնել նրանց մեծ տարբերությունը։ Ավելին՝ Աբովյանին համարում էին բուրժուական նացիոնալիզմի հոգեհայրը, արվեստականորեն սրողելով Աբովյանի առաջադիմական ձգտումների և հայ ինտելիգենցիայի ռեակցիոն նացիոնալիզմի զանազանությունը։

«Սրան վերցնենք, օրինակ, ներկայիս հայ ինտելիգենցիան և մի շարք ուրիշ ազգային ինտելիգենցիաներ,—գրում է Շահումյանը 1916 թվին,—մենք կտեսնենք, որ նրանք ոչ միայն առաջադիմական ուժեր չեն, այլ ընդհակառակը, շատ տեղ ու վնասակար դեր են կատարում իրենց ժողովուրդների առաջադիմության գործում» (Ս. Շահումյան, Երկերի ժողովածու, հ. I, էջ 98)։

Այս ինտելիգենցիայի, նույնիսկ 80—90-ական թվականների հայ ինտելիգենցիայի համեմատությամբ Աբովյանը առաջադիմական խոշոր երևույթ է հայ ժողովրդի պատմության մեջ։ Նա չափազանց շատ բան է արել նրա լուսավորության ու կուլտուրայի համար։ Մեր մեծ լուսավորչի քաղաքական

համոզմունքները դեռ վերջնականապես չէին ձևավորվել, երբ նա անհետացավ։ Սակայն Աբովյանի կյանքի ու ժառանգության մանրակրկիտ ուսումնասիրությունը, նյութերի հետազոտությունը ցույց են տալիս, որ Աբովյանի զարգացման ուղին գնում էր ոչ թե դեպի ֆիլիստերացող լիբերալ Նազարյանցը (թեև ընդհանուր շատ բան կա նրանց մեջ), այլ դեպի Նալբանդյանը։ Չէ՞ որ Նալբանդյանն էլ բավական ճանապարհ անցավ, մինչև որ ուղղությունն մարտիկ դարձավ Աբովյանին, ինչպես և Նալբանդյանին բուրժուական լիբերալ-նացիոնալիստներից սահմանազատելու պատիվը պատկանում է Շահումյանին։ Հակառակ նացիոնալիստական քննադատության մեջ հաստատված տրադիցիային՝ առաջին անգամ նա Սպանդարյանին տված իր բնութագրի մեջ Աբովյանին ու Նալբանդյանին չի հիշատակում բուրժուական լիբերալիզմի սյունների շարքում։ Սա խիստ կարևոր սկզբունքային նշանակություն ունի հայ գրականության պատմության համար և պատահական բան չէ Շահումյանի հայացքներում, այլ բխում է հայ լիբերալիզմի ու դեմոկրատիզմի նրա ընդհանուր գնահատականից։ Մանավանդ Նալբանդյանի, ինչպես և Աբովյանի նկատմամբ, դրական վերաբերմունքը վաղուց է կազմվել Շահումյանի մեջ։ Դեռ իր առաջին գրաքննադատական ելույթում (Հոբելյանական ճառ Ղ. Աղայանի մասին) Շահումյանն առանձնացնում է Նալբանդյանին և նրան հակադրում է հայ ազգայնական սահմանափակ, բթամիտ ինտելիգենցիային, որի ներկայացուցիչները աստրաքարշությունն էին անում ցարիզմի առաջ և արդարացնում իրենց ողորմելի գոյությունը՝ ազգի մասին դատարկ-դատարկ շաղակրատելով. նրանք երևակայում էին, որ իրենք են հայ ժողովրդի փրկիչներն ու առաջնորդները։ Դառն սարկազմի պես է հնչում «ազգային սյուների» դործունեության բնութագիրը, որ տվել է երիտասարդ ուղղությունները։

«Մեր պարբերական մամուլի մեջ դատարկություն է տիրում և այդ դիտեն իրենք՝ մեր մեծ հրապարակախոսները, դիտեն, բայց և այնպես ահռելի կարծիք ունեն իրենց գոր-

ծունեության մասին, համոզված են, թե իրենք են, որ կան հայ ժողովրդի փրկիչները, առաջնորդները։ Փորձեցեք մի բան ասել նրանց հասցեին, մի քիչ քթներին դիպչել... Օ՜հ, սարսափ, տեսեք, թե ինչ կատաղություն, ինչ հայհոյանքներ են, որ կթափվեն ձեր գլխին։ Ամենալավ դեպքում, դուք մի անմիտ երեխա եք, չգիտեք, որ Ռուսաստանում կա ցենզուրա, որ ոչինչ չեն թույլ տալիս գրել... Օ՜հ, պարոններ, սխալվում եք, մենք այդ լավ գիտենք, գիտենք և ոչինչ էլ չենք սպասում ձեր հրատարակություններից, ձեր «լիբերալիզմից»։ Բայց մենք գիտենք և այն, որ եթե թույլ էլ տային ձեզ գրել, դուք ոչինչ չէիք կարողանա գրել, ոչինչ չէիք կարողանա մեզ տալ, որովհետև դուք ինքներդ ոչինչ չունեք... Ձեր հրատարակության նյութը տերտերներն են կամ առաջադիմական կուսակցությունների ծրագրից վաղուց դուրս գցված ֆիլանտրոպիան։ Ձեր հրատարակության ձևն է՝ վաղուց ասված, արհամարհված քարոզը։

— Ո՜վ անխիղճ հայեր, պահպանեցեք ձեր թերթերը, փող տվեք ձեր գրողներին։ Անգութ հայեր, հոգացեք ձեր թատրոնի մասին, հաց տվեք ձեր սոված դերասաններին։ Անխիղճ վաշխառուներ, ողորմացեք ձեր խեղճ գյուղացիներին, փող մի՛ առք նրանց տոկոսով, մի՛ կեղեքեք նրանց...

Ահա ձեր ամբողջ դավանանքը, ձեր գործունեության ծրագիրը։ Նվ դուք համարձակվում եք ձեզ ազատամիտ առաջադիմական անվանել։ Մի՛ անպատվեք, խնդրեմ, ռուս ազատամիտների (դեմոկրատների Ա. Ո.) սրբազան հիշատակը, մի՛ համարձակվեք նույնիսկ Նալբանդյանի ու անգամ Արծրունու հաջորդները անվանել ձեզ [1], եթե նրանք այժմ

---

[1] Հետո, իր գործունեության ավելի հասուն շրջանում, Շահումյանը, ինչպես նշեցինք, ուղղում մտցրեց Արծրունու դնահատականի մեջ՝ ամբողջովին առանձնացնելով նրան Նալբանդյանից։ Արծրունին՝ իբրև հրապարակախոս՝ որոշ առավելություններ ուներ իր ողորմելի հետևորդներից։ Շահումյանն այդ նկատի ունի Արծրունուն իր հաջորդներին հակադրելիս։ Սակայն այնուամենայնիվ այս թույլ տեղը Շահումյանը հետագայում լրիվ հաղթահարեց։

կենդանի լիներին, ամենավատ դեպքում կկոտրեին իրենց գրիչները և չէին համաձայնի երբեք ձեղ նման գրողներ լինել»։

Տեղին է ասված։ Ցույց տալով հայ աղգայնական ինտելիգենցիայի գաղափարական ու քաղաքական աղերմելիությունը, Շահումյանն իրավացի կերպով Նալբանդյանին հակադրում է նրանց։ Հետագայում հայ մեծ հրապարակախոս ռևոլյուցիոների՝ Նալբանդյանի, մահվան 50-ամյակի կապակցությամբ, բոլշևիկներն ուղղակի ու որոշակի հայտարարեցին իրենց դաղափարական աղգակցությունը Նալբանդյանին, ինչպես ժամանակին վարվել էին ռուս ռևոլյուցիոն դեմոկրատներ Բելինսկու ու Չերնիշևսկու հետ։

Հայ իրականության մեջ Շահումյանի և Սպանդարյանի նախորդը Միքայել Նալբանդյանն է եղել։ Այս հարցը հիմա կասկած չի հարուցում։ Մեզ արդեն հայտնի է Շահումյանի վերաբերմունքն այդ հարցում. նա խիստ բարձր էր գնահատում Նալբանդյանի գործունեությունը, առանձնացնում էր նրան հայ բուրժուական լիբերալիզմի այլոներից, հակադրում նրանց։ Շահումյանի այս վերաբերմունքը Նալբանդյանի ու լիբերալների նկատմամբ միանգամայն բոլշևիկյան էր ու բխում էր կուլտուրական ժառանգության լենինյան գնահատականից (Լենին, «Ի՞նչ ժառանգությունից ենք մենք հրաժարվում», հատոր II, էջ 305—382)։

Շահումյանից հետո, և նրա աղդեցությամբ, Նալբանդյանի դերը հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության մեջ ճիշտ գնահատեց սոցիալ-դեմոկրատական «Պայքար» թերթը[1]։ Նալբանդյանի մահվան 50-ամյակի կապակ-

---

[1] Մենք հաճախ ենք վկայակոչում այս թերթը, նկատի առնելով, որ նրա խմբագրության մեջ գլխավոր դեր էին խաղում բոլշևիկներ Շահումյանը, Մռավյանը և ուրիշներ։ Այդ թերթի աշխատանքը բարձր գնահատական է ստացել Շահումյանից։ «Ինտելիգենցիան և նացիոնալիզմը» հոդվածում նա գրում է. «Ներ վերցնենք մասնավորապես մեր փոքրիկ հայկական իրականությունը, դուք կտեսնեք, օրինակ, որ «Պայքար»-ի յուրաքանչյուր համարը մի-մի կենդանի բողոք է նացիոնալիզմի և նա-

ցությամբ թերթը մի համար նվիրեց նրան։ Բացի «Ազատության գրված վինվորը» վերնագրով մեծ առաջնորդողից, որտեղ տրված է Նալբանդյանի դերի ու նշանակության ընդհանուր ու ճիշտ գնահատականը, տպագրված են նաև նրա կենսագրական ակնարկը և պրոլետարական բանաստեղծ Հ. Հակոբյանի հուշերը, որոնց մեջ վերջինս գրում է այն ազդեցության մասին, որ գործել էր Նալբանդյանի ռեվոլուցիոն ազատասիրական պոեզիան իր վրա՝ պատանի հասակում։ Բայց մեզ համար խիստ հետաքրքրական է թերթի առաջնորդողը։ Նկատի ունենալով հարցի կարևորությունը, մենք կաշխատենք ավելի մանրամասնորեն հաղորդել առաջնորդողի դրույթները։

Ըստ խմբագրականի Նալբանդյանը XIX դարի հայ վերածննդության խոշորագույն դաղափարախոսն է և ժողովրդասեր ու մասնբիալիստ մտածող, որ, ի հակադրություն իդեալիստների, հասարակական երևույթների պատճառները տեսնում է ոչ թե դաղափարների, այլ հասարակության տնտեսական ու սոցիալական պայմանների մեջ և դրանցով բացատրում ժողովրդական դանգվածների դժբախտությունը։ Այս գնահատականը տալուց հետո, խմբագրությունը մեջ է բերում Նալբանդյանի հայտնի խոսքերը. «Մենք չենք հավատում, սարկության մեջ, աղքատության մեջ չկա և չի կարող լինել լուսավորություն»։ Նալբանդյանը հանդես է գալիս փիլիսոփայական միստիկայի դեմ. «Այն փիլիսոփայությունը, որ անմիջապես չէ բխում մարդկային կյանքից և չէ դադարում դարձյալ մարդկային կյանքի վրա... մենք հրապարակում ենք իմաստականություն և խաբեություն»,—ասում է նա և հեգնանքով նայում բուրժուազիայի «մարդասեր» մեծադղորդ լոզունգներին՝ «ազատության, հավասարության և եղբայրության» մասին։ Այդ ամենը նա դատարկ խոսք է համարում, քանի որ չի լուծվել այն տնտեսական խնդիրը, որ

ցինոնալիստների դեմ և հրամայական պահանջ է ամեն մի գիտակից մարքսիստի համար» («Պայքար» №49, 3 դեկտ. 1916 թ., կամ «Երկերի ժողովածու», հ. II, էջ 111)։

մահու և կյանքի խնդիր է»։ Նալբանդյանը չի ընդունում բուրժուազիայի գոյություն ունեցող քաղաքական իրավակարգը և ապատում է, որ այն «կանուխ թե ուշ սոսկալի փոթորիկներով պիտի լուծվի»։

Մեծ լուսավորչի ընդհանուր աշխարհայացքը շարադրելուց հետո, խմբագրությունը բնութագրում է ազգային հարցի նրա ըմբռնումը, ընդգծելով այդ հարցի նալբանդյանական ու շովինիստական մեկնաբանման միջև եղած անդունդը։ Դիմելով հայկական կյանքին, հայ զանգվածների անլուսաշող, մռայլ դրությանը, Նալբանդյանը չէր կարող դրա մասին խոսել առանց դառնության և խոր կսկիծի։ Նա շատ էր սիրում իր ազգը, իր ժողովուրդը։ Սակայն այդ սերը արմատապես հակադիր է կույր ու նեղ նացիոնալիզմին, շովինիզմին։ «Ազգությունը կույր ֆանատիկոսություն դարձնելու կամք չունենք,—ասում է Նալբանդյանը,—հերիք է որչափ կույր ու ֆանատիկոսական ազգությունն ունի իր նաևական կողմերը»։

«Հերիք է, ասում ենք, որ մի ազգությունը, մի շամփուր խորովածի համար, մորթում է մյուս ազգության եղը»։

Վկայաբերելով մեծ դեմոկրատի այս ու նման ասույթները, որոնց մեջ նա ընդունում է ազգության պատմականությունը և բացատրում նրա հավերժության տեսությունը, խմբագրությունն իրավացիորեն եզրակացնում է.

«Քող մեր օրերի «ազգասերները», հայ «փրկիչները» տեսնեն՝ XIX դարի մեր լուսամիտ վերածնիչի և իրենց ազգասիրության միջև որպիսի ահռելի խորխորատ գոյություն ունի. տեսնեն, թե ո՛րն է մաքուր ազգասիրությունը, որ համընթաց կարող է լինել մարդասիրության հետ, և ո՛րն է այն ազգասիրությունը, որն իր արտահայտության մեջ մարդատյացության է հասնում...։ Եվ այսպես՝ լրանում է սույն մարտի 31-ին այն մարդու մահվան հինսամյակը, որ ազատության գրված մոլեռանդ զինվորն է եղել, որն իր կես դար առաջ արտահայտած մտքերով ու ցույց տված կենդանի գործով ընդգրկել է ժողովրդական ազատագրական շարժման մեջ

փայլուն ուղի, որի «ազգային» հետևորդները մշուշով պատեցին այն ու հանգան հակառակ հետևանքների, իսկ զգաստ մարքերը ժողովրդի իսկական ազատության խնդիրը տեսան տնտեսական ազատագրության մեջ։ Եվ ուղիները բաժանվեցին խստորեն։

Լրանում է մահվան հինգամյակը մի մարդու, որի սիրտն ամբողջովին լցված էր իր ժողովրդի և ամբողջ մարդկության ցավերով, որի առանձին հոգսի առարկան հայ մասսայի քշվառությունն էր, սարկությունը և ազքատությունը... Հավե՞ւ հարգանք, «ազատության գրված զինվորի» թանկագին հիշատակին։ Ժամանակակից գործունյա սերունդը երախտագիտությամբ կհիշե անկեղծ ժողովրդասիրության անձնազոհ Նալբանդյանին» («Պայքար», № 13, 1916 թ.)։

Այս առաջնորդող հոդվածում անկասկած արտացոլված է Թերը շրջապատող բոլշևիկների վերաբերմունքն ու կարծիքը։ Նալբանդյանի գնահատման հարցում խմբագրության դիրքը լիովին համընկնում է խոշորագույն հայ ռևոլյուցիոն դեմոկրատի մասին արած Շահումյանի ասույթներին։ Եվ դա հասկանալի է, Սահմանազատման գիծը, որ անց է կացնում Շահումյանը հայ լիբերալիզմի ու դեմոկրատիզմի միջև, բացատրելով բոլոր հավաստումները ռուս և հայ բուրժուազիայի ռևոլյուցիոն լինելու մասին, լիովին բխում է Լենինի՝ Ռուսաստանի կապիտալիստական զարգացման երկու ուղիների տեսությունից և ռուսական լիբերալիզմի՝ գնահատականից։

«Պայքար մղո՞ւմ են արդյոք նրանք (լիբերալները, Ա. Ո.) ինքնակալության դեմ, պայքար ինքնակալությունը տապալելու համար,—հարցնում էր Լենինը դեռ 1899 թվին և պատասխանում. Ո՛չ, այդպիսի պայքար նրանք ոչ մի ժամանակ չեն մղել և չեն մղում։ Այդպիսի պայքար մղում են միայն ռևոլյուցիոներները... Սակայն ռևոլյուցիոն պայքար մղելը ամենևին միևնույնը չէ, ինչ ռևոլյուցիոներներին համակրելը և նրանց աջակցելը. ինքնակալության դեմ պայքարելը բնավ էլ միևնույնը չէ, ինչ լեգալ օպոզիցիա կազմելն՝

ինքնակալության դեմ։ Ռուս լիբերալներն իրենց պժգոհությունն են հայտնում ինքնակալությանը միայն այն ձևով, որ թույլ է տալիս ինքնակալությունը, այսինքն՝ որը ինքնակալությունը անվտանգ է համարում ինքնակալության համար... Լիբերալ օպոզիցիան ուղղակի ինքնակալության դեմ մղվող հասարակական պայքարի վերածելը՝ նշանակում է պարզապես խեղաթյուրել գործը, որովհետև ռուս լիբերալները երբեք ռևոլուցիոն պարտիա չեն կազմակերպել՝ պայքար մղելու ինքնակալությունը տապալելու համար...» (Լենին, հատոր II, էջ 565—566)։

Լենինը չի ընդունում, որ ռուս լիբերալները որևէ ռևոլյուցիոն ծառայություն են մատուցել։ Ընդհակառակը՝ նա հաճախ է ընդգծում նրանց հակադեմոկրատական և հակառևոլյուցիոն էությունը, որը նրանք ակներև ցույց տվին ռուսական առաջին ռևոլյուցիայի շրջանում և դրանից հետո՝ դաշնակցելով ինքնակալության հետ ընդդեմ ռևոլյուցիոն մասսաների։ Ի հակադրություն Լենինին (բոլշևիկներին), մենշևիկները, հերքելով պրոլետարիատի հեգեմոնիան դալիք բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայում, լիբերալներին համարում էին ռևոլյուցիոն ուժ, ձևական անալոգիա անելով Ֆրանսական բուրժուական մեծ ռևոլյուցիայի ժամանակաշրջանի հետ։

Մերկացնելով մենշևիկներին, ռուսական բուրժուազիայի նրանց շաբլոն համեմատումը ֆրանսիական ռևոլյուցիոն բուրժուազիայի հետ և պաշտպանելով Լենինին նրանց հարձակումներից, Շահումյանը «Վ. Մարտովի նոր հայտնագործությունը» հոդվածում գրում է.

«Նրանք (մենշևիկները, Ա. Ո.) չէին կարող հասկանալ պատմական դիալեկտիկայի իմաստը, որը ֆրանսական մեծ ռևոլյուցիայից հետո Եվրոպայի կապիտալիստական զարգացումից 50 տարի անց գերմանական բուրժուազիային հասցրեց աբսոլուտիզմի հետ գործարք անելուն և ռևոլյուցիայի հաջորդ օրն իսկ իշխանությունը բաժանելուն և որը ընդհանրապես Եվրոպայի և մասնավորապես Ռուսաստանի զար-

դացումից ևս 50 տարի անց ռուսական բուրժուազիային պետք նետեր կոնտրռևոլուցիայի դիրքը՝ ազատագրական շարժման հենց սկզբից» («Волна» ամսագիր, 1900 թ., № 2):

Ընկեր Ստալինը զարգացնելով լիբերալիզմի լենինյան գնահատականը, դեռ 1907 թվին գրում էր. «Այնտեղ, որտեղ պրոլետարիատը պայքարում է գիտակցաբար, լիբերալ բուրժուազիան դադարում է ռևոլուցիոն լինելուց: Դրա համար էլ պրոլետարիատի պայքարից ահաբեկված կադետներ-լիբերալները պաշտպանություն են փնտրում ռեակցիայի թևերի տակ: Դրա համար էլ նրանք ավելի են պայքարում ռևոլուցիայի դեմ, քան թե ռեակցիայի դեմ: Դրա համար էլ կադետներն ավելի շուտ դաշինք կկնքեն ռեակցիայի հետ ռևոլուցիայի դեմ, քան ռևոլուցիայի հետ: Այո՛, մեր լիբերալ բուրժուազիան և նրա պաշտպան կադետները հանդիսանում են ռեակցիայի դաշնակիցները, դրանք ռևոլուցիայի «լուսավորված» թշնամիներն են» (Ստալին, Երկեր, հատոր II, էջ 4—5, ռուս.):

Լենինի, Ստալինի ու Շահումյանի՝ ռուսական լիբերալ բուրժուազիայի այս բնութագրություններից հետո պետք է պարզ լինի նաև հայ լիբերալ բուրժուազիայի ու նրա գաղափարախոսների բնութագիրը, որոնք վաղուց միաձուլվել էին ռուսական լիբերալներին և ցարիզմի հավատարիմ հենարանն էին հայ իրականության մեջ: Կովկասահայ լիբերալների (Նազարյանց, Արծրունի, Րաֆֆի և այլն) քաղաքական գործունեության կենտրոնական մոմենտը «Տաճկահայերի ազատագրությունն» էր: Նրանք այլ կերպ չէին էլ մտածում իրագործել իրենց ծրագիրը, եթե ոչ ռուսական ցարիզմի և արևպական իմպերիալիստների օգնությամբ: Նրանցից շատերը նույնիսկ չէին կասկածում, որ իմպերիալիստական պետությունները դեմ են տաճկահայերի իսկական ազատագրությանը: Եթե Լենինը վերոհիշյալ հոդվածում խոսում է ռուսական լիբերալների օպոզիցիայի մասին ինքնակալության հանդեպ, ապա կովկասահայ իրականության մեջ հայ լիբերալները չէին կարող նույնիսկ այդպիսի չափավոր օպոզիցիա ստեղծել: Եվ դա հասկանալի է: Ստ. Նազարյանցը խոսում էր միայն ռե-

ֆորմի անհրաժեշտության մասին, ոչ մի միջոցի չդիմելով նրա իրագործման համար։ Իսկ Գ. Արծրունին արդեն հայտնի է իր ցարասիրական քաղաքականությամբ։ Հայ լիբերալիզմի միայն հատ ու կենտ, ամենաազնիվ ու զգաստ ներկայացուցիչները ազգային ճնշումն ուժեղանալու, ազգային կուլտուրան հալածվելու շրջանում (հայկական դպրոցների փակում) իրոք օպոզիցիոն տրամադրություն են դրսևորում ցարիզմի նկատմամբ։ Ես նկատի ունեմ Րաֆֆուն, որ իր «Սամվել» վեպով քաղարկված բողոքում է ինքնակալության հալածանքների դեմ և շոշափում է քաղաքական կողմնորոշման հարցը, պաշտպանում է Հայաստանի ինքնուրույն քաղաքական կյանքը՝ առանց ուժեղ խնամակալների ու հովանավորողների։

Սակայն հայ լիբերալ բուրժուազիան և նրա գաղափարախոսները ամբողջովին վերցրած երբեք չեն եղել և չէին էլ կարող լինել ռևոլյուցիոն դեմոկրատական ուժ, որ կարողանային պայքար մղել ինքնակալության դեմ, ընդհակառակն՝ ամբողջովին հենվում էին նրան և իրենց քաղաքական ձգտման՝ «տաճկահայերի ազատագրության» իրականացումը կապում էին ցարիզմի և արտասական իմպերիալիստների ցանկությունների հետ։ Եվ դա հասկանալի է։ «Ռուս կառավարությունը,—գրել է Շահումյանը դեռ 1906 թվին,—պաշտպանելով հայ բուրժուազիան իր խոշոր սուբսիդիաներով, ճնշում ու կեղեքում էր հայ մասսաներին, զրկելով նրանց ամենատարրական քաղաքական իրավունքներից» (Ս. Շահումյան, Երկ. ժող., հ. I, 1925 թ., էջ 59)։ Կովկասահայ բուրժուազիայի քաղաքական ձգտումները համընկնելով ցարիզմի նվաճողական քաղաքականությանը, հետագայում դարձան դաշնակցության ծրագրի ու գործունեության հիմքը, հասցվեցին տրամաբանական վախճանին, ընդունելով ռազմաշունչ նացիոնալիզմի և բանդիտիզմի ձև։ Նացիոնալիստական պարտիայի այդ քաղաքականությունը Շահումյանը ենթարկում է խիստ քննադատության։

«Սակայն դաշնակցության բոլոր ճիգերը,—գրում է Շա-

հունյանը 1906 թվին,—պահել շարժումն ազգային շրջանակների մեջ, ենթարկել այն տաճկահայ հարցին,—ապարդյուն անցան։ Ազատագրական շարժման հետագա զարգացումը մի կողմ նետեց շովինիստական կապանքները, որոնցով դաշնակցությունն աշխատում էր կաշկանդել հայ գավառը։ Հայերը հասկացան, որ իրենց թշնամին ռուսական կառավարությունն է, այլ ոչ թե ռուս ժողովուրդը։ Հակառակ դաշնակցության բոլոր ջանքերին՝ ընդհանուր լծի տակ տառապող բոլոր ժողովուրդների համերաշխության գաղափարը մուտք գործեց հայ ժողովրդական մասսաների գիտակցության մեջ, և այդ մասսաները, թեև այժմ թույլ չափով, հարեցին այն միջազգային համառուսական ռևոլուցիոն բանակին, որը մահացու կռիվ է հայտարարել կամայականության ու բռնության ռեժիմին» (Շահումյան, նույն տեղ, էջ 63)։

Մերկացնելով դաշնակցության ռեակցիոն-նացիոնալիստական էությունը, Շահումյանը միաժամանակ բնորոշում է Կովկասի տնտեսական ու քաղաքական այն պայմանները, որոնք ծնունդ տվին, մի կողմից, նացիոնալիստական զարթոնականներին, մյուս կողմից, մարքս-լենինյան, բոլշևիկյան կազմակերպություններին՝ պրոլետարական ինտերնացիոնալիզմի ջահակիրներին։

Գնահատելով հայ հասարակական մտքի ու հոսանքների անցած ուղին, Շահումյանը մի հիանալի հոդվածում («Կայծ» թերթի առաջին համարի առաջնորդողը) գրում էր.

«Կատարվեց այն, ինչ որ պետք է կատարվեր։

Հայ ժողովուրդն էլ դուրս եկավ իր նահապետական, սահմանափակ, «ազգային» կյանքի շրջանակներից և կապվեց լայն, լուսավոր քաղաքակիրթ աշխարհի հետ։ Եթե մինչև այժմ մենք ունեինք առանձին անհատներ, կամ ինտելիգենտական խմբեր, որոնք կրթվելով Ռուսաստանի կենտրոնում կամ Եվրոպայում, ճաշակելով արևրպական քաղաքակրթության պտուղները, գալիս էին մեզ մոտ «քարոզիչներին», «լուսավորիչներին» դերով, այժմ մենք ունենք ամբողջ դասակարգեր, որոնք իրենց էությամբ, իրենց օբեկտիվ դրությամբ,

իրենց իրական կյանքով ներկայանում են որպես արդյունք նոր սոցիալ-տնտեսական պայմանների հեղաշրջման, որ ստեղծվել է նաև մեր կյանքում։ Երկրի տնտեսական զարգացումն էր՝ իր բնական ու անխուսափելի ընթացքով, որ առաջ բերեց մեր կյանքում այդ արմատական հեղաշրջումը։ Եվրոպական կապիտալիզմը, որ տիրապետող արդյունագործական եղանակ էր դարձել Ռուսաստանում վերջին տասնամյակների ընթացքում, մուտք գործեց և մեր երկիրը և դրեց իր ուժեղ և ուրույն դրոշմը հայկական իրականության վրա» (Շահումյան, Երկեր, հատոր I, էջ 110)։

Այս բնորոշ դիտողությունից հետո, Շահումյանը շարունակում է բնութագրել հայ իրականության հիմնական հասարակական-քաղաքական ուղղություններ՝ երկրում կատարված սոցիալական ու տնտեսական փոփոխությունների կապակցությամբ։

Մի ուրիշ հոդվածում Շահումյանն արձանագրում է այն անհերքելի փաստը, թե հետագայում տնտեսական հարաբերությունների զարգացումը Կովկասում, մի կողմից, և բանվորական շարժման արագ ծավալումը համայն Ռուսաստանում, մասնավորապես Կովկասում, 90-ական թվականների վերջերին և 900-ական թվականների սկզբներին՝ մյուս կողմից, իրենց գործն արին և հայկական նահանգի նկատմամբ» (Շահումյան, Երկերի ժողովածու, հ. I, էջ 60)։ Այս հանգամանքը նպաստավոր պայմաններ ստեղծեց մարքսիզմ-լենինիզմի հայ իրականության մեջ տարածելու, ինչպես նաև բոլշևիկյան կազմակերպություններ ստեղծելու համար։ Շահումյանը, որպես մարքսիստ, լավ գիտեր, որ սոցիալ-տնտեսական փոփոխությունները չեն կարող քաղաքական ու գաղափարախոսական հետևանքներ և արտահայտություններ չունենալ։ Այդպես էլ նա գրում է «Կայծի» առաջնորդող հոդվածում.

«Այդ տեսակ հեղաշրջումը իրական կյանքում, մարդկանց հասարակական հարաբերությունների մեջ առաջ է բերում համապատասխան հեղաշրջում նաև նրանց հասարա-

կական գիտակցության մեջ,—կարդում ենք մենք,—նախկին կղերա-պահպանողական «ազգասիրության» տեղ եկավ եվրոպական բուրժուական լիբերալիզմը, որը թեև չի ուզում ու չի կարող բաժանվել այդ կղերական, «տիրացուական» «ազգասիրությունից», բայց հետզհետե իր էությամբ, իր բովանդակությամբ մոտենում է եվրոպական բուրժուական լիբերալիզմին, մյուս կողմից, որ ամենաբնորոշ գիծն է մեր նորագույն կյանքի, որ ամբողջովին նորություն է հայկական իրականության մեջ, եկավ այն աշխարհայացքը, որ կոչվում է սոցիալիզմ, որի կրողն է բանվոր դասակարգը, պրոլետարիատը։ Թե բուրժուական լիբերալիզմը, թե պրոլետարական սոցիալիզմը ունեն մեր կյանքում իրենց ավելի կամ պակաս գիտակից, ավելի կամ պակաս որոշված արտահայտիչները, իրենց քաղաքական կուսակցությունները, որ ղեկավարում են համապատասխան դասակարգերի քաղաքական կռիվը, որ աշխատում են մարմնավորել իրականության մեջ այդ դասակարգերի հասարակական-քաղաքական իդեալները» (Երկեր, հատոր I, էջ 111)։ Հայ իրականության հասարակական-քաղաքական վիճակի այս փայլուն բնորոշումից հետո, դժվար է արևէ նոր բան ավելացնել։ Շահումյանն ասել է հատակ, լակոնիկ կերպով և ընդգրկել է հիմնական հարցերը։ Այդ հատվածներում մենք գտնում ենք ոչ միայն մեր լուսավորիչների գնահատականները, այլև բուրժուական լիբերալիզմի խոր ու ճշմարտացի բնութագիրը։ Դրա հետ միասին Շահումյանը ընդգծում է հայ ժողովրդի հասարակական կյանքում կատարված այն հսկայական բեկումը, որ հետևանք էր բանվորական շարժման կազմակերպման և սոցիալիզմի, մարքսիզմի երևան գալուն։ Դա հայկական կյանքի ամենաբնորոշ կողմն էր XIX դարի վերջին և XX դարի սկզբին։ Հայ հասարակական կյանքում առաջացած այս փոփոխությունների հետևանքով վերջնականապես ձևակերպվեցին երկու հիմնական ներհակ դասակարգ՝ բուրժուազիան ու պրոլետարիատը, իրենց որոշակի աշխարհայացքով։ Թեև բուրժուական լիբերալիզմի-նա-

ցիոնալիզմի կրողը կովկասահայ բուրժուազիան էր, ապա մարքսիստական սոցիալիզմի և պրոլետարական ինտերնացիոնալիզմի կրողը բանվոր դասակարգն էր, որ արդեն սկսել էր վճռական դեր խաղալ՝ որոշելով հայ ժողովրդի հասարակական զարգացման հետագա ընթացքը։

Հայ կյանքում այդ նոր ուղղության հետևողական ու կարկառուն ազատահայտիչները՝ Շահումյանն ու Սպանդարյանն էին, որ իրենց ուսուցիչն պայքարն սկսեցին XIX դարի վերջին և XX դարի սկզբին և դարձան մերձավորագույն զինակիցները ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր Ստալինի, որի ղեկավարությամբ անդրկովկասյան բոլշևիկները հակայական հաջողություններ հասան բազմազգ Կովկասի ուսուցիչն ուժերը կազմակերպելու և համախմբելու, ինքնակալության ու բուրժուազիայի դեմ պայքարելու գործում։ Շահումյանի ու Սպանդարյանի պատմական թաքերաբեմ իջնելը բնորոշում է ինքնին այն արմատական բեկումը, որ տեղի ունեցավ կովկասահայերի հասարակական կյանքի ու մտքի մեջ։ Ընկեր Ստալինի ղեկավարությամբ Շահումյանը, Սպանդարյանը, իսկ ետքը ուշ՝ Միկոյանը և ուրիշները հակայական աշխատանք կատարեցին մարքսիզմ-լենինիզմի ուսմունքը հայ ժողովրդական զանգվածներում տարածելու և գիտական կոմունիզմի հիման վրա նրանց կազմակերպելու ուղղությամբ՝ ցարիզմի ու կապիտալիզմի դեմ համառեղ պայքարելու համար։

III

Հայ հասարակական մտքի ու հոսանքների հիմնական, հանգուցային հարցերը Շահումյանի աշխատությունների լուսին տակ բնութագրելուց ու լուսաբանելուց հետո, մենք կարող ենք անցնել Բաֆֆու, Ռ. Պատկանյանի և այլ գրողների հասարակական-քաղաքական ու գրական գործունեության գնահատականին, որ սկզբունքային կարևոր նշանակություն ունի։

Գրական ասպարեզ իջնելով 60-ական թվականներին՝

Րաֆֆին գեռ վերջնականապես ձևավորված քաղաքական հայացքներ չուներ։ Այդ ժամանակ նա տրամադրված էր Իրանի իշխող ֆեոդալական կարգերի դեմ և դժգոհ էր ցարական ինքնակալությունից։ Րաֆֆին կողմնակից էր հայ ժողովրդի ազգային ազատագրության ու ինքնուրույն կյանքին։ Երիտասարդ գրողը, ինչպես պատմում է Ղ. Աղայանը իր հուշերի մեջ, համակրում էր «Նալբանդյանի ուղղության»[1]։ Աղայանի այս խոսքը հաստատվում է նրանով, որ Րաֆֆին իր առաջին խոշոր վեպը՝ «Սալբին» (1877 թ.) հիացմունքով նվիրել է Նալբանդյանի «պայծառ հիշատակին»։

Սակայն դրությունը փոխվում է։

Սկսվում է 1877—78 թվերի ռուս-տաճկական պատերազմը։ Տաճկահայերի ազատագրության հարցը դառնում է օրվա հարց և պրավում ոչ միայն հայ բուրժուազիայի գաղափարախոսների ուշադրությունը, այլև համակում է ժողովրդական հոծ զանգվածների միտքն ու սիրտը։ Նահանգապին աշխատում էր միջազգային իմպերիալիստների դիվանագիտությունը, առատ խոստումներ անելով ու հուսադրելով հայ ժողովրդին՝ ազատագրել ու միացնել հայ ժողովրդի երկու հատվածները՝ տաճկահայերին ռուսահայերի հետ։ Այս բազայի վրա էլ բարձրանում է հայրենասիրական մի ալիք, որն ընդգրկում է ժողովրդական հոծ զանգվածները։ Այդ շարժման հիմքում ընկած էր հայ բուրժուազիայի և այլ տիրող վերնախավերի շահերը։ Սակայն հայ աշխատավոր ժողովուրդն այդ շարժման մեջ իր շահերն էր տեսնում. նա համոզված էր, որ հասել է իր վաղեմի իղձերի՝ հայ ժողովրդի երկու հատվածների միանալու և միասնական մի ազգ կազմելու ժամը։ Հայ ժողովրդական զանգվածների այս ձգտումը (70—80 թվերին) միանգամայն օրինական էր, հասկանալի ու առաջադիմական։ Սակայն ազգայնական հաշիշով մթագնած ժողովրդական զանգվածները չէին կարող կռահել մեծ տերությունների դիվանագիտական դավերը ու

---

1 Ղ. Աղայան, երկեր, հ. III, էջ 111։

հասկանալ պատերազմը հրահրողների իսկական նպատակները։ Եվ դաժանորեն խաբվեցին։ Ազգային շարժումը չունեցավ դրական հետևանքներ, ընդհակառակն՝ ստացավ խիստ ազգայնական բնույթ (դրան էին ձգտում մեծ տերությունների դիվանագետները) և դարձավ հայ ժողովրդի հարյուրավոր հերոս զավակների կոտորածի պատճառ։ Սուլթանական Թյուրքիան մեծ տերությունների հովանավորությամբ հայերի մասսայական ջարդեր կազմակերպեց։

Հայ ժողովուրդը ոուս մեծ ժողովրդի ազատագրական շարժումից կտրված չէր կարող հաջողություն ունենալ։ Այն մեթոդը, որ տաճկահայերի ազատագրության համար ընտրել էր բուրժուա-նացիոնալիստական ինտելիգենցիան, ազետալի հետևանքներ ունեցավ։ Մինչդեռ պրոլետարիատի ու աշխատավոր զանգվածների հեռատես, խորաթափանց ուսուցիչները և բարեկամները տաճկահայերի ազատագրումը տեսնում էին ոուսական ցարիզմի տապալման մեջ։ Ֆ. Էնգելսը, անդրադառնալով «Հայկական հարցին», մի նամակում նշում է հայ ժողովրդի ճնշված լինելու փաստը, «որը (ժողովուրդը) դժբախտաբար գտնվում է տաճկական բռնապետության Սցիլլայի և ոուսական աբսոլյուտիզմի Քարիբդայի միջև...»։ Այնուհետև ավելացնում է. «Հայաստանի ազատագրումը Թյուրքերից, ինչպես և ոուսներից (ցարիզմից—Ա. Ո.) հնարավոր կդառնա միայն այն օրը, երբ ոուսական ցարիզմը կտապալվի»[1]։ Սրանք մարգարեական խոսքեր են՝ ասված դեռևս 1894 թվին։

Բայց իրականություն դարձավ այդ կանխատեսումը միայն 1917 թվին՝ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ոևոլուցիայի շնորհիվ հաստատված սովետական կարգերով։

Էնգելսի այս դրույթը հաճախ է Շահումյանը մեջ բերում հայ ազգայնական պարտիաների դեմ, որոնք Նիկոլայ Ռոմանովի հետ դաշնակցած, պայքարում էին Ռուսաստանի ոևոլուցիոն շարժման դեմ և ժողովրդական զանգվածների ուշադրությունը կենտրոնացնում բացառապես տաճկահայե-

---

1 Մարքս և Էնգելս, Երկեր, հ. XXIX, էջ 341 (ոուս.)։

րին ազատագրելու ֆանտաստիկ ու ավանտյուրային քաղաքականության վրա, դրա համար օգտագործելով հայ աշխատավորության մաքուր, խոր հայրենասիրությունը։

Դիմելով Բաքվի այն հայ բանվորներին, որոնք առաջ խորթ ազդեցության տակ էին, Շահումյանը մայիսյան կոչում գրում էր. «Երկար ժամանակ դուք հետու եք եղել մեր ինտերնացիոնալ դասակարգային կազմակերպություններից։ Վշտացած լինելով տաճկահայ եղբայրների ճակատագրի համար՝ դուք ամբողջովին դարձել էիք ազգայնական կուսակցությունների գերին և հետևում էիք նրանց քարոզին։ Վերջին տարիների ողբերգական դեպքերը ցույց տվին ձեզ, թե որքան կարճատես ու աղետաբեր էր այդ կուսակցությունների քաղաքականությունը։ Այդ կույր քաղաքականությունը «Ազատ Հայաստանի»-ի փոխարեն մեզ տվեց իրոք «Ավերված Հայաստան», ինչպես որ պետք էր նախատեսել ու նախատեսեցին իրենք՝ տարաբախտ տաճկահայերը, որոնք ռուսահայ «ազատարարներին» խնդրում էին չխառնվել իրենց գործերին» («Սոցիալ-դեմոկրատ», № 1, 1 մայիսի, 1917 թ.)։ 70—80 թվականների «ազատագրական շարժման» տրամաբանական զարգացումը հանգեց այն բանին, ինչի մասին խոսում է Շահումյանը։ Հայ ժողովրդի փրկությունը ոչ թե ազգայնական շարժման մեջ էր, այլ՝ Ռուսաստանի պրոլետարական ռևոլյուցիայի հաղթանակի, որի մասին մարգարեաբար գրել էր Ենգելսը։ Այսպես էին նայում այդ հարցին և ռևոլյուցիայի մեծ առաջնորդները՝ Լենինն ու Ստալինը։

Հոկտեմբերից հետո ընկեր Ստալինը «Տաճկահայաստանի մասին» հոդվածում գրել է.

«Դա (Տաճկահայաստանը—Ա. Ո.) այն «դրախտային անկյունն» է, որը երկար տարիներ ծառայել է (և շարունակում է ծառայել) որպես Արևմուտքի դիվանագիտական ընչաքաղց տենչերի և Արևելքի վարչական արյունոտ մարզանքների առարկա։ Հայերի ջարդերն ու կոտորածները, մի կողմից, բոլոր երկրների դիվանագետների փարիսեցիական «պաշտպանությունը», որպես մի նոր ջարդի ծածկույթ, մյուս

կողմից, իսկ հետևանքը արնաթաթախ, խաբված ու ստրկացված Հայաստան. ո՞վ հայտնի չեն «քաղաքակիրթ» տերությունների դիվանագիտական «նկարչության» այդ «սովորական» նկարները։

Հայաստանի զավակները՝ իրենց հայրենիքի հերոս պաշտպանները, բայց նրա խիստ անհետաքրքիր քաղաքագետները, որոնք հաճախ են ենթարկվել իմպերիալիստական դիվանագիտության գիշակերների խաբեության, չեն կարող հիմա չտեսնել, որ դիվանագիտական կոմբինացիաների հին ուղին Հայաստանի ազատագրման ուղին չէ։ Պարզ է դառնում, որ ճնշված ժողովուրդների ազատագրության ուղին անցնում է բանվորական ռևոլյուցիայի միջով, որն սկսվել է հոկտեմբերին Ռուսաստանում։ Հիմա ամենքի համար պարզ է, որ Ռուսաստանի ժողովուրդների բախտը, մանավանդ հայ ժողովրդի բախտը սերտորեն կապված է հոկտեմբերյան ռևոլյուցիայի բախտին»[1]։

Ընկեր Ստալինի՝ բյուրեղի պես մաքուր դրույթների լույսի տակ պարզ է դառնում այդ «ազգային շարժման» էությունն ու բնույթը, «դիվանագիտական կոմբինացիաների հին ուղին Հայաստանի ազատագրման ուղին չէ»։ Մինչդեռ մինչև հիմա էլ դեռ գտնվում են այդ պատմաբաններ ու քննադատներ, որոնք արտացոլելով նացիոնալիստական դաշնակցության ազդեցությունը, դիվանագիտական կոմբինացիաների ու դավերի հին ուղին Հայաստանի ազատագրության իսկական ուղին են համարում, ուստի և լիովին արդարացնում են ոչ միայն 70—80 թվականների ազգային շարժումը, այլ նույնիսկ 1914 թվի կամավորական շարժումը, որ այնքա՞ն ողբերգական հետևանքներ ունեցավ տաճկահայերի համար։ Ստալինը և նրա դինակից Շահումյանը, ինչպես տեսանք, այլ կերպ են նայում այս հարցին, դրա համար էլ խիստ քննադատության են ենթարկում նացիոնալիստական պարտիաների, նախ և առաջ դաշնակցության

---

1 Ստալին. Նշվ. աշխ. հ. 17, էջ 25—26։

քաղաքականությունը, որոնք այնպես եռանդագին պաշտպանում էին հայ ժողովրդի «փրկության» այդ ուղին։

Բայց այդ շարժման մեջ կային մարդիկ, որոնք անկեղծորեն հավատում էին դիվանագիտական կոմբինացիաների ուժին հայ ժողովրդի ազատագրության հարցում և ամբողջովին նվիրվել էին այդ գործին։

Անցած դարի 70—80 թվերին այդ մարդկանցից էին Րաֆֆին ու Պատկանյանը։ Ճիշտ է՝ նրանք ուշ հասկացան իրենց սխալը, հիասթափվեցին մեծ տերությունների դիվանագետների խոստումներից, բայց դա շատ ուշ էր. ազգային շարժման առաջին ալիքն անցել էր և տվել կսկծալի հետևանքներ։ Բայց և այնպես Րաֆֆին ու Պատկանյանը չէին հրաժարվում տաճկահայերի ազատագրության գաղափարից, անդադար մտածում էին դրա իրագործման եղանակների ու միջոցների մասին, սակայն ոչ մի կերպ չէին կարող գտնել ճիշտ ուղին։ Դա նրանց ողբերգությունն էր, և ոչ հանցանքը, նրանց քաղաքական սահմանափակության արդյունքը։

Այդ ազատագրական շարժումն ահա վճռական դեր խաղաց Րաֆֆու կյանքում։ Շարժումն ազգայնական էր և ուներ միանգամայն որոշակի դասակարգային ու տնտեսական բովանդակություն։ Մեզ հետաքրքրող այդ հարցի մասին Լենինը գրել է հետևյալը.

«Ոչ միայն 1855, 1859, 1864, 1866, 1870, այլև 1877 թվի (ռուս-թյուրքական) և 1896—7 թվերի (Թյուրքիայի պատերազմները Հունաստանի հետ և հայկական ճուզումները)[1] պատերազմների ժամանակվա պատմական երևույթների հիմնական օբեկտիվ բովանդակությունը եղել են բուրժուական-ազգային շարժումները կամ տարբեր տեսակի ֆեոդալիզմից ազատագրվող բուրժուական հասարակության «ցնցումները»...

Ժողովրդական շարժումը պատերազմից շրջափվող գրեթե ամբողջ երկրներում այն ժամանակ եղել է ընդհանուր դեմոկրատական, այսինքն բուրժուա-դեմոկրատական բնույթ

---

1 Ընդգծումն իմն է, Ա. Ո

տնտեսական ու դասակարգային բովանդակության։ Միանգամայն բնական է, որ այլ հարց այն ժամանակ չէր կարելի և դնել, բացի այն հարցից, թե որ բուրժուազիայի հաջողությունը, ինչ կոմբինացիայի դեպքում, ռեակցիոն (բուրժուազիայի վերելքը՝ դանդաղեցնող ֆեոդալական-միապետական) ուժերից որի անհաջողության դեպքում խոստանում է ավելի լայն «ասպարեզ» ժամանակակից դեմոկրատիայի համար» (Լենին, հատոր XVIII, էջ 109—110)։

Լենինի այս դրույթը լույս է սփռում 70—90-ական թվականների հայկական ազգային շարժման օբեկտիվ բովանդակության վրա, և նրանով դիմված՝ կարելի է այդ շարժման զարգացման տարբեր էտապների բովանդակությունը ճիշտ ըմբռնել ու մեկնաբանել։ Մեխանիկական մոտեցումն այդ հարցում կորստաբեր է։

70—90-ական թվականների հայկական շարժումներն ուղղված էին ֆեոդալիզմի, գլխավորապես բյուրքական տիպի ֆեոդալիզմի դեմ, և այդ առումով պարունակում էին պրոգրեսիվ տարր։ Հետագայում, երբ պատմական բեմ է դուրս գալիս պրոլետարիատը իր դասակարգային ծրագրերով ու պայքարով, այն ժամանակ շարժումների օբեկտիվ բովանդակությունը և դասակարգերի փոխհարաբերությունը որոշակիորեն փոխվում է, և ազգային շարժումը բուրժուազիայի դրոշակի տակ առանում է խիստ ռեակցիոն բնույթ։ Բաֆֆու գործունեությունը համընկնում է հայկական ազգային շարժման առաջին շրջանին, երբ այն ուղղված էր ֆեոդալիզմի և նրա մնացորդների դեմ։ Ահա այդ բուրժուա-նացիոնալիստական շարժման ազդեցությամբ էլ վերջնականապես ձևակերպվեց Բաֆֆու քաղաքական հայացքները, և նա դարձավ Գր. Արծրունու լիբերալ-ազգայնական ուղղության արտահայտիչը Բաֆֆին ու Պատկանյանը 70—80 թվերի բուրժուա-նացիոնալիստական շարժման ամենաառաղանդավոր ու ցայտուն արտահայտիչներն են։ Այդ հանգամանքի բերմամբ էլ Բաֆֆու ստեղծագործության մեջ առաջացան մեծ փոփոխություններ, կարելի է ասել բեկում։ Դա հաստատում է և ին-

քը՝ Բաֆֆին։ Իր մի հոդվածում նա բնորոշում է սեփական ստեղծագործության մեջ կատարված բեկումը, որն արտահայտվել է կենցաղային վիպակներից՝ քաղաքական ծրագիր ունեցող վեպերին ու հրապարակախոսությանն անցնելուն։ «...Սկսվում է ռուս-թուրքական 77 թվի պատերազմը,— գրում է Բաֆֆին,—Տաճկաստանի հայերի թշվառ դրության վրա ուշադրություն են դարձնում Ռուսաց զինվորների արյունով գրվում են Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ և Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածները։ Խոստանում են թուրքաց Հայաստանում վերանորոգումներ մտցնել և հայերի համար մի լավ դրություն ստեղծել։ ...Բոլոր ինտելիգենտ հայերի մտքերն զբաղված են այն հարցով, թե ինչպես պետք է ստեղծել այդ լավ դրությունը։ Բոլորովին անբնական կլիներ, որ մտածողությունների այդ սաստիկ մաքառումների ժամանակ, ձգտումների այդ ջերմ շարժման ժամանակ և ցանկությունների այդ ուժեղ հոսանքի ժամանակ անտարբեր մնար ազգային բանաստեղծը։ ...Բանաստեղծը պետք է արձագանք տար ժողովրդի ձայնին, և նրա սրբազան ցանկությունները, նրա խորին զգացմունքները և նրա լացն ու արտասուքը պետք է նյութ առներ իր երգերի ու իր վեպերի։ Այդ ժամանակներում Դամատ Քաթիպան թողնում է իր Կրամպապուին, թողնում է մայրաքաղաքներում կրթված աղջիկներին ու երիտասարդներին և սկսում է երգել մշեցի մշակների դժբախտությունը։ Այդ ժամանակներում ալևոր Մերենցը մտնում է պատմության խորքը և հնության փոշիների միջից ի լույս է ածում «Թորոս Լևոնին», «Երկունքը» և «Թեոդորոս Ռշտունին»։ Այդ ժամանակներում Բաֆֆին թողնում է «Հարիմները», «Ոսկի աքլորները», «Ութսուն Միանձնուհիները» և գրում է «Ջալալեդդինը», «Խեները», «Դավիթ Բեկը», «Խամսայի Մելիքությունները», թարգմանում է «Ղարաբաղի Ասպետները» և ապա լույս ընծայում «Կայծերը»։ Այդ վեց դրքերը հայտնվում են մեկնումեկն տարիների ընթացքում, երբ Տաճկաստանի հայոց մտքերը ընդհանուր խմորման մեջ էին, երբ Տաճկաստանի հայերի վիճակն զբաղեցնում էր բոլորին» («Մշակ», № 148, 1889 թ.)։

Բաֆֆու այս ինքնաբնութագրման չի կարելի չհամաձայնել։

Նվ իրոք. կենցաղային վիպակներից ու պատմվածքներից Բաֆֆին անցավ քաղաքական ու ծրագրային վեպերին, որոնց մեջ իր բանաստեղծական ֆանտազիայի ուժով պատկերեց ազգայնական մարտիկների կերպարներ, գծեց «ազատագրության ուղին», տաճկական լծի տակ ճնշված ու կեղեքված հայ ժողովրդական զանգվածներին նա կոչեց զինված դիմադրության ու նկարագրեց այդպիսի դիմադրության օրինակներ։ Բաֆֆին ռոմանտիկ էր և իր գաղափարական ու գրական հերոսներին ստեղծեց երևակայության ուժով։ Ցուր չէ, որ նրա երբեմնի համախոհ Արծրունին բնութագրելով նրա ստեղծագործությունը, գրում էր, «...իսկ Բաֆֆիի գրվածքների գլխավոր նպատակը մի ձգտում է, մի տենդենցիա է՝ ներկայացնել այն կյանքը, որ չկա, բայց որը պետք է լիներ (հիշենք այստեղ «Նենի»-ի երազը), այն տիպերը, որոնք մեզանում դժբախտաբար չկան, բայց որոնց գոյությունը յանկալի է մեր մեջ» («Մշակ», № 221, 1878)։

Այն միջոցը, որ ցույց էր տալիս Բաֆֆին տաճկահայ եղբայրներին ազատագրելու համար, խախուտ էր, ավելի ճիշտ՝ նա ոչ մի լուրջ միջոց ցույց չէր տալիս։ Իր ծրագրային վեպերում («Ջալալեդդին», «Նենի», «Կայծեր»), ինչպես և դրանց հրապարակախոսական կոմենտարներում նա առաջարկում էր տաճկահայերին՝ զինված դիմադրություն ցույց տալ թյուրք ու քուրդ բռնադատիչներին, բայց Բաֆֆին չէր պատկերացնում և չէր կարող պատկերացնել, թե այդ դիմադրությունն ինչպե՞ս կվերջանա և ի՞նչ հետևանքներ կտա։ Նա և այդ շարժման մյուս գաղափարախոսները սկսեցին քարոզել և օրինականացնել պայքարի հայդուկային մեթոդը՝ ազգին հարստահարողների դեմ։ Վրեժ լուծել թշնամուց ի սեր վրիժառության՝ առանց կոնկրետ, պրակտիկ նպատակների, առանց հեռանկարների. այսպես էր «ազատագրության» այն ուղին, որ այն ժամանակ առաջարկում էին Բաֆֆին և մյուսները, ելնելով տաճկահայերի թշվառ վիճակից

Նրանց աչքում հայդուկը ճնշված ազգի բուռն ոգորքի ու գայրույթի ճշմարիտ արտահայտիչն էր, նա իդեալականացվում էր ու հայտարարվում հեղափոխական։ «Հայդուկի գործունեությունը հեղափոխական բնավորություն է ստանում այս կողմից,—գրել է Րաֆֆին «Կայծեր»-ի ննջադրած առաջաբանում,—որովհետև նա իր սրով պաշտպան է հանդիսանում նեղյալին և ուխտում է անգթաբար պատժել անիրավությունը։ Իր սիրելի հայրենիքը ազատված տեսնել տերունի ճնշումից, իր արյունակից եղբայրներին փրկել բարբարոս ձեռքից—ահա դրանք են նրա ցանկությունները։ Սրանց հասնելու համար նա չէ խնայում ամեն սարսափելի միջոցներ։ Մեզանում դեռ գրականությունն ուշադրություն չի դարձրել այս տեսակի երևույթների վրա... Հայդուկը և ավազակը չեն ճանաչվել մեզանում որպես պատմական անձնավորություններ, որպես հանկարծ ցայտող կայծեր ժողովրդի հանգած քաջագնական կյանքից» («Արաքս», 1992, գիրք I, էջ 91)։

Րաֆֆու այս խոսքերի ու դրույթների մեջ են ամփոփված ազգային շարժման բուն էությունն ու բնույթը, նրա գաղափարական ու քաղաքական հիմքերը։ Իր քաղաքական վնասների մեջ Րաֆֆին պատկերել է հայ հայդուկների, օժտել է դրական գծերով ու իդեալականացրել է նրանց կերպարները։ Նվ երբ որոշ ընկերներ, մակերեսորեն մոտենալով հարցին, Րաֆֆու ռոմանտիկ ու հայդուկային կերպարների մեջ տեսնում են ազգային-ազատագրական պայքարի իսկական հերոսներ և այդ վեպերի հեղինակին էլ հռչակում են ազգային-ազատագրական-ռևոլուցիոն շարժման ուղիներ նշող գաղափարախոս ու մարտիկ, խիստ սխալվում են։ Այս խնդրում նրանք կանգնում են ազգայնական քննադատության դիրքերի վրա։ Ջախտք է Րաֆֆու բարի, սուբեկտիվ ցանկությունները նույնացնել նրա հասարակական քաղաքական հայացքների օբեկտիվ բնույթի ու նշանակության հետ։ Րաֆֆին մեծ է որպես արվեստագետ, գրող, խոսքի վարպետ, բայց ոչ որպես ազգային ազատագրության դեղատոմսերի հեղինակ։ Որպես այդպիսին, նա չափազանց փոքր

է. մանր։ Բաֆֆին իր ժամանակին չդտնելով «բրիշ ելք տաճկահայերի ազատագրության համար, որին նա անկեղծորեն ձգտում էր, դիմում է պայքարի հայդուկային ու ավազակային մեթոդների իդեալականացմանը, որը դուրկ էր հեռանկարներից և, որպես այդպիսին, ազատագրության ճիշտ ուղի լինել չէր կարող։ Մի՞թե դա կարելի է մեծ արժանիք համարել մի գրողի, առավել ևս քաղաքական դործչի համար։

Հայկական ազգային շարժման գաղափարախոսության մյուս բնորոշ կողմն էլ այն էր, որ նա կտրված էր Ռուսաստանի ներքին սոցիալ-ազատագրական շարժումից։ Ազգային շարժման իդեոլոգները գնալով ավելի թշնամական դիրք բռնեցին դեպի ռուսական աճող ռևոլյուցիոն շարժումը և դարձան բացարձակորեն կոնտրռևոլյուցիոն. խոսքն այստեղ դաշնակցության մասին է։ Ինքնակալության ու կապիտալիզմի դեմ պայքարող ուժերի բաժան-բաժան լինելը ձեռնտու էր ցարիզմին։ Եվ այդ տենդենցը նկատելի է դեռևս Բաֆֆու ժամանակ։ Այս հարցում Բաֆֆին, իհարկե, «հանցավոր» չէ. այդ ժամանակ բանվորական շարժումը նոր էր կազմակերպվում և պայքարն ուղղված էր ֆեոդալական ուժերի դեմ։ Սակայն այդ գաղափարախոսության սաղմերը անկասկած կային Բաֆֆու մոտ (իսկ Արծրունու մոտ ավելի շատ. սա ընդհանրապես ռուս միապետության դեմ ռևոլյուցիոն պայքար մղելուն թշնամի էր)։ Հայերի դեմ սկսված ժանդարմական հալածանքների ու ճնշումների շրջանում (հայ դպրոցների փակումը 1883 թվին) Բաֆֆին մի մասնավոր նամակում գրում է, որ տաճկահայերի օգտին կատարված իրենց գործունեությունը բացահայտ էր և կառավարությունն այդ գիտեր։

«Թե ես, թե իմ համախոհները մինչև այսօր Ռուսաց կառավարության դեմ ոչինչ հանցավոր նպատակներ չենք ունեցել և երբեք ռուս նիհիլիստների[1] հետ հարաբերություններ

---

[1] Լիբերալների բնորոշ ու ծանոթ արտահայտությունը. նրանք այսպես էին անվանում ռուս ռևոլյուցիոն դեմոկրատներին։

չենք ունեցել։ Մեր գործունեության նպատակը, մեր ցանկությունները խիստ համեստ են եղել, և մեր ազգային պահանջների սահմանից այն կողմ չեն անցել... Ես ինչով եմ մեղավոր, որ կառավարության տրամադրությունը հայկական հարցի վերաբերմամբ փոխվել է» («Արարատ», 1913 թ., № 6—7)։

Սա հայ ազգային շարժման ծրագրային դրույթներից, գեկավար սկզբունքներից էր։ Մեր ասածից պարզ է դառնում, թե ինչու Շահումյանը Բաֆֆուն դասում էր բուրժուական լիբերալիզմի ու նացիոնալիզմի այուների կողքին և ինչու էր մերժում նրա քաղաքական իդեալները և ազգայնական ոսմանտիզմը։ Այնուամենայնիվ Բաֆֆին հայ բուրժուազիայի շահագրգռված գաղափարախոսը չէր. Արծրունու և Բաֆֆու միջև, չնայած այն ժամանակվա նրանց ընդհանուր դիրքերին, խոշոր տարբերություն կար, որը կառավարական հնշումներից հետո ավելի խորացավ ու հանգեց պառակտման։ Բաֆֆին վերջին տարիներին դժտվեց Արծրունու հետ, որն ամբողջովին ցարական կառավարության կողմնակից էր, հեռացավ «Մշակ»-ից և սկսեց տպագրվել ուրիշ հայ թերթերում։ Բացառված չէ, որ այդ դժտությունը սկզբունքային տարաձայնությունների հետևանք էր։ Բաֆֆին անկեղծորեն, անշահախնդրաբար էր սիրում իր ժողովրդին և չէր կարող անտարբերությամբ նայել ցարական կառավարության բարբարոս արարքներին, հայ ժողովրդի ու նրա ազգային-կուլտուրական հաստատությունների դեմ ուղղված հալածանքներին։ «Հայկական հարցի վերաբերմամբ կառավարության տրամադրության փոփոխությամբ» անկասկած փոխվել էր և Բաֆֆու վերաբերմունքը ցարական կառավարության նկատմամբ։ Փոփոխված վերաբերմունքի հետևանք կարելի է համարել «Սամվել» պատմավեպը, որտեղ, ինչպես վերը նշեցինք, քողարկված ձևով շոշափված է ցարական կառավարության՝ հայերի դեմ մղած հալածանքների հարցը։

Բաֆֆին իհարկե սրանով ռևոլուցիոներ չէր դառնում, բայց և այնպես այդ տարտամ դժգոհությունը բնորոշ է հայրենասեր վիպասանի համար, նոր դիծ է մտցնում նրա քա-

ղաքացիական կերպարանքի մեջ, և դրանով էլ նա տարբերվում է նույն ուղղության մյուս ներկայացուցիչներից։

Բացի դրանից՝ Րաֆֆին մեծ գրող էր, գեղարվեստական խոսքի մեծ վարպետ։ Նրա քաղաքական վեպերն անգամ, բացի հիմնական գաղափարից, հագեցած են կենդանի վառ տեսարաններով, կերպարներով ու զգացումներով, որոնք անհամեմատ բարձր են Արծրունու հրապարակախոսական մերկ մարզանքներից։ Ես արդեն չեմ խոսում կենցաղային հիանալի վիպակների ու խոր հայրենասիրական պատմավեպերի մասին, որոնք ամենևին չի կարելի նույնացնել նրա գաղափարա-քաղաքական դիրքի հետ ու հրաժարվել դրանցից, ինչպես անում էին որոշ ընկերներ։

Անհրաժեշտ է ավելացնել նաև այն խիստ մեծ դերը, որ կատարել է Րաֆֆին հայ գրական կուլտուրայի ու լեզվի զարգացման գործում։ Վիպասան Րաֆֆին անհամեմատ բարձր է քաղաքագետ Րաֆֆուց, և միանգամայն սխալ կլինի նրա ստեղծագործության բոլոր բարդ հարցերը հանգեցնել միայն նրա քաղաքական դիրքին ու, ելնելով դրանից, մերժել ողջ Րաֆֆին։ Րաֆֆու ստեղծագործությունը, գրական ժառանգությունը հարուստ է, բարդ ու հակասական. ավելի լրջորեն պետք է վերաբերվել դրան։ Այդպիսի վերաբերմունքի օրինակ է տվել Շահումյանը։ Նա մերժում ու քննադատում է Րաֆֆու գաղափարա-քաղաքական դիրքը, բայց ընդունում է նրա, ինչպես և Շիրվանզադեի, մեծ տաղանդը և յանկուցյուն հայտնում, որ «հայոց հողը թող ավելի շատ ծնի այդպիսի տաղանդներ»։ (Ճառ Աղայանի հոբելյանի առթիվ)։ Իսկ Գորկու խմբագրությամբ լույս տեսած «Հայ գրականության ժողովածուին» նվիրված հոդվածում Շահումյանը, բնորոշելով հայ հասարակության վերաբերմունքը Րաֆֆուն, Պատկանյանին, Սունդուկյանին և այլոց, գրում է.

«Հայ հասարակության սիրված ու ճանաչված դրամատուրգը Սունդուկյանն է, վիպասանները՝ Րաֆֆին, Շիրվանզադեն, բանաստեղծները՝ Պատկանյան, Շահ-Ազիզ, Թումանյան և այլն։ Հետևապես հենց դրանք էլ պետք է ներ-

կայացվեն ուս ընթերցողին: «Чем богаты, тем и рады ...» (Շահումյան, Երկեր, հ. II, էջ 79): Իսկ նույն հոդվածում, մի այլ տեղ, թվելով ժողովածուի մեջ մտած նյութերը՝ Սունդուկյանի «Պեպոն», Շիրվանզադեի «Ջար ոդին» և Բաֆֆու «Ջալալեդդինը»՝ նկատում է. «Ընդհանրապես մեզ թվում է, վատ չի արված վիպական և բեմական գրվածքների ընտրությունը: Բայց այդ չենք կարող ասել բանաստեղծությունների մասին: Լավ չեն, մեր կարծիքով, և նրանց թարգմանությունները, չնայած որ այդ թարգմանությունների մեծ մասը արել են չափածո խոսքի այնպիսի հմուտ վարպետներ, որպիսիք են Բալմոնտը, Բրյուսովը և այլն»:

Ի՞նչ է հետևում Շահումյանի այս դրույթից: Նա չէր «վախենում» հաջող ընտրություն անվանել նույնիսկ «Ջալալեդդին»-ի նման վիպակը (որը մի քանի վայ քննադատներ մինչև հիմա էլ համարում են նացիոնալիստական և մերժում են այն որպես այդպիսին՝ ոչ մի արժեքավոր ու դրական բան չգտնելով դրա մեջ, թեկուզ գեղարվեստական տեսակետից) և անհրաժեշտ ու տեղին էր համարում Գորկու ժողովածուի մեջ մտցնելը: Մերժելով Բաֆֆու գաղափարա-քաղաքական դիրքը՝ Շահումյանը համարում էր նրան հայ խոշոր գրողներից և խոսքի վարպետներից մեկը, հենց դրա համար էլ գնահատում էր նրան: Սրանում է պատճառը: Նրան խորթ էր նեղ մոտեցումը գեղարվեստական ստեղծագործությանը, նա մեխանիկորեն ու մակերեսայնորեն չէր նույնացնում գրողի ստեղծագործությունը նրա քաղաքական ծրագրի հետ: Շահումյանի վերաբերմունքը Բաֆֆուն շատ կողմերով հիշեցնում է Լենինի վերաբերմունքը Տուրգենևին:

Նվա՛ մի դիտողություն, որը վերաբերում է Բաֆֆու նացիոնալիզմին: Նրան, որպես հայերի վերջնականապես ազգ ձևավորվելու շրջանի ազգային շարժման գաղափարախոսի, իրոք հատուկ էր նացիոնալիզմը: Նրա բուռն հայրենասիրության մեջ կա ռեակցիոն նացիոնալիզմի մեծ տարր: Բայց, ինչպես ասացինք, նրա գեղարվեստական գործերը, նույնիսկ ըստ տրադիցիայի ազգայնական համարվողները, լի

են հակասություններով և բազմաթիվ դրական կողմերով, այնպես որ չի կարելի բոլոր հարցերը հանգեցնել ռեակցիոն նացիոնալիզմին՝ չնկատելով հեղինակի սերը դեպի իր ժողովուրդը։ Բաֆֆին ճիշտ է հասկացել հայ ժողովրդի խոր հայրենասիրությունը, երբ դեռ 1867 թվին գրել է. «Մի բան կա, որ կարող է հոգով, մարքով ու սրտով համախմբել բոլոր հայերին աշխարհի բոլոր կողմերից, դա ազգի սերն է» («Մալբի», էջ 42)։

Չքննարկելով և չուզենալով քննարկել այս բարդ հանդամանքները՝ որոշ ընկերներ սխալմամբ ամբողջովին մերժում էին Բաֆֆու գեղարվեստական ժառանգությունը։

Ըստ իս սրանով արդարանում է այն փաստը, որ այնքան հանգամանորեն ես չանացի լուսաբանել՝ Բաֆֆու հարցը, նրա գաղափարա-քաղաքական դիրքն ու գեղարվեստական ժառանգությունը։ Այս դրույթները հետաքրքրական են և նրանով, որ վերաբերում են և մյուս հայ կլասիկներին, նախ և առաջ բանաստեղծ Ռ. Պատկանյանին։ Նրանք սկզբունքային նշանակություն ունեն ամբողջ հայ գրականության պատմության ուսումնասիրության համար։ Ռափայել Պատկանյանն էլ կրակոցի տակ էր, արժանացել է նույն բախտին, ինչ Բաֆֆին։ Հարցը մասնավորացնելով՝ պետք է ասել, որ ճիշտ է, Պատկանյանին էլ Բաֆֆու նման, որպես հայ բուրժուական ազգային շարժման դիրքերն անցած բանաստեղծի՝ հատուկ էին նացիոնալիստական հայացքներ։ Սակայն Պատկանյանի հարուստ ժառանգությունը նախ՝ չի կարելի սահմանափակել այն երգերով, որոնց մեջ արտահայտված են նրա նացիոնալիստական հայացքները, քանի որ նա ունի բազմաթիվ տաղանդավոր պատմվածքներ, ժողովրդական կյանքից առնված բանաստեղծություններ ու երգիծական էջեր։ Երկրորդ՝ պետք է վերանայել այն բանաստեղծությունները, որոնք տրադիցիայով ազգայնական են համարվում ու այդ պատճառով՝ մերժվում։ Մինչդեռ դրանցից շատերը ոչ մի ընդհանրություն չունեն նացիոնալիզմի հետ, այլ նախ և առաջ արտահայտում են բանաստեղծի հայրենասի-

թուքյունը, խոհերն ու կսկիծը իր հայրենիքի ծանր վիճակի մասին։ Օրինակի համար՝ հիշենք «Արաքսի արտասուքը», որ այնքան ժողովրդականացած է հայ ընթերցողների մեջ։ Գորկու կազմած ժողովածուի մասին դրած հոդվածում Շահումյանը, ինչպես տեսանք, Պատկանյանին համարում է հայ հասարակության «սիրված ու ճանաչված» բանաստեղծներից մեկը և ավելացնում է. «Շատ ավելի լավ ընտրություն կարելի էր անել մանավորապես Հովհ. Թումանյանից և Պատկանյանից, որոնց բանաստեղծությունները, բացի այդ, շատ են կորցրել թարգմանությունների մեջ, մանավանդ «Արաքսի արտասուքը»։ Ականավոր բոլշևիկ և հայ նացիոնալիզմի դեմ անողոքաբար մարտնչող Ստեփան Շահումյանը, որին քաջ հայտնի էին Պատկանյանի հայացքները, այնուամենայնիվ անհրաժեշտ է համարել դրական կարծիք հայտնել նրա այդ նշանավոր բանաստեղծության մասին՝ ոչ մի պախարակելի բան չդտնելով դրա մեջ։ Ընդհակառակը՝ ցանկացել է, որ դա լավ թարգմանվի։ Այս փաստը խիստ պերճախոս է։ Վատուց չէ, որ կային Պատկանյանին «նացիոնալիզմի ու հայդուկիզմի» երդիչ համարողներ, որոնք չէին հրատարակում նրա երկերը, դասագրքերից հանում էին նրա բանաստեղծությունները, մանավորապես «Արաքսի արտասուքը»։ Իրականում այդ բանաստեղծությունը հայդուկային երդ կարող է համարել բթամիտ ոգետը, եթե ոչ ավելին, որը չի ընդունում, թե կլասիկները կարող են հայրենասիրական զգացմունքներ ունենալ։

Արաքսն այստեղ Հայաստանի սիմվոլն է։ Արաքսի արտասուքը բազմաչարչար Հայաստանի արցունքներն են։ Զանազան հարցերով դիմելով Արաքսին՝ գրուցակիցն ասում է.

Ինչո՞ւ արցունք ցայտում են
Քու սեղ, հըպարտ աչերից,
Ինչո՞ւ արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից։

Արաքսը բացատրում է իր վշտի պատճառը և ի վերջո վճռականապես հայտարարում.

Մինչ իմ որդիք, ո՛վ գիտե,
Ծարավ, նոքին, անտերունչ
Օտար աշխար հածում են
Թուլլ ոտքերով կիսաշունչ...
. . . . . .
Քանի որ իմ զավակունք
Այսպես կու մնան պանդուխտ՝
Ինձ միշտ սգավոր կտեսնեք,
Այս է անխոտոր իմ սուրբ ուխտ...

Էլ չխոսեց Արաքսը,
Հոլձանք տվեց ահագին,
Օղակ օղակ օձի պես
Առաջ սողաց մոլեգին։

Այս տաղանդավոր բանաստեղծության մեջ, ինչպես տեսնում է ընթերցողը, այնպիսի դատապարտելի բան չկա, որը վիրավորեր գրական «քննադատների» «ինտերնացիոնալիստական» դգացումները։ Մանրադիտակով զինված մարդիկ այս բանաստեղծության մեջ կարող են, իհարկե, նացիոնալիզմի տարրեր նկատել. բայց ամեն մի բարեխիղճ ընթերցող կնկատի, որ բանաստեղծության հիմնահարը կսկիծն է, սերը ու ողբը Հայրենի երկրի ու ժողովրդի անտանելի դրության մասին և ատելությունը դեպի բշնամիները։ Ինչպե՞ս կարելի է այս ու նման բանաստեղծությունները հայտարարել նացիոնալիստական-հայդուկային, անվանարկել դրանք և ոչ մի դրական ու արժեքավոր բան չգտնել նրանց մեջ։ Պետք է վերջապես հասկանալ, որ Պատկանյանի, Րաֆֆու և առաջ ճնշված ժողովրդի մյուս կլասիկների հայրենասիրական զգացմունքը և օտարերկրյա լծին դիմադրելու ձգտումը հանդես էին գալիս նացիոնալիզմի ձևով, և ոչ մի սարսափելի բան չկա դրա մեջ։ «Ազգի ինքնորոշվելու իրավունքի մասին» հոդվածում Լենինը ասում է. «Ճնշված ազգի ամեն մի բուրժուական նացիոնալիզմի մեջ կա ընդհանուր դեմոկրատական բովանդակություն ճնշման դեմ և այդ բովանդակությունն էլ մենք անպայման պաշտպանում ենք՝ խստորեն առանձնացնելով իր ազդային բացառիկու-

Սյան ձգտումը, պայքարելով հրեային ճնշելու լեհ բուրժուազի ձգտման դեմ և այլն, և. այլն (հ. XVII, էջ 440)։

Նշելով լենինյան այս դրույթից՝ մենք կարող ենք ճիշտ լուծել մեզ հետաքրքրող հարցը։ Պատկանյանի, Րաֆֆու և մյուս հայ կլասիկների նացիոնալիզմի մեջ արտահայտված են ոչ միայն ռեակցիոն հայացքներ, իրենց ազգային բացառիկության ձգտում, այլ ժողովուրդների վրա առավելություն ձեռք բերելու ձգտում և այլն, այլև այդ նացիոնալիզմի մեջ արտահայտված է՝ «ընդհանուր դեմոկրատական բովանդակություն» ընդդեմ իր ժողովրդի ճնշման, և այդ բովանդակությունը մենք պետք է գնահատենք որպես դրական երևույթ, որպես ժողովրդական զանգվածների ազդեցության արտացոլում՝ նրանց ստեղծագործության մեջ։ Դա իհարկե ոչ մի հիմք չի տալիս հայտարարելու Րաֆֆուն ու Պատկանյանին ռևոլուցիոն դեմոկրատներ, ազգային ազատագրական դաղափարների ջահակիրներ, ինչպես գրել են ոմանք։ Սա նշանակում է միայն, որ պետք է տարբերել նրանց ստեղծագործության դրական ու բացասական կողմերը, քննադատաբար մոտենալ նրանց ժառանգությանը։ Ահա թե ինչը չեն հասկանում կամ չեն ուզում հասկանալ մի քանի վայ քննադատներ ու պատմաբաններ։

IV

Մյուս հայ գրողներից Շահումյանը ավելի հանգամանորեն խոսում է Ղազարոս Աղայանի մասին։ Բանաստեղծ, արձակագիր, հրապարակախոս ու մանկավարժ Աղայանը հայ դեմոկրատական ինտելիգենցիայի փայլուն ներկայացուցիչներից մեկն է։ Դուրս գալով ժողովրդի ծոցից՝ Աղայանն իր բազմազան ընդունակությունների շնորհիվ դառնում է, Թումանյանի ու Իսահակյանի հետ, հայ ժողովրդի սիրված գրողներից ու հասարակական գործիչ-մանկավարժներից մեկը։ Նա նախամարքսիստական հայ ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչներից է։ Աղայանը ռևոլուցիոներ չէր,

բայց դեմոկրատ էր, ժողովրդասեր ու հայրենասեր։ Շահումյանը Աղայանի դրական-հասարակական գործունեության 40-ամյակի առիթով գրած հոբելյանական ճառում բարձր գնահատելով նրա անձնական բարեմասնությունները, նրա մեծ ծառայությունը լուսավորության տարածելու գործում՝ հակադրում է նրան հայ բուրժուական ինտելիգենցիային։ Այդ ճառի սկզբում Շահումյանն ասում է.

«Ես ողջունում եմ ձեզ այն փոքրամասնության անունից, որը հնարավորություն է ունեցել ծանոթանալու հայկական կյանքի ու դրականության հետ և այսօր գոնե քիչ թե շատ գիտե թե ո՞վ է, ի՞նչ մարդ է և ի՞նչ տեսակ գրող է Ղազարոս Աղայանը»։ Ապա գնահատելով հոբելյանի հասարակա-քաղաքական մեծ նշանակությունը Աղայանի կյանքում՝ այնուամենայնիվ Շահումյանը նկատում է, որ հոբելյանում ներկա չէ այն դեմոկրատական սերունդը, որը կրթվել է Աղայանի գործերով ու կազմած դասագրքերով. «Ինչո՞ւ այս րոպեիս նա չկա այստեղ, ինչո՞ւ նա չի տոնում ձեր հոբելյանը, այլ ինչ-որ «մի խումբ հարգողներ», որոնցից շատերը ձեր գրվածքների երեսն էլ չեն տեսել երևի, որոնք գուցե նույնիսկ հայերեն չգիտեն բոլորովին։ Ի՞նչ կապ կա, ասացեք խնդրեմ (կամ ավելի ճիշտ է ասել, ինչու պետք է լինի այդ կապը) իր ծագումով, տաղանդով ու անցյալով դեմոկրատ Աղայանի և այդ բուրժուական ինտելիգենցիայի մեջ... Այս հանդեսը, երևի ուզում եք, մի խոր հասարակական տրադիզմ է պարունակում իր մեջ»։

Շահումյանն իրեն հատուկ հստակությամբ բացահայտել է դեմոկրատական ինտելիգենցիայի հակասական ու ողբերգական վիճակը բուրժուական հասարակության մեջ։

Մեծ է Աղայանի արժանիքը հայ դրականության զարգացման ու լուսավորության տարածման գործում։ Նա կարկառուն կուլտուրարեգեր էր։ Նրա ստեղծագործությունն ամբողջովին համակված է դեմոկրատական ոգով ու իր արմատներով կապված է ժողովրդին ու նրա ստեղծագործությանը։

Շահումյանը բնութագրելով Աղայանին որպես կուլտուրա-տրեգերյան տիպի գործիչ՝ մատնանշում է, որ հոբելյանական հակիրճ ճառում հնարավոր չէ լուսաբանել ու բնութագրել նրա գործունեության տարբեր կողմերը. «Մենք պիտենք միայն, որ դուք շնորհքով գրող եք եղել իբրև բանաստեղծ, հեքիաթաբան ու վիպասան, օրինակելի մանկավարժ եք եղել (հայերիս մեջ, իհարկե, օրինակելի), իբրև դասագրքեր կազմող, ուսուցիչ, տեսուչ և այլն։ Գիտենք, որ ձեր մաքուր բարոյական կյանքով լավ օրինակ եք եղել ձեր ընկերներին ու աշակերտների համար, և ամենքի մեջ, ում հետ շփվել եք, զարթեցրել եք ամենալավ զգացմունքները, ներշնչել եք ամենամաքուր ձգտումները»։ Այսպես բարձր էր գնահատում Աղայանին երիտասարդ Շահումյանը, և այդ գնահատականին չի կարելի չհամաձայնել։

Բայց սա հարցի մեկ կողմն է։ Շահումյանը խիստ քննադատաբար է ենթարկում Աղայանի և, ընդհանրապես, հայ ինտելիգենցիայի քաղաքական չափավոր դիրքը։ «Մենք հարգում ենք ձեզ, երբ քննում ենք ձեր կյանքը հայկական իրականության ֆոնի վրա, երբ համեմատում ենք ձեզ մեր ժամանակակից «հայկական գործիչների» հետ»,—ասում էր երիտասարդ ռևոլուցիոները Աղայանին։

Բուրժուական ինտելիգենցիան ամեն մի քայլափոխին ցույց է տալիս իր կեղծիքը, ապիրատությունն ու սարակտությունը։ Շահումյանն Աղայանին առանձնացնում է այդ ինտելիգենցիայից, բայց ռևոլուցիոներ չի համարում։ Չնայած իր բացառիկ տաղանդին՝ Աղայանը չէր կարողանում հասկանալ իր ժամանակի հիմնական պահանջները և մինչև վերջին շունչը չնվիրվեց այդ պահանջների կատարմանը։ «Այդ պետք է բացատրել, երևի, բացի հասարակապիտական պատրաստականության բացակայությունից, կամ պակասությունից, նաև ձեր տաղանդի բնավորությամբ, ձեր տեմպերամենտով։ Դուք ավելի զգացմունքի մարդ եք, քան մտքի, ավելի բանաստեղծ եք, քան հրապարակախոս ու հասարակական գործիչ»։ «Դուք էլ, իհարկե, կռվող չեք եղել, պ. Աղա-

յան։ Դուք ապրել եք Ռուսաստանում, հպատակ եք եղել ամենավայրենի բռնակալություններից մեկին և փոխանակ բողոքելու, քաղաքական-հեղափոխական կռվին նվիրելու ձեր ուժերը, ձեր տաղանդը, դուք հայկական սպեցիֆիկ «ազգասիրությամբ» եք պարապել ձեր ամբողջ կյանքում։ Այդ պատճառով մենք հարգում ենք ձեզ, որպես անձնավորության, բայց որպես հասարակական գործիչ՝ դուք օրինակ չեք մեզ համար»։

Այս պլանով է ընթանում Աղայանի և այլ գործիչների քննադատությունը։ Երբ խոսքը գալիս է քաղաքականության՝ Շահումյանը մեծ նշանակություն չի տալիս կուլտուր-տրեգերության։ Կուլտ-կրթական աշխատանքը չի կարող ցանկալի արդյունքներ տալ, եթե չդնված մնա կենտրոնական հարցը՝ քաղաքական ազատության հարցը։ «Մի երկրում, որտեղ չկա քաղաքական ազատություն, չկա ազատ խոսք, մամուլ, որտեղ օրենքի տեղ բռնություն ու կամայականություն է տիրում,—այնտեղ կուլտուրական գործունեությունն այն չինությունն է, որ կառուցվում է ավազի վրա»։ Եվ իբրև օրինակ Շահումյանը հիշում է հայկական դպրոցների վիճակը. «Ոչ, այն, ինչ որ դուք և ձեր ընկերները մեծ զոհաբերություններով կարողացել եք անել երկար տարիների ընթացքում, մի հարվածով, դրչի մի շարժումով, վայրենի անգթությամբ ոչնչացրեց լուսավորության և քաղաքակրթության թշնամին»։

Նկատելով ռևոլուցիոն աշխարհայացքից՝ Շահումյանը կոչ է անում դրչի ու կուլտուրայի գործիչներին նվիրվել քաղաքական պայքարին։ Միայն քաղաքական ազատության պայմաններում կարելի է ծավալել իսկական կուլտ-կրթական ու դրական գործունեություն։ Քննադատելով Աղայանին նրա չափավորության համար՝ Շահումյանը նրա օրինակով քննադատում է այն հայ ինտելիգենտներին, որոնք հեռու են մնում ցարական ինքնակալության դեմ մղվող քաղաքական պայքարից։ Շահումյանի ճառի ամեն մի տողը տոգորված է խոր կրքով Հայ ժողովրդին ու երիտասարդությանը պետք

է ռևոլյուցիոն դատախարակությունն տալ։ Աղայանն ու նրա ընկերները, չնայած իրենց մատուցած ծառայություններին, չեն կարող նոր սերնդի համար օրինակ լինել. վերջինս մարքսիստական աշխարհայացքի կրողն է ու պրոլետարական ռևոլյուցիայի չերմ կողմնակից. «Նվ այսօր, ձեր այս հանդիսավոր տոնին, ցավում ենք, որ չենք կարող խոստանալ ձեզ, որ կշարունակենք ձեր սկսած գործը, սրբությամբ կպահենք ձեր ավանդը և այլն... մեր ճանապարհները տարբեր են»,—հայտարարում է հայ երիտասարդության ռևոլյուցիոն սերնդի ներկայացուցիչը։

Երիտասարդ մարքսիստի այս խոսքերը համակված են պատմական իմաստով։ Հայ դեմոկրատական ինտելիգենցիայի մեծ մասը պրոլետարական ռևոլյուցիայի ուղիով չգնաց, կամ նվիրվեց կուլտ-կրթական գործունեության, կամ ընկավ բուրժուա-նացիոնալիստական պարտիաների ազդեցության տակ ու դարձավ նրանց գործիքը։ Շահումյանի ճառը նրա քաղաքական ու քննադատական հասունության արգասիքն է։ Այդ ճառի մեջ նա քաղաքական ու գրական բազմաթիվ կարևոր հարցեր է դրել։ Երիտասարդ Շահումյանը ճիշտ է գնահատել Աղայանին՝ բնորոշելով որպես դեմոկրատ գրող։ Աղայանի կյանքի ու գործունեության նոր հետազոտությունները լիովին հաստատում են այդ գնահատականի ճշտությունը։

Աղայանից առավել խիստ խոսք է ասում Շահումյանը արձակագիր Վրթանես Փափազյանի մասին։ Ճիշտ է, այդ խոսքը դերազանցապես վերաբերում է Փափազյանի պատմական հայացքների քննադատությանը, բայց և այնպես, հենց այդ հոդվածում նշվում է այն փաստը, որ Փափազյանը դեմոկրատ գրող է և իր պատմական բրոշյուրների մեջ հակասության մեջ է ընկնում իր դեմոկրատական հայացքների հետ, հանդես գալով որպես տրադիցիոն պատմագրության արտահայտիչ։ Եվ հենց դրա համար էլ նա արժանանում է Շահումյանի խիստ որակումներին։

Բացահայտելով «Պատմության դրվագներում» տեղ

գտած հակասությունները, Շահումյանը մատնանշում է, որ դրանք արհեստական են, շինծու։ «Շինծու ոչ այն մտքով, թե պ. Փափազյանը գիտակցաբար կեղծում է, իրեն ձևացնում է ժողովրդի բարեկամ, և իրոք բարեկամ չէ։ Ոչ, այլ այն մըտքով, որ այդ տողերը հակասում են նրա գրածների ընդհանուր բովանդակությանը և բնավորությանը, չեն սերվում այն պատմական մտածողության հետ, որի ազդեցության տակ, դուցե հակառակ իր ցանկության, գտնվում է ամբողջովին պ. Փափազյանը»։

Փափազյանի պատմական բրոշյուրների մեջ եղած այդ հակասությունը, դեմոկրատիզմի արատահայտությունները մարքսիստ քննադատը կապում է 1905 թվի ռևոլուցիայի ազդեցության հետ։ «Պետք է խոստովանել սակայն, որ Փափազյանի աշխարհայացքի մեջ մի որոշ անհարթություն, մի որոշ մեղմ, համեմատաբար դեպ, կա,—գրում է այդ առթիվ Շահումյանը։ Երբ կարդում եք Ն. Բուխչյանի սրանից 10 տարի առաջ գրած պատմական հեքիաթները, դուք տեսնում եք, որ նրա մեջ չկան կասկածներ, հակասություններ։ Նա ամբողջ հոգով ձուլվում է իր սիրելի «Մեծ Ներսեսի», հայոց ազգի այդ «պահապան հրեշտակի» հոգու հետ։ Բայց պ. Փափազյանը գրում է 1905—6 թվականների դեպքերից հետո, և զարմանալի չէ, որ մի որոշ, թերևս շատ փոքրիկ հետք թողել են այդ դեպքերը նրա հոգում։ Այդ դեպքերը մեռելներին անգամ պետք է ցնցեին ու սթափեցնեին գերեզմանների մեջ...»։ Այսպիսի հարցադրումը մեթոդոլոգիական խոշոր նշանակություն ունի և կօգնի հասկանալու համար հայ գրականության մեջ և առանձին գրողների մոտ արտահայտվող դեմոկրատական տրամադրությունների պատճառները, հիմքերը։ Մի այլ տեղ, դարձյալ անդրադառնալով Փափազյանի հակասություններին՝ քննադատն ասում է, «Հանկարծ և անսպասելի կերպով պ. Փափազյանի մեջ ներքնոսը ապրստամբում է Էրիստոնյայի դեմ, տարակուսանքի մեջ դնելով ընթերցողներին։ Բայց պ. Փափազյանի տողերը հեթանոսությանը նվիրված՝ այնքան դեղեցիկ են ինքնըստինքյան, ան-

կախ նրանց ծնեցրած տարակուսանքներից և թյուրիմացություններից, որ մենք թույլ ենք տալիս մեզ ամբողջովին առաջ բերել դրանք»:

Այդ հատվածը, որ մեջ է բերում Շահումյանը, ցույց է տալիս քննադատի էսթետիկական բարձր ճաշակը, թե ինչպես նա կարողանում է տարբերել լավը, դեղեցիկը, զգալ այդ բոլորը և իր զգացածը հաղորդել ընթերցողներին, բարձր գնահատել խոսքի, արվեստի վարպետությունը, կատարելությունը: Ամփոփելով իր տպավորությունները այդ հատվածի մասին՝ Շահումյանը գրում է.

«Խոստովանում ենք, այդ տողերը՝ առանձին վերցրած՝ մեծ հաճույք ու հիացմունք են առաջացնում մեր մեջ: Այսքան գեղեցիկ էջեր շատ քիչ են պատահում մեր գրականության մեջ: Մարդ մի րոպե տրամադրվում է շատ բան նեերելու պ. Փափազյանին: Նրա մեջ ապրում է, ըստ երևույթին, առողջ, գեղարվեստագետ, հելլենական, էվրիմոնիատական ոգին, որ երբեմն ըմբոստանում է նույն Փափազյանի մեջ ապրող, թող ների մեզ այս կոպիտ խոսքը՝ տիրացուի դեմ: Թեև ավա՜ղ, հաղթողը, իշխողը, տիրապետողը այդ անիրավ տիրացուն է»:

Քննադատի այս գնահատականը անկասկած վերաբերում է Փափազյանի «պատմական» բրոշյուրներին, և ոչ նրա ստեղծագործությանն ընդհանրապես: Վերջիններիս մասին քննադատի հոդվածում կան առանձին, բայց արժեքավոր հիշատակումներ: Նա ցավով է նշում, որ Փափազյանը «թողել է գեղեցիկ գրականությունը և «պատմաբան դառել»՝ դրսևորելով իր «սահմանափակ ու պրիմիտիվ» աշխարհայացքը, մանավանդ իր պատմահայեցողությունը:

Քննադատը դառը խոսքեր է ասում «Հայտնի անուն հանած գրագանագետի» մասին՝ նման պատմական բրոշյուրներ գրելու առիթով և իրավացի է այդ խաոության մեջ:

Ընդհանրապես գրողների մասին հայտնած իր կարծիքների ու գնահատականների մեջ Շահումյանը ցույց է տալիս ոչ միայն քաղաքական ու սոցիոլոգիական հասունություն,

այլև գեղարվեստական, էսթետիկական խորաթափանցությունն՝ նրանց ստեղծագործությունը դնահատելիս։ Օժտված լինելով այդ մեծ ձիրքով՝ նա ճիշտ է որոշել Հովհ. Թումանյանի ու Ավ. Իսահակյանի տեղը՝ առանձնացնելով նրանց հայ բանաստեղծների խմբից, որոնք Նեկրասովի խոսքերով ասած՝ «երկրորդական տաղանդներ» են։

Գորկու դեկավարությամբ հրատարակված «Հայ գրականության ժողովածուին» վերաբերվող հոդվածում Շահումյանը քննադատում է նրա կազմողներին, որոնք ժողովածուի մեջ տեղ չեն տվել պրոլետարական բանաստեղծ Հակոբ Հակոբյանին։ Այս առթիվ Շահումյանը գրում է.

«Թարգմանված բանաստեղծների ցանկը նայելիս մեր մեջ հարց է ծագում. ինչո՞ւ չկա նրանց թվում Հակոբ Հակոբյանը։ Գուցե խմբագիրները մեծ կարծիք չունենալով նրա բանաստեղծական տաղանդի մասին, արժանի չեն համարել հիշել նրան հայկական Պանթեոնում։ Ի դեպ։ Նախ բանաստեղծ ասածդ շատ առաձգական կամ համեմատական հասկացողություն է։ Եթե մեզ հարցնեք, ժողովածուի մեջ բերած բանաստեղծներից իսկական բանաստեղծ կարելի է համարել միայն Հովհ. Թումանյանին և Ավ. Իսահակյանին։ Իսկ երբ մենք դառնում ենք նրանց օրինակ, Պուշկինին կամ Հայնեին կարդալուց հետո, նրանք էլ շատ են փոքրանում մեր աչքում։ Տաղանդավոր Թումանյանը այնքան փոքր է թվում Պուշկինից, որքան հայ ազգը փոքր է ռուս ազգից։ Ինչ վերաբերում է Շահ-Ազիզին, Ավ. Ծատուրյանին, Հովհ. Հովհաննիսյանին, նրանք մեր կարծիքով բանաստեղծներ չեն, այլ ոտանավոր դրողներ։

Եվ սակայն նրանք տեղ են գտել ժողովածուի մեջ, որ միանգամայն հասկանալի է և արդարացի։ Վ. Տերյանին չեն հանձնարարել իր ճաշակի մի գեղեցիկ ծաղկաքաղ անել հայ բանաստեղծներից, այլ ներկայացնել արդի հայ գեղեցիկ դրականությունը այնպես, ինչպես որ նա կա» (Շահումյան, երկեր. հ. II, էջ 79)։

Թումանյանի բանաստեղծական համեմատությունը

Պուշկինի հետ՝ չի փոխում հարցի էությունը։ Շահումյանն արդարացի կերպով Թումանյանին ու Իսահակյանին առանձնացնում է հայ բանաստեղծների խմբում։ Այստեղ երևան է գալիս Շահումյանի գեղարվեստա-քննադատական խորաթափանցությունը, մեծ տաղանդները փոքրերից զատելու և ըստ այնմ էլ նրանց նշանակությունը գնահատելու հմտությունը։ Շահումյանի այն խոսքը, թե Շահ-Ազիզը, Մատուրյանը, Հովհ. Հովհաննիսյանը բանաստեղծներ չեն, այլ ոտանավոր գրողներ, խիստ ու կարծես թե անարդար է. կարելի է այս հարցում չհամաձայնել Շահումյանի հետ, առարկել նրան ու ասել.—Այո, իհարկե, նրանք մեծ բանաստեղծներ չեն, ինչպես հիմա որոշ քննադատներ մեծարում են նրանց, մեծ տաղանդներ չեն, բայց անկասկած բանաստեղծներ են՝ որոշ շնորհքով։—Բայց պետք է հասկանալ Շահումյանին. ինչպես տեսանք՝ նա չի ժխտում նրանց նշանակությունը հայ պոեզիայում և ճիշտ է գնահատում, բայց խիստ է արտահայտվում նրանց բանաստեղծական շնորհքի մասին։ Ինչպե՞ս բացատրել դա։ Նախ դա վկայում է, որ Շահումյանը խստապահանջ է բանաստեղծների և բանաստեղծության նկատմամբ, ապա՝ այդ կարծիքի մեջ բանավեճի շեշտ կա։ Նվ իրրև պրոլետարական բանաստեղծ Հ. Հակոբյանը, որին մենք հետո կանդրադառնանք, իր շնորհքով ամենևին չի պիջում վերոհիշյալ բանաստեղծներին, որոնք այնուամենայնիվ տեղ են գրավել ժողովածուի մեջ, իսկ Հակոբյանը՝ ոչ։ Շահումյանի խիստ մոտեցումը մասամբ էլ բացատրվում է այս բանավիճային բնույթով։ Իսկ Շահումյանի հիմնական դրույթները միանգամայն արդարացի են։ Թումանյանի ու Իսահակյանի համեմատությամբ մնացած հայ բանաստեղծները երևում են այնպես, ինչպես մյուս ռուս բանաստեղծները Պուշկինի կամ Լերմոնտովի համեմատությամբ։

Հայ կլասիկներից Շահումյանն առանձնապես սիրում էր Հ. Թումանյանին, բարձր էր գնահատում նրա պոեզիան, որը վ. Բրյուսովի ճիշտ արտահայտությամբ՝ «հայ կյանքի հանրագիտարան» է։ Հայ բանաստեղծներից ու վիպասաններից

ոչ մեկը ժողովրդական կյանքն ամբողջ խորությամբ ու լայնությամբ չի ցույց տվել իր ստեղծագործության մեջ, ինչպես Թումանյանն է արել: Շահումյանը բանկ էր գնահատում Թումանյանին և խիստ ցավում էր, որ նա լավ չի ներկայացված ժողովածուի մեջ, թարգմանություններն էլ բարձրորակ չեն: «Այդ կողմից տուժել են և Սունդուկյանի «Պեպոն» և Հովհ. Թումանյանի գողտրիկ պատմվածք «Գիքորը»: Բայց այստեղ չի կարելի մեղադրել թարգմանիչներին, որովհետև անկարելի է նույնիսկ մոտավոր հարազատությամբ թարգմանել Սունդուկյանի կոլորիտավոր «քաղքի լեզուն» և Թումանյանի գրչի տակ այնքան ճկուն ու արտահայտիչ հոոռու բարբառը»: Այս տողերից երևում է, թե ի՜նչ սիրով է խոսում Շահումյանը Թումանյանի մասին ու որքա՜ն բարձր է գնահատում նրա ստեղծագործությունը: Այս վերաբերմունքի արտահայտությունն կարող է լինել այն փաստը, որ Շահումյանը ուսանողական տարիներին ռուսերեն է թարգմանել Թումանյանի լավ պատմվածքներից մեկը՝ «Աղքատի պատիվը» և տպագրել «Նովոյե օբոզրենիե» թերթում, ինչպես և օգտագործել է Թումանյանի ստեղծագործությունը իր քաղաքական հակառակորդների՝ հայ ազգայնականների դեմ:

Սրանով վերջանում են Շահումյանի ասույթները հայ կլասիկ գրականության մասին:

V

Ընթերցողը կարող է մեր ընդհանուր շարադրանքներից անդամ նկատել այն կարևոր պրոբլեմներն ու խորիմաստ գնահատականները, որ պարունակում է Շահումյանի գրական-հրապարակախոսական ժառանգությունը: Այդ կարևոր հարցերից մեկն անկասկած հայ պրոլետարական գրականության հարցն է: Մենք արդեն գիտենք, որ Շահումյանը, ելնելով մարքս-լենինյան արտացոլման տեսությունից, օրինաչափ էր համարում պրոլետարական գրականության գար-

գաղափարը կապիտալիզմի օրոք որպես բանվոր դասակարգի պայքարի ու ձգտումների գեղարվեստական արտահայտություն։ Այս տեսակետից էլ նա դիտում էր պրոլետարական մեծ գրող Մ. Գորկու ստեղծագործությունը, այդ նույն դիրքից էլ նա գնահատում էր Հակոբ Հակոբյանի պոեզիան։

Պրոլետարական գրականությունը բանվորական հեղափոխության շարժման ծնունդն էր։ Այդ շրջանում երկու հիմնական դասակարգերի՝ պրոլետարիատի ու բուրժուազիայի, պայքարը որոշեց հասարակական մտքի ու հոսանքների զարգացման հետագա ընթացքը հայ իրականության մեջ, որոշեց և հայ գրականության զարգացման ուղիները։

Բուրժուական ու նացիոնալիստական գրականության կոզբին արդեն ներկա դարի սկզբին, 1905 թվի հեղափոխության փոթորիկների մեջ ծնվում ու ձևավորվում էր հայ պրոլետարական գրականությունն ու գրական շարժումը։ Այդ նոր ուղղության հիմնադիրը հայ գրականության մեջ և նրա ամենամեծ ներկայացուցիչը Հակոբ Հակոբյանն էր։ Պրոլետարական հայ գրականության ծագումն ու զարգացումը սերտորեն կապված է անդրկովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների գործունեության հետ։ Պրոլետարիատի ազատագրական շարժումը բարերար ազդեցություն գործեց ընդհանրապես հայ գրականության զարգացման վրա։ Հայ բանաստեղծներից ու գրողներից շատերը իրենց գործունեության առաջին շրջաններում գտնվում էին բանվորական շարժման և պրոլետարական գաղափարախոսության ու գրականության ուժեղ ազդեցության տակ։ Այդ տեսակետից հսկայական է Գորկու ստեղծագործության դերը։ Հայ գրողներից շատերը Գորկու մեջ տեսնում էին իրենց գրական առաջնորդին ու պաշտպանում նրա քաղաքական ելույթները կաբոմադուշչինայի դեմ, մինչդեռ բուրժուական մամուլը թե՛ կենսագրում, թե՛ Անդրկովկասում կազմակերպում էր

«արշավանք Գորկու դեմ», ինչպես նախահոկտեմբերյան «Պրավդան» է բնորոշում[1]։

Ես նկատի ունեմ նախ Վրթ. Փափազյանի ելույթները, Շիրվանզադեի գրագրությունը Գորկու հետ, նրա գրախոսականը Գորկու «Մանկության» վերաբերյալ և այլն։ Այլևս չեմ խոսում Հակոբ Հակոբյանի մասին, որին անվանում էին մերթ «հայկական Գորկի», մերթ՝ «հայկական Վերհառն»,

Նկատի ունենալով այս հանգամանքը՝ Լունաչարսկին Հ. Հակոբյանի բանաստեղծություններն առաջին ժողովածուի նախաբանում գրել է. «Հակոբ Հակոբյանն իրոք բնդհանուր շատ բան ունի Վերհառնի հետ։ Անգամ Հակոբ Հակոբյանի ձևը հաճախ մոտենում է այն ազատ չափածոյին, որը գերազասում էր Վերհառնը»։

Սակայն հիմա մեզ հետաքրքրում է մի այլ հարց. ի՞նչ դեր է կատարել պրոլետարական բանաստեղծի կյանքում Ստեփան Շահումյանը։ Հակոբյանի վկայությամբ այդ դերը հսկայական է։ Շահումյանն ու Հակոբյանը մոտիկ բարեկամներ էին և հաճախ էին գրում իրար։ Նրանց նամակագրության գլխավոր նյութը, ասում է Հակոբյանը, գրականությունն էր։ Շահումյանն իր նամակներում արձագանքում է Հակոբյանի առանձին բանաստեղծություններին ու ողջ ստեղծագործությանը, խոսում Շուշանիկ Կուրղինյանի մասին, որը ուղղագիր տարրերին խիղախ, ուղղագիրն բանաստեղծություններ էր գրում։ Շահումյանը խիստ հետաքրքրվում է Հակոբյանի ստեղծագործությամբ, դիտողություններ է անում, քննադատում, խորհուրդներ տալիս, մի խոսքով նրա ստեղծագործական աճի համար պայմաններ ստեղծում։ Շահումյանը աքսորից էլ նամակագրություն ուներ Հակոբյանի հետ։ 1912 թվին գրած մի նամակում կարդում ենք.

---

[1] „Дооктябрьская Правда" об искусстве и литературе„. Подготовил к печати С. Брейтбург, 1937, стр. 13.

«Սիրելի Հակոբ.

Անթիվ բարևներ քեզ և ընտանիքիդ Վոլգայի ափերից։ Մի երկու օրից ճանապարհներս շարունակում ենք Վոլգայով, որ մի տեղ սարքվենք (հասցես կուղարկեմ)։ Առողջություններս և տրամադրություններս լավ են։ Այսօր Աշոտի[1] հետ հիշում էինք քեզ։ Գիրքդ Բաքու ստացա, շատ շնորհակալ եմ։ Լսել եմ քննադատությունից[2] դժգոհ ես, բայց իզուր։ Իմ կարծիքով լավ հոդված է։ Ջերմ բարևներով և համբույրներով։

Քո՝ ՍՏ. ՇԱՀՈՒՄՅԱՆ»։

Եվ ապա մի ուրիշ նամակում.

«...Ինչպե՞ս է քեֆդ ու հալդ, մի տարի է համարյա ինչ որ քեզանից նամակ չեմ ստանում, կարոտել եմ նամակներիդ։ Գրիր, ինչ կա...

Քո՝ ՍՏԵՓԱՆ[3]»։

Այս բարեկամական հարաբերությունները դուր չանցան Հակոբյանի համար։

«Այստեղ միաժամանակ պիտի հայտնեմ,—գրում է Հակոբյանը,—որ Ստեփան Շահումյանի ազդեցությունը որպես մարքսիստական գրական ու գեղարվեստական գրականության քննադատի, որպես մի կախարդական ուժի, քիչ ազդեցություն չի արել իմ հետագա գրական գործունեության վրա... Որքան Ստեփանի նամակները, նույնքան նրա հետ ունեցած կենդանի խոսակցությունը ոչ պակաս արժեքավոր էին ինձ համար գրականության շուրջը տեղի ունեցած մեր հարաբերությունների ժամանակ։ Եթե արձանագրվեր այն ամենը, ինչ արտահայտում էր նա գրականության շուրջը տեղի ունեցած կենդանի խոսակցության ժամանակ, անշուշտ այդ գրասերի գրույցներից ու առողջ քննադատական դիտողություններից մի խոշոր գիրք կկազմվեր» («Մարտակոչ», 1925, № 216—18)։

---

1 Խումարյան։

2 Խոսքը Ա. Կարինյանի հոդվածի մասին է՝ բոլշևիկյան «Նոր խոսք» հանդեսի 1912 թվի, № 5 6-ում։

3 «Գրական քերթ», 1935 թ.։

Բանաստեղծի այս խոսքերը, նրա խոստովանությունը բավական ցայտուն կերպով ցույց են տալիս Շահումյանի խոր հոգատարությունը, սերը դեպի պրոլետարական գրականությունը, դեպի բանաստեղծ ընկերը։ Նա աչալուրջ հետևում էր Հակոբյանի ստեղծագործությանը և նպաստում նրա ճևավորմանն ու աճին։ Վերհիշում ես ուսուցիչի մեծ առաջնորդների՝ Լենինի ու Ստալինի, հոգատար վերաբերմունքը Մաքսիմ Գորկուն։ Շահումյանի վերաբերմունքը մարտիկ բանաստեղծին իրոք հիշեցնում է Լենինի ուշադիր, հոգատար վերաբերմունքը Գորկուն։ Լենինից հետո այդպիսի հոգատարություն ցուցաբերեց ընկեր Ստալինը ոչ միայն Գորկուն, այլև բոլոր սովետական գրողներին։

Շահումյանի վերաբերմունքը Հ. Հակոբյանին հիմնված է բոլշևիկյան սկզբունքային դիրքերի վրա։ Նրբ նացիոնալիստական ինտելիգենցիայի ներկայացուցիչներն սկսեցին հալածել Հակոբյանին, վարկաբեկելով նրա պոեզիան, փորձեցին նվազեցնել նրա գերը հայ գրականության մեջ՝ Շահումյանը բողոքեց այդ փոքրոգի ինտելիգենտների դեմ, որոնք Գորկուց թաքցրել էին պրոլետարական հայ բանաստեղծին, և մերկացրեց նրանց նացիոնալիստական էությունը։ Հայ գրականության ուսաներեն ժողովածուի մասին գրած հոդվածում Շահումյանը տվել է Հակոբյանի ստեղծագործության ճշմարտն բնութագիրը, որ բացի դրանից ունի սկզբունքային մեծ նշանակություն. «...մենք ասում ենք.մեր մեջ կա մի ամբողջ հասարակական խավ, որի համար Հակ. Հակոբյանը ճանաչված բանաստեղծ է,—գրում է Շահումյանը։ Նա հայ բանվորության ցավերի և ուրախությունների արտահայտիչն է, նրանց աշխատանքի ու կռվի երգիչը։ Եթե այդ բանվորությունը ունի որևէ նշանակություն հայկական կյանքում, նրա բանաստեղծը անշուշտ պետք է տեղ դտներ այդ ժողովածուի մեջ։ Մաքսիմ Գորկու աշխատակիցները ոչ միայն պետք է հասկանային, որ այդ հարկավոր է անել, այլ պետք է ուրախությամբ աներին այդ։ Եվ անկասկած, Հակ. Հակոբյանի վերջին տարիների գրածներից կարելի էր մի գեղեցիկ ծաղկեփունջ

կազմել ժողովածուի համար» (Ս. Շահումյան, Երկեր, հ. II, էջ 79—80)։

Սա Հակոբյանին, նրա ստեղծագործությանը տրված բարձր գնահատական էր և հզոր պաշտպանություն՝ պրոլետարական դրականության թշնամիների դեմ։ Այդ բոլշևիկյան սկզբունքային վերաբերմունքի հետևանքը եղավ այն, որ Հ. Հակոբյանը դարձավ հայ պրոլետարական դրականության հիմնադիրն ու ջատագովն ներկայացուցիչը և իր ստեղծագործությամբ օգնեց ժողովրդական զանգվածների ռևոլուցիոն դաստիարակության։ Այդ սկզբունքային պարտիական վերաբերմունքը չէր բացառում Հ. Հակոբյանի ստեղծագործության թերությունների քննադատությունը։

Այս առումով Շահումյանի դիտողությունները «Նոր աուալոռա» պոեմի լուսանցքներում շատ արժեքավոր են բոլոր կողմերով։ Դրանք ցույց են տալիս ոչ միայն մեծ ուսուցիչների հոգատար վերաբերմունքը դեպի ընկեր գրողը, այլև այն սկզբունքային պահանջկոտությունը դեպի գեղարվեստական երկը, որն անհրաժեշտ նախադրյալ է իսկական, մեծ արվեստի, նրա կատարելության համար։

Նրա բազմաթիվ արժեքավոր նկատողությունների մեջ, որոնց մանրազնին ուսումնասիրությունը կարող է շատ բան տալ Շահումյանի էսթետիկական հայացքներն ուսումնասիրողին, հաճախ են հանդիպում՝ «լավ էր, «գեղեցիկ էր, «շատ լավ էր» որակումների հետ միասին՝ պոեմի իրական թերությունները ցույց տվող նկատողությունների՝ «անհարթ է», «անհասկանալի է», «ոճը անկանոն է», «նախադասությունը ուղիղ չի կազմված և այդ պատճառով պարզ չէ միտքը», «լավ չէ միտքը, անհասկանալի է» և այլն։

Այս բոլորը աներկբա են դարձնում այն ճշմարտությունը, որ ձևական, լեզվական թերությունները շատ են վնասում երկի առողջ գաղափարական քովանդակությանը, նսեմացնում նրա արժեքը, անհասկանալի դարձնելով ընթերցողների համար։

Շահումյանը պաշտպանում է ոճական միասնության ու

միատեսակության սկզբունքը։ Նա դեմ է՝ երբ հանդի համար զոհվում է միտքը։ Դա երևում է թեկուզ այն նկատողություններից, որ նա անում է Հակոբյանի հետևյալ խոսքերից հետո.

Կարծես որոնում մի աշխարհ գաղտնի,
Գաղտնի մի աշխարհ, ուր եթե հոգին
Երջանիկ զգար ու շուտ մանանար՝
Ոչ մի ափսոսանք չէր առաջանար.

Անհաջող այս քառյակի ընդգծած տողերի դիմաց դրված են հարցական նշաններ, որպես բացասական վերաբերմունքի արտահայտություն։ Նույն այդ քառյակի դիմաց, դիմելով պոեմի հեղինակին, Շահումյանը նկատում է. «Ի՞նչ է նշանակում՝ ո՞ւմ մեջ չէր առաջանա ափսոսանք։

Դարձյալ րիֆմի համար ասել ես. «առաջանար»—հոսողական խառնուրդ ոճի մեջ, (Շուշանիկ) Կուրղինյանն էլ է ծույլ տալիս այդ»։

Ահա այսպիսի իմաստալից դիտողություններ է արել Շահումյանը Հակոբ Հակոբյանի պոեմի լուսանցքներում։

Ի՞նչ նշրակացության պետք է գալ այդ «Նկատողություններից»։ Գրական երկի ձևն ու բովանդակությունը պետք է ներդաշնակ լինեն, ոճը միասնական, հակառակ դեպքում նույնիսկ առաջավոր գաղափարների ներկայացուցիչ գրողը, որի գրական կուլտուրան և վարպետությունը բարձր չեն, չի կարող իր գաղափարները մարմնավորել համապատասխան էմոցիոնալ պատկերներով և դրանով ուժեղացնել նրանց ազդեցությունը։ Գրական կուլտուրայի պակասը, լեզվի, պատկերների ու համեմատությունների թերությունները բացասաբար են անդրադառնում գրվածքի գաղափարական բովանդակության վրա։ Այդ նկատողություններն, ըստ էության, նշանակում էին պայքար՝ գրականության, հատկապես պրոլետարական գրականության գաղափարական ու գրական բարձր որակի համար։ Դրանումն է նրանց խոշոր արժանիքը և կարևոր նշանակությունը, նրանցից բխող անհրաժեշտ պահանջը։

Այս բոլորից բացի, պետք է նշել, որ Հակոբյանի շուրջը դեռ ռևոլյուցիայից առաջ հավաքվեցին մի խումբ երիտասարդ գրողներ, որոնք նրա գլխավորությամբ հրատարակում էին իրենց ժողովածուները և այդպիսով սկիզբ դնում պրոլետարական գրական շարժման: Հակոբյանի խմբագրությամբ 1914 թվին լույս տեսան պրոլետ-գրողների երեք ժողովածու («Կարմիր մեխակներ», I և II պրակ, և «Բանվորի ալբոմ»): Հակոբյանի հետ գրանց մասնակցում էին՝ բանվոր գրամատուրգ Ան. Վարդանյանը՝ հեղինակ «Գործադուլ» պիեսի, որը դեռ այն ժամանակ հաջողություն ուներ, երիտասարդ արձակագիր Արազին, բանաստեղծ Կամարին և ուրիշները: Այս բանվորական հրատարակությունները արժանացել են նախահոկտեմբերյան «Պրավդա»-յի և «Պայքար»-ի դրական կարծիքին: «Պրավդա»-ն իր երկտողում հաղորդում է, որ մի խումբ հայ բանվորների նախաձեռնությամբ ստեղծված է հայ իրականության մեջ առաջին միակ պրոլետարական հրատարակությունը և որ վերջերս լույս տեսան երեք պրակ, այդ թվում և Գորկու երկու հեքիաթը և «Կարմիր մեխակներ» փոքրիկ ժողովածուն: «Վերջինս հաջող է կազմված. հայ «բանաստեղծ Գորկին»—Հ. Հակոբյանը արտաքուստ անաչխույն, բայց խոր զգացմունքով համակված բանաստեղծությունների մեջ պատկերում է հզոր գործարանը՝ մեքենաների դղրդյուն, հնոցի բոց, բանվորների սիլուետներ և այն անդադրում ժխորը, որ առույգ պոռթկումներ ու ձգտումներ է առաջացնում... Ժողովածուի մյուս աշխատակիցները սկսնակ գրողներ են: Ժամանակակից կյանքի հակադրություններ, մեծ քաղաքի փողոցի դիշերը, պայքար, հանգրվան—ահա այն մոտիվները, որ ուրվագծել են ժողովածուի հեղինակները մի քիչ անհարթ, բայց խիստ անկեղծ ու ճշմարտացի: Հետաքրքրական է երիտասարդ գրող Վարդանյանի «Ուրվականներ» էսքիզը: Հեղինակն ընդհանուր գծերով ուրվանկարում է «ուժեղների ու բազդքողների» պատկերները»:[1] Այստեղ

---

[1] Дооктябрьская «Правда» об искусстве и литературе", 1937, стр. 76.

խոսքը ժողովածուի լոկ մի մասի մասին է։ «Պայքար» ընդ-ը իր ռեպենտիայի մեջ նույն ոգով է գնահատում հայ պրոլետարական գրողների երեք ժողովածուները. «Մեր շնորհալի բանաստեղծ Հակոբ Հակոբյանի նախաձեռնությամբ և խմբագրությամբ լույս տեսած այս փոքրիկ ժողովածուներն արժանի են խրախուսանքի։ Ժողովածուներում խմբված գրողները, բացի Հակոբյանից, նոր են մեր գրականության մեջ, նոր է և նրանց խոսքը։ Նրանք քաղաքի գրողներ են և արտահայտիչ բանվորական դեմոկրատիայի տենչերի»։ Ապա խոսելով, որ վերջերս պրոլետարական արվեստը քաղաքացիական իրավունք է ստացել, ինչպես Արևմտյան Եվրոպայում, այնպես էլ Ռուսաստանում, և ունի խոշոր ներկայացուցիչներ՝ Մաքսիմ Գորկին և ուրիշները, գրախոսականի հեղինակը ճիշտ նշում է. «Այս անունները բավական են, որ մենք հպարտանանք պրոլետարական գեղարվեստով և հավատանք նրա ապագային։ Մեր ժողովածուների երիտասարդ գրողները պրոլետարական արվեստի ասպարեզում համեստ ուժեր են, սակայն նկատի առնելով հայ իրականության սպանիչ մթնոլորտը, մենք ամբողջ սրտով ողջունում ենք նրանց առաջին քայլերը»։

Անցնելով առանձին հեղինակներին՝ գրախոսը բնութագրում է Հակոբ Հակոբյանի «Քաղաք» բանաստեղծությունը, Արազու մանր պատմվածքները («Արև» և այլն). Այս «փոքրիկ պատմվածքները թարմ ու գեղեցիկ տաղանդի կնիք են կրում... Արազու դույները քնքուշ են, բայց և որոշ։ Նրա ամեն մի տողից բուրում և ազնիվ, լավատես ձգտումներով լի տրամադրություն։ Արազին պետք է մշակի և զարգացնի իր հմայակրելի տաղանդը։ Նա ապագա ունի»։

Բոլշևիկ գրախոսի՝ Ա. Մոռավյանի, գուշակությունն իրականացավ. Արազին, ինչպես և բանվոր դրամատուրգ Ան. Վարդանյանը՝ «Գործադուլ» և սրամիտ «Ուրվականներ» պիեսների հեղինակը, որ նույնպես դրական գնահատական էր ստացել գրախոսականում, դարձան լավ գրողներ և մինչև

---

1 «Պայքար», № 3, 1915 թ.։

հիմա արդյունավետ աշխատում են այդ ասպարեզում։ Նրանք սովետահայ գրականության ականավոր ներկայացուցիչներից են և Հ. Հակոբյանի հետ քիչ բան չեն արել նրա սկզբնավորման ու զարգացման համար։ Ծողովածուի մյուս մասնակիցներն էլ դրական ու խրախուսիչ գնահատական ստացան։

Այս փաստերը ցույց են տալիս, որ թե՛ բոլշևիկյան «Պրավդան» և թե՛ տեղական բոլշևիկները ուշադրությամբ հետևում էին պրոլետ-գրականության ծագմանը, ուշադրություն էին դարձնում նոր կադրերին ու նպաստում նրանց գեղարվեստական զարգացման։ Շահումյանի դերն այս գործում հսկայական է։ Իր մշտական խորհուրդներով ու քննադատությամբ նա օգնում էր Հ. Հակոբյանին, ուղղություն տալիս նրա տաղանդին, աջակցում Արազու աճին, խրախուսում Վարդանյանի դրամատուրգիական փորձերը։ Եվ այժմ այդ երեք գրողներից յուրաքանչյուրը իր հատուկ տեղն է գրավում հայ գրականության պատմության մեջ։ Նրանց, մանավանդ Հ. Հակոբյանի, դերը երիտասարդ սովետահայ գրականության ձևավորման ու զարգացման գործում չափազանց մեծ է։ Հ. Հակոբյանի պոեզիայի ազդեցությամբ են իրենց բանաստեղծական գործունեությունն սկսել շատ երիտասարդ պոետներ, որոնք անվանի են այժմ և բավ արժանավույն վայելում են սովետական ընթերցողի սերը։

Շահումյանի աշխատանքն ու հոգատար վերաբերմունքը զուր չանցան գրականության ասպարիզում, իրենց հիանալի արդյունքը տվին, և դա բավական է։

Շահումյանը և Սուրեն Սպանդարյանը նոր երևույթ էին հայ իրականության մեջ։ Երբ մենք վերանայում ենք ամբողջ հայ գրականության զարգացման ուղին, նոր մարդու կերպարն ենք փնտրում այնտեղ՝ բոլշևիկ ռևոլյուցիոների կերպարը չենք գտնում։

Ռուս գրականության մեջ բոլշևիկի կերպարը արտահայտություն գտավ Մաքսիմ Գորկու ստեղծագործության մեջ։ Այդպիսի երևույթ չկա նախահոկտեմբերյան հայ գրականության մեջ։ Պրոլետարական գրող Հակոբ Հակոբյանը մի-

միայն բանաստեղծություններ է գրել. ռևոլուցիոների կերպար ուզու փորձ նա չի արել։ «Նոր առավոտ» պոեմը այդ հարցը չի շոշափում. այդպիսի խնդիր չի դրել հեղինակը։ Պոեմի հիմնական գաղափարը ճիշտ է բացահայտել Սպանդարյանը իր դրախոսականի մեջ՝ անձնականի բախումը հասարակականի հետ. դա է պոեմի հիմնական գաղափարը։ Իսկ մյուս պրոլետարական գրողներն ի վիճակի չէին այդպիսի խոշոր, բարդ ու դժվարին գործ ստանձնել, ցույց տալ նոր մարդու՝ բոլշևիկի կերպարը։ Իսկ մեր ականավոր վիպասանները այդպիսի խնդիր չէին առաջադրում և չէին կարող առաջադրել։ Ինչո՞ւ, ո՞րն է դրա պատճառը։ Այս հարցին պատասխանում է Շահումյանը։ Սուրեն Սպանդարյանի մասին գրած բնութագրի մեջ նա ասում է. «Հայ իրականության համար Սուրեն Սպանդարյանն իր կյանքով և իր մահով մի նոր երևույթ է, անսովոր ու անհասկանալի հին-հին պաղպաղանքներով սնված մարդկանց համար։ Նրան չէր կարողանա հասկանալ մեր «ազգային» գործիչն ու հրապարակախոսը, նրա ճոգին ու կյանքը չէր կարողանա բմբռնել ու ճկարագրել հայ վիպասանը»։

Չէ՞ որ Սպանդարյանը, ինչպես և Շահումյանը բացառիկ երևույթներ չէին։ Նրանք ներկայացուցիչներն էին այն նոր սերնդի, որը XX դարի սկզբին արդեն պատավոր տեղ էր գրավել այդ ժամանակի հայ իրականության մեջ, ուժգին կրակ էին բաց արել եկեղեցական խավարապաշտության, հետամնացության ու սահմանափակության դեմ։ Բոլշևիկներն աշխատում էին բոլոր ժողովուրդներին, այդ թվում և հայ ժողովրդին, դուրս բերել զարգացման լայն ուղի, ազատել նրան ազքատության ու տգիտության ճանկերից։ Ժողովուրդների ընդհանուր առաջադիմությունը, նրանց գիտությունների ու կուլտուրաների ծաղկումը. ահա թե ինչին էին ձգտում և ինչ էին ուզում բոլշևիկները՝ XX դարու այդ «նոր մարդիկ»։ Եվ երբ տեսնում էին, որ հայերի պես հին ու կուլտուրական մի ժողովուրդ ընկել է ազքատության ու տգիտության մեջ, ամբողջ սրտով ցավում էին նրանք, պայքարում նրա հասարակա-քաղաքական հասունության արգելակողների դեմ,

Հեռագրա-կղերական դաղափարախոսության միջնաբերդի դեմ, «վարժապետիզմի ու տիրացուականության» դեմ, որը հայ բուրժուական ու մանր-բուրժուական ինտելիգենցիայի սահմանափակության հոմանիշն էր։ Սրտի ցավով Շահումյանը գրում էր.

«Մենք շատ անգամ լսել ենք առանձին հայ անհատների կողմից մի հուսահատ բացագանչություն. «Ի՞նչ տիրացու ազգ ենք հայերս...»։ Եվ դա մի ազազակող ճշմարտություն է։ Տիրացությանը մեզ խեղդում է։ Վերցրեք մեր ժողովրդական ուսուցչին, մեր հասարակական գործիչներին, հրապարակախոսներին, վիպասաններին և նույնիսկ բանաստեղծներին։ Վերցրեք մեր դպրոցը, մեր մամուլը։ Ամեն տեղ սարսափելի տիրացություն։ Մեր ամբողջ հասարակական կյանքը կապած է տերտերների փարաջաներից, ամեն ինչ պատռվում է էջմիածնի շուրջը։ Ոչ մի հետաքրքրություն դեպի քաղաքական հարցերը, դեպի պետական կյանքը, դեպի նույնիսկ տեզական ինքնավարության օրգանները։ Թերթեցեք մեր պարբերական հրատարակությունները (մանավանդ մինչև 1905 թիվը. այդ թիվը շատ բան փոխեց մեր կյանքում) և դուք կտեսնեք, որ բացի ծխական, հոգաբարձական, քահանայական հարցերից ոչ մի հարց, ոչ մի հետաքրքրություն։ Ինչո՞վ բացատրել հայկական այս տիրացությունը, այս ապոլիտիզմը։ Համաձայնեցեք, որ այդ բոլորը, եթե չասենք ծնունդ է հայկական ազգային-կուլտուրական ավտոնոմիայի, գոնե շատ վնասակար կերպով կապված է նրա հետ» (Երկեր, հատ. II, էջ 46)։

Շահումյանին քաջ հայտնի է, որ հայ իրականության այդ տիրացությունը, քարացածությունը, ռուտինը սոցիալ-տնտեսական ու քաղաքական կոնկրետ պատճառներից են, բայց և այնպես ակնհայտ՝ էջմիածնի, խավարամտության, քարացածության ու տիրացության այդ սիմվոլի դերն անվիճելի է։

Հանդես գալով «հայկական ավանդական մեծամտության ու գոռոզության» դեմ՝ Շահումյանը նշում է, որ վրացիները

թեև իրենց էջմիածինը չեն ունեցել, բայց զգալիորեն ավելի առաջ են հայերից, և բացատրում է այդ հետամնացության պատճառները։

Իհարկե, մեր համեմատությունը շատ սահմանափակ և պայմանական նշանակություն ունի։ Հայկական ու վրացական կյանքի տարբերությունները ամենից առաջ որոշ տնտեսական-դասակարգային հարաբերությունների և որոշ քաղաքական գործոնների արդյունք են։ Բայց որչափ դեր են կատարում առհասարակ դպրոցները, մամուլը, ազգային-կուլտուրական հաստատությունների այս կամ այն ձևը, չի կարելի ժխտել, որ հայերի հետամնացության, ասպլետիզմի և տիրացության մեջ մեծ դեր է խաղացել էջմիածինը, մեր «սաղմայինն» ազգային-կուլտուրական ավտոնոմիան» (նույն տեղ, էջ 47)։

Այսպիսի անողոքությամբ էր պայքարում Շահումյանը հայկական քարացածության, հետամնացության ու նացիոնալիզմի դեմ, նրա կոնկրետ դրսևորումների ու ջահակիրների դեմ։ Այդ պայքարը բացառիկ մեծ նշանակություն ուներ, մի կողմից, բազմազգ Անդրկովկասի մարտնչող ռևոլյուցիոն ուժերի կապերն ամրացնելու ու նրանց համախմբելու, մյուս կողմից՝ հայ ժողովրդի կուլտուր-քաղաքական վերելքի և առաջադիմության, նրա ժողովրդական և իրոք ազգային կուլտուրայի ու գրականության ծաղկման համար։

Շահումյանի այդ քննադատության մեջ անհամեմատ ավելի շատ ու անկեղծ հայրենասիրություն կա, քան բոլոր պաշտոնական դիպլոմավոր դշխոյների «ազգասիրական» ողբերում։ Իսկական հայրենասերն ու ժողովրդասերը Շահումյանն է, որովհետև նա պայքարում է ժողովրդի առաջադիմությանը խոչընդոտող, արդելակող ռեակցիոն ուժերի և նրանց գաղափարախոսության դեմ։

Հայկական իրականության, հատկապես ինտելիգենցիայի հետամնացության, տգիտության ու հետադիմական նացիոնալիզմի այս խիստ, բայց իրավացի քննադատությունը անհրաժեշտ նախապայման էր և հող էր պատրաստում մարք-

մրզամ-լենինիզմի տարածման և նրա դիրքերի ամրապնդման համար հայ իրականության մեջ: Եվ այդ մեծ ու դժվարին աշխատանքը ծանրացած էր Շահումյանի, Սպանդարյանի, Միկոյանի և ընկեր Ստալինի մյուս մարտական զինակիցների ուսերին:

Հայերեն մարքսիստական գրականությունը և հատկապես Շահումյանի ու Սպանդարյանի գործունեությունը իրենց խորը հետքերն են թողել հայ հասարակական կյանքի ու մտքի զարգացման վրա և մի ժամանակ բարերար ազդեցություն են ունեցել հայկական ինտելիգենցիայի առաջադեմ տարրերի վրա, օգնել են նրանց՝ ազատագրվելու նացիոնալիզմի և այլ խորթ գաղափարների ազդեցությունից, իրենց բախտը կապելու պրոլետարիատի ազատագրական պայքարի հետ:

Այս առումով չափազանց կարևոր փաստ է նշանավոր հայ բանաստեղծ Վահան Տերյանի խոստովանությունը: Նա իր «Երեք հանդիպում» հիշողությունների մեջ, գրված 1919 թվին՝ պատմում է, թե ինչպես ինքը լցված է նացիոնալիստական և մանր-բուրժուական նախապաշարումներով և խորթ է նրան Շահումյանի աշխարհայացքը, բայց և այնպես ...«մի տարօրինակ ուժ գրավում է դեպի այդ սքանչելի մարդը: Ես միշտ հիշել եմ նրան, մի տարօրինակ համակրանքի զգացմունքով, միշտ զգացել եմ նրա հմայքի ուժը» (Երկեր հ. IV, էջ 347): Շահումյանի հանդեպ տածած այդ անսահման համակրանքը և նրա հմայքի ուժը, որն ըստ էության վերջինիս աշխարհայացքի ուժն է եղել, քիչ դեր չի խաղացել հավանաբար այն վճռական շրջադարձի մեջ, որ կատարեց պոետը, դուրս եկավ խորթ ազդեցություններից և իր բախտը վերջնականապես կապեց բանվոր դասակարգի, Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի բախտին: Այս խոստովանությունը շատ պերճախոս է: Նա որոշ առումով լույս է սփռում նաև այն հարցի վրա, թե ինչպես հայ ինտելիգենցիայի, հատկապես գրողների առաջավոր մասը՝ Թումանյան, Հովհ. Հովհաննիսյան, Իսահակյան, Եղիվարդ, Նար-Դոս և այլն,

համեմատաբար հեշտությամբ շրջապատել կատարելին դեպի Սովետական իշխանությունը՝ Հայաստանում։ Այս փաստի, հայ գրողների և ինտելիգենցիայի զգալի մասի այդ շրջադարձի մեջ չի կարելի չտեսնել բանվորական ռևոլյուցիոն շարժման, հատկապես 1917 թվի Հոկտեմբերյան Սոցիալիստական ռևոլյուցիաների ազդեցությունը։ Չի կարելի չտեսնել այդ փաստի մեջ և այն բարերար ազդեցության արդյունքը, որ տարիներ շարունակ գործել են հայ հասարակական ու մտավոր կյանքում Շահումյանը, Սպանդարյանը, Միկոյանը և մյուս հայ մարքսիստները ու մարքսիստական մամուլը ընդհանրապես։ Այդ ազդեցությունն ավելի ուժեղ է եղել, քան նրա մասին խոսվել է։ Ավելի ճիշտ այդ հարցը մինչև այժմ էլ դեռ չի էլ բարձրացվել։

Շահումյանը և Սպանդարյանը, ինչպես և մյուս բոլշևիկները, ոչ միայն հանդիսացել են հայ գրականության ու կուլտուրայի լավագույն առաջադիմական, դեմոկրատական տրադիցիաների ժառանգորդներն ու պաշտպանները,—այդ ակներև երևում է թեկուզ Շահումյանի հոդվածներից, դեպի նալբանդյանն ունեցած նրանց վերաբերմունքից,— այլև իրենց հերթին նպաստել են հայ գրականության առաջադիմական ձգտումների ու քննադատական ռեալիզմի զարգացմանը, սրելով գրողների ուշադրությունը հասարակական կարևոր հարցերի վրա։

Այս առումով չափազանց խոշոր է, բայց դեռևս չուսումնասիրված և անհրաժեշտ չափով չգնահատված, հայ մարքսիստական մամուլի և հատկապես Շահումյանի, Սպանդարյանի հրապարակախոսական քննադատական ելույթների դերն ու նշանակությունը։

Սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակը և Հայաստանում սովետական իշխանություն հաստատվելը ուժ մեծ ժողովրդի օգնությամբ՝ վերջնականապես որոշեցին հայ ժողովրդի ճակատագիրը։ Նախկին հայ իրականության քարացածությունից ու հետամնացությունից, որ այնքան արդարացի խարազանում էր Շահումյանը, հետք անգամ չի մնացել։

Շահումյանի և հայ ժողովրդի մյուս հավատարիմ զավակների պայքարը զուր չանցավ։ Հայ ժողովուրդը հաղթեց ազատ ու երջանիկ կյանքի համար մղած պայքարում։ Այդ պայքարի ճանապարհին, ինչպես ճիշտ նկատում է տաղանդավոր բանաստեղծ Նաիրի Զարյանը.

Փայլատակեց մատախուղում Նալբանդյանի բոց հոգին,
Շաչեց անմահ Պարոնյանի ծաղրի մարակն ահագին,
Մեծ Լոռեցին իր քընարով և՛ բաղցրախոս, և՛ ցավոտ,
Ինչքա՜ն երգեց ու երազեց քեզ մի խաղաղ աստվոտ,—
Մինչև հյավ կյանքի ծովից բոլշևիկյան մի սերունդ,
Անցած, գալիք մրրիկների կայծակի փայլն աչքերում,
Սպանդարյանը բոցարյուն և Շահումյանը պայծառ,
Որ Լենինի ու Ստալինի պատգամներով փրկարար
Տարան կորած քո կարավանն ու մոլորված քո ուղին՝
Միացնելու օվկիանածուփ դասակարգի գրոհին։

Հաղթական «դասակարգի դրոհը» Լենինի—Ստալինի մեծ պարտիայի ղեկավարությամբ՝ վերջնականապես փրկեց հայ ժողովրդին, Սովետական Միության ժողովուրդների ստալինյան բարեկամությունը ապահովեց հայ ժողովրդի անտեսական ու կուլտուրական վերելքը։ Առանձնապես աճում-զարգանում են արվեստն ու գրականությունը։

Հայ ժողովրդի մեծ հաջողությունները սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում ցայտուն ապացույց է այն բանի, որ «միայն սովետական իշխանության գաղափարը բերեց Հայաստանին խաղաղություն և ազգային վերածնության հնարավորություն»[1] (ՍՏԱԼԻՆ)։

---

1 Ստալին, Երկեր, հ. IV, էջ 413։

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Ելմամ թերթելով Անդրկովկասի մինչհեղափոխական բոլշևիկյան մամուլը՝ մենք հաճախ ենք հանդիպում գրա-քննադատական նյութերի, հոդվածների, գրախոսությունների, հետաքրքիր ու արժեքավոր ասույթների և կարծիքների՝ առանձին գրողների և գրական երևույթների մասին։ Այդ նյութերի հավաքելն ու ուսումնասիրելը հնարավորություն կտա ճիշտ որոշել Անդրկովկասի բոլշևիկների վերաբերմունքը նախահեղափոխական Ռուսաստանի գրական կյանքի խոշոր երևույթների, փոքր ժողովուրդների գրականության, Լև Տոլստոյի և Մաքսիմ Գորկու և, առհասարակ, պրոլետարական կուլտուրայի նկատմամբ։

Ընկեր Ստալինի կողմից դաստիարակված և մարտերում ծռփված Անդրկովկասի բոլշևիկները այդ հարցերը լուծելիս՝ ընթացել են լենինյան ուղիով, հանդես են եկել որպես լենինյան հայացքների չեզոք պաշտպաններ և հետևողականորեն կենսագործել են դրանք։

Բազմազգ Անդրկովկասում բոլշևիկները, ընկեր Ստալինի ղեկավարությամբ, բարձր պահեցին պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշը։ Անխնայորեն ջախջախելով և մերկացնելով ամեն գույնի բուրժուական նացիոնալիստներին՝ նրանք այդ ազգությունների աշխատավոր մասսաներին համախմբեցին՝ ինքնակալության և կապիտալիզմի դեմ դրոհի ելնելու համար։

Լինելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի իսկական կրողներ՝ բոլշևիկները խորը համակրանքով էին վերաբերվում փոքր ժողովուրդների ստեղծած կուլտուրական արժեքներին։ Անխնայորեն մարտնչելով բուրժուական նացիոնալիզմի դեմ՝ նրանք շատ լավ էին ըմբռնում, որ «դրա հետ մեկտեղ չպետք է դեն դցել ամբողջ ազգայինը» (Ստալին)։ Եվ նրանք հանդես էին գալիս այն ամենի պաշտպանի դերում, ինչ արժեքավոր է և պրոգրեսիվ, ինչ ուղղուցիոն է և դեմոկրատական՝ յուրաքանչյուր ազգի ազգային կուլտուրայի մեջ։ Բավական է վերհիշել բոլշևիկների և բոլշևիկյան մամուլի գործունեության այդ բնագավառից թեկուզ առանձին փաստեր հիշյալ դրույթը հաստատելու համար։

Բոլշևիկների կողմից ղեկավարվող հայկական սոցիալ-դեմոկրատական «Պայքար» թերթը, բնութագրելով բուրժուական նացիոնալիստներին, մատնացույց էր անում, որ պարոն նացիոնալիստները, ինչ ազգի էլ պատկանելիս լինեն, «նրանց էությունը, հոգին նույնն է, տարբերությունը մաշկի», ձևի մեջ է։ Մերկացնելով հայ նացիոնալիստներին հարևան ժողովրդի նկատմամբ զրպարտություններ տարածելու մեջ՝ թերթն իր առաջնորդողներից մեկում բարձր է գնահատում վրացական խոշոր գրողներ Ի. Ճավճավաձեին և Ակ. Ցերեթելուն։

«Հայ ժողովուրդը,—կարդում ենք այնտեղ,—հայ ինտելիգենցիան շատ քիչ տեղեկություններ ունեն տաղանդավոր վիպագրող Իլ. Ճավճավաձեի, վրաց ժողովրդի պարծանք բանաստեղծ Ակ. Ցերեթելու մասին, որոնց տաղանդը այնպիսի մարգարիտներ է տվել, որոնք պատիվ կբերեն ամեն մի կուլտուրական ժողովրդի։

Հայ մամուլը հնարավորություններ չընձեռեց հայ ժողովրդին՝ այդպիսի ծանոթության համար...

Հայ ազգայնական մամուլի համար ոչ մի նշանակություն չի ունեցել վերևում նշված հասարակական գործիչների կուլտուրական դերը վրացական կյանքում և այդ մամուլի շնորհիվ մեր ժողովուրդը նրանց ճանաչում է ոչ թե որպես խոշոր

դրական գործիչների, այլ սոսկ որպես շովինիստների, որոնք ազգային ատելություն են սերմանել» («Պայքար», № 2, 1916 թ.)։

«Պայքար» թերթի առաջնորդող հոդվածից վերցված այդ խոսքերը տոգորված են իսկական ինտերնացիոնալիզմով, դեպի եղբայրական ժողովրդի կուլտուրական արժեքները տածած սիրով և համակրանքով։ Այդպիսի սեր էին տածում բոլշևիկները և մյուս ճնշված ժողովուրդների նկատմամբ, որոնց կուլտուրական մեծ արժեքները փորձում էին մոռացության մատնել շահագործողի կոպիտ ուժի միջոցով կամ թե արատավորել դրանք շովինիստական աղաղակներով։ Բայց չհաջողվեց և՛ մեկը, և՛ մյուսը։ Ցարական Ռուսաստանի ժողովուրդները, չնայած ցարիզմի և նրա գործակալության բոլոր ջանքերին, սրբությամբ պահպանեցին իրենց ազգային կուլտուրայի գանձարանը։

Երբ անպատք դերասանները խալտուրայի միջոցով ցանկացան դեհկացնել ուկրաինական մեծ պոետ Տարաս Շևչենկոյին նվիրված երեկոն՝ «Վիստոկ-կապելյա» բանվորական թերթը բոլշևիկ Ս. Սպանդարյանի հոդվածի միջոցով խիստ հակահարված տվեց այդ խալտուրշչիկներին և Թիֆլիսի քաղաքային վարչության մեջ նստած նրանց հովանավորողներին։ Հանդիսավոր ներկայացման ժամանակ այդ դերասանները, ինչպես նշում է հոդվածի հեղինակը, կատարեցին ամենադեհիկ կաֆեշանտանային բովանդակության կուպլետներ և ժողովրդական բեմը վերածեցին կաֆե-շանտանի։ Այդ փաստի մասին Ս. Սպանդարյանը խոր վրդովմունքով գրում է.

«Եվ այդ դեհկությունը տեղի է ունենում ուկրաինական մեծ բանաստեղծ, բազմատանջ պոետ, ժողովրդական գուսան Տարաս Շևչենկոյի մահվան հիսնամյակի օրը։ Այսպես մեծարեց հանճարեղ Կորտի, դեղարվեստագետի ու դրողի հի-

շատակը ժողովրդական տունը, որ գտնվում է Թիֆլիսի քաղաքային վարչության իրավասության տակ»[1]:

Այդ խոսքերի մեջ արտահայտված է ջերմ սեր դեպի եղբայրական ուկրաինական ժողովրդի կուլտուրայի մեծ ներկայացուցիչը:

Հարևան ժողովուրդների ազգային կուլտուրայի պաշտպանությանը նվիրված ելույթները պատահական երևույթներ չէին. ընդհակառակը, միանգամայն օրինաչափ էին և բխում Լենինի—Ստալինի պարտիայի ազգային քաղաքականությունից:

Բայց առանձնապես կարևոր նշանակություն ունի ռուս ժողովրդի առաջավոր և ռևոլյուցիոն կուլտուրայի պաշտպանության անդրկովկասյան բոլշևիկյան մամուլի էջերում: Եթե բոլշևիկները կրքոտությամբ պաշտպանում էին ցարական Ռուսաստանի ճնշված ժողովուրդների իրավունքները և կուլտուրական արժեքները, ապա ավելի ուժգին պաշտպանում էին նրանք ռուս մեծ ժողովրդի կուլտուրական ժառանգությունը՝ հաշվի առնելով վերջինիս պատմական բացառիկ նշանակությունը բոլոր ազգերի աշխատավորական մասսաների համար: Նրանք պաշտպանում էին ռուս մեծ ժողովրդի կուլտուրական հարստությունը ամենից առաջ հենց ցարական ռեակցիոներներից: Բոլշևիկները, ընկեր Ստալինի գլխավորությամբ, ռուս ժողովրդի ռևոլյուցիոն կուլտուրայի իսկական պահապանները և կրողները հանդիսացան Անդրկովկասում:

Ահա ինչ էր ասում ընկեր Ստալինի բարեկամ, աշակերտ և զինակից Ս. Սպանդարյանը 1911 թվին. «Մեր օրերում,— արձագանքելով Լենինին գրում էր նա,— երբ Պետերբուրգում նիստեր է ունենում պետական երրորդ դուման, երբ ռուս գրականությունը նվաճել ու գրավել է ամբողջ աշխարհը, իսկ ռուսական գիտությունը պատվավոր տեղ է բռնել մյուս երկրների շարքում,— մեր համալսարանները, մեր պրոֆեսու-

---

1 Ս. Սպանդարյան, «Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր», 1939 թ., Երևան, էջ 283:

քան, մեր ուսանող երիտասարդությունը վերապրում են... մոտալ ժամանակներ: Անցյալի բոլոր մութ ուժերը արշավանք են գործում համալսարանի դեմ, ազատ դիտության դեմ...

Ծանր փորձություններ են պատրաստվում մեր դիտության, մեր համալսարանների դեմ, բայց և այնպես կենդանի ոգին, կենդանի սկզբունքը, անցնելով բոլոր տանջանքներից, դուրս կգան հաղթանակով և նորացած»[1]:

Այդ ֆոնի վրա Սեւիան Շահումյանի՝ Լենինի—Ստալինի պարտիայի հավատարիմ զավակի գրա-քննադատական հոդվածները պատահական երևույթ չեն: Ռուս առաջավոր ու ռևոլյուցիոն կուլտուրայի պաշտպանության բնագավառում բացառիկ տեղ են գրավում նրա գրա-քննադատական փայլուն հոդվածներն ու արժեքավոր ասույթները Լև Տոլստոյի, Մաքսիմ Գորկու, ռուս ռևոլյուցիոն դեմոկրատների և առհասարակ գրական քաղաքականության մասին:

Բոլշևիկ քննադատը բարձր էր գնահատում գրականության և արվեստի դերն ու նշանակությունը մասսաների դաստիարակության գործում: Լինելով խորը դիտակ՝ նա իր քաղաքական պայքարում հմտորեն օգտագործում էր գրական երևույթները և կերպարները: Հոմերոսի, Գյոթեի, Պուշկինի, Նեկրասովի, Սայաթ-Նովայի, Հովհ. Թումանյանի և այլ գրողների ստեղծած պատկերները նա օգտագործում էր իր հրապարակախոսական ելույթներում՝ մեր պարտիայի թշնամիների դեմ: Նրա գրած հոդվածները բոլշևիկյան վերաբերմունքի պայծառ արտահայտություններ են դեպի փոքր ժողովուրդների գրականությունը, Լև Տոլստոյը և Մ. Գորկին և, առհասարակ, դեպի ռուսական գրականությունը:

Անդրկովկասի բոլշևիկները դաստիարակվել և աճել են ռուս մեծ ժողովրդի փառապանծ ռևոլյուցիոն տրադիցիաներով, ռուսական բանվորական շարժման հիման վրա:

Հայ ժողովրդի լավագույն զավակները՝ Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Ա. Միկոյանը դրանցից են: Նրանք նույնպես դաստիարակվեցին ռուսական ռևոլյուցիոն շարժման

1 Ս. Սպանդարյան, «Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր», 1939 թ., Երևան, էջ 259:

տրադիցիաներով և ընկեր Ստալինի ղեկավարությամբ անցնելով բոլշևիկյան դպրոցի բովով՝ դարձան մեր մեծ պարտիայի ականավոր գործիչներ։ Նրանց առաջին ուսուցիչները եղել են Բելինսկին և Չերնիշևսկին։ Իզուր չէ, որ Շահումյանը, ինչպես և մյուս բոլշևիկները, այդպիսի անկեղծ սիրով և խոր հարգանքով էին վերաբերվում ռուս ժողովրդի այդ մեծ զավակներին։

Շահումյանի համար նրանք դրական մեծ հեղինակություններ են։ Նա սրբությամբ պահում էր Բելինսկու և Չերնիշևսկու հիշատակը և հանդես գալիս որպես նրանց դրական-քննադատական ավանդների պահապան։

Շահումյանի դրա-քննադատական ժառանգության նշանակությունը մեծ է։ Դա նախաոևոլուցիոն բոլշևիկյան դրա-քննադատության փայլուն արտահայտություններից մեկն է։ Շահումյանն Անդրկովկասի իրականության մեջ, դրական քննադատության և մարքս-լենինյան դրականագիտության բնագավառում, խաղաց նույնպիսի դեր, որպիսին խաղաց Վ. Վորովսկին Ռուսաստանում, միայն այն տարբերությամբ, որ Շահումյանը դրականության հարցերում չունի մարքսիզմից կատարվող այն նահանջները, որ մատնացույց է արել Ա. Լունաչարսկին իր «Վարովսկին որպես դրական քննադատ» հայտնի հոդվածում։[1] Այդ նահանջները ամենևին էլ չեն նսեմացնում Վորովսկու հարուստ դրաքննադատական մեծ նշանակությունը, նրա մարտական հրապարակախոսական և բոլշևիկյան բնույթը։ Ավելին. Լունաչարսկին այդ հարցին մոտեցել է միակողմանիորեն. շեշտելով Վորովսկու քննադատական հոդվածների թերությունները՝ նա ուշադրություն չի դարձրել նրա քննադատության դրական կողմերին։

Վորովսկու համեմատությամբ Շահումյանի դրական-քննադատական ժառանգությունը կարող է զիջել քանակով, բայց ոչ որակով։ Շահումյանը հանդես է բերում հետևողա-

1 Տե՛ս Վ. Վորովսկի, Երկերի ժողովածու, հ. II, 1931 թ., Լունաչարսկու ներածական հոդվածը։

կան մարքս-լենինյան հայացքներ՝ գրական հարցերի լուծման ասպարեզում, և այդ հանգամանքը հատկապես արժեքավոր է դարձնում նրա գրա-քննադատական հոդվածներն ու ասույթները։ Նրանք մտել են նախահեղափոխական բոլշևիկյան գրաքննադատության ոսկե ֆոնդի մեջ և պահպանում են իրենց նշանակությունը և մեր օրերում։

Շահումյանի այդ հոդվածների, ինչպես և այն ամենի հավաքումն ու հրատարակումը, ինչ արժեքավոր է անդրկովկասյան նախահեղափոխական բոլշևիկյան մամուլում՝ գրականության մասին, կօգնի ավելի խորը ուսումնասիրելու բոլշևիկյան քննադատության մարքի պատմությունը և համոզիչ կերպով ցույց կտա, որ ընկեր Ստալինի կողմից ձևափոխված Անդրկովկասի բոլշևիկները անց էին կացնում լենինյան գիծը գրականության բնագավառում, պաշտպանում էին պարտիական դիրքերը նաև կուլտուրայի հարցերում։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՄՈՒՆԴԱՍԵՆՅԱԿ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
Երկու խոսք	5
Ներածության փոխարեն	7
Գլուխ I. Մանիան Շահումյանի գրական հայացքների ձևավորման մասին	16
Գլուխ II. Ստ. Շահումյանի գրական հայացքների տեսական նախադրյալները	35
Գլուխ III. Գրականության ընդհանուր հարցերը Ստ. Շահումյանի լուսաբանությամբ	62
Գլուխ IV. Լև Տոլստոյը Շահումյանի գնահատությամբ	103
Գլուխ V. Ստ. Շահումյանը և Մաքսիմ Գորկին	125
Գլուխ VI. Ստ. Շահումյանը և հայ գրականության պատմության մի քանի հարցերը	148
Եզրափակում	224

Գլխ. խմբագիր՝ Ս. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
Շապիկը Կ. ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆԻ
Տեխ. խմբագիր՝ Զ. ՄԱՐՈՒԽՅԱՆ

Վ/Ֆ. 03574 Պատվեր № 386. տիրաժ 3000։ Հեղ. 10,5, տպ. 14,5 մամ.։
Հանձնված է արտադրության 31/VII 1947 թ.
Ստորագրված է տպագրության 17/IX 1947 թ

ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պոլիգրաֆ. և Հրատ.վարչ.
№ 3 տպարան, Երևան, Ալավերդյան № 65

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220031862

[In]
10 n.

II
31862

ԱՐՏԱՇԵՍ
ՈՍԿԵՐՉՅԱՆ

ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԱՑՔԵՐԸ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

КНИГА ДОЛЖНА БЫТЬ
ВОЗВРАЩЕНА НЕ ПОЗЖИ
УКАЗАННОГО ЗДЕСЬ СРОКА.



ԱՐՏ. ՈՍԿԵՐՉՅԱՆ


8 +
Հատոր
ՅԿՈՒՀՕՅՀ Բաժնույան
ԳՐԱԴԱՐԱՆ է 1961 թ.

ՀՍՏ. ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

Ա 3/1862
4493



ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
1947



АРТАШЕС ВОСКЕРЧЯН
ЛИТЕРАТУРНЫЕ ВЗГЛЯДЫ
СТЕПАНА ШАУМЯНА
(на армянском языке)
Армгиз, Ереван, 1947

ԳԼՈՒԽ I

ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Շահումյանի գրական-քննադատական հոդվածները սերտորեն կապված են նրա հասարակական-քաղաքական կրթոտ պայքարի հետ և նրա պարտիական գործունեության անբաժանելի մասն են։ Ս. Շահումյանի, ինչպես և Սուրեն Սպանդարյանի գրական-քննադատական հոդվածների գոյության մասին չատերը տեղեկություն չունեն, և այդ մասամբ հասկանալի է։ Ս. Շահումյանը գրել է զերազանցապես քաղաքական թեմաների շուրջը. նա հրապարակախոս է, քաղաքական և սոցիալ-բոլշևիկ։ Սակայն նրան նվազ չափով գիտեն որպես գրաքննադատական հոդվածների հեղինակի, որպես մի մարդու, որը ուներ սուր գրիչ, քննադատական հոտառություն և գեղարվեստական ճաշակ։ Նա վիրաբեր գիտելիքների տեր էր գրականության բնագավառում և ջերմորեն սիրում էր այն։ Եվ այդ ունի իր պատմությունը։ Դեռ պատանի հասակից Ս. Շահումյանը առանձին հետաքրքրություն է հանդես բերում զեպի գրականությունը։ Գրող Արպիկ, որ Ս. Շահումյանի ընկերն է եղել Թիֆլիսի Ռեալական ուսումնարանում, իր հիշողություններում պատմում է.

Դպրոցական տարիներում Շահումյանը, բացի զեպի հասարակական-պատմական խնդիրներն ունեցած հետաքրքրություններից, առանձին սեր ուներ զեպի գրականությունը։ Նա գրական նորը ճաշակ ուներ և այն հաղվագյուտ ընթերցողներից էր, որոնք համակվում են գրվածքով, կարծես հեղինակի հետ ապրում նրա։ Նա աստիճանարար կարդում էր ոուս և օտար ականավոր հեղինակներին։ Սիրում էր քանաստեղծությունը։ Նրա մոտ զնալով, հաճախ լսում էի այս կամ այն բանաստեղծից կտորներ. նա արտասանում էր զղացմունքով։ Կապիկ բանաստեղծներից կարդում էր Բայրոնին, Գյոթեին, Հայնեին, Շեքսպիրին, ոուսներից՝ Պուշկինին, Լերմոնտովին, Նեկրասովին։ Հայ բանաստեղծներից նա հաճախ լսում էր նրանից Ա. Բաշինջաղյանի տողերը.

Տիեզերքի պերճ հյուսվածքն եմ,
Իմ մեջ արևն է փայլում...

Հետագայում նրա ուշադրությունն էր գրավում ոուս հեղափոխական բանաստեղծ «Նարոդովոլցեց» Յակուբովիչը, որը գրում էր Սիբիրից Պ. Յա. ատորպարիլյանը։ Հայ գրողներից այդ տարիներին նա արդեն կարդացել էր Րաֆֆու, Շիրվանզադեի, Նար-Դոսի գրվածքները»։ Երիտասարդ Շահումյանի գրական հայացքների ձևավորումը ընթացել է ռևոլուցիոն քաղաքական հայացքների ձևավորման հետ զուգահեռ։ Շահումյանի առաջին ուսուցիչները, որոնց անմիջական ազդեցությամբ ձևավորվել են նրա գրական հայացքները, եղել են ոուս մեծ ռևոլուցիոն-դեմոկրատները՝ Բելինսկին ու Չերնիշևսկին, որոնց նա իրավացիորեն համարում է մեզի տիտաններ։ Վերջիններիս նկատմամբ Շահումյանը միշտ բարձր հիացմունքով է արտահայտվել և հատուկ սեր տածել։

Դեռևս Թիֆլիսի Ռեալական ուսումնարանում սովորելու ընթացում (1892—1898 թ.) երիտասարդ Շահումյանը ակտիվ կերպով հետաքրքրվում է գրական-հասարակական հարցերով, կազմակերպում է աշակերտական խմբակներ, զեկուցումներ է կարդում ոուս և հայ հրապարակախոսների ու

1 «Մշակ», 1925 թ., № 21

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

քննադատների՝ Բելինսկու, Նալբանդյանի, Գ. Արծրունու մասին: Մեզ հասած նրա այդ շրջանի նամակները և ժամանակակիցների հիշողությունները ակնհայտորեն ցույց են տալիս, թե ինչպիսի՛ կրքոտ ու ուշադրությամբ էր նա հետևում գրական-հասարակական կյանքին:

Հենց այդ շրջանից էլ սկսած երիտասարդ Սունդուկյանը սկսում է լրջությամբ ու սիստեմատիկորեն ուսումնասիրել հայ, ռուս և եվրոպական կլասիկների, գրողների ու քննադատների ստեղծագործությունները և նրանց ազդեցությամբ սկսում է մշակել իր էսթետիկական հայացքները, ավելի ճիշտ՝ առաջին հիմնաքարը գնում այդ ասպարեզում: Նա հատկապես ստրիժում է Բելինսկիով և Չերնիշևսկիով, որոնց ազդեցությունը նրա մտավոր զարգացման վրա հանալիական է: Հենց այդ տարիներին է գրվում գեղարվեստական գրականության և քննադատության բնագավառին վերաբերող նրա գիտելիքների ամրակուռ հիմքը, որը հետագայում իր սքանչելի պտուղներն է տալիս: Մի նամակում (դեկտեմբեր, 1896 թ.) ուղղված իր ապագա կնոջը՝ Տեր-Դրիգորյանին, երիտասարդ Սունդուկյանը գրում է. «Ես գրել եմ ձեզ, կարծեմ, որ այս տարի մտադիր եմ լավ ծանոթանալ եվրոպական և, կարելի է ասել, նույնիսկ համամարդկային երեք հանճարեների (Շեքսպիր, Շիլլեր և Գյոթե) գրվածքների հետ: Կարդացել եմ արդեն և լավ գիտեմ Շեքսպիրի մի քանի գլխավոր գործերը, ինչպես՝ «Համլետ», «Մակբեթ», «Հռոմեո և Ջուլիետա» և «Ինչպես կուզեք»: Այսօր պետք է կարդամ Շիլլերի «Ավազակները» դրաման: Ես Ձեզ կուղարկեմ Շիլլերի կենսագրությունը և մի քանի ուրիշ գործեր»: Մի այլ նամակում (1899 թ.) Շահումյանը հաղորդում է նույն այդ հասցեհասցեին, որ ինքը լինելով Ռիգայում՝ «ծանոթացել է Ջոլայի, Գյոթի դը-Մոպասանի, Անատոլ Ֆրանսի և այլոց»: Նրա այն ժամանակվա և հետագա գրագրությունների մեջ առանձնահատուկ տեղ են գրավում նրա առաջնորդները ժամանակակից ռուս գրողների մասին. Ջեխովի, Կորոլենկոյի, Գորկու, Վերեսաևի և այլոց անունները հաճախ են հիշվում Ս. Շահումյանի նամակներում:

«Мир божий»-ի հունվարի համարում,—գրում էր Ս. Շահումյանը Ռիգայից (1899 թ.),—լավ-լավ բաներ շատ կան, որոնք նույնպես հափշտակիչ են, ինչպես «Два счастья»-ն կամ «В поисках света»-ն, իսկ «Русское богатство»-ի նամակների համարում մի հրաշալի բան կա, որը խորհուրդ կտայի կարդալ, այն է՝ «Необходимость»—Կորոլենկոյի»:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Վերեսաևի երկերի գնահատականը, որի մասին խոսք կլինի քիչ հետո:

Այդ փաստերը փայլուն ապացույց են այն բանի, որ Ս. Շահումյանի մեջ գրականության հանդեպ բավականին ցայտուն կերպով դրսևորվել է դեռևս պատանեկան տարիքից: Այդ ժամանակվանից սկսած նա սիստեմատիկորեն և խորապես ուսումնասիրում էր անցյալի մեծ գրողների ստեղծագործությունները և ուշադիր հետևում գեղարվեստական գրականության նորություններին, աշխուժորեն արձագանգում, պահպարպես նամակների միջոցով, գրական երևույթներին, աշխատում էր որպես թարգմանիչ, գրում էր զեկուցումներ ռուս և հայ քննադատների ու հրապարակախոսների մասին (Բելինսկի, Նալբանդյան և այլն): Այդ շրջանին է վերաբերում Գորկու «Մեկ անգամ աշնանը» նշանավոր պատմվածքի թարգմանությունը, որը առանձին գրքով լույս տեսավ 1901 թ.: Նրա ժամանակակից հայկական մամուլը գրական գնահատական տվեց այդ թարգմանությանը:

Այդ շրջանի՝ աշակերտական և ուսանողական շրջանի, նամակների ուսումնասիրությունը, ինչպես և ժամանակակիցների հիշողությունները, ցույց են տալիս, թե ի՛նչ ուշադրությամբ էր ընթանում երիտասարդ Շահումյանի գրական հայացքների ձևավորումը: Արդեն այդ ժամանակ նա հանդես է գալիս որպես արվեստի ռեալիստական սկզբունքի չերտ պաշտպան, վճռականորեն մերժում է ռեակցիոն ռոմանտիզմը և բարձր է գնահատում արվեստի և գրականության նաշխոտական ու դաստիարակչական նշանակությունը:

Իր նամակներից մեկում՝ գրված 1896 թվին, այսինքն, երբ հեղինակն ընդամենը 18 տարեկան էր, որտի խորին գոհունությամբ է հիշում նա իր դիտած մի ներկայացում, երբ նրա մասնակից դերակատարներից և ոչ մեկը չէր հասկանում նույն իր դերը և ապա առհասարակ ինչ բան է թեմը, թատրոնը, գեղարվեստը։ Այդ րոպեին,—սարկազմով ավելացնում է Շահումյանը,—«հասարակությանը գեղարվեստի միջոցով կրթելու» գործին իբր թե կոչված այդ դերասանները՝ մարդկության այդ ուսուցիչները, չափազանց զվարճալի և միևնույն ժամանակ չափազանց ողբալի էին թվում ինձ։[1]

Այս պահանջկոտությունը արվեստի դաստիարակչական բարձր նշանակությունը չհասկացող, չըմբռնող դերասանների, նրա ըմբռնում սարկազմը նրանց հասցեին, որոնք իրենց անուղղ մոտեցմամբ նսեմացնում, վարկաբեկում են արվեստը, որն իրավացիորեն ճանաչված է որպես հասարակության դաստիարակման կարևոր գործոն,—բնորոշ է երիտասարդ Շահումյանի գրական-էսթետիկական հայացքների համար։ Այս փաստը ցույց է տալիս, որ Սունդուկյանի դեռ այդ շրջանում շատ խորն էր ըմբռնում արվեստի, հատկապես ռեալիստական արվեստի ուժն ու դաստիարակչական նշանակությունը, նրա ճանաչողական դերը։ Հենց նույն նամակում մենք կարդում ենք թատրոնի մասին հետևյալ արժեքավոր տողերը. «Թատրոնը հասարակական կյանքի հիշտ արտահայտիչ պետք է լինի. որպես մի հայելի՝ նա պետք է ներկայացնի այդ կյանքը ճշտությամբ, այնպես, ինչպես որ նա է,—գրում է քննադատը և ավելացնում դերասանների մասին. «Ընդունք ցույց են տալիս մեզ մեր իսկական պահերները» ևնման։

Երիտասարդ Շահումյանը պաշտպանելով հանդերձ արվեստի օգտակարության տեսությունը՝ միաժամանակ խորապես զգում ու ըմբռնում էր գրականության, պոեզիայի գեղեցկությունը, նրա էմոցիոնալական արժանիքները, հանդես բերելով նուրբ ու զարգացած ճաշակ։ Իր գրական ըմբռնումները մշակելով արվեստի բարձր նմուշների ուսումնասիրությամբ, նա բացորոշ ձևով զանազանում է իսկական գրականությունը այն արտադրանքներից, ինչ արհամարհանքով անվանում է «Քիթաբանություն», այսինքն անորակ, խոտան գրվածքներ։ Նա մի յուրատեսակ ոգևորությունն է արտահայտում ու բուռն սեր տածում դեպի գրականությունը, հատկապես պոեզիայի բարձր արտադրանքները, ընդգծում նրանց գեղեցկությունն ու բարոյական ներգործող ուժը, ազդեցությունը։

Նույն թվին (1896 թ. նոյեմբերի 14) գրած մի այլ նամակում մեզ բերելով Թումանյանի «Անուշը» չքնաղ պոեմի առաջին վարիանտից մի քաղվածք, հեղինակն անկեղծ ոգևորությամբ շարադրում է իր հայացքները պոեզիայի մասին։ Նկատի ունենալով հարցի կարևորությունը մենք այն մեջ ենք բերում ամբողջությամբ։ Ահա այդ տողերը.

«Հիանալի բան է էդ անգեր «поэзия»-ն՝ բանաստեղծությունը։ Մարդ կարդալիս (ի հարկե ոչ թե մի քիաբանություն, այլ իսկական գեղարվեստական առեղծագործություն կարդալիս) բոլորովին փոխվում, վերանում է... հոգին լցվում է մի անասելի քաղցր երկրպագությով և, հետզհետե լայնանալով, մեծանալով, մոռացնել է տալիս մարդկային կյանքի բոլոր կիրքերը՝ նրա ախտն ու մուրը, բարձրացնում է մեզ մեր ամենօրյա ցածրությունից և շրջապատում է մեզ մի լուսեղեն քողով, որը յուր չափազանց փայլով արգելում է տեսնել հրկած ախտն ու մուրը։ Բայց կան մարդիկ, որոնք հերքում են գեղարվեստի ուժը, բանաստեղծությունը հիվանդոտ երևակայության ախտ են համարում. որոնք, գուցե և, ուղիղ են մասամբ, այսինքն այն չափով, թե գեղարվեստը մարդկային կյանքի անհրաժեշտ պայմաններից մեկը չէ՝ поэзия не есть насущный хлеб для человека[2]։ Դա, գուցե և, ուղիղ է, բայց հերքել նրա ուժը, ատախտ երևույթ անվանել այն բոլոր մարդկանց, որոնք ասում են, թե իրենք զմայլվում են գեղարվեստով, դա իմ կարծիքով սխալ է։ Դա նշանակում է չիմանալ, որ մարդուս զավի և վատի, ազաքսելիի և զզվելիին հասկացողությունները նրա կրթությունից են

[1] «Արձագանք» ամսագիր, № 20, 1935, Երևան

[2] «Поэзия не есть насущный хлеб для человека»-ը հայ մարդու համար։

կախված: Լավ է, թե՝ վատ, դրա մասին չեմ խոսում, բայց այս րոպեիս ես այնպես եմ կրթված, այնպես են կազմված իմ սերտն ու միտքը, որ գեղարվեստը՝ գրքին, գեղեցկին ու ձոլմարտությունը», շատ մեծ ազդեցություն են ունենում ինձ վրա: Այդ մարդկանց այնպես կրթում են, կամ իրենք իրենց այնպես կրթում, որ գեղարվեստը ոչ մի ազդեցություն չի ունենում դրանց վրա. այդ բանի վրա հիմնվելով նրանք հանդգնում են ծաղրել այն մարդկանց, որոնք խոնարհվում են գեղարվեստի առաջ:

Որքա՜ն անհերթ զգացմունք ու ոգևորություն կա այս տողերում, արվեստի, պոեզիայի էմբեռիկական և բարոյական կոչմի ինչպիսի՜ խորը և նուրբ ըմբռնում: Երիտասարդ հեղինակը հետևելով իր առաջին գրական ուսուցիչներին, հատկապես Բելինսկուն, կարող էր զմայլվել գեղարվեստով, նա իսկական քանաստեղծությունը համարում է «բարու, գեղեցկի և ճշմարտության մարմնացում», որը մարդու հոգին լցնում է քաղցր բերկրանքով և մոռացության է տալիս մարդկային կյանքի բոլոր կեղտերը, ախտն ու մուրը:

Այդ տողերի իմաստը ձիշտ ըմբռնելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ երիտասարդ Շահումյանի նույն շրջանի ընդհանուր գրական հասկացողությունները: Հանկատաի դեպքում կարելի է հանգել այն ձյուր եզրակացությանը, թե երիտասարդ հեղինակը, տարվելով պոեզիայի գեղեցկությամբ ու բարոյական ըմբռնումներով, անհրաժեշտ չափով չի գնահատել արվեստի գաղափարախական դերը, տուրք է տվել արվեստի վերացական, ռոմանտիկական սկզբունքին և այն, ինչ Չերնիշևսկին սահմանել է արվեստի համար՝ «կյանքի նկատմամբ դատավճռի» դեր խաղալ, գնահատել այն,—չի պահպանել: Այո, կրկնում ենք, եթե սահմանափակվենք միայն անձնական նամակի հիշյալ հատվածով, կարելի է այդպիսի եզրակացության գալ, որովհետև երիտասարդ հեղինակի այդ տողերը կարող են այդպիսի տպավորություն թողնել. բայց, երբ վերցնում ենք այդ հայացողությունը նրա նույն շրջանի գրական էսթետիկական ըմբռնումների ընդհանուր կապակցության մեջ, հեշտությամբ կարող ենք խոսափել այդպիսի հետևությունից և հասկանալ, որ երիտասարդ հեղինակը կանգնած է արվեստի ռեալիստական սկզբունքի վրա. նրա համար արվեստը կյանքի նշմարիտ արտացոլումն է: Այդ մենք տեսանք թատրոնի մասին արտահայտած նրա կարծիքները քննելիս: Եվ դա էլ եղել է նրա համար զեկավորող սկզբունք այդ շրջանում:

Որբ մենք խոսում ենք երիտասարդական շրջանի նրա գրական ըմբռնումների ու հետաքրքրությունների մասին, այդ բնավ չի նշանակում, որ Շահումյանն այդ ժամանակ արդեն ունեցել է ձևակերպված, վերջավորված գրական հայացքներ և զեկավարվել է դրանցով: Ինչ՛վ ոչ, այդ նշանակում է միայն, որ Շահումյանը գրականությամբ հետաքրքրվել է, այն էլ լուրջ և սիստեմատիկորեն, դեռ աշակերտական (Ռիշելիեի Ռեալական ուսումնարանի) և ուսանողական (Ռիգայի) շրջանում: Եվ այդ ընթացքում հաճախ, զլխավորապես նամակների միջոցով, դրսևորվել են նրա նոր ստեղծվող գրական հայացքները. նա թողել է հետաքրքիր ու արժեքավոր դիտողություններ արվեստի և առանձին գրողների ու գրական երևույթների մասին: Այդ բոլորի ի մի հավաքումը հնարավորություն կտա պարզաբանելու երիտասարդ Շահումյանի գրական ըմբռնումների ձևավորման ուղին, նրա զարգացումը դեպի մարքսիստական գրականագիտության դիրքերը: Այստեղ մենք կարող ենք միայն նշել, որ երիտասարդ հեղինակը դեռևս չմհալով հանդերձ արվեստի, գրականության խնդիրների վերացական ըմբռնումներից՝ հիմնականում պաշտպանում է նրա ռեալիստական ուղղությունը և բարձր է գնահատում այն, նկատի առաջավոր քննադատության, հատկապես ռուս ռեալիստ դեմոկրատ լուսավորիչների էսթետիկական ժառանգություններից:

Այդ հանգամանքն էլ իր խոր կնիքն է դրել Շահումյանի նույն շրջանի գրական ըմբռնումների ու գնահատությունների վրա:

Այս առումով խիստ հետաքրքրական են հեղինակի կարծիքները եվրոպական և ռուսական առանձին կլասիկների ու ժամանակակից աշքի ընկնող գրողների մասին: Մենք նրա այդ շրջանի նամակներում հաճախ ենք հանդիպում այնպիսի անուններ, ինչպիսիք են՝ Շեքսպիրը, Գյոթեն, Շիլլերը, Զոլան, Մոպասանը, Գուշկինը, Տուրգենևը, Կորոլենկոն, Չեխովը, Գորկին, Վերնսակը և ուրիշները իրենց դիպուկ բնորոշումներով: Պահա հետաքրքրական չեն Շահումյանի կարծիքները նաև առանձին հայ գրողների ու գրական երևույթների մասին. Ս. Արովյանը, Րաֆֆին, Դ. Աղայանը, Հովհ. Թումանյանը և այլն ստանում են իրենց գնահատականը: Եվ այդ գնահատականները ոչ միայն բացահայտում են հեղինակի գրական-էսթետիկական ըմբռնումները, համակրանքն ու հակակրանքը, այլև նրա նոր ձևավորվող ուսուցչի քաղաքական դիրքորոշումը:

Սակայն, բացի գրական հետաքրքրություններից, երիտասարդ Սեմյոնն ուներ և այլ ձգտումներ, որոնք ամենից շատ էին հուզում նրան: Նա հետաքրքրվում էր հասարակական-քաղաքական հարցերով: 90 թվականներին երիտասարդ Ս. Շահումյանը, որ դեռ մարքսիստ չէր, զբաղվում է իրեն ժամանակի հասարակական-կարգերի անարդարացիությունը, որը վիճակի ծանրությամբ ճնշում էր այն ամենը, ինչ կենդանի էր և կենսունակ և ելք էր փնտրում դրանից: Գեռևս գյուղատնտեսական նստարանի վրա նա նպատակ է դնում ճանաչել կյանքը, ուսումնասիրել այն: Կյանքը նրան անսահման էր թվում: Պատանու այդ ապրումների մասին բավական պարզությամբ պատմված է նրա այն նամակում, որտեղ նա խոսում է թատրոնի և դերասանների մասին (1896 թ.): Ստանիսլավսկու հարձակվելով ժամանակակից հասարակության և մարդկանց վրա՝ նա գրում է. «Ձեզ հայտնի է, որ իմ անձիս վրա ես շատ եմ ծաածում, հետևում եմ ուշադրությամբ իմ մտավոր և բարոյական աշխարհի զարգացման գործին և աշխատում եմ, ինքս ինձ վրա դիտողություններ անելով, հասկանալ ինքս

բան է մարդս և այն դիվային մեխանիզմը, որ կոչվում է «էյանք»... Եվ իսկապես՝ ի՞նչ կարող է լինել ավելի լուրջ, ավելի նշանավոր զբաղմունք, քան ինքնաճանաչությունը, ինքնագիտակցությունը, երբ կարելի է այսպես ասել: Շարունակության մեջ նամակի հեղինակը դրսևորել է մեզ արդեն հայտնի բացասական վերաբերմունքը դեպի այն չհասկացող դերասանները, որոնք «ենդրում էին օդը իրենց ձեռքերով և զվարճացնում հիմար հասարակությանը...»: Այս առնչությամբ նա հիշում է ծանի խոսքերը՝ Շեքսպիրի «Հեյմլետ» ողբերգությունից.

«Ժիլարդը համարն մի բան է միայն
Եվ մարդին ու կանայք ոսոի դերասաններ,
Ամեն մեկն ունի իսր մուտքն ու ելքը
Եվ մի մարդ իսր կյանքում խաղում է շատ դեր»:

«Մի զարմանալի մտախոհով (ассоциация идей) հիշեցի ես հանկարծ մարդկության ամենամեծ հանճարի՝ Շեքսպիրի, արտասանած այդ խոսքերը,—գրում է երիտասարդ Շահումյանը,—որ մի քանի շաբաթ առաջ կարդացել էի և կարծես նոր էի հասկանում: Այո, այս աշխարհը թատրոն է, եռևնթների մի թատրոն, որը հինգ բոլոր առաջ գրավել էր իմ ամբողջ ուշադրությունը. այս մարդիկ ոչնչով չեն զանազանվում այդ դերասաններից, որովհետև չեն հասկանում իրենց դերերը, նրանք «ապրող մարդկանց» դերերն են կատարում և չգիտեն ինչ բան է «մարդը», ինչ բան է «էյանքը»: Չեն հասկանում և չեն կարող հասկանալ, քանի որ չեն էլ ուզում մտածել այդ բանի մասին, ինչպես այդ դերասանները իրենց դերերի մասին... Ճանապհր քեզ շղնջաց սրտիս մեջ մի ձայն... դուրս արի խայտառակ քաոսից, ցոփաբիր քեզնից այդ մահարեր խավարը, որի մեջ գտնվել ես դու միևնույն ժամ, և որում խարխափում են քո բոլոր շրջապատողները... մի խոսքով՝ ապրիր գիտակցաբար, ճանաչիր քեզ»... Ահա իմ առաջ գրած ամենագլխավոր խնդիրը, որը միշտ և

ամեն տեղ լինում է ինձ հետ»[1]։ Երբ ապատող կյանքի նկատմամբ եղած սուր դիտողությունը երիտասարդ Ս. Շահումյանին (ինչպես երևում է նամակից) չի տանում դեպի հոռետեսական եզրակացություններ։ Հարցասեր պատանին խորասզնին կերպով ելք է փնտրում ստեղծված փակուղուց դուրս գալու համար, ոչ թե հոռետեսության մեջ, որը տանջում էր այն ժամանակվա շատ երիտասարդ մտավորականների, ոչ թե ինքնասպանության մեջ, որը փորձում էր, այլ կյանքի վերակառուցման համար մղվող պայքարի մեջ։ Նա հանդես է բերել ուժեղ կամք և կյանքի բուռն սեր, պայքարել է այդ սիրո համար։ Ահա Տեր-Գրիգորյանին գրած Շահումյանի (1896 թ.) նամակի տողերից. «Ինչ քո այն հարցին, թե ավելի լավ չէ՞ մեռնել, քան թե այսպես ապրել, ես պատասխանում եմ անկեղծ՝ ոչ, հարկավոր է ապրել, մահ փնտրելը կատարյալ փոքրոգություն է, որ ամոթ է բերում քեզ, կռվել, հաղթել և հաղթած դարձյալ ապրել և ապրել»։ Այսպիսի խորհուրդ էր տալիս 18-ամյա պատանի Սոսեփան Շահումյանը (ծնվել է 1878 թ. Թիֆլիսում)։ Հետագայում Ս. Շահումյանը գոնում է հասարակական-քաղաքական կյանքի փակուղուց դուրս գալու ճշմարիտ ուղին։ 1898 թ. ավարտելով Թիֆլիսի Ռեալական ուսումնարանը, 1900 թ. նա մեկնում է Ռիգայի պոլիտեխնիկումը, որտեղ սովորում է մինչև 1902 թիվը։ Ռիգայում եղած ժամանակ 21-ամյա Շահումյանը հետաքրքրվում է սոցիալիզմի հարցերով, ջերմեռանդորեն ծանոթանում է բանվորական շարժումներին. այդ մասին նա հաղորդում է իր նամակներից մեկում (1899 թ.). «Ես բացի պոլիտեխնիկումի համար պատրաստվելուց, պարապում եմ և ուրիշ առարկաներով։ Հիմնավոր կերպով ծանոթացա բանվորական շարժման հետ, այն հասարակական շարժման հետ, որ կրում է սոցիալիզմ անունը»։

---

1 Նամակը հրապարակված է «Հորիզոն» ամսագրում 1935 թվի հոկտեմբերի 1-ի № 20-ում։ Ս. Շահումյանի նամակներից մեզ բերված հատվածները վերցված են նույն այդ ամսագրի 1936 թվի հունվարի 15-ի համարում հրապարակված նյութերից։

Այդ շրջանից սկսում է Շահումյանի ակտիվ ռևոլյուցիոն գործունեությունը։ Ինչպես գրում է ընկերը Ա. Միկոյանը, Շահումյանը «էլաղ է հետաքրքրվում հասարակական կյանքով։ Դեռ Թիֆլիսի Ռեալական ուսումնարանում նա կազմակերպում է ազգերտական խմբակներ։ Դեպի քաղաքակոնվիլումն ունեցած այդ ջերմ հետաքրքրությունը արդեն Ռիգայի պոլիտեխնիկումում առանում է ակտիվ ռևոլյուցիոն գործունեության ձև, որի համար և արձակվում է այնտեղից իբրև «անբարեհուսյա»։

Շահումյանին չհաջողվեց ավարտել ինստիտուտը։ Արձակուրդի կարգադրությամբ նրան հետացրին ինստիտուտից ռևոլյուցիոն գործունեության մեջ մասնակցելու համար և արտաքսեցին հայրենիքը։

Այսպիսով, Շահումյանը դրական հետաքրքրությունների հետ զուգընթաց, ավելի ուժեղ հետաքրքրություն է հանդես բերում հասարակական-քաղաքական պայքարի հարցերի նկատմամբ, ակտիվ մասնակցություն է ունենում համառուսական ռևոլյուցիոն շարժմանը և երիտասարդ հասակում գլխավորվում է բանվոր դասակարգի ազատագրության համար պայքարող մարտիկների բանակին։ Ջևազրության համար պայքարող այդ ռևոլյուցիոն հայացքներն էլ իրենց կնիքն են գնում նրա դրական ըմբռնումների վրա, պայմանավորում դրանք։ Այդ կարելի է հաստատել ինչպես Ա. Ազրովյանի և Բաֆֆու մասին արտահայտած կարծիքներով։

Դեռևս Թիֆլիսի Ռեալական ուսումնարանում ակտիվորեն եղած ժամանակ (1897 թ.) Շահումյանը բարձր է գնահատում հայ նոր գրականության ու լեզվի հիմնադիր Աբովյանի ժխտեր Հայաստանի վիճակը, գտնելով, որ այդ վերջը «արդյունքի ոգեորությամբ է լցնում կարդացողի սիրտը», որ դա «ամբողջովին հեղինակի արցունքով է շաղախված և ամբողջովին բանաստեղծության և անկեղծ ոգևորության արտադրություն էր»։

Այդտեղ, այս արժեքավոր տողերում, որոնք խիստ կարևոր են երիտասարդ հեղինակի՝ դեպի մեծ լուսավորչին ունեցած վերաբերմունքը պարզելու համար, Շահումյանը ասում է. «Ես ինձ համարում եմ Աբովյանի աշակերտ, ես նրա գրքերից եմ սովորել հայրենասիրություն, ես նրա գրքերից եմ սովորել ատել ստրկությունը, ես նրա գրքերից եմ սովորել ատել ամեն տեսակ անարդարություն, ես նրա գրքերից եմ սովորել ատել ամեն տեսակ ստրկություն

նեցած վերաբերմունքի պարզաբանման համար, բացատրում է գրվածքի հասարակական արժեքավորումը, սահմանափակված է լոկ միայն ընդհանուր վերացական ու բարոյախոսական գնահատականով։ Այլ կերպ է Շահումյանը վարվում Բաֆֆու գեյլերը-ն արժեքավորելիս, երկու տարի հետո, Թիֆլիսի ուսանող եղած ժամանակ (1899 թվին գրած մի նամակում)։ Նախ և առաջ, նա վճռականորեն դեմ է արտահայտվում այդ վեպի մասին տարածված այն կարծիքներին, թե այդ գործը ամբողջ մի էպոխա է կազմել հայ ինտելիգենցիայի կյանքում, և որ ժեր ռևոլյուցիոն շարժման ամենամոմենտ գործերից մեկն է եղել, իր գործածքն է արտահայտում այդպիսի տեսակետների առիթով, հետո ավելացնում. «Ձեր առաջ նստած է մի հեքիաթասաց դերվիշ, պատմում է, փչում է, ինքը ոգևորվում, երեխայական փիլիսոփայություններ է անում ու էլի շարունակում է փչելը»։

Այս խիստ բացասական վերաբերմունքը Բաֆֆու գրական ուղղության, նրա ռոմանտիզմի նկատմամբ, ինչպես երևում է, անմիջապես պայմանավորված է գեղի Բաֆֆին ու նրա վեպի հասարակական-քաղաքական ուղղությունն ունեցած հեղինակի բացասական դիրքորոշումով։ Գեյլերը-ի հիշյալ գնահատականի մեջ երիտասարդ ռևոլյուցիոները զգեստորում է ոչ միայն ռոմանտիզմի նկատմամբ ունեցած իր մերժողական վերաբերմունքը, այլև տալիս է վեպի հասարակական-գաղափարական արժեքավորումը, որքան դա հնարավոր է եղել մի անձնական նամակում, դրանով էլ պայմանավորում է իր ժխտողական վերաբերմունքը բաֆֆիական նացիոնալիստական ռոմանտիկայի հանդեպ։ Մեր տրամադրության տակ եղած նամակների այդ հատվածները անբավական կերպով ցույց են տալիս, թե ինչպիսի զարգացում է տեղի ունենում երիտասարդ Շահումյանի գրական ըմբռնումների ու մոտեցումների մեջ, որոնք իրենց հերթին անդրադարձնում են նրա ձևավորվող քաղաքական ռևոլյուցիոն հայացքները։ Այս տեսակետից ուշագրավ է և վ. Վերնսաևի «Без дороги» վիպակի բնութագիրը՝ տրված նույն 1899 թվին։ Խորհուրդ տալով ապագա վիպագիր՝ արհեստավարժությունն ու պարզությունն ընդգծող այդ գրվածքը՝ երիտասարդ հեղինակը միաժամանակ անդրադարձել է համարում նրա հիմնական գաղափարական ուղղությունն ու արժանիքը։ «Իմ նոր գրողների մեջ,—կարդում ենք նրա նամակում,—աչքի ընկնող հեղինակ է, իսկ իմ հիշատակած գրվածքը նրա գլուխ-գործոցն է համարվում. իսկ իմ կարծիքով միակ գրվածքն է, որը սակայն հեղինակի համար դռներ է հրաուում։ Այդտեղ շոշափում է ժամանակակից երիտասարդության հոգու ամենանուրբ թելերին զգրվող հարցը—թ՞նչ պետք է անի, ինչ՞ն պետք է հավատա, թ՞նչ ձանապարհով պետք է ընթանա ինքնագոհության պատրաստ մարդը»։

Վերնսաևի հիշյալ գրվածքին նվիրված արժեքավոր այս տողերը ոչ միայն բնութագրում են տվյալ գրողին, նրա գրական առավելությունները՝ պարզությունն ու անկեղծությունը, որոնք, ինչպես Շահումյանն է ասում, շատերը համակրանք են ներշնչում դեպի հեղինակը, այլև նրա ստեղծագործության գաղափարական բովանդակությունը և հասարակական արժեքը։ Այսպիսով վերացական, գերազանցապես գրական ու էթիկական գնահատականներից ու որակումներից Շահումյանն աստիճանաբար անցնում է գրական երևույթների ու երևույթների հասարակական ու գաղափարական նշանակության արժեքավորմանը։ Դեմոկրատական, լուսավորական էսթետիկայի ազդեցությամբ ռեալիստական արվեստին գերահրամայություն տալու սկզբունքը հետագայում է այդպիսի մի անցում։ Գրական հայացքների այդ էվոլյուցիան, որն իր հերթին արտացոլում է նրա քաղաքական հայացքների ձևավորման ընթացքը և պայմանավորվում նրանով, իր ընթացքում զարգացմամբ հասնում է գրականության դերի ու նշանակության մարքս-լենինյան ըմբռնմանը, դասակարգային էության գնահատությանը։ Հենց դրանում է նրա գրական հայացքների զարգացման բուն իմաստը։

---

1 «Թատերգական արվեստ», № 1, 1936 թ.։

Այդ նոր շրջանում, երբ Շահումյանը Թիֆլիսում չանսպրոմյամբ ուսումնասիրում էր սոցիալիզմի մարքսյան ուսմունքը, ծանոթանում է նաև բանվորական շարժմանը և հասատառն քայլերով կանգնում է մարքսիզմի գիրքերի վրա։ Ահա այդ ավելի հասուն շրջանում Շահումյանը գրականությունն ու արվեստը դիտում է որպես իրեղուզիայի սպեցիֆիկ ձևեր, որպես հասարակական-քաղաքական դասակարգային պայքարի զենք և գրական երևույթները քննարկում է ու լուսաբանում մարքսիզմի դիրքերից, պատմության մատերիալիստական ըմբռնմամբ։

Երբ մի կողմ թողնենք նրա միջամտությունը «Մուշեղ-ի և «Գիշեր-ի միջև եղած բանակռվին, որտեղ նա քարկոծում է անձնական միտումներ ունեցող հրապարակախոսներին, ապա առաջին ցայտուն երևույթը այդ ուղղությամբ պետք է համարել նրա նշանավոր հոբելյանական ճառը Ղազարոս Աղայանի 40-ամյա գործունեության առիթով 1902 թվի մայիսին։ Ինչպես հայտնի է, արտաքսվելով Թիֆլիսից՝ Շահումյանը վերադառնում է Թիֆլիս։ Այդ ժամանակ Թիֆլիսում տոնում էին Ղազարոս Աղայանի 40-ամյա հոբելյանը։ Ուսուցիչների մարքսիստական հայ երիտասարդության անունից հոբելյանական նախատոնի կրքոտ ճառով հանդես է գալիս Սահակյան Շահումյանը։ Հոբելյանը կազմակերպող բուրժուա-նացիոնալիստական ինտելիգենցիան հնարավորություն չի տալիս Շահումյանին ավարտելու իր խոսքը։ Շահումյանի հոբելյանական ճառը խիստ քաղաքական բնույթ էր կրում և ուղղված էր ցարական ինքնակալության և հայկական նացիոնալիստական ինտելիգենցիայի դեմ։ Գրական հարցերին Շահումյանը մոտենում էր քաղաքական, պատմական տեսակետից։ Անտեղ քննադատության ենթարկելով ցարական Ռուսաստանի գոյություն ունեցող սոցիալ-քաղաքական կարգերը, հայկական բուրժուական ինտելիգենցիայի ստորաքարշությունը և սահմանափակվածությունը՝ Շահումյանը ուսուցիչն պայքարի կոչ էր անում ընդդեմ ցարիզմի բռնակալական ռեժիմի։

Որպես համոզված մարքսիստ, նա գտնում է, որ գրականությունը պետք է ծառայեցնել այդ վեհ գործին, ցարիզմի և կապիտալիզմի խորտակման համար մղվող պայքարին։

Դիմելով Աղայանին՝ երիտասարդ ուսուցիչները բարձր պարոնով բացագանչում է.

«Ազգային կուլտուրական գործունեության փոխարեն, որին դուք նվիրել եք առավելապես ձեր ուժերը, մենք քաղաքական, հեղափոխական կռիվ ենք քարոզում։ Բուրժուական սաղդաթորլյան ու սաղտամուտլյան փլատակների վրա մենք կարմիր, պրոլետարական դրոշ ենք պարզում, որի վրա գրում ենք առաջմ՝

Կռի՛վ բռնակալության դեմ,

Կեցցե՛ քաղաքական-ազատությունը...»։

Շահումյանն այդ ճառում հանդես է գալիս, ինչպես ինքն է նշում առաջաբանի մեջ, «նոր աշխարհայացքով զինված, ուսուցչ նորագույն հեղափոխական ավազանում մկրտված մեր ուսանող երիտասարդությանն անունից։ Այսպիսով նրա հոբելյանական ճառը, բուռ էությամբ, այլ նոր, մարքսիստական աշխարհայացքով զինված ուսուցիչների երիտասարդության գրական ու քաղաքական ելույթն է, նրա յուրատեսակ մի մանիֆեստը,—պատմական խոշոր նշանակություն։ Ինչպիսի լիբերալներ ու լիուլ տեղեր էլ որ ունենա նրա այդ ճառը, իսկ այդպիսի լիուլ տեղեր կարելի է նշել երիտասարդ ուսուցիչների այդ ելույթում[1], այնուամենայնիվ

---

1 Այդ թերությունների հիմքը մեծ չափով կարոտներ։ Առաջինը՝ երիտասարդ Շահումյանը ոչ ուսուցիչ-դեմոկրատներին (Բեռնիկյան, Զեմիրխանյան, Դոքթյուրյանի և այլն) անվանում է ազատամիտներ, լիբերալներ, բեև այդ բառը գործ է ածում պատմական առումով, այսինքն՝ նրա մեջ ուսուցիչն բովանդակության է դնում։ Որքան էլ վերապահում է արված, այնուամենայնիվ անբովանդակության անվտանգության աղերսայա է։ Ընդհանրապես պետք է նկատել, որ լիբերալիզմի որպիսին, որպես գործունեության ձևական և ոչ որպես բովանդակության, ոչ էլ ծագիքիր, ինչպես և 1861 թվի գյուղացիական ռեֆորմի և դրա հետ կապված տարբեր հասարակական հոսանքների գիրքի բնութագիրը թերի է և չի բավարարում այդ հարցերի մեր ներկա ըմբռնումներին։ Այդ թերությունը Շահումյանը հետագայում, հատուկ շրջանում հաղթահարել և վերանայել

Նիվ դրանք ոչ մի կերպ չեն կարող նսեմացնել նրա պատմական արժանիքներն ու խոշոր նշանակությունը: Ավելին, այդ Ճառը կարող է համարվել նրա հեղինակի գրական-քաղաքական հասունության լավագույն վկայարերը, և դա վիթխարի նշանակություն ունի բոլոր նրանց համար, ովքեր ուսումնասիրում են Շահումյանի կյանքն ու հասարակական-քաղաքական ու գրական գործունեությունը: Նա ոչ միայն կոչ է անում տապալել բռնակալության լուծը, ոչ միայն պահանջ է դնում գրողների առաջ ձեռք բերել հետևողական և առաջադեմ աշխարհայացք (հակառակ դեպքում նրանք դատապարտված են կործանման) և գրականության ու արվեստի պարտված են կործանման) և գրականության ու արվեստի հարցերը դիտում է պրոլետարիատի պայքարի տեսակետից, այլև նշում է գրականության զարգացման սերտ առնչությունը՝ քաղաքական ազատության հետ:

«Մեր կարծիքով,—ասում է Շահումյանը,—նա, ով ուզում է, որ հայ ժողովուրդը գրականություն ունենա, նա պիտի ամենից առաջ կոիվ հայտարարի այն պայմանների, քաղաքական այն կարգերի դեմ, որոնք արգելում են ժողովրդին, այդ հասարակական օրգանիզմի ազատ բնական զարգացումը:

է հիշյալ հարցերի լսնինյան գնահատականի ոգով (տե՛ղրեկ-պանովիչյանը և հնռանիչները հոդվածը, երևան, հ. I, էջ 184): Երկրորդ նիստում զեկուցում է Մ. Նալբանդյանի և Գր. Աբգարյանի անունները միասին վերարերում է Մ. Նալբանդյանի և Գր. Աբգարյանի անունները միասին հիշատակելուն: Շահումյանի Ճառից կարելի է դնում ուսուցիչ-գիմնազիստը, որ կարծես նա մի ժամարդակի վրա է դնում ուսուցիչ-գիմնազիստ Նալբանդյանին և լիբերալ Աբգարյանին: Ճիշտ է, Աբգարյանին դրանս հրապարակախոս ունենալ է մի շարք առավելություններ, որով նա տարբերվել է իր ժողովրդի հայրդներից, որոնց անխնա մատրակում է Շահումյանը

ասպարեզում: Այդ շրջանում էն, որ նա գրում է իր մի շարք արժեքավոր տեսական աշխատությունները մարքսիստական փիլիսոփայության, դասակարգային պայքարի տեսության և ազգային հարցի մասին: Նույն այդ շրջանում է Շահումյանը նը գրում և իր գրական-քննադատական հոդվածները հայ և ռուս գրականության և առանձին գրողների մասին: Գրական այդ հոդվածների իմաստը կարելի է ճիշտ ու լրիվ ըմբռնել միայն այն դեպքում, եթե այդ քննադատական ելույթները դիտենք հեղինակի մարքս-լենինյան մեթոդոլոգիայի լույսի տակ:

1 Թեսալոնիկեի ժամանակից Լոզանի հաշտության մեջ (1905 թ.), էվոլյուցիոնիզմը և ռևոլյուցիոնիզմը հասարակական զիտության մեջ» (1905 թ.), «Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան» (1906 թ.), «Ազգային կուլտուրական ավտոնոմիայի մասին» (1914 թ.), «Պոնտիզեենքյան և ռացիոնալիզմը» (1916 թ.) և այլն:

ԳԼՈՒԽ II

ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

I

Նախքան Ստեփան Շահումյանի գրականագիտական հայացքների ընդլայնվելը, անհրաժեշտ է շարադրել այդ հայացքների մեթոդոլոգիական հիմունքները, ճանաչել նրանց փիլիսոփայական նախադրյալներին:

Շահումյանը բազմակողմանիորեն զարգացած բոլշևիկ էր, կրթված մարքսիստ-լենինիստ: Նա տիրապետում էր մարքսիստական-մասնավորապես ամբողջական աշխարհայացքին: Բնական չէ, որ Լենինը ազգային հարցի վերաբերյալ Շահումյանին գրած նամակում (դեկտեմբերի 6, 1913 թ.) նրան դասում է շարքը այն ընկերների, որոնք «համապատասխ խորամիտ են և զբաղվում են ոլորտով»: Իսկ Սերգո Օրջոնիկիձեն «Բազմի 26 կոմունարների պայծառ հիշատակին» հոդվածում Շահումյանին անվանում է «Լենինական մարքսիզմի ծանր հրետանի»: Եվ իսկապես Շահումյանը Լենինիկ մարքսիստ էր: Անմիջական պրակտիկ ռևոլյուցիոն գործունեությունը և մշտական հալածանքը հնարավորություն չտվեցին Շահումյանին ավարտելու իր մտա-

1 Լենին, Երկեր, հ. XVII, էջ 89:

2 Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, Մոսկվա, 1939 թ., էջ 151:

հղացած բնորեմիկական աշխատությունները, ժամանակագրական, «Տիեզերական իռեալիզմը» խորագիրը կրող այն հոդվածների շարքը, որոնք ուղղված էին դաշնակցության տասնամյա վարանդյանի դեմ և ուրիշ փիլիսոփայական հոդվածներ, որոնք մեզ չեն հասել։ Բայց այն, ինչ Շահումյանը կարողացավ անել բնորեմի բնագավառում և ինչ թողել է մեզ, բավական պայծառությամբ բացահայտում է նրա աշխարհայացքի հիմունքները, նրանց մարքսիստական-մատերիալիստական էությունը։

Այժմ, երբ մենք ընթերցում ենք Շահումյանի այնպիսի տնտեսական աշխատություններ, ինչպիսիք են «Բանակարգերը ժամանակակից կրոպական հասարակության մեջ» (1905 թ.) «Էվոլյուցիոնիզմն ու ռևոլյուցիոնիզմը հասարակական զարգացման մեջ» 1905 թ.), «Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան» (1906 թ.), «Ազգային-գյուղատնտեսական ավտոնոմիայի մասին» (1914 թ.), «Գեներալիզացիան և նպատակալիզմը» (1916 թ.) և այլն, այդքի են զարմանում Շահումյանի մոտեցման խորությունը և լայնությունը քննարկվող հարցերի նկատմամբ։ Նա հանդիսանում էր որպես մարքսիստական-լենինյան մեթոդ, որը հնարավորություն էր տալիս ճիշտ գնահատելու հայաստանի տնտեսական զարգացման ընթացքը, ինչպես նաև հասարակական-քաղաքական կյանքի երևույթները։ Շահումյանի բնորեմիկական հոդվածների խնդիրն էր պատճառաբանելու և նրանց նշանակությունը ճիշտ գնահատելու համար հարկավոր է դիտել դրանք ոչ միայն այսօրվա տեսակետից (այդ իհարկե անհրաժեշտ է, սակայն բավարար լինել չի կարող), այլ այն ժամանակվա հայ իրականության կոնկրետ-պատմական իրադրության տեսակետից։ Ասած բան, որ Շահումյանը ասել է դասակարգերի և դասակարգային պայքարի, էվոլյուցիոնիզմի և ռևոլյուցիոնիզմի, ինտերնացիոնալի և ազգային հարցի մասին, բոլոր այդ խնդիրները մեզ կարող են թվալ պարզ, մատչելի, լուծելու համար առանձնահատուկ աշխատանքի կարիք չունեցող։ Բայց այդպես չէր այն ժամանակ, երբ գրվել են այդ աշխատությունները. մեզ այժմ պարզ թվացող հարցը պարզաբանելու համար պահանջվում էր հսկայական եռանդ, և առաջին ու տևական դիակուսիաների առարկա էր դառնում։ Երբ մենք այդ աշխատությունների գնահատմանը մոտենում ենք՝ հաշվի առնելով կոնկրետ-պատմական իրադրությունը (իսկ այդ անհրաժեշտ է), այն ժամանակ Շահումյանի աշխատությունների նշանակությունը էլ ավելի ակներև է դառնում։ Բայց այդ ամենևին չի նշանակում, թե Շահումյանի տնտեսական կամ գրականագիտական-քննադատական աշխատությունները միայն պատմական արժեք ունեն, որ դրանք կորցրել են իրենց նշանակությունը ներկայիս հասարակության համար։ Ընդհակառակն, Շահումյանի այդ աշխատությունները, ինչպես կտեսնենք ներքևում, չեն կորցրել իրենց մեծ նշանակությունը և՛ մեր օրերի համար։

XIX դարի և XX դարի սկզբի հայ իրականության մեջ եղած հասարակական մարդ և հասարակական հոսանքների պատմության մարքս-լենինյան լուսաբանության համար չի կարելի Շահումյանի ասույթների կոդքով անցնել, նրանք խիստ անհրաժեշտ են տվյալ հարցերի մարքսիստական հետազոտության համար։ Եվ դա հասկանալի է։ Մշտական կապը և զրազրությունը Լենինի հետ և համառոտ աշխատանքը ընկերի Սամսիի ղեկավարությամբ՝ օգնեցին Շահումյանին մարքսիզմի տեսակետից ճշտորեն գնահատել հասարակական հոսանքները և երևույթները հայկական իրականության մեջ։ Շահումյանը բավականաչափ կրթված մարքսիստ էր, որպեսզի գնահատեր այդ երևույթները ռևոլյուցիոն մարքսիզմի ոգով, հանուն պրոլետարական ռևոլյուցիայի։ Ահա թե ինչու Շահումյանի բնորեմիկական և ընդհանրապես ողջ հրապարակախոսական ժառանգությունը միշտարի նշանակություն ունի, որի վրա պետք է աշխատել, որը պետք է ուսումնասիրել։

Մարքսն ու Էնգելսը սիրում էին ասել, որ իրենց ուսմունքը դոգմա չէ, այլ գործողության ղեկավարություն։ Կա դոգմատիկ և ստեղծագործական մարքսիզմ։ Շահումյանը ստեղծագործական մարքսիզմի ներկայացուցիչ էր և կոմունիզմի մեծ հիմնադիրների ուսմունքը դիտում էր ոչ որպես

դրամա, այլ գործողության զենավարություն: Շահումյանը հենց այդպես էր հասկանում մարքսիզմը: Հասարակական երևույթները գնահատելիս՝ նա կիրառում էր մարքսիտական-մատերիալիստական մեթոդը՝ դիալեկտիկան: Առանց դիալեկտիկայի իսկական մարքսիզմ լինել չի կարող: «Դիալեկտիկան մարքսիզմի հոգին է»[1],—ասվորեցնում է Լենինը: Շահումյանը միշտ հասկացավ դիալեկտիկական մեթոդի դերն ու նշանակությունը բոլշևիկյան պարտիայի համար: Նա «Ազգային հարցը Ռուսաստանում» հոդվածում (1906 թ.) ընդգծում է դիալեկտիկական մեթոդի դերը, նրա առավելությունները մետաֆիզիկական մեթոդից, և դիալեկտիկական մեթոդը անվանում է ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի ուժն ու պարծանքը: «Չկա, ինչ որ ճշմարիտ է ընդհանրապես, կարող է երբեմն սխալ լինել մասնավորապես: Մենք դիտենք, որպես մարքսիստներ, որ բացարձակ վերացական ճշմարտություններ չկան, որ ճշմարտությունը միշտ կոնկրետ է, մեզ համար վա՛ տալոն այդ և ոչ ո՛չ»: Հանդես գալով ֆորմալ տրամաբանության օրենքների, մետաֆիզիկի մտածողության դեմ՝ Շահումյանը դրանց հակադրում է դիալեկտիկական մեթոդը: Պատմությունից վերցրած օրինակներով նա ապացուցում է երևույթների նկատմամբ դիալեկտիկական մոտեցման գիտական բնույթը: Ահա Լենաստանի հարցը: Երբ Լենաստանը ապրատամբից 60-ական թվականներին, կարլ Մարքսը կողմնակից էր նրա լիակատար անջատմանը Ռուսաստանից: Բայց հետագայում ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիան՝ ինքնակալության դեմ մարտնչողների ուժերը մանսատող այդ հիմնական հանգամանքը հաշվի առնելով և չէր պաշտպանում, որովհետև Լենաստանի պայմանները և շահերը և, ամենից առաջ, միջազգային պրոլետարիատի շահերը այլ էին 60-ական թվականներին, քան XIX դարի վերջին և XX դարի սկզբին: Ահա, ինչ որ օգտակար էր այն ժամանակ, վնասակար է այժմ և այլն: Ահա թե ինչ է նշանակում, որ ճշմարտությունը միշտ կոնկրետ է, որ պետք է միշտ հիմնական հանգամանքի և տեղի պայմաններ:

Չհիմնված այդ տեսակ մոտեցման, հասարակական հարցերը քննելու այդ մեթոդով,—ասոց.-դեմ.-ի ուժը և հպարտությունը կազմող դիալեկտիկական մերոդն[2] մեր պարտիան չուներ և ազգային և այլ բարդ հարցեր:

Մի այլ տեղ (ազգային կուլտուրական ավտոնոմիայի մասին) ընդդիմանալով հայ նացիոնալ-սոցիալիստներին, որոնք ազգային հարցը լուծում էին ընդհանրապես, առանց հաշվի առնելու տվյալ ազգային հարցի կոնկրետ բովանդակությունը, Շահումյանը ամենից առաջ այդ գործերին հակադրում է հարցի մարքսիստական-դիալեկտիկական մոտեցումը: «Մարքսիզմը,—ասում է Շահումյանը,—չունի և չի կարող ունենալ ամենաբուժիչ ռեցեպտ ազգային հարցում: Մարքսիզմի համար, եթե ցանկանում եք, գոյություն չունի ձեի ազգային հարց, նա հավատում է ազգային հարցերի գոյությունն: Այլ կերպ ասած, մարքսիզմը լուծում է ազգային հարցը յուրաքանչյուր առանձին դեպքում, նրա առանձնահատուկ և կոնկրետ գրանտումների մեջ, և ոչ թե ընդհանրապես, ժամանակից և իրադրության պայմաններից անկախ»:

Մարք-լենինյան մեթոդով, բոլշևիկյան պարտիայի ուժն ու պարծանքը հանդիսացող դիալեկտիկական-մատերիալիստական մեթոդով զինված էր մոտենում Շահումյանը ժամանակի հասարակական կյանքի ամենաբարդ հարցերի լուծմանը: Ոչ միայն ազգային հարցում, այլև գասակարգային պայքարի այլ երևույթների մեջ, թեորիայի և գրականության հարցերում Շահումյանն ամբողջովին կիրառում է դիալեկտիկական մեթոդը: Բայց այդ մեթոդը ոչ մի հաղորդության տված չէր կարող, եթե Շահումյանը չգիտենար հասարա-

---

1 Ստալին, Լենինիզմի հարցերը, 1939 թ., 11-րդ հրատ., Մոսկվա, էջ 247:

2 Շահումյան, Երկերի ժողովածու, հ. I, էջ 96, 1925 թ.:

1 Շահումյան, Երկերի ժողովածու, հ. I, էջ 93, 1925 թ.:

2 Շահումյան, Հոդվածներ և ճառեր, 1923 թ., առաջին, էջ 43—44:

կությունն զարգացման ամբողջ մեխանիզմը և նրա գիտելիքաբիկական բնույթը, դասակարգային պայքարի էությունը, որպես հասարակական պրոգրեսի բովանդակություն և շարժիչ: Որպես մարքսիստ-լենինիստ Շահումյանը ոչ մի ընդհանրապես դիալեկտիկական մեթոդի կողմնակից էր, չնայ որ դոգմատիզմն ունի և Հեգելի իդեալիստական դիալեկտիկան, այլ հենց մարքսիստական-մատերիալիստական դիալեկտիկայի, պատմության մատերիալիստական ըմբռնման կողմնակից էր: Նրա «Էվոլյուցիոնիզմն ու ռևոլյուցիոնիզմը հասարակական գիտության մեջ», որ գրված է 1905 թ., եզրերված է մարքսիստական սոցիոլոգիայի՝ պատմական մատերիալիզմի հիմնավորմանը: Այդ հարցից էլ սկսենք:

Ըստ մարքսիստական «պատմության մատերիալիստական ըմբռնման»,—ասում է Շահումյանը,—սկզբնական, այլ կերպ ասած, պատմության շարժիչ գործոնը համարվում է տնտեսական գործոնը: Մնացած բոլորը, այսպես կոչված իդեոլոգիական գործոնները՝ կրոնը, բարոյականությունը, գիտությունը, իրավունքը, հանդես են գալիս իբրև սկզբնականից ծնունդ առած երկրորդական գործոններ: Ուսումնասիրելով արտադրողական ուժերի մասին՝ Շահումյանն ընդգծում է օբեկտադրողական ուժերի մասին՝ Շահումյանն ընդգծում է օբեկտիվ ոեալ աշխարհի արտացոլումը մարդկանց գլխում, հանդես գալով արտացոլման մարքս-լենինյան ոեոդիալի պաշտպանությամբ՝ նա գրում է.

«Արտադրողական այդ ուժերը օգտագործելիս՝ մարդիկ որոշ հասարակական կամ արտադրական հարաբերություններ են սահմանում իրար մեջ: Դեպի բնությունն ու մեկը մյուսի նկատմամբ սահմանված փաստական հիմունքների վրա է միայն առաջանում այդ հարաբերությունների որոշակի ընթերնվը: Իրականությունը, ոեալ, օբյեկտիվ աշխարհն արտացոլվում է մարդկանց գլխում և կերպարանավորվում է որպես կրոնական, գիտական, իրավական և այլ տեսակետներ, որոնք, իր հերթին, մարմնացվում են որպես հասարակական հիմնարկներ, եկեղեցիներ, պետություն և այլ հաստատություններ:

Հասարակության արտադրողական ուժերն անընդհատ ծավալվում և փոփոխվում են: Դրանց համեմատ՝ նայած արտադրողական ուժերի ձևերին՝ փոխվում են նաև մարդկանց արտադրական փոխհարաբերությունները ու նրանց հարաբերությունները աշխատանքի պրոցեսում: Այդ հանգամանքի հետևանքով փոփոխություն է առաջանում նաև հասարակական գիտակցության մեջ—երևան են գալիս նոր գաղափարներ, կրոնական և իրավական նոր նորմաներ: Այսանդից պարզ է, թե ինչ մտքով են պատմության սկզբնական շարժիչ ֆակտորները համարվում հասարակական արտադրողական ուժերն և արտադրական հարաբերությունները, կամ այլ խոսքով՝ հասարակության տնտեսական ստրուկտուրան: Մնացյալ իդեոլոգիական ֆակտորները փոփոխվելով՝ ընկնում են դրանց ետևից, հարմարվում դրանց և այսպիսով երևան են գալիս որպես երկրորդական, դրանցից բխող ֆակտորներ: Հասարակական տնտեսական ստրուկտուրան դա այն հիմքն է, որի վրա կառուցվում է իդեոլոգիական «վերնաշենքը»[1]:

«Վերնաշենքը» համարելով երկրորդական, «գագաթից» բխող, Շահումյանը մատնանշում է նրա հակադրած ներգործությունը «գագաթի» վրա և ցույց է տալիս այդ ներգործության դիալեկտիկական բնույթը: Ելնելով հասարակական կյանքի տնտեսական հիմքը, որի զարգացումը տեղի է ունենում «տարերայնորեն», այսպես ասած՝ հասարակական գիտակցությունից, ցանկություններից և մարդկանց կամքից անկախ, Շահումյանը ընդունում է իդեոլոգիայի, կոլեկտիվ գիտակցության նշանակությունը, «դասակարգերի և դասակարգային պայքարի դերը», որպես վճռական գործոնի հասարակական զարգացման մեջ: Այս մասին Շահումյանը գրում է.

«Բոլորովին այլ բան ենք մենք տեսնում իդեոլոգիայի բնագավառում: Այստեղ դեր է խաղում հասարակական, կոլեկտիվ գիտակցությունը, որը միշտ ետ է մնում անհատական գիտակցությունից և ամեն մի էական տարբեր ձևավորում է ստանում, մարքսիանալով հասարակական հիմ-

1 Շահումյան, Երկերի ժողովածու, հ. I, էջ 41—42:

հարկությունները։ Այն կոլեկտիվները, որոնց միջոցով արտադրվում է հասարակական գիտակցությունը, կոչվում է դասակարգ (класс)։ Դասակարգերը այն մասերն են, որոնց բաժանում է հասարակությունը արտադրողական պրոցեսում։ Դրանք միատարր են իրենցից (однородные в себе), խմբավորում են միատեսակ փաստական դրություն ու շահեր ունեցող մարդկանց և տրամաբանորեն հակադիր են դեմ հասարակության այլ նման մասերը։ Ամենաուժեղ և կայունը իշխող դասակարգը արտադրողական պրոցեսում իր կոլեկտիվ կամքը հաստատական կամք է դարձնում, մարմնացնում է այդ հաստատական ու պետական հաստատությունների մեջ, որոնք նրա ձեռքին դառնում են հետագա դասակարգային պայքարի միջոցներ։ Այդպիսով սեփականությունը (ներկա դեպքում բոլորից շատ այդ «իրավական վերնաշենքն» է մեզ զբաղեցնում) պատմության մեջ միշտ հանդես է եկել որպես դասակարգային տիրապետության կազմակերպություն։ Բայց, ինչպես մենք գիտենք, կյանքը շարունակ առաջ է շարժվում, հասարակության արդյունաբերության ուժերը անընդհատ աճելով առաջացնում են հասարակական նոր խմբավորումներ, կյանքի են կոչում նոր դասակարգեր, նոր շահեր, ձգտում են հայտնաբերում նոր «վերնաշենքեր» առեղծելու, նոր, այլ տեսակի իրավական կազմակերպություններ հիմնելու և այլն։ Հին, իշխող դասակարգերը պաշտպանելով գոյությունն ունեցող կարգերի հետ սերտ կապված իրենց կենսական շահերը՝ չեն կարողանում հոժարակամ զիջել իշխանությունը,—և մենք տեսնում ենք, որ կրկին դասակարգային կռիվ է առաջ գալիս, վերջ ի վերջո հաղթությունը նորից ուժի կողմն է անցնում։

Ահա այստեղ է, որ հասարակական տարերային էվոլյուցիան զարգացումը փոխարինվում է անխուսափելի կատակլիզմներով, ցնցումներով, հեղափոխություններով, որոնք վերացնում են մարդկանց փաստական հարաբերությունների չհամապատասխանող, հասարակության հետագա զարգացումը կասեցնող հին «վերնաշենքը» (Շահումյան, Երկերի ժողովածու, հ. I, էջ 43—44)։ Շահումյանի այս հատվածներում տրված է պատմության մարքսիստական-մատերիալիստական ըմբռնման իր ժամանակի համար խոր բնութագրությունը, համառոտ ձևով շարադրված է մարքսիստական սոցիոլոգիայի էությունը։

Մարքսիստական սոցիոլոգիայի այդ շարադրման մեջ մեզ համար և մեր ընթացի համար առանձնապես հետաքրքրական է և կարևոր Շահումյանի դրույթը՝ օբյեկտիվ, ոչ աշխարհը մարդկանց գիտակցության մեջ արտացոլվելու մասին, ինչպես նաև այն մասին, որ իդեոլոգիան հասարակական և կոլեկտիվ գիտակցությունն է և արտահայտում է ոչ գոյություն ունեցող և գործող դասակարգերի շահերը։

Այստեղ Շահումյանը պայքարում է արտացոլման մարքս-լենինյան թեորիան, որն այնպես խորացնելին և բազմակողմանիորեն մշակել ու զարգացրել է Լենինը «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» հանճարեղ աշխատության մեջ։ Շահումյանի այդ դրույթներին մենք դեռ կվերադառնանք և վերադառնալու ենք հաճախակի, որովհետև դրանք կազմում են ճանաչողության մարքս-լենինյան թեորիայի հիմնաքարը և առանց դրանց անհնարին է ըմբռնել Շահումյանի մյուս դրույթները, օրինակի համար նրա պնդումը ազգային կուլտուրայի դասակարգային բնույթի մասին, պրոլետարական գրականության ծագման և զարգացման հետաքրքրության մասին նույնիսկ կապիտալիստական հասարակարգի պայմաններում։

Էվոլյուցիոնիզմը ռևոլյուցիոնիզմին հակադրելու և նրանց միջև դիալեկտիկական միասնությունը չտեսնելու փորձերը Շահումյանը վճռականորեն հերքում է որպես ոչ գիտական և հանդես է գալիս ընդդեմ թե՛ ռևոլյուցիայի անհրամեցվությունը բացասող հասարակական զարգացման լիբերալ-ռեֆորմիստական ըմբռնման և թե՛ նրա բուհարարչին-ավանտյուրիստական ըմբռնման, երբ արհամարհում են էվոլյուցիայի օրենքները, հաշվի չեն առնում կյանքի ռեալ պայմանները։ Շահումյանը հանդես է գալիս ընդդեմ ռևիզիո-

նախա ԲԵՐնշտեյնի, սոցիալիզ Զոմբարտի և այլ կեղծ մարքսիստների և սոցիալդեմների, որոնք փորձեց հայտարարում են «պատմության մատերիալիստական ըմբռնման» կողմնակիցներ, ոչ մի կերպ չեն կարողանում հաշտեցնել էվոլյուցիոնիզմը... «Zusammenbruch»-ի[1] թեորիայի հետ, «սոցիալական ուտոպիայի» հետ և իրականում պահում են բանվոր դասակարգի սխեմիկ ինչամիները: «Այսպիսով, էվոլյուցիոնիզմը ուտոպիոնիզմին» հետ հաշտեցնելու անզորությունը, «բացիսի և վերնաշենքի» փոխհարաբերության թյուր ըմբռնումը բերում հասցնում է այդ «մարքսիստներին» մարքսիզմի լիակատար ժխտման և դարձնում նրանց՝ բանվոր դասակարգի այդ «բարեկամներին», բանվոր դասակարգի ամենամատնի թշնամիներ, որոնք ջանում են ուղղել իրենց զենքը ժամանակակից պրոլետարական շարժման սրտին»:

Որպես բոլշևիկ ուտոպիոներ, Շահումյանը ընդհանուր թեորետիկական դրույթներից անում է պրակտիկ-քաղաքական եզրակացություններ, տալիս է ուեֆորմիստների և մարքսիզմի այլ թշնամիների թեորետիկական ելույթների քաղաքական բնութագրությունը: Եվ դրանումն է Շահումյանի ուժը որպես մարքսիզմի-լենինիզմի թեորետիկական-քաղաքական հիմունքների պաշտպանի: Մատերիալիզմի խեղաթյուրման մի այլ ձև Շահումյանը համարում է բիոլոգիայի զարգացման օրենքների մեխանիստական տեղափոխությունը սոցիոլոգիայի բնագավառը և այդ օրենքների ոչ ճիշտ, միակողմանի ըմբռնումը:

Ժամանակակից սոցիոլոգիական գպրոցը,—ամփոփում է իր հիմնական եզրակացությունը Շահումյանը,—որի հիմնաոլորն է կաղ Մարքսը, վերացրել է հասարակական գիտությունից սրա համար այնքան վճռական այդ շփոթությունը և այդպիսով ուղիղ և արդյունավետ ճանապարհ է բացել հասարակական գիտության զարգացման առաջ: Ժամանակակից սոցիոլոգիական էվոլյուցիոնիզմը ոչ միայն չի բացասում հեղափոխությունների օրինականությունը, հանկարծակի ու բռնի հեղաշրջումները, այլ, ընդհակառակը, պատմության զարգացման պրոցեսում դրանք համարում է էվոլյուցիայի հիմնական մոմենտ»[2]:

Սրանք են Շահումյանի հիմնական եզրակացությունները և հետևությունները: Շահումյանից մեջ բերված դրույթներից պարզ է, որ նա ամբողջովին կողմնակից է մարքսիզմի մատերիալիստական փիլիսոփայության տեսակետին և հանդես է գալիս որպես նրա ջերմ պաշտպանն ու պրոպագանդիստը:

Կարելի է պատկերացնել, մի՞նչպիսի՛ վիճաբանի նշանակություն են ունեցել Շահումյանի այդ հոդվածները հայ իրականության մեջ: 1905 թ. ռևոլյուցիայի եռուն շրջանում Շահումյանի ելույթները հասարակական զարգացման մարքսիստական թեորիայի փիլիսոփա-ռեֆորմիստական և ավանտյուրիստական-բունտարական ըմբռնման դեմ որքան մեծ նշանակություն են ունեցել: Բայց այդ ելույթներով չի սահմանափակվում մարքսիզմի փիլիսոփայական հիմքերի պաշտպանությունը:

Ինչպես երևում է անմավարտ մի հոդվածից, որ մեզ հաջողվեց գտնել մի ընկերոջ մոտ (այժմ դա տրված է ՀՍՍՌ Գիտ. Ակադեմիայի Գրականության Ինստիտուտին), Շահումյանը կրկին վերադառնում է այդ հարցին: Այդ հոդվածում Շահումյանը վերլուծում է սուբյեկտիվիզմի, Նոպեն-հաուերի վլուտարային իռռացիոնալիզմի դիրքերից կատարվող մարքսիստական մատերիալիզմի քննադատությունը: Ինչպես կարելի է ենթադրել՝ հոդվածը գրված է ռեակցիայի տարիներին: Հենց այդ շրջանում, ուժեղացող ռեակցիայի ազդեցության տակ, ինտելիգենցիայի լայն շերտերը դարձան դեպի ռեակցիոն փիլիսոփայությունը և կոչ արեցին ետ գնալ դեպի Շոպենհաուերը և ռեակցիոն փիլիսոփայության այլ արտահայտությունները: Մախիզմը և էմպիրիոմոնիզմը, որոնց

---

1 Կործանում:

2 Ս. Շահումյան, Երկերի ժողովածու, հ. I, էջ 40:

---

1 Ս. Շահումյան, Երկերի ժողովածու, հ. I, էջ 39:

ուշնացնող քննադատությունը ամել է Հենինը սմատերիալիզմի և էմպիրիոկրիտիցիզմն նշանավոր գրքում, ռեակցիայի արտահայտությունն էին փիլիսոփայության բնագավառում: Ռուսական մախիստները, ինչպես ապացուցեց Լենինը, ռեֆլեքսի էին ենթարկում մարքսիստական փիլիսոփայությունը մարքսիզմի ֆրազեոլոգիական ներքո: Դա փիլիսոփայական ռևիզիոնիզմի ծայրման ժամանակաշրջան էր: Ամենայն հավանականությամբ Շահումյանի հոդվածը նույնպես վերաբերում է այդ շրջանին: Նրա մեջ Շահումյանը քննադատում է Շոպենհաուերի փիլիսոփայական դրույթները, որոնք օգտագործում էին մատերիալիզմի ընդհանրները մարքսիստական մատերիալիզմը ռևիզիայի ենթարկելու, արհամարհելու համար:

«...այդ կողը (ասենք դեպի Շոպենհաուերը),—գրում է այդտեղ Շահումյանը,—միանգամայն արդիական դարձավ այն ժամանակից ի վեր, երբ սկսց մեզանում ծաղկել ռեվիզիոնիստական մտածողությունը:

...Ինչպես հաճախ՝ վերջին տարիների ընթացքում մեզ վիճակված է եղել հիշել նրա մասին, երբ առաջանում էին բառնաշրջոի խոսակցություններ դեռևս իմիների կամ ինդեռմինիզմի մասին՝ պատմական մատերիալիզմի անարգման համար: Իհարկե Շոպենհաուերը, որպես իսկական ֆիլիստեր, զանազան էր, որ մարդը միշտ եղել է ֆիլիստեր և կմնա այդպիսին միշտ,—և դրա համար էլ բացառում էր սակն մի պատմական զարգացում և դրանք բոլորը մորիլիզացնում էր ընդհանուր պատմական մատերիալիզմից: Այդ հոդվածից երևում է, թե ինչ կողմից է Շահումյանը մոտենում նեխվող կապիտալիզմի ռևավիցիոն փիլիսոփաներից մեկին՝ Շոպենհաուերի քննադատությանը: Շոպենհաուերի մելամխոլիզմը և պեսիմիզմը, ինչպես և Ֆրիդրիխ Նիցշեի գերմարդու քարոզը,—սուբեկտիվ վոլյունտարիստական իդեալիզմի դրսևորումն է և լրացնում է մեկը մյուսին:

Շոպենհաուերի պեսիմիզմը և Նիցշեի էդոիզմը միևնույն դրամի երկու կողմերն են, միևնույն էությամ՝ կապիտալիզմի անկման ու փտման տարբեր արտահայտությունները, որ բնորոշում են իմպերիալիզմի էությունը: Այդ ոգով է քննադատում Նիցշեի էդոիզմի քարոզը և գերմարդու մնորհան Շահումյանի խմբագրությամբ լույս ընծայվող բոլշևիկյան հայկական ժողթե մեջ:[1] «Լենինի հետևնա» հոդվածում մատնանշելով Նիցշեի էդոիզմի և իրանի ինդիվիդուալիզմի միջև եղող սկզբունքային տարբերությունը՝ հոդվածի հեղինակը գրում է. «Բրանդեսը իրավացիորեն նկատում է Նիցշեի ազդեցությունը իրանի վրա. սակայն պետք է զանազանել Նիցշեի էդոիզմը իրանի անհատականությունից: Նիցշեն պաշտպան է միայն հզոր և ընտրյալ անհատին, որ կյանքի կռվում կարողանում է խորտակել ըոլլին և խեղճին՝ հզոռս իր նպատակին շահերի բարդավաճման, նա պահանջում է չրարհրացնել խորտակվող սալը, այլ ընդհակառակը մի հարվածով փուշրացնել նրա անկումը, ուրիշ խոսքով, Նիցշեն էդոիստ է և այն էլ արիստոկրատ էդոիստ»:

Մեր կողմից վերը շարադրված Շահումյանի բնորոշիչական հայացքներում ձևակերպված են նրա գրականագիտական հայացքների նախադրյալները: Առանց հաշվի առնելու այդ ընդհանուր մեթոդոլոգիական դրույթները, չի կարելի լիակատար պատկերացում կազմել Շահումյանի գրականագիտական հայացքների մասին, ըմբռնել նրանց նշանակությունը: Սակայն կա և մեկ ուրիշ բնագավառ, որը պակաս կարևոր չէ այդ իմաստով. խոսքը Շահումյանի ազգային հարցի մնորհաքիական աշխատանքների մասին է: Այդ հարցը սեր-

---

1 «Մայե», № 22, 1906: Օգտագործելով հիշյալ հոդվածը, որի հեղինակը դեռ սոսկ չի պարզվել, մենք պետք է վճռապահում անենք, որ նախ դեռ որպես լրացուցիչ նյութ, որն օգնում է գաղափարաբնույթ այն դիտում ենք որպես լրացուցիչ նյութ, որն օգնում է գաղափարաբնույթ Շահումյանի մնորհաքիական և գրականագրաքննական դիրքերը:

Այդ հոդվածը տպագրվել է բոլշևիկյան մնորհում, որի խմբագիրն է եղել Շահումյանը նույնիսկ, եթե վերջնականապես պարզվի, որ նրա հեղինակը Շահումյանը չէ (տատագրված է գծոմանեանի շ. տատով), միևնույն է՝ այդ հոդվածը կարելի է օգտագործել որպես լրացուցիչ կամ օժանդակ նյութ, որն այսպես թե այնպես, եթե ոչ ուղղակի, ապա անուղղակիորեն կապված է Շահումյանի անվան հետ

տորեն կապված է գրականության և առհասարակ ազգային կուլտուրայի հետ և նրա կողքով անցնելը անհնարին է՝ մեզ հետաքրքրող հարցի ճշգրիտ լուծման համար, և մենք այդ կապակցությամբ էլ կխոսենք՝ մի կողմ թողնելով ազգային հարցի մանրամասին վերլուծությունը և նրա շահումյանական ըմբռնման լիակատար զուգահեռները։

II

Ազգային հարցին Շահումյանը մոտենում է որպես մարքսիստ-լենինետ և այն լուծում է լենինյան-ստալինյան ըմբռնման ոգով։

Մենք արդեն ասեցինք, որ Շահումյանը բացահայտեց «վերնախնդի», մանավանդ իրեղոգիական վերնաշենքի դասակարգային էությունը՝ որպես զանազան դասակարգերի շահերի արտացոլում։ Հասարակական գիտությունները, տվյալ դեպքում ազգության մասին եղած գիտությունը, ամենից ավելի է մերձենում այդ օրենքին։ Եվ Շահումյանը, հետևելով Լենինին, ձգտորեն մատնացույց է անում հասարակական գիտությունների, մասնավորապես ազգային հարցի մեջ բուրժուայի դասակարգային էությունը։ Ի՞նչ է ազգը, ո՞րն է նրա էությունը, ինչո՞ւ մարդիկ այդպես շատ են զբաղվում այդ հարցով և վերջապես ինչպե՞ս լուծել այդ հարցը։ Այդ հարցերին զանազան գիտնականներ տարբեր պատասխաններ են տալիս։ «Ճշմարտությունը մեկ է, սակայն պատասխանները մի քանիս,—ասում է Շահումյանը։ Եվ այդ միանգամայն հասկանալի է, ազգային հարցը հասարակական հարց է և, որպես այդպիսին, շոշափում է զանազան հասարակական դասակարգերի շահերը։ Եվ ամեն մի դասակարգ, հանձին իր ներկայիցների, ցանկանում է, որ ճշմարտությունը այնպես լինի, ինչպես այդ ձեռնտու է իրեն, այդ դասակարգին։

Մեզ մի որևէ դասակարգի շահերին համապատասխանում է իսկական ճշմարտությունը, մյուս դասակարգերը ձգտում են թողարկել, խեղել և չճանաչել այդ ճշմարտությունը։ Ահա՛ թե ինչու անգամ Լենին «Հոկտեմբերյան հեղափոխության հիսնամյակ» ճշմարտությունը,—ասում է մի ուսս գիտնական (Շահումյանը նկատի ունի Լենինին), շուրթեր մի որևէ դասակարգի չհանելու, հավատացած կարելի էր լինել, որ մինչև օրս այդ ճշմարտությունը ճանաչված և ընդունված չէր լինի բոլոր մարդիկց կողմից»[1]։

Ճշմարտորեն բացահայտելով հասարակական գիտությունների և առհասարակ իդեոլոգիայի դասակարգային և պարտիական էությունը, ուղղակի հենվելով Լենինից քաղված մեջբերման վրա՝ Շահումյանը ցույց է տալիս ազգային հարցի դասակարգային էությունը։ Շահումյանը, որպես ռևոլյուցիոն մարքսիզմի ներկայացուցիչ, գտնում է, որ ազգը կոնկրետ-պատմական զարգացման արդյունք է, և, որպես կոնկրետ-պատմական երևույթ, ունի իր պատմությունը, սկիզբը, վերջը։ Ստալին։ Ազգությունը բնական և հավերժական չէ։ Առանձին ազգերի հանդես գալը և ձևավորումը կապված է ապրանքային արտադրության հետ, կապիտալիզմի զարգացման, արշավանքի հետ, որը խորտակելով ժողովուրդների ֆեոդալական մասնատվածությունը՝ ստեղծեց բուրժուական ազգային պետությունը։ Ազգային հարցը բուրժուազիայի դեմ պրոլետարիատի մղած դասակարգային պայքարի ընդհանուր հարցի մի մասն է, և այդ հարցը արմատական ձևով կարող է լուծել միայն հեղափոխական պրոլետարիատի ռևոլյուցիան։ Այսպիսին է ազգային հարցի մարքսիստական լուծումը, որ պաշտպանում է Շահումյանը։

Այդ ամբողջ մարքս-լենինյան հետևողականության բարձրի վրա կանգնած՝ Շահումյանը քննադատում է և չափազանց մարքսիզմին հակադիր ազգային հարցի զանազան ըմբռնումները և անխնայորեն մերկացնում է ազգությունյան ոչինչնախատական մենկաբանությունը։ Ժխտելով ազգության՝

---

1 Շահումյան, Երկերի ժողովածու, հ. 1, էջ 71—72։

2 Ստալին, «Մարքսիզմ և ազգային-գաղութային հարց», 1932 թ., էջ 6, Մոսկվա։

Նացիոնալիստական մենիաբանությունը իրրև «ազգային ինքնափոխանցության», «ազգային զարգացման», «ազգային տիպ» արտահայտությունն Շահումյանը գտնում է, որ «Ազգությունը մի կողմից մի որոշ բնական երևույթ է, իր բնական՝ նյութերն և կամ հոգեբանական բովանդակությամբ, մյուս կողմից՝ մի որոշ հասարակական երևույթ, հասարակական հարաբերություն է։ Ուրիշ խոսքով, մի կողմից՝ նա միևնույն ատիպտորիայի վրա խմբված, շատ մեծ թիվ ընդհանուր ծագումով կապված, միևնույն լեզվով խոսող, շատ մեծ քիչ ընդհանուր կրոնով, բարքերով ու սովորույթներով ապրող միլիոնավոր, երբեմն տասնյակ և նույնիսկ հարյուր միլիոնավոր մարդկանցից բաղկացած մի բազմություն է, մյուս կողմից՝ նա մի հասարակական կամ պետական օրգանիզմ է։ Ազգի այդ բնորոշումը միշտ է, մարքսիստական։ Սակայն Շահումյանը չի սահել այդ հարցի սպաոիր, ամբողջական ձևակերպումը։ Տվյալ հարցի լուծմանար, նոր մարքսիզմի բնորոշումը տվել է ընկեր Ստալինը իր «Մարքսիզմ և ազգային հարցը» հանճարեղ աշխատության մեջ։ Այդ աշխատության մեջ ընկեր Ստալինը տալիս է ազգի կլասիկ բնորոշումը։

«Ազգը դա պատմականորեն կազմավորված կայուն ընդհանրություն է լեզվի, տերիտորիայի, տնտեսական կյանքի և պսիխիկական կերտվածքի, որն առտահայտվում է կուլտուրայի ընդհանրության մեջ»[1]

Շահումյանը հենվելով ազգային հարցի լենինյան-ստալինյան ըմբռնումից՝ «Ազգային կուլտուրական ավտոնոմիայի մասին» իր բրոշյուրի մեջ գլխավոր նախատամարտ է տալիս հայկական նացիոնալ-սոցիալիստներին, մենշևիկներին, որոնք սկսել էին քարոզել և պաշտպանել ռեակցիոն ու վնասատար, նացիոնալիստական սկզբունքներով առաջնորդված ազգային կուլտուրական ավտոնոմիան։ Ըստ Շահումյանի՝ «նրանց շրթների կուլտուրայի ընդհանուր հասկացողությունը սատիկ նեղացրված էր, և, կուլտուրա ասելով, նրանք հասկանում են միայն ազգային կուլտուրան, և կուլտուրայի սոցիալ-դասակարգային բնույթը նացիոնալիստները չեն ընդունում։

Քայց ինչո՞ւ են նրանք այդքան սիրել կուլտուրա խոսքը։ Որովհետև,—պատասխանում են նրանք,—ամեն կուլտուրա ազգային է։ Նա իր սիրտը առնում է ազգային առանձնահատկություններից... Դարոցական գործում, դրամական միջ, առհասարակ կուլտուրական բնագավառում իշխում է ազգային ընդունն։ Հետևապես պարզ է,—մտածում են Դ. Ա.-ները,—որ կուլտուրան միշտ ազգային է»։

Որքա՞ն ժանծաղամիա պետք է լինել կամ, լավագույն դեպքում, որքա՞ն կուրացած պետք է լինել նացիոնալիստական ֆրազային՝ այս տեսակ հանձարեղ անհեթեթություններ ասելու համար։ Եվ այդ մարդիկ հավատացած են, որ իրենց բնորոշով խոսում է ինքը մարքսիզմ[2]։

Առաջ քաշելով կուլտուրայի այդպիսի ըմբռնումը, այդ նացիոնալիստները նկատում էին նրանից, որ «Ազգությունն հիմնական հատկանիշը լեզուն է»[3]։ Մերկացնելով կուլտուրայի և ազգության վերաբերյալ այդ խորապես ռեակցիոն-նացիոնալիստական ըմբռնումը՝ Շահումյանը դրան հակադրում է կուլտուրայի մարքս-լենինյան ըմբռնումը։ Ըստ Շահումյանի՝ կուլտուրան դասակարգային բնույթ ունի, գոյություն չունի և չի կարող գոյություն ունենալ մաքուր ազգային կուլտուրա ասելով, որտեղ դասակարգային պայքարն է որոշում հասարակական զարգացման ընթացքը և ելքը։ Ինչը ազգային հարցը կամ ազգային կռիվը դասակարգային կռվի արտահայտություններից մեկն է, որ նա տնտեսական և քաղաքական բնույթ ունի, որ իր ծագումով և թե իր նպատակներով[4]։ Շահումյանը վճռականորեն հերքում է նացիոնալիստների փորձերը տալու բուրժուական դասակար-

---

1 Շահումյան, Երկերի ժողովածու, հ. II, էջ 31—32։
2 Նույն տեղ, էջ 39։
3 Նույն տեղ, էջ 40։

---

1 Շահումյան, Երկերի ժողովածու, հ. II էջ 75—76։
2 Ստալին, «Մարքսիզմ և ազգային-գաղութային հարցը» էջ 9։

գերի կալի չշանառդյունից։ լեզուն, կուլտուրան և ազգային հարցը առհասարակ, կուլտուրան ներկայացնել որպես դասակարգերից դուրս, վերդասակարգային կատեգորիա։

«Այո՛, մենք ընդունում ենք,—ասում է Դ. Ա-նը,—դասակարգային կռիվ «քաղաքական և տնտեսական հարցերի մեջ», բայց կուլտուրան չէ՛ որ միշտ ազգային է։ Չէ՞ որ հայ լեզուն ընդհանուր շարժմանսրիւն է թե՛ հայ բանվորի և թե՛ հայ բուրժուայի ու տերտերի համար»[1]։ Այսպիսով ամբողջ հարցը նացիոնալիստները հանդիսանում են ազգային լեզվին, իսկ ազգային լեզուն ամբողջ դեպքում ազգային կուլտուրայի ձևերից մեկն է և ոչ թե նրա բովանդակությունը, ոչ թե նրա էությունը։ Այսպիսով, նացիոնալիստներն անտեսելով բովանդակությունը՝ հետաքրքրվում էին միմայն ձևով։ Ամենից, նրանք բովանդակությունը դնում էին այդ ձևին, իսկ կուլտուրայի բովանդակությունը, նրա դասակարգային բնույթը մոռանում են, քողարկում։ Մինչդեռ ամեն տարրական ծրագրություն, որ կուլտուրան որոշվում է իր դասակարգային բովանդակությամբ և ոչ ազգային պատգրքով, միանգամայն անհասկանալի է մնացել մեր ջարդարարների համար,—նկատում է Շահումյանը։ «Ժնեղալական կուլտուրա, բուրժուական կուլտուրա», «պրոլետարական կուլտուրա»—այդ բոլորը դասարկ հնչյուններ են նրանց համար։ Նրանք ճանաչում են միայն «ազգային կուլտուրա»,—որը այն էլ... «ահիրքն է առնում ազգային պատմական գաղափարներից !)...»[2]։

Շահումյանը հաճախ է խոսում և ճշդորեն ընդգծում բովանդակության, կուլտուրայի դասակարգային էության առաջատար դերը։ Խոսելով դպրոցի մասին՝ Շահումյանը կրկին մատնացույց է անում ամենակարևորը՝ դասակարգային բնույթը։ «Այստեղ էլ՝ կրթական գործում, այդ տիրապետական բնագավառում՝ ամենի կարևորը դասակարգային միջոցն է և ոչ ազգային ճեղքը, հումբյունը՝ և ոչ ձևը։ Որքա՞ն էլ կարևոր լինի լեզվի խնդիրը, նա, համենայն դեպս, մի մասն է միայն, և համեմատաբար երիտորդական մասը դպրոցների վրա ծանրացած ընդհանուր դասակարգային քաղաքականության»։ Դպրոցական գործը առհասարակ և լեզվի հարցը մասնավորապես, ըստ Շահումյանի տիրապետ զենքերից մեկն է հոսող դասակարգերի ձեռքին, և ոչ մի դասակարգ այնքան տեսար չի դառնի, որ կամովին տա իր ձեռքից այդ զենքը»[3]։

Դժվար չէ նկատել, որ այդ հասկացողությունների հիմքում ընկած է արտացոլման մարքսիստական-լենինյան ընդրիան, որը պարտադրում է Շահումյանը։ Գոյությունն չունի միասնական ազգություն։ Ազգությունը տրոհված է դասակարգերի, որոնցից յուրաքանչյուրն ունի իր դասակարգային բնույթը և իր իդեոլոգիան, որը վերջին հաշվով արտացոլում է նրանց տնտեսական և սոցիալ-քաղաքական ձգտումները։ Կուլտուրան, բառի նեղ հասկացողությամբ, հոգևոր կուլտուրա է, որով դասակարգերի շահերի արտահայտությունը։ Գործնականում, չնայած իր ընդհանուր դրությունը կապիտալիստական հասարակարգում, այնուամենայնիվ ստեղծում է հոգևոր կուլտուրայի որոշ տարրեր ոչ միայն քաղաքական պայքարի բնագավառում, որն անհամեմատ զարգացած է, այլև գրականության և արվեստի բնագավառում։ Այդ է վկայում Մաքսիմ Գորկու, Հակոբ Հակոբյանի ստեղծագործությունների Շահումյանի բնութագիրը, որպես պրոլետարիատի ձգտումների և պայքարի գրական արտահայտության։ Այսպիսով, միասնական ազգային կուլտուրայի կեղծ հասկացողությունը, որպես ազգային ոգու և առանձնահատկությունների արտահայտություն, վճռականորեն հերքում է Շահումյանը և նրան հակադրում ազգային կուլտուրայի լենինյան-ստալինյան ըմբռնումը, որպես որոշ դասակարգերի շահերի արտահայտություն։

---

1 Շահումյան, Երկերի ժողովածու, հ. II, էջ 37։
2 Նույն տեղ, էջ 37։
3 Նույն տեղ, էջ 32։

1. Շահումյան, Երկերի ժողովածու, հ. II, էջ 35—36։
2 Նույն տեղ, էջ 37։

«Երիու ազգ գոյություն ունի յուրաքանչյուր ժամանակահատվածում, կասենք մենք բոլոր նացիոնալ-սոցիալիստներին,—գրում էր Լենինը 1913 թվին։ Երիու ազգային կուլտուրա գոյություն ունի յուրաքանչյուր ազգային կուլտուրայի մեջ»[1]։ Յուրաքանչյուր ազգային կուլտուրայի մեջ կան, թեև չզարգացած վիճակում, դեմոկրատական և սոցիալիստական կուլտուրայի տարրեր, որովհետև յուրաքանչյուր ազգի մեջ կան աշխատավորներ և շահագործվող մասսա, որի կյանքի պայմանները անխուսափելիորեն ծնում են դեմոկրատական և սոցիալիստական իդեոլոգիա։ Սակայն յուրաքանչյուր ազգի մեջ կա նույնպես բուրժուական կուլտուրա (իսկ մեծ մասամբ նաև սեհարյուրականային և կղերականն), ընդ որում ոչ թե սոսկ «տարրերի» ձևով, այլ տիրապետող կուլտուրայի ձևով[2]։

Ազգային հարցի և մասնավորապես ազգային կուլտուրայի մասին լենինյան հայացքները հետագա զարգացում առացան ընկեր Ստալինի աշխատություններում։

Ընկեր Ստալինը տալիս է ազգային կուլտուրայի դասակարգային էության կյանքի բնորոշումը։ «Ի՞նչ է ազգային կուլտուրան ազգային բուրժուազիայի տեսակետից և ներքուստ,—ասում է ընկեր Ստալինը.—իր բովանդակությամբ բուրժուական, իր ձևով ազգային կուլտուրա, որի նպատակն է՝ բուևավորել մասսաներին նացիոնալիզմի ոգով և ամրապնդել բուրժուազիայի տիրապետությունը։ Ի՞նչ է ազգային կուլտուրան պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում.—իր բովանդակությամբ սոցիալիստական և ըստ իր ձևի ազգային կուլտուրա, որի նպատակն է՝ դաստիարակել մասսաներին ինտերնացիոնալիզմի ոգով և ամրապնդել պրոլետարիատի դիկտատուրան»[3]։ Լենինի և Ստալինի հետևողական խորը դրույթների լույսի տակ պարզ է դառնում, որ Սեհչան Շահումյանը կանգնած էր ճիշտ դիրքերի

1 Լենին, երկեր, հ. XVII, էջ 143։

2 Նույն տեղը, էջ 137։

3 Ստալին, «Մարքսիզմը և ազգային-գաղութային հարցը», էջ 194։

վրա, երբ բացահայտում էր ազգային կուլտուրայի դասակարգային էությունը և ցույց էր տալիս բովանդակության առաջատար դերը ձևի համեմատությամբ՝ կուլտուրայի մեջ։ Այսպիսով կուլտուրայի, ինչպես և այլ հարցերում, Շահումյանը եկնում էր դասակարգային պայքարի մարքս-լենինյան հետևողական տեսակետից և իդեոլոգիայի, արվեստի և գրականության պատմականության սկզբունքից։

III

Դասակարգային պայքարում որոշակի, կարևոր դեր է խաղում ինտելիգենցիան։ Դասակարգային պայքարի տեսանկյունից է Շահումյանը վերլուծում և գնահատում ինտելիգենցիայի դերը, նրա պրոդրեսիվ կամ ռեակցիոն էությունը՝ ժողովուրդների հասարակական զարգացման պատմության մեջ։ Գոյություն ունեցող կարծիքը, ըստ որի ինտելիգենցիան է «երկրի աղը», որ նա պրոդրեսիվ ուժ է ամեն մի հասարակության մեջ՝ Շահումյանի կարծիքով կարիք է զգում ներքին ամենամանրամասն և վերապահման՝ ոչ ամեն տեղ, ոչ ամենուրեք և ոչ ամեն հասարակության մեջ։ Շահումյանը կանգրեա դիալեկտիկական մոտեցում է ցուցաբերում նաև ինտելիգենցիայի դերի գնահատման հարցում։ Ինտելիգենցիան ունենալով իր պրոֆեսիոնալ շահերը՝ ճիշտ էլ սերտորեն կապված է եղել որոշ դասակարգի հետ և ծառայել է տվյալ հասարակական դասակարգին, արտահայտելով վերջինիս ձգտումները և շահերը։ Ինտելիգենցիայի պրոդրեսիվ կամ ռեակցիոն լինելը Շահումյանը հետազոտում է այն հասարակական դասակարգի պրոդրեսիվ և ռեակցիոն լինելու հետ, որին ծառայում է ինտելիգենցիան։ Երբ բուրժուազիան իր օբյեկտիվ պատմական դրությամբ պրոդրեսիվ էր, պրոդրեսիվ էր և նրա ինտելիգենցիան։ Շահումյանի իր թեզի ապացուցման համար հետորեն մանրամասն է անում նաև այն դերը, որ խաղացել են եվրոպական ժողովուրդների կյանքում ֆրանսիական բուրժուական ռևոլյուցիային նախորդող ժամանակաշրջանում գլոսավորիչները», «էնցիկլո-

պեդիատները»—Ֆիդրոն, Ռուսոն, Վոլտերը, Հելվեցիուսը, Հոլբախը, Լամետրին և նրանց շուրջը խմբված ինտելիգենցիան, 1848 թ. «Երեխասարդ Գերմանիան»—Բյոռնեի, Հայնեի, Գուցկովի, Հերվեգի, Ֆրեյլիգրաթի սերունդը, Մածքինիի գործի տակ գործող խիզախ «Երիտասարդ Իտալիան» և այլն: Այդ ինտելիգենցիան, Շահումյանի կարծիքով, իր ժամանակին վիճակի պատգրեսիվ գործ է կատարել: «Երկանք են եղել այն առաջավոր գործերը, որ իրենց համարձակ զարգացական կոչով միջնադարյան ֆեոդալական ու կղերական մութ աշխարհայեցողության ու նախապաշարմունքների դեմ նախապատրաստել են առաջադեմ բուրժուազիայի տիրապետությունը և նոր ու հարուստ կուլտուրայի ծաղկումն ու զարգացումը XIX դարում: Դրանք են եղել, որ, բաստ Հայնի արտահայտության, իրենց օգնականական զենքերով հնարավոր են դարձրել դալիք զենքի քննադատության հաղթությունը»[1]: Այլ, միանգամայն հակադիր դեր խաղաց իրենց ժողովուրդների կյանքում իմպերիալիզմի, առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի ինտելիգենցիան: Բացառություն է կազմել միայն մարքսիստական-ռևոլուցիոն ինտելիգենցիան, որը, ցավոք սրտի, համեմատաբար փոքրաթիվ է եղել. նա ոչնչացնող քննադատության իր ենթարկում բուրժուական հասարակական գիտությունները՝ քաղաքատնտեսությունը, պատմական գիտությունը, գրականությունը և բարձրացնում էր բանվորական մասսաների գիտակցականությունը մինչև իրենց շահերի ըմբռնման մակարդակին. «...Այդ ինտելիգենցիան մի խոշոր առաջադիմական գործ է կատարում, որ երբեք չի մոռացվելու պատմության մեջ»[2],—գրում էր Շահումյանը 1916 թ.: Մինչդեռ, ինտելիգենցիայի գերակշռող մասը գոր ամբողջ հասարակական աշխարհայացքով ու գործունեությամբ մի վիճակի խոշընդոտ է ժողովուրդների առաջադիմության համար: Իր ամբողջ գաղափարական ուժը նա ծա-

1 Շահումյան, Երկերի ժողովածու, հ. II, էջ 98—99:

2 Նույն տեղ, էջ 109:

ռայեցնում է այսօր բուրժուազիայի շահերին, նա ամեն քայլ գործ է դնում, գիտակցաբար և անգիտակցաբար, կեղծելու հասարակական գիտությունը, հասարակական ճշմարտությունները, մթագնելու ժողովրդական մասսաների գիտակցությունը, արգելակելու նրանց առաջ՝ դանդաղ աշքաքապությունների ու խաբեբայության միջոցով շահագործվելու ու բռնվելու վրա հիմնված այժմյան հասարակարգը»: «Ոնի իր ահագին մեծամասնությամբ ինտելիգենցիան,—գրում է Շահումյանը,—իմժենները, փաստաբանները, դատավորները, բժիշկները, ուսուցիչները, գրողները, դերասանները և այլն,—դրանք համարյա բոլորը գտնվում են բուրժուազիայի բանակում և սպասավորում են իշխող դասակարգերին: Եվ այդ շատ հասկանալի է. նախ և առաջ, դրանք մեծ մասամբ բուրժուական ընտանիքներից ու միջավայրի ծնունդ են և, ապա, բացի դրանից, իրենց անմիջական պրոֆեսիոնալ շահերով ամբողջովին կապված են բուրժուազիայի հետ»:

Այդ տողերի մեջ Շահումյանը պատում է բուրժուական ինտելիգենցիայի և մասնավորապես գրողների և արվեստի գործիչների դիմակը՝ ցույց տալով նրանց «խախտվածությունը կապիտալիստների դրամապարկից» (Լենին), որ նրանք կեղծավորարար թաքցնում են՝ իրենց ներկայացնելով բացարձակապես ազատ, վերդասակարգային և վերպարտիական: Կարդալով բուրժուական ինտելիգենցիայի հասցեին ուղղված Շահումյանի մերկացնող բնութագրությունը՝ չի կարելի չհիշել Լենինի «Պարտիական կազմակերպությունը և պարտիական գրականությունը» փայլուն հոդվածը, գրված դեռ 1905 թ., որպեսզի հասկանանք Շահումյանի իրավացիությունը ինտելիգենցիայի նկատմամբ: «Որչե՞ն անպարտիական գրականագետները, կորչե՛ն գիտարար գրականագետները», կոչ էր անում Լենինը, խորապես հիմնավորելով գրականության պարտիականությունը և դասակարգային

1 Շահումյան, Երկերի ժողովածու, հ. II, էջ 99:

2 Նույն տեղ, էջ 101:

բնությի ու էությունը: Լենինը անխնա մերկացնում էր բուրժուական գրողների և հրապարակախոսների կեղծ ֆրազները ինտելիգենցիայի՝ զասակարգերից և դասակարգային պայքարից բացարձակապես ազատ լինելու մասին: «Ուրո՞ւ ազա՞տ եք արդյոք ձեր բուրժուական հրատարակիչից, պարոն գրող,—հարցնում է Լենինը,—ձեր բուրժուական հասարակությունից, որը ձեզնից պահանջում է պոռնկագրություն շրջանակների և նկարների մեջ, պոռնկություն՝ որպես զրաստուն զարգարանք բնական արվեստի: Չէ՞ որ այդ բացարձակ ազատությունը բուրժուական կամ անարխիստական ֆրազ է (որովհետև անարխիզմը որպես աշխարհայացք չուռ տրված բուրժուականությունն է): Ապրել հասարակության մեջ և հասարակությունից ազատ լինել չի կարելի: Բուրժուական գրողի, արվեստագետի, դերասանուհու ազատությունը սոսկ քողարկված (կամ կեղծ քողարկվող) կախումն է դրամապարիից, կաշառվելուց, ապրուստից: Եվ մենք՝ սոցիալիստներս մերկացնում ենք այդ կեղծիքը, պոռնիկ ենք կեղծ ցուցանակները. ոչ մի նրա համար, որպեսզի ստանանք անդասակարգային գրականություն և արվեստ (այդ հնարավոր կլինի միայն անդասակարգ սոցիալիստական հասարակության մեջ), այլ նրա համար, որպեսզի երեսպաշտական՝ ազատ, իսկ իրականում բուրժուազիայի հետ կապված գրականությանը հակադրենք իսկապես ազատ, բացահայտորեն պրոլետարիատի հետ կապված գրականություն[1]: Գրականության էության մասին լենինյան այդ խոր բնութագրությունից հետո հասկանալի է դառնում ոչ միայն Շահումյանի կողմից ինտելիգենցիային տրված գնահատականը, այլև նրա գրույցը հասարակական գիտությունների և առհասարակ իդեոլոգիական «վերնաշենքի» պատրիախանության և դասակարգային բնույթի մասին:

Հետաքրքրական է Շահումյանի մեկ ուրիշ գրույցը ևս, որը կապված է ինտելիգենցիայի դերի գնահատման հետ: Շահումյանը բացահայտում է բուրժուական աշխարհայացքի

1 Լենին, երկեր, հ. VIII, էջ 389:

երևք շրջան կամ էտապ: Մենք արդեն գիտենք, ի՛նչպես է նա դնահատում ինտելիգենցիայի դրական և բացասական դերը, նրա պրոգրեսիվ լինելը անցյալում (բուրժուազիայի վերելքի շրջանում) և ռեակցիոնությունը՝ իմպերիալիզմի էպոխայում: Այդ լինը Շահումյանը հիմնավորել է երեխով բուրժուազիայի պատմական էվոլյուցիայի մարքս-լենինյան ըմբռնումից՝ պրոգրեսիվ-ռևոլյուցիոնականությունից հեղորդում է փառամն ու ռեակցիոնականությունը, որն ավելի լրիվ դրսևորվեց իմպերիալիզմի և պրոլետարական ռևոլյուցիայի դարաշրջանում: Այդ դիրքերից է նա գնահատում և բուրժուազիայի իդեոլոգիան, բաժանելով այն երեք էտապի՝ դեմոկրատիզմի, լիբերալիզմ և իմպերիալիզմ, որը համապատասխանում է իրեն իսկ՝ բուրժուազիայի զարգացմանը և նրա էվոլյուցիայի արտահայտությունն է: Ըստ Շահումյանի՝ նացիոնալիզմը բուրժուական իդեոլոգիայի հատկանիշներից մեկն է և նրա անհրաժեշտ մասը: Կապված լինելով բուրժուազիայի պատմական զարգացման հետ՝ նացիոնալիզմը նույնպես փոփոխություն է ենթարկվել: «Լիբերալիզմից առաջ բուրժուազիան,—գրում է Շահումյանը,—ապրել է դեմոկրատիզմի շրջանը, այժմ նա ապրում է իմպերիալիզմի շրջանը, որ բուրժուազիայի տիրապետության վերջին շրջանն է. նացիոնալ-դեմոկրատիզմ, այնուհետև նացիոնալ-լիբերալիզմ, իսկ այժմ նացիոնալ-իմպերիալիզմ: Նացիոնալիզմը եղել է և կա—այն տարբերությամբ միայն, որ նախկին առաջադիմական և հեղափոխական նացիոնալիզմը դարձել է այժմ մի ծանր և հեղափոխական իդեոլոգիա...

Նացիոնալիզմը նույնպես ճիշտ էր բուրժուական աշխարհայացքին ու բուրժուական պրակտիկային, ինչպես ինտերնացիոնալիզմը—նոր ընկերվարական աշխարհայացքին: Ով չի հասկացել այդ, ով կարծում է, որ կարելի է ժխտել լիբերալիզմը, իմպերիալիզմը, բայց պահպանել նացիոնալիզմը, ով խոսում է «ազգ» և «անազգ» նացիոնալիզմի մասին և փորձում է զանազան սոփեստություններով հաշտեցնել նացիոնալիզմը ինտերնացիոնալիզմի և առհասա-

րակ ընկերվարական նոր աշխարհայացքի հետ, նա տվինչ մի հակացել ոչ լիբերալիզմից և ոչ էլ այդ նոր աշխարհայացքից: Հակադրելով իրար երկու իշնամի դասակարգերի քրշնամի աշխարհայացքները (ինտերնացիոնալիզմը նացիոնալիզմին) Շահումյանը ցույց է տալիս, որ նացիոնալիզմի, ինչպես և առհասարակ ողջ բուրժուական իդեոլոգիայի կրողը և նրա քարոզողը ինտելիգենցիան է, որը արհեստականորեն բորբոքել է ազգային զգացմունքները: Որ նացիոնալիզմի մեջ նա շատ անգամ, նկիլ ոչ միշտ, ավելի հեռուս է գնացել, քան այդ հարկավոր է եղել բուրժուական հասարակության շահերի տեսակետից: Եվ այդ հանգամանքը՝ ինտելիգենցիայի ծայրահեղ բացասական դերը, Շահումյանը բացատրում է այն յուրահատուկ պայմաններով, որոնց մեջ նա գտնվել է որպես առանձին բուրժուական խավ, որը և որոշում է նրա սրոֆեսիոնալ անմիջական տնտեսական շահերը: Մինչդեռ ինտերնացիոնալիզմի կրողը ռևոլյուցիոն պրոլետարիատն է և նրա առաջավոր ավանգարդը՝ բոլշևիկյան պարտիան:

Սրանք են Շահումյանի հիմնական թեորեմիկ դրույթները, որոնք նկատի պետք է ունենալ ներկա զեկուցում:

Ինչպես ընթերցողը կարող է նկատել, մեր հեղինակի այդ տեսակետները անմիջականորեն կապված են գրականության հետ, հանդիսանում են նրա գրականագիտական հայացքների տեսական հիմքը:

Առանց այդ հայացքների անհնարին է լիակատար և ճշգրիտ պատկերացում կազմել Շահումյանի անմիջական գրականագիտական սկզբունքների մասին: Եվ իսկապես, ինչպե՞ս կարելի է գնահատել գրականությունը, առանց գիտենալու, որ նա լինելով իդեոլոգիայի ձև, ոչ միայն արտացոլում է իրականությունը, այլև ակտիվ հասարակական զենք է այս կամ այն դասակարգի ձեռքին: Առանց իդեոլոգիայի պարտականության թեորիայի չի կարելի հասկանալ գրականության դասակարգային և պարտիական էությունը, նրա ազդեցության և ճանաչողական նշանակությունը: Վերջապես կուլտուրայի ձևի ու բովանդակության մարքսիստական թեորիան, որը պաշտպանում է Շահումյանը ընդդեմ կուլտուրայի նացիոնալիստական ձևկնաբանության, անմիջականորեն վերաբերում է և գրականությանը: Առանց ընդհանուր գաղափար ունենալու պրոլետարական կուլտուրայի մասին, անհնարին է հասկանալ այն գնահատականը, որ նա տալիս է Գորկուն, Հակոբյանին՝ հիմնավորելով պրոլետարական գրականության զարգացման օրինաչափությունը նույնիսկ կապիտալիզմի պայմաններում: Այդ բոլոր հայացքների հիման վրա է իրականության արտացոլման մարքս-լենինյան թեորիան:

---

1 Շահումյան, Երկերի ժողովածու, հ. II, էջ 102—103:

2 Նույն տեղ, էջ 103:

ԳԼՈՒԽ III

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐԸ ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

Ստեփան Շահումյանի գրական հայացքները ձևավորվել են լուսավորական էսթետիկայի անմիջական ազդեցության ներքո. նրա գրական առաջին ուսուցիչները եղել են Բելինսկին, Չերնիշևսկին, Դոբրոլյուբովը և Պիսարևը։ Բայց իր զարգացման մեջ նա չի մնացել լուսավորական էսթետիկայի դիրքերում, այլ առաջ է գնացել, և մարքսիզմի լույսով, պատմության մատերիալիստական ըմբռնմամբ է դիտել գրական երևույթները։ Հաղթահարելով ուշ ռևոլյուցիոն լուսավորիչների հատուկ պատմական որոշ սահմանափակություններ՝ Շահումյանը չի ժխտել և չէր էլ կարող ժխտել նրանց էսթետիկական սկզբունքները։ Ընդհակառակը, Բելինսկու, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի ու Պիսարևի ժառանգությունը նրա համար մարդկային ոգու մեծ արտահայտությունն էր։ Զուր չէ, որ 1902 թվին, Ղ. Աղայանի հոբելյանի առիթով պատրաստած Ճառում նրանց անվանել է տիտաններ և նրանց ժառանգությանը մեծ նշանակություն է տվել՝ երիտասարդության ռևոլյուցիոն-քաղաքական դաստիարակության գործում։ Իսկ հետագայում Բելինսկու ու Չերնիշևսկու անունները նա իրավամբ դասում էր այնպիսի խոշոր բոլշևիկ ուսուցիչների թվում, ինչպիսին է Սուրեն Սպանդարյանը։ Սրանով Շահումյանը ընդգծում էր լենինյան այն միտքը, ըստ որի այդ ռևոլյուցիոն դեմոկրատ լուսավորիչները մարքսիստների՝ բոլշևիկների, նախորդներն էին։ Նրանք մարքսիստների նախորդներն էին նաև մարքսիստական էսթետիկայի բնագավառում։ Նրանց էսթետիկական հայացքները կիսում են այն արժեքավոր ժառանգությունը, որի վրա աշխատել է և աշխատում է մարքս-լենինյան քննադատությունը։

Մարքսիստական էսթետիկայի տեսակետից՝ դրականությունը դաշնակարապետական երևույթ է, արտացոլում է որոշ դասակարգերի շահերը և հանդիսանում է դասակարգային պայքարի զենք։ Գրողը, արվեստագետը այդ պայքարի ակտիվ մասնակիցն են։ Այս կամ այն գրողի, ինչպես ընդհանրապես որևէ հասարակական գործչի, գնահատելու համար պետք է նկատի ոչ թե նրանից, թե ի՛նչ է ասվել գործիչը ժամանակի իր մասին, այլ նրանից, թե ի՛նչ գաղափարներ է նա քարոզում, որո՛նք են նրա քաղաքական ու գիտխուռնալական հայացքները, մի խոսքով՝ ո՛րն է նրա աշխարհայացքը։ Այսպես է նայում հարցին և Շահումյանը։

«Առաջին հարցը,—գրում է Շահումյանը Ալոյանի հոբելյանի առիթով պատրաստած Ճառում,—որ ծագում է հասարակական գործին գնահատելիս, այն է, թե ի՛նչ դավանանքի տեր է եղել նա, ի՛նչ սովորություններ է պարտել իր կյանքում և ի՛նչ գործնական հասարակական ծրագիր է ունեցել իր ձեռքին»։ Ուղիղ տասը տարուց հետո նա նույն հարցին անդրադառնում է «Փախստյանը պատմագետի դերում» հոդվածում, պահանջելով գրողից ունենալ լուրջ պատմական աշխարհայացք։

Տվյալ հասարակական գործչի-գրողի դրական կամ բացասական դերը, պրոգրեսիվ կամ ռեակցիոն լինելը, ըստ Շահումյանի, որոշվում է նրա պաշտպանած հայացքներով։ Եթե գրո՞ղը պրոգրեսիվ հայացքների կողմնակիցը է և պաշտպանում ու քարոզում է դրանք իր աշխատություններում և ընդհանրապես հասարակական գործունեության մեջ՝ ապա ավելի խոշոր է նրա նշանակությունն ու հասարակական էջիրը, նա կարող է հսկայական ազդեցություն ունենալ

ժամանակներին առաջավոր գաղափարախոսության ոգով դաստիարակելու ու զարգացնելու գործում, նա գրական գեր է խաղում տվյալ ժողովրդի հասարակական զարգացման մեջ:

Մեր առաջ են XVIII դարի Ֆրանսիական էնցիկլոպեդիստ-լուսավորիչների օրինակները՝ Վոլտեր, Ռուսո, Դիդրո, Հելվեցիուս, Հոլբախ, Թոմասքեր, կամ 1848 թ. գերմանական առաջավոր և ռևոլյուցիոն գրողները՝ Բյորնե, Հայնե և այլն, որոնք միջնադարյան ֆեոդալա-կղերական խավարապաշտության ու սնապաշտությունների դեմ մղած իրենց համարձակ գաղափարական պայքարով հսկայական գրական գեր խաղացին ոչ միայն իրենց ժողովուրդների, այլև ողջ մարդկության զարգացման մեջ: Նրանք,—ինչպես ճիշտ նկատում է Շահումյանը,—նախապատրաստեցին XIX դարի մեծ ու հարուստ կուլտուրայի ծաղկումն ու զարգացումը:

Հիշատակելով այս անունները՝ Շահումյանը նպատակ չունի խորանալ, ամեն մեկին առանձին բնութագիր տալ, նրանց ներքին հակասություններն, տարբերություններն ու տարակարծությունները բացահայտել: Նա վերցնում է նրանց որպես ամբողջության, որպես իրենց ժամանակի առաջավոր ու ռևոլյուցիոն դարափարախոսության ջահակիրների: Եվրոպական գրականության մեջ այդպիսի խոշոր գործիչներից մեկը գերմանացի հրապարակախոս Լյուդվիգ Բյորնեն է (1818—1918), որին Հայնեն անվանել է «ռևոլյուցիոն փոքրոկի»: Շահումյանը լավ ծանոթ էր Բյորնեի երկերին և հաճախ մեջբերումներ էր անում դրանցից: Շահումյանը Բյորնեին համարում է ռևոլյուցիոն հրապարակախոս, անցած դարի 20—30-ական թվականների գերմանական ռեակցիայի դեմ բոցաշունչ մարտնչող:

Շահումյանը Ղ. Ալթայսկի հոդվածական ճառում մեջ է բերում նրա խոսքերը. «Ոչ մի ինքնասեր, փոքր ի շատե իրեն հարգող գրող չի համաձայնի գրել այնպիսի պայմաններում, երբ նրա վրա իշխում է ցենզուրական կամայականությունը,—ասում է Լյուդվիգ Բյորնեն 40-ական թվականների Գերմանիայի վերաբերմամբ, որը այժմյան Ռուսաստանի նախադիպն է: Եվ ինքը՝ «երիտասարդ Գերմանիայի» այդ պատկերից մեկը,—ավելացնում է Շահումյանը,—կարողացավ համակերպվել ցենզուրական պայմաններին, փախավ Ֆրանսիա և այդտեղից, ազատ մամուլի միջոցով, իր «Փարիզյան նամակներով» և այլ հրապարակախոսական հոդվածներով կարողացավ կատարել իր նշանավոր դերը Գերմանիայի վերաշինության գործում»: Լյուդվիգ Բյորնեն, ինչպես և գաղափարական պայքարի նրա ընկերները, և նույնիսկ նրա մեծ նախորդը՝ Լեսինգը, չնայած գերմանական և այլ ժողովուրդների վերածնության գործում մատուցած մեծ ծառայություններին, իրենց ժամանակի զավակներն էին: Նրանց առաջադիմականությունն ու ռևոլյուցիականությունը խիստ չափավոր էին, նրանք պատմականորեն սահմանափակ գործիչներ էին: Եվ դա հասկանալի է. Ֆրանսիական, ինչպես և գերմանական լուսավորիչները հող պատրաստեցին չափազորեժող դասակարգի հաղթանակի համար: Նրանց պայքարի հետևանքը եղավ բուրժուազիայի հաղթանակն ու տիրապետությունը. բուրժուազիան, ինչպես մարքսիզմի կլասիկներին հետևելով հաճախ ասել է Շահումյանը, շահագործման մի ձևը՝ ֆեոդալականը, փոխարինեց մի ուրիշով՝ կապիտալիստականով: «Եվրոպան քան հարյուր տարի առաջ,—գրում է Շահումյանը,—բուրժուազիան իր հեղափոխությունների ժամանակ հռչակեց ազատություն, հավասարություն, եղբայրություն» լոզունգը. բայց խոսացածի փոխարեն ժողովրդին տվեց միայն կապիտալիստական սարսափելի ծանր շղթաները... Կույտուրայի խոշորագույն նվաճումները, որոնք բուրժուական հեղափոխությունների հետևանքն են, օգուտ տվին միայն իշխող դասակարգերին» («Современная жизнь» 1911, № 1): Բայց դրա համար նրանք հանցավոր չեն. դա տեղի ունեցավ հակառակ ֆրանսիական (բուրժուական) հեղափոխության առաջնորդների ցանկությանը, որոնք աչքաթող արին կյանքի ռեալ պայմանները,—գրում է Շահումյանը.—Նրանք նախօրոք չէին կարող մտածել այդ մասին: Այս պատմական սահմանափակու-

քյոլնը հատուկ էր բուրժուական իդեոլոգներին և բխում էր նրանց դասակարգային բնույթից։ Այնուամենայնիվ, այս հանգամանքը ոչ մի կերպ չի կարող նվազեցնել ոչ բուրժուազիայի առաջադիմականությունը նրա վերելքի և բուրժուական ռևոլյուցիաների ժամանակաշրջանում, ոչ էլ բուրժուադեմոկրատական ռևոլյուցիաների գաղափարախոսների մեծ նշանակությունը։ Լինելով կապիտալիստական զարգացման արդյունք և իրենց գաղափարախոսական արմատներով կապված լինելով բարձրացող բուրժուազիայի՝ XVIII դ. Ֆրանսիական լուսավորիչները, ինչպես և Sturm und Dreng-ի գերմանական գործիչները կամ 40—60-ական թվականների ռուս լուսավորիչները բուրժուազիայի շահախնդիր իդեոլոգներ չէին։ Ահա ինչպես է քննադատում Լենինը եվրոպական և ռուս լուսավորիչներին ու նրանց դարաշրջանը.

«Չի կարելի մոռանալ, որ այդ ժամանակ, երբ գրում էին XVIII դ. լուսավորիչները (որոնց հանրաճանաչ կարծիքը բուրժուազիայի առաջնորդների շարքն է դասում), երբ գրում էին 40-ից մինչև 60-ական թվականների մեր լուսավորիչները, —բոլոր հասարակական հարցերը հանգում էին ճորտատիրական իրավունքի և նրա մնացորդների դեմ պայքարելուն։ Հասարակական-տնտեսական նոր հարաբերությունները և նրանց հակասությունները դրա համար էլ այն ժամանակ դեռ սաղմային վիճակում էին, ուստի և բուրժուական գաղափարախոսների մեջ ոչ մի շահախնդրություն երևան չէր գալիս։ Ընդհակառակը, և՛ Արևմուտքում, և՛ Ռուսաստանում նրանք միանգամայն անկեղծորեն հավատում էին հանուր բարեկեցության և անկեղծորեն տեսնում էին այն, անկեղծորեն չէին տեսնում (մասամբ դեռ չէին կարող տեսնել) հակասություններ այն իրավակարգում, որն ածել էր ճորտատիրականից» (Լենին, հ. II, էջ 315)։

Շահումյանն առանձնապես զբաղվել է ռուս ռևոլյուցիոն-դեմոկրատ լուսավորիչների՝ Գերցենի, Բելինսկու, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Պիսարևի պատմական դերի գնահատությամբ։ Այդ գրողներին գնահատելիս՝ նա ղեկավարվում է մեր նշած չափանիշով։ Ցույց տալով ու քննադատելով XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ սահմանափակ, բիսմիլա ինտելիգենցիայի ռևակցիոն էությունը, Շահումյանը հակադրում է նրան Բելինսկու, Չերնիշևսկու, Պիսարևի տիտանական դեմքերը։ Բայց պետք է նշել, որ երիտասարդ Շահումյանը, առանձին դեպքերում, դեռ տեղիներ հատկությունն չունի (Աղայանին նվիրված հոդվածում)։ Ռևոլյուցիոն-դեմոկրատ լուսավորիչներին նա անվանում է վիրտուոզներ։ Հետագայում, ինչպես նշել ենք, այդ տերմինաբանական անորոշությունը վերանում է։ Այդ բառով նա հասկանում էր հասարակական հնացած իրավակարգի դեմ պայքարելու «աննկուն ոգին», մի հերոս՝ «որ բառը նա գործ է ածում պատմական իմաստով և ռևոլյուցիոն ճիշտ բովանդակությունն է դնում նրա մեջ։ «Ոչ մի ժողովուրդ գտնվում է անընդհատ քաղաքական ու հասարակական պայմաններում, նա ծնում է իր միջից ղեկավար տարրեր, որոնք կռիվ են հայտարարում տիրող կարգերին։ Սակայն ժամանակի և տեղի պայմաններին, այդ կռիվը կարող է տարվել երբեմն խաղաղ ու օրինական, երբեմն արժատական, հեղաբեմն խաղաղ ու օրինական, երբեմն արժատական, հեղափոխական միջոցներով։ Համենայն դեպս, երկու եղանակն էլ ցանկալի են, երկու եղանակի կռիվն էլ առաջադիմական է, եթե կռվողները չեն դադարում կռվողներ լինելուց, երբ նրանց հաջողվում է հարվածներ հասցնել հին կարգերին և ապա քարոզել նորերը։ Բայց այնպիսի երևույթներում, ինչպիսին է Ռուսաստանը, մի՛այն բացառիկ պատմական ժամանակներ են լինում, երբ լիբերալ, ազատամիտ կուսակցությունը կարող է առաջադիմական կուսակցություն լինելու։ Այդպիսի մոմենտներ էին, ի միջի այլոց, 40-ական ու 60-ական թվականները Ռուսաստանում։ Բելինսկին ու նրա ընկերները կարողացան այնքան նշանավոր դեր կատարել ռուսաց կյանքում, որովհետև նրանք հետևողականորեն էին պատմական հանգամանքները ուսանեին, ընդհրիվ մի քանի պատմական հանգամանքների, հարվածելու ճորտատիրական կարգերին և ազատության գաղափարներ պատվաստելու լեզվով գրականության միջոցով (Ղ. Աղայանին նվիրված հոդվածից)։

Ինչպես տեսնում ենք՝ երիտասարդ Շահումյանի հայեցողությունը Տիրա էր։ Այդ տերմինի մեջ նա ուշադրություն էր դարձնում։ Երիտասարդ Շահումյանը Տիրա էր դիտում ոչ միայն ուշադրության դիմաստաների դերը, նույնիսկ այնպիսի նրբություն է նկատում, ինչպես Գերցենի չափավոր դիրքը Չերնիշևսկու և Դոբրոլյուբովի համեմատությամբ։ Նա գրում է. «Ընտրված բոլոր համեմատական ազատությունները 40-ական, 60-ական թվականների գործիչները չէին բավականանում միայն լիբերալ գործունեությամբ, միայն լեգալ գրականությունով։ Երբ նրանք չէին կարող տպագրել տալ այն, ինչ որ ուզում էին ասել ռուս հասարակությանը, դիմում էին ազատ մամուլին։ Այդպես էին անում Բելինսկին, Պիսարևը, Չերնիշևսկին՝ 40-ական և 60-ական թվականների այդ հսկաները։ Բելինսկու մի նամակ-հոդվածի պատճառով տասնյակ մարդկանց, այդ հոդվածը տարածողներին, տասնհակերի աշխատանքների գաղտպատեց կատաղությունը։ Իրեն՝ Բելինսկուն ազատեց պատից, գուցե մահվան պատճից, միայն բնական մահը։ Պիսարևը չորս տարի նրվատեց Պետրոպավլովյան բանտում, Չերնիշևսկին 14 տարով տ

նը հասարակական կյանքում սերտորեն կապված է նրա աշխարհայացքի հետ, կախված է նրա դաղափարախոսության էությունից. հասարակական գործի նշանակությունը գնահատելու չափանիշը նրա աշխարհայացքն է: Ռուս դեմոկրատների ազդեցությունը այդքան ուժեղ էր ժողովուրդների մասին զարգացման վրա այն պատճառով, որ նրանք իր ժամանակին ամենառաջավոր գաղափարախոսության կրիչներն ու պրոպագանդիստներն էին: Որը մարքսիզմը ոտք դրեց Ռուսաստան, սպա մարքսիստական աշխարհայացքն սկսեց ավելի ազդեցություն ունենալ, քան դրա նախորդների գաղափարները: Եվ դա հասկանալի է. մարքսիզմը աշխարհի ամենառևոլյուցիոն դասակարգի պրոլետարիատի, ամենագիտական ու հետևողական աշխարհայացքն է:

Բաքվի Սովետի 1918 թ. հուլիսի 13-ի նիստին արտասանած ճառում, խոսելով Գլեխանովի մահվան մասին և նշելով, որ ռուս դեմոկրատիայի ուսուցիչ Գլեխանովը արդեն մի քանի տարի առաջ է մեռել, Շահումյանն այսպես է բնորոշում մարքսիստ Գլեխանովի նշանակությունը.

«Գ. վ. Գլեխանովը էր և մնում է անդուլհան մարքսիտական դպրոցի ամենահանճարեղ ներկայացուցիչներից մեկը: Նրա գրքերով դաստիարակվել են ռուս ինտելիգենցիայի ամբողջ սերունդներ. Նովիկով Բելինսկին, Դոբրոլյուբովը և Չերնիշևսկին ազնիվ հնգլական ազդեցություն չեն ունեցել ռուս ինտելիգենցիայի մի շարք սերունդների վրա, ինչպես Գ. վ. Գլեխանովը[1]:

Գլեխանովի անճնական հատկություններն անդուլա մեծ նշանակություն ունեն. բայց նրա հնգլական ազդեցությունը երբեք չի կարելի բացատրել անճնական հատկություններով, տաղանդով, անկախ նրա աշխարհայացքից: Գլեխանովի՝ ռուս ինտելիգենցիայի մի շարք սերունդների վրա գործած այդպիսի խոր ազդեցության պատճառը բացատրվում է ամենից առաջ նրանով, որ նա ժամանակին ամենաառաջավոր աշխարհայացքի ու գաղափարախոսության ջատագովը էր, մասնավանաձնողը և պաշտպանը:

«Վենում են հասարակության առաջավոր ուժերի չահերին ծառայող նոր, առաջավոր գաղափարներ ու թեորիաներ,—գրում է ընկեր Ստալինը,—նրանց նշանակությունն այն է, որ հնդացնում են հասարակության զարգացումը, նրա առաջընթացը, ըստ որում է՛լ ավելի մեծ նշանակություն են ձեռք բերում, ինչքան ավելի նշդրտորեն են արտացոլում հասարակության նյութական կյանքի զարգացման պահանջները (Ստալին, «Լենինիզմի հարցերը», էջ 546): Ընկեր Ստալինի այս խոսքերում տրված է հասարակության, ժողովուրդների կյանքում առաջավոր գաղափարների խաղացած դերի կլասիկ բնորոշումը: Իրենց դարն ապրած գաղափարները, հին գաղափարներն ու թեորիաները չէին կարող դրական դեր խաղալ ժողովրդի պրոգրեսիվ զարգացման մեջ: Ընդհակառակը, նրանք արգելակում են հասարակության զարգացումը: Այսպես նախկան նշանակություն ունեն և՛ պատմական մոնիստը, և՛ սոցիալ-քաղաքական պայմանները: Բայց և այնպես, քարոզվող աշխարհայացքի էությունը, որին է որոշում ժողովրդի հասարակական զարգացման վրա գործած նրա ազդեցության ուժն ու խորությունը:

Այս ամենը ընդհանուր հարցադրման կարգով:

Այժմ մենք պետք է քննության առնենք մի այլ հարց, այն է՝ ինչպե՞ս է այս ընդհանուր սկզբունքները կիրառում Շահումյանը գեղարվեստական գրականության բնագավառում:

Աշխարհայացքի և գեղարվեստականության հարցը մեծ հարց է: Այս հարցի շուրջը մեծ դիսկուսիաներ են եղել և դեռ լինում են. բայց ասել, որ ընդհանուր, միասնական հայացք է կազմվել այդ մասին՝ հաշիվ չի հնարավոր է: Բայց մարքսիստական էսթետիկայում, ընդհանուր սկզբունքներով աշխարհայացքի և գեղարվեստականության դերը, նրանց փոխհարաբերությունը իր պնական հիմքն ունի: Շահումյանն էլ իր հոդվածներում ընդհանուր ձևով չորափում է

[1] С. Шаумян. Статьи и речи, 1917-1918 гг. Баку, 1929, стр. 197.

այս հարցերը։ Շահումյանին (որպես մարքսիստ քննադատի) ամենից առաջ հետաքրքրում է գրողի սոցիալ-դասակարգային դիմքը, իսկ ստեղծագործության արվեստը նա սերտորեն կապում է գրողի երկերի գաղափարական բովանդակության հետ։ Բայց գրողի ստեղծագործության դասակարգային բնույթը Շահումյանը դիտում է ոչ շարքուն ու գռեհիկ կերպով, որովհետև ավյալ հեղինակին վերցնում է դասակարգային պայքարի, նրա ժամանակաշրջանի սոցիալական միջավայրի բարդ պայմաններում և միայն այդ ժամանակ է որոշում հեղինակի սոցիալ-դասակարգային պատկանելությունը։ Ահա Տոլստոյի օրինակը։ Հայտնի է, որ աշխարհի մարքսիստ քննադատ, ինչպիսին է Պլեխանովը, Տոլստոյին համարում էր ազնվականության գրող, չնայելով 70-ական թվականներից սկսած նրա աշխարհայացքում տեղի ունեցող պրոցեսների մեջ։ Միայն Լենինը իր հանճարեղ հոդվածներում ցույց տվեց Տոլստոյի աշխարհայացքի բնական իսկական իմաստը՝ գտնելով, որ Տոլստոյը անցավ նահապետական գյուղացիության կողմը, դարձավ նրա տրամադրությունների ու գաղափարների արտահայտիչը։ Շահումյանը բացահայտում է Տոլստոյի ստեղծագործության մեջ եղած հակասությունների ու բեկումը՝ ընդհանուր առմամբ Լենինի ոգով և Լենինի հոդվածի ազդեցությամբ։ Տոլստոյի ստեղծագործության և ուսմունքի մեջ եղած բեկումը Շահումյանը բացատրում է ժողովրդական ընդգրկումների՝ նրա վրա գործած ազդեցությամբ, որոնց վիշտն ու տառապանքը տեսնում էր Տոլստոյը և խորապես կարեկցում։ Ավելին՝ Շահումյանը Տոլստոյին հայտարարում է «ընդգրկուն զանգվածների ազնիվ և անկեղծ բարեկամ»։ Ընդգրկուն զանգվածներ ասելով Շահումյանը, հասկանալի է, նկատի ուներ ոչ թե բանվոր դասակարգը, որի պայքարը խորթ էր Տոլստոյին, այլ ամենից առաջ գյուղացիությունը, որն այդ ժամանակ դեռ նահապետական պայմաններում էր գտնվում։ Որոշելով գրողի դասակարգային բնույթը, Շահումյանը գնահատում է նրա ստեղծագործության գաղափարական բովանդեկությունը, բացահայտում է նրա իսկական իմաստը՝ չդիմելով ստեղծագործության դասակարգային բնույթի ընդհանուր ու շարքուն հավասարումներին։ Շահումյանի խորաթափանցությունը Տոլստոյի նկատմամբ՝ գրական երևույթների գիտական լենինական կոնկրետ մոտեցման և վերլուծման օրինակ է։ Մենք դեռ հատկապես կքննարկենք Տոլստոյի մասին գրած Շահումյանի հոդվածները։ Այստեղ հիշատակենք միայն հետևյալը. երևելով մարքսիստական-լենինյան ընդհանուր մեթոդոլոգիական դրույթներից, Շահումյանը խիստ քննադատության է ենթարկում Տոլստոյի ուսմունքի հայացքները և բոլոր նրանց, որոնք իդեալականացնում էին այդ հայացքները՝ Տոլստոյին հայտարարելով «մեծ մտածող և կյանքի ուսուցիչ»։ Շահումյանի համար Տոլստոյը մեծ է իր գեղարվեստական երկերով. նա գեղարվեստական հանճարեղ երկերի՝ «Պատերազմ և խաղաղություն»-ի, «Աննա Կարենինա»-յի, «Հարություն»-ի, «Ցերն ու ծառան»-ի և այլն հեղինակն է։ Սակայն քննադատելով Տոլստոյի ուսմունքը, Շահումյանը դրանք չի անջատում գեղարվեստական երկերից, ինչպես արել են որոշ քննադատներ, այլ թվում և Պլեխանովը։ Ընդհակառակը, նա բացահայտում է մեծ գրողի քիչ գեղարվեստական երկերի և թե ուսմունքի մեջ եղած խոր հակասությունը, նշելով, որ «Աննա Կարենինա»-յի, «Պատերազմ և խաղաղություն»-ի և այլ գործերի, նույնիսկ նրա ամենահայտնի գործերի մեջ տակա են Տոլստոյի ուսմունքի շատ տարրեր՝ Շահումյանը բացահայտում է «Տոլստոյի կյանքում ու գրվածքներում եղած անհամար հակասությունները»։

Տոլստոյի ուսմունքն իր ամբողջությամբ ռեակցիոն լինելով՝ հանդերձ՝ ունեցել է քննադատական, պրոգրեսիվ տարրեր։ Չարին չհակառակելու քարոզներով և մեր աշխարհին ոչ կյանքը, ոչ կուլտուրան ժխտելով հանդերձ՝ Տոլստոյը, գրում է Շահումյանը, մերժում էր սերտերախանությունը և մահապատիժը՝ մերկացնելով իր ժամանակակից հասարակական, քաղաքական իրավակարգը, մանավանդ եկեղեցական սուրբ։

«Տոլստոյի նույնիսկ կրոնական» երկերում,—գրում է Շահումյանը,—կան բուժոտագրիչի և իշխանությունների դեմ ուղղված քաղաքական ծերկացնող էջերը։

Տոլստոյի ե՛րկ է իմ հավատս» գրքի մասին գրած անտիպ կոնսպեկտի մեջ Շահումյանը մեծ անգ է հատկացնում նրա գրական երկերի բացահայտմանը։ Քաղվածքներ անելով վերոհիշյալ գրքից և քննարկելով Տոլստոյի շարադրած քրիստոսի հինգ պատվիրանները, Շահումյանն անում է իր դիտողությունները։ «Եվ ով ուզում է զատ բանալ քո դեմ և վերցնել քո շապիկը՝ վերադրեցնատ էլ տուր նրան և այլն» (4-րդ պատվիրան) բառերից հետո Շահումյանը նկատում է՝ «Իմաստը՝ զատարանի և պատժի ժխտումն էր։ Ասենք, որ սակած է՝ «Երբեր քո մերձավորին և տարր քո ինչասեռն» (5-րդ պատվիրան)։ Իսկ ես ասում եմ ձեզ,—գրում է Տոլստոյը,—«Սիրեցնեք ձեր թշնամիներին, օրհնեցնեք ձեզ անիծողներին...», սրա իմաստն է,—բացատրում է Շահումյանը,—հավասարապես սիրել դրեհաներին և ոչ-դրեհաներին, ժողովուրդների միջև համաձայնի ու պատերազմները ժխտող սեր»։

Շահումյանի այս ծանոթությունները ցույց են տալիս, թե ինչպիսի խորաթափանցությամբ է նա մոտեցել Տոլստոյին։ Եվ դա հետաքրքրություն է ստվել նրան բացահայտել Տոլստոյի ուսմունքի հակասականությունը նույնիսկ նրա կրոնական գործերում և դառնել կրոնական կեղծի տակ թաքնված դրական, ռացիոնալ կորիզը։

Երբ Տոլստոյն ունենար միայն ռեակցիոն աշխարհայացք և ոչ մի դրական, քննադատական բան չպարունակներ այն, ապա հարկ էր նա ստեղծեր այնպիսի հանճարեղ գեղարվեստական գործեր, որոնք ժեր քայլ առաջ մղեցնեն մարդկության գեղարվեստական զարգացումը» (Լենին)։ Տոլստոյի աշխարհայացքի առաջադիմ տարրերը սնուցել են նրա գեղարվեստական հանճարը, նրա ռեալիստական ու քննադատական ձոնեցուցմը իր ժամանակի երևույթներին, նախազգույշներ են ստեղծել ծաղկեցնելու այդ հզոր տաղանդը։

Երբ կրոնական զգացմունքը, ինքնակատարելագործման ու բարոյական վերածնման տեսությունը ծանրացնում էին Տոլստոյին, ապա ընդհակառակը, նրա քննադատական մոտեցումը ժամանակի իրականությանը մարմնավորվեց բարձրարվեստ ստեղծագործությունների մեջ և ընդունեց առողջ ռեալիզմի բնույթը՝ պատելով ամեն տիպի դիմակները։ Լենինը բարձր էր գնահատում Տոլստոյի այդ ռեալիզմը։ Շահումյանը ժխտելով ու քննադատելով Տոլստոյի ռեակցիոն ուսմունքը, բարձր է գնահատում նրա ռեալիզմը, նրա ստեղծագործության քննադատական կողմը, նրա գեղարվեստական հանճարը, որը սնվում էր Տոլստոյի աշխարհայացքի առաջադիմ տարրերով։

Կրոնական կամ այլ տիպի ռեակցիոն դաղափարների մեջ Շահումյանը չի տեսնել և չէր կարող տեսնել զեղարվեստական ոլորտի արդյուր, զեղարվեստական մեծ ընդհանրացումների հիմունքներ. դաղափարական կամ քաղաքական ռեակցիան չի կարող ստեղծագործական խթան, շարժ ող նախապիտը դառնալ։ XX դարի ռուս գրականության պատմությունը չհաստատց է այս տեսակետից։ XX դարի նախահեղափոխության շրջանի ռուս գրականության խոշոր ստեղծագործությունները, որ ստեղծվել են մի վիճակատարկա, բայց գոր ֆոնի վրա բարձրանում է

ոչ միայն որպես պրոլետարական գրող-արվեստագետի, այլև բարոյական մաքրության ու նրբազգացության տեր անձնավորության։

Ինչո՞ւ տասանդավոր գրողների մասսայից այդպես առանձնացնում էր միայն Գորկին, ինչպե՞ս բացատրել այդ երևույթը։ Գրողի անձնական հատկություններ, մեծ տաղանդն անշուշտ այս խնդրում փոքր դեր չեն խաղում, բայց միայն սրանով բացատրել, լրիվ չէր լինի։ Վճռական դեր է խաղում այն հանգամանքը, որ Գորկին «խիստ ուժեղ էր կապել իրեն՝ իր գեղարվեստական մեծ երկերով՝ Ռուսաստանի և ողջ աշխարհի բանվորական չարժման հետ» (Լենին), որ իր ոգեշնչումն սառնում էր պրոլետարիատից՝ աշխարհի ազատագրական դասակարգից և զարնել էր նրա պայքարի, ձգտումների ու տենչերի արտահայտիչը։ Միայն այս պայմանով կարելի է հասկանալ Գորկու ստեղծագործական մեծությունը, գնահատել նրա հաղթություններ որպես մեծ արվեստագետի։ Շահումյանի համար Գորկու գեղարվեստական մեծությունը սերտորեն կապված է պրոլետարիատի պայքարի և աշխարհայացքի հետ։ Ինչպես նիշտ գրել է Շահումյանի ղեկավարած սոցիալ-դեմոկրատական «Գայլար» թերթի աշխատակից և նրա զինակից Ա. Մռավյանը, «Պրոլետարական աշխարհայացքը և աշխարհազգացողությունը Գորկու ստեղծագործություններին տվել է հզոր թափ և հաղորդակից է այն։ Սա ոչ միայն Ա. Մռավյանի անձնական կարծիքն է, այլ դա կարելի է հավասարապես համարել և Շահումյանի կարծիքի արտահայտությունը։ Դրական կեղծով գնահատելով առաջավոր աշխարհայացքի դերը գեղարվեստական ստեղծելը գործում, Շահումյանը հասկանում էր, որ ոչ միայն և ոչ ամենևին կարող է հաղորվել արհվակա կերպով համարելու իր առաջադիմ գաղափարները և ոչ ամեն մի առաջավոր գաղափարախոսության ջահակիր ու պրոպագանդիստ կարող է գեղարվեստական մեծ գործ ստեղծել։ Այս հարցի խորությունն ու բարդությունը պարզ էր Շահումյանին։ Լինելով գեղարվեստական ստեղծագործության խոր

գաղափարականության կողմնակից, Շահումյանը դրանով հանդերձ ժամում է մերկ հրապարակախոսությունը, ձևի անկատարությունն ու լեզվի անկանոնությունը։ Այս մասին բավական նյութ են ընձեռնում Հակոբ Հակոբյանի «Նոր առակ» պոեմի լուսանցքների վրա Շահումյանի արած դիտողությունները։ Իր ստեղծագործական խոտնվածքով Հակոբյանը թաղաքացի բանաստեղծ էր։ Նրա պոեզիայի պաթոսը պրոլետարիատի պայքարն էր, նրա կյանքը, ձգտումները, հրճվանքն ու տենչերը։ Հակոբյանի ստեղծագործությունը դրական գնահատական ստվին Շահումյանն ու Սպանդարյանը։ 1910 թ. Հակոբյանը, որ մինչ այդ էլ բանաստեղծություններ էր գրում, տպագրեց «Նոր առակ» պոեմը և մի օրինակ ուղարկեց Շահումյանին, Բաքու, ուր նա այդ ժամանակ աշխատում էր։ Ուշադրությամբ կարդալուց հետո, Շահումյանը, ինչպես դիտողություններից է երևում, դո՛չ չի եղել պոեմից և իր դիտողություններով վերադարձրել է հեղինակին վերամշակելու։ Շահումյանի դիտողությունները գրող-բնիկներ նկատմամբ հոգատար վերաբերմունք ունենալու լավագույն օրինակ են և ուսուցող բնույթ ունեն։

Այդ դիտողությունների էությունն այն է, որ գեղարվեստական ձևը, արտահայտչական միջոցները հետինական դարաշրջանի մակարդակին չէին։ Պրոլետարիատի կյանքից պոեմ գրելու համար պետք է համապատասխան ձևեր և արտահայտչական միջոցներ գտնել։ Շահումյանը, որպես մարքսիստ-լենինյան, քաջ գիտեր, որ կուլտուրայի և գրականության գաղափարական-դասակարգային բովանդակությունն են որոշում ձևը և գերիշխող էր համարում բովանդակությունը ձևի նկատմամբ։ Նա դեմ էր, որ ձևի, ֆորմալիստական արտահայտչության համար տուժեր բովանդակությունը։ Բայց էմպիրիկական ուսումնասիրած Շահումյանի համար պարզ էր, բովանդակությունը չի կարող գոյություն ունենալ առանց ձևի, որ արվեստում ձևի ու բովանդակության մեջ պետք է ներդաշնակու-

բյուն լինի, այլապես արվեստ չի ստացվի։ Ճիշտ այդպես էլ՝ մերկ տեսնենք, առանց համապատասխան գեղարվեստական ձևի, ինքուզ և առաջադեմ սկզբունքներ արտահայտի, չի կարող գեղարվեստականորեն արժեքավոր ճանաչվել և խոր հուզականությամբ ներգործել ընթերցողների վրա։ Սա շղարշելիորեն տեսնվում է պոեմի լուսանցքների վրա արած Շահումյանի դիտողություններից։ Հետաքրքրական է նրել և հետևյալ փաստը. Շահումյանի մասին Հախումյանի գրած հիշողություններում ասվում է, որ Շահումյանը պոեմի հետ ուղարկել էր նաև երեք գիրք բելգիական մեծ բանաստեղծ է. Վերհառնի գործերից, հավանաբար հոգ տանելով իր ընկերբանաստեղծի գրական կրթության մասին։

Մի ուրիշ օրինակ. Իբսենի մասին «Կայծ» բոլշևիկյան թերթում տպագրած հոդվածում, մատնանշելով նրա ռեալիզմը կյանքի անցյալն ու ներկան պատկերել կարողանալը, հեղինակը գրականորեն է խոսում Իբսենի՝ որոշակի տեսակետը բացատրել կարողանալու մասին. «Նա չի սիրում հայտնել իր հայացքը. չէ՞ որ նա չի սիրում կուսակցություններին նել իր հայացքը. չէ՞ որ նա չի սիրում կուսակցություններին և հետևաբար սուբյեկտիվիզմը. Նա ատելությամբ՝ օբյեկտիվ է. Նա մեզ տալիս է համամարդկային զգացումներ, ըոնկնելով եղրակացություններ յուրաքանչյուրի հայեցողություններ։ Այդ պատճառով ոչ մի հեղինակի գրվածքները մեզ այնքան մոտծել չեն տալիս, որքան Իբսենինը։ Հմուտ մանկավարժը, իր դասերը լսարանում ավանդելուց հետո, աշակերտներին, իր դասերը լսարանում ավանդելուց հետո, աշակերտներին՝ իրեն զբաղման նյութ է տալիս և ասում։ Եվ իրոք. ո՞վ կարող է Իբսենի որևէ գործը քեմի վրա դիտել և թատրոնից դուրս եկնել առանց մտազբաղման, առանց հարցերի ու վիճաբանությունների» (Կայծ», 1906, № 22)։ Հոդվածագրի համար Իբսենի ստեղծագործության խոր գաղափարականությունը հենց նրանով է արժեքավոր, որ այդ գաղափարականությունը սերտված է գեղարվեստական ձևի տակ, մարմնացած է արևկվատ կերպարների մեջ, որից էլ առաջանում է նրա դրամաների ներգործող ուժը։

«Ինչքան ավելի են թաքնված հեղինակի հայացքները, այնքան լավ է դա արվեստի գործի համար»,—սովորեցնում է Էնգելսը /Մարքս—Էնգելս, «Արվեստի մասին»/։

Շահումյանի իր հոդվածներում էլ հանդում է նույն եղրակացության։ Նրա վերոդարադրյալ հայացքները, ինչպես տեսանում ենք, համընկնում են Էնգելսի պահանջներին.— առնելը պետք է թաքնված լինի արվեստի ստեղծագործության մեջ։ Գրականության մեջ այդ դրությունը բերում է արվեստի քնության, գեղարվեստական գրականության յուրահատկությունից։ Արվեստի ու գրականության քնույթն ու յուրահատկությունը խորապես հասկանալը, ստեղծագործական պրոցեսի բարդությունների ըմբռնումը Շահումյանի գրա-քննադատական ելույթների մեծ արժանիքն է։

Շահումյանի այս հոդվածները որոշակիորեն այդի են դարնում և նրանով, որ դրանց մեջ ընդգծված է կլասիկների ռեալիստական, քննադատական վերաբերմունքի առավելությունը դեպի իրականությունը, նրանց խորաթափանցությունը կյանքի երևույթների մեջ։

Հասարակական գործչի և գրողի համար Շահումյանը պարտադիր էր համարում կենսահաստատությունը. առանց կյանքը խոր ու բազմակողմանի կերպով ճանաչելու և ուսումնասիրելու, գրողը չի կարող կենդանի կերպարներ, ընդհարատացի գործեր ստեղծել։ Եվ դա հասկանալի է։ Մարքսիստական գրականությունից Հայտնի է, որ իր ժամանակի կյանքն ու մարդկանց լավ ճանաչելը կօգնեն գրողին, հակառակ նույնիսկ նրա քաղաքական ռեակցիոն նախապաշարումներին՝ ստեղծելու ռեալիստական հիանալի գրականություն, լինելու քննադատական ռեալիզմի ներկայացուցիչ։

Անհրաժեշտ է նկատել, որ իրականության երևույթներին քննադատաբար մոտենալը կլասիկների մոտ միշտ էլ ոգեշնչման խթան է եղել, հենակարար գեղարվեստական տեսակետից մեծ և ուժեղ երկեր ստեղծելու աղբյուր։ Գրողի քաղաքական ռեակցիոն նախապաշարումները, նախ, նույնացված չեն նրա ողջ աշխարհայացքի հետ, ապա, իրականության գեղարվեստական ճանաչողությունը հաճախ դուրս է

զաչխա այս կամ այն հեղինակի քաղաքական կամ կրոնական նախապատրաստվածների շրջանակից։ Տոլստոյի, Բալզակի կամ Գոգոլի օրինակն այս իմաստով խիստ ուսանելի է ու ընդորում։ Եահուժյանն ունի աստվածներ, որոնք հիմք են տալիս կարծելու, որ նրան խորթ է այն գռնհկացնող մոռեցությունը, որը գեղարվեստական, կամ նույնիսկ փիլիսոփայական մտածողություններ, նուլնացնում է հեղինակի քաղաքական համոզմունքներին։ Ըստ Եահուժյանի՝ առանձին դեպքերում կարող են հանճարեղ լինել այս կամ այն հեղինակի գեղարվեստական-ռեալիստական մոտեցման և տեսական ու քաղաքական հայացքների, տակտիկական դիրքի միջև։ Այս տեսակետից հետաքրքրական է այն գնահատականը, որ տալիս է Եահուժյանը Գլեխասովին 1906 թ. նրա մի օպորտունիստական ելույթի առիթով. «Գլեխասովը ցույց տվեց մեզ իր տեսուր օրինակով, որ կարելի է լինել շատ լավ թեատերական, բայց անբնդունակ դառնալ հաղափական դեկավար լինելու կոմսակցության համար՝ նրա ակտիվ գործունեության ժամանակ, որ կարելի է օրդոդոքս հեղափոխական մարքսիստ լինել տեսական հարցերում, բայց շնորհիվ իրա կանության բյուր ընդհանուն — ծայրահեղ օպորտունիստ դրաստական տակտիկայի մեջ (Երկեր, հ. I, էջ 143)։ Մենք գիտենք, Եահուժյանն էլ, իհարկե, լավ է իմացել, որ քաղաքականության մեջ այդ երևույթը երկար շարունակվել չի կարող, որ քաղաքական կամ տակտիկական օպորտունիզմը վիճական պարհպով չի անշտավում բեորիայից, փիլիսոփայական օպորտունիզմից, և ընդհակառակը, թեորիայի մեջ արտահայտվող օպորտունիզմը ի վերջո դառնում է քաղաքական օպորտունիզմ։ Առաջինի համար Գլեխասովի օրինակը բավական համոզիչ է։ Երկրորդի համար կարելի է նշել Բոգդանովի օրինակը, որի օպորտունիզմը փիլիսոփայության մեջ մախիզմի և էմպիրիոկրիտիցիզմի չարաբաստիկ փիլիսոփայության պաշտպանությունը ի վերջո վերածվեց քաղաքական օպորտունիզմի։ Բայց տվյալ դեպքում խոսքը սրա մասին չէ, այլ այն, որ լինում են դեպքեր, մոմենտներ, երբ այս կամ այն գործչի մոտ կարող է հակասություն ծագել, մերթ երկարատև, մերթ կարճ, հարցի քաղաքական-տակտիկական և տեսական-փիլիսոփայական մոտեցման միջև։

Եթե նման հակասություններ կարող են ունենալ հասարակա-քաղաքական գործիչները կամ ընդհանրապես, ինչպես այդ մասին ասել է Լենինը, ապա ինչո՞ւ հակասությունը չի կարող լինել գեղարվեստական ստեղծագործության ներկայացուցիչների՝ գրողների մոտ։ Նրանք հակասություններ ունենալու նույնիսկ ավելի հող ունեն, քան առաջինները։ Ընթացա-արվեստագետը հենվում է իրականության վրա, գեղարվեստական կերպարներ ստեղծելիս՝ նրանում է օբյեկտիվ տեղ իրականությունից։ Երբ հեղինակի քաղաքական կամ փիլիսոփայական հայացքները զուգադիպում են գարգացման օբյեկտիվ ընթացքին և խոսող չեն նրանց, երբ հեղինակի աշխարհայացքը հիմնված է գիտական սկզբունքների վրա և օգնում է նրան ճիշտ հասկանալու երևույթները, ապա խոսք չի կարող լինել հակասությունների մասին։ Բայց ոչ միշտ և ոչ ամենքը կարող են այդպիսի ներգործակցություն ունենալ։ Գրականության պատմությունից հայտնի են և այլ դեպքեր։ Ռեալիստ գրողը հակասարիր մնալով իրականության նշմարտացի պատկերման սկզբունքին, կերտում է գեղարվեստական տեսակետից լիարժեք երկեր, հակառակ նույնիսկ իր կրոնական ու քաղաքական նախապատրաստվածին, ռեակցիոն հայացքներին։ Հասկանալի օրինակ է Բալզակը, որի հակասությունները այնքան հանճարեղ կերտով զանգ, որի հակասությունները այնքան հանճարեղ կերտով բացահայտել է Էնգելսը։ Քաղաքական համոզմունքներով լեգիտիմիստ լինելով, Բալզակն ստիպված էր իր սեփական դասակարգային համակրանքին ու քաղաքական նախապատրաստվածությանը հակառակ գնալ, ստեղծելով ռեալիստական գործեր, որոնք այնքան բարձր էին գնահատում Մարքսն ու Էնգելսը (Մարքսի մասին, էջ 164)։

---

1 Մոտ ութսը տարի հետո Եահուժյանը Գլեխասովի տեսական ու քաղաքական օպորտունիզմի մասին գրեց. «Բոլանը հանգեցրին այն բանին, որ նա մոռացավ հեղափոխական ուսմունքը»։

Շահումյանի առանձին ասույթներից երևում է, որ նա էջ հնարավոր է համարում առանձին դեպքերում հանատուրյուններ գրողի իրականության գեղարվեստական ճանաչման և հրապարակախոսական-քաղաքական ելույթների միջև, այսինքն՝ գրողի գեղարվեստական գործունեությունը չի նույնացնում նրա քաղաքական կամ հրապարակախոսական գործունեության: Հասարակական գիտակցության այս տեսակների մեջ նա հավասարություն չի դնում, թեև իրար էլ չի հակադրում:

Իր ստեղծագործության մեջ գրողը տալիս է կյանքի, ժողովրդի վարք ու բարքի ռեալիստական-նկարագրական պատկերումը, մինչդեռ իր հրապարակախոսական, քաղաքական ելույթներով տալիս է նույն իրականության սխալ, կեղծ պատկերը: Այդպես է եղել և խորհրդային հայ բանասեղծ ռեալիստ Հ. Թումանյանի հետ: Շահումյանը բարձր էր գնահատում Թումանյանի ստեղծագործությունը՝ ռեալիզմի, ձգտում Թումանյանի ստեղծագործությունը՝ ռեալիզմի, ձգտումների ու կենսասիրության համար: Բայց 1913—14 թ. թ. գրած բանասեղծի մի քանի հոդվածները բացահայտորեն հակասում են նրա ստեղծագործական գործունեությանը: Եվ Շահումյանը նրում է այդ հակասությունը, անվանելով նրան «նշանավոր բանասեղծ և վատ հրապարակախոս» (Հատ. II, էջ 62): Շահումյանի այս դրույթները կարևոր հիմք են տալիս անելու վերոհիշյալ մեր եզրակացությունները: Սրանով նա սկզբունքորեն թույլ է տալիս հակասությունների կամ սխալների գեղարվեստական ու քաղաքական մատուցման միջև, մասնավորապես այնպիսի հակասություններ, որ բացահայտել է Ենգելսը Բալզակի մոտ: Շահումյանը նախատեսել է և մի այլ տիպի «հակասություն», երբ գեղարվեստական ստեղծագործությունը չի համընկնում գրողի քաղաքական դիրքին: Այս տիպի հակասության օրինակ է հայ գրականության մեջ Րաֆֆին: Շահումյանը չի նկատում Րաֆֆու գեղարվեստական ստեղծագործության և քաղաքական-գաղափարական դիրքի հակասությունը, այս իմաստով, նոր շրջանի բոլոր հայ գրողներից ամենաձիածուլն ու ներդաշնակը (որոշ շրջանում) դուցե Րաֆֆին է, բայց նա հակասարձակը չի համարում Րաֆֆու գործունեության երկու կողմերը: Երկ գաղափարախոսական և քաղաքական պլանում Շահումյանը ժխտում է Րաֆֆու ժառանգությունը, համարելով նրան բուրժուա-նացիոնալիստական հոսանքի սյուներից մեկը (տե՛ս «Մեր Սուրբը» հոդվածը, 1916 թ.), ապա այլ կերպ է խոսում նրա գեղարվեստական ստեղծագործության մասին, համարելով նրան «նայ հասարակության սիրելի ու ճանաչված հեղինակներից մեկը» («Армянский сборник»-ի առիթով գրած հոդվածը՝ 1916 թ.): Եվ հասկանալի է: Րաֆֆու ստեղծագործությունն ավելի մեծ է ու բազմազան, քան նրա քարոզած հայացքները: Գեղարվեստական ստեղծագործության մեջ, բացի ընդհանուր գաղափարներից, կան նաև կենդանի կերպարներ, ռեալ իրականության տիպիկ պատկերներ, որով երկը տարբերվում է հեղափոխական քաղաքական ուղղակի քարոզներից ու հրապարակախոսական ելույթներից, դառնում է գեղարվեստականորեն ավելի արժեքավոր ու հետաքրքրական:

Այս տեսակետից հետաքրքրական է համեմատել Շահումյանի հայացքները Չերնիշևսկու հայացքների հետ:

Ռուս մեծ մտածողը մի հոդվածում ընդարձակորեն Օստրովսկու «Ձյաղաստիլյունն արատ չէ» կոմեդիան, նշել է, որ պիեսի հերոսը՝ Լյուբիմ Տորցովը, առանձին վերցրած, հավատարիմ է իրականությանը, բայց կեղծ հայացքով համակված պիեսում նա ուժեղացնում է այդ հայացքը և դրանով էլ կեղծ տպավորություն է գործում: «Բա առաչանում է Չերնիշևսկին,—եղրակացնում է Չերնիշևսկին,—որ բացի առանձին անձերից, գեղարվեստական երկում կինում է ընդհանուր գաղափար, որից (և ոչ թե առանձին անձերից) էլ կախված է երկի բնույթը»[1]: Չերնիշևսկու այս խիստ կարևոր ու հետաքրքրական գրականագիտական դրույթը կօգնի լուսաբանելու մեզ հետաքրքրող հարցը:

Վերցնենք Թոստոևսկու «Ժևերը». Վաղուց ապացուցված

---

1 Чернышевский, Избр. Соч. в одном томе, էջ 771

ու հանրաճանաչ է այս վեպի ռեակցիոն լինելը։ Բայց քննադատությունն ընդհանրապես ճիշտ նշելով վեպի ռեակցիոն լինելը, դրանից առաջ չի գնացել, չի խորացել և ցույց չի տվել վեպի ըմբռնումը (ռեակցիոն) գաղափարը և հերպարների (որոնք ռեալիստական են և համապատասխանում են իրականությանը) միջև եղած ներքին հակասությունը։ Այլ կերպ ասած՝ բավականաչափ չեն բացահայտված վեպի ինքնային, հերոսների և նուէժեանային գծի ռեալիստականության, նշդարտանմանության և գաղափարների մեջ եղած հակասությունները։ Պարզ է, որ Դոստոևսկին գրել է այդ վեպը, նպատակ ունենալով վարկաբեկել, ցեխոտել ռևոլյուցիոն-դեմոկրատական սոցիալիստական շարժումը։ Վեպում եղած հակասությունները միայն սրիչ են տալիս ժամանելու, որ վեպի հիմքը կազմող գեպքերը որևէ ընդհանուր բան չունեն սոցիալիզմի ու ռևոլյուցիայի հետ։ Պատմությունից հայտնի է, որ «Դևեր» վեպում նկարագրված դեպքերի նախատիպը այսպես կոչված «նեչաևի գործն» է եղել։ Քննադատական գրականության մեջ վաղուց արդեն հաստատված են վեպի պերսոնաժների նախատիպերը։ Նիկոլայ Ստավրոգինը՝ Բակունինն է, Պյոտր Վերխովենսկին՝ Նեչաևը, Շատովը՝ ուսանող Իվանովը և այլն։ Մի քանի քննադատներ ռեակցիոն են համարում վեպը նրա համար, որ դրա մեջ տեսնում են մի պատվիր Նեչաևի և նրա գաղտնի ընկերության մասին, քանի որ այդ գաղտնի ընկերությունը նրանք համարում են սոցիալիստական, ռևոլյուցիոն-դեմոկրատական կազմակերպություն։ Բայց սա, ասել՝ խոր մոլորություն է։ Մարքսն ու Էնգելսը վաղուց են ապացուցել, որ Բակունինի էմիսար Նեչաևը և նրա գաղտնի ընկերությունը որևէ ընդհանուր բան չեն ունեցել սոցիալիզմի և ընդհանուր ռևոլյուցիոն-դեմոկրատական շարժման հետ. ընդհակառակը, յուրօրինակ մի աճանդուրա էր բաղկացած սոցիալիզմի և ռևոլյուցիոն կազմակերպության դրոշի. տակ, ոչ մի ռևոլյուցիոն ու սոցիալիստական բան չունենալով։ Այն փաստերից, որ Մարքսն ու Էնգելսն ուսումնասիրեցին Նեչաևյան գաղտնի կազմակերպության պատմությունը գրելիս, լիովին հաստատում են արկածախնդիր Նեչաևի և նրա գաղափարական ոգեշնչող Բակունինի իսկական էությունը։

«Նեչաևն այնպես էր վարում իր գաղտնի ընկերության գործերը, որ բնականաբար կասկած էր ծագում ողջ կազմակերպության լրջության նկատմամբ»,—գրում են Մարքսն ու Էնգելսը։

«Այս բոլոր մանկական ու ինկվիզիտորական եղանակները կասկած հարուցեցին ուսանող Իվանովի մեջ՝ կոմիտեի գոյության և այդ այնքան փառաբանված կազմակերպության հզորության նկատմամբ։ Նա սկսեց կասկածել, որ ամեն ինչ հանգում է մարդկանց անհեթեթ շահագործման և միլիարի խաբեությանի էր»։

«Երբ Բակունինն ազատեց իրեն Ռուսաստան գնալու պարտավորությունից՝ ռևոլյուցիայի անձամբ ընկալելու համար,—հեգնանքով գրում են Մարքսն ու Էնգելսը,—որի անխուսափելի պայթյունը նա գուշակել էր, ապա նվրոպայում նա այնպես էր գործում, որ կարծես «սառնա էր նրանում» մնար»։

«Ցարահոցային կոմունիզմի ի՜նչ հիանալի նմուշ»,—գրում են պրուդոնարիաի մեծ ուսուցիչները՝ Բակունինի-Նեչաևի ծրագրային փաստաթղթերը մեջ բերելուց հետո։ Մարքսն ու Էնգելսը նկարագրելով Նեչաևի չարաբաստիկ գաղտնի ընկերության պատմությունն ու գործունեությունը, բացահայտեցին նրա իսկական կերպարանքը։ Սրանից հետո հարկ էր տեղի ունենում նրանց կազմակերպությունների հետ և, հիմնվելով միայն դրա վրա, Դոստոևսկու պատկերը ռեակցիոն հայտարարել։

Դոստոևսկու ռեակցիոնությունն այն չէ, որ նա ծանակում է նեչաևչինան. ընդհակառակը, դա որևէ կողմն է,

---

1 *Маркс и Энгельс.* Альянс социалистической демократии и международное товарищество рабочих. 1940, стр. 89.

2 Նույն տեղ, էջ 92։

որը վեպին տալիս է ռեալ գծեր և վեպը դարձնում է գեղարվեստական։ Նեչաևյան կազմակերպությունն արժանի է ծաղրի։ Դոստոևսկու ռեակցիոնությունն այն է, որ նա նեչաևշչինան նույնացնում էր ընդհանուր ռևոլյուցիոն-դեմոկրատական շարժման հետ, վեպը համակված է հենց այդ ընդհանուր գաղափարով։ Վեպում տեղի ունեցող իրադարձությունների և գործող անձանց ռեալությունը հակասության մեջ է հիմնական գաղափարի հետ, որը ռեակցիոն է։ Երբեմն, նյութի ազդեցության տակ, Դոստոևսկին հարկադրում է հերոսներին զբաղվել ինքնամերկացմամբ։ Երբ Պյոտր Վերխովենսկին, ինքնազոհման և զրպարտության բոլորին, ասում է՝ «Ես ի՞նչ սոցիալիստ եմ, ես սրիկա եմ», ապա Դոստոևսկին հակասում է ինքն իրեն, նեչաևի ավանտյուրան սոցիալիզմի և ընդհանրապես դեմոկրատական շարժման հետ նույնացնելու իր ընդհանուր գաղափարին։ Եվ եթե, գեղարվեստական տեսակետից, Վարվառա Նոլյարեսթովա-ի հետ միասին, վեպը ուժեղ տպավորություն է թողնում, ինչպես գրում էր Գորկին՝, ապա դա տեղի է ունենում չնորհիվ իմաստի, իրարդեմոլիյունների ռեալության, որոնք և հակասության մեջ գտնվելով հիմնական գաղափարի հետ, վեպը դարձնում են հետաքրքրական։ Վեպի ուժը ոչ թե ընդհանուր գաղափարների մեջն է, այլ ռեալ բովանդակության, վեպում ներկայացած անձանց և գործողությունների մեջ։ Այդ հակասությունն առաջանում է նրանից (հիշենք Չերնիշևսկու դրույթը), որ գեղարվեստական ստեղծագործության մեջ, բացի առանձին գործող անձերից, որոնք համապատասխանում են իրականությանը, լինում է ընդհանուր գաղափար, որից (և ոչ թե առանձին անձերից) կախված է ստեղծագործության բնույթը։

Երբ Շահումյանը բացատում է Բաֆֆուն գաղափարական-քաղաքական տեսակետից, բայց ընդունում է նրա տաղանդը, երևների գեղարվեստական արժանիքը, ձիշտ է վարվում, որովհետև, բացի գաղափարախոսական-քաղաքական, նույնիսկ ամենաանդունդների գրվածքներից, նրա վեպերում կա իրականության հատիկ, դեպքերի, անձանց, մարդկանց հնարագրություն, որը նրա երկերը դարձնում է գեղարվեստական արժեք։ Այս մասին շատ լավ է ասել ինքը՝ Բաֆֆին իր մի հոդվածում, խոսելով հրապարակախոսության և գեղարվեստական երկի տարբերության մասին, նա գրում է. «Ճշտահավանի է, որ ժամանակակից հարցերը քննվում են, վիճաբանվում են ժամանակակից մամուլի և գրականության այլ ճյուղերի մեջ։ Բանաստեղծը կատարյալ իրավունք ունի բոլորից օգուտ քաղելու։ Բայց բանն այն է, որ այս և այն հարցը լրագրի մեջ քննվում է առաջնորդող հոդվածի ձևով, ամսագրի մեջ քննվում է ամսագրական հոդվածի ձևով, բայց վեպի մեջ նա բոլորովին ուրիշ կերպարանք է ստանում։ Եվ դրա մեջն է վիպասանի առավելությունը, որ նա լրագրի արտահայտած մերկ մտքից առեղծում է կյանք, մարմին և հոգի է տալիս նրան, շոշափելի կերպով ներկայացնում է մեզ... Բանաստեղծը խլում է թե՛ իրերի վրա և թե՛ շրջապատող միջավայրի մեջ տարածված մտքերը, պարզում է և իր սեփական գույնը տալով, վիպական կենդանի ձևով վերարտադրում է մեզի»։ Հենց սրանով էլ Բաֆֆին տարբերվում է հրապարակախոս Արծրունուց՝ հայ բուրժուական լիբերալիզմի մյուս խոշոր ներկայացուցչից։ Նրա վերջինիս ժամանակությունից ձենք հրաժարվում ենք, ապա այդ չենք կարող անել Բաֆֆու ժամանակության նկատմամբ, ինչ Բաֆֆին քաղաքական տեսակետից պատկանում է Արծրունու խմբին՝ բուրժուա-նացիոնալիստական հոսանքին։ Եվ դա հակասական է։ Ընդծելով գրականության քաղաքական ու դասակարգային բնույթը, Շահումյանը հանգես է գալիս այն գեղեցկացնողների դեմ (Շալյապինիկովի տիպի), որոնք նույնացնում են գրականությունն ու քաղաքականությունը, չեն-

Նելով նրանց յուրահատուկ տարբերությունը։

Դեռ 1905 թվին Լենինը սովորեցնում էր, որ «պրոլետա-

1 Горький, "Несобранные литературно-критические статьи", էջ 103։

1 «Գրական», № 149, 1933 թ.։

րիատիր պարտականի գործի գրական մասը չի կարող շաքլան կերպով նույնացվել պրոլետարիատի պարտականի գործի մյուս մասերի հետ։ «Անվիճելի է,—գրում էր Լենինը,—որ այս գործում անպայման անհրաժեշտ է ապահովել անձնական նախաձեռնության անհատական հակումների լայն ասպարեզ, մարդ ու ֆանտազիայի, ձևի ու բովանդակության լայն ասպարեզ» (Լենին, հ. VII, էջ 387)։ Լենինյան դրույթների լույսի տակ պարզ է դառնում Շահումյանի մեծությունը գրական գործի ճիշտ լինելու։ Այս գրականագիտական ուսումնասիրության նպատակն է ցույց տալ, թե ինչքա՜ն լայն հայացք ուներ Շահումյանը գեղարվեստական ստեղծագործության նկատմամբ։ Շահումյանը խորապես բախանցում էր սոցիալիստական գրողի ստեղծագործության խորքերը, բացահայտում ստեղծագործության հոգեբանական հիմունքները, հասկանում գրականության նշանակությունն ու բարդությունը, նրա յուրահատկությունը և թույլ էր տալիս հնարավոր զիջումներ գեղարվեստական գրականության մեջ։ Շահումյանը գրականության և ընդհանրապես արվեստի ամեն ոեւակ սխեմատիկ և պարզեցված մոտեցման դեմ էր։ Նա առում էր մոտեցման դեպի իրականությունը, համաչափ սխեմաների ու դեղատոմսերը արվեստի երկերի գնահատման գործում։ Նա պահանջում էր պատմական կոնկրետ մոտեցում հասարակական երևույթներին, այդ թվում և գրականությանը, և մեծապես կյանքի վերջը հավատարիմ մնաց այս դիրքին։ Գրականության մեջ Շահումյանը գնահատում էր կյանքի ռեալիստական պատկերումը, բարձր էր գասում դա, բայց նա գնահատում էր նաև վաղ շրջանի Գորկու հումանիստական ոգեորումը։ Սակայն Շահումյանը մերկացնում էր հայ ինտելիգենցիայի ռեակցիոն հումանիզմը, ինտելիգենցիա, որ հայրենասիրական ֆրազների տակ թաքցնում էր իր բուրժուական, շահախնդրական նպատակները։

Ես իրավամբ գտնում է,—գրում է Շահումյանը մի ընկերոջ 1916 թվին գրած հոդվածների առիթով,—որ հայ հազարամյակների վերջին զարմուրելի ոճերը ու պատահականությունն է և ոչ էլ «ռոմանտիզմից» առաջացած մի սխալ։ Հայ ինտելիգենցիայի համար ազգասիրությունը պարզապես հագի խնդիր է,—և այդ ոչ միայն բառիս պատմա-փիլիսոփայական իմաստով, այլև առօրյա գոնիի անմիջական ըմբռնումով։ Եղել են, իհարկե, իսկական «ռոմանտիկ» առանձին անհատներ..., բայց հայ ինտելիգենցիան, իբրև ամբողջություն, իր տաճա-հայկական պրոպագանդով և իր նացիոնալիստական գործունեությամբ Թուստատանում ծառայել է միայն իր և ազգասիրաբար իրեն կերակրող կուլհասակաւ բուրժուազիայի շահերին՝ զոհաբերելով նրանց վերջին երկու տասնամյակների ընթացքում հայ ժողովրդական մասսանների առաջադիմությունը, իսկ նորերս նրանց ֆիզիքական զորության մեծ մասը։ Այս տողերի մեջ մատնանիշ է արված հայ նացիոնալիստական ինտելիգենցիային և այն գրողներին, որոնք իրենց ռոմանտիկ ստեղծագործությամբ զարձան նացիոնալիստական-ռոմանտիկական պրոպագանդայի շեփորահարներ, լենինյան նացիոնալիստական պարտության անտի գործիք։ Պատճառն էլ, որ Շահումյանը խոսքով դատապարտում է հայ ինտելիգենցիայի ռեակցիոն-ազգայնական ռոմանտիկան, և դա վերաբերում է ոչ միայն քաղաքական գործիչներին, այլև գրականագետներին, որոնք իրենց երկերով ծառայում էին այդ պրոպագանդային։ Դա մեծագույն ոճիր էր ժողովրդի նկատմամբ։

Գրականության նպատակն ու խնդիրները, նրա էության մասին Շահումյանն ունեցել էր ինքնատիպ, Լենինիզմից որոշված՝ մարքսիստական հայեցակարգ և զարգացրել ռեալիզմ-դեմոկրատական հայեցակարգը։ Հայ գրականության մասին Շահումյանի կարծիքով գրականությունը հասարակական-դասակարգային մեծ ուժ է։ Նա պահանջում է ժողովրդին, պատահայության նրա ցանկություններ, խոհերը ու ձգտումները։ Որպեսզի գրականությունը կարողանա կատարել իր հասարակական օգտակար դերը՝ անհրաժեշտ է քաղաքական ազատություն։ Մանավանդ շոշափելով հայ գրականության զարգացման հեռանկարները, Շահումյանը ձիշտ նկատում է քաղաքական ազատության և

Հայ ժողովրդի տաղանդների ու ընդհանրապես հոգևոր կուլտուրայի ծաղկման կապը։

«Մեր կարծիքով,—գրում է Շահումյանը դեռ 1902 թվին,—նա, ով ուզում է, որ հայ ժողովուրդը գրականությունն ունենա, պիտի ամենից առաջ հոգով հայրապարի այս պայմանների, քաղաքական այն կարգերի դեմ, որոնք արգելում են ժողովրդի—այդ հասարակական օրգանիզմի ազատ, բնական զարգացումը։ Նա պիտի աշխատի այնպիսի պայմաններ ստեղծել, որ ժողովրդի միջից դուրս եկող մարդիկ—Աֆֆիներն ու Շիրվանզադեները անհատներ չլինեն, այլ խմբեր, մասսաներ։ Մի երկրում, որտեղ չկա խոսքի ու մամլո ազատություն, որտեղ ժողովուրդը շնորհիվ տիրող պետական քաղաքականության՝ աղքատ է ու տգետ, և քաղաքակրթության բարիքները վայելելու արտոնությունը պատկանում է միայն փոքրաթիվ ապահով դասակարգի, որտեղ օրենքի առջև տիրում է ցեղուրական կամայականությունը, գրականությունը չի կարող զարգանալ։ Գրականությունը չի կարողանա հասարակական դեր կատարել, չի կարողանա երբեք ժողովրդի անբժականությունը դառնալ, նրա հոգևորի ու մտքերի թարգմանը, նրա ցավերի դարմանը։ Այնտեղ բուն կդնեն զանազան բախտախնդիրներ, անկոչ առաջնորդներ, որոնք գրականությունը, թերթը, ամսագրերը կծառայեցնեն ոչ թե ժողովրդին, այլ միայն իրենց շահերին» (Ղ. Աղայանի հոբելյանին նվիրված ճառից)։

Շահումյանի այս դրույթը, որ նա ասել է իր ռևոլուցիոն-մարքսիստական գործունեության արշալույսին, բացառիկ կարևորություն ունի։ Շահումյանի վերոհիշյալ տողերից ռևոլուցիոն պաթոս է հառնում։ Պարզ խոսքեր են դրանք, բայց քանքա՜ն խոր ճշմարտություն կա այդտեղ։ Այս դրույթը ցույց է տալիս երիտասարդ Շահումյանի քաղաքական-մարքսիստական հասունությունը, գրականության ու արվեստի նպատակների հստակ ըմբռնումը։ Խոսելով գրականության մասին, Շահումյանն այն չի անջատում արվեստի այլ ձևերից, նրա համար արվեստի ստեղծագործության բոլոր տեսակները մի ամբողջություն են կազմում։

Այնպիսի պայմաններ, որոնց դեպքում գրականությունն ու արվեստը պատկաներին ժողովրդին և լիներին նրա կյանքի, ձգտումների ու պայքարի արտահայտիչը, ժողովրդական տաղանդների ծաղկումը կարող էր ստեղծել միայն պրոլետարական հեղափոխական ռևոլուցիան, որ սոցիալ-քաղաքական անարդարությունն հետ միասին վերջնականապես լիկվիդացիայի ենթարկեց ազգային ճնշումը։ Ստալինյան ԿոնստիտուցիայիՀ որոշ տակ տեղի ունեցող ազգային կուլտուրաների ծաղկումը Սովետական Միությունն մեջ կարող է Շահումյանի դրույթի ճշտության լավագույն ապացույցը լինել։

Գրականության սոցիալ-քաղաքական ու ճանաչողական նշանակությունն ու դերը որոշելիս՝ Շահումյանը ելնում էր Բելինսկու ու Չերնիշևսկու էմպիրիկական սկզբունքներից, բայց զարգացնում էր դրանք պրոլետարիատի գիտական աշխարհայացքի հիման վրա։ Մարքսիզմի ու լենինիզմի կլասիկները վիրկարի նշանակություն էին տալիս ժողովրդի ստեղծագործ ուժերի ծաղկմանն՝ պրոլետարական ռևոլուցիայի հաղթանակից հետո։ Միաժամանակ երանք առանձնապես ընդգծում էին արվեստի ու գրականության սոցիալ-ճանաչողական նշանակությունը։

Ահա մի բան է պատմում Կարա Յեսինինը Լենինի «Արվեստը մասսաներին» լոզունգի մասին. «Այդ,—շարունակեց Լենինը,—կարևոր է ու մեր կարծիքը արվեստի մասին։ Կարևոր չէ նաև այն, թե ինչ է տալիս արվեստը միլիոններով հաշվվող ընակչության ընդհանուր թվի մի քանի հարյուրին, նույնիսկ մի քանի հազարին։ Արվեստը պատկանում է ժողովրդին։ Նա իր ամենախոր արմատներով պետք է հասնի աշխատավորական մասսաների ամենահետ զանգվածներին։ Նա պետք է հասկանալի ու սիրելի լինի նրանց։ Նա պետք է համախմբի այդ մասսաների զգացմունքը, միտքը և կամքը, բարձրացնի նրանց։ Նա պետք է արթնացնի նրանց մեջ ու զարգացնի» (Կ. Յեսինինի «Հիշողություններ Լենինի մասին», էջ 19)։ Յետին, «Հիշողություններ Լենինի մասին», էջ 19)։

Շահումյանի գրական գործունեության կառուցված է մարքսիստական-լենինյան աշխարհայացքի, գիտական սկզբունք-

ների վրա։ Շահումյանն առանձնապես ընդգծում էր գեղարվեստական ստեղծագործության, դրականության ու արվեստի ճանաչողական ու դաստիարակչական նշանակությունը։ Այս տեսակետից հետաքրքրական է Շահումյանի վերաբերմունքը դեպի թատրոնը։

***

Դեռ պատանեկական տարիներից Շահումյանը հրապուրվում էր թատրոնով։ Նա չափազանց հետաքրքրվում էր թատրոնով ու սիրում այդ արվեստը իր ամբողջ բազմազանությամբ։ Նա չէր սահմանափակվում թատերական ներկայացմամբ, որպես հանդիսատես, այլ ցանում էր խորանալ նրա էության ու նշանակության մեջ, բացատրել նրա նպատակը։

Եվ Շահումյանը հասնում է իր նպատակին, ուսումնասիրելով թատրոնն ու դրամատուրգիան իր ժամանակի առաջավոր էսթետիկայի լույսով։ Նա կարդում է մեծ դրողների ստեղծագործությունները և դրանց հիման վրա էլ դաստիարակում է իր գեղարվեստական ճաշակը։ Եվ դա անում է պլանավորված ձևով, նախօրոք նշված պլանով։

Շահումյանը չի բավականանում մեծ դրողների ու դրամատուրգների երկերն ուսումնասիրելով։ Նա իմաստավորում է դրանք և որոշում թատրոնի դերն ու նշանակությունը հասարակության ու ժողովրդի կյանքում։ Պատանի Շահումյանը խորապես հասկացել էր ռեալիստական, բարձրարժեք թատրոնի և ընդհանրապես արվեստի դաստիարակչական մեծ դերը։ Ծրիտասարդական ավյունով նա հարձակվում էր թատրոնի բարձր կոչումը չհասկացող ապուշների, վատ դերասանների վրա։ Ինչպես վերն ասացինք, դեռ 1896 թվին Շահումյանը որոշում է թատրոնի սոցիալ-դաստիարակչական և ճանաչողական մեծ նշանակությունը։ Դա ցույց է տալիս, թե երիտասարդ Շահումյանը ինչքա՜ն խորապես ու ճիշտ է հասկացել թատրոնի էությունը, նրա դաստիարակչական ու ճանաչողական նշանակությունը։ «Արտիստության ուսուցիչներ»—այսպես է որոշում բեմի խաղային դերասանների դերը։ Իսկ իրենց կոչման բարձրության վրա չհանվողները ապաշնորհ կերպով խոտան են անեղծում, դառնում զզվելի։ Պետք է արդարացնել դերասանի վեհ կոչումը, թատրոնը պետք է դաստիարակչական զբոսղ լինի, ծառայի ոչ թե զուտ ժուլիկներին ընդառաջ վերնախավին, ինչպես մի անգամ արտահայտվել է Շահումյանը, այլ ժողովրդական զանգվածներին։ Կապիտալիստական հասարակության մեջ դա անհնար է, ճանապարհ չտալիս Ռուսաստանի ճնշված ժողովուրդների համար։ Առանց քաղաքական ու ազգային ազատության, առանց սոցիալիստական ռեժուլյալի թատրոնը չի կարող զարգանալ ճնշված ժողովրդի մեջ, ինչպես հայերն են, չի կարող ծառայել իր վեհ նպատակներին, չի կարող հոգ զանգվածների դաստիարակչական կենտրոնը լինել։ Ազատ հոբելյանի ուրախ պատրաստած ճաշի մեջ Շահումյանը ազգային թատրոնի, ինչպես և գրականության զարգացման ամենանախնոր պայմանը համարում է քաղաքական ազատությունը, որը մեզ պետք է բերվի պրոլետարական հաղթական ռեժուլյուցիայով։

«Նույնը պետք է ասել թատրոնի մասին։ «Թատրոնը, գեղարվեստը,—ասում է նույն Բյորնեն,—չի կարող ծաղկել Թեոմոնիայում, սինչև չկրի ազատության հուր։ Այսպես էլ կարող են երևան գալ շնորհալի դերասաններ (Աբելյանի էլ կարող են երևան գալ շնորհալի դերասաններ (Աբելյանի նման), կամ նույնիսկ հանճարներ (Ադամյանի նման), կամ նույնիսկ հանճարներ (Ադամյանի նման), կամ նույնիսկ հանճարներ (Ադամ

կոչ՝ ներկայացումներ կան և ժամատրական գործիչնե-
րի փառք կվաստակեն։

Շահումյանի հարվածները դիպուկ են, նախատվածա-
կան շրջանի հայ թատրոնի բնութագրերն, այսպես ասած՝ ան-
ցքերի է։ Առաքելյանի, որպես իրոք հանճարեղ դերասանի, և
սեփական դերախաղարման ռեալիստական դպրոց ստեղ-
ծած Աբելյանի գնահատականը ցույց է տալիս Շահումյանի
խորաթափանցությունը, հետաքրքրությունների լայնությու-
նը։ Շահումյանն իրավացի է, երբ գրում է, որ ֆեոդալա-
կապիտալիստական իրավարարի տիրակալության օրոք, աղ-
գային ընչման պայմաններում հայ ժողովուրդը, ինչպես նաև
ցարական Ռուսաստանի այլ ճնշված ժողովուրդները, չէր
կարող իրոք ազգային, ժողովրդական արվեստ ու գրակա-
նություն, իսկապես ժողովրդական թատրոն ստեղծել։ Դա
հնարավոր է միայն պրոլետարիատի և աշխատավորների
հաղթանակի դեպքում։ Հաղթանակած ժողովուրդները կըս-
տեղծեն արվեստ ու գրականության ծաղկման բոլոր պայ-
մանները։ Եվ այն ժամանակ թատրոնը, ինչպես և արվեստի
այլ ճևերը լիովին կպատկանեն ժողովրդին ու կծառայեն
նրա դաստիարակությանը։ Շահումյանը բարձր էր գնահա-
տում թատրոնի դաստիարակչական նշանակությունը։ Կինե-
լով թատրոնի ջերմ սիրող, նա իր զանգիներին խորհուրդ էր
տալիս թատրոն գնալ, դիտել կյանքի և ժամանակակից հե-
րոսների գործերի լավ ներկայացումները։ Շահումյանը
աքսորավայրից (ուր մեզ միևնույն ուղեւորման) դիմելով իր
ամերիկի զավակներին, հարցնում է. «Ինչպե՞ս եք ժամանակ
անցկացնում, ինչպե՞ս են պարապմունքները։ Ձո բացիկը,
սիրելի Սուրիկ, ստացել եմ... Թատրոն գնո՞ւմ եք։ դա ան-
հրաժեշտ է, որդյակներս։ Բելինսկին իր հոդվածներում մի
տեղ հարցնում է. «Թատրոն գնո՞ւմ եք. օ՛, գնացեք, գնացեք
և մեռեք՝ եթե կարող եք»։ Նա շատ տարվող մարդ էր։ Ես,
իհարկե, ոչ ոքի խորհուրդ չեմ տա մեռնել թատրոնում, բայց

---

1 Հիշյալ տողերը վերցված են մեծ քննադատի «Ռուսական երազանք-
ներն հոդվածից (տես՝ Белинский, Избр. Соч., հ. I, էջ 55)։

դնալ անհրաժեշտ է։ Գնաք է համենայն դեպս տեսնել այն
ամենը, ինչ բեմադրում են կլասիկներից՝ Շեքսպիր, Շիլլեր,
Իբսեն, Օստրովսկի, օպերաներ և այլն։ Իսկ նոր պիեսները՞
բանիմացների խորհրդով («Комунист», Բերլին, Երևան,
1935 թ.)։ Այս նամակը բնութագրում է Շահումյանին ոչ
միայն որպես սիրող ու հոգատար հոր, այլև որպես թատ-
րական արվեստը մեծապես գնահատողի։

Թատրոնի ու դրամատուրգիայի ավիշն ծավալուն գնա-
հատական են գտնում «Հեղերիկ Իբսենն հոդվածում, որը
Քեև մեծ չէ (ընդամենը հինգ մեքենայագրիչ էջ), բայց դրա
արժեքը այն է, որ հանկարծ ձևով արված է հանճարեղ դրա-
մատուրգներից մեկի խոր բնութագիրը, ընդհանրացված են
նրա բարդ ու հակասական ստեղծագործության ու գործու-
նեության հիմնական հարցերը։ Գնահատման ու ընդհան-
րացման ուժով այդ հոդվածը կարող է համեմատվել միմիայն
Իբսենի մասին Գլեբ Ռժևսկուի գրած հոդվածին, որի հնա
գույն նման գրություններ ունի։ (Երկուսն էլ տպված են
1906 թվին)։ Նախընթաց էջերից մասամբ հայտնի է այդ հոդ-
վածը, այստեղ կարող ենք ավելի ծանոթանալ նրա հիմնա-
կան դրույթներին.

«Մեռավ ներկայիս ամենամեծ դրամատուրգը. Ձեռավ
ամբողջ բանասաղծերից մեկը։ Ո՞վ պիտի փորձարկ-
նե նրան...», այսպես է սկսվում հոդվածը։

Հոդվածագիրը գնահատում է Իբսենի գաղափարների
ինքնատիպությունը և մեզքերի խորությունը, քննադատական
ռեալիզմը, կապիտալիստական հասարակության մարդկանց
բացասական կողմերը անկեղծորեն մերկացնելու և թատրոնը
բարքերի ու դասակարգային գոյող գարձնելու կարողու-
թյունը։

«Ես ամենից լավ է ըմբռնել Շիլլերի այն պահանջը, որ
թատրոնը պետք է բարոյական հաստատություն դարձնել։
Նա ամենից լավ է հասկացել, որ թատրոնը ոչ այլ ինչ է,
քան եթե կյանքի դպրոցը։ Իբսենը—այդ դպրոցի հմուտ
ուսուցիչը՝ իր հետաքրքիր դասախոսություններով շատ ա-
շակերտներ կրթեց և կարուսնակում է կրթել, հետաքրքիր այն

տեսակէտից, որ դա մեր կենդանի, առօրյա կյանքն է, առօրյա կյանքը՝ իր հրատապ հարցերով, որոնք ամբողջ գործողության ընթացքում լարում են մեր ուշն ու միտքը և մեզ սոսկում մի րոպե անգամ մեր ուշադրությունը չթեքել գործողության վայրից... Մի փոքրիկ գործողության մեջ մեր առաջ պատկերանում է իրականության մի ամբողջ պատկեր, իր անցյալով ու ներկայով, այնքան բնական, որ երբեմն գործողության պահպանությունն անգամ անկարելի է դառնում մեզ համար, ո՛ւր մնաց թե տաղտկալի»:

Բարձր գնահատելով Իբսենի դրամատիկական արվեստը, նրա ստեղծագործության կենսունակությունն ու ռեալիզմը, հոդվածագիրը համաձայնի բնույթագրում է նաև նրա հոգեվիճակի դիրքը, բացատրում է նրա հակասություններն ու ինդիվիդուալիզմը: Ըստ Հեգինականի՝ Իբսենը անհատապաշտ է, անհատի կատարյալ անկախության ու ազատության ամենաջերմ պաշտպանը. «Անհատի ինքնիշխան ավյան ամենաչնչին

հնարավոր թերությունները, բարձր գնահատելով նրա ուժեղ կողմերը, ինչպես նաև Պլեխանովի ավելի մանրամասն և, մեր կարծիքով, հիշյա ։ ցույց տալիս Իբանեի «խիստ տանջալի ու անելանելի հանգամանքները» (հ. XIV, էջ 218), նրա կերպարների և ընդհանրապես դրամատուրգիայի թերությունները, որոնք կապված են նրա ինդիվիդուալիզմի և «արդիական ոգու» անարխիստական ընկրկումի հետ։ «Ոչ մարդը գնահատում է «ընդվզումը» ի սեր ընդվզման», երբ չի հասկանում, թե ինչի է հանգելու ընդվզումը, այդ ժամանակ նրա քարոզը անհրաժեշտաբար դառնում է վնասակար։ Եվ երբ նա մտածում է պատկերներով, երբ նա արվեստագետ է, ապա նրա քարոզի թշնամությունը անպայման կհանգի նրա պատկերների անբավականալափ որոշակիության։ Գեղարվեստական երևի մեջ կմերձվի վերացականության ու սխեմատիզմի տարրը։ Եվ այդ բացասական տարրն անկասկած առկա է, ի մեծ վնաս դրանց հաղար, Իբանեի բոլոր գաղափարական դրամաներում» (Պլեխանով, հատ. XIV, էջ 194)։

Չի կարելի չհամաձայնել Պլեխանովի այս գնահատականին։ Ինչպես Պլեխանովը, այնպես էլ հոդվածագիրը բարձր են դասում Իբանեի դրամատիկական տաղանդը։ Իբանեյան դրամայի ուժը նրանք տեսնում են նրա հուզող գաղափարականության ու կենսունակության, ճշմարտացիության ու ռեալիզմի մեջ։

Իբանեի ժամանակակից բուրժուական ու քաղքենիական հասարակության այլասերած կողմերի նկատմամբ նրա քննադատական վերաբերմունքի մասին խոսելով, մեր հոդվածագիրը գրում է. «Եվ այս ամենը նա այնքան կենդանի ու հրատապ է ցուցադրում մեզ, ինչպես մինչ այժմ ոչ մի գրողի չի հաջողվել»։

Իսկ Պլեխանովը նույնքան բարձր է դասում նրա պատկերների գաղափարական ու հոգեբանական խորությունը՝ չնայած դրանց թերություններին։ «Որպես դրամատուրգ՝ նա համարյա թե բարձր էր իր բոլոր ժամանակակիցներից,— գրում է Պլեխանովը և ավելացնում,—նրա ուժեղ կողմը մանրբուրժուական հերոսների աննման պատկերումն է։ Այստեղ նա անգերազանց հոգեբան է։ Նրա երևերի այս կողմի ուսումնասիրությունը անհրաժեշտ է մանր-բուրժուազիայի հոգեբանությունն ուսումնասիրել ցանկացող ամեն մեկի համար» (Պլեխանով, հ. XIV, էջ 228)։

Սրանք են Շահումյանի հիմնական գրույթները քաղքենի ու դրամատուրգիայի մասին։

Գրականության արվեստի մասին նրա ունեցած հայացքների շարադրությունը ցույց է տալիս, թե ինչպես Շահումյանը Բելինսկուն, Չերնիշևսկուն ու Դոբրոլյուբովին հետևելով, նախապատվություն է տալիս ռեալիստական արվեստին, որն արձագանքում է իր ժամանակի կենսական հարցերին և տալիս է կյանքի երևույթների ճշգրիտ նկարագրությունը։ Ելնելով դրանից էլ նա որոշում է քննադատության խնդիրները։

Վերոհիշյալ նամակում Բելինսկու անվան հիշատակությունը և նրա հոդվածից հիշողության տրված մեջբերումները թատրոնի վերաբերյալ՝ պատահական չեն և ցույց են տալիս, թե ինչպես էր Շահումյանը սիրում ուսա մեծ քննադատին, ինչպես էր տիրապետում և հարգում նրա բանիմաց ժառանգությունը։ Եվ դա հասկանալի է։ Բելինսկին Շահումյանի հոգեհարազատներից մեկն էր։ Մոլեգին Վիսարիոնի անունը հաճախ է հիշատակվում Շահումյանի հոդվածներում, նյութերում և նամակներում։ Բելինսկու օրինակով Շահումյանը ջանում էր սովորեցնել հայ երիտասարդությանը սիզբունքային մոտեցում ունենալու գրական ու հասարակական հարցերը գնահատելիս, լինել գաղափարական ու անկախ, չդառնալու համար կույր գործիք բուրժուական-նացիոնալիստական ինտելիգենցիայի ձեռքում։

«Այդ եթե այդ հետաքրքիր չի եղել նրանց համար,— գրում է Շահումյանն Աղայանի հոբելյանի առիթով պատրաստած իր ճառի մասին,—շատ հետաքրքիր պետք է լիներ, անշուշտ, Հյուգոյի ու ազատ խոսքի կարոտ հայ ընթերցողների համար,—մանավանդ մեր՝ մոլորված, գլուխը կորցրած,

միջակ (հայ պատրոցների ավարտած) ինտելիգենցիայի համար, որը զուրկ լինելով որևէ աշխարհայացքից ու կենդանի հավատից, կամ անգործության է մատնված, լցված ու հատահատված կամ զենք ու խաղալիք է դառնում մեր պաշտոնական, դիպլոմավոր ինտելիգենցիայի ձեռքին: Դրանց համար, մենք կարծում ենք, շատ հետաքրքիր և շատ օգտակար կլինի իմանալ, թե ինչ է մտածում մեր հասարակական խնդիրների մասին նոր աշխարհայացքով զինված, ուսաց նորապատրաստ հեղափոխական ավազանում մկրտված մեր ոտանավոր երիտասարդությունը:

Շահումյանը ձգտում էր անկազմակերպ երիտասարդությանն ազատել բուրժուա-նացիոնալիստական ինտելիգենցիայի ազդեցությունից՝ իր ետևում ոչնչացնող քննադատության ենթարկելով վերջինիս:

Ձրվագրությունն որոնող Բելինսկու պատկերը չի լքում Շահումյանին. նա միշտ հիշում է Բելինսկու գաղափարական credo-ն՝ մնալով հավատարիմ մնալով իր համոզմունքներին ու սկզբունքներին, գեր գրական խոչնդոտ:

Հայտնի է Իվանովին գրած Բելինսկու նշանավոր նամակը. «Ես ծախում եմ ինձ ամեն մի պատահողի—Սենկովսկուց սկսած մինչև Բուլգարինը,—միայն, իհարկե, առանց ընկնելու իմ մուսայի եղանակը և արտահայտության ձևերը, մի խոսքով առանց ընկնելու իմ գրական խիղճը, որը ինձ համար ամենից թանկ է, որ ամբողջ Պետերբուրգում մինչև անգամ մուսավոր գումար չի գտնվի նրան առնելու համար: Եվ գործն այնտեղ հասնի, որ ինձ առաջարկեն ընտրել երկուսից մեկը—պահպանել համոզմունքի անկախությունն ու ինքնուրույնությունն կամ սովամահ լինել,—ես բավականաչափ ուժ կունենամ, որպեսզի ամենի շուտ սատկեմ քան նման, քան կենդանի տեղույս շների կերակուր դառնամ»[1] (Թարգմ. Ս. Շահումյանի):

Բելինսկու օրինակով Շահումյանն անողոք կերպով քննադատում էր հայ լիբերալ նացիոնալիստական ինտելիգենցիային, ցույց էր տալիս նրա գաղափարական ոչնչությունը, չափավորությունն ու ստրկամտությունը: Միայն այդպիսի քննադատությամբ կարելի էր մարդկ ճանապարհը ռևոլյուցիոն-մարքսիստական աշխարհայացք տարածելու և նրա ազդեցությունն ու գաղափարական հաղթանակն ապահովելու համար: Հենց սրան էլ ձգտում էր Շահումյանը իր ռևոլյուցիոն գիտակից գործունեության սկզբից:

Պայքարելով բուրժուական նացիոնալիստների, կարիերիստների և մարքսիզմի բոլոր ինչամիների ու falsifikatorների դեմ՝ Հանուն գրական բարքերի մաքրության, Շահումյանն իր առաջ ուներ Բելինսկու ու Չերնիշևսկու բյուրեղացման ու պայծառ դեմքերը: Նա կարևոր է հարկածել ու հալածել նրանց ոչ միայն նրա համար, որ նրանք շահագործում են ու ապականում այդ մեծ ուսմունքը, այլև Հանուն գրական բարքերի մաքրության առհասարակ, Հանուն Բելինսկու, Չերնիշևսկու մեզ թողած արբրագան գրական ավանդների: Գրականությունը մի տանջ է, ուր կարելի է մտնել միայն մաքուր խղճով և ազնիվ միտումներով: Իսկ երբ մարդիկ մոտենում են այդ տաճարին մանր փառասիրական տենչերով, շահագրգռական նպատակներով և խարեբայական հակումներով,—դա ամենամեծ ոճրագործությունն է, որ կատարվում է ժողովրդի դեմ:

Բոլշևիկ քննադատի այս խոսքերն ընդգծում են գրականության բարոյական մեծ ուժը:

Շահումյանը բարձր էր պահում Բելինսկու ու Չերնիշևսկու գրական դրոշը: Նա հանդես էր գալիս Հանուն գրական բարքերի մաքրության, Հանուն ռուս մեծ քննադատ-ռեվոլյուցիոներների սրբազան ավանդների: Քննադատի այս ձեռքն կոչը բնութագրում է նրան իսկ: Այս կրքոտ կոչի մեջ է ամբողջ Շահումյանը: Բելինսկու ու Չերնիշևսկու գրա-քննադատական տրադիցիաները ու ավանդները շնորհիվ Շահու-

[1] Белинский,—Письма, т. I, էջ 311:

ժյանի՝ ունեին ջնջած, կրքոտ պայծառան ու կիրառուլ։ Այս Համազամանքն փայլ ու հրապույր է տալիս Շահումյանի գրաքննադատական ելույթներին, որոնց մեծ արժեքն ու նշանակությունն անվիճելի է։ Շահումյանի գրաքննադատական ժառանգությունը, այն, որ նա թողել է այս բնագավառում, բավական չափով կերպով բնորոշում է Շահումյանին, որպես գրականության խոր գիտակի ու գնահատողի, որպես խոշոր գրականագետ մարքսիստի։

ԳԼՈՒԽ IV

ՀԵՎ. ՏՈԼՍՏՈՅԻ ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՄԲ

Թոռա մեծ գրող Լև Տոլստոյի ութսունամյա հոբելյանը 1908 թվին և մանավանդ նրա մահը 1910 թվին լայն արձագանք գտան ռուսական կայսրության հեռավոր ծայրամասերում և մարզերում։

Անդրկովկասը, մանավանդ նրա արդյունաբերական կենտրոն Բաքուն, որը ժամանակակից և ոչ Ռուսաստանի հիմնական արդյունաբերական օջախներից մեկն էր, չէր կարող հեռու մնալ այդ իրադարձություններից։ Ընդհակառակը, Բաքուն այնուժգին և բուռն թափով արձագանքեց Տոլստոյի հոբելյանին և այնուհետև նրա մահվան։ Այդ ժամանակաշրջանին է վերաբերում բոլշևիկյան և լիբերալ-բուրժուական մամուլի միջև մղվող պայքարը Լև Տոլստոյի գործունեության, նրա ուսմունքի, գարոզի գնահատման շուրջ։ Այն պայքարը, որ բորբոքվեց Անդրկովկասի մամուլի էջերում Տոլստոյի, ինչպես և Գորկու շուրջը, ուներ դասակարգային խոր արմատներ։ Դա բուրժուազիայի և նրա մենշևիկյան գործակալության դեմ պրոլետարիատի, բոլշևիկների մղած ընդհանուր դասակարգային պայքարի առանձին, բայց պարտադիր արտացոլումն էր։ Հետաքրքրությունը չունենալով այս պահում վերլուծել բոլշևիկյան և լիբերալ բիրթերի միջև եղած վիճաբանությունը 1908 թվին, ես այստեղ կանդ-

ժամանակվեմ Տոլստոյի մասին Շահումյանի գրած հոդվածների քննարկմամբ միայն։

Շահումյանի հոդվածները Տոլստոյի մասին խիստ արժեքավոր են։ Նրանք գրված են Տոլստոյի մասին Լենինի գրած հոդվածների ոգով։ Ինքնագրելով կառավարական և լիբերալ-բուրժուական ժամուկի գերրջ է. Տոլստոյի վերաբերյալ և անողոքաբար մերկացնելով նրանց երեսպաշտությունը, Լենինը գրում էր. «Նայեցեք, թե ինչպես են գնահատում Տոլստոյին լիբերալ թերթերը։ Նրանք չահում են մի կերպ դուրս գալ նեղ վիճակից այն սնանկ, կապկոնի-լիբերալ, հնամաշ-պրոֆեսորական ֆրազներով «քաղաքակիրթ մարդկության ձայնի», «աշխարհի միահամուռ արձագանքի», «ճշմարտության, բարության գաղափարների» մասին և այլն, որոնց համար Տոլստոյն այնպես անխնա խարազանում էր—և շատ իրավացի էր խարազանում—բուրժուական պիտակության»[1]։

Շարլոն ֆրազների և քաղաքակիրթ լկտիքի վարպետները, ինչպես մատնանշում է Լենինը, խուսափում են, չեն կարողանում «...պարզ և որոշակի կերպով արտահայտել իրենց գնահատականը Տոլստոյի այն հայացքների վերաբերմամբ, որ կապված են պետության, եկեղեցու, հոդի մասնավոր սեփականության, կապիտալիզմի հետ, և չեն կարող բնավ ոչ այն պատճառով, որ ցենզուրան նրանց խանգարում է,—ընդհակառակը՝ ցենզուրան նրանց օգնում է դժվարին կացությունից դուրս գալու,—այլ այն պատճառով, որ Տոլստոյի քննադատական մեծ նշած յուրաքանչյուր դրույթը մի ապտակ է բուրժուական լիբերալիզմին...»[2]։ Մեծ գրողի՝ իրեն ժամանակակից իրականության քննադատական, մերկացուցիչ հայացքների բացահայտ գնահատման փոխարեն լիբերալները առաջին պլանի վրա քաշելին այն, թե Տոլստոյը «ժխտողն խիղճն է»։ «Մի՞թե սա մի դասական ֆրազ չէ,—հարցնում է Լենինը,—որ հազար ու մեկ ձևով կրկնում են և

---

1 Լենին, «Հոդվածներ Տոլստոյի մասին», առա. հրատ. էջ 18, 1939 թ.։
2 Նույն տեղ, էջ 19։

«նոմոյն վրկայան» և բոլոր նրա նմանները։ Մի՞թե սա չի նշանակում զանց առնել դեմոկրատիայի և սոցիալիզմի այն բոլոր կոնկրետ խնդիրները, որ առաջադրել էր Տոլստոյը։ Մի՞թե սա առաջին պլանը չի քաշում հենց այն, ինչ որ արտահայտում է Տոլստոյի նախապաշարժունքը, այլ ոչ թե նրա բանականությունը, հենց այն, ինչ որ նրա մեջ պատկանում է անցյալին, այլ ոչ թե ապագային, քաղաքականության նրա ժխտականը, նրա քարոյական ինքնակատարելագործման քարոզին, այլ ոչ թե նրա բուռն բողոքին ընդդեմ ամեն տեսակի դասակարգային սոբրպետության»[1]։

Տիրապետող դասակարգերի և նրանց հրապարակախոսական գեղոքսարների դեմ է և Տոլստոյը և նրա քարոզները ունեցած վերաբերմունքի լենինյան բնութագրությունը ամբողջովին և լիովին վերաբերում է և Անդրկովկասին, մասնավորապես Բաքվի լիբերալ-բուրժուական ժամուկին։ Այդ ժամուկը «քաղաքակիրթ» կեղծիքի և լիբերալ երեսպաշտության տարածման գործում երբեք ետ չէր մնում իր կենտրոնական նախատիպերից։ Այդ գործում առանձնապես աչքի էր բնեկում «Баку» թերթը՝ նրա հրատարակիչ-խմբագիր Ն. Ջեմիրչեի պիտավորությամբ։ Լիբերալ-բուրժուական երեսպաշտները ամեն առիթով բարձրացրին մեծ գրողի մահվան կապակցությամբ։ Նրանք գրում էին, խոսում Տոլստոյի մասին, գրվերագրում նրան ոչ այնքան որպես մեծ արվեստագետի, որքան մեծ մտածողի, որպես «խոնջի ուսուցչի»։ Այդ թերթի էջերում Տոլստոյին մեծարում էին հենց նրա քուլտուրական, նրա քարոզների, ուսմունքի համար։ «Ըստ էության Տոլստոյի ուսմունքը մի փառնեղ անսարան է և բարձր բանականություն, որը ձգտում է ընդհանուրի բարօրությանը, ձգտում է երկիրը վերածել մարդկային երջանկության լուսապայծառ դրախտի» («Баку», 1910 թ., մարտի 27, № 69)։ Ահա այն լիբերալ բուրժուական կեղծավոր ստաը, որը քաղաքվում էր անբովանդակ և մաշված ֆրազների տակ։ Բաքվի լիբերալները քննարկելով իրենց մոսկովյան և պետերբուրգյան եղ-

---

1 Լենին, «Հոդվածներ Տոլստոյի մասին», էջ 19, 1939 թ.։

բարքերի տորոված կաշանններով Տոլստոյին անվանում էին «մարդասիրին սիրո և ճշմարտության մեծ առաքյալ («Баку», № 259, նոյեմբերի 14, 1910 թ.)։ Մեջբ՝ ոչ անհայտ Վերմիշևը, Տոլստոյի հիշատակին նվիրված սգո հանդիսավոր նիստում, երևան հանեց Տոլստոյի ունակցիոն հայացքների նկատմամբ լիբերալների ունեցած համակրանքի իսկական էությունը և հանուն Տոլստոյի կոչ արեց ներհակ դասակարգերին համերաշխել, դասակարգային հաշտության կնքել։ «Նա (Տոլստոյը) մեզ ասում էր, որ ինքնամփոփումը և չարամտությունը հակառակ են մարդկային հոգուն, նրա սերը նրա անքակտելի բովանդակությունն է, նրա ամենահզոր, ամենալավ շարժիչը։ Նա մեզ չի խոսել այն անտագոնիզմի մասին, որը բաժանում է դասակարգերին և ժողովուրդներին, այլ ուսուցանել է մեզ նրանց մեծ համերաշխությունը, որը համակված է սիրով և մարդասիրությամբ, հավատալով, որ հաշտարարությունը և սերը շատ շուտով մարդկությանը կառաջնորդեն դեպի ընդհանուր երջանկություն» («Баку» № 259, նոյեմբերի 14, 1910 թ.)։

Այդ լիբերալն իր համախոհների նման խուսա էր տալիս պետության, եկեղեցու, հողի մասնավոր սեփականության, կապիտալիզմի և այլ վերաբերյալ Տոլստոյի քննադատությունը գնահատելու խնդրից։ Սակայն, փրկված անբողանդակ և շաքլոն ֆրազներով, մաշված լիբերալ հայտնություններով, նա ոչոմամբ թաքցնում էր իր ժամանակվա իրականության Տոլստոյի քննադատության էությունը և լուրջ ու գիտուն մարդու տեսք ընդունելով, առաջին պլանի վրա էր դնում մեծ գրողի ինչ-որ ունակցիոն հայացքները, մեծարում էր դրանք, և քաղցր ձայնով երդում ժարդկության ընդհանուր երջանկության մասին, որը իբրև թե ձեռք է բերվելու պրոգրեսիստ և բուրժուազիայի դասակարգային հաշտության ճանապարհով գնդհանուր սիրո հիման վրա։

Այդ լիբերալ խաբեբաների հետաշ-ռեակցիոն քարոզները, նրանց քաղցր երգերը ժարդկության ընդհանուր երջանկության մասին սգո հանդիսավոր օրերին՝ լռեցրին, երբ «Баку» թերթի խմբագրությունն ստացավ մի նամակ Լ. Ն. Տոլստոյի հիշատակի մեծարման առիթով։ Այդ նամակը «Բերեզոյի տարահանանքը» հանրոմ վերնագրին ուներ («Բերեզոյ» տուրգերությամբ). «առաքնուող ընթերցողը, բնութագրելով այն ընդհանուր տպավորությունը, որը առաջ բերեց ռուս մեծ գրողի մահը, ինչպես և մասնավի ու հասարակության զանազան խավերի վերաբերմունքը դեպի նա, մասնավորում էր, որ գրողների նշանավոր ջանիքագիրը արքայի մահը տերբարար իր վրա է բնեռում ամբողջ աշխարհի ուշադրությունը։ Ոչ միայն ժուռնալիստները, գրողները, այլև ամեն պրոֆեսիոնալներ և գիրքի սեր ժարդիկ այդ մահվան առիթով շատ են խոսում ու մտածում։

«Աշխարհը որքացած, վերնում են ամեն տեղ և ամենահասոր և անկեղծ վիշտն են արտահայտում այդ, ըստ երեվույթին բոլորի համար ծանր կորստի առիթով։ «Աշխարհը ուրբացավ—չմ մեծ գրողը, մեծ գեղագետը, մեծ մարդը և քաղաքացին։ Ավելին՝ չմ այլևս,—և դա կարծես ամենից շատ է մարդկանց վիշտ պատճառում—մեծ մտածողը, մեծ «ուսուցիչը կյանքի»։ Այսպես են խոսում բոլորը»։

Խնչպե՞ս վերաբերվեց Բաքվի տեղական հասարակությունը մեծ գրողի մահվանը։ Այդ առիթով նամակի հեղինակը գրում է. «Իր վիշտն արտահայտելու մեջ մյուսներից հետ չմնաց նաև մեր քաղաքը։ Ե՛վ մեր լրագիրը, և՛ մեր գրականդեկարվեստական խմբակը, և՛ քաղաքային դուման, և՛ ամբողջ ազգարնակչությունը, սկսած խոշոր կապիտալիստ Հ. Զ. Թաղիևից, որ հանգուցյալի այրուն հնազանդ է ուղարկել, և վերջապես մի քանի խուզ բանվորներով բոլորն էլ արձագանքեցին այդ գնպին։ Եվ նորից՝ ի դեմս Տոլստոյի բոլորը ողջում են ոչ միայն և նույնիսկ ոչ այնքան մեծ գրողին, գեղագետին և այլն, որքան մեծ մտածողին և կյանքի ուսուցչին։ Այդ հանգամանքը իմ մեջ, այս տողերը գրողիս մեջ, որը լի է խորը հարգանքով դեպի հանգուցյալի հիշատակը,—առաջացնում էր և առաջացնում է մեծ տարահուսանք։ Այդ

տարակուսող «ընկերցողը» Սուխրաև Շահումյանն էր[1], որը օգտագործելով բուրժուական մամուլի էջերը, մերկացրեց լիբերալների և նրանց կողմնակիցների սուտ կեղծավորությունը։ Շահումյանի համակը նման չէ այն սովորական նամակներին, որոնք ուղարկվում են խմբագրության հերթական հասեր։ Դա մի փայլուն, գրա-քննադատական հոդված է,

---

1 Որ իրոք այդ նամակ-հոդվածը Շահումյանինն է, դա երևում է ոչ միայն անից և ոճականությունից, այլև ժամանակակիցների հիշողություններից։ Լենինը Մխիտարը իր հիշողությունների մեջ այդ մասին գրում է հետևյալը. «Այդ ժամանակ մենք Քիրքի չունեինք, հետևապես չէինք Սաենցը ստիպված էր նույն «Բարու» Քիրքիում գրել մի հոդված «Քիրքորդի նրկնամիրտը» («Недоумение читателя») վերնագրով։ Սաենցը իր հոդվածում ծուռտությամբ հետևյալ միտքն էր արտահայտում. Նախ այն բոլոր հետադիմական հոդվածները նա համաձայն էր ֆորմալ չհինելու և ոչ իրականությունից բխած արտահայտություն հետևանք... չի կարող պատճառել, որ Լև Տոլստոյի մասին հավատար ցավ պատճառի քո միլիոնատիրոջ, քո ցարական շինովնիկներին, քո հոգևորականության, քո գրաշարած և քո բանտերին։

Այդ հոդվածը ստեղծ նման պայմանց բուրժուա-լիբերալական շրջանին, ամենքը խոսում էին այդ «խայտառակ հոդվածի մասին։ Կեսը այդ հայհոյական ոտանցին, ու որ չհամարձակվեց մամուլի միջոցով հրապարակ գալ և պատասխանել Սաենցին, չնայած որ այդ ժամանակներում «Բարու» բոլշևիկին հարուստ էր բուրժուային հրապարակախոսներով՝ «Քիրքի» քիրքի խմբագիր Վերմիշևը իր վրա էր վերցրել Սաենցի հեղ՝ «Քիրքի խմբագիր Վերմիշևը իր վրա էր վերցրել Սաենցի այդ հոդվածին պատասխանելու ինիցիատիվը և այդ մասին հայտնել էր իրեն Սաենցին, բայց չնայած ընկեր Սաենցի մի քանի անգամ հիշեցումներին, որ ինը անմատը սպասում է իր հոդվածի պատասխանին, բայց... Վերմիշևը մինչև այսօր էլ պատասխանը Լենինը Շահումյանն առանց նրանց պատասխանի՝ պատրաստել էր մի ավելի ևս խիստ պատասխան («Հ(բ)Կ Պարտիրնիվ, «Շահումյան Ս. Գ., Ֆոնդ № 7, էջ 37 38)։

Լենինը Մխիտարի այս արժեքավոր հիշողությունը փարատում է բոլոր տանջալի հարցերը կապակցությունները։ Բայց նա որոշ նշումներ է անում Մխիտարի հայտնի է հոդվածի բովանդակությունից, Շահումյանը խիստ քննադատության է ենթարկում «Բարու» Քիրքի լիբերալ, կեղծավոր և ոչնչացնող դիրքը Լև Տոլստոյի նկատմամբ։ Ինչ վերաբերում է Շահումյանի նամակը, ծանոթացնելու մեզ խոսակցում է պատասխանել «Քիրքորդին» Քիրքի խմբագիր-հրատարակիչ Ն. Վերմիշևը մի քանի որ Հետ նույն Քիրքում պատասխան է տպագրում Շահումյանի գեմ «Տոլստոյը գ. Լենինգրադի պատասխանի առթիս վերնագրով, բայց հոդ-

գրված նամակի ձևով։ Այդ նամակի և Տոլստոյի մասին գրած այլ հոդվածների մեջ Շահումյանը դրսևորում է իրեն որպես նրա ստեղծագործության խոր գիտակ և վերլուծող-հետազոտող։ Տոլստոյի ստեղծագործությանը, ինչպես և նրա թարոզների քննադատությանը նա մոտենում է որպես կրքոտ բոլշևիկ և լենինյան հոդվածների ոգով գնահատում է Տոլստոյին, համեմելով-և՛ մեծ արվեստագետի ու մերկացնողի, և՛ բարոյախոսի ու քարոզչի։ Նա իր նամակում գրում է. «որ ի դեմս Տոլստոյի ալարչը մոլորյալ իրոք հանճարեղ գեղագետի, մարդկային հոգու մեծ հաղորդի, «Պատերազմ և խաղաղություն», «Աննա Կարենինա», «Հարություն», «Երկի ու ծառան» և գեղարվեստական այլ երկերի կերտողին, որոնց ազնվացնող և վսեմացնող ազդեցությունն իրենց վրա զգացել են միլիոնավոր մարդիկ—դա վեր է ամեն մի կասկածից և վնիշ։ Որ այլևս չկա արդի հասարակական-քաղաքական և հատկապես եկեղեցական կեղծիքի խարդավուրի թշնամին և մերկացնողը—դա ևս հայտնի է բոլորին»։

Ապագա քննադատը նշում է հետևյալ փաստը. Այն մարդիկ, որոնք կարդացել են Տոլստոյի հանձարեղ երկերը և հեղինակի հետ խորին վիշտն են զգացել նրա գործող անձերից որևէ մեկի մահվան նկարագիրը կարդալիս, նրանք, չնայած է, «... չեն կարող վիշտ չզգալ հենց իրեն՝ Տոլստոյի մահվան առիթով, որ գերազանցում էր իր բոլոր գործող անձանց, որպես նրանց կերտողը, որ նրանց բոլորին ընդգրկում էր իր զգայուն, խորը հոգուն։ Այդ բոլորից հետո Շահումյանը միանգամայն տեղին ավելացնում է. «Առանց շատի չեն կարող մոտենալ Տոլստոյի մահվան մասին նաև նրանք, որոնց համար լրանի է պայքարը ժամանակակից կեղծիքի դեմ, տեղող սարսափների դեմ»։

մածի չպրոնտիմությունը չի տպագրվում (հավանարար ընկ. Մխիտարի անձնական չի լինում Լենինգրադ-Շահումյանի առաջարկած հարցերին քան հոդվածի պատասխանելու։ Իսկ ընկեր Մխիտարի հիշատակած Շահումյանի պատասխան հոդվածը, ցավոք որոշ, մեզ չի հաջողվել հայտնաբերել։

Շահումյանի այդ տողերի մեջ, Տոլստոյին տրված այդ գնահատականի մեջ զգացվում է լենինյան հոդվածների ոգին։

«Այդ տարօրինակ է,—շարունակում է նա,—որ վերևում հիշված կատեգորիայի մարդիկ չեն բավականանում Լ. Ն. Տոլստոյի մատուցած այդ անկասկած մեծ ծառայություններն ընդունելով։ Նրանք հանդարյա թե բոլորը Տոլստոյին հանկարծ հայտարարեցին նաև ուսուցիչ, և հետևաբար, ի՞նչ էլ՝ նրա աշակերտներն ու հետևորդները»։ Շահումյանը, որ հիանալի գիտեր Տոլստոյի ուսմունքը, լավ էր ըմբռնում այն, ուսումնասիրել էր Տոլստոյի ստեղծագործությունները և խորապես ծանոթ էր նրանց, արդարացի է վարվում այդ ստեղծված իրադրության մեջ, երբ ռուսական ընթերցողի անվան տակ քննադատում է Տոլստոյի ռեակցիոն հայացքները և բոլոր նրանց, ովքեր իդեալականացնում էին նրա հայացքների այդ կողմը։ Մասնավորապես նա մերկացնում է լիբերալ խարբերաների և նրանց պաշտպանների։ Նա նաև անում էր դա Տոլստոյի ուսմունքի երկվությունը, խորը հակասականությունը բացահայտելով։

«Տոլստոյի ուսմունքը,—ասված է «Նամակի» մեջ,—միայն բողոք չէ ընդդեմ տերտերականության, միայն տապալված հոգու ձիչ չէ, որ արտահայտվեց «Ձնհի կարող լռել» թառոլով։ Նա մեկը, և մյուսը նրա ուսմունքի մեջ մասնակի հակրդրներ են. դա միայն նրա ուսմունքի նեգատիվ (բացասական) կողմն է, դա ավելի ճիշտ, Տոլստոյի առանձին վարդապետներն են, որոնք ինչ տրամաբանորեն կապված են նրա ուսմունքի հետ, բայց կարող են քննադրվել և գնահատվել անկախ այդ ուսմունքից»։

Ինչպես երևում է վերև նշված փաստերից և մասնավորապես հենց նոր մեջբերված պարբերությունից՝ Շահումյանը վճռականորեն հերքում է Տոլստոյի ուսմունքը, համարում է այն ռեակցիոն։ Սակայն նա Տոլստոյի ստեղծագործությունը վերլուծում է բազմակողմանիորեն և այդ գնահատով գնում է նրա մեջ դրական կորիզ, քննադատական տարրեր։

մի այլ հոդվածում խոսելով այն մասին, որ Տոլստոյը իր կրոնը դիտում էր սոսկ որպես փրկարար գաղտնիք, քննադատը ուղղակի մատնանշում է նրա կյանքի ու հայացքների հակասականությունը։ «Անկասկած դրանով են բացատրվում այն բազմաթիվ հակասությունները, որ կան Տոլստոյի կյանքում և գրվածքների մեջ, կամ՝ «Տոլստոյի նույնիսկ կրոնական գրվածքներում կան բազմաթիվ փայլուն մերկացնող էջեր՝ ուղղված բուրժուազիայի և իշխանություների դեմ» (մի քանի խոսք Լ. Ն. Տոլստոյի կրոնի մասին[1])։ Մատնանշելով Տոլստոյի հայացքներում եղած հակասականությունը, որոնք ամբողջությամբ վերցրած ռեակցիոն բնույթ ունեն, նա դրանց մեջ առանձնացնում է քննադատական տարրերը։ Այդ հարցում Շահումյանը մոտիկ է կանգնած Լենինին, այդ հարցի առիթով տված նրա գնահատականին։ «Տոլստոյի ուսմունքն անպայման ուտոպիական է և ըստ իր բովանդակության՝ ռեակցիոն է բարես ամենաստույգ և ամենախոր նշանակությամբ,—գրում է Լենինը։—Սակայն այստեղից բնավ չի բխում ոչ այն, թե այդ ուսմունքը սոցիալիստական չի եղել և ոչ էլ այն, թե նրա մեջ չեն եղել քննադատական այնպիսի տարրեր, որոնք ընդունակ են արժեքավոր նյութ մատակարարելու՝ առաջավոր դասակարգերի լուսավորման համար»[2]։ Նկատելով ընդհանուր այդ սկզբունքային գրույթների՝ Շահումյանը փայլուն կերպով, բոլշևիկյան տրամաբանությամբ ուժով մինչև վերջը մերկացնում է լիբերալների սուրբաքարշությունը և նրանց գաղրնի կեղծավորությունը։

«Տոլստոյը միայն տերտերականության ու մահվան պատիժը չէ, որ ժխտում էր։ Նա ժխտում էր նաև մեր ամբողջ աշխարհիկ կյանքը, մեր ամբողջ կուլտուրան։ Տոլստոյը Քրիստոսի աշակերտն էր և քրիստոնեության ուսուցիչը։ Սրեսուն տարվա ընթացքում նա քարոզում էր և քարոզում էր ոչ թե կատաղով, ոչ թե խոսքի համար, այլ նրա համար, որ մարդիկ կատարեն քարոզածը՝ Նրաժարուան սե-

---

1 «Բոլշևիկ», №28, 1935 թ.։

2 «Հոդվածներ Տոլստոյի մասին», էջ 44, 1935 թ.։

փականությունից, պետական կազմակերպությունից, եկեղեցուց, դատարաններից, ընտանիքից, այն բոլորից, ինչով որ մենք ապրում ենք, գտնվելով այդ հասարակությունների արդի ձևերի նկատմամբ այս կամ այն հարաբերության մեջ, մենք բոլորս, որ Տոլստոյին «ուսուցիչ» ենք անվանում»:

Իսկապես, Տոլստոյը հանուն իր իդեալների առաջարկում է մարդկանց հրաժարվել սեփականությունից, որպես երկրի վրա չարիքի պատճառը: «Ով ասա ես ինձ հարց եմ տալիս,—ասում է Շահումյանը,—արդյոք կարո՞ղ են մարդիկ, որոնց բոլոր իդեալները հիմնված են սեփականության և հարստության վրա, որոնց ամբողջ կյանքը հիմնված է սեփականության և հարստության վրա, որոնց ամբողջ կյանքը հիմնված է օրենքների ժողովածուի վրա, որը շուրջ տասը տասնամյակից ի վեր ամրանում թափառաշրջիկության համար և հանձին մանչիան է դատապարտում էքզիստենցիալիզմի (այսինքն՝ ուրիշ մարդկանց սեփականությունից զրկելու) համար, այդպիսի մարդիկ կարո՞ղ են արդյոք գիտակցաբար և անկեղծորեն Տոլստոյին «ուսուցիչ» անվանել...»:

Այնքան դիպուկ է սա ասված, որ խփում է կապիտալիստների և նրանց գրպան լակեյների ոչ մի հոնքին, այլ ուղղակի աչքին, որոնք երեսպաշտորեն Տոլստոյին անվանում էին իրենց «ուսուցիչը»:

Սակայն Շահումյանը գրանով չի սահմանափակվում, նա շարունակում է դիպուկ հարվածներ հասցնել իր հակառակորդներին: «Հանուն չարին ու բռնությանը չհակառակվելու» Տոլստոյն առաջարկում է չընդունել պետական իշխանությունը, նրոգումը, դինվորագրությունը, դատական հաստատությունները, բանտերը: Մի՞թե այդ բոլոր բժիշկները, փաստաբանները, վաճառականները, լրագրերի խմբագիրներն ու հրատարակիչները և այլն, բոլոր նրանք, որոնք ընդունում են, և այն էլ ոչ թե վախից, այլ խղճի մոտ,—և՛ պետական իշխանությունը, և՛ զինվորագրությունը, որոնք ամեն օր միլիոնավոր բերաններով երդվում են և դատում իրենց դատարաններում և «ռազդարձներին» բանտերն են նետում,—ամի՞թ նրանք անկեղծ են, երբ ոտքում են «չարքի մեծ ուսուցչի», «իրու ուսուցչի» մասին:

Վարպետորեն կազմված այս հարցերի պատասխանները, որոնք իրենց տրամաբանության ուժով չարդ ու փշուր են անում կեղծավոր շաղակրատներին և բուրժուական ինտելիգենտներին, տապիս են հենց իրենք այդ հարցերը: Այո, իհարկե այդ բուրժուական լիբերալ ինտելիգենտները անկեղծ չեն, երբ ոտքում են «չարքի մեծ ուսուցչի» մասին: Ամենից, նրանք կեղծավորներ են, ստախոսներ և անարգներ. նրանք ցանկանում են խաբել ժողովրդին. ահա ինչպես են հետևում Շահումյանի պատասխանները այդ հարցերին, և դրանում ևս նա անսպառվող միանգամայն համաձայն է լենինյան մոտեցմանը: «Այդ հարկավոր է ըմբռնել՝ առաջ ընթանալու համար,—գրում է Լենինը:—Այդ առաջադրմանը խանգարում են բոլոր նրանք, որոնք Տոլստոյին հայտարարում են զրնդեն բոլոր նրանք, որոնք Տոլստոյին հայտարարում են զրնդեն «չարքի ուսուցչի»: Այդ կնշանիք է, որը գիտակցաբար տարածում են լիբերալները, որոնք ցանկանում են օգտագործել Տոլստոյի ուժմանքի հակառևոլյուցիան կողմը: Այդ կեղծիքը Տոլստոյի, որպես կյանքի ուսուցչի մասին, լիբերալների հետևից կրկնում են և մի քանի նախկին սոցիալ-դեմոկրատներ»[1]:

Լենինյան այդ դրույթների լույսի տակ պարզ է դառնում Տոլստոյի մասին տարածված ռեակցիոն հայացքների շահագործման քննադատությունն ու խիստ հանդիմանական կարևորությունն ու խիստ քաղաքական բնույթը: Չէ՞ որ լիբերալ-բուրժուական և մենշևիկյան հրապարակախոսության այդ սին աղաղակների ազդեցությամբ բանվորների որոշ խմբեր նույնպես Տոլստոյին ընդունելիին որպես «չարքի ուսուցչի»: Այդ պատճառով Շահումյանը նույնպես տարակուսանք է արտահայտում: Վերլուծելով Տոլստոյի ուսմունքի համապատասխան դրույթները, որոնք վճռականորեն հակասում են բանվոր դասակարգի շահերին, Շահումյանը ասում է.

«Տոլստոյի համար գոյություն չուներ մեր ժամանակա-

---

1 «Հոդվածներ Տոլստոյի մասին», էջ 30:

կից կյանքի ամենասոսկալի պրոբլեմը, միլիոնավորների գործազրկությունը, որոնք ցանկանում են աշխատել, որպեսզի շարժանի լինեն անվելու, բայց նրանց աշխատանք չի տրվում. նրա համար գոյություն չուներ այդ միլիոնավորների և նրանց զավակների կիսաքաղց և քաղցած վիճակից մեռնելու պրոբլեմը, որոնք ամեն օր պարտոնապես զրանցվում են ոստիկանական և ամեն մի այլ տեսակի վիճակագրության կողմից։ Մինչդեռ Տոլստոյը հավատացնում էր, որ ոչ ոք չի մեռնել և չի մեռնելու քաղցից։ Իսկ, մյուս կողմից, մուրացկան լինելը, շրջմոլիկ լինելը ամենամեծ երջանկությունն է աշխարհում։ Եվ այդ պատճառով մեկ անգամ ընդմիշտ ոչ մի պայքար կերպարելու, կյանքի լավագույն պայմանների համար, այլ սեր, ներում ամենի և խոնարհության ու հնազանդության...»։

«Եվ ահա ես ինձ կրկին հարց եմ տալիս,—ասում է Շահումյանը,—մի՞թե Տոլստոյին, որն այդպես հասկանում էր, կամ, ավելի ճիշտ, այնքան տարօրինակ կերպով չէր ըմբռնում ժամանակակից կյանքի ամենահիմնական հարցերը, բանվորները գիտակցորեն կարող են ժկյանքի ուսուցիչ» անվանել։ Մի՞թե նրանք կարող են նրան համարել ժնեծ մտածող», որի առաջ, որպես մտածողի, հարկավոր է ամբողջ մարդկության հետ խոնարհվելը։

Այստեղ խիստ կարևոր է հետևյալ փաստը. Շահումյանը այն ասուլիսը, որ Տոլստոյը ընդունեց ժամանակակից կյանքի ամենահիմնական հարցերը, այսինքն՝ բանվոր դասակարգի շարժումը և պայքարը ռևոլուցիայի համար՝ լիովին հանձնկնում են լենինյան դրույթին, համապատասխանում են դրան։ Դեռ 1908 թ. Լենինը գրում էր. «որ այդպիսի հակասությունների մեջ Տոլստոյը չէր կարող բացարձակապես ըմբռնել ո՛չ բանվորական շարժումը և նրա դերը սոցիալիզմի համար մղվող պայքարում, ո՛չ էլ ռուսական ռևոլուցիան, այդ ինքնըստինքյան ակնհայտ էր»։ Շահումյանի մի շարք դրույթների նմանությունը լենինյան դրույթներին, ինչպես մատնանշեցինք, պատահական չէ, այդ հարցին մենք դեռ կվերադառնանք, իսկ այժմ կրկին դիմենք Շահումյանի ելույթին։

Ջուգադրելով Տոլստոյի ասմունքի հիմնական թեզերը լրբերալների կեղծ և երեսպաշտական պնդումներին, բոլշևիկի քննադատը հմտորեն մերկացնում է նրանց մանեվրները, Տոլստոյի ասմունքի հանդեպ ոչոխ վերաբերմունքի կողքին օգտագործելու նրանց փորձերը։ Եվ, կրկին հիշելով տեղական հերոսներին, Շահումյանը հարցը շեշտակի է դնում. «Տեղական ամասուլը և տեղական ճառախոսները, որոնք խոսել են Տոլստոյի ծահվան առիթով, մինչև օրս բոլորովին չեն փոռձել լուծելու այդ հնարավոր տարակուսանքները։ Նրանք Տոլստոյին անվանել են և անվանում են մեծ մտածող, մեծ բարոյագետ, մեծ ուսուցիչ, բայց բոլորովին մեզ չեն ասած, թե ինչո՞ւ համար են այդպես անվանում»։

«Ընթերցողը-Շահումյանի նամակը «Ձայն» թերթի խմբագրությանը հանկարծակիի բերեց։ «Ընթերցողն» իր խոսքը սաաց շատ որոշակի, հասկոնչ, տրամաբանորեն և փաստարկված։ Համառորեն պահանջեց լրբերալ շողոքորթներից և խարեբաներից պաշտպանել տարակուսող ընթերցողի հարցերին։ Նամակը տպագրվեց «Ձայն» թերթում խմբագրական բնորոշ ծանոթագրությամբ. «Այս նամակի պատասխանը կտրվի թերթի մոտակա համարներից մեկում»։ Մի քանի օր հետո թերթի խմբագիր-հրատարակիչ Վերմիշևը վերցավես որոշեց կատարել իր խոստումը և հանձնել պատասխան հոդվածուի։ Հոդվածը կոչվում էր «Տոլստոյը ու. Ընթերցողի պատասխանի առթիվ։ Տպագրվեց միայն հոդվածի առաջին մասը։

Վերմիշևը ի՞նչ կարող էր ասել, ի՞նչ կարող էր հակադրել Շահումյանին։ Պատասխան հոդվածում նա գրում է. «Ինչո՞ւ և ինչպե՞ս մարդիկ կարող են Տոլստոյին անվանել մեծ մտածող և կյանքի ուսուցիչ։ Այսպիսի տարակուսելի հարցով է դիմում ու. Ընթերցողը իր նամակում, որ տպագրված է մեր թերթի № 277-ի մեջ»։

Եվ նա փորձում է պատասխանել այդ հարցին։ Սակայն նրա պատասխանից, ինչպես պետք է նկատենք, ոչինչ

դուս չի գալիս: Վերմիշևը կարող էր միայն մի ավելորդ անգամ ևս կեղծել, շպարվել ընթերցողի առջև, կտրտավել, որպեսզի մի կերպ դուրս գար իր համար անհարմար դրությունից, որի մեջ նրան դրել էր «Ընթերցողը» իր հարցերով: Բոլոր ամենայն այդպես էլ եղավ: Վերմիշևը և նրա հետ մեկտեղ բոլոր սեղանի լիբերալները ցույց տվեցին իրենց ամբողջ դատարկախոսական անմակարդությունը: Սակայն նրանք չէին ցանկանում խոստովանել դա: «Մենք արվեստագետ, միևնույն ժամանակ և մեծ ուտուցիչ էր»,—ահա այն պատասխանը, որ տվեց լիբերալ մերը: Սակայն ինքը՝ Տոլստոյի հեղինակը, անհարմար տիմանի մեջ ընկավ իր պատասխանից, որովհետև դա պատասխան չէր, այլ խուսափում ուղղակի պատասխանից: Եվ նա շտապեց ելք գտնել, հայտարարելով որ «Ինքը ընթերցողի հետ միասին երևում է միևնույն հարթության վրից Տոլստոյի գնահատման հարցում»: «Ամբողջ մեր ասածը վերաբերում էր Տոլստոյ արվեստագետին և ժամանակակից ազնվատրաբության քննադատող Տոլստոյին,—գրում էր այդ մասը լրջորեն,—երեխայ այդ տեսակետից, բան երեսուներին դյուրին է ընդհանուր լեզու գտնել ընթերցողի հետ, որովհետև մեր եզրակացությունները միևնույն են:

Այդ կեղծիք էր, խաբեբայություն: Ակզբից ընդհանուր եզրակացություններ Տոլստոյի ուսմունքի գնահատման հարցում, ինչպես մասնավորներից, չեն եղել և չէին կարող լինել «Ընթերցողի» և Վերմիշևի, բոլշևիկների և լիբերալների և նրանց օպորտունիստական ձայնափողերի միջև ոչ միայն այդ բան ոչ մեկը», այլև գլխավոր իմաստով: Դա լիբերալ շողոքորթի փորձն է, լարախաղացությունը, որի օգնությամբ նա և իր բարեկամները ձգտել են գտնել հարցի իսկական էությունը և մի կերպ դուրս գալ իրենց համար անհարմար դրությունից: Բայց ամեն, նույնիսկ այդ նրանց չհաջողվեց: Նրանք իրենք շփոթվել էին և ոչինչ չէին կարողանում պատասխանել «Ընթերցողին»: Այդ երևում է այն փաստից, որ պատասխան հոդվածը ձևաց անավարտ: Վերմիշևը հոդվածի վերջում հայտարարում էր. «Եվ ես տեսնենք, թե Տոլստոյն իր ուսմունքով, սակայն այդ մասին մյուս անգամ»:

«Баку» թերթի ընթերցողներն իրավ էին սպասում այդ հոդվածի շարունակությունը, որտեղ հեղինակը պետք է ըստ էության պատասխաներ: Թերթի խոստումը չկատարվեց, հոդվածի շարունակությունը չերևաց թերթում: Վերմիշևը, ինչպես երևում է, հարկ համարեց չպատասխանել, չվերապառնալ այլևս «Ընթերցողին» հատատուն, հիմնավոր հարցերին: Եվ այդ, պետք է ընդունել, նրա կողմից բանական էր: Նա և նրա բարեկամները, ինչպես ասում են, անճնաշան բռնվել էին հանցանքի մեջ և ոչինչ չէին կարող ըստ էության առարկել և պատասխանել: Նրանց պատասխանը ընթերցողին կացում էր լինելու: Եվ նրանք այնքան խելոք գտնվեցին, որ չշանկացան մի ավելորդ անգամ ևս ձեռնպաշվել: Ահա թե ինչու գերադասեցին լռել, քան ըստ էության պատասխանել: Եվ մենք, և մյուսը ցույց տվեցին լիբերալ երևույթների վախկոտությունը և միևնույն ժամանակ այն հարվածների ուժն ու հիմնավորվածությունը, որ նրանք ստացան բոլշևիկի «Ընթերցողից»՝ Սաենկան Շահումյանից:

Երկրորդ հոդվածում (մի քանի խոսք Տոլստոյի կրոնի մասին», տպված առաջին անգամ 1911 թ. «Современная жизнь»-ում) Շահումյանը հատկապես վերլուծում է Տոլստոյի կրոնը, կատարում է նոր դիտողություններ Տոլստոյի կրոնի վերաբերյալ և, որ ամենակարևորն է, մի շարք դրույթներ է առաջ քաշում, որոնք Շահումյանին էլ ավելի մոտեցնում են Տոլստոյի լենինյան գնահատականներին:

Նախ Տոլստոյի կրոնի մասին:

«Տոլստոյի կրոնի մեջ կա մի կողմ,—գրում է Շահումյանը,—որը, որքան մեզ հայտնի է, քննադատությունը դեռևս չի շոշափել: Մենք ի նկատի ունենք, նեղն կարելի է ասել աբստրակտվել, այդ կրոնի գիտակցական կամ մտացածին բնույթը: Մինչդեռ Տոլստոյի կրոնի այդ կողմը մեծ նշանակություն ունի պարզելու համար այն, թե ինքը Տոլստոյը սուբյեկտիվորեն, իր գիտակցության խորքում ինչպես էր նայում իր կրոնին, նրա այդ կողմը մեծ նշանակություն ունի

նաև պարզելու համար ընդհանրապես կրոնի իմաստն ու արժեքը։

Այդ հարցը լինելով խիստ հետաքրքիր՝ կարիք ունի ավելի մանրամասն վերլուծության։ Եվ մենք ձեռնամուխ կլինենք այդ հարցի պարզաբանմանը։

Ինչով է հիմնավորում Շահումյանն իր դրույթը։ Ամենից առաջ նա վերհիշում է Տոլստոյի «Ի՞նչ է իմ հավատը» գրքի (1883 թ.) այն հատվածները, որտեղ նա ընդունում է, որ ինքը աշխարհում ապրել է 35 տարի, բացի 15 մանկական տարիներից, 35 տարին ապրել է որպես «նիհիլիստ» որևէ հավատ չունենալու իմաստով, այսինքն եղել է անհավատ մարդ։ «Երանից հինգ տարի առաջ,—գրում է Տոլստոյը այդ գրքում,—ես հավատացի Քրիստոսի վարդապետությանը, և իմ կյանքը հանկարծ փոխվեցավ։ Այս խոսքերը գրվել են 1883 թվին։ «Հետևապես,—գրում է Շահումյանը,—այն բևեռումը, որ կատարվել է Տոլստոյի կյանքում, իր կրոնական «արթնացումը» կամ «հարությունը», նա վերագրում է 1878 թվին։ Նույնը, ինչ որ այստեղ է ասվում, նա քաղվածքի կրկնում է նաև իր մյուս գրվածքներում։

Որպես օրինակ Շահումյանը մատնանշում է «Ինչու կարծեցիմ» վեպը, որտեղ «...է դևս Լևինի հեղինակը պատրեցիմ է իրենը։ Լևինը պատմում է, թե ինչպես իր համար «...հանկարծ բացվում է ժյանքի իմաստը», երբ նա ճանապարհ է ասում նշմարությունը, որն, ըստ Լևին-Տոլստոյի, «իրոր մեջ էր։

Հօդուտ իր դրույթի Շահումյանը բերում է և ուրիշ լուրջ փաստարկներ։ Դա Տոլստոյի օրագրի 1855 թ. մարտի 5-ի գրառումն է, որ բերված է Բրյուկովի գրքում։ Օրագրում մանանացույց է արվում, թե ինչպես Տոլստոյը խորհեց ստեղծել մի «նոր կրոն», գործել գիտակցորեն՝ մարդկանց կրոնով միացնելու համար, ահա հիմնական միտքը, որը հույս ունեմ ինձ կողմորիս։

Եվ այնուհետև քննադատը պարզաբանում է «Վանաչ ձորի էությունը։ Այդ փաստերից և փաստարկումներից հետո Շահումյանը անում է իր համոզիչ եզրակացությունը մեծ գրողի գործունի գիտակցական և մտացածին բնույթի մասինոր։

«...Տոլստոյը դեռևս 1855 թվին գիտեր,—գրում էր Շահումյանը,—որ 23 տարի հետո ճանկարծ կհավատա աստծուն, որ նրա հավատը հենց քրիստոնեությունն է լինելու, որ դա լինելու է քրիստոնեության մի հատուկ տեսակը, որը համապատասխան է լինելու մարդկության զարգացմանը, այսինքն՝ «բարձրյալը, միտքին տարբերից զանազան, որ այդ հավատը երանելության է խոստանալու ոչ թե ապագայում, ոչ այն աշխարհում, այլ այստեղ, երկրի վրա։ Այստեղ մենք ընթերցողի ուշադրությունն ենք հրավիրում Տոլստոյի գրառությունների՝ «Ես կրոն հիմնադրելուց, «մարդկանց կրոնով միացնելու համար գիտակցորեն գործելուց ցանկության վրա, թե ինքը կարող է հրապարակելը և որ կյանքը նվիրել այդ մեծ միտքն իրագործելուն։

Այդպիսի բնույթ է կրում և «Վանաչ ձորը» պատմությունը։ Այդ բոլորը զուգադրելով Տոլստոյի «ճանաչողության կրոնական հոսանքի», հայտնության և այլ մասին նրած պնդումների հետ, որոնք հանդասում են իրար, Շահումյանն ասում է. «Մենք կարծում ենք, որ նշմարությունն դեռ չենք ժեղանի և չենք վիրավորի Տոլստոյի հիշատակը, երե ասենք. այո, իր աշխույժ երևակայությամբ, դեպի մարդիկ ունեցած իր սիրով, իր անասնական բարությամբ Տոլստոյը հնարել է իր կրոնը և ինքն ուրախանում էր դրանով և մեր գլուխն էլ տանում...»։

Շահումյանը լսահմանափակվեց դրանով. նա առաջ գնաց, և, ինչպես պետք էր ենթադրել, հանգեց վճռական եզրակացության, հայտարարելով, որ Տոլստոյը «չի ունեցել կատարյալ հավատ դեպի այն կրոնը, որ նա այդպես կրքոտ կերպով ու հափշտակությամբ քարոզում էր» «Ինչպես արդեն պետք է որ պարզ լինի վերևում բոլոր ասածներից, Տոլստոյն ինքը, մեր կարծիքով, իր հոգու խորքում հավատացող մարդ չի եղել,—եզրափակում է Շահումյանը և ավելացնում. «Տոլստոյը իր կրոնին նայում էր միայն որպես մի փերթվարար գաղափարի, որ գրված էր վանաչ ձորի վրա»։

Այդպիսի հայացքը Տոլստոյի կրոնի նկատմամբ՝ շատ կողմերով հետաքրքրական է և նոր հարցադրումների ու խորհրդածությունների առիթ է տալիս։

Ավելին, այսպիսի վճռական կարծիքը Տոլստոյի անհավատության մասին իր ժամանակի քննադատության համար նորություն էր։ Շահումյանը ոչ միայն հայտարարում է այդ, այլև մեծ գրողի ստեղծագործությունների վերլուծության հիման վրա հաստատում է իր թեզը։ Այդ հարցադրումը հարստացնում է մեր պատկերացումը Տոլստոյի կրոնական զարգացման մասին։ Հետաքրքիր ու ուշագրավ է այստեղ հիշել այն զուգադիպությունը, որ կա այդ հարցում Շահումյանի և պրոլետարական մեծ գրող Մաքսիմ Գորկու կարծիքների միջև։ Արդեն «Դիտողություններ Տոլստոյի մասին» հետաքրքիր հիշողությունների մեջ, որն արժանացել է Լենինի դրական վերաբերմունքին, Գորկին նույնպես գալիս է այն եզրակացության, ինչ Շահումյանը։ Բայց ավելի որոշակի Տոլստոյի անհավատության, անաստվածության մասին Գորկին արտահայտվել է հիշողություններից առաջ գրած մի նամակում։ Այդ նամակում, որը հիմք է դարձել նրա «Դիտողությունների» համար, շարադրել է իր տպավորությունները ռուսական հողի մեծ գրողի հետ ունեցած առաջին հանդիպման մասին։ 1900 թվին Չեխովին հասցեագրած այդ նամակում մենք կարդում ենք.՝«Ես բոլորովին չէի հավատում, որ նա աթեիստ է, թեև զգում էի այդ, բայց հիմա երբ լսեցի, ինչպես է նա խոսում Քրիստոսի մասին և տեսա հավատացողի համար շատ խելոք նրա աչքերը,—գիտեմ, որ նա իրոք աթեիստ է և այն էլ խորապես։ Չէ՞ որ դա այդպես է»[1]։

Այն, ինչի հանգել է Գորկին՝ Տոլստոյից ստացած անմիջական տպավորության, կենդանի կապի ու շփման միջոցով, դիտելով մեծ գրողին կենցաղում, նույն այդ եզրակացությանը հանգել է Շահումյանը՝ բնավ անձնական ծանոթություն չունենալով վերջինիս հետ, այլ ելնելով միայն նրա ստեղծագործությունների գիտական-մարքսիստական անալի-

---

[1] «Литературная критика», №11, 1935 թ., էջ 120։

Այդպիսի հայացքը Տոլստոյի կրոնի նկատմամբ՝ շատ կողմերով հետաքրքրական է և նոր հարցադրումների ու խորհրդածությունների ասիթ է տալիս։

Ավելին, այսպիսի վճռական կարծիքը Տոլստոյի անհավատության մասին իր ժամանակի քննադատության համար նորություն էր։ Շահովյանը ոչ միայն հայտարարում է այդ, այլև մեծ գրողի ստեղծագործությունների վերլուծության հիման վրա հաստատում է իր թեզը։ Այդ հարցադրումը հարստացնում է մեր պատկերացումը Տոլստոյի կրոնական զարգացման մասին։ Հետաքրքիր ու ուշագրավ է այստեղ հիշել այն զուգադիպությունը, որ կա այդ հարցում Շահովյանի և պրոլետարական մեծ գրող Մաքսիմ Գորկու կարծիքների միջև։ Արդեն «Հիշողություններ Տոլստոյի մասին» հետաքրքիր հիշողությունների մեջ, որն արժանացել է Լենինի դրական վերաբերմունքին, Գորկին նույնպես գալիս է այն եզրակացության, ինչ Շահովյանը։ Բայց ավելի որոշակի Տոլստոյի անհավատության, անաստվածության մասին Գորկին արտահայտվել է հիշողություններից առաջ գրած մի նամակում։ Այդ նամակում, որը հիմք է դարձել նրա «Հիշողությունների» համար, շարադրել է իր տպավորությունները ռուսական հողի մեծ գրողի հետ ունեցած առաջին հանդիպման մասին։ 1900 թվին Չեխովին հասցեագրած այդ նամակում մենք կարդում ենք.«Ես բոլորովին չէի հավատում, որ նա աթեիստ է, թեև զգում էի այդ, բայց հիմա երբ լսեցի, ինչպես է նա խոսում Քրիստոսի մասին և տեսա հավատացողի համար շատ խելոք նրա աչքերը,—զգեցի, որ նա իրոք աթեիստ է և այն էլ խորապես։ Չէ՞ որ դա այդպես է»[1]։

Այն, ինչի հանգել է Գորկին՝ Տոլստոյից առացած անձնական տպավորության, կենդանի կապի ու շփման միջոցով, դիտելով մեծ գրողին կենցաղում, նույն այդ եզրակացությանը հանգել է Շահովյանը՝ բնավ անձնական ծանոթություն չունենալով վերջինիս հետ, այլ նրանով միայն նրա ստեղծագործությունների գեղարվեստական անալիզի միջոցն ունենալով։ Այս փաստը շատ պերճախոս է։ Նա ցույց է տալիս, թե որքան լավ էր իմանում Շահովյանը գրականությունը և որքան խորն էր ուսումնասիրել նա մեծ գրողի ստեղծագործությունները՝ միաժամանակ հանդես բերելով ինքնուրույն մոտեցում հարցին և մարի խորամանկություն։

Ինչը՝ Շահովյանը, Տոլստոյի «նոր կրոնն» ստեղծելու հարցը ուղղակի կապում էր Տոլստոյի աշխարհայացքի վրա ժողովրդական մասսաների ունեցած ազդեցության հետ, այլ խոսքով, Տոլստոյը ստեղծից իր «նոր կրոնը» տառապյալ ժողովրդական մասսաների, «համապատասխան գլուխգործության» (Լենին) անմիջական ազդեցության տակ, արտահայտելով վերջինիս տրամադրությունները։ Մենք բերելով Մարքսի այն խոսքը, որ երանը դա մի ձգտում է ստեղծել «հավատարիմ երջանկություն, որը փոխարինելու է ժողովրդի «երջանկությանը», Շահովյանն իր կողմից ավելացնում է. «Այս խոսքը լիովին հաստատվում է նաև Տոլստոյի կրոնին»։ Եվ այդ հանգամանքի է, որովհետև Տոլստոյը նուիրելու որոշեց ժողովրդի համար ստեղծել խարուսիկ երջանկություն «նոր կրոնի» ձևով։

Սակայն ի՞նչ հանգամանքների ազդեցությամբ տեղի ունեցավ այդ բեկումը Տոլստոյի հայացքների մեջ։

«Տոլստոյը տեսնում էր ժողովրդական մասսաների ապրելակերպը, միշտ ու տանջանքը,—պարբերաբար է Շահովյանը, բացահայտելով նրա աշխարհայացքի բեկման և հեղափոխական հիմքերը։—Անկեղծորեն և խորապես խղճում էր նրանց, ամբողջ սրտով զգում էր նրանց վիշտն և տառապանքների սարսափը, բայց տեսնում ոչ մի ելք չէր տեսնում (նրա ամբողջական ազնվական հոգեբանությունը թույլ չէր տալիս տեսնելու այդ ելքը). ժողովրդի համար փնտրում էր ելք, ինչպես ասենք այդ ելքը։ Ժողովրդի համար չէավատալով, նա որոշեց ստեղծել նրա համար «հարատևիկ» երջանկություն։ «Տոլստոյը տեսնում է,—շարունակում է իր բացատրությունը Շահովյանը,—որ մարդիկ պայքարում, կռվում են ապրատության ձիրանիներից դուրս գալու, հասարակական ավելի լավ պայմաններ ստեղծելու համար։ Տոլստոյական ավելի լավ պայմաններ ստեղծելու համար։

[1] «Литературная критика», №11, 1935 թ., էջ 120։

տուլը չի հավատում այս աշխարհում որևէ բան փոխելու հնարավորությանը։ Դրա համար էլ նա չի ուզում շղոպվել հասարակական պայմանները՝ համարելով դրանք բոլորովին անկարևոր։

Շահումյանի այս փակուղուն տողերի իմաստը, միշտ ասած, նույնն է, ինչ Լենինը անվանել է տոլստոյական ճեռնպահություն քաղաքականությունից, տոլստոյական հրաժարում քաղաքականությունից, նրա նկատմամբ հետաքրքրության բացակայություն։ Դրա մեջ Լենինը տեսնում էր նահապետական գյուղի անողնաշար և ռամեռարար մուժիկի» քարացած վախկոտության արտացոլումը[1]։ Այլ բառերով, բայց բուն էության նույնն է ասում Շահումյանը վերևում բերված հատվածներում։ Այդ տողերը խիստ արժեքավոր են և խոր միտք են պարունակում։ Տոլստոյը, Շահումյանի կարծիքով, կանգնեց աշխատավոր ժողովրդի կողմը, իր քննադատության մեջ արտացոլելով տատապող և ընչազուրկ մասսաների տրամադրությունները։ Այդ միտքը ավելի պարզորոշությամբ արտահայտված է նույն այդ հոդվածի մի ուրիշ տեղում, որտեղ Շահումյանը հանձին մեծ գրողի տեսնում է «ընչազուրկների այդ անկասկած ազնիվ և անկեղծ բարեկամին»։

Տոլստոյի՝ որպես ընչազուրկ, աշխատավորական մասսաների, այսինքն՝ նահապետական գյուղացիության ձգտումների արտահայտչի մասին եղած հայացքը, որպիսին նա դարձավ աշխարհայացքային ճգնաժամի հետևանքով, առաջին անգամ արտահայտել է Լենինը և հանձարեղորեն ճշտել Տոլստոյի մասին գրած հոդվածներում։ Իսկ դա հիմնական, կենտրոնական հարց է Տոլստոյի գնահատման գործում և պայմանավորում է բոլոր մնացած հարցերը։

«Տոլստոյը կանգնած է նահապետական, պարզամիտ գյուղացու տեսակետի վրա, Տոլստոյը փոխանցում է նրա հոդերանությունն իր քննադատության, իր ուսմունքի մեջ։ Տոլստոյի քննադատությունը հենց այն պատճառով է լեցված այդքան խոր ղգացմունքով, այդպիսի կրքոտությամբ, համակված ուժով, թարմությամբ, անկեղծությամբ, ժողովրդական ճասսաների իշխատության իսկական պատճառները գտնելու և «ինչն արմատը» հասնելու անվեհերությամբ, որովհետև այդ քննադատությունն իրոք որ արտահայտում է այն միլիոնավոր գյուղացիների հայացքների բեկումը, որոնք դեռ նոր-նոր էին ազատագրվել ճորտատիրությունից և տեսել էին, որ այդ ազատությունը հավասար է քայքայման, սովամահության, քաղաքային «սանկեքների» ղրջապատում սպասող անապատան կյանքի և այլ նորանոր սարսափների...»։ Լենինյան հանճարեղ գնահատության լույսի տակ Տոլստոյի «ռամնկրը և գնդրվելական սահմռկեցնությունը միանգամայն այլ տեսք են ընդունում։ Տոլստոյի հայացքների «խառնիճ՝ որպես «վերջնական քրիստոնեական անարքիզմի» մասին եղած ոչ միշտ պատկերացումը և նրա մասին մի շարք այլ նման անհեթեթ պնդումներով լի արտահայտությունները լենինյան հոդվածների հզոր հարվածների տակ վերջնականապես չքացյալների և դեն շպրտվեցին։ Տոլստոյի մասին Լենինի տված գնահատականը, նրան որպես ռուսական բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի հայելի» քննողին՝ հանճարեղ գիտական հայտնագործությունն է գրական-քննադատության բնագավառում և մնում է որպես գրական երևույթների մարքսիստական վերլուծության չգերազանցված օրինակ։

Դա ծառայել և շարունակում է ծառայել որպես մարքսիստական գրականագիտության դեկավար սկզբունք ոչ միայն Տոլստոյի գնահատման հարցում, այլև այլ կարդի բարդ գրական երևույթների պարզաբանման համար։

Տոլստոյի մասին Շահումյանի հոդվածների հիմնական արժեքը և նրանց ղեկավոր նշանակությունն այն է, որ Շահումյանը Տոլստոյի գործունեության մեջ գլխավորը որոշելիս, նրան գնահատելիս, հենվում է Լենինյան սկզբունքների վրա, գնում է Լենինի ճանփով, Տոլստոյին համարելով ընչազուրկների անկեղծ բարեկամ, որը բուրժուա-կալվածատիրական կարգերի իր քննադատության մեջ արտահայտել է

1 «Հոդվածներ Տոլստոյի մասին», էջ 10։

1 «Հոդվածներ Տոլստոյի մասին», էջ 27։

ժողովրդական մասսաների տրամադրությունները, միշտ և տատանումները։ Շահումյանի աստվածները Տոլստոյի հակասություններ, ուժի հանճարեղության և թուլության մասին, ինչպես տեսանք, տոգորված են լենինյան հոդվածների ոգով։ Չնայած այդ հանգամանքին՝ Շահումյանի հոդվածները մեծ գրողի մասին չեն հասնում ուսուցչի հոդվածների բարձրությանն ու խորությանը։ Լենինը Տոլստոյին դիտեց որպես ռուսական ռևոլյուցիայի հայելի, նրա ուժի և թուլության արտահայտություն։ Շահումյանի մոտ այդ հարցը չի ծրագրված, քանի նրա աստվածները տրամաբանական զարգացումը միայն կարելի է հանգեցնել լենինյան այդ ընդհանրացումներին։ Եվ դա Շահումյանի հոդվածների հիմնական թերությունը պետք է համարել։ Անկախ այդ տարերությունից, Շահումյանը մեծ գրողին հիմնականում գնահատել է լենինյան ոգով։ Հետաքրքրական է նշել, որ դավադիրական այն մերձեցումը, որ կա Լենինի և Շահումյանի հոդվածների միջև, գոյություն չունի այլ մարքսիստներին տրամկանող աշխատությունների մեջ, որոնք Տոլստոյի մասին գրել են Լենինից առաջ և նրանից հետո (խոսքը նախահեղափոխական ժամանակաշրջանին է վերաբերում)։ Սա նկատի ունենք, իհարկե, ոչ թե մենշևիկներին իրենց բոլոր տարատեսակություններով, որոնք իրենց համարում էին մարքսիստներ, իսկ իրականում մարքսիզմի ոխերիմ հետևամները էին, այլ անցյալի այնպիսի գործիչների (Պլեխանով, Մերինգ, Ռոզա Լյուքսեմբուրգ), որոնք չնայած իրենց սխալներին և մարքսիզմից կատարած լուրջ նահանջներին, ունեն որոշակի ծառայություններ մարքսիզմի և պրոլետարական ռևոլյուցիոն շարժման հանդեպ։ Եթե Շահումյանի դրույթները հիմնականում համընկնում են Տոլստոյի վերաբերյալ լենինյան գնահատականին, եթե բոլշևիկ Շահումյանը իր մեծ ուսուցչի գաղափարական ազդեցության տակ այդ հարցում ըստ էության պաշտպանում է լենինյան դիրքերը, այստեղ ոչ մի զարմանալի բան չկա։ Ընդհակառակը՝ դա շատ բնական է և այլ կերպ լինել չէր կարող։

ԳԼՈՒԽ V

ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԸ ԵՎ ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻՆ

Մաքսիմ Գորկին եղել է ոուս այն մեծ գրողներից մեկը, որոնց Շահումյանը նվիրել է հատուկ աշխատություններ։ Նրա աստվածները պրոլետարական մեծ գրողի մասին խիստ հետաքրքրական են ոչ միայն քննադատի գրականագիտական ընդհանուր հայացքները բնորոշելու տեսակետից, այլև այն պատճառով, որ Գորկու պարտպանությունը նվիրված նրա հերոսները ամենատարա կերպով կապված էին Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պայքարի հետ, պայքարելիկյան ժամանակաշրջանում էին Մաքսիմ Գորկու հանդեպ եղած լենինյան վերաբերմունքը։

Մաքսիմ Գորկու լենինյան քնութագիրը, իբրև ընդհանրական արվեստի անպայման խորհրդանշի ներկայացուցչի, որը նրա համար շատ բան է արել և դեռ շատ բան կարող և անելու, որպես մի գրողի, որն փոր մեծ գեղարվեստական կրկերով չափազանց ամուր է կապվել Ռուսաստանի և ամբողջ աշխարհի բանվորական շարժման հետ, դարձավ Ստեփան Շահումյանի, ինչպես և այլ բոլշևիկների համար ելակետային և ղեկավարող սկզբունք՝ մեծ գրողի ստեղծագործության գնահատման գործում։ Եվ իրոք, Ս. Շա-

---

1 Լենինը և արվեստը, 1933 թ., էջ 106։

2 Նույն տեղ, էջ 105։

Հումյանը Գորկու մասին գրած իր հոդվածներում հանդես է գալիս որպես լենինյան հայացքների ջերմ պաշտպան։

Հայ պրոլետարական պոեզիայի հիմնադիր Հակոբ Հակոբյանը Ս. Շահումյանի մասին գրել է. «Ես հիշում եմ,— ռուս գրողներից նա ամենից շատ սիրում էր Մ. Գորկուն, եվրոպական գրողներից՝ Վիկտորին, հայ գրողներից՝ Հովհաննես Թումանյանին։

Դեռ ուսանող եղած ժամանակ, Շահումյանը ջերմորեն հետաքրքրվում է Գորկու երկերով, սիրում է գրանք և փոդձում թարգմանել հայերեն։ Նա հաջող կերպով թարգմանեց Գորկու «Ի անգամ աշնանը» պատմվածքը և հրատարակեց առանձին գրքով 1901 թ.։ Գորկին հայերեն թարգմանվել է դեռևս Շահումյանից առաջ, բայց այդ թարգմանությունները ապատրել են միայն հայ պարբերական մամուլում։ Առանձին գրքույկով առաջին անգամ լույս ընծայվեց Շահումյանի թարգմանությունը, որը գրական վերաբերմունքի արժանացավ ժամանակի քննադատության կողմից։

Շահումյանի վերաբերմունքը դեպի Գորկին քաղաքական խորը բնույթ է կրում։ Այդ բոլշևիկ-ռևոլյուցիոները հանձին Գորկու տեսնում էր ժողովրդական ազատագրության համար մղվող պայքարի իսկական մարտնչողին։ Բուրժուական մամուլը Անդրկովկասում, ինչպես և ամենուր, զրպարտում էր Գորկուն և հալածում նրան։ Դեռ Գորկու պատժապանությանը նվիրված Շահումյանի ելույթից առաջ Անդրկովկասի բոլշևիկները 1908 թ. Սուրբեն Սպանդարյանի հոդվածով հակահարված հասցրին Գորկու հանդեպ եղած բուրժուական մամուլի զրպարտիչ հարձակումներին, բնորոշելով զրանք որպես ամբ. Գորկուն կրունկից կծելու փորձ»[1]։

1911 թ. Բաքվում լույս է տեսնում «Современная жизнь» բոլշևիկյան շաբաթաթերը։ Այդ ամսագրին մամանակցում էր նաև Վ. Ի. Լենինը՝ լույս ընծայելով իր «Մարքսիզմը և ինչալա զարյա հոդվածը, որ ուղղված է լիկվիդատորների դեմ։ Այդ շաբաթաթերի 3 համարը լույս տեսավ միայն, շնորհիվ իշխանությունների կարգադրությամբ փակվելը։ Այդ առիթով Լենինը գրում էր Գորկուն. «Բաքվում «Современная жизнь»-ը նույնպես ձերբակալել են և խեղդել»։

Հենց այդ ամսագրում Ստամբին կեղծանվան տակ լույս տեսավ Շահումյանի «Բրական դիտողությունը Մաքսիմ Գորկու մասին» հոդվածը («Современная жизнь», (1911 թ., № 1)։ Այդ հոդվածում Շահումյանը անողոքաբար մերկացնում է Բաքվի բուրժուական մամուլի նողկալի և զրպարտիչ հարձակումները պրոլետարական գրողի դեմ։ Այդ հոդվածը գրելու ամենիական առիթը հանդիսացավ բուրժուական «Баку» թերթի ելույթը Գորկու դեմ։ Շահումյանի պատասխանը տարերքվում էր սովորական գրական-բանավիճական հոդվածներից և պրոլետարական մեծ գրողի ստեղծագործության քաղաքական խոր ընդհանրացումն էր։

«Մաքսիմ Գորկին,—գրել է Շահումյանը,—ռուս բանվորների սիրելին է։ Եվ դա միանգամայն հասկանալի է։ Դուրս գալով ժողովրդական ստորինաս խավից, լինելով ինքնուս գրող, նա իր մեծ գարգացրեց խոշոր գեղարվեստական տաղանդ։ Ապա, հասնելով գրական փառքի բարձունքներին, դառնալով պաշտոնական ընդերցող հասարակության կուռքը՝ նա եկավ իր բնական գարգացման ընթացքով բանվորների մոտ, որոնց թնեց իր գեղարվեստական տաղանդը, կանգնեց նրանց հետ մի դրոշակի տակ, գործավ նրանց երգին ու կենցաղագիրը։ Այս գնահատականից երևում է, որ Շահումյանը որոշ տարբերություն է դնում Գորկու գրական գարգացման սկզբնական, վաղ շրջանի և հետագայի միջև։ Քան քննադատի Մաքսիմ Գորկին երբեք չի դադարել կյանքի տարի տերերի բանակում, երբեք չի նոել «Երվոդների ուղարակ գրուցողների շարքում»։ Բայց մինչև 1905—1906 թվականները իր վաղ շրջանի ստեղծագործությամբ Մաքսիմ Գորկին «Ռևևս չձանկերպված, վարդագույն, դեմոկրատական բնթրոտ տրամադրություններ»[1] էր համակված։ Այդ հանգամանքը հնարավորություն էր տալիս Գորկուն մասնակցելու «Знание» հրատարակչության գործունեությանը, որի մեջ մտնում էին ռուս դեմոկրատական ուժերի ներկայացուցիչները։

---

1 Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, Երևան, 1939 թ., էջ 128։

1 «Լենինի նամակները Մ. Գորկուն», Մոսկվա, 1933 թ., էջ 55։

մանքը շփոթությունն մեջ էր գցել բուրժուական ինտելիգենցիայի, քննադատությունն որոշ անշրջահայաց շերտերին: Նրանք այլ բան էին ուզում տեսնել Գորկու ստեղծագործությունն մեջ և այլ հետաքրքրներ ու հույսեր էին կապում նրա հետ: Բայց խորապես սխալվեցին. արդեն առաջին շրջանի ռեալիստական ստեղծագործություններով, որոնց հասարակական իմաստը ի միճամի չեղան ըմբռնելու բուրժուական քննադատության մի շարք ներկայացուցիչներ, Գորկին ասես երկաթե ձողով քանդում էր հին հասարակության, ցարական, բուրժուական հասարակության հիմքերը և գրական մրրկահովի իր հատկությամբ ազգարարում հասունացող-բարձրացող ռևոլուցիայի փոթորիկը: Եվ այն պայթեց:

1905 թ. ռևոլուցիայի շրջանում, երբ Վ.Ի.Լենին ղեկավարում էր բոլշևիկյան կուսակցությունն ու նրա թերթ «Նովայա ժիզնը», Գորկին ստեղծեց «Ինչպես ապրում ենք մենք» հոդվածաշարը, որտեղ ասում էր. «Ռուսաստանում ապրում ենք մի ահավոր ժամանակ: Ամենուր ոտքի են կանգնել ստրուկները, որոնք ուզում են ազատ մարդ դառնալ

պայման (?) համաձայն է։ Եվ այլ կերպ ինչպե՞ս կարող է։

Շահումյանը վճռականորեն հերքում է Ստարցևի զրպարտիչ հարձակումները Գորկու դեմ և վկայությունով պատմվածքի բովանդակությունը՝ ցուցադրում է, որ Գորկուն հոմանիշ է դարձնում սպային, հավատացնում է ընթերցողին, որ սպան ընդամենը խոսում է ինքը Գորկին... Եվ... ո՛վ ճակատագրի ծաղր, Ստարցևը զրահավորվում է պաշտպանելու համար սոցիալիզմը, պաշտպանելու համար ռուս գյուղացուն և բանվորին Գորկու հարձակումներից և զրպարտություններից։ Կարո՞ղ եք երևակայել, ընթերցո՛ղ, այդ պատկերը։

Բուրժուական քերթի աշխատակիցն այնուհետև կեղծում է Գորկու մի այլ պատմվածքը («Մորդովկա»), կրկին ընդունելով՝ բանվորներին Գորկու «զանգատներից», «զրպարտություններից» պաշտպանողի կեղծված։ Ստարցևի մեկնաբանությամբ Գորկու պատմվածքի հերոս բանվոր-սոցիալիստ, պարտիական աշխատանքին նվիրված Պավել Մահովը, կնոջ ազդեցությամբ, հրաժարվում է պարտիայից և իր իդեալներից։ Ներկայացնելով պատմվածքի բովանդակությունը՝ ֆելիետոնիստը այստեղ հետապնդում է որոշակի նպատակ՝ վերագրել Գորկուն «հիասթափություն և զանգատներ», «հաղ, բայց արեք, ընթերցո՛ղ,—ասում է Շահումյանը, «Современный Мир»-ի առաջին համարը (այս տարվա) և կարդացեք այդ լավ պատմվածքը։ Տեսեք, թե ի՞նչ հեքիաթներ է պատմում մեզ Ստարցևը...

Գորկին նկարագրում է և նկարագրում է ճշգրիտ ու շնորհալիորեն առաջավոր բանվորների կյանքում սովորական երևույթները, որոնք ընտանիքի հետ և այն հոգեկան դրաման, որ նրանք վերապրում են։ Այստեղ կան այդ դրամայի բոլոր փոխանցումները, բայց ոչ մի խոսք, ոչ մի անկարկ չկա այն մասին, թե Պավելն իրր պարտված դուրս եկավ, թե նա փոխանց իր դաղափարները կնոջ զեղեցիկ մարմնի հետ (ինչպես պնդում է ֆելիետոնիստը, Ա. Ո.), Պավել Մահովը մինչև պատմվածքի վերջը մնում է նույնը, ինչպես սկզբում էր։

Պատմվածքի սկզբից մինչև վերջը ո՛չ Պավելի, ո՛չ էլ հեղինակի գլխում հարց անգամ չի ծագում այն մասին, իրր թե պետք է առհասարակ ընտրել երկուսից մեկը—ընտանիքը կամ բանվորական գործը։ Այդ հարցն ամենևին չի դրվում պատմվածքում։

Մինչդեռ զրպարտությունն վարպետ Ստարցևը կեղծում և խեղաթյուրում է Գորկու պատմվածքի բովանդակությունը։ Մերկացնելով բուրժուական քննադատության նման պրիմիտիվը՝ բոլշևիկ Շահումյանն այդ փաստերից ընդհանուր եզրակացություն է հանում. «Կարևորն է այն, որ բոլոր նման «քննադատները» խոսելով բանվորական գրող Գորկու մասին, ինչպես նաև առհասարակ այն բոլորի մասին, ինչ վերաբերում է բանվորներին, ոչ մի կերպ չեն կարողանում խուսափել պիտակցորեն թե անգիտակցորեն, սուտից, խեղաթյուրություններից, զրպարտություններից»։

Ապա նույնհետև հիշելով Գորկու հոդվածը «Ինքնուս գրողների մասին», Շահումյանը իրավացիորեն ասում է, որ դա ուժերին ապտակ է «Ստարցևին և նրա նման ասպետներին»։ Ջննելով այդ հոդվածը՝ քննադատ-բոլշևիկը մատնանշում է Գորկու սերտ կապը ժողովրդական մասսաների, հասարակության զանազան խավերից ելած իր բազմաթիվ ընկերների հետ. «Հազարավոր թելեր ձգվում են գիտակից կյանքի համար արթնացող ժողովրդի ծոցից ելած գրական նորքերքի հետաքրքրվող մարդկանց սրտերից դեպի իրենց պանծալի եղբայրակիցը՝ ինքնուս գրող Մաքսիմ Գորկիին»։

Շահումյանը ցույց է տալիս մեծ գրողի խակական սերը և մշտական ուշադրությունը դեպի իր ընկերները։

«Հոդվածի յուրաքանչյուր տողի մեջ,—ասում է Գորկու մասին,—նկատելի է հեղինակի զարմանալի նուրբ, ազնիվ

---

1 «Баку» փետր. 11, 1911 թ., № 33։

հոգին՝ լցված անսահման սիրով գնալի «սարսափելի կյանքի մարդիկ», ինչպես ինքը արտահայտվում է նրանց մասին:

Ռուս գրականության մեջ, համենայն դեպս արդի գրականության, ժենք չգիտենք մի այլ գրողի այդ աստիճան բարոյական, նրբազգաց ու մաքուր, ինչպես Գորկին է: Հարկավ, ժենք այդ ասում ենք ոչ միայն վերոհիշյալ հոդվածի հիման վրա, այլ նկատի ունենալով նրա բոլոր գրվածքները, նրա ամբողջ գրական գործունեությունը[1]:

Քաղվածքներ բերելով սևսնակ գրողների երկերից՝ Շահումյանը մատնացույց է անում, թե որքա՜ն «երրորդ» և «ինքնատուր» է հնչում մասնավորի անմիջական ձայնը, «հասարակ, անկեղծ մարդկանց» ձայնը: Եվ այդ փաստերը նա հմտորեն կապում է կենդանի կյանքի, ռեալության պայքարի կենսական հարցերի հետ: Օրտագործելով այդ նյութերը՝ նա ապացուցում է, որ «մեղանում՝ Ռուսաստանում, այսպես կոչված, «մասնավոր ռեակցիա», ռեակցիա ներքին գոյություն չունի: Մեր ռեակցիան գերազանցապես կառավարական է»: «Երկնում ենք,—ասում է նա,—Գորկու չորս հարյուր հոգեկիցները Ռուսաստանի բոլոր անկյուններից միայն Ռաստոտում են այդ անսահմանելի փաստը»:

Բրական այդ նյութերը Շահումյանին օգտագործում է ռեակցիայի դեմ ծավող պայքարում և նրանց միջոցով մերկացնում է բանվոր դասակարգի և նրա՝ գրողի նկատմամբ նշած բուրժուական քննադատության կեղծիքը և գրպարտությունը:

Յուրը տալով Գորկուն իր ամբողջ վերնությամբ, որպես խորհրդային արվեստագետի և պրոլետարական մասսաներին կապիտալիստական ճնշումից ազատագրելու համար ծավող պայքարի կրքոտ մարտիկի՝ Շահումյանը գրա հետ մեկտեղ ծիծաղում է բուրժուական թերթերի և քննադատների ողորմելի փորձերի վրա, որոնք Գորկուն պատկերում էին որպես հիասթափվածի, հուսալքվածի, դանդաղողի, բանվորներին դրպատողի: 1911 թվականի հրատարակության մեջ, երբ բոլորը չէին, որ կարողանում էին ըմբռնել Գորկու դերը, որպես ռևոլուցիայի ծրդիահաղի, որպես բանվոր դասակարգի մեծ արվեստագետի, Անդրեվիչևի բոլշևիկյան մամուլում հրապարակվում է խիստ բովանդակալից, ռևոլուցիոն կրքով լի մի հոդված, որի մեջ Վեդիենկը պաշտպանում է Գորկու վերաբերյալ լենինյան հայացքները:

Դրվատելով մեծ գրողի ստեղծագործությունները, պաշտպանելով նրան բուրժուական քննադատության գրպարտիչ հարձակումներից՝ Շահումյանը, սակայն, հանդես է գալիս պարտիական սկզբունքայնության, չի թաքցրել և Գորկու թերությունները, ցույց է տվել դրանք: «Իա,—ասում է Շահումյանը,—մարքսիստական քննադատության կոոշից արդեն նկատված Գորկու ոչ բավարար սկզբունքային տարրեն կունությունն է, նրա մեջ հետևողական մարքսիստական պարզ մտածելակերպի բացակայությունն է»:

Այդ թերությունները, նրա «ոչ բավարար սկզբունքային տարուներությունը» և տատանումները, որ արտահայտվել էին ռևակցիայի շրջանում, հետագայում, 1917 թ. ռևոլուցիայի շրջանում, նույնպես իրենց զգալ տվին: Միայն Լենինի և Ստալինի քննադատության և նրանց դաղափարական ազդեցությանը Գորկին հաղթահարեց իր այդ տատանումները և վերնմանապես դարձավ սովետական ռևոլուցիայի մեծ պաշտպանը:

Դեռևս 1911 թվին մատնանշելով հանգերձ մեծ գրողի այդ սխալ տատանումների փաստը՝ Շահումյանն անհրաժեշտ էր համարում ընդգծել, որ Գորկու գործունեության մեջ գլխավորը, էականը, կարևորը այդ թերությունները չեն, այլ այն, որ նա իր հոգու բոլոր ճիլերով կապված է աշխատավոր մասսաների, հատկապես բանվոր դասակարգի հետ, նրա պայքարի գինվիչն է՝ իր վիթխարի ստեղծագործությունների ու ռևոլուցիոն գործունեությամբ:

Այդ բոլոր կարևոր հատկանիշների համար էլ նա վայելում էր Լենինի և Ստալինի սերն ու համակրանքը, արժանանալով նրանց գրական գնահատականին: Գորկու նույն այս հատկությունները նկատի ունենալով՝ հիացմունքով է խոսել

1 Շահումյան. «Երկերի ժողովածու», հ. II, էջ 69:

Շահումյանը նրա մասին, բացատրելով «Գորկին պրոլետարական գրականության գարգն ու պարծանքն էր: Եվ Գորկու քննարկվող հոդվածը, և նրա մյուս նոր երկերը, վերևում նշված «Տյուռմեները» և «Մարդիվիան», նույնպես և նրա սքանչելի միևնատյուրները նպատակի գործադրելավորների և նրանց երեխաների հանդիպման մասին ձեռնվոլյուցիա, որոնք լուրջ ընծայվեցին «Ընդհանուր» վերաբերությամբ, էլ ավելի մոտեցրին Գորկուն բանվորներին:

Եվ բանվորները հպարտությամբ կարդ են հայտարարել.

«Այո, Գորկին մերն է. նա մեր արվեստագետն է, մեր շարունակը ու զինակիցը ազատագրության վեհ պայքարի մեջ»:

Այսպիսին է Գորկու գերի և նշանակության ծավալուն գնահատականը՝ տրված անդրկովկասյան բոլշևիկյան մամուլի կողմից դեռևս 1911 թ. Այդպիսի պատրաստ կարող էր գրել Գորկու մասին միայն բոլշևիկ քննադատը՝ Լենինի և Ստալինի հավատարիմ զինակիցը: Ինչպե՞ս վերաբերվեց բուրժուական մամուլը բոլշևիկյան քննադատության այդ ելույթին: «Баку» թերթի խմբագիր Վերմիշևը հանդես գալով «Современная жизнь» շարաթաթերթի դեմ՝ մեղադրում էր նրա խմբագրությանը, որ նա զրազված է հարձականքներով, և շարաթաթերթը իր սպասարկում սպագրելու համար պայման էր առաջադրում, որ վերջինս ձայնդի իրեն և իր թերթին: Շահումյանը «Վիրավորված անմեղությունն» հոդվածով պատասխանում է այդ մեղադրանքին և դիմելով Վերմիշևին՝ գրում է. «...Մենք հարցնում ենք ձեզ—այն, ինչ դուք այնտեղ տեսել եք և ինչ լուրջ է տեսել «Современная жизнь» № 1-ում (Ստալինի հոդվածը Գորկու մասին, որտեղ մերկացվում են «Баку» թերթի քննադատական հնարքները) դա քննադատությո՞ւն է, թե հարձականք: Եթե «Баку»ը ձերին ունի այնպիսի միամիտ ընթերցողներ, որոնք հավատում են պ. Վերմիշևի անկեղծությանը, ապա իրենց կարդան հիշյալ հոդվածը և դատեն իրենց խմբագրի մասին» («Современная жизнь», № 3, 1911 թ.):

Սակայն սրանով հարցը չի սպառվում: Շահումյանի այդ հոդվածը ունենում է և այլ արձագանքներ: «Баку» բուրժուական թերթի վարձկան և մինչև վերջը մերկացված գրչակները-գեղարվեստներն ուղղակի և ըստ էության բանավեճի մեջ չմտնել այդ հոդվածի հեղինակի հետ: Բայց դա չխանգարեց Ստարցևին շարունակելու իր զրպարտիչ ագիտացիան: Այս անգամ նա դիմեց Պլեխանովի օգնությանը: Պաղտնի բանավեճի մեջ ժամելով Շահումյանի հետ՝ Ստարցևը ոչ առանց հիմքի օգտագործեց Պլեխանովի հոդվածը Գորկու մասին, փորձեց դրանով «հիմնավորել» իր ելույթը Գորկու բոլշևիկյան գնահատականի դեմ:

Այդ շատ հետաքրքրական փաստ է: Գորկու դեմ ոտնձգած իր հերթական ելույթում այս քրտնաջան զրպարտիչը բաքվեցիների ինքնանքում՝ գրում էր. «Երբոր լուրս տեսած Գ. Վ. Պլեխանովի «Պատպանությունից գեպի հարձակում» գրքում ի մերի այլոց կա մի գլուխ Գորկու մասին: Հետաքրքրական գլուխ է: Առանձնապես խորհուրդ եմ տալիս կարդալ նրանց, ովքեր քիչ մեաց մտացում: Հանցանք համարեն որևէ քննադատական վերաբերմունք դեպի Գորկին (ընթերցողը կասկած է թե ո՛ւմ է ակնարկում նա. Ա. Ո.):

«—Նա, ասում են, պրոլետարական գրող է... պրոլետարիատի երգիչ...

Սակայն, ահա ինչ է գրել ռուս սոցիալ-դեմոկրատների ճանաչված առաջնորդ Գ. Վ. Պլեխանովը Գորկու հենց այդ պրոլետարականության մասին: Որպես արվեստագետ, նա, իհարկե, բարձր է դասում Գորկուն, նույնիսկ շատ ավելի բարձր, նրան դնելով Տոլստոյի, Դոստոևսկու և Գոգոլի շարքում:

Վերարտադրելով Պլեխանովի հայտնի բացասական կարծիքները Գորկու մասին, որպես մտածողի և հրապարակախոսի, Ստարցևը չարամտորեն եզրակացնում է. «Այսպիսին

1 Շահումյան, «Երկերի ժողովածու», հ. II, էջ 76:

է ուրեմն Գորկին որպես սոցիալիզմի բարոյիչ և հրապարակախոս՝ Պլեխանովի նկարագրությամբ»։

«Այդ դրույթին,—եզրակացնում է Ստարցևը,—Իվարկն կփափան բոլոր, ում համար բանկ է մեր գեղարվեստական գրականության ճակատագիրը, ով սովոր չէ այն բաժանելու բուրժուականի և պրոլետարականի և ով ամենից բարձր է դասում ազատ (!) գեղարվեստական ստեղծագործության գեղեցկությունը։ Որովհետև երեխ աշխարհում մի բան կա, որ վեր է կանգնած դասակարգային պայմանականություններից, ապա դա միայն հավերժական գեղեցկությունն է» («Вѣсть», մարտի 7, 1911 թ.)։

Կապիտալիստական հասարակության «ազատ գեղարվեստական խոսքի» կեղծ, դատարկ, լիրերալ ֆրազը և ռեակցիոն շաղակրատությունը «արվեստի ապաքաղաքական բնույթի» մասին, ինչպես և այդ լիրերալիզմի կարծիքները Գորկու պլեխանովյան գնահատության վերաբերյալ՝ խոսում են իրենց իրենց մասին. Գորկու ստեղծագործության վերաբերյալ՝ խոսում են իրենց մասին։ Գորկու ստեղծագործությունը միանգամայն համապատասխանում էր պրոլետարական մեծ գրողի բուրժուական գրպարտողների պրոբլեմներին։ Վերջիններս իրենց սուր և սխամամտի հայածանքում չանսխրությամբ օգտագործում էին մենշևիկների ելույթները Գորկու դեմ։ Տվյալ դեպքում ոգորմելի Ստարցևի կողմից Պլեխանովին վկայակոչելը, բոլշևիկյան քննադատությունից պաշտպանվելու նպատակով, ժխանգամայն բնորոշ է։ Գորկու ստեղծագործության մենշևիկյան գնահատության համարձակությունները այն ինչամական գծին, որն ամբողջ ժամանակ կերտում է բուրժուական քննադատությունը Գորկու նկատմամբ, այնքան ակնհայտ է, բնկոզ և վերջում մատնանշված օրինակի մեջ, որ հետագա ապացուցման կարիք չի զգացվում։ Միայն Լենինը, բոլշևիկները մշտականորեն հանդես եկան Գորկու պաշտպանության ընդդեմ բուրժուական և մենշևիկյան քննադատության։ Միայն Լենինը, նրա աշակերտները և գիտակիցները ճշմարտությունն ասացին Գորկու՝ իրրև պրոլետարական մեծ գրողի մասին։ Մինչդեռ բուրժուական վարձկան ժուռնալիստների և բուրժուական քիրքերի ելույթները Գորկու լենինյան-բոլշևիկյան գնահատության դեմ միանգամայն համաձայնում են մենշևիկների ելույթների։

Շահումյանն արդեն հնարավորություն չուներ պատասխանելու Գորկու դեմ ուղղված նոր գրպարտիչ հարձակումներին։ Շուտով «Современная жизнь»-ը փակվեց, իսկ Շահումյանը ձերբակալվեց։

Սակայն Շահումյանի վերաբերմունքը դեպի Գորկին չի սահմանափակվում վերևում նշված հոդվածով։ Նրա հետագա աշխատությունները ոուս մեծ գրողի մասին միշտ եղել են խոր հարգանքով և անկեղծ սիրով լի։ Շահումյանը և մյուս բոլշևիկները Գորկու ստեղծագործության ակտիվ մասնակիցները հանդիսացան հայ իրականության մեջ։ Նրանք թարգմանեցին Գորկու մի շարք երկերը և գրելին բոցաշունչ հոդվածներ նրա մասին։

Մեայն 1916 թվականին հայկական «Պայքար» ընդհատ էջերում, որի խմբագրության կազմում ղեկավար դեր էին խաղում այն ժամանակ Շահումյանը, Ա. Մռավյանը և ուրիշներ, Գորկու ստեղծագործություններից թարգմանվեցին և տպագրվեցին ավելի քան 16 երկ, գլխավորապես «Հեքիաթներ Իտալիայի մասին» շարքից։ Գրոլետարական պոետ Հակոբ Հակոբյանը դեռևս 1914 թ. առաջին գրքով իր թարգմանությամբ հրատարակեց Գորկու երկու հեքիաթները։ Գորկու ստեղծագործության, մասնավորապես նրա «Հեքիաթների» նկատմամբ եղած այդ մեծ հետաքրքրությունը միանգամայն հասկանալի է։ Գորկուն գրած Լենինի նամակում մենք կարդում ենք այդ առթիվ.

«Աքանչելի հեքիաթներով դուք շատ և շատ օգնեցիք Յեջովին[1]-յին և այդ իսկ պատասխանությունն պատճառեցիք։ Գորկուն ուղղված մի այլ նամակում Լենինը գրում է. «Ամի կլիներ ունենալ անոլոգիան թուշկինների Յեջովի հեքիաթների մասին»[2]։

1 Լենինի նամակները Գորկուն, էջ 10, 1933 թ.։

2 Նույն տեղ, էջ 59։

Բոլշևիկները կազմակերպեցին Գորկու հեքիաթների քարոզչությունները և առհասարակ մասսայականացրին նրա ողջ ստեղծագործությունը. այդ հեքիաթները, Շահումյանի Տշղրիտ արտահայտությամբ, «Գորկուն ավելի մոտեցրին բանվորներին»:

Սակայն Գորկու ստեղծագործության մասսայականացումը հայ ժողովրդի մեջ՝ չէր սահմանափակվում միայն քարոզչություններով: Նույն այդ ԹՎերին էջերում երևան եկան գրախոսություններ և հոդվածներ Գորկու ստեղծագործության մասին: «Հեքիաթները» առանձին գրքով հրատարակվելու կապակցությամբ բոլշևիկ Ա. Մռավյանը «Մայքա» ԹԵրում զետեղեց մի մեծ գրախոսություն: Բարձր գնահատելով Գորկու ստեղծագործությունը և նրա դերը պրոլետարական դասակարգային ինքնագիտակցության զարգացման գործում՝ գրախոսության հեղինակը «Հեքիաթները» բնութագրում է հետևյալ խոսքերով. «Ցավարդական ոչինչ չկա «Հեքիաթների» մեջ, նրանք կյանքի ստեղծած հեքիաթներն են. բովանդակությունը՝ Խաչիայի աշխատող մարդկանց առօրյան, նրանց մտքերն ու հույզերը, ուրախությունն ու տրտմությունները: «Հեքիաթները» ոգեղված են խոր, մարդկային անկեղծ սիրով և մարդաբանական հավատով դեպի մարդկության պայծառ ապագան: Ամբողջ գրքից բուրում է մի զարմանալի ու վարակիչ լավատեսություն, կենսասիրության աղբյուրի զգացում»:

Ո՞վքեր են Գորկու հերոսները—ժողովուրդը, ժողովրդական մասսան, բանվորներ, բանվորուհիներ, ձկնորսներ, գեղջուկներ, գեղջուհիներ, երեխաներ»:

Այնուհետև կոնկրետ վերլուծության ենթարկելով առանձին հեքիաթները՝ գրախոսն ընդգծում է «Հեքիաթների» հեղինակի գեղարվեստական վարպետությունը մասսայական տեսարանների, գործադրվերի և առանձին բանվորների կերպարների ցուցադրման գործում, իսկ եզրափակման մեջ ընդգծում է, որ Գորկու հերոսները զգում են իրենց մեծ գործի ժամկոտությունը, բայց օժտված են կամքի ուժով և առանց տատանման շարունակում են իրենց ծանր պայքարը նրանիկ կյանքի համար («Պայքար», մարտ 6, 1916 թ.):

Այդ նույն ԹերԹում զետեղված է Ս. Շահումյանի գրախոսությունը Գորկու զինվարությամբ լույս տեսնող «Լետոպիսեց» ամսագրի 1916 թվի Հոկտեմբեր համարի մասին: Գրախոսությանն մեջ ասվում է. «Մարքիմ Գորկու մոտիկ աշխատակցությամբ հրատարակվող «Լետոպիսեց»-ը իրավամբ համարվում է ներկայումս ամենալուրջ և ամենահետաքրքրական դեմոկրատական ամսագիրը և, կարելի է ասել, նա միակն է, որ հավատարիմ է մնացել մեր ազատագրական դեմոկրատիայի բարձր սկզբունքներին...»:

Շահումյանը խորապես զգում էր Գորկու ստեղծագործությունների էմոցիոնական արժանիքները և բարձր գնահատում նրանց նշանակությունը: Այս տեսակետից ուշագրավ է նրա խոսքը ամսագրի գեղարվեստական բաժնի մասին, որտեղ մենք կարդում ենք.

«Ներկա համարի գեղարվեստական բաժնի գլխավոր միտքը, ինչպես միշտ, Գորկու պատմվածքն է՝ «В тюрьме» («Ծերության մեջ») վերնագրով, որը դեռ շարունակվում է: Այդ գլուխվածքն ինքնակենսագրական բնույթ է կրում և վերաբերում է Գորկու պատանեկական տարիներին: Նրա «Детство»-ի («Մանկություն») հետ միասին, որը լուրջ է տեսել առանձին գրքով, այդ աշխատությունն, անշուշտ, գրավելու է աչքի ընկնող տեղ ռուսական գեղարվեստական գրականության ամենափայլուն գործերի շարքում: Գորկու ամեն մի տողը կարդացվում է մեծ էմոցիոնական հաճույքով ու հետաքրքրությամբ») («Պայքար», 11 սեպտեմբերի, 1916 թ.):

Քննադատի կանխատեսմամբ լիովին արդարացավ: Գորկու ինքնակենսագրական հիշյալ վիպակների իրոք աչքի ընկնող տեղ են գրավում ռուսական գեղարվեստական գրականության ամենափայլուն գործերի շարքում:

Շահումյանը խորապես զգաց Գորկու ստեղծագործության գեղարվեստական ճշմարտը, քաղ ըմբռնեց Գորկու գերը բանվոր դասակարգի և ամբողջ աշխատավոր ժողովրդի ազա-

տարական պայքարում։ Ամեն անգամ, երբ խոսքը վերաբերում է Գորկուն, Շահումյանը նրա մասին խոսում է անկեղծ հիացմունքով ու սիրով։

Ռուս մեծ գրողի անունը միշտ նրա կողմից արտասանվել է առանձին համակրանքով։ Հետևելով Լենինին և Մաքսիմին, բոլշևիկ Շահումյանը գիտակցեց, ըմբռնեց Գորկու վիթխարի դերը և ցանկացավ, որ ժողովրդական լայն մասսաներին նույնպես հասկանալի ու թանկանալի լինի Գորկու մեծությունը, որպես խոսքի հանճարեղ վարպետի և մարդկության երջանկության համար պայքարող անխոնջ մարտիկի, կեղեքված ժողովուրդների բարեկամի և պիտակցի։

1916 թ., երբ Գորկու խմբագրությամբ լույս տեսավ «Հայ գրականության ժողովածուն», Շահումյանը դրան նվիրեց մի մեծ հոդված։

«Որքերս լույս տեսած այս ժողովածուն,—գրում է նա այդտեղ,—առաջինն է մի շարք ժողովածուների ծիլում, որ նվիրված են լինելու Ռուսաստանում ապրող մանր ազգերի գրական ստեղծագործությունների ուսումնասիրությանը։ Վաղուց է, որ Մաքսիմ Գորկին հղացել է այդ գեղեցիկ միտքը՝ ծանոթացնել ռուս հասարակությանը նրա հետ մի քաղաքական կյանքով ապրող մանր ազգերի գրականության հետ։ Այս հայկական ժողովածուին հետևելու են լատիշական, ֆիննական, թուրքական, հրեական, մալոռուսական և այլ ժողովածուները»։

Այս գիտությունից հետո Շահումյանը քննադատում է ժողովածուի աշխատակիցներին, որոնք թաքցրել էին Գորկուց հայ պրոլետարական պոեզիա Հակոբ Հակոբյանի ստեղծագործությունները և տեղ չէին տվել նրան ժողովածուի մեջ։ Գնահատելով Հակոբյանի ստեղծագործությունը, Շահումյանն ասում է, որ նա «անդուրա պետք է տեղ գաներ այդ ժողովածուի մեջ։ Մաքսիմ Գորկու աշխատակիցները ոչ միայն պետք է հասկանան, որ այդ հարվածը անել, այլ պետք է ուրախությամբ անեին այդ»։

---

1 Շահումյան, «Երկերի ժողովածու», հ. II, էջ 77։

Այդ չարագին և չցանկացան անել ժողովածուի խմբագրությունում մեջ խցկված փոքրոգի, մանր-բուրժուական նարոդնալիստական-ինտելիգենտական թափթփուկները, որոնց համար խորթ էր պրոլետարական պոետի ստեղծագործությունը։

«Որքան անհասկանալի ու ցավալի է տեսնել այդ փոքրոգությունը՝ կապված այնքան մեծ ու ազնիվ հոգու տեր Մաքսիմ Գորկու անվան հետ»։

Գնահատելով ժողովածուն որպես ընդհանուր առումով հարգարժան հրատարակություն՝ Շահումյանը հոդվածի վերջում ասում է.

«Այդ չենք կարող միևնույն ժամանակ չավելացնել, որ միջազգայնության մաքուր զգացմունքների և ձգտումների դրոշակակիր Մաքսիմ Գորկին արժանի էր այդ կողմից ավելի լավ աշխատակիցների»։

Սակայն այսօրվա ոչ օրի մեղադրելու իրավունք չունենք, երբ լրիվին ասպարեզում համապատասխան ուժեր, երևի Մաքսիմ Գորկին հարկադրված չէր լինի օգնականներ փնտրելու ազգայնական տեսակետից դեռ չաղտոտված կիսամարքսիստների, սուտ մարքսիստների և ոչ մարքսիստների շրջանում»։

Այսպիսին են Շահումյանի հիմնական տեսակետները Մ. Գորկու մասին։ Ինչքա՜ն գերմոլիություն և սեր կա այդ կարծիքների մեջ. նրանք տոգորված են հեղինակի անկեղծ և ջերմ զգացմունքով դեպի մեծ գրողը։

Սակայն Շահումյանը, իրոք, բոլոր ռուս գրողներից ամենից շատ սիրել է Մաքսիմ Գորկուն։ Եվ դա, ինչպես հասկացվելիք է, պատահական և անցողիկ չէր։ Դա խորաթափանց բոլշևիկի ճշմարտասեր մտածական, կրքոտ սեր էր դեպի մեծ արվեստագետը և բանվոր դասակարգի ու ամբողջ աշխատավոր մարդկության մեծ գործի համար մղվող պայքարի գինակիցը։

Դա մի սեր էր, որ Գորկու նկատմամբ կարող էր տածել

---

1 Շահումյան, «Երկերի ժողովածու», հ. II, էջ 85։

միայն աշխատավորության մեծ առաջնորդների՝ Լենինի և Ստալինի հավատարիմ աշակերտն ու գիտնականը:

Իր հերթին Մաքսիմ Գորկին հարգանքով է վերաբերվել Շահումյանի նման մեծ ռևոլյուցիոների հիշատակին: Ընկեր Ա. Շչերբակովին (այն ժամանակ Գրողների Միության պատասխանատու քարտուղար) հասցեագրած մի նամակում (1935 թ. փետրվարի 18) Գորկին խորհուրդ է տալիս հրատարակել ազգային գրականությունների նվիրված ալմանախներ. այնտեղ, բացի գրական նյութերից, զետեղել վրացի նարոդնիկների, պարսկական ռևոլյուցիայի մասնակցների կենսագրությունները, ինչպես նաև կենսագրություններն այնպիսի հայերի, որպիսիք են՝ Շահումյանը, Կամոն, Նարիմանովը և ուրիշները: Եթե լուրաքանչյուր ալմանախում լինեն մեկ-երկու այդպիսի հոդվածներ, դա չափազանց էֆեկտավոր կլիներ» (Մոսկվայի Գորկու Թանգարանի նյութերից):

Մատնանշված լինելով գրական կադրերի ու երիտասարդության ինտերնացիոնալիստական դաստիարակության հարցով, մեծ գրողը այդ գործի համար կարևոր է համարում Շահումյանի նման ռևոլյուցիոներ բոլշևիկի կենսագրության մասսայականացումը:

Այս փաստն անհրաժեշտ է հիշել, երբ խոսքը վերաբերում է Շահումյանի և Գորկու փոխհարաբերությանը:

ԳԼՈՒԽ VI

ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԸ ԵՎ ՀԱՅ ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԸ

Ստ. Շահումյանի վերաբերմունքը հայ գրականության և ընդհանրապես հայ հասարակական ու մտավոր զարգացման պատմության նկատմամբ անշրջանցելի խոշոր նշանակություն ունի: Այս հարցը տակավին հետազոտման առարկա չի դարձել, մինչդեռ նրա կարևորությունը խիստ անկասկած է: Պետք է նկատի ունենալ, որ առաջին անգամ Շահումյանն է մարքս-լենինյան մեթոդը կիրառում հայ ժողովրդի պատմության ու գրականության, առանձնապես XIX դարի և XX դարի սկզբի գրականության զարգացումը լուսաբանելիս:

Հայ գրականության, նրա պատմության և առանձին գրական երևույթների նվիրված նրա հոդվածները այժմ են զարնում մի հիմնական հատկությամբ. դա այն հետևողական պայքարն է հայկական նացիոնալիզմի ամեն տեսակի արտահայտությունների դեմ, որ մղել է Շահումյանը հայ իրականության մեջ: Պայքարի այդ ուղղությունը կարմիր թելի նման անցնում է համարյա նրա բոլոր հոդվածների միջով և իր հերթին պայմանավորում է հայ գրականությանը նվիրված նրա հոդվածների հիմնական բնույթն ու արժեքը: Եվ դա պատահականություն չէ, այլ կովկասի պայմաններում շատ բնորոշ մի հանգամանք, որի վրա ժամանակին ուշադրություն է դարձրել ընկեր Ստալինը: Բնութագրելով ազ-

ցիալ-բնակարտատական կազմակերպությունների զարգացման առանձնահատկությունները Կովկասում, բնիկ Սոալինը այդ առիթով գրել է հետևյալը։ «Բրենց երևան գալու հենց սկզբից (90-ական թվականների սկիզբը) կազմակերպությունները Կովկասում խստորեն ինտերնացիոնալ բնույթ էին կրում։ Միասնական կազմակերպությունը վրացի, ռուս, հայ ու մուսուլման բանվորներից, որոնք համերաշխ պայքար են մղում իրենց ընդհանուր դեմ,—այսպես էր պատմական կյանքի պահանջը... Այդ օրվանից Կովկասյան սոցիալ-դեմոկրատական ամենդ նպատակադրվի դեմ մղած պայքարում։ Վրացական սոցիալ-դեմոկրատները պայքարում էին «բրենց» նպատակադրվածների, նպատակ-դեմոկրատների և ֆետերալիստների դեմ. հայ սոցիալ-դեմոկրատները՝ «բրենց» դաշնակցականների դեմ. մուսուլմանականը՝ պանիսլամիստների դեմ» (Սոալին, Երկեր, հատոր II, էջ 287—288)։

Ընիկ Սոալինի այս կարևոր դրույթի լույսի տակ պարզ է դառնում, թե ինչու բոլշևիկ-մարտիկ Շահումյանի հոդվածները ուղղված են հակահայդեմոկրատական ոգով և ուղղված են հայկական նացիոնալիզմի ամեն տեսակ արտահայտությունների դեմ։ Եվ իրոք, Շահումյանի հոդվածները,—լինեն դրանք նվիրված ինտելիգենցիայի դերին, թե հայ ժողովրդի ու նրա դրամատության պատմությանը, ազգային հարցի ընդհանուր ըմբռնմանը, թե առանձին գրողների,—համակված են պրոլետարական, մարտնչող ինտերնացիոնալիզմի պոյծատ ու վեհ զգացմունքներով։

Հայկական նացիոնալիզմի և նրա կրող նացիոնալիստական պարտիաների, հատկապես դաշնակցության դեմ պայքարը իր խոր ներքին է դրել նրա գրական ելույթների վրա, պայմանավորելով նրանց ընդհանուր բնույթը, ուղղությունը։ Եվ դա էլ մեծ ուսուցիչների գրական ժառանգության կարևոր արժանիքներից և ուշագրավ կողմերից մեկն է։ Ինչպես Շահումյանն է գրել մի առիթով, նացիոնալիզմը ամենահամառագործ թշնամին է երիտասարդ բանվորական շարժման համար՝ Անդրեոլիսի նման մի բազմազգ երկրամասում։ Սկսելով այդ սկզբունքից և հետևելով Լենինի ու Սոալինի ցուցումներին՝ Շահումյանը, Սպանդարյանը, Միկոյանը և մյուս հայ մարքսիստները ծավալում են հետևողական պայքար ուսուցիչոն շարժման այդ ամենավտանգավոր գաղափարախոսության դեմ հայ իրականության մեջ, կազմակերպելով աշխատավոր մասսաներին պրոլետարական ինտերնացիոնալիզմի պատճառի դրոշի շուրջը։

Պայքարի այդ ուղղությունն ու նպատակասլացությունը բնիերացող հետաքրքրությամբ կարող է հետաքրքրել և հայ գրականության ու հասարակական մտքի պատմությանը նվիրված ներկայի Շահումյանի հոդվածներում։ Այդ հարցերի քննությանն ու բնութագրմանը Շահումյանը մոտեցել է մարքսիզմ-լենինիզմի դիրքերից՝ տալով այդ ուսմունքի գործադրման փայլուն օրինակներ։

Հիշենք մի քանի կարևոր փաստեր։

I

Պայքարելով հայ ժողովրդի պատմության ու գրականության երևույթների մարքսիստական ըմբռնման համար՝ Շահումյանը քննադատական կրակի տակ է առնում նախահոկտեմբերյան հայ իրականության, հատկապես մտավորականության համար բնորոշ, տիպացուցական իդեոլոգիան, որպես նրանց ամբողջական ռեակցիոն նացիոնալիզմի արտահայտություն։ Այս առումով օրըս՝ արժեքավոր ու այժմեական է Շահումյանի մեր կողմից մի անգամ արդեն հիշված հոդվածը՝ «Փախչողը պատմագիտի դերում» խորագրով, գրված 1912 թվին։ Այս փայլուն հոդվածում Հեղինակը, թերևս առաջինը հայ իրականության մեջ, քննադատորեն է վերաբերում հայ ժողովրդի Ներսես պատմության արտադրիչին, նացիոնալիստական-իդեալական, այլ կերպ ասած՝ տիրացուական կոնցեպցիան, քարը քարի վրա չթողնելով նրանից. քննադատը առաջադրում է մարքսիստական երիտասարդությանը՝ ստեղծագործաբար բոլոր եղած տեսակետները։ Նկատի ունենալով Ներսես պատմության ընդհանուր ոգին, Շահումյանը գրում է.

ներքո և լուսաբանել հայ պատմությունը՝ նոր գիտական մարքսիստական մեթոդի օգնությամբ։

Խոսելով մեր պատմության աղբյուրների մասին և նշելով, որ նրանք չեն տալիս անհրաժեշտ նյութ հայ ժողովրդի պատմության հետագույն շրջանի գիտական, մարքսիստական ուսումնասիրության համար, ինչպես նաև այդպիսի լուրջ ձեռնարկության հետ կապված դժվարությունները՝ Շահումյանն ավելացնում է. «Համենայն դեպս առարկ կարող ենք ասել, որ նրանցից (պատմական աղբյուրներից) շատ ավելի պիտանի ու հետաքրքիր տեղեկություններ կարելի է քաղել, քան այդ արել են մինչև այժմ հեղինակները։ Բայց այդ բանին ձեռնամուխ պետք է լինի մեր նոր մարքսիստական երիտասարդությունը։ Կոչված լինելով, ինչպես ամեն տեղ, ուր նա երևան է գալիս վերակառուցելու բուռն նոած արժեքները, նա, զինված պատմության մատերիալիստական ըմբռնման նոր գիտական մեթոդով՝ պետք է ուսումնասիրի նոած ամեն մի՛ հայկական և մի՛ օտարազգի ուղղակի և կողմնակի պատմական աղբյուրները և լույս սփռի մեր պատմական անցյալի վրա։ Փափազյաններից այդ ուղղությամբ, իհարկե, ոչինչ չի կարելի սպասել»[1]։

Առաջին անհետաձգելիությունը, որ այդ նոր գիտական, մարքսիստական մեթոդով է մոտենալ հայ պատմության ու գրականության հարցերին, նոել է ինքը՝ Շահումյանը։ Նվ նրա պահանջը մեծ կարևորություն ունեցող հարց է։ Նա իր հոդվածում տալիս է հիմնական մեթոդոլոգիական ուղղություններ հայոց պատմության մարքսիստական ուսումնասիրության համար, միաժամանակ քննադատելով այդ պատմության նացիոնալիստական կոնցեպցիան։ Այդ կոնցեպցիայի կրողները հիմնում են շարունակ Հայաստանի մասին, որպես մի ամբողջական պետական-հասարակական մարմնի մասին, և ընթերցողը միշտ այն տպավորությունը պետք է ստանա, որ նա նման է նոել ժամանակակից ամբողջական ազգային պետություններին, ինչպես Ռուսաստանը, Գերմանիան և այլն։ Բայց դա, ըստ Շահումյանի, չի համապատասխանում պատմական իրողություններ։ «Հայաստան կոչվածը ներկայացնելիս է նոել իրոք բազմաթիվ ինքնուրույն պետական մարմիններ, տարբեր տնտեսական միավորով, տարբեր սոցիալական հարաբերություններով, հետևապես տարբեր շահերով... պ. Փափազյանը և մյուսները, որոնց համար կա միայն «Հայաստան» բառը և ավելի ոչինչ, իհարկե չեն կարող ոչինչ ասել նրա առանձին ինքնուրույն մասերի ներքին զարգացման, կարևորագույն կռիվների մասին...»։ Այդ տիպի պատմաբանները լավագույն դեպքում սահմանափակվում են միայն արտաքին դեպքերի, կռիվների ու բախումների քաղաքագործությունների նկարագրությամբ և նրանց մեջում է, թե միակ կարևորը պատմության մեջ այդ դեպքերն են։ «Ժողովուրդների կյանքը, նրանց պատմության ընթացքը պայմանավորող ու որոշողը,—գրում է Շահումյանը,—ոչ թե այդ արտաքին դեպքերն են, որքան էլ աղմկահարույց ու էֆեկտավոր լինեն դրանք, այլ ժողովրդական մասսաների առօրյա, ընթացիկ, «խաղաղ» անտեսական կյանքը, նրանց արդյունաբերական պրոցեսը, նրանց ներքին զարգարտային հարաբերությունները։ Այս դեպքում որված է պատմության մատերիալիստական վերլուծության բանալին, որը ժամում է հայոց անցյալի նացիոնալիստական իդեալականացման փորձերը։

Քննության առնելով ճաքքի Հայոց Կուլտուրական միության հրատարակությամբ լույս տնսած իր բրոշյուրները՝ «Քրիստոնեա հայոց պատմությունից» ընդհանուր անվամբ, Շահումյանը հատատում է իր այդ թեզը և մատնանշում, որ այդ բոլորը միասին և յուրաքանչյուրն առանձին վերցրած՝ ոգևորված ներքոներ են հայ իմաստուն և ժողովրդասեր թագավորների, իշխանների, հոգևորականների հասցեին, և անհնա մերկացնում է հայկական ինտելիգենցիայի բովանդակ պատմական-փիլիսոփայությունը, որը ցիայի բովանդակ պատմական-փիլիսոփայությունը, որը հանդում է հենց այդ դեպքերի գովերգանքը։

«Եվ այսպես, ամբողջ հայ պատմությունն ըստ մեր

---

1 «Մոլոտովյան գրականություն», № 11, 1941 թ.

պատմաբանները»,—գրում է Շահումյանը,—ներկայացնում է ոչ այլ ինչ, եթե ոչ բարի և չար հրեշտակների կռիվների, մի կողմից, աղգասեր ու առաքինի հայ թագավորների, իշխանների և, մյուս կողմից, աղգուրաց, աղգի դավաճան թագավորների ու իշխանների կռիվների պատմություն... Եթե չլինեին ներքին «երկպառակություններ», «դավանանություններ», հայ աղգին ոչ ոք չէր կարող դիպչել և նա կապրեր իր բարի հրեշտակ թագավորների ճնոքի տակ գոհ ու երջանիկ:

«Երկպառակությո՜ւն, որքա՜ն զոհեր է տարել նա հայ ժողովրդից, որքա՜ն իշխանություններ է պատճառել հայոց աշխարհին...»:

Այս զգացված ազգասիրական ողբը պատկանում է հանգուցյալ Եղիշե Թոփչյանին, բայց այդ տողերի մեջ կարելի է ամփոփել Կուլտուրական միության հրատարակած բոլոր ինը գրքույկների բովանդակությունը.... Այդ խոսքերի մեջ ամփոփվում են մեր ամբողջ «ազգային» պաշտոնական ինտելիգենցիայի, գրողների պատմական աշխարհայացքը. նրանց մոտածելակերպը, նրանց բովանդակ, այսպես ասած, «պատմա-փիլիսոփայությունը»:

Մերկացնելով այդ փիլիսոփայությունը, բոլշևիկ քննադատը ցույց է տալիս, որ Փափազյանը և ընկերները չեն հետաքրքրվում դավանանությունների, երկպառակությունների, անձիհարձանությունների պատճառներով, որովհետև նրանք հարցերին մոտենում են հայ կրոնավորի տեսակետով, որպես հավատացյալ քրիստոնյաներ, իսկ այդպիսի պատմաբանների համար նախախնամությունն ինքն է ամեն ինչ տեղերում. «այնտեղ, որտեղ մարդիկ իրենց հոգու մեջ արդեն կրում են բարվո և չարի սերմերը, ուր նրանք ի սկզբանն անտի բաժանված են այծերի ու գառների, պարզ է, որ պատճառները քրքրելու ոչ մի կարիք չկա... Քանի որ XX դարում, ինքն իրեն առաջադիմ ու դեմոկրատ համարող գրողը, ինչպես պ. Փափազյանն է, կամ նուիրիակ իրեն «սոցիալիստ» համարող, ինչպես ե. Թոփչյանը, միանգամայն

բավախանգում են այդ միամիտ կրեական անտանելով, կամ՝ ինչպես արժանի արհամարհանքով անվանում է այդ առասկետը մեր նոր պրոլետարական ինտելիգենցիան՝ տիրագղական աշխարհայացքով,—դա անպայման չատ ցավալի էր»:

Ի հակադրություն այդ տիրացուական մոտեցման, երբ իմ են խառնված պատմությունը, առասպելն ու գրողի երևակայության պատրները, Շահումյանը հիշեցնում է մարքսիստական այն հրահանգությունը, թե պատմությանն այն ժամանակ է դաղարում լինել հետքաբ, հասարակ պատմվածք և դառնում է իսկապես պատմություն, երբ նրա մեջ հայտնի անցքերի, դեպքերի, պատմական անձնավորությունների գործունեությունը ենթարկվում են լուրջ քննական ուսումնասիրության, երբ ցույց է տրվում անցքերի ու մարդկային գործողությունների պատճառական կապը և օրինաչափությունը:

Մինչդեռ նացիոնալիստական պատմագրությունը իր սահմանափակ պատմահայեցողությամբ, որը սպառնում է թագավորների, իշխանների, հոգևոր հայրերի իրնալամասնացմամբ, անկարող է պատասխան տալ այն հարցերին, թե ինչն է պատմության ներքին ուժը, գեպքերի ու գործող ե՛նձն է պատմության ներքին ուժը, գեպքերի ու գործող անձանց արարքների գլխավոր պատճառները: Այդ հարցին Շահումյանը որոշակի պատասխան է տալիս և դրանով ուղղություն նշում հայ ժողովրդի պատմության գիտական ուսումնասիրության համար: Մարքսիստական ըմբռնմամբ ղեկավարվող Շահումյանն առաջադրում է և հայոց եկեղեցու գերի գնահատության հարցը. դա կղերական պատմիչների ու կղերամիտ նացիոնալիստական պատմագրության կողմից խեղաթյուրված այն հարցն է, որը մեր ամենից շատ կարիք ունի նոր գիտական մարքսիստական լուսաբանության: Չէ՞ որ մեր օրերում էլ դեռևս գտնվում են տիրացուորեն մոտծող մարդիկ, որոնք հայ ժողովրդի պատմության հիմնական շարժիչ ուժը, նրա կուլտուրայի և գրականության հիմնական կրողն ու զարգացնողը, որպես մի կերտասակարգային հասա-

տությունն և համազգային մի գործ, համարում են հայ նվիրյալներն ու նրա սպասավորներին՝ սկսած հնադույն շրջանից։ Շահումյանը հարցին այլ կերպ է մոտենում։

«Ճշմարիտ է,—գրում է նա,—որ IV և V դարերում հայկական քաղաքական կյանքի խոշոր գործոններից մեկը եղել է քրիստոնեական նվիրեցիկ։ Այդ շրջանի մասին խոսողը ամենից առաջ որոշ կարծիք պետք է ունենա այդ նվիրեցիկ կատարած պատմական դերի մասին։ Դրական ու առաջադիմական՞ էր արդյոք այդ դերը, հոգևորականության մոտ հովանավորական քաղաքականությունը, թե ավելի խնդացի ու օգտակար էր ժողովրդի բարօրության տեսակետից պատրիարքական կուսակցության (Վասակ Սյունի իշխանի և այլոց) քաղաքականությունը,—այդ ամենից առաջ պարզ պետք է լինի գրողի համարը։

Այս հարցին պատասխանելը Շահումյանի հոդվածի նպատակներից դուրս է եղել և նա չի անդրադառնում դրան։ Նա նշում է միայն փաստը և այն, որ IV և V դարերում հայ քաղաքական կյանքի խոշոր գործոններից մեկը եղել է քրիստոնեական նվիրեցին և պահանջ է դնում պատմագրության առաջ՝ ոչ թե սարկավագների հնամենի կոչումների հորինած առասպելներին, այլ գիտականորեն բացատրել այդ երևույթ։ Ստրատիոների պատմական դերը, նրանց քաղաքականության առաջադիմականությունը կամ հետադիմականությունը, ելնելով ժողովրդի բարօրության տեսակետից։

Շահումյանի առաջադրած այդ հարցը դեռևս սպասում է իր լուծմանը։ Այդ հարցի պատասխանը պետք է տա մարքսիստ պատմաբանը և գիտական փաստերը վերլուծելով պատկերի մեջ քրիստոնեական նվիրեցու իրեականացման ու զարգացման բոլոր փուլերը, որոնց արձագանքները, որքան էլ դա տարօրինակ ու զարմանալի թվա, հանդիպում ենք նույնիսկ մեր սովետական հրատարակությունների մեջ։

Շահումյանը չի ժխտում քրիստոնեական կրոնի կուլտուրական առաջադիմական նշանակությունը հայոց պատմության հնագույն շրջանում։ Փափազյանի բրոշյուրների վերլուծությունից հոդվածագիրը եզրակացնում է, որ քրիստոնեությունը ծիսակարգությամբ է տարածվել Հայաստանում, և ավելացնում. «Քրիստոնեությունը, այդ տարուկների կրոնը բոլորովին ուրիշ բնույթ, ուրիշ կերպարանք է ընդունում հայոց կրկրում։—Եվ նա տարածվում է նույնիսկ Հայաստանում ոչ թե միայն քարոզով, քարոզիչների նահատակվելով, այլ ճշրով ու արվեստ։ Փափազյանը պատմում է, որ Մեսրոպ Մաշտոցն անձամբ, ինչպես և մյուսները, քարոզիչների ժամանակ, երբ ժողովուրդը չէր հեռանում նրանց, ճի գործ չէին դնում իրվառացնող դավազանը, բանա, տանջանք և գիլոտինան՝ ջվալների, խուժադուժ, բրնամիա և կորտ հեթանոսների վրա» ազդելու համար։ Որքան կենդանի, ազդեցիկ ուժ է ներկայացնում ուրեմն իր հետ Հայաստան քրիստոնեությունը,—եզրակացնում է մեր հեղինակը։ Սա անշուշտ պետք է դիտել որպես առաջադիմական երևույթ։ Դա պայմաններ է ստեղծում շրջելու ավելի առաջավոր կուլտուրա ունեցող ժողովուրդների հետ և միջամանակ ստեղծելու և զարգացնելու սեփական ազգային կուլտուրան։ Բայց տերացուական պատմագրության ներկայացուցիչները մի կողմ թողած այդ երևույթի բնույթները, սակն կերպ իդեալականացնում ու սրբագործում են հայկական նվիրեցու։ Հոգևոր հայրերին՝ հայ հին կուլտուրայի ներկայացուցիչներին, ինչպես այդ արված է «Ճնն Նեռաձոր» հետ, համարելով նրան «հայոց ազգի պատվեցն Նեռաձոր» հետ, համարելով նրան «հայոց ազգի պատվեցն Նեռաձոր» հետ, համարելով նրան «հայոց ազգի պատ-

նախիանների «պատրիոտական» (այսինքն հայրենասիրական, ազգասիրական) հրատարակությունները։

Շահումյանն այդ հարցին, այսինքն՝ թե ինչու նման հրատարակությունները վնասակար դեր են խաղում ռևոլուցիոն շարժման մեջ, անդրադառնում է և իր մի այլ հոդվածում («Բոլշևտիսմները և լիազորների խորհուրդը»)։ Քննադատելով բոլշևտիսմների դիրքը՝ Շահումյանը դիմում է նացիոնալիստ ղեկավարների կողմից խաբված հայ բանվորներին, ասելով, որ՝ ձեզ գրգռելն դեսի այդ սխալ քայլը «Գրիգոր Լուսավորիչի զանազան կենսագրիներում» «Այդ զնկավարները մինչև օրս զանազան աստվածաշունչ գործերով էին զբաղված,—ս. Մեսրոպի, ս. Գրիգոր Լուսավորչի և ուրիշ նման սրբերի մասին գրքեր էին գրում։ Դեռ մի քիչ առաջ նրանք զոմատանական խոսքեր էին շռայլում մեռած կաթուղիկոսի հասցեին, նրա հոգու վեհությանն ու կատարած մեծ ռևոլուցիոն գործունեության համար... և հանկարծ,—օ զարմանք, նրանք անհրաժեշտ գտան խառնվել հաքի բանվորների՝ նավթարդյունաբերողների դեմ մղած պայքարի մեջ և նույն բանաքով ու նույն գրչով սկսեցին բրոշյուրներ գրել խորհրդի, կոլեկտիվ պայմանագրերի և այլ նման բաների մասին»։

Պետք կարելի է նկատել, Շահումյանի սարկազմը այս դեպքում ուղղված չէ Մեսրոպ Մաշտոցի դեմ, այլ նրանց դեմ, ովքեր նրան դարձրել են մեռյալ սրբություն, գրել են նրա մասին սիրացուական դատարկաբանություն՝ քնով վեր չհանելով նրա, որպես պատմական անձնավորության և հայ կուլտուրայի հնագույն շրջանի ակնառու գործչի իսկական դերը։ Այդ հարցի վրա լույս է սփռում և մի այլ փաստ։

Շահումյանի տետրակներում պահպանված անտիպ գիտողությունները ցույց են տալիս, թե որքա՜ն բարձր է գնահատել նա հայոց հին գրականության սկզբնական շրջանը, որի խոշորագույն ներկայացուցիչն է հայ տառերի գյուտի հեղինակ Մեսրոպ Մաշտոցը։ Այդ աստվածը չար կարծրը էր։ Նրա արիվիվում պահված տետրակներից մեկի մեջ սեմական ձեռագրով հայերեն գրված է հետևյալը. «Իփսավարների, վարկաստուն ժողովուրդները հրում են հայերին Արևելքից։

Հայ գրականության սկիզբը շատ է հարուստ ու բնուն և շարունակությունը աղքատ ու սակրչ։ Պետքս պետք է հերիաթով՝ սա առանձին դիտողություն է, կանգնեցնիվ մի միտք, որը չափազանց արժեքավոր է։ Շահումյանի այդ ասույթի մեջ ամփոփված է պատմական մի ճշմարտություն։ Հայ գրականության բարեկիրք հետազոտողներից, օրինակ՝ Վ. Բրյուսովը, օբյեկտիվորեն հանգել է այն տեսակետին, որ Շահումյանը է Շահումյանի եզրակացությունը։ Որ մեր հետազոտողները խոսում է հայ գրականության սկզբի և շարունակության մասին, շատ բնական է։ Հայ գրականության ասելով նկատի կունենք, XIX դարը, որ սկսում էր ծաղկման շրջան, չնայած ազգային ճնշմանը, և առաջադեմ խոսքի ձեռ վարպետներ։ Այսօր խոսքը, հասկանարար, վերաբերում է XVII և XVIII դարերի հայ գրականությանը, որ իրոք գրական գոհարներ ընծայած էր սկսում և չէր առաջադրում նպատակներ հետաքրքրել V դարը, որ եղել է նրա ծաղկման շրջանը (հայ գրականության այսպես կոչված «ոսկե դարը», ինչպես ասում է հետազոտական պատմության մեջ), և նույնիսկ հայ գրականության վաղ միջնադարյան շրջանը, որը առաջադրել հիանալի պատմիչների մի բանակ (Ագաթանգեղոս, Փարպեցի և այլն), XVII և XVIII դարերի հետ՝ պատկերը խոտորին փոխվում է։ Այդ վերջին դարերում հայկական գրավոր պոեզիան և գրականությունը, որպես ամբողջություն, անկում է սկսում։ Հրապարակում մնում են միայն ժողովրդական երգիչ-աշուղները, որոնց հանճարեղ ներկայացուցիչն է Սայաթ-Նովան (XVIII դար)։

Գրավոր գրականության փոխարեն զարգանում է ժողովրդական երգիչների պոեզիան և ընդհանրապես ժողովրդական ստեղծագործությունը։ Այդ երևույթն ունի անկասկած պատմական և սոցիալական պատճառները, որոնց քննությամբ մենք այստեղ չենք զբաղվի։ Կհիշենք միայն, որ

---

1 Հ(բ)Կ պատարիվ, Շահումյանի ֆոնդ, գործ № 3։

Սայաթ-Նովան վայելում էր Շահումյանի խորը համակրանքն ու սերը։ Եվ նրա մի երգից երկու տող՝

Իմ սասթը ուրիշ տիզ է, ուրիշ տիզ,
Ջո սասթը ուրիշ դիզ է, ուրիշ դիզ...

Շահումյանը մնոց է բերում իր ազգային կուլտուրական ավառնոմիայի մասին» գրոշյուրի մնջ և հարմարեցնելով քնևատաուրյանը՝ օգտագործում չէ այդ ավտոնոմիայի պաշտպան նացիոնալիստի դեմ։

Շահումյանի նման վերաբերմունքը դեպի հայ հանճարեղ ժողովրդական երգիչ Սայաթ-Նովան պատահական չէր։ Դա ցույց է տալիս ոչ միայն այն, որ ռևոլյուցիոներ րոլշևիկը լավ էր իմանում նրա ստեղծագործությունները, երգերը, այլև այն, որ նա բարձր էր գնահատում այդ երգերը և անհրաժեշտ հանարում օգտագործել նրա պատկերները իր գաղափարական պայքարում։ Այս փաստը կարելի է համեմատել Սայաթ-Նովայի և նրա պոեզիայի ամենաարժեքավոր գնահատականը։

Սրանով սահմանափակվում են Շահումյանի՝ մեզ հայտնի աուսյունները՝ հայոց հին պատմության ու գրականության մասին։ Նրանք վկայում են, թե ինչպիսի՝ խորաթափանցությամբ էր Շահումյանը մոտենում հայ ժողովրդի և նրա գրականության պատմության հարցերին՝ զինված մարքսիզմ-լենինիզմի մեթոդով։ Հայոց հին պատմության հարցերին նվիրված հոդվածը, ինչպես և այլ նկատողությունները, խորապես այժմեական նշանակություն ունեն և պահպանել են իրենց ամբողջ արժեքը նաև մեր օրերի համար։ Միևնույն այդ հոդվածի լույս ատումնասիրությունը և նրանով ղեկավարվելը կնպաստեր շատ սխալներ, որ թույլ են տվել մեր երիտասարդ պատմաբանները՝ «Հայ ժողովրդի պատմությունը» գրելիս։

Հայոց պատմության վերաբերյալ Շահումյանի այդ արժեքավոր դիտողությունները, որոնք նրա մարքսիստական մեկնաբանության բանալին են, անհրաժեշտ ուշադրության չեն առել մեր երիտասարդ սովետական պատմաբանները։

II

Հայ ժողովրդի, նրա կուլտուրայի ու հասարակական մտքի պատմության նոր շրջանին (XIX դար և XX դարի սկիզբ) վերաբերող Շահումյանի ատսյունները լինելով հեռավոր շարունակությունը նրա ընդհանուր մարքսիստական կոնցեպցիայի՝ այժի են ընկնում պարտիական-քաղաքական սրսույամբ ու նպատակասլացությամբ։

Այդ ատսյունների մնջ կարևոր տեղ է գրավում XIX դարի և XX դարի սկզբի հայ հասարակական մտքի տարբեր հոսանքների և առանձին գրողների բնութագիրը։

Շահումյանի աշխատությունները այս տեսակետից արժեքավոր նյութեր են տալիս և այժի են ընկնում խորհրդային ատսյունների ընդհանուր համակարգի մեջ։ Նրանք սկզբունքային կարևոր նշանակություն ունեն հայ հասարակական մտքի ու գրականության (հանձնարարական դեպի ռուսահայերի, որոնց և վերաբերում են Շահումյանի գրեթե բոլոր մնջ հայտնի ատսյունները) պատմական գրոշյացման մարքս-լենինյան լուսաբանման համար։ Շահումյանի այդ դրույթների էությունն ու նշանակությունը կարելի է հասկանալ միայն այն ժամանակ, երբ նկատի ունենանք, որ հայ ժողովուրդը, ինչպես և ցարական Ռուսաստանի մյուս փոքրամիվ ժողովուրդները, ապրում էին քաղաքական, ուստի և մտավոր այն կյանքով, ինչ որ ռուս ժողովուրդը։ Այս պատճառով էլ հայ հասարակական միտքը և գրականությունը XIX դարում կազմավորվել են ռուս հասարակական մտքի ու գրականության անմիջական ազդեցությամբ, և նրա հոսանքները մոտավորապես համապատասխանել են ռուսական հասարակական հոսանքներին։ Եվ դա հասկանալի էր։

Նոր պայմաններում որոշիչ գործոնը Հայաստանի անցումն էր ռուսական իշխանության ներքո։ Այս պատմական ցատմն էր ռուսական իշխանության ներքո։ Այս պատմական գեղ կուլտուրայի զարգացման մնջ, բարերար ազդեցությունն ունենալով ընդհանրապես հայ գրականության ու կուլտուրայի զարգացման վրա։

Հայ ժողովուրդն, իհարկե, որևէ լավ բան չէր կարող ակնկալել ռուսաց ցարից, ինչպես և նրա իշխանությանն տակ գտնվող մյուս ժողովուրդները:

Ցարական Ռուսաստանի նվաճողական քաղաքականությունն Արևելքում անկասկած ռասկցիա էր, և զուր չէր, որ Մարքսն ու Էնգելսը այնպես դատապարտում էին այդ քաղաքականությունը՝ կանգնելով ազատության զինվորական ուժերի մի զորեղ պատվար ստեղծել ռուսական ցարիզմի նվաճումների դեմ Արևելքում: Բայց, չնայած այդ հանգամանքին՝ Մարքսն ու Էնգելսը ժամանակին նշել են Ռուսաստանի «իսկապես առաջադիմական լինելը» արևելյան ժողովուրդների համար՝ Արևելքի և «ծույլ, ընկերային կենսատանի» համեմատությամբ: «Ռուսաստանի տիրապետությունն...—գրել է Էնգելսը 1851 թվին,—քաղաքակրթիչ դեր է կատարել. Սև և Կասպից ծովերի նկատմամբ, կենտրոնական Ասիայի, բաշկիրների ու թաթարների համար: Ռուսաստանը ծույլ, ընկերային կենսատանի համեմատությամբ, հենց իր բնույթով էլ լուսավորության և ժամանակակից արդյունաբերության շատ ավելի տարրեր է ընդունել իր մեջ» (Մարքս—Էնգելս, Նամակներ, էջ 52, 1931 թ., ռուս.):

Նույնը կարող ենք ասել Հայաստանի մասին: Չնայած ռուսական ցարիզմի քաղաքական նպատակների ռեակցիոն էությանը, այնուամենայնիվ միացումը Ռուսաստանին՝ դրական նշանակություն ունեցավ Հայաստանի համար: Ցարական Ռուսաստանը՝ շահերի Պարսկաստանի համեմատությամբ ավելի փոքր չարիք էր հայ ժողովրդի համար XIX դարի սկզբին: Հայաստանի մանելը ռուսական պետության կազմի մեջ օբեկտիվորեն առաջադիմական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար այն իմաստով, որ այդտեղ ապահովվում էր նրա ֆիզիկական գոյությունը, որ վտանգի տակ էր Պարսկաստանի և Թուրքիայի տիրապետության ներքո, և հայ ժողովուրդը հնարավորություն էր ստանում շփվել ռուս ժողովրդի և նրա առաջավոր կուլտուրայի հետ: Այս հողի վրա շատ տասնամյակների ընթացքում ամեն ու ամրացավ հայ ժողովրդի ու նրա լավագույն ներկայացուցիչների սերը դեպի ռուս մեծ ժողովուրդը և նրա հզոր կուլտուրան:

Եվ իրոք, ռուս մեծ ժողովրդին միանալը, նրա ռևոլյուցիոն կուլտուրայի հետ շփվելը փրկարար նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար: Այդ օրվանից հայ ժողովրդի բախտը ձուլվեց ռուս ժողովրդի բախտին:

Մանևրով ռուսական ցարիզմն իշխանության ներքո՝ հայ ժողովուրդն իհարկե չազատվեց ազգային ճնշումից, ընդհակառակն՝ ազգային ճնշումն այլ ձևեր ընդունեց և Ռուսաստանի ժողովուրդների մեջ ազատագրական ձգտումների ուժեղանալուն զուգընթաց ուժեղացավ և նրանց դեմ ուղղված ճնշումն ու կամայականությունը: Սակայն ֆեոդալա-բյուրոկրատական միապետության կրոնի տակ անգրամ էին ոչ միայն ազգային փոքրամասնությունները, այլև ռուս մեծ ժողովուրդը, որ վաղուց ըմբոստել էր ինքնակալության ու հոգատարության դեմ պայքարելու ուղին: Այս տեսակետից 60-ական թվականների նշանավոր ազատագրական շարժումը առանձին տեղ է գրավում Ռուսաստանի (և Հայաստանի) պատմության մեջ:

Բնութագրելով 60-ական թվականների հասարակական-տարբեր դասակարգերի դիրքերը՝ Լենինը գրել է. «Ճորտատերերի ու լիբերալների տերտողուկ պայքարը, որ այնքան ուռճացրել ու նախշել են մեր լիբերալ-նարոդնիկական պատմաբանները, իշխող դասակարգերի ներսում. մեծ մասամբ կապկախաղերի ներսում տեղի ունեցող պայքար էր բացատապես գիջումների շափի ու ձևի համար: Լիբերալները նույնպես, ինչպես և ճորտատերերը, կանգնած էին կալվածատերերի տնտեսականության ու իշխանության համար մղվող պայքարում՝ իրենց վրա վերցնելով գաղտագրել այդ տնտեսականությունը՝ ընդհատելու համար նրա վերջնական փուլին տապալելու վերաբերյալ ամեն տեսակ ռեակցիոն փորձերին...» 1860-ական թվականների լիբերալները և Չերնիշևսկին ներկայացուցիչներ են երկու պատմական տենդենց-

ների, երկու պատմական ուժերի, որոնք, այդ ժամանակից սկսած մինչև ընդհուպ մեր ժամանակը, որոշում են նոր Ռուսաստանի համար մղվող պայքարի ելքը» (Լենին, հատոր XV, էջ 143—144)։

Ահա այս երկու պատմական տենդենցները, պատմական երկու ուժերը իրենց արտահայտությանն ունեցել են և Հայ իրականության մեջ։ Հայ ժողովուրդը հեռու չի մնացել 60-ական թվականների ազատագրական շարժումից։ Հայ ժողովրդի լավագույն զավակները միացել են այդ շարժմանը։ Դրա համար էլ հայ լիբերալների և հատկապես ֆեոդալ-կղերական ռեակցիայի դեմ ուղղվելով դեմոկրատիայի ծրագծած պայքարն առանձնապես աստիճանաբար 60-ական թվականների ազատագրական շարժումից։ Հայ ժողովրդի լավագույն զավակները միացել են այդ շարժմանը։ Դրա համար էլ հայ լիբերալների և հատկապես ֆեոդալ-կղերական ռեակցիայի դեմ ուղղվելով դեմոկրատիայի ծրագծած պայքարն առանձնապես աստիճանաբար 60-ական թվականներին։

Վաթսունական թվականները Հայաստանի ու հայ գրականության համար բացառիկ կարևոր նշանակություն ունեն։ Դա հասարակական նոր ձգտումների ու ազգային զարգացման վերելքի շրջան էր հայ գրականության ու մամուլի համար։ Այդ վերելքի նշանը գեղարվեստական նոր երևույթի ու տպարտի նոր խոսքի երևան գալն էր, որ իր հերթին նպաստում էր հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության և հասարակական-քաղաքական ու կուլտուր-լուսավորական ձգտումների զարգացմանը։ 1858 թվին առաջին անգամ լույս տեսավ Խ. Աբովյանի «Երք Հայաստանի» նշանավոր վեպը, որ գրված էր 1840 թվին։ Նույն 1843 թվին սկսեց հրատարակվել «Հյուսիսափայլը», որի դեկավարների էին Մ. Նալբանդյանը և Ստ. Նազարյանցը։ Այս երկու հրատարակությունները բացառիկ դեր խաղացին էրոպական լուսավորության ու կուլտուրայի հիմունքները ֆեոդալ-կղերական ռեակցիայից պաշտպանելու և այդ լուսավորությունը հայ իրականության մեջ տարածելու գործում։

Աբովյանի անձնավորությամբ ու ստեղծագործությամբ, ինչպես հայտնի է, հայ ժողովրդական զանգվածները երբեք չեն դադարել հետաքրքրվելուց։ Այս տեսակետից արժեքավոր ու հետաքրքիր է երիտասարդ Շահումյանի վերաբերմունքը նրա նկատմամբ։ Իր մի նամակում երիտասարդ Շահումյանն արտայայտել է հայ մեծ լուսավորչի նկատմամբ եղած համաժողովրդական սերը։ Այդ նամակը մենք հիշատակելու առաջին դեպքում։ Այստեղ անհրաժեշտ է ամբողջությամբ մեջ բերել այն։ Խոսելով Աբովյանի երկերի ժողովածուի հրատարակության մասին՝ Շահումյանը այդ նամակում (1897 թ.) ասում է.

«Ձեզ հիշում, գրել եմ արդեն քեզ ինչ որ, որ լույս է տեսել այս մոտիկ ժամանակներս Խաչատուր Աբովյանի գրվածքների ժողովածուն։ Այդտեղ կա նաև հոչակավոր «Երք Հայաստանին», որ մի հազվադյուտ բան էր առաջ։ Ես հիշում եմ՝ հինգ-տաս ռուբլի էին առաջարկում իմ մի ընկերոջը նրա պատառոտած «Երք Հայաստանի» համար, իսկ այժմ, ին այդ և ին շատ ուրիշ գրվածքներ մի հասարակ գրքով կարելի է ձեռք բերել ընդամենը մեկ ռուբլով։ Աչքի առաջ ունեցեք նաև այն հանգամանքը, որ ոչ միայն կրճատված չէ «Երք Հայաստանին», այլև մինչև անգամ լրացված. այն հիանալի և բավական մեծ-մեծ կտորները, որ արգելել էր նախկին ցենզորան (ձեր ունեցած) հրատարակության մեջ, այժմ լիովին ընդլայնված են։ Գիրքը հրատարակված է հնդհանուր որդացած ընտների համար։ Բայց ինչո՞ւ այսքան երկար կանգ առա այս գրքի վրա. երևի որովհետև այս վերջին օրերս շատ եմ ներգնվում նրանով։ Որքան հրաշալի բան է, սիրելի քույրիս, որքան սրբազան ոգևորությամբ է լցվում կարդացողի սիրտը։ Ահա մեզ մի գրվածք, որ ամբողջովին «Հնդհանակի արցունքով» է շաղախված, ամբողջովին բանաստեղծությունն ու անկեղծ ոգևորության արտահայտություն է»[1]։

Աբովյանն ու իր վեպը արժանի են երիտասարդ ռևոլու-

---

1 Խ. Աբովյան, «Հնտիր երկեր», հ. I, էջ VII, 1939 թ.։

ցիրուցան՝ Շահումյանի, այս բարձր գնահատականին կարելի է պատկերացնել, թե ինչպիսի հակայական տպավորություն կարող էր գործել «Քերթ»-ի առաջին՝ 1858 թվի, հրատարակությունը, քանի որ միակ աշխարհիկ ու ազգային վեպն էր այն ժամանակ։

Վեպը հրատարակվելուց առաջ տարածվում էր ձեռագիր արտագրություններով։ Նրա առաջին հրատարակությունը հակայական կարևորություն ունեցող իրադարձություն էր. նա ուժեղացնում էր վեպի ազդեցությունը և շատ կողմերով կանխորոշում հայ գրականության ու լեզվի հետագա զարգացման ուղիները։ «Վերքը» լինելով հեղինակի հայրենասիրական տրամադրության պտղիկոտը, իր հերթին արծարծում ու զարգացնում էր ընթերցողների մեջ սեր դեպի հայրենիքը, ժողովուրդը, կուլտուրան ու լուսավորությունը։ Աբովյանի ու նրա վեպի ազդեցությունն իր ընթերցողների մտավոր զարգացման վրա հսկայական էր։ Այդ վկայում է Պռոշյանն իր հուշերում։

Մեր մյուս խոշոր գրողներն ու բանաստեղծները (Հ. Թումանյան և այլն) նույնպես կրել են Աբովյանի բարերար ազդեցությունը և բարձր են գնահատել նրա դերն ու նշանակությունը հայ գրականության պատմության մեջ։ Այս հայտնի փաստերը հիշելով, ուզում ենք ընդգծած լինել այն միտքը, որ Խաչատուր Աբովյանը իր վեպի հրատարակությամբ, որպես առաջադեմ լուսավորիչ, գործոն ու կենդանի ժամանակակիցություն է ունեցել 60-ական թվականների ֆեոդալա-կրեպրական ռեակցիոն հոսանքի դեմ մղվող պայքարին՝ հանուն նոր գրականության ու գրական նոր լեզվի, հանուն նոր լուսավորության։ Այդ պայքարին մասնակցում էին թե՛ արմատական դեմոկրատները (Մ.Ք. Նալբանդյան), թե՛ լիբերալ լուսավորիչները (Ս. Նազարյանց և այլք)։ Նկատում է մի հետաքրքրական երևույթ, որը հիշեցնում է «Современник» ամսագրի պատմության առանձին ժամկետներ, երբ դասակարգային ուժերի սահմանագծումից առաջ այդ ամսագրին ռեվոլյուցիոն դեմոկրատների հետ միասին աշխատակցում էին և լիբերալներ Տուրգենևը, Գրիգորովիչը և ուրիշներ։

Մոտավորապես այդպիսի երևույթ ենք նկատում և հայ իրականության մեջ. «Հյուսիսափայլը» դեմոկրատների ու լիբերալների օգտին էր. պաշտոնական խմբագիրը լիբերալ պրոֆեսոր Սա. Նազարյանցն էր, իսկ գլխավոր աշխատակիցը, որը և տոն էր տալիս հանդեսին, դեմոկրատ Նալբանդյանն էր։ Կարելի է ասել, որ դա լիբերալների ու դեմոկրատների ժամանակավոր բլոկ էր՝ լուսավորության ընդհանուր թշնամու դեմ։ Մինչև 1860 թվականը ներառյալ «Հյուսիսափայլը» դրավորում էր գլխավորապես եվրոպական լուսավորության պրոպագանդայով, քարոզչանքարոր տպագրում էր եվրոպական և ռուս կլասիկների, պատմության ու բնագիտությունը վերաբերող հոդվածներ։ Այդ բոլորից բացի՝ սկսիլ պայքար էր մղում ժողովրդին հարազատ ու հասկանալի նոր լեզվի ու գրականության համար՝ ընդդեմ սխոլաստիկ կրոնության ու գրաբարի դեմ։ «Հյուսիսափայլը» կոչնականից էր ընդունում ռեֆորմի՝ ըստ էության գործող նոր պահանջների։ Հանդեսի լուսավորական ուղղության գլխավոր թշնամիները, բնականաբար, ֆեոդալա-կրեպրական ռեակցիոներներն էին, որ մոլեգնորեն պայքարում էին հինի ու փտածի... Հանուն նոր լուսավորության, նոր լեզվի ու գրականության, դասախոսությունի նոր սկզբունքների մղած «Հյուսիսափայլ»-ի պայքարը անհասկած գրական ու առաջադիմական երևույթ էր և ուղի էր հարթում հայ գրականության ու լեզվի հետագա զարգացման համար, որն իր գագաթնակետն հասավ Րաֆֆու, Շիրվանզադեի, Հ. Թումանյանի, Թումանյանի և այլոց ստեղծագործության մեջ։

Սակայն 60-ական թվականների լուսավորական շարժման մեջ ոչ միատարր չէր. ընդհակառակն, լուսավորիչների մեջ սկզբունքային խոր տարաձայնություններ կային, որոնք հետագայում, գյուղացիական ռեֆորմի նախօրյակին ու գրանից հետո դասալարդային սրված պայքարի կապակցությամբ, հանգեցին կատարյալ պառակտման։ Սա-

զարյանցը հուզառուր-լուսավորական հարցում ընդհանրապես առաջադիմական դիրք էր գրաված, բայց Նալբանդյանի համեմատությամբ նրա լուսավորական ծրագիրն անգամ մեծ թերություններ ուներ և խիստ չափավոր էր։ Այդ չէր խոսում նրա քաղաքական դիրքի մասին, որն այդ ժամանակվա ռեակցիոն իրադրության մեջ նման էր ռուս լիբերալների դիրքին, ռեակցիոն էր և քաշ էությունից չէր տարբերվում հայ կղերա-ֆեոդալական կլիկի ցարասիրական դիրքից։ Ծրանասական բուրժուական ռեակցիային վերաբերող հոդվածում Նազարյանցը բացահայտորեն հանդես է գալիս հասարակական հատուկացած հարցերի լուծման ռեակցիոն մեթոդների և պատրաստում է սոցիալական ռեֆորմների սկզբունքը։

Հետաքրքրական երևույթ ենք նկատում այստեղ։ Հանդես գալով, թեկուզ և ոչ հետևողականորեն, չափավոր կերպով, կղերա-ֆեոդալական կլիկի դեմ՝ հանուն նոր լուսավորության ու գրականության՝ Նազարյանցն այնուամենայնիվ վճռական քաղաքական հարցում լռելյայն համերաշխում էր իր հակառակորդների հետ և բացասում Նալբանդյանի ռեակցիոն տակտիկան։ Ահա հայ լիբերալիզմի բնորոշ գիծն է։ Իր գոյության ընթացքում հայ լիբերալիզմը, սկսած Ստ. Նազարյանցից, Գրիգոր Արծրունուց ու նրանց հետևորդներից, երբեք չի բացասել տերտերականությունը, կղերականությունը։ Նրա պահանջները սահմանափակվել են միայն եկեղեցու ռեֆորմով՝ առանց ձեռք տալու, ինչպես Արծրունին էր դրում, եկեղեցու և կրոնի հիմքերին։ Եկեղեցու ունեցվածքի հետամնաց սպասավորների փոխարեն նրանք ցանկանում էին ունենալ կրթված ու կուլտուրական հոգևորականներ։ Եվ երբ եկեղեցու ռեֆորմը ձեռք բերվեց, երբ կղերական հոսանքի ներկայացուցիչների զգալի մասը հասարակական զարգացող հարաբերությունների ազդեցությամբ աստիճանաբար և աննկատելիորեն որոշակի տուրք սվեց ու նույնիսկ հարմարվեց գլուսավոր գործ» պահանջին (ընդառաջելու հետ (ազատ են ոչ վտանգ կար ամենայն վստահություն կորցնել ժողովրդական զանգվածների մեջ) և դարձավ նոր զարգացող բուրժուազիայի ու կապիտալիզմի պաշտպանը, ահա այդ

շրջանից է վեր իր պարբերականներն ու գրքերը նույնպես սկսեց հրատարակել գրաբարի փոխարեն աշխարհաբար։

Այսպիսով, սուր տարածայնություն առաջացնող հարցը՝ լեզվի և եկեղեցու հարցը, լուծվեց հօգուտ զարգացող նոր հասարակական հարաբերությունների, և հայ լիբերալիզմն ու կղերական հոսանքի ազդեցիկ խմբերը արդեն 70—80-ական թվականներին գրկախառնվեցին, ընդհանուր լեզու գտան։ Կղերականության ու լիբերալիզմի պայքարը գրանով չպատավեց անշուշտ, նա շարունակվեց և հետագայում, բայց այդ պայքարն արդեն այլ բնույթ ուներ։ Կղերական ռեակցիայի դիրքերն այդ նոր շրջանում խախտվել էին, նրա ճնշողները այլևս լուսավորության համար սպառնալիք չէին ներկայացնում։ Բուրժուական հոսանքը կղերականների մեջ շատ ուժեղ էր։ Բացի դրանից, պետք է նկատի ունենալ, որ կղերականության օրերն սակառնում էր լիբերալիզմի վրա, որը, ինչպես ճիշտ նկատել է Շահումյանը, «չի ուզում և չի կարող բաժանվել այդ կղերական «արիստոկրատական» «ազգասիրություն»» (Ս. Շահումյան, Երկերի ժողովածու, հատոր I, էջ 111)։ Հայ լիբերալիզմի այս բնորոշ կողմը, նրա ճշտական կապը կղերականության հետ իր սադրիչային վիճակով տևում ենք դեռևս 60-ական թվականներին։ Այս ճիշտեցումը մենք տեսնում ենք լիբերալ Նազարյանցի մոտ, որը դատապարտում էր Նալբանդյանի ռևոլյուցիոն վարքագիծը՝ համարելով նրա արարքները «հիմար անձնապատանություն և անձնասեր սերարտավանություն», «օդից առած ցնորք» (Մ. Նալբանդյան, Երկեր, հատոր 1-ին, էջ 24, 1903 թ.)։ Նալբանդյանի ու Նազարյանցի, ռևոլյուցիոն-դեմոկրատ լուսավորչի և լիբերալ լուսավորչի միջև արմատական տարբերություն կար, տեղի էր ունենում դասակարգային տարբեր խմբավորումների շահերն արտացոլող պայքար։ Նալբանդյանը հայ ժողովրդի ազատագրական ձգտումները միացնում էր ռուսական ազատագրական շարժմանը, որի գլուխն էին կանգնել ռուս ժողովրդի մեծ զավակները Չերնիշևսկին ու Դոբրոլյուբովը։ Նալբանդյանը բարեկամ էր Գերցենին ու

Օգարյովին և հանվում էր Չերնիշևսկու գաղափարական ազդեցության տակ։ Նա համառուսական ազատագրական շարժման ականավոր գործիչներից մեկն էր։ Այս բոլորը նկատի ունենալով միայն հասկանալի ու պարզ կդառնան այն բարձր գնահատականները, որ ավել են Շահումյանը և ուրիշ հայ մարքսիստ բոլշևիկները Նալբանդյանին՝ հակադրելով նրան հայ բուրժուական լիբերալիզմի-նացիոնալիզմի սյուներին։

Նալբանդյանը մասնակ գործողությամբ հասավ իր ժամանակակիցների ամենակրթված և խելամիտ մարդկանց մտերմությանը, գործակ նախամարքսյան շրջանի համոզված մատերիալիստ։ Հայ ժողովրդի բոլոր առաջավոր ուժերը հավաքվում էին նրա շուրջը։ Ինչպես հայտնի է՝ դեռ նրա կենդանության օրոք Թիֆլիսի հայ երիտասարդությունը կազմակերպել էր ընդհատակյա Հայաստան միությունը, որ համաձայն էր Նալբանդյանի ռևոլյուցիոն-դեմոկրատական սկզբունքներին։ Հայ երիտասարդության ու գրողների հայրենի սերունդները երել են նրա ուժեղ ազդեցությունը։ Նրանք չէին մոռանում Նալբանդյանի գիմումը Հավլիական երիտասարդությանը, որին ջերմ սիրով նվիրված էր նրա գլխավոր աշխատությունը՝ «Երկրագործությունը»։

«Մեր ազգի անցածը տխուր էր, այն օրերի պատմական հիշատակներից արտասուք է հոսում,—գրում է Նալբանդյանը։—Մեր ազգի ներկան ինչ է, տարկությունը և տղքատությունը բարձրաձայն խոսում են այսօր։ Եվ ես հույս ունենք ապագայի վրա, նորա երևեցույթը դուք եք, ձեզնից կախված է ազգի ապագան, և ձեզ վրա է միակ հույսը... Քարեր մեռելներին քարել լուսանց մեռելներին, նոցա արբը մնած է, իսկ դուք կենդանի եք և ապագայի արշալույսը ձեր դլխի վրա է բացվում։ Ձեր սակավաթիվ լինելը, համամտությունը պետքերի շատությանը, ինչ չվհատեցնի ձեզ, այն մարդը, որն զգում է լուր անձը կենդանի, պիտի հարի ձեզ, որովհետև կյանքի հոսանքը միայն մի ընթացք ունի՝ դեպի առաջ։

---

1 Տե՛ս—Մ. Նալբանդյան, «Ընտիր երկեր», էջ 310։

Հասա՛ղ... այնտեղ միայն կարող ենք հանդիպել մեր ազգի կենսանորոգ և օրատևողական հարությանը (Մ. Նալբանդյան, Երկերի լրիվ ժողովածու, հատոր 3-րդ, էջ 41, 1940 թ.)։

Դա ռևոլյուցիայի կոչ էր, որից վախենում էին ռուս և հայ լիբերալները։ Նրանց կենդանական վախը ռևոլյուցիայից ամենից ավելի ցայտուն կերպով տեսանք առաջին ռուսական ռևոլյուցիայի ժամանակ։

Երբ մենք հանդիպում ենք Նալբանդյանի սքանչելի կյանքը, նրա ռևոլյուցիոն-մարտական գործունեությունը հայ լիբերալիզմի սյուների ոտքերի գործունեությանը՝ ապա ավելի վառ է դառնում սահմանազատման այն գիծը, որ անց էր կացնում Շահումյանը հայ դեմոկրատիզմի ու լիբերալիզմի միջև։ Հայաստանում և Անդրկովկասում բանվորական շարժման ու մարքսիստական կազմակերպությունների երևան գալուց առաջ, հայ իրականության մեջ իար երկու հիմնական հոսանք, երկու հիմնական տենդենց՝ դեմոկրատական ու լիբերալ, որն ընդհանուր լեզու էր գտել կղերականության հետ։

Հիշենք Լենինի բնորոշումը, «1860 թվականի լիբերալները և Չերնիշևսկին ներկայացուցիչներ են երկու պատմական տենդենցների, երկու պատմական ուժերի, որոնք, այդ ժամանակից և ընդհուպ մինչև մեր ժամանակը, որոշում են նոր Ռուսաստանի համար մղվող պայքարի ելքը։

Նալբանդյանը հայ իրականության մեջ արտահայտիչն էր այն տենդենցի, որ Լենինը բնորոշում էր Չերնիշևսկու առումով։ Չերնիշևսկուց, ինչպես և Նալբանդյանից հետո, ռևոլյուցիոն-դեմոկրատական շարժումը Ռուսաստանում և Հայաստանում սկսեց իրենից ներկայացնել ռևոլյուցիոն—դեմոկրատական շարժման հետագա ավելի բարձր վերելքն ուղղին կապված է բանվորական շարժման և մարքսիստական, սոցիալ-դեմոկրատական խմբակների կազմակերպման և մարքս-լենինյան պարտիայի գործունեության հետ։ Հայ հասարակական հոսանքները բնորոշելիս (սոցիալ-դեմոկրատիայի և բանվորա-

կան շարժման երևան գալուց առաջ) Շահումյանի անցկացրած գիծը ցույց է տալիս, նախ, որ նա ուղղակիորեն դիմադրում Նալբանդյանին համաձայն է իր նախորդը, և երկրորդ՝ վճռականորեն բացասում է լիբերալ-նացիոնալիստական հոսանքը իր գաղափարական-քաղաքական ժառանգությամբ։ Հայ բուրժուական նացիոնալիզմի ժառանգորդն անդրկովկասյան իրականության մեջ՝ դարձավ գաղնակցությունը, մինչդեռ Նալբանդյանը և ընդհանրապես ռուս ուղղակիորեն դիմադրողները բոլշևիկների նախորդներն են։ Այստեղ պետք է շեշտել, որ Շահումյանը գաղափարական ժառանգության հարցը դնելով՝ այն լուծում է մարքս-լենինյան որով։ Եվ նա նացիոնալ-լիբերալիզմը համարում է հայ իրականության մեջ դաշնակցության նախորդ, դրանով դեռ ևս ներկայացնում նշան չի դնում լիբերալիզմի և դաշնակիզմի միջև, այլ միայն շեշտում է նրանց նույն սոցիալ-դասակարգային բանակին պատկանելու հարցը։ Դեռևս 1906 թվին «Կյանք» թերթում՝ որպես առաջնորդող տպված իր մի հոդվածում Շահումյանը անդրադառնալով «ընտրական պայքարին» և այն սպառնալիքին, որ առել է ունենում հայկական լիբերալների օրգան «Մշակ»-ի և դաշնակիների օրգան «Հորիզոն»-ի միջև, գտնում է, որ 14—15 տարի առաջ կաթոլիկոսական ընտրությունների ժամանակ, երբ, մի կողմից, կանգնած էին մշակականները, մյուս կուսմից՝ նոր-դարձականները, նրանց բանակռուվի ու պայքարի մեջ ավելի հասարակական իմաստ և գաղափարական բովանդակություն կար, քան այժմյան այդ ընտրությունների, այն պայքարի մեջ, որ տեղի ունի «Մշակ»-ի և «Հորիզոն»-ի միջև ազգային «Սահմանադիր ժողովի» ընտրության կապակցությամբ։ Այս վերջիններիս պայքարում Շահումյանը կարևոր սկզբունքային քաղաքական գաղափարական տարբերություն չի տեսնում, որովհետև երեսուն էլ համարում է հայ բուրժուազիայի հարաշատ զավակներ, «ձիևնուկ մեռյալի երկու կոմեր, թերևս այն միակ տարբերությամբ, որ նրանց մի մասը սկրաճար է քաղցուլ

Ժպիտների, մյուսը՝ բռունցքի ու վառոդի («Կյանք», № 45, 1906 թ.)։

Այս կարևոր գնահատականը լույս է սփռում ժառանգության հարցի վրա և մերկացնում է նախ՝ հակիական լիբերալիզմի՝ «մշակականության», ուղղակիորեն հոսանք ճանաչելու ոճակիրների փորձերը, ապա ցույց տալիս դաշնակցության բուն էությունը որպես ազգայնական նացիոնալիզմի, որը ներծծված է Հայրունիզմով և բանդիտիզմով։

Այսպիսով, երեք Ստ. Նազարյանցի նացիոնալ-լիբերալիզմը Գրիգոր Արծրունու և Րաֆֆու միջոցով հասնում է Քրիստափոր Միքայելյանին՝ դաշնակցության հիմնադրին, ապա Նալբանդյանի ուղղության տրադիցիաների պաշտպաններն են՝ Շահումյանը և Սուրեն Սպանդարյանը։ Այս է հայ իրականության մեջ հասարակական մտքի պատմական զարգացման էությունը, որ բազմապիսի կեղծումների է ենթարկվել ի հաշույս բուրժուական նացիոնալիզմի։ Բուրժուա-նացիոնալիստական և մենշևիկյան-սպեցիֆիկյան պատմաբաններն ու քննադատները քիչ ճիգ չեն թափել ծուռ հայելու մեջ ցույց տալու հայ հասարակական մտքի զարգացումը։ Նրանց նախասիրած գործելակերպն այն էր, որ նրանք ամեն կերպ թաղում էին Նալբանդյանի իրոք ուղղության տրադիցիաները, ձգտում էին մոռացության տալ նրա ուղղության գաղափարները։ Համաձայն դեմքում նրան համարում էին Նազարյանցի աշակերտ ու գործակիցը և ընդհանրապես բուրժուա-նացիոնալիստական լագերի ներկայացուցիչը (այսինքն նույնացնում էին լիբերալ-բուրժուական գործիչների հետ), քան որում բուրժուական լիբերալիզմի այդ այլանքերը պատվանդանի վրա էին բարձրացվում, նրանց հայտարարում էին ուղղության հիմնադիրներ, գովերգում էին ամեն եղանակներով։ Այս հարցում կատարյալ համերաշխություն կար դաշնակցական ու մենշևիկյան-սպեցիֆիկյան քննադատության միջև։ Հետագայում նույն բանն էին կրկնում ժողովրդի մերկացված թշնամիները։ Միայն մարքսիստական քննադատությունը, ի դեմս Շահումյանի, տալիս է բուրժուական լիբերալիզմի ու նրա այլանքների գնահատման հիշյա գրույթներ։

Բոցաշունչ բոլշևիկ Սուրեն Սպանդարյանի ծաղկան ազիւ բանից գրած հոդվածում Շահումյանն ասում է.

«Սուրենը պատկանում է հայ ծարում ռևնեցող այն նոր գաղափարական երիտասարդությանը, որ կարել է իր բոլոր գաղափարական կապերը հայ ազգային ինտելիգենցիայի նախկին ներսնդներից և ոչինչ չունի սովորելու նրանցից։ Սուրենը Ռուսաստանի նոր, համապետական կյանքի, ավելի հետո՝ միջազգային կյանքի, միջավայրի ծնունդ է։ Նրա ուսուցիչները չեն եղել և չէին էլ կարող լինել Սա. Նազարյանը, Արծրունին, Բաֆֆին, Քրիստափոր Միքայելյանը։ Նրա հոդվոր հայրերն ու ուսուցիչները եղել են Ձերնիշևսկին, Բելինսկին, Գլեբ Ուսպենսկը, հետո Մարքսը, Ենգելսը, Կաուցկին»[1]։

Ս. Սպանդարյանի այս բնութագրի մեջ, որը կարող է և Շահումյանի բնութագիրը լինել, կա չափազանց կարևոր մի դրույթ, որին մինչև հիմա արժանի ուշադրություն չի դարձված և որն ըստ արժանվույն չի գնահատված։ Շահումյանի այս դրույթը հաստատում է նախ՝ մեր այն միտքը, որ հայ բուրժուական լիբերալիզմի՝ Նազարյանցի, Արծրունու, Բաֆֆու գաղափարա-քաղաքական ժառանգորդը դաշնակցությունն է, որի հիմնադիր Ք. Միքայելյանին Շահումյանն իրավացիորեն գասում է բուրժուական լիբերալիզմի-նացիոնալիզմի այդ սյունների կողքին, և, երկրորդ՝ հայ լիբերալիզմը երեմոկրատական ու ռևոլյուցիոն» չէր, ինչպես ներկայում էր մենշևիկյան և բուրժուա-նացիոնալիստական քննադատությունը։ Սա հայ լիբերալիզմի մասին Շահումյանի տված գնահատականի ամենակարևորն ու հիմնականն է։ Սրանով որոշվում է Շահումյանի և մի ուրիշ ներսկայացուցիչ բուրժուական լիբերալիզմի-նացիոնալիզմի գաղափարա-քաղաքական ժառանգության բացասումը։ Երբ Շահումյանն ասում ու ընդգծում է, որ Սա. Նազարյանցը, Արծրունին, Բաֆֆին և Քրիստափոր Միքայելյանը չէին եղել և չէին էլ կարող լինել բոլշևիկ ռևոլյուցիոներ Ս. Սպանդարյանի ու ուրիշներից, ապա դա շատ բան է նշանակում։ Շահումյանի կարծիքով ոչ մի գաղափարական կապ չկա ու չի կարող լինել բոլշևիկ ռևոլյուցիոների ու հայ լիբերալ-նացիոնալիստական ինտելիգենցիայի միջև. վերջինս ռևոլյուցիոն-դեմոկրատական չէր, նրա գաղափարա-քաղաքական ժառանգությունից ամբողջովին հրաժարվում էր Շահումյանը և միանդամայն ձիշտ էր վարվում։

Լիբերալ-նացիոնալիստական ինտելիգենցիայի մեջ առանձնապես տեղ է գրավում Բաֆֆին իր գեղարվեստական սահմռկազդումներով։ Ինչպես հետո կտեսնենք Շահումյանը այլ կերպ է դիտում Բաֆֆու գեղարվեստական ժառանգությունը, մեխանիկորեն չի նույնացնում միպասանի գաղափարա-քաղաքական դիրքի հետ։

Այլ է Շահումյանի վերաբերմունքը Ե. Ալրուվյանի և Մ. Նալբանդյանի նկատմամբ։ Նացիոնալիստական քննադատությունը սովորաբար հայ հասարակական մտքի այս խոշորագույն ներկայացուցիչներին դասում էր բուրժուական լիբերալիզմի վերոհիշյալ սյուների կողքին և չէր տեսնում ու չէր ուզում տեսնել նրանց մեծ տարբերությունը։ Ավելին՝ Ալրուվյանին համարում էին բուրժուական նացիոնալիզմի հոգեհայրը, արվեստականորեն սրտելով Ալրուվյանի առաջադիմական ձգտումների և հայ ինտելիգենցիայի ռևակցիոն նացիոնալիզմի զանազանությունը։

«Մեր վերջնենք, օրինակ, ներկայիս հայ ինտելիգենցիան և մի շարք ուրիշ ազգային ինտելիգենցիաներ,—գրում է Շահումյանը 1916 թվին,—մենք կտեսնենք, որ նրանք ոչ միայն առաջադիմական ուժեր չեն, այլ ընդհակառակը, շատ ազեղ ու վնասակար դեր են կատարում իրենց ժողովուրդների առաջադիմության գործում» (Ս. Շահումյան, Երկերի ժողովածու, հ. I, էջ 98)։

Այս ինտելիգենցիայի, նույնիսկ 80—90-ական թվականների հայ ինտելիգենցիայի համեմատությամբ Ալրուվյանը առաջադիմական խոշոր երևույթ է հայ ժողովրդի պատմության մեջ։ Նա չափազանց շատ բան է արել նրա լուսավորության ու կուլտուրայի համար։ Մեր մեծ լուսավորչի քաղաքական

---

1 «Պայքար», № 30, 1916 թ.։

Հանդուգնությունները դեռ վերջնականապես չէին ձևավորվել, երբ նա անհետացավ։ Սակայն Աբովյանի կյանքի ու ժառանգության մանրակրկիտ ուսումնասիրությունը, նյութերի հետագոտությունը ցույց են տալիս, որ Աբովյանի զարգացման ուղին գնում էր ոչ թե դեպի ֆիլիստերացող լիբերալ նազելացը (թեև ընդհանուր շատ բան կա նրանց մեջ), այլ դեպի Նալբանդյանը։ Չէ՞ որ Նալբանդյանն էլ բավական ճանապարհ անցավ, մինչև որ ռևոլյուցիոն մարտիկ դարձավ։ Աբովյանին, ինչպես և Նալբանդյանին բուրժուական լիբերալ-նացիոնալիստներից սահմանազատելու պատիվը պատկանում է Շահումյանին։ Հակառակ նացիոնալիստական քննադատության մեջ հաստատված տրադիցիային՝ առաջին անգամ նա Սպանդարյանին ազատ իր բնութագրի մեջ Աբովյանին ու Նալբանդյանին չի հիշատակում բուրժուական լիբերալիզմի սյուների շարքում։ Սա խիստ կարևոր սկզբունքային նշանակություն ունի հայ գրականության պատմության համար և պատահական բան չէ Շահումյանի հայացքներում, այլ բխում է հայ լիբերալիզմի ու դեմոկրատիզմի նրա ընդհանուր գնահատականից։ Մանավանդ Նալբանդյանի, ինչպես և Աբովյանի նկատմամբ, դրական վերաբերմունքը վաղուց է կազմվել Շահումյանի մեջ։ Դեռ իր առաջին գրքագիտական ելույթում (Հորելյանական մաս Ղ. Աղայանի մասին) Շահումյանն առանձնացնում է Նալբանդյանին և նրան հակադրում է հայ ազգանվան սահմանափակ, բլուրժիա բնութիգենցիային, որի ներկայացուցիչները առորքարշրշույնն էին անում ցարիզմի առաջ և արտարացնում իրենց ազգոնալի գոյությունը՝ ազգի մասին գաղափար-գաղափարի շաղակրատելով. նրանք երևակայում էին, որ իրենք են հայ ժողովրդի փրկիչներն ու առաքելորդները։ Դառն ապրկապվի պես է հնչում հազվային սյուների դործունեության բնութագիրը, որ տվել է երբեմնասարդ ռևոլյուցիոներ։

«Մեր պարբերական մամուլի մեջ դասագրություն է տիրում և այդ դիտեն իրենք՝ մեր մեծ հրապարակախոսները, դիտեն, բայց և այնպես ահռելի կարծիք ունեն իրենց գործունեության մասին, համոզված են, թե իրենք են, որ կան հայ ժողովրդի փրկիչները, առաքելորդները։ Փորձենք մի քան ասել նրանց հայացին, մի թիչ քիներին դիպչել... Օ՜հ, ապրատի, տեսնք, թե ինչ կատարություն, ինչ հայհոյանքներ են, որ կթափվին մեր գլխին։ Ամենալավ դեպքում, դուք մի անմիտ երևիա եք, չգիտեք, որ Լուսաստանում կա ցենզուրա, որ ոչինչ չեն թույլ տալիս գրել... Օ՜հ, պարոններ, ախալվում եք, մենք այդ լավ դիտենք, դիտենք և ոչինչ էլ չենք ապատում ձեր հրատարակիչություններից, ձեր վիրքերալիզմից։ Բայց մենք դիտենք և այն, որ երբե թույլ էլ տալին ձեզ գրել, դուք ոչինչ չէիք կարողանա գրել, ոչինչ չէիք կարողանա մեզ տալ, որովհետև դուք ինքներդ ոչինչ չունեք... Ձեր հրատարակիչության նյութը տերաերների են կամ առաչարիմական կոտահցություններ ծրագրից վաղուց դուրս գցված ֆիլտատրոպիան։ Ձեր հրատարակիչության ձեն է՝ վաղուց տաված, արհամարհված քարոզը։

— Ո՛վ անխիղճ հայեր, պահպանեցեք ձեր թերթերը, փող տվեք ձեր գրողներին։ Անդուլ հայեր, հոգացեք ձեր ինատրոնի մասին, հաց տվեք ձեր տուած դերասաններին։ Անխիղճ վաշխատուներ, ողղմացեք ձեր խեղճ գյուղացիներին, փող տվեք ձեր տաք նրանց տոկոսով, մի՛ կեղեքեք նրանց...

Ահա ձեր ամբողջ դավանանքը, ձեր գործունեության ծրագիրը։ Եվ դուք համարձակվում եք ձեզ ազատասիրտ ազատրիմական անվանել։ Մի՛ անպատվեք, խնդրեմ, ոտա ազատասիրանների (դեմոկրատների Ա. Ո.) սրբազան հիշատակը, մի՛ հավասարակշիք նույնիսկ Նալբանդյանի ու անդամ Աբծրտաու հայրորդները անվանել ձեզ։ Ներ նրանք այժմ

---

1 Հետո, իր գործունեության ավելի հասուն շրջանում, Շահումյանը, ինչպես նշեցինք, ուղղում է մարքսը Աբծրտաու գնահատականի մեջ՝ ամբողջովին առանձնացնելով նրան Նալբանդյանից։ Աբծրտանին՝ իբրև հրապարակախոս՝ որոշ առավելություններ ուներ իր ազդակից հետևորդներից։ Շահումյանն այդ եզրակ ունի Աբծրտանի իր հայրորդներին հակադրելիս։ Սակայն այնուամենայնիվ այս թույլ տալը Շահումյանը հետագայում չտեսի հավատացրեց։

կենդանի լինելին, ամենավատ դեպքում կիսատրեին իրենց գրիչները և չէին համաձայնի երբեք ձեզ նման գրողներ լինել։

Տերին է ասված։ Յուց տալով Հայ ազգայնական ինտելիգենցիայի գաղափարական ու քաղաքական ողբերգությամբ, Շահումյանն իրավացի կերպով նայլանդյանին հակադրում է նրանց։ Հետագայում Հայ մեծ հրապարակախոս ռևոլյուցիոների՝ Նալբանդյանի, մոտավան 50-ամյակի կապակցությամբ, բոլշևիկներն ուղղակի ու անուղղակի հայտարարեցին իրենց գաղափարական աղբակցությունը Նալբանդյաններին, ինչպես ժամանակին վարվել էին ռուս ռևոլուցիոն դեմոկրատները Բելինսկու ու Չերնիշևսկու հետ։

Հայ իրականության մեջ Շահումյանի և Սպանդարյանի նախորդը Միքայել Նալբանդյանն է եղել։ Այս հարցը հիմա կասկած չի հարուցում։ Մեզ արդեն հայտնի է Շահումյանի վերաբերմունքն այդ հարցում. նա խիստ բարձր էր գնահատում Նալբանդյանի գործունեությունը, առանձնացնում էր նրան հայ բուրժուական լիբերալիզմի սլանկերից, հակադրում նրանց։ Շահումյանի այս վերաբերմունքը Նալբանդյանի ու լիբերալների նկատմամբ միանգամայն բոլշևիկյան էր ու բխում էր կուսակրական ժառանգության լենինյան գնահատականից (Լենին, ե՞նչ ժառանգությունից ենք մենք հրաժարվում», հատոր II, էջ 305—332)։

Շահումյանից հետո, և նրա ազդեցությամբ, Նալբանդյանի դերը հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության մեջ միշտ գնահատց սոցիալ-դեմոկրատական ժայքառը միտքը[1]։ Նալբանդյանի մոտավան 50-ամյակի կապակցությամբ միտքը մի համար նվիրեց նրան։ Բացի Աղաուսյան գրված գլխավորը վերնագրով մեծ առաջնորդողից, որտեղ տրված է Նալբանդյանի դերի ու նշանակության ընդհանուր ու միշտ գնահատականը, տպագրված են նաև նրա կենսագրական ակնարկը և պրոլետարական բանասեղծ Հ. Հակոբյանի հուշերը, որոնց մեջ վերջինս գրում է այն ազդեցության մասին, որ գործել էր Նալբանդյանի ռեվոլուցիոն ազատասիրական պաեզիան իր-իրա՝ պատանի հասակում։ Բայց մեզ համար խիստ հետաքրքրական է միտքի առաջնորդողը։ Նկատի ունենալով հարցի կարևորությունը, մենք կպշատենք ավելի մանրամասնորեն հաղորդել առաջնորդողի դրույթները։

Ըստ խմբագրականի Նալբանդյանը XIX դարի հայ վերածնության խոշորագույն դաղափարախոսն է և ժողովրդասեր ու մասնրախիտ մտածող, որ ի հակադրություն իրեն յիսնականների, հասարակական երևույթների պատճառները տեսնում է ոչ թե դաղափարների, այլ հասարակության տընտեսական ու սոցիալական պայմանների մեջ և դրանցով բացատրում ժողովրդական զանգվածների գծրախտությունը։ Այս գնահատականը տալուց հետո, խմբագրությունը մեջ է բերում Նալբանդյանի հայտնի խոսքերը. «Մենք չենք հավատում, սարկույան մեջ, աղքատության մեջ չկա և չի կարող լինել լուսավորություն։ Նալբանդյանը հանդես է գալիս փիլիսոփայական միտիկալի դեմ. «Ամի փիլիսոփայությունը, որ անմիջապես չէ բխում մարդկային կյանքից և չէ դարձում դարձյալ մարդկային կյանքի վրա... մենք հրապարակում ենք իմաստասիրություն և խոսքություն,—ասում է նա և հետևանքով նայում բուրժուազիայի ամաղոսանքո մեծատղորդ լուսնկաներին՝ ազատության, հավասարության և եղբայրության մասին։ Այդ ամենը նա դատարկ խոսք է համարում, քանի որ չի լուծվել այն անհետաձգելի խնդիրը, որ

---

[1] Մենք հանգիս ենք գկայտնում այս միտքը, նկատի առնելով, որ նրա խմբագրության մեջ գնկատված դեր էին խաղում բոլշևիկները Շահումյանը, Մասվինը և ուրիշներ։ Այդ միտքի ստեղծումը բարձր գնահատական է տալիս Շահումյանին։ «Մանկիկենցիան և մենշևիկները հոդվածում նա գրում է, ընդեն վերջինը ժամանակագրական մեծ վրիպեկ հայկական իրականության, դուք կտեսնեք, օրինակ, որ «Պայքար» յուրաքանչյուր համարը մի-մի կենդանի բողոք է մենշևիկների և նացիոնալիստների և նացիոնալիստների դեմ և հրամայական պահանջ է ամեն մի գիտակից մարքսիստ համար («Պայքար» №49, 3 դեկտ. 1916 թ., կամ «Երկերի ժողովածու», հ. II, էջ 111)։

ժամու և կյանքի խնդիր էր։ Նալբանդյանը չի ընդունում բուրժուազիայի գոյության ունեցող քաղաքական իրավակարգը և ապստամբ է, որ այն վերանում է ուշ սոսկալի փոթորիկներով պիտի լուծվի։

Մեծ լուսավորչի ընդհանուր աշխարհայացքը շարադրելուց հետո, խմբագրությունը բնութագրում է ազգային հարցի նրա ըմբռնումը, ընդգծելով այդ հարցի Նալբանդյանական ու դեմիկրատական մեկնաբանման միջև եղած անդունդը։ Դեմոկրատական լեզվով, հայ զանգվածների անլուսաշող, ճնշյալ դրությունը, Նալբանդյանը չէր կարող դրա մասին խոսել առանց դառնության և խոր կսկիծի։ Նա շատ էր սիրում իր ազգը, իր ժողովուրդը։ Սակայն այդ սերը արմատապես հակադիր է նրա ու նեղ նացիոնալիզմին, շովինիզմին։ «Ազգասիրությունը կուր ֆանատիկոսության դարձնելու կամք չունենք,—ասում է Նալբանդյանը,—հերիք է օրական կուր ու ֆանատիկոսական ազգասիրություն ունի իր նահանջ կողմերը»։

«Հերիք է, ասում ենք, որ մի ազգությունը, մի շամփուր խորովածի համար, մորթում է մյուս ազգության եզը»։

Վկայաբերելով մեծ դեմոկրատի այս ու նման ասույթները, որոնց մեջ նա ընդունում է ազգության պատմականությունը և բացասում նրա հավերժության տեսությունը, խմբագրությունն իրավացիորեն եզրակացնում է,

«Թող մեր օրերի ազգասերները», հայ «փրկիչները» տեսնեն՝ XIX դարի մեր լուսամիտ վերածնիչի և իրենց ազգասիրության միջև որպիսի ահռելի խորխորատ գոյություն ունի. տեսնեն, թե ո՛րն է մարդու ազգասիրությունը, որ հանգիստ կարող է լինել մարդասիրության հետ, և ո՛րն է այն ազգասիրությունը, որն իր արատավորության մեջ մարդատյացության է հասնում...։ Եվ այսպես՝ լրանում է սուն մարտի 31-ին այն մարդու մահվան հիսնամյակը, որ ազատության գրված ժողովուրդ ունենալու գինվորն է եղել, որն իր կես դար ազատ արատավորած մարքերով ու ցուրց տված կենդանի գործով ընդգրկել է ժողովրդական ազատագրական շարժման մի փայլուն ուղի, որի ազդակիչ հետևորդները մշուշով պատեցին այն ու հանգան հակառակ հետևանքների, իսկ զգաստ մարքերը ժողովրդի իսկական ազատության խնդիրը տեսան անհետևական ազատագրության մեջ։ Եվ ուղիները բաժանվեցին խստորեն։

Լրանում է մահվան հիսնամյակը մի մարդու, որի սիրան ամբողջովին լցված էր իր ժողովրդի և ամբողջ մարդկության ցավերով, որի առանձին հոգսի առարկան հայ մասսայի, իրավազուրկների էր, ստրկության և աղքատության... հավե՞ր հարցանք, «ազատության գրված գինվորը» քանիսներն հիշատակին։ Ժամանակակից գործունեյա սերունդը երախտագիտությամբ կիիշե՞ մանկտի ժողովրդապետության անմնացորդ նալբանդյանին» («Պայքար», № 13, 1916 թ.)։

Այս առաջնորդող հոդվածում անկասկած արտացոլված է ինքը շրջապատող բոլշևիկների վերաբերմունքն ու կարծիքը։ Նալբանդյանի գնահատման հարցում խմբագրության դիրքը լիովին համընկնում է խորհրդային հայ ռևոլուցիոն դեմոկրատի մասին արած Շահումյանի ասույթներին։ Եվ դա հասկանալի է, Սահմանազատման գիծը, որ անց է կացնում Շահումյանը հայ լիբերալիզմի ու դեմոկրատիզմի միջև, բացահայտել բոլոր հավասարումները ռուս և հայ բուրժուազիայի ռևոլուցիոն լինելու մասին, լիովին բնորոշ է Լենինի՝ Ռուսաստանի կապիտալիստական զարգացման երկու ուղիների տեսությունից և ռուսական լիբերալիզմի՝ գնահատականից։

«Պայքար մղե՞լ են արդյոք նրանք (լիբերալները, Ա. Ո.) ինքնակալության դեմ, պայքար ինքնակալությունը տապալելու համար,—հարցնում էր Լենինը դեռ 1899 թվին և պատասխանում. Ո՛չ, այդպիսի պայքար երաշե՞ ոչ մի ժամանակ չեն մղել և չեն մղում։ Այդպիսի պայքար մղում են միայն ռևոլուցիոներները... Սակայն ռևոլուցիոն պայքար մղելը ամենևին միևնույնը չէ, ինչ ռևոլուցիոներներին հավակերելը և նրանց ոչնչացելը. ինքնակալության դեմ պայքարելը դեռևս էլ միևնույնը չէ, ինչ լծվել օպորտիզմ կազմելո՝

ինքնակալության դեմ: Ռուս լիբերալներն իրենց գժգոհությունն են հայտնում ինքնակալությանը միայն այն ձևով, որ թույլ է տալիս ինքնակալությունը, այսինքն՝ որը ինքնակալությունը անվտանգ է համարում ինքնակալության համար... Լիբերալ օպոզիցիան ուղղակի ինքնակալության դեմ ծղրտող հասարակական պայքարի վերածելը՝ նշանակում է պարզապես խեղաթյուրել գործը, որովհետև ռուս լիբերալները երբեք ուղղակիորեն պարտիա չեն կազմակերպել պայքար մղելու ինքնակալությունը տապալելու համար...» (Լենին, հատոր II, էջ 565—566):

Լենինը մի ընդունում, որ ռուս լիբերալները որևէ ուղղության ծառայություն են մատուցել: Ընդհակառակը՝ նա հաճախ է ընդգծում նրանց հակադեմոկրատական և հակահեղափոխական էությունը, որը նրանք ամենից շուտ ու ամենից ռուսական ապստամբ ուղղության ղեկավարում և դրանից հետո՝ դաշնակցելով ինքնակալության հետ ընդդեմ ուղղության մասնակցել: Ի հակադրություն Լենինին (բոլշևիկներին), մենշևիկները, ներքնելով պրոլետարիատի հեղափոխական դերը բուրժուա-դեմոկրատական ուղղությունում, լիբերալներին համարում էին ուղղության ուժ, ձևական անպատրաստ անելու ֆրանսիական բուրժուական մեծ ուղղության ժամանակաշրջանի հետ:

Մերկացնելով մենշևիկներին, ռուսական բուրժուազիայի նրանց շարքերի համեմատությունը ֆրանսիական ուղղության բուրժուազիայի հետ և պաշտպանելով Լենինին նրանց հարձակումներից, Շահումյանը ս. Մարտովի նոր հայտնագործությունը» հոդվածում գրում է.

«Ներկը (մենշևիկները, Ա. Ո.) չէին կարող հասկանալ պատմական դիալեկտիկայի իմաստը, որը Ֆրանսիական մեծ ուղղությունից հետո երկրորդի կապիտալիստական զարգացումից 50 տարի անց զերծանական բուրժուազիային հասցրեց սրտուղության հետ գործարք անելուն և ուղղության հարցը օրվա իրականությունը բաժանելուն և որը ընդհանրապես Եվրոպայի և մասնավորապես Ռուսաստանի զարգացումից ևս 50 տարի անց ռուսական բուրժուազիային պիտի հետևեր կոնտրուղության ճիրանը՝ ազատագրական շարժման հենց սկզբից» («Волна» ամսագիր, 1900 թ., № 2):

Ընկերը Մասլովը զարգացնելով լիբերալիզմի լենինյան գնահատականը, դեռ 1907 թվին գրում էր. «Մինչև, որտեղ պրոլետարիատը պայքարում է գիտակցաբար, լիբերալ բուրժուազիան զգալում է ուղղության լինելուց: Դրա համար էլ պրոլետարիատի պայքարից ահաբեկված կադետներ-լիբերալները պաշտպանություն են փնտրում ռեակցիայի ճիւնքի տակ: Դրա համար էլ նրանք ավելի են պայքարում ուղղության դեմ, քան թե ռեակցիայի դեմ: Դրա համար էլ կադետներն ավելի շուտ դաշինք կկնքեն ռեակցիայի հետ ուղղության դեմ, քան ուղղության հետ: Այո՛, մեր լիբերալ բուրժուազիան և նրա պաշտպան կադետները հանդիսանում են ռեակցիայի դաշնակիցները, որոնք ուղղության «լավագործած» ջնջամիներն են» (Մասլով, Երկեր, հատոր II, էջ 4—5, ռուս.):

Լենինի, Մասլովի ու Շահումյանի՝ ռուսական լիբերալ բուրժուազիայի այս բնութագրություններից հետո պետք է պարզ լինի նաև հայ լիբերալ բուրժուազիայի ու նրա գաղափարախոսների բնութագիրը, որոնք վաղուց միաձուլվել էին ռուսական լիբերալներին և շարժվում հավատարիմ հենարան էին հայ իրականության մեջ: Կովկասահայ լիբերալներ (Տագարյանց, Ալբրուսի, Բաֆֆի և այլն) քաղաքական գործունեության հենարանական մոմենտը «Ճանկահարների ազատագրությունն» էր: Նրանք այլ կերպ չէին էլ մտածում իրագործել իրենց ծրագիրը, եթե ոչ ռուսական շարժման և կրոպական իմպերիալիստների օգնությամբ: Նրանցից շատերը նույնիկ չէին կասկածում, որ իմպերիալիստական պետությունները դեմ են տաճկահայերի իսկական ազատագրությանը: Եթե Լենինը վերոհիշյալ հոդվածում խոսում է ռուսական լիբերալների օպոզիցիայի մասին ինքնակալության հանդեպ, ապա կովկասահայ իրականության մեջ հայ լիբերալները չէին կարող նույնիսկ այդպիսի չափավոր օպոզիցիա առնոցել: Եվ դա հասկանալի է: Սո. Տագարյանցը խոսում էր միայն ռո-

Ֆորմի անհրաժեշտության մասին, ոչ մի ձեղքոտի չդիմելով նրա իրագործման համար։ Իսկ Գ. Արծրունին արդեն հայտնի է իր ցարասիրական քաղաքականությամբ։ Հայ լիբերալիզմի ամենայն հատ ու կենտ, սահմանադիր ու զրահատ ներկայացուցիչները ազգային ընդդեմ ուժերդանալու, ազգային կուլտուրան հալածվելու շրջանում (հայկական դպրոցների փակում) իրոք օպոզիցիան սրսկարդությունն են դրսևորում ցարիզմի նկատմամբ։ Ու նկատի ունենք Ռաֆֆոն, որ իր սահմանված վիպով քաղաքական բողոքում է ինքնակալության հալածանքների դեմ և շղարշում է քաղաքական կողմնորոշման հարցը, պաշտպանում է Հայաստանի ինքնուրույն քաղաքական կյանքը՝ առանց ուժեղ խնամակալների ու հովանավորողների։

Սակայն հայ լիբերալ բուրժուազիան և նրա գաղափարախոսները ամրողջովին վերցրած երբեք չեն եղել և չէին էլ կարող լինել ուղղություն դեմոկրատական ուժ, որ կարողանային պայքար մղել ինքնակալության դեմ, ընդհակառակն՝ ամբողջովին հենված էին նրան և իրենց քաղաքական ձգտումն ապահովելու իրականացումը կապում էին ցարիզմի և կղոպական իշխանությունների ցանկությունների հետ։ Եվ դա հասկանալի է։ «Ուրուս կառավարությունը,—գրել է Շահումյանը դեռ 1906 թվին,—պահպանելով հայ բուրժուազիան իր խոշոր սուբսիդիաներով, ձեռքում ու ձեղքում էր հայ մասսաներին, զրկելով նրանց ամենատարրական քաղաքական իրավունքներից» (Ս. Շահումյան, Երկ. ժող., հ. I, 1925 թ., էջ 59)։ Կովկասահայ բուրժուազիայի քաղաքական ձգտումները համընկնելով ցարիզմի նվաճողական քաղաքականությունը, հետագայում զարկան դարձակ ցուիյան ծրագրի ու գործունեության հիմքը, հասցվեցին ազգամոլական վախճանին, ընդունելով ռազմաշունչ նացիոնալիզմի և քանդիտիզմի ձև։ Նացիոնալիստական պարտիայի այդ քաղաքականությունը Շահումյանը ենթարկում է խիստ քննադատության։

«Սակայն դաշնակցության բոլոր ձեռքերը,—գրում է Շահումյանը 1906 թվին,—պահել ջարժուձի ազգային շրջանակների մեջ, ենթարկել այն տանկհահայ հարցին,—ապարդյուն անցան։ Ազատագրական շարժման հետագա զարգացումը մի կողմ ենեռց չովինիստական կապանքները, որոնցով դաշնակցությունն աշխատում էր կաշկանդել հայ զանգուռը։ Հայերը հասկացան, որ իրենց ինչպիսին ռուսական կառավարությունն է, այլ ոչ թե ուրս ժողովուրդը։ Հանուսակ դաշնակցական բոլոր չանգերին՝ ընդհանուր լծի տակ տառապող բոլոր ժողովուրդների համերաշխության գաղափարը մուտք գործեց հայ ժողովրդական մասսաների գիտակցության մեջ, և այդ մասսաները, թեև այժմ լռում չպիտով, հարեցին այն մեջազգային համառուսական ռևոլուցիայի բանակին, որը մահացու կռիվ է հայտարարել կամայականության ու բռնության ռեժիմին» (Շահումյան, նույն տեղ, էջ 63)։

Մերկացնելով դաշնակցության ռևիզիոն-նացիոնալիստական էությունը, Շահումյանը միաժամանակ բնորոշում է Կովկասի սոցիալական ու քաղաքական այն պայմանները, որոնք ծնունդ տվին, մի կողմից, նացիոնալիստական զարտուխանքներին, մյուս կողմից, մարքս-լենինյան, բոլշևիկյան կամայներությունններին՝ պրոլետարական ինտերնացիոնալիզմի չահակիրներին։

Չնահատելով հայ հասարակական մարդ ու հոսանքների անցած ուղին, Շահումյանը մի հետաքրքիր հոդվածում (ևՄայիս 18»ի առաջին համարի առաջնորդող) գրում էր.

«Վատահրվեց այն, ինչ որ պետք է կատարվեր։

Հայ ժողովուրդն էլ դուրս եկավ իր նահապետական, սահմանափակ, տգղայինո կյանքի շրջանակներից և կապվեց լայն, լուսավոր քաղաքակիրթ աշխարհի հետ։ Եթե մինչև այժմ մենք ունեինք առանձին անհատներ, կամ ինտելիգենտական խմբեր, որոնք հրթիռելով Ռուսաստանի կենտրոնում կամ Եվրոպայում, ձգտակելով կրոպական քաղաքակրթության պատրիները, գալիս էին մեզ մոտ գրատուիչներով, գրամասորիչներով գերով, այժմ մենք ունենք ամբողջ դասախոսներ, որոնք իրենց էությամբ, իրենց օրենսիով դրությամբ,

իրենց իրական կյանքով ներկայանում են որպես արդյունք նոր սոցիալ-անտեսական պայմանների հեղաշրջման, որ առնչվել է նաև մեր կյանքում։ Երկրի անտեսական զարգացումն էր՝ իր բնական ու անխուսափելի ընթացքով, որ առաջ բերեց մեր կյանքում այդ արմատական հեղաշրջումը։ Եվրոպական կապիտալիզմը, որ տիրապետող արդյունագործական եղանակ էր դարձել Ռուսաստանում վերջին տասնամյակների ընթացքում, ժուռք գործեց և մեր երկիրը և դրեց իր ուժեղ և ուղղյն դրոշմը հայկական իրականության վրա» (Շահումյան, Երկեր, հատոր I, էջ 110)։

Այս ընդհանրացնող գնահատականից հետո, Շահումյանը շարունակում է բնութագրել հայ իրականության հիմնական հասարակական-քաղաքական ուղղությունները՝ երկրում կատարված սոցիալական ու անտեսական փոփոխությունների կապակցությամբ։

Մի ուրիշ հոդվածում Շահումյանն արձանագրում է այն անհերքելի փաստը, թե հետաքրքրում անտեսական հարաբերությունների զարգացումը Կովկասում, մի կողմից, և բանվորական շարժման արագ ծավալումը հատկապես Ռուսաստանում, մանավանդ Կովկասում, 90-ական թվականների վերջերին և 900-ական թվականների սկզբներին՝ մյուս կողմից, իրենց գործն արին և հայկական հասանդի նկատմամբ» (Շահումյան, Երկերի ժողովածու, հ. I, էջ 60)։ Այս հանգամանքը նպաստավոր պայմաններ ստեղծեց մարքսիզմ-լենինիզմի հայ իրականության մեջ տարածելու, ինչպես նաև բոլշևիկյան կազմակերպություններ ստեղծելու համար։ Շահումյանը, որպես մարքսիստ, լավ գիտեր, որ սոցիալ-անտեսական փոփոխությունները չեն կարող քաղաքական ու գաղափարախոսական հետևանքներ և արտահայտություններ չունենալ։ Այդպես էլ նա գրում է ժամանակի առաջնորդող հոդվածում.

«Այդ ահռելի հեղաշրջումը իրական կյանքում, մարդկանց հասարակական հարաբերությունների մեջ առաջ է բերում համապատասխան հեղաշրջում նաև նրանց հասարակական գիտակցության մեջ,—խորքում ենք մենք,—նախկին կղերա-պահպանողական ազդեցությունից տեղ երևան է եկել մեր մեջ մի կողմից բուրժուական լիբերալիզմը, որը ինչ ու ուրտե ու չի կարող բաժանվել այդ կրերականական, «արբացուական» ազդեսիրություններից, բայց հետևնեան իր էությամբ, իր բովանդակությամբ ձուտենում է եվրոպական բուրժուական լիբերալիզմին, մյուս կողմից, որ ամենաբնորոշ գիծն է մեր նորագույն կյանքի, որ ամբողջովին նորույն է հայկական իրականության մեջ, երևան է եկել այն աշխարհայացքը, որ կոչվում է սոցիալիզմ, որի հրոսն է բանվոր դասակարգը, պրոլետարիատը։ Թե բուրժուական լիբերալիզմը, թե պրոլետարական սոցիալիզմը ունեն մեր կյանքում իրենց ավելի կամ պակաս գիտակից, ավելի կամ պակաս որոշված արտահայտիչները, իրենց քաղաքական կուսակցությունները, որ ղեկավարում են համապատասխան դասակարգերի քաղաքական կռիվը, որ աշխատում են մարդանավորել իրականության մեջ այդ դասակարգերի հասարակական-քաղաքական իդեալները» (Երկեր, հատոր I, էջ 111)։ Հայ իրականության հասարակական-քաղաքական վիճակի այս փայլուն բնորոշումից հետո, դժվար է սրանից նոր բան ավելացնել։ Շահումյանն ասել է հատակ, լակոնիկ ևերպով և ընդգրկել է հիմնական հարցերը։ Այդ հատվածներում մենք գտնում ենք ոչ միայն մեր լուսավորիչների գնահատականները, այլև բուրժուական լիբերալիզմի խոր ու հմուտ բնութագիրը։ Դրա հետ միասին Շահումյանը ընդգծում է հայ ժողովրդի հասարակական կյանքում կատարված այն հսկայական քեկուռը, որ հետևանք էր բանվորական շարժման կազմակերպման և սոցիալիզմի, մարքսիզմի երևան գալուն։ Դա հայկական կյանքի ամենաբնորոշ կողմն էր XIX դարի վերջին և XX դարի սկզբին։ Հայ հասարակական կյանքում առաջացած այս փոփոխությունների հետևանքով վերնականապես ձևափոխվեցին նրան հիմնական ներհակ դասակարգ՝ բուրժուազիան ու պրոլետարիատը, իրենց որոշակի աշխարհայացքով։ Թե բուրժուական լիբերալիզմի-նա-

գիտնալիքի կրողը կոմիտասյան բուրժուազիան էր, տալա ժամրտիասական սոցիալիզմի և պրոլետարական ինտերնացիոնալիզմի կրողը բանվոր դասակարգն էր, որ արդեն սկսել էր վճռական գոր խաղալ՝ որոշելով հայ ժողովրդի հետագա կական զարգացման հնարավոր ընթացքը։

Հայ կյանքում այդ նոր ուղղության հետևողական ու կարկառուն ատաձայնիչները՝ Շահումյանն ու Սպանդարյանն էին, որ իրենց ուսուցչի պայքարն սկսեցին XIX դարի վերջին և XX դարի սկզբին և դարձան մեր ազգային զինակիցները ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր Ստալինի, որի գիտակարումիյամբ անդրդվելական բոլշևիկները հակայական հաղորդությունների հետան բազմազգ Կովկասի ուսուցչին ուժերը կազմակերպելու և համախմբելու, իրենց պայքարելու ու բուրժուազիայի դեմ պայքարելու գործում։ Շահումյանի ու Սպանդարյանի պատմական ազատագնա իրենը քնորոշում է ինքնին այն արժատական բնույթը, որ տեղի ունեցավ կոմկատաձայների հատարեկական կյանքի ու մտքի մեջ։ Ընկեր Ստալինի գիտակարումիյամբ Շահումյանը, Սպանդարյանը, իսկ փոքր ուշ՝ Միկոյանը և ուրիշները հակայական աշխատանք կատարեցին մարքսիզմ-լենինիզմի ուսմունքը հայ ժողովրդական գանգվածներում տարածելու և գիտական կոմունիզմի հիման վրա նրանց կազմակերպելու ուղղությամբ՝ ցարիզմի ու կապիտալիզմի դեմ հաջատեղ պայքարելու համար։

III

Հայ հասարակական մտքի ու հոսանքների հիմնական, հանգուցային հարցերը Շահումյանի աստվածների լույսի տակ քննադատելուց ու լուսաբանելուց հետո, մենք կարող ենք անցնել Բաֆֆու, Ղ. Գասխանյանի և այլ գրողների հասարակական-քաղաքական ու գրական գործունեության քննությանեին, որ սկզբնական կարևոր նշանակություն ունի։

Գրական ասպարեզ իջնելով 60-ական թվականներին Րաֆֆին գեռ վերջնականապես ձևավորված քաղաքական հայացքներ չուներ։ Այն ժամանակ նա ապամոդերված էր իրանի իշխող ֆեոդալական կարգերի դեմ և զեղծ էր տարական ինքնակուլտիվացիայիցյ։ Րաֆֆին կողմնակից էր հայ ժողովրդի ազգային ազատագրության ու ինքնուրույն կյանքին։ Երիտասարդ գրողը, ինչպես պատմում է Ղ. Աղայանը իր հուշերի մեջ, համակրում էր «ծայրահեղական ուղղության»։ Աղայանի այս խոսքը հաստատվում է նրանով, որ Րաֆֆին իր առաջին խոշոր վեպը՝ «Մայրին» (1877 թ.) հիմնովին նվիրել է Նալրանդյանի զարթոնք հիշատակին։

Սակայն գրությունը փոխվում է։

Սկսված է 1877—78 թվերի ռուս-տաճկական պատերազմը։ Տաճկահայերի ազատագրության հարցը դառնում է օրվա հարց և դրավում ոչ միայն հայ բուրժուազիայի գաղափարախոսների ուշադրությունը, այլև համակում է ժողովրդական հոծ զանգվածների միտքը ու սիրտը։ Եսանդազին աշխատում էր միշազգային իմպերիալիստների դեմ ատելություն, առատ խոստումներ անելով ու հուսադրելով հայ ժողովրդին՝ ազատագրել ու միացնել հայ ժողովրդի երկու հատվածները՝ տաճկահայերին ռուսահայերի հետ։ Այս բազայի վրա էլ բարձրանում է հայրենասիրական մի ալիք, որն ընդգրկում է ժողովրդական հոծ զանգվածները։ Այդ շարժման հիմքում ընկած էր հայ բուրժուազիայի և այլ տիրող վերնախավերի շահերը։ Սակայն հայ աշխատավոր ժողովուրդն այդ շարժման մեջ իր շահերն էր տեսնում. նա հավատացած էր, որ հասել է իր վաղեմի իղձերի՝ հայ ժողովրդի երկու հատվածների միանալու և միասնական մի ազգ կազմելու ժամը։ Հայ ժողովրդական զանգվածների այս ձգտումը (70—80 թվերին) միանգամայն օրինական էր, հասկանալի ու առաջադիմական։ Սակայն ազգայնական հաղթական միտքով ոգեշնչված ժողովրդական զանգվածները չէին կարող կանգնել մեծ տերությունների դիվանագիտական դավերը ու

---

1) Գրական, երկեր, հ. III, էջ 111։

հանգամանալ պատերազմը հրահրողների իսկական նպատակները։ Եվ դաժանորեն խաբվեցին։ Ազգային շարժումը չունենալով դրական հետևանքներ, ընդհակառակն՝ առացավ խիստ ազգայնական բնույթ (դրան էին ձգտում մեծ տերությունների դիվանագետները) և զարձավ հայ ժողովրդի հարյուրավոր հերոս զավակների կորստյան պատճառ։ Սուլթանական Թյուրքիան մեծ տերությունների հավնիսավորությամբ հայերի մասսայական ջարդերը կազմակերպեց։

Հայ ժողովուրդը ռուս մեծ ժողովրդի ազատագրական շարժումից կարված չէր կարող հաղորդություն ունենալ։ Այն ժեղողը, որ ռամկահայերի ազատագրության համար բնաբել էր քուրծուա-նացիոնալիստական ինտելիգենցիան, աղետային հետևանքներ ունեցավ։ Մինչդեռ պրոլետարիատի ու աշխատավոր զանգվածների հետաեաս, խորաթափանց ուսուցիչները և բարեկամները ռամկահայերի ազատագրումը տեսնում էին ռուսական ցարիզմի տապալման մեջ։ Ց. Էնգելսը, անդրադառնալով «Հայկական հարցին», մի նամակում նշում է հայ ժողովրդի ճնշված լինելու փաստը, «որը (ժողովուրդը) գժբախտաբար զանվում է տամկական բռնապետությանն Սցիլլայի և ռուսական աբսոլյուտիզմի Քարիբդայի միջև...»։ Ապա հետև ավելացնում է. «Հայաստանի ազատագրումը իյուրքերից, ինչպես և ռուսներից (ցարիզմից—Ա. Ի.) հնարավոր կդառնա միայն այն օրը, երբ ռուսական ցարիզմը կտապալվի»։ Սրանք մարգարեական խոսքեր են՝ ասված դեռևս 1894 թվին։

Բայց իրականությունն զարձավ այլ կախվածությունը մինչև 1917 թվին՝ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեվոլյուցիայի ղեկավարությամբ հաստատված սովետական կարգերով։

Էնգելսի այս գրությիը հաճախ է Շահումյանը մեջ բերում հայ ազգայնական պարտիաների դեմ, որոնք Նիկոլայ Ռոմանովի հետ դաշնակցած, պայքարում էին Ռուսաստանի ռեվոլյուցիոն շարժման դեմ և ժողովրդական զանգվածների ուշադրությունը կենտրոնացնում բացառապես տամկահարցերին ազատագրելու ֆանտաստիկ ու ավանտյուրային քաղաքականության վրա, որ համար օգտագործելով հայ աշխատավորության մաքուր, խոր հայրենասիրությունը։

Դիմելով բաքվի այն հայ բանվորներին, որոնք առաջ խորհրդային տակ էին, Շահումյանը մասիայան հոդվածում էր. «Երկար ժամանակ դուք հետու եք եղել մեր ինտերնացիոնալ դասակարգային կազմակերպություններից։ Վշտացած լինելով տամկահայ եղբայրների ֆանտաստերի համար՝ դուք ամբողջովին զարձել էիք ազգայնական կուսակցությունների գերին և հետևում էիք նրանց քարոզին։ Վերջին տարիների ազգերազական դեպքերը ցույց տվին ձեզ, թե որքան կարճատես ու սղետարեր էր այդ կուսակցությունների քաղաքականությունը։ Այդ կուսը քաղաքականությունը «Ազատ Հայաստանի»-ի փոխարեն մեզ տվեց իրոք «Ավերված Հայաստան», ինչպես որ պետք էր նախատեսել ու նախատեսեցին իրենք՝ տարաբախտ տամկահայերը, որոնք ռուսահայ «ազատարարներին» խնդրում էին չխանգարել իրենց գործերին» (Մոգիլալ-դեմոկրատ, №1, 1 մայիսի, 1917 թ.)։ 70—80 թվականների «ազատագրական շարժման» տրամաբանական զարգացումը հանգեց այն բանին, ինչի մասին խոսում է Շահումյանը։ Հայ ժողովրդի փրկությունը ոչ թե ազգայնական շարժման մեջ էր, այլ Ռուսաստանի պրոլետարական ռեվոլյուցիայի հաղթանակի, որի մասին մարգարեաբար գրել էր Էնգելսը։ Այսպես էին նայում այդ հարցին և ռեվոլյուցիայի մեծ առաջնորդները՝ Լենինն ու Ստալինը։

Հոկտեմբերից հետո ընկեր Ստալինը «Տամկահայաստանի մասին» հոդվածում գրել է.

«Դա (Տամկահայաստանը—Ա. Ի.) այն «դրախտային անկյունն» է, որը երկար տարիներ ծառայել է (և շարունակում է ծառայել) որպես Արևմուտքի դիվանագիտական ընկաթոցը տենչերի և Արևելքի վարկական աղյուսուռ մարդանքների առարկա։ Հայերի ջարդերն ու կոտորածները, մի կողմից, բոլոր երկրների դիվանագետների փարիսեցիական «պատրաստակամությունը», որպես մի նոր ջարդի ծանրացքի, մյուս

---

1 Մարքս և Էնգելս, Երկեր, հ. XXIX, էջ 341 (ռուս.)։

քաղաքականությունը, որոնք այնպես եռանդագին պաշտպանում էին հայ ժողովրդի ազատագրության այդ ուղին։

Բայց այդ շարժման մեջ կային մարդիկ, որոնք անկեղծորեն հավատում էին ռևոլյուցիոնական կոմիտեացիաների ուժին հայ ժողովրդի ազատագրության հարցում և ամբողջովին նվիրվել էին այդ գործին։

Անցած դարի 70—80 թվերին այդ մարդկանցից էին Բաֆֆին ու Պատկանյանը։ Ճիշտ է՝ նրանք ուշ հասկացան իրենց սխալը, հեռացան ընդմիշտ մեծ տերությունների դիվանագետների խոստումներից, բայց դա շատ ուշ էր։ ազատագրական շարժման առաջին ալիքն անցել էր և տվել կսկծալի հետևանքներ։ Բայց և այնպես Բաֆֆին ու Պատկանյանը չէին հրաժարվում ռահվիրաների ազատագրության գաղափարից, անդադար մտածում էին դրա իրագործման եղանակների ու միջոցների մասին, սակայն ոչ մի կերպ չէին կարող դտնել ճիշտ ուղին։ Դա նրանց ողբերգությունն էր, և ոչ հանցանքը, նրանց քաղաքական սահմանափակության արդյունքը։

Այդ ազատագրական շարժումն ահա վճռական դեր խաղաց Բաֆֆու կյանքում։ Շարժումն ազգայնական էր և ուներ միանգամայն որոշակի դասակարգային ու տնտեսական բովանդակություն։ Մենք հետաքրքրող այդ հարցի մասին լենինը գրել է հետևյալը.

«Ի թիվս 1855, 1859, 1864, 1866, 1870, այլև 1877 թվի (ռուս-թյուրքական) և 1896—7 թվերի (Թյուրքիայի պատերազմները Հունաստանի հետ և եայլիական ճոպռվՀերը)[1] պատերազմների ժամանակվա պատմական երևույթների հիմնական օրինաչափ բովանդակությունը եղել են բուրժուական-ազգային շարժումները կամ տարբեր տևապիկ ֆեոդալիզմից ազատագրվող բուրժուական հասարակության ջանքերը...

Ժողովրդական շարժումը պատերազմից շրջափակող գրեթե երկրներում այն ժամանակ եղել է ընդհանուր դեմոկրատական, այսինքն բուրժուա-դեմոկրատական բնա իր

---

1 Ленин. Полн. с. т. 17, էջ 25—26։

---

1 Ленин. Соч. т. 8, էջ 8։

տնտեսական ու դասակարգային բովանդակություն։ Միանգամայն բնական է, որ այդ հարց այն ժամանակ չէր կարելի և դնել, բացի այն հարցից, թե ու բուրժուազիայի հաղորդությունը, նրա կոմերցիացիայի դեպքում, ռեակցիոն (բուրժուազիայի վերելքը դանդաղեցնող ֆեոդալական-միապետական) ուժերից որի անհաղորդության դեպքում խոստանում է ավելի լայն «ասպարեզ» ժամանակակից դեմոկրատիայի համար» (Լենին, հատոր XVIII, էջ 109—110)։

Լենինի այս դրույթը լուրջ է սիրում 70—90-ական թվականների հայկական ազգային շարժման օբեկտիվ բովանդակության վրա, և նրանով զինված՝ կարելի է այդ շարժման զարգացման տարբեր էտապների բովանդակությունը ճիշտ ըմբռնել ու մեկնաբանել։ Մենշևիկական ժողցուցն այդ հարցում խորտակեր է։

70—90-ական թվականների հայկական շարժումներն ուղղված էին ֆեոդալիզմի, գլխավորապես ցարական տիպի ֆեոդալիզմի դեմ, և այդ առումով պարունակում էին պրոգրեսիվ սաղմեր։ Հետագայում, երբ պատմական բեմ է դուրս գալիս պրոլետարիատը իր դասակարգային օծադրերով ու պայքարով, այն ժամանակ շարժումների օբեկտիվ բովանդակությունը և դասակարգերի փոխհարաբերությունները որոշակիորեն փոխվում է, և ազգային շարժումը բուրժուազիայի դրոշակի տակ առանում է խիստ ռեակցիոն բնույթ։ Բաֆֆու գործունեությունը համընկնում է հայկական ազգային շարժման առաջին շրջանին, երբ այն ուղղված էր ֆեոդալիզմի և նրա մնացորդների դեմ։ Ահա այդ բուրժուա-նացիոնալիստական շարժման ազգեցությամբ էլ վերջնականապես ձևավորվեց Բաֆֆու քաղաքական հայացքները, և նա գործավ Գր. Արծրունու լիբերալ-ազգայնական ուղղության արտահայտիչը Բաֆֆին ու Պատկանյանը 70—80 թվերի բուրժուա-նացիոնալիստական շարժման ամենատաղանդավոր ու ցայտուն արտահայտիչներն են։ Այդ հանգամանքի բերմամբ էլ Բաֆֆու տեսողագործության մեջ առաջացան մեծ փոփոխություններ, կարելի է ասել թեկուզ։ Դա հաստատում է և ինքը՝ Բաֆֆին, իր մի հոդվածում նա քննադատում է սեփական տեսողագործության մեջ կատարված շեղումը, որն արտահայտվել է կենցաղային վիպակներից՝ քաղաքական ծրագիր ունեցող վեպերին ու հրապարակախոսությանն անցնելուն։ «...Սկսվում է ռուս-թուրքական 77 թվի պատերազմը,— գրում է Բաֆֆին,—Տաճկաստանի Հայերի թշվառ դրության վրա ուշադրություն են դարձնում։ Թուսաց զինվորների արյունով գրվում են Սան-Ստեֆանոյի գաշնագրի 16-րդ և Բեռլինի գաշնագրի 61-րդ հոդվածները։ Խոստանում են թուրքաց Հայաստանում վերաօորոգումներ մտցնել և Հայերի համար մի լավ դրություն ստեղծել։ ...Բոլոր ինտելիգենտ Հայերի մտքերն զբաղված են այն հարցով, թե ինչպես պետք է ստեղծել այդ լավ դրությունը։ Բոլորովին անբնական կլիներ, որ մտածողությունների այդ սաստիկ մաքառումների ժամանակ, ձգտումների այդ ջերմ շարժման ժամանակ և ցանկությունների այդ ուժեղ հոսանքի ժամանակ անտարբեր մնար ազգային ռահվատեղծը։ ...Բանաստեղծը պետք է արձագանք տար ժողովրդի ձայնին, և նրա սրբազան ցանկությունները, նրա խորին զգացմունքները և նրա լացն ու արտասուքը պետք է նյութ առներ իր երգերի ու իր վեպերի։ Այդ ժամանակներում Դամատ Քաջիքյան մոդուում է իր կրամպապուրին, մոդուում է մայրաքաղաքներում կրթված աղջիկներին ու երիտասարդներին և սկսում է նրանց ծաղրել մշակների զրկանությունը։ Այդ ժամանակներում այնուր Շեքսպիրը մանում է պատմության խորքը և հնության փոշիների միջից ի լույս է ածում «Բորոս Լևոնին», «Երկունքը» և «Թեոդորոս Ռշտունին»։ Այդ ժամանակներում Բաֆֆին ծոդուում է «Հարեմներ», «Ոսկի աքաղաղներ», «Ուրախալի Միհանմետներ» և գրում է «Քաչալեդրիներ», «Աննիթը», «Բամբի Բեկը», «Ամառյա Մելիքությունները», իարգմանում է «Վարարարի Աստղտեսը» և ապա լույս ընծայում «Կայծերը»։ Այդ վեց գրքերը հայտնվում են մեկնումն տարիների ընթացքում, երբ Տաճկաստանի Հայոց մտքերը բռնկանար խանդման մեջ էին, երբ Տաճկաստանի Հայերի վիճակին զբաղեցնում էր բոլորին» (ՀՄշակ, № 148, 1889 թ.)։

Բաֆֆու այս ինքնաբնութագրմանը չի կարելի չհամաձայնել:

Ընչ իրոք. կենցաղային վիպակներից ու պատմվածքներից Բաֆֆին անցավ քաղաքական ու ծրագրային վիպերին, որոնց մեջ իր բանաստեղծական ֆանտազիայի ուժով պատկերեց ազգայնական մարտիկների կերպարներ, զրնդաց ազատագրության ուղին, ռամկական լծի տակ ճնշված ու կեղեքված հայ ժողովրդական զանգվածներին նա կոչեց զինված դիմադրության ու նկարագրեց այդպիսի դիմադրության օրինակներ: Բաֆֆին ռոմանտիկ էր և իր գաղափարական ու գրական հետևորդներին սատնծեց երևակայության ուժով: Ջուր չէ, որ նրա երբեմնի համախոհ Արծրունին բնութագրելով նրա ստեղծագործությունը, գրում էր, «...իսկ Բաֆֆիի գլուխգործոցների գլխավոր նպատակը մի ձգտում է, մի տենդոտ ցանկություն՝ ներկայացնել այն կյանքը, որ կա, բայց որը պետք է լիներ (հիշենք այսօրվա «Ազնիվ»-ի երազը), այն սիրերը, որոնք մեզանում ոչ միշտ հաճախ կան, բայց որոնց գոյությունը ցանկալի է մեր մեջ» («Մշակ», № 221, 1878):

Այն միջոցը, որ ցույց էր տալիս Բաֆֆին սահմանադրության գոյություն ունենալու համար, խախտուն էր, ավելի միջոց՝ նա ոչ մի լուրջ միջոց ցույց չէր տալիս: Իր ծրագրային վիպերում («Ջալալեդդինում», «Ննջեցյալ», «Պայծառ») ինչպես և դրանց հրապարակախոսական կոմենտարներում նա առաջարկում էր տանկատեղերին՝ զինված դիմադրություն ցույց տալ թյուրք ու քուրդ բռնապետիկներին, բայց Բաֆֆին չէր պատկերացնում և չէր կարող պատկերացնել, թե այդ դիմադրությունն ինչպե՞ս կվերջանա և ի՞նչ հետևանքներ կտա: Նա և այլ շարժման մյուս գաղափարախոսները սկսեցին քարոզել և օրինականացնել պայքարի հայդուկային ձևերով՝ ազգին հարատարերների դեմ: Վրեժ լուծել թշնամուց ի տեր վրիժառության՝ առանց կոնկրետ, պրակտիկ նպատակների, առանց ճեռնհասարների. այսպես էր ազատագրության այն ուղին, որ այն ժամանակ առաջարկում էին Բաֆֆին և մյուսները, հենվելով տանկատեղերի թրքահպատակ Ներանց աշքում հայդուկը ճնշված ազգի բուռն ոգորումների ճշմարիտ արտահայտիչն էր, նա էքզալտակատացումում էր ու հայտարարվում հեղափոխական: Հայդուկի գործունեությունը հեղափոխական բնավորություն է ստանում այս կոդմից,—գրել է Բաֆֆին «Կայծեր»-ի ենթադրած առաջաբանում,—որովհետև նա իր սրով պարտական է հանդիսանում նեղյալին և ոտնատակ է անգթաբար պատժել անիրավությունը: Իր սիրելի հայրենիքը աղատված տեսնել տերության ճնշումից, իր արյունահեղ եղբայրներին փրկել բարբարոս ձեռքից—ահա դրանք են նրա ցանկությունները: Սրանց հասնելու համար նա չէ խնայում ամեն սարսափելի միջոցներ: Մեզանում դեռ գրականությունն ուշադրություն չի դարձրել այս տեսակի երևույթների վրա... Հայդուկը և ավազակը չեն ճանաչվել մեզանում որպես պատմական անձնավորություններ, որպես հանկարծ ցայտող կայծեր ժողովրդի հանգած քաղաքական կյանքից» («Մուրճ», 1892, գիրք I, էջ 91):

Բաֆֆու այս խոսքերի ու դրույթների մեջ են ամփոփված ազգային շարժման բուն էությունն ու բնույթը, նրա գաղափարական ու քաղաքական հիմքերը: Իր քաղաքական վիպերի մեջ Բաֆֆին պատկերել է հայ հայդուկներին, օժտել է դրական գծերով ու իդեալականացրել է նրանց կերպարները: Եվ երբ որոշ ընկերներ, մանկերևարեն մոռնենալով հարցին, Բաֆֆու ռոմանտիկ ու հայդուկային կերպարների մեջ տեսնում են ազգային-ազատագրական պայքարի իսկական հերոսներ և այդ վիպերի հեղինակին էլ հռչակում են ազգային-ազատագրական-ռևոլյուցիոն շարժման ուղիներ նշող գաղափարախոս ու մարտիկ, խիստ սխալվում են: Այս խնդրում նրանք կանգնում են ազգայնական քննադատության դիրքերի վրա: Ջախոք է Բաֆֆու բարի, սուբյեկտիվ ցանկությունները նույնացնել նրա հասարակական քաղաքական հայացքների օբյեկտիվ բնույթի ու նշանակության հետ: Բաֆֆին մնձ է որպես արվեստագետ, գրող, խոշոր վարպետ, բայց ոչ որպես ազգային ազատագրության գաղափարների հեղինակ: Որպես այդպիսին, նա չափազանց փոքր

է, ժամն Բաֆֆին իր ժամանակին չկանխելով հարիշ ևլը տամկամարների ազատագրության համար, որին նա անկեղծորեն ձգտում էր, գիմում է պայքարի հայրենական ու ամազգային ձևերովների իրականացմանը, որը զուրկ էր հեռանկարներից և, որպես այդպիսին, ազատագրության ճիշտ ուղի լինել չէր կարող։ Մի՞թե դա կարելի է մեծ արժանիք համարել մի գրողի, առավել ևս քաղաքական գործչի համար։

Հայկական ազգային շարժման գաղափարախոսության մյուս քնորոշ կողմն էլ այն էր, որ նա կտրված էր Ռուսաստանի ներքին ոռզիալ-ազատագրական շարժումից։ Ազգային շարժման իրեուղները գնալով ավելի ինքնամեկուսացնում էին գնալ առևտրական անող ռևոլուցիոն շարժումը և զարձան բացարձակորեն կոնսերվատիվ։ Խոսքն այստեղ գաղնահզուրյան մասին է։ Ինքնակալության ու կապիտալիզմի դեմ պայքարող ուժերի բաժան-բաժան լինելը ձեռնտու էր ցարիզմին։ Եվ այդ տենդենցը նկատելի է դեռևս Բաֆֆու ժամանակ։ Ալս հարցում Բաֆֆին, իհարկե, «անցավորը չէ։ այդ ժամանակ բանվորական շարժումը նոր էր կազմակերպվում և պայքարն ուղղված էր ֆեոդալական ուժերի դեմ։ Սակայն այդ գաղափարախոսության սաղմերը անկասկած կային Բաֆֆու մոտ (իսկ Արծրունու մոտ ավելի շատ. սա ընդհանրապես ռուս ժողովրդության դեմ ռևոլուցիոն պայքար մղելու ջրնաձի էր)։ Հայերի դեմ սկսված ժանդարմական հալածանքների ու ձնշումների շրջանում (Հայ դպրոցների փակումը 1883 թվին) Բաֆֆին մի մասնավոր նամակում գրում է, որ տամկահայերի օգտին կատարված իրենց գործունեությունը բացահայտ էր և կառավարությունն այդ գիտեր։

«Թե ես, թե իմ համախոհները մինչև այսօր Ռուսաց կառավարության դեմ ոչինչ հանցավոր սպատակներ չենք ունեցել և երբեք ռուս նիհիլիստների[1] հետ հարաբերություններ

[1] Նիհիլիստների բնորոշ ու ժամանակ սրատնչությունը. Նրանք սյուդիս էին անվանում ռուս ռևոլուցիոն գեմոկրատներին։

չենք ունեցել։ Մեր գործունեության նպատակը, մեր ցանկությունները խիստ համեստ են եղել, և մեր ազգային պահանջների սահմանից այն կողմ չեն անցել... Ես ինչով եմ մեղավոր, որ կառավարության տրամադրությունը հայկական հարցի վերաբերմամբ փոխվել էր (ՀԱրարատ», 1913 թ., № 6—7)։

Սա հայ ազգային շարժման ծրագրային դրույթներից, գլխավոր սկզբունքներից էր։ Մեր սահմից պարզ է դառնում, թե ինչու Շահումյանը Բաֆֆուն դասում էր բուրժուական լիբերալիզմի ու նացիոնալիզմի սյուների կողքին և ինչու էր մերժում նրա քաղաքական իդեալները և ազգայնական ոտմանտիզմը։ Այնուամենայնիվ Բաֆֆին հայ բուրժուազիայի շահագրգռված գաղափարախոսը չէր. Արծրունու և Բաֆֆու միջև, չնայած այն ժամանակվա նրանց ընդհանուր դիրքերին, խոշոր տարբերություն կար, որը կառավարական ձնշումներից հետո ավելի խորացավ ու հանգեց պառակտման։ Բաֆֆին վերջին տարիներին գժտվեց Արծրունու հետ, որն ամբողջովին ցարական կառավարության կողմնակից էր, հետագալ «Շշակ»-ից և սկսեց տպագրվել ուրիշ հայ թերթերում։ Բացառված չէ, որ այդ գժտությունը սկզբունքային տարաձայնությունների հետևանք էր։ Բաֆֆին անկեղծորեն, անշահախնդրաբար էր սիրում իր ժողովրդին և չէր կարող անտարբերությամբ նայել ցարական կառավարության բարբարոս արարքներին, հայ ժողովրդի ու նրա ազգային-ազատագրական հաստատությունների դեմ ուղղված հալածանքներին։ Հայկական հարցի վերաբերմամբ կառավարության տրամադրության փոփոխությամբ անկասկած փոխվել էր և Բաֆֆու վերաբերմունքը ցարական կառավարության նկատմամբ։ Փոփոխված վերաբերմունքի հետևանք կարելի է համարել «Սամվել» պատմավեպը, որտեղ, ինչպես վերը նշեցինք, քողարկված ձևով շողոքորթված է ցարական կառավարության հայերի դեմ մղած հալածանքների հարցը։

Բաֆֆին իհարկե սրանով ռևոլուցիոներ չէր դառնում, բայց և այնպես այդ ստատուս դժգոհությունը բնորոշ է հայրենասեր վիպասանի համար, նոր գիծ է մտցնում նրա քա-

ղաքացիական հերպարանքի մեջ, և դրանով էլ նա տարբերվում է նույն ուղղության մյուս ներկայացուցիչներից։

Բայց դրանից՝ Բաֆֆին մնծ զրող էր, գեղարվեստական խոսքի մեծ վարպետ։ Նրա քաղաքական վեպերն անցած, բայց հիմնական գաղափարից, հագեցած են կենդանի պատկերով ու երևույթներով, հերոսարներով ու զգացումներով, որոնք անհամեմատ բարձր են Ալրջրուհու հրապարակախոսական մերկ մտորումներից։ Ես արդեն չեմ խոսում նրա ցողային հիանալի վիպակների ու խոր հայրենասիրական պատմավեպերի մասին, որոնք ամենևին չի կարելի նույնացնել նրա գաղափարա-քաղաքական դիրքի հետ ու հրաժարվել դրանցից, ինչպես անում էին որոշ ընկերներ։

Անհրաժեշտ է ավելացնել նաև այն խիստ մնծ դերը, որ խաղարել է Բաֆֆին հայ գրական կուլտուրայի ու լեզվի զարգացման գործում։ Վիպասան Բաֆֆին անհամեմատ բարձր է քաղաքացի Բաֆֆուց, և միանգամայն սխալ կլինի նրա ստեղծագործության բոլոր բարդ հարցերը հանգեցնել միայն նրա քաղաքական դիրքին ու, երևույթից, մերժել ողջ Բաֆֆին։ Բաֆֆու ստեղծագործությունը, գրական ժառանգությունը հարուստ է, բարդ ու հակասական. ամեն լրջորեն պետք է վերաբերվել դրան։ Այդպիսի վերաբերմունքի օրինակ է տվել Շահումյանը։ Նա մերժում ու քննադատում է Բաֆֆու գաղափարա-քաղաքական դիրքը, բայց ընդունում է նրա, ինչպես և Շիրվանզադեի, մեծ տաղանդը և ցանկություն հայտնում, որ «այդ հողը թող ավելի շատ ծնի այդպիսի տաղանդներ»։ (Ճառ Աղայանի հոբելյանի առիթով)։ Իսկ Գորկու խոհարարությամբ լուսաբանած «Հայ գրականության ժողովածուի» նվիրված հոդվածում Շահումյանը, քննադատելով հայ հասարակության վերաբերմունքը Բաֆֆուն, Պատկանյանին, Սունդուկյանին և այլոց, գրում է.

«Հայ հասարակության սիրված ու ճանաչված դրամատուրգը Սունդուկյանն է, վիպասանները՝ Բաֆֆին, Շիրվանզադեն, բանաստեղծները՝ Պատկանյան, Շահ-Ազիզ, Թումանյան և այլն։ Հետևապես հենց դրանք էլ պետք է ներկայացվեն ռուս ընթերցողին։ «Чем богаты, тем и рады ...» (Շահումյան, երկեր, հ. II, էջ 79)։ Իսկ նույն հոդվածում, մի այլ տեղ, բնչելով ժողովածուի մեջ մտած նյութերը՝ Սունդուկյանի «Պեպոն», Շիրվանզադեի «Հար ոգին» և Բաֆֆու «Չալաչեդրինը» նկատում է. «Ընդհանրապես մեզ թվում է, թե այդ վիպական և բեմական գրվածքների ընտրությունը։ Բայց այդ չենք կարող ասել բանաստեղծությունների մասին։ Լավ չեն, մեր կարծիքով, և նրանց թարգմանությունները, չնայած որ այդ թարգմանությունների մեծ մասը արել են չափազոտ խոսքի այնպիսի հմուտ վարպետներ, որպիսիք են Բալլմոնտը, Բրյուսովը և այլն»։

Ի՞նչ է հետևում Շահումյանի այս դրույթից։ Նա չէր «վախենում» հաղող ընթերցողն անվանել նույնիսկ «Չալաչեդրինի»-ի նման վիպակը (որը մի քանի վայ քննադատներ մինչև հիմա էլ համարում են նացիոնալիստական և մերժում են այն որպես այդպիսին՝ ոչ մի արժեքավոր ու դրական բան չտեսնելով դրա մեջ, բնկերը գեղարվեստական տեսակետից) և անհրաժեշտ ու տեղին էր համարում Գորկու ժողովածուի մեջ մտցնելը։ Մերժելով Բաֆֆու գաղափարա-քաղաքական դիրքը՝ Շահումյանը համարում էր նրան հայ խոշոր գրողներից և խոսքի վարպետներից մեկը, հենց դրա համար էլ գնահատում էր նրան։ Սրանումն է գաղտնիքը։ Նրան խորի էր նեղ մոտեցումը գեղարվեստական ստեղծագործությանը, նա մեխանիկորեն ու մակերեսայնորեն չէր նույնացնում գրողի ստեղծագործությունը նրա քաղաքական ծրագրի հետ։ Շահումյանի վերաբերմունքը Բաֆֆուն շատ հողմեղով հիշեցնում է Լենինի վերաբերմունքը Տուրգենևին։

Նկա մի դիտողություն, որը վերաբերում է Բաֆֆու նացիոնալիզմին։ Նրան, որպես հայերի վերջնականապես ազգ ձևավորվելու շրջանի ազգային ղարժման գաղափարախոսի, իրոք հատուկ էր նացիոնալիզմը։ Նրա բուռն հայրենասիրության մեջ կա ռեակցիոն նացիոնալիզմի մեծ տարր։ Բայց, ինչպես ասացինք, նրա գեղարվեստական գործերը, նույնիսկ ըստ տրադիցիայի ազգայնական համարվողները, լի

են հակասություններով և բազմաթիվ դրական կողմերով, ամենից որ չի կարելի բոլոր հարցերը հանգեցնել ռեակցիոն նացիոնալիզմին՝ չնկատելով հեղինակի սերը դեպի իր ժողովուրդը։ Բաֆֆին միշտ է հակացել հայ ժողովրդի խոր հայրենասիրությունը, երբ դեռ 1867 թվին գրել է, «Մի բան կա, որ կարող է հոգով, մտքով ու սրտով համախմբել բոլոր հայերին աշխարհի բոլոր կողմերից, դա ազգի սերն է» (ՀԱԼԵՔ», էջ 42)։

Չբննարկելով և չուզենալով քննարկել այս բարդ հանգամանքները՝ որոշ ընկերներ սխալմամբ ամբողջովին մերժում էին Բաֆֆու գեղարվեստական ժառանգությունը։

Ըստ իս սրանով արդարանում է այն փաստը, որ այնքան հանգամանորեն ես չանցանք լուսաբանել՝ Բաֆֆու հարցը, նրա գաղափարա-քաղաքական դիրքն ու գեղարվեստական ժառանգությունը։ Այս դրույթները հետաքրքրական են և երանով, որ վերաբերում են և մյուս հայ կլասիկներին, նախ և առաջ բանաստեղծ Ռ. Պատկանյանին։ Նրանք սիզբունքային նշանակություն ունեն ամբողջ հայ գրականության պատմության ուսումնասիրության համար։ Ռափայել Պատկանյանն էլ կրակոտ ատակ էր, արժանացել է նույն բախտին, ինչ Բաֆֆին։ Հարցը մանավորապես այնում է, որ Շիշա է, Պատկանյանին էլ Բաֆֆու նման, որպես հայ բուրժուական ազգային շարժման դիրքերն անցած բանաստեղծի՝ հատուկ էին նացիոնալիստական հայացքներ։ Սակայն Պատկանյանի հարուստ ժառանգությունը նախ՝ չի կարելի սահմանափակել այն երգերով, որոնց մեջ արտահայտված են նրա նացիոնալիստական հայացքները, քանի որ նա ունի բազմաթիվ տարանդավոր պատմվածքներ, ժողովրդական կյանքից առնված բանաստեղծություններ ու երգիծական էջեր։ Երկրորդ՝ պետք է վերանայել այն բանաստեղծությունները, որոնք արտդեցությով ազգայնական են համարվում ու այդ պատճառով մերժվում։ Մինչդեռ դրանցից շատերը ոչ մի ընդհանրություն չունեն նացիոնալիզմի հետ, այլ նախ և առաջ արտահայտում են բանաստեղծի հայրենասիրությունը, խոհերն ու կսկիծը իր հայրենիքի ծանր վիճակի մասին։ Որինակի համար՝ հիշենք «Արաքսի արտասուքը», որ ամբողջ ժողովրդականացած է հայ ընթերցողների մեջ։ Գորկու կազմած ժողովածուի մասին գրած հոդվածում Շահումյանը, ինչպես տեսանք, Պատկանյանին համարում է հայ հասարակության «սիրված ու ճանաչված» բանաստեղծներից մեկը և ավելացնում է. «Շատ ավելի լավ ընթերցողն կարելի էր անել մանավանդ ասելս Հովհ. Թումանյանից և Պատկանյանից, որոնց բանաստեղծությունները, բացի այլ, շատ են կարդրել բարդմանությունների մեջ, մանավանդ «Արաքսի արտասուքը»։ Ականավոր բոլշևիկ և հայ նացիոնալիզմի դեմ անողոքարար մարտնչող Ստեփան Շահումյանը, որին քաջ հայտնի էին Պատկանյանի հայացքները, այնուամենայնիվ անհրաժեշտ է համարել դրական կարծիք հայտնել նրա այդ նշանավոր բանաստեղծության մասին՝ ոչ մի պախարակելի բան չտեսնելով դրա մեջ։ Ընդհակառակը՝ ցանկացել է, որ դա լավ բարդմանվի։ Այս փաստը խիստ պերճախոս է։ Վաղուց է, որ կային Պատկանյանին մեղադրանքներ ու հայտնիզիզմի երդիկ համարողներ, որոնք չէին հրատարակում նրա երկերը, դասագրքերից հանում էին նրա բանաստեղծությունները, մանավանդ «Արաքսի արտասուքը»։ Իրականում այդ բանաստեղծությունը հայրսիայնի երգ կարող է համարել բլիաթա ոտնաց, կին ոչ ավելին, որը չի ընդունում, թե էլեմենտները կարող են հայրենասիրական զգացմունքներ ուենենալ։

Արաքսն այսանդ Հայաստանի սիմվոլն է։ Արաքսի արտասուքը բազմաչարչար Հայաստանի արցունքներն են։ Զանազան հարցերով դիմելով Արաքսին՝ գրուցակիցն ասում է.

Ինչո՞ւ արցունք ցայտում են
Քու սեր, հզպարտ աչերից,
Ինչո՞ւ արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից։

Արաքսը բացատրում է իր վշտի պատճառը և ի վերջո վճռականապես հայտարարում.

Մինչ քո օրերը, ո՛վ գիտե,
Ծարավ, նոքին, անհետուն
Օտար ափերը հասուծ են
Թույլ օրերով կիսալուսնիդ...

. . . . . .

Քանի որ քո զավակնե
Այսպես կու մնան պանդուխտ՝
Ինձ միշտ սպասիր կամաներ,
Այս է անխոտ քո սուրբ ոսկոր...

Էլ վնասից Աբաթոր,
Հարմանը սվից ահագին,
Օրագ օրագ օձի պես
Առաջ սողաց մոլեգին։

Այս տագնապավոր բանաստեղծության մեջ, ինչպես տեսնում է ընթերցողը, այնպիսի գաղափարների բան չկա, որը վիրավորեր զրական «քննադատների» փիլոսոփայական լիամտական զգացումները։ Մանրադիտակով զինված մարդիկ այս բանաստեղծության մեջ կարող են, իհարկե, նացիոնալիզմի տարրեր նկատել, բայց ամեն մի բանիմաց ընթերցող կնկատի, որ բանաստեղծության հիմնական կսկիծն է, սերը ու ողջը հայրենի երկրի ու ժողովրդի անտանելի դրության մասին և առելությունը զեպի ըշնամիները։ Կարո՞ղ է այս ու նման բանաստեղծությունները հայ ազգայնամոլական-հայդուկային, անվանարկել դրանք և ոչ մի զրական ու արժեքավոր բան չտանել նրանց մեջ։ Պետք է վերջապես հասկանալ, որ Գառնիկյանի, Բաֆֆու և առաջ ընկած ժողովրդի ծյուռ կլասիկների հայրենասիրական զգացմունքը և օտարներին չծին դիմադրելու ձգտումը հանդես էին գալիս նացիոնալիզմի ձևով, և ոչ մի սարսափելի բան չկա դրա մեջ։ «Ազգի ինքնորոշվելու իրավունքի մասին» հոդվածում Լենինը ասում է. «Ընդված ազգի ամեն մի բուրժուական նացիոնալիզմի մեջ կա ընդհանուր դեմոկրատական բովանդակություն ընդդեմ այդ բովանդակության էլ մենք անպայման պայքարում ենք՝ խստորեն առանձնացնելով իր ազգային բացառիկությունը, պայքարելով հրեական ընդհանուր չհ բուրժուազիի ձգտման զեմ և այլն, և այլն (հ. XVII, էջ 440)։

Երևելով լենինյան այս դրույթից՝ մենք կարող ենք միշտ յուծել մեզ հետաքրքրող հարցը։ Գառնիկյանի, Բաֆֆու և մյուս հայ կլասիկների նացիոնալիզմի մեջ արտահայտված են ոչ միայն ռևանշիզմի հայացքներ, իրենց ազգային բացառիկությունի ձգտում, այլ ժողովուրդների վրա առավելության ձեռք բերելու ձգտում և այլն, այլև այդ նացիոնալիզմի մեջ արտահայտված է՝ երևելիորեն դեմոկրատական բովանդակությունն ընդդեմ իր ժողովրդի ճնշման, և այդ բովանդակությունը մենք պետք է գնահատենք որպես դրական երևույթ, որպես ժողովրդական զանգվածների ազդեցության արտացոլում՝ նրանց ստեղծագործության մեջ։ Դա իհարկե ոչ մի հիմք չի տալիս հայտարարելու Բաֆֆուն ու Գառնիկյանին ռևոլուցիոն դեմոկրատներ, ազգային ազատագրական գաղափարների ջահակիրներ, ինչպես զրել են ոմանք։ Սա նշանակում է միայն, որ պետք է տարբերել նրանց ստեղծագործության դրական ու բացասական կողմերը, քննադատաբար մոտենալ նրանց ժառանգությանը։ Ահա թե ինչը չեն հասկանում կամ չեն ուզում հասկանալ մի քանի վաղ քննադատներ ու պատմաբաններ։

IV

Մյուս հայ դրողներից Շահումյանը ավելի հանգամանորեն խոսում է Ղազարոս Աղայանի մասին։ Բանաստեղծ, արձակագիր, հրապարակախոս ու մանկավարժ Աղայանը հայ դեմոկրատական ինտելիգենցիայի փայլուն ներկայացուցիչներից մեկն է։ Դուրս գալով ժողովրդի ծոցից՝ Աղայանն իր բազմազան ընդունակությունների շնորհիվ դառնում է, Թումանյանի ու Իսահակյանի հետ, հայ ժողովրդի սիրված դրողներից ու հասարակական գործիչ-մանկավարժներից մեկը։ Նա նախամարքսիստական հայ ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչներից է։ Աղայանը ռևոլուցիոներ չէր,

բայց զեմոկրատ էր, ժողովրդասեր ու հայրենասեր։ Շահումյանը Ազայանի գրական-հասարակական գործունեության 40-ամյակի առիթով գրած հոբելյանական հատուկ բարձր գնահատելով նրա անձնական բարեմասնությունները, նրա մեծ ծառայությունը լուսավորության տարածելու գործում՝ հակադրում է նրան հայ բուրժուական ինտելիգենցիային։ Այդ հոդվ սկզբում Շահումյանն ասում է.

«Ես ողջունում եմ ձեզ այն փոքրամասնության անունից, որը հնարավորություն է ունեցել ծանոթանալու հայկական կյանքի ու գրականության հետ և այսօր գոնե քիչ թե շատ գիտե թե ո՛վ է, ի՛նչ ծարդ է և ի՛նչ տեսակ գրող է Ղազարոս Ագայանը։ Ապա գնահատելով հոբելյանի հասարակա-քաղաքական մեծ նշանակությունը Ազայանի կյանքում՝ այնուամենայնիվ Շահումյանը նկատում է, որ հոբելյանում ներկա չէ այն զեմոկրատական սերունդը, որը կրթվել է Ազայանի գործերով ու կազմած դասագրքերով. «Ինչո՞ւ այս րոպեիս ես չկա այստեղ, ինչո՞ւ ես մի առնում ձեր հոբելյանը, այլ ինչ-որ մեր խոսքը հարգողներ, որոնցից շատերը ձեր գրվածքների նրման էլ չեն տեսել երեխ, որոնք զուցե նույնիսկ հայերեն չգիտեն բոլորովին։ Ի՞նչ կապ կա, ասացեք խնդրեմ (կամ ավելի ճիշտ է ասել, ինչու պետք է լինի այդ կապը) իր ծարտեով, տարաձայով ու անցյալով զեմոկրատ Ազայանի և այդ բուրժուական ինտելիգենցիայի մեջ... Այս հանդիսավոր, նիհ ուշում ես, մի խոր հասարակական արարքի է պատրաստվում իր մեջ։

Շահումյանն իրեն հատուկ հատկությամբ բացատրել է զեմոկրատական ինտելիգենցիայի հակասական ու ողբերգական վիճակը բուրժուական հասարակության մեջ։

Մեծ է Ազայանի արժանիքը հայ գրականության զարգացման ու լուսավորության տարածման գործում։ Նա կարկառուն կուլտուրտրեգեր էր։ Նրա ստեղծագործությունն ամբողջովին համակված է զեմոկրատական ոգով ու իր արմատներով կապված է ժողովրդին ու նրա ստեղծագործությանը։

Շահումյանը բնութագրելով Ազայանին որպես կուլտուրա-տրեգերյան տիպի գործիչ՝ ճանաչում է, որ հոբելյանական հանդեսն ամառվա հնարավոր չէ լուսաբանել ու բնութագրել նրա գործունեության տարբեր կողմերը. «Մենք գիտենք միայն, որ դուք չնորհով գրող եք եղել իրրև բանաստեղծ, հեքիաթասաց ու վիպասան, օրինակելի մանկավարժ եք եղել (հայերես մեջ, ֆարսին, օրինակելի), իրրև դասագրքեր կազմող, ուսուցիչ, տնօրեն և այլն։ Գիտենք, որ ձեր մարդուր բարոյական կյանքով լավ օրինակ եք եղել ձեր ընկերների ու աշակերտների համար, և ամենքի մեջ, ում հետ շփվել եք, զարթնեցրել եք ամենալավ զգացմունքները, ներշնչել եք ամենամարդուր ձգտումները։ Այսպես բարձր էր գնահատում Ազայանին երիտասարդ Շահումյանը, և այդ գնահատականին չի կարելի չհամաձայնել։

Բայց սա հարցի մեկ կողմն է։ Շահումյանը խիստ քննադատության է ենթարկում Ազայանի և ընդհանրապես, հայ ինտելիգենցիայի քաղաքական չափավոր դիրքը։ «Մենք հարցում ենք ձեզ, երբ քննում ենք ձեր կյանքը հայկական իրականության ֆոնի վրա, երբ համեմատում ենք ձեզ ձեր ժամանակակից «հայկական գործիչների» հետ»,—ասում էր երիտասարդ ուսուցիչները Ազայանին։

Բուրժուական ինտելիգենցիան ամեն մի քայլափոխին ցույց է տալիս իր կենսիքը, ոգիությունն ու ստրակմությունը։ Շահումյանն Ազայանին առանձնացնում է այդ ինտելիգենցիայից, բայց անդուլդիները չի համարում։ Չնայած իր բացառիկ տաղանդին՝ Ազայանը չէր կարողանում հասկանալ իր ժամանակի հիմնական պահանջները և միևնույն վերչին ղանչը նվիրվեց այդ պահանջների կատարմանը։ «Այդ պետք է բացատրել, երևի, բացի հասարակագիտական պատրաստականության բացակայությունից, կամ պակասությունից, նաև ձեր տաղանդի բնավորությամբ, ձեր տեսակրաժնեսով։ Դուք ավելի զգացմունքի մարդ եք, քան մտքի, ավելի բանաստեղծ եք, քան հրապարակախոս ու հասարակական գործիչ։ Դուք էլ, իհարկե, կռվող չեք եղել, պ. Ազա-

յան։ Դուք ապրել եք Ռուսաստանում, հպատակ եք եղել ամենավայրենի բռնակալություններից մեկին և փոխանակ զոհրերելու, քաղաքական-հեղափոխական կռվին նվիրելու ձեր ուժերը, ձեր տաղանդը, դուք հայկական ապեցիթիկ «ազգասիրությամբ» եք պատռել ձեր սիրտը կյանքում։ Այդ պատճառով մենք հարգում ենք ձեզ, որպես անձնավորության, բայց որպես հասարակական գործիչ՝ դուք օրինակ չեք մեզ համար։

Այս պլանով է բնութագրում Աղայանի և այլ գործիչների քննադատությունը։ Երբ խոսքը գալիս է քաղաքացիականության՝ Շահումյանը մեծ նշանակություն չի տալիս կուլտուր-տրեգերության։ Կուլտ-կրթական աշխատանքը չի կարող ցանկալի արդյունքներ տալ, եթե չզուգված մնա ինքնորոշման հարցը՝ քաղաքական ազատության հարցը։ «Մի երկրում, որտեղ չկա քաղաքական ազատություն, չկա ազատ խոսք, մամուլ, որտեղ օրենքի տեր բռնությունն ու կամայականությունն է տիրում,—այնտեղ կուլտուրական գործունեությունն այն չինությունն է, որ կառուցվում է ավազի վրա»։ Եվ իբրև օրինակ Շահումյանը հիշում է հայկական դպրոցների փակումը. «Ոչ, այն, ինչ որ դուք և ձեր ընկերները մեծ զոհաբերություններով կարողացել եք անել երկար տարիների ընթացքում, մի հարվածով, գրչի մի շարժումով, վայրենի անպատիժությամբ ոչնչացրեց լուսավորության և քաղաքակրթության հիմնաքարն»։

Ելնելով ռևոլուցիոն աշխատությունից՝ Շահումյանը կոչ է անում գրչի ու կուլտուրայի գործիչներին նվիրվել քաղաքական պայքարին։ Միայն քաղաքական ազատության պայմաններում կարելի է ծավալել իսկական կուլտ-կրթական ու գրական գործունեություն։ Քննադատելով Աղայանին նրա շփոթմունքի համար՝ Շահումյանը նրա օրինակով քրննադատում է այն հայ ինտելիգենտներին, որոնք հեռու են մնում գյուղական ինքնակալությունից դեմ մղվող քաղաքական պայքարից։ Շահումյանի ճառի ամեն մի տողը տոգորված է խոր կրքով՝ Հայ ժողովրդին ու երիտասարդությունը սթոք է ռևոլուցիոն դասակարգակցություն տալ։ Աղայանն ու նրա ընկերները, չնայած իրենց մատուցած ծառայություններին, չեն կարող նոր սերնդի համար օրինակ լինել, վերջինս մարքսիստական աշխարհայացքի կրողն է ու պրոլետարական ռևոլուցիայի ջերմ կողմնակից։ «Եվ այսօր, ձեր այս հանդիսավոր տոնին, ցավում ենք, որ չենք կարող խոստանալ ձեզ, որ կշարունակենք ձեր սկսած գործը, սրբությամբ կպահենք ձեր ավանդը և այլն... մեր ճանապարհները տարբեր են»,—հայտարարում է հայ երիտասարդության ռևոլուցիոն սերնդի ներկայացուցիչը։

Երիտասարդ մարքսիստի այս խոսքերը համակված են պատմական իմաստով։ Հայ դեմոկրատական ինտելիգենցիայի մեծ մասը պրոլետարական ռևոլուցիայի ուղիով չգնաց, կամ եվիրվեց կուլտ-կրթական գործունեության, կամ ընկավ բուրժուա-նացիոնալիստական պարտիաների ազդեցության տակ ու դարձավ նրանց գործիքը։ Շահումյանի ճառը նրա քաղաքական ու քննադատական հասունության արգասիքն է։ Այդ ճառի մեջ նա քաղաքական ու գրական բազմաթիվ կարևոր հարցեր է դրել։ Երիտասարդ Շահումյանը ձիշտ է դնահատել Աղայանին՝ բնորոշելով որպես դեմոկրատ գրողի։ Աղայանի կյանքի ու գործունեության նոր հետազոտությունները լիովին հաստատում են այդ գնահատականի ձշտությունը։

Աղայանից առավել խիստ խոսք է ասում Շահումյանը արձակագիր Վրթանես Փափազյանի մասին։ Ձիշտ է, այդ խոսքը գերազանցապես վերաբերում է Փափազյանի պատմական հայացքների քննադատությանը, բայց և այնպես, Հենց այդ հոդվածում նշվում է այն փաստը, որ Փափազյանը դեմոկրատ գրող է և իր պատմական բրոշյուրների մեջ հակասությամբ մեջ է ընկնում իր դեմոկրատական հայացքների հետ, հանդես գալով որպես տրադիցիոն պատմագրության արտահայտիչ։ Եվ հենց դրա համար էլ նա արժանանում է Շահումյանի խիստ որակումներին։

Բացահայտելով «Պատմության դրվագներում» տեղ

զած հակասությունները, Շահումյանը մանանեխում է, որ դրանք արհեստական են, չինծու։ Եվ ինծու ոչ այն մարդուն, որ Ս. Փափազյանը գիտակցաբար կեղծում է, իրեն ձեռնտու է ժողովրդի բարեկամ, և իրոք բարեկամ չէ։ Ոչ, այլ այն մարդուն, որ այդ տողերը հակասում են նրա գրածների ընդհանուր բովանդակությանը և բնավորությանը, չեն սերտում այն պատմական մեծածողության հետ, որի ազդեցության տակ, դուրս հակասակ իր ցանկության, գոհվում է ամբողջովին Ս. Փափազյանը։

Փափազյանի պատմական բոլոր հերոսների մեջ եղած այդ հակասությունը, դեմոկրատիզմի արտահայտությունները մարքսիստ քննադատը կապում է 1905 թվի ռևոլյուցիայի ազդեցության հետ։ «Պետք է խոստովանել սակայն, որ Փափազյանի ազնվարհայացքի մեջ մի որոշ անհարթություն, մի որոշ վեղի, համենայն դեպս, կա,—գրում է այդ առիթով Շահումյանը։ Երբ կարդում եք Ե. Թոփչյանի սրանից 10 տարի առաջ գրած պատմական հեքիաթները, դուք անհնազանդ եք, որ նրա մեջ չկան կասկածներ, հակասություններ։ Նա ամբողջ հոգով ներքաշվում է իր սիրելի «Մեծ Ներսես», հայոց ազգի այդ «պահապան հրեշտակի» հոգու հետ։ Բայց պ. Փափազյանը գրում է 1905—6 թվականների դեպքերից հետո, և զարմանալի չէ, որ մի որոշ, բնական չափով հետ թողել են այդ դեպքերը նրա հոգում։ Այդ դեպքերը մեռելներին անգամ պետք է ցնցեին ու սթափեցնեին գերեզմանների մեջ...»։ Այսպիսի հարցադրումը մեթոդոլոգիական խոշոր նշանակություն ունի և հօդվի տասնամյակ հետո հայ գրականության մեջ և առանձին գրողների մոտ արտահայտվող դեմոկրատական տրամադրությունների պատճառները, հիմքերը։ Մի այլ տեղ, դարձյալ անդրադառնալով Փափազյանի հակասություններին՝ քննադատ ասում է, «Հանկարծ և անսպասելի կերպով պ. Փափազյանի մեջ ներքնատը ապրատամբում է Իրիտոնյայի դեմ, տարակուսանքի մեջ դնելով ընթերցողներին։ Բայց պ. Փափազյանի տողերը հետիոտությամբ նկրված՝ այնքան գեղեցիկ են ինքնըստինքյան, անկախ նրանց ծնեցրած տարակուսանքներից և իյուրիմացություններից, որ մենք ցույլ ենք տալիս մեզ ամբողջովին առաջ բերել դրանք»։

Այդ հատվածը, որ մեջ է բերում Շահումյանը, ցույց է տալիս քննադատի էմոցիոնալական բարձր ճաշակը, թե ինչպես նա կարողանում է տարբերել լավը, գեղեցիկը, զգալ այդ բոլորը և իր զգացածը հաղորդել ընթերցողներին, բարձր գնահատել խոսքի, արվեստի վարպետությունը, կատարելությունը։ Ամփոփելով իր տպավորությունները այդ հատվածի մասին՝ Շահումյանը գրում է.

«Զգուշանում ենք, այդ տողերը՝ առանձին վերցրած՝ մեծ հմայք ու հիացմունք են առաջացնում մեր մեջ։ Այնքան գեղեցիկ էջեր շատ քիչ են պատահում մեր գրականության մեջ։ Մարդ մի րոպե տրամադրվում է շատ բան նեղրելու պ. Փափազյանին։ Նրա մեջ ապրում է, ըստ երևույթին, առողջ, գեղարվեստական, հեղինակային, էկզոմոնիատական ոգին, որ կրկին ըմբոստանում է նույն Փափազյանի մեջ ապրող, մոդ ների մեզ այս կոպիտ խոսքը՝ սիրացուի դեմ։ Թևև ավա՛զ, հաղիողը, իշխողը, սիրապետողը այդ անիրավ սիրացուն է»։

Քննադատի այս գնահատականը անմասնած վերաբերում է Փափազյանի «պատմական» բոլոր հերոսներին, և ոչ նրա ստեղծագործությանն ընդհանրապես։ Վերջիններիս մասին քննադատի հոդվածում կան առանձին, բայց արժեքավոր հիշատակություններ։ Նա ցավով է նշում, որ Փափազյանը գիտել է գեղեցիկ գրականությունը և «պատմական դասեր» դրականորելով իր «առնականի ու սրիմիտիվ» աշխարհայացքը, մանավանդ իր պատմափիլիսոփայությունը։

Քննադատը դարձ խոսքեր է ասում «Հայոց անուն հանած գրագանագետ»ի մասին՝ նման պատմական բոլոր գրելու ատիճով և իրավացի է այդ խստության մեջ։

Ընդհանրապես գրողների մասին հայտնած իր կարծիքների ու գնահատականների մեջ Շահումյանը ցույց է տալիս ոչ միայն քաղաքական ու սոցիոլոգիական հանճնողության,

այլև գեղարվեստական, էսթետիկական խորաթափանցությունն՝ նրանց առևծագործությունը գնահատելիս։ Օժտված լինելով այդ մեծ ձիրքով՝ նա ձիշտ է որոշել Հովհ. Թումանյանի ու Ավ. Իսահակյանի տեղը՝ առանձնացնելով նրանց հայ բանաստեղծների խմբից, որոնք նեկրասովի խոսքերով ասած՝ «երկրորդական տաղանդներ են»։

Գործ. ղեկավարությամբ հրատարակված «Հայ գրականության ժողովածուին» վերաբերվող հոդվածում Շահումյանը քննադատում է նրա կազմողներին, որոնք ժողովածուի մեջ տեղ չեն տվել պրոլետարական բանաստեղծ Հակոբ Հակոբյանին։ Այս առիթով Շահումյանը գրում է.

«Քարոզվածված բանաստեղծների ցանկը նայելիս մեր մեջ հարց է ծագում. ինչո՞ւ չկա նրանց մեջում Հակոբ Հակոբյանը։ Գուցե խմբագիրները մեծ կարծիք չունենալով նրա բանաստեղծական տաղանդի մասին, արժանի չեն համարել հիշել նրան հայկական Պառնասում։ Ի դեպ։ Նախ բանաստեղծ ասածդ շատ առածգական կամ համեմատական հասկացողություն է։ Բեմն մեզ հարցնենք, ժողովածուի մեջ բերած բանաստեղծներից իսկական բանաստեղծ կարելի է համարել միայն Հովհ. Թումանյանին և Ավ. Իսահակյանին։ Իսկ երբ մենք դառնում ենք նրանց օրինակ, Գուշիինին կամ Հայնեին կարդալուց հետո, նրանք էլ շատ են փորքանում մեր աչքում։ Տաղանդավոր Թումանյանը այնքան փոքր է ինում Գուշիինից, որքան հայ ազգը փոքր է ռուս ազգից։ Ինչ վերաբերում է Շահ-Ազիզին, Ալ. Ծատուրյանին, Հովհ. Հովհաննիսյաններին, նրանք մեր կարծիքով բանաստեղծներ չեն, այլ ոտանավոր դրողներ։

Եվ սակայն նրանք տեղ են գտել ժողովածուի մեջ, որ միանգամայն հասկանալի է և արդարացի։ Վ. Տերյանին չեն հանձնարարել իր ձաշակի մի զեղեցիկ ծաղիկքաղ անել հայ բանաստեղծներից, այլ ներկայացնել արդի հայ զեղեցիկ դրականությունը այնպես, ինչպես որ կա կամ (Շահումյան, Երկեր. հ. II, էջ 79)։

Թումանյանի բանաստեղծական համեմատությունը Գուշիինի հետ՝ չի փոխում հարցի էությունը։ Շահումյանն արդարացի կերպով Թումանյանին ու Իսահակյանին առանձնացնում է հայ բանաստեղծների խմբում։ Այստեղ երևան է գալիս Շահումյանի գեղարվեստա-քննադատական խորաթափանցությունը, մեծ տաղանդները փոքրերից զատելու և ըստ ամենի էլ նրանց նշանակությունը գնահատելու հմտությունը։ Շահումյանի այն խոսքը, թե Շահ-Ազիզը, Ծատուրյանը, Հովհ. Հովհաննիսյանը բանաստեղծներ չեն, այլ ոտանավոր դրողներ, խիստ ու կարծես թե անարդար է. կարելի է այս հարցում չհամաձայնել Շահումյանի հետ, առարկել նրան ու ասել.—Այո, իհարկե, նրանք մեծ բանաստեղծներ չեն, ինչպես հիմա որոշ քննադատներ մեծարում են նրանց, մեծ տաղանդներ չեն, բայց անկասկած բանաստեղծներ են՝ որոշ չնորհքով։—Բայց պետք է հասկանալ Շահումյանին. ինչպես տեսանք՝ նա չի ժխտում նրանց նշանակությունը հայ պոեզիայում և ձիշտ է գնահատում, բայց խիստ է արտահայտվում նրանց բանաստեղծական չնորհքի մասին։ Ինչո՞ւ բացատրել դա։ Նախ դա վկայում է, որ Շահումյանը խստապահանջ է բանաստեղծների և բանաստեղծության նկատմամբ, ապա՝ այդ կարծիքի մեջ բանավճեի չնչա կա։ Եվ իրոք, պրոլետարական բանաստեղծ Հ. Հակոբյանը, որին մենք հետո կանդրադառնանք, իր չնորհքով ամենևին չի պիտում վերոհիշյալ բանաստեղծներին, որոնք այնուամենայնիվ տեղ են գտավել ժողովածուի մեջ, իսկ Հակոբյանը՝ ոչ։ Շահումյանի խիստ մոտեցումը մասամբ էլ բացատրվում է այս բանավիճային բնույթով։ Իսկ Շահումյանի հիմնական դրույթները միանգամայն արդարացի են։ Թումանյանի ու Իսահակյանի համեմատությամբ մնացած հայ բանաստեղծները երևում են այնպես, ինչպես մյուս ռուս բանաստեղծները Գուշիինի կամ Վերհոնոսովի համեմատությամբ։

Հայ կլասիկներից Շահումյանն առանձնապես սիրում էր Հ. Թումանյանին, բարձր էր գնահատում նրա պոեզիան, որը Վ. Բրյուսովի ձիրքո արտահայտությամբ՝ «հայ կյանքի համապիտարան» է։ Հայ բանաստեղծներից ու վիպասաններից

ոչ մեկը ժողովրդական կյանքն ամբողջ խորությամբ ու լայնությամբ չի ցուցց տվել իր ստեղծագործության մեջ, ինչպես Թումանյանն է արել։ Շահումյանը բանի էր գնահատում Թումանյանին և խիստ ցավում էր, որ նա լավ չի ներկայացված ժողովածուի մեջ, թարգմանություններն էլ բարձրորակ չեն։ «Այդ կողմից տուժել են և Սունդուկյանի «Պեպոն» և Հովհ. Թումանյանի գողտրիկ պատմվածք «Ինքդրը»։ Բայց այստեղ չի կարելի մեղադրել թարգմանիչներին, որովհետև անկարելի է նույնիսկ մոտավոր հարազատությամբ թարգմանել Սունդուկյանի կոլորիտավոր գործի լեզուն և Թումանյանի գրչի տակ այնքան ճկուն ու արտահայտիչ լռուռ բարբառը։ Այս տողերից երևում է, թե ի՜նչ սիրով է խոսում Շահումյանը Թումանյանի մասին ու որքա՜ն բարձր է գնահատում նրա ստեղծագործությունը։ Այս վերաբերմունքի արտահայտություն կարող է լինել այն փաստը, որ Շահումյանը ուսանողական տարիներին ռուսերեն է թարգմանել Թումանյանի լավ պատմվածքներից մեկը՝ «Աղքատի պատիվը» և տպագրել Նովոյե օբոզրենիե» մեջ, ինչպես և օգտագործել է Թումանյանի ստեղծագործությունը իր քաղաքական հակառակորդների՝ հայ ազգայնականների դեմ։

Սրանով վերջանում են Շահումյանի ասույթները հայ հյուսիսի գրականության մասին։

V

Ընթերցողը կարող է մեր ընդհանուր շարադրանքներից անգամ նկատել այն կարևոր պրոբլեմներն ու խորհրդատա գնահատականները, որ պարունակում է Շահումյանի գրական-հրապարակախոսական ժառանգությունը։ Այդ կարևոր հարցերից մեկին անկասկած հայ պրոլետարական գրականության հարցն է։ Մենք արդեն դիտենք, որ Շահումյանը, ելնելով մարքս-լենինյան արտացոլման տեսությունից, օրինաչափ էր համարում պրոլետարական գրականության զարգացումը կապիտալիզմի օրոք որպես բանվոր դասակարգի պայքարի ու ճնշումների գեղարվեստական արտահայտություն։ Այս տեսակետից էլ նա դիտում էր պրոլետարական մեծ գրող Մ. Գորկու ստեղծագործությունը, այդ նույն գիրքից էլ նա գնահատում էր Հակոբ Հակոբյանի պոեզիան։

Պրոլետարական գրականությունը բանվորական հեղուշման չարժման ծնունդն էր։ Այդ շրջանում երկու հիմնական գաղափարներ՝ պրոլետարիատի ու բուրժուազիայի, պայքար որոշեց հասարակական մարդ ու հոսանքների զարգացման հետագա ընթացքը հայ իրականության մեջ, որոշեց և հայ գրականության զարգացման ուղիները։

Բուրժուական ու նահապետական գրականության կոզքին արդեն ներկա դարի սկզբին, 1905 թվի ռևոլուցիայի փոթորիկների մեջ ծնվում ու ձևավորվում էր հայ պրոլետարական գրականությունն ու գրական չարժումը։ Այդ նոր ուղղության հիմնադիրը հայ գրականության մեջ և նրա ամենամեծ ներկայացուցիչը Հակոբ Հակոբյանն էր։ Պրոլետարական հայ գրականության ծագումն ու զարգացումը սերտորեն կապված է անդրկովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների գործունեության հետ։ Պրոլետարիատի աղատագրական չարժումը բարերար ազդեցություն գործեց ընդհանրապես հայ գրականության զարգացման վրա։ Հայ բանաստեղծներից ու գրողներից շատերը իրենց գործունեության առաջին շրջաններում գտնվում էին բանվորական չարժման և պրոլետարական գաղափարախոսության ու գրականության ուժեղ ազդեցության տակ։ Այդ տեսակետից հանդիսական է Գորկու ստեղծագործության գերը։ Հայ գրողներից շատերը Գորկու մեջ տեսնում էին իրենց գրական առաջնորդին ու պաշտպանում նրա քաղաքական կուրսերը կապիտալիզմի դեմ, մինչդեռ բուրժուական մամուլը քիչ կենտրոնում, քիչ Անդրկովկասում կազմակերպում էր

«պրոլետարական գրականության ղեկավարման» մասին[1]։

Ես նկատի ունեմ նախ Վրթ. Փափազյանի նյութերը, Երիվանդազատի գրագրությունը Գորկու հետ, նրա գրախոսականը Գորկու «Մանկությանը» վերաբերյալ և այլն։ Այլևս չեմ խոսում Հակոբ Հակոբյանի մասին, որին անվանում էին մեզ մեջ «հայկական Գորկի», մեզ մոտ «հայկական Վերհառնը»,

Նկատի ունենալով այս հանգամանքը՝ լուսավարակին Հ. Հակոբյանի բանաստեղծություններն ուսանքեն ժողովածուի նախաբանում գրել է. «Հակոբ Հակոբյանն իրոց ընտանուր շատ բան ունի Վերհառնի հետ։ Անգամ Հակոբ Հակոբյանի ձևը համապատասխանում է այն ազատ չափածոյին, որը գերազանում էր Վերհառնը»։

Սակայն հիմա մեզ հետաքրքրում է մի այլ հարց. ի՞նչ դեր է կատարել պրոլետարական բանաստեղծի կյանքում Սեդրակ Շահումյանը։ Հակոբյանի վկայությամբ այդ դերը հսկայական է։ Շահումյանն ու Հակոբյանը մոտիկ բարեկամներ էին և հաճախ էին գրում իրար։ Նրանց նամակագրության գլխավոր նյութը, ասում է Հակոբյանը, գրականության էր։ Շահումյանն իր նամակներում արձագանքում է Հակոբյանի առանձին բանաստեղծություններին ու ողջ ստեղծագործությանը, խոսում Նուշանիկ Կուրղինյանի մասին, որը ռևոլուցիայի տարիներին խիղախ, ռևոլուցիոն բանաստեղծություններ էր գրում։ Շահումյանը խիստ հետաքրքրվում է Հակոբյանի ստեղծագործությամբ, դիտողություններ է անում, քննադատում, խորհուրդներ տալիս, մի խոսքով նրա ստեղծագործական ամի համար պայմաններ ստեղծում։ Շահումյանը աքսորից էլ նամակագրություն ուներ Հակոբյանի հետ։ 1912 թվին գրած մի նամակում կարդում ենք.

---

[1] „Доктябрьская Правда“ об искусстве и литературе. Подготовил к печати С. Брейтбург, 1937, стр. 13.

«Սիրելի Հակոբ.

Անվիճ բարևներ քեզ և ընտանեքիդ Վոլգայի ափերից։ Մի երկու օրից ճանապարհներս շարունակում ենք Վոլգայով, որ մի տեղ սարքվենք (հասցես կուղարկեմ)։ Առողջությունս և տրամադրությունս լավ են։ Այսօր Աշտարհ հետ հիշում էինք քեզ։ Գիրքդ բաքու ստացա, շատ շնորհակալ եմ։ Լալ եմ քննադատությունից[2] դժգոհ ես, բայց իզուր։ Իմ կարծիքով լավ հոդված է։ Ջերմ բարևներով և համբույրներով։

Քո՝ ՍՏ. ՇԱՀՈՒՄՅԱՆ»։

Եվ ապա մի ուրիշ նամակում.

«...Ինչպե՞ս է քեզի ու հալը, մի տարի է համարյա ինչ որ քեզանից նամակ չեմ ստանում, կարոտել եմ նամակներդ։ Գրիր, ինչ կա...

Քո՝ ՍՏԵՓԱՆ»։

Այս բարեկամական հարաբերությունները զուր չանցան Հակոբյանի համար։

«Այստեղ միամտանակ պիտի հայտնեմ,—գրում է Հակոբյանը,—որ Սեդրակ Շահումյանի ազդեցությունը որպես մարքսիստական գրական ու գեղարվեստական գրականության քննադատի, որպես մի կախարդական ուժի, քիչ ազդեցություն չի արել իմ հետագա գրական գործունեության վրա... Որքան Սեդրակի նամակները, նույնքան նրա հետ ունեցած կենդանի խոսակցությունը ոչ պակաս արժեքավոր էին ինձ համար գրականության շուրջը տեղի ունեցած մեր հարաբերությունների ժամանակ։ Երբ արձանագրվեր այն ամենը, ինչ արտահայտում էր նա գրականության շուրջը տեղի ունեցած կենդանի խոսակցության ժամանակ, անշուշտ այդ գրագրի գրույցներից ու առողջ քննադատական դիտողություններից մի խոշոր գիրք կկազմվեր» (ՀԼՊարտակից, 1925, № 216—18)։

---

1 Նույնպես։

2 Խոսքը Ա. Կարինյանի հոդվածի մասին է բոլշևիկյան «Նոր խոսք» հանդեսի 1912 թվի, № 5 համարում։

3 «Գրական թերթ», 1935 թ.։

Բանաստեղծի այս խոսքերը, նրա խոսատվանությունը բավական ցայտուն կերպով ցույց են տալիս Շահումյանի խոր հոգատարությունը, սերը դեպի պրոլետարական գրականությունը, գնալ բանաստեղծ ընկերը: Նա ալյուրը հեռուում էր Հակոբյանի ստեղծագործությանը և նպաստում նրա ճաշակորոնան ու ածիկն վերհիշում ես ռևոլուցիայի մեծ առաջնորդների՝ Լենինի ու Ստալինի, հոգատար վերաբերմունքը Մաքսիմ Գորկուն: Շահումյանի վերաբերմունքը մարտիկ բանաստեղծին իրոք հիշեցնում է Լենինի ուշադիր, հոգատար վերաբերմունքը Գորկուն: Լենինից հետո այդպիսի հոգատարությունն ցուցաբերեց ընկեր Ստալինը ոչ միայն Գորկուն, այլև բոլոր սովետական դրողներին:

Շահումյանի վերաբերմունքը Հ. Հակոբյանին հիմնված է բոլշևիկյան սկզբունքային դիրքերի վրա: Սրը նացիոնալիստական ինտրիգներից ներկայացուցիչներն սկսեցին հալածել Հակոբյանին, վարկաբեկելով նրա պոեզիան, փորձեցին նվաճելոնել նրա գերը հայ գրականության մեջ՝ Շահումյանը բաղաքից այդ փոքրոգի ինտելիգենտների դեմ, որոնք Գորկուց թաքցրել էին պրոլետարական հայ բանաստեղծին, և մերկացրեց նրանց նացիոնալիստական էությունը: Հայ գրականության ուսաբնեն ժողովածուի մասին գրած հոդվածում Շահումյանը ավել է Հակոբյանի ստեղծագործության գալյուն բնութագիրը, որ բացի դրանից ունի սկզբունքային մեծ նշանակություն. «...մենք ասում ենք,-մեր մեջ կա մի սոքրոդ հայարական խավ, որի հաճար Հան. Հակոբյանը ճանաչված բանաստեղծ է,—դրում է Շահումյանը: Նա հայ բանվորության շարվերի և ուղեվորությունների արտահայտիչն է, նրանց ոչխատանքի ու կյանի երգիչը: Եթե այդ բանվորությունը ունի որևէ նշանակություն հայկական կյանքում, նրա բանաստեղծը անշուշտ պետք է տեղ գտներ այդ ժողովածուի մեջ: Մաքսիմ Գորկու աշխատակիցները ոչ միայն պետք է հանձնաժողովին, որ այդ հարկավոր է անել, այլ պետք է ուղեվորությամբ անհին այդ եվ անկասկած, Հակ. Հակոբյանի վիրջին ստեղծների գրածներից կարելի էր մի գեղեցիկ ժողովածուն կազմել ժողովածուի հաճար (Ս. Շահումյան, Երկեր, հ. II, էջ 79—80):

Սա Հակոբյանին, նրա ստեղծագործությանը տրված բարձր գնահատական էր և հզոր պաշտպանություն պրոլետարական գրականության թշնամիների դեմ: Այդ բոլշևիկյան սկզբունքային վերաբերմունքի հետևանքը հոգ այն, որ Հ. Հակոբյանը դարձավ հայ պրոլետարական գրականության հիմնադիրն ու դասատուն ներկայացուցիչը և իր ստեղծագործությամբ օգնեց ժողովրդական զանգվածների ռևոլուցիոն դաստիարակությանը: Այդ սկզբունքային պարտիական վերաբերմունքը չէր բացատրում Հ. Հակոբյանի ստեղծագործության թերությունների քննադատությունը:

Այդ ստումով Շահումյանի դիտողություններն ևնար ամենից պահանջ լուսաբեցնողում դատ արժեքավոր են բոլոր կողմերով: Դրանք ցույց են տալիս ոչ միայն մեծ ռևոլուցիոների հոգատար վերաբերմունքը դեպի ընկեր գրողը, այլև այն սկզբունքային պահանջկոտությունը դեպի գեղարվեստական երկը, որն անհրաժեշտ նախապայման է իսկական, մեծ արվեստի, նրա կատարելության համար:

Նրա բազմաթիվ արժեքավոր նկատողություններից մեկը, որտեղ մանրազնին ուսումնասիրությունը կարող է դատ բան տալ Շահումյանի էսթետիկական հայացքներն ուսումնասիրողին, հետևյալն է. «Հանգիստ ոտքի էր, ոտքերդ էր, ջուր լալի էր որանումների հետ միասին՝ պոեմի իրական թերությունները ցույց տվող նկատողություններ՝ տանհարթ էր, տանհամանալի էր, տոզը անկանոն էր, ճնահատասությունը ուղիղ չի կազմված և այլ պատճառով պարզ չի միտքը, ոչավ չէ միտքը, անհամանալի էր և այլն:

Այս բոլորը անհերքելի են դարձնում այն ճշմարտությունը, որ ճնական, լեզվական թերություններ դատ են միասում երկի առաջ զարգացման բոլշևիզմության, նսեմացնում նրա արժեքը, անհամանալի դարձնելով ընթերցողների հաճար:

Շահումյանը պարզաբանում է ոճական միասության ու

ժիտանավոփյան սկզբունքը։ Նա դեմ է՝ որը Հանգի համար զոհվում է ժիտքը։ Դա երևում է քնկուռ այն նկատողություններից, որ նա անում է Հակոբյանի հետևյալ խոսքերից հետո.

Կարծես որոնում մի ավար գաղանի,
Գաղանի մի ավար, ուր սեղն հոգին
Երանելի զգար ու չար մահաբար՝
Ոչ մի ափսոսանք չէր առաքանար.

Անհայտ այս քառյակի ընդգծած տողերի դիմաց գրված են հարցական նշաններ, որպես բացասական վերաբերմունքի արտահայտություն։ Նույն այդ քառյակի դիմաց, դիմելով պոեմի հեղինակին, Շահումյանը նկատում է. «Ի՞նչ է նշանակում՝ ո՛չ մի չէր առաքանա ափսոսանք։

Դարձյալ չիմանալի համար ասել ես. «առաքանար»—Հաստատական խառնուրդ ոճի մեջ, (Եղիշեիկ) կատրելյանն էլ է ինչ ասելիս այդ»։

Ահա այսպիսի իմաստալից դիտողություններ է արել Շահումյանը Հակոբ Հակոբյանի պոեմի լուսանցքներում։

Ի՞նչ նշրակացության պետք է գալ այդ «նկատողություններից»։ Դրական նրի ձեև ու բովանդակությունը պետք է ներդաշնակ լինեն, ձը միասնական, հավատակ դեպքում նույնիսկ առաջադեմ գաղափարների ներկայացուցիչ գրողը, որի գրական կուլտուրան և վարպետությունը բարձր լեն, չի կարող իր գաղափարները մարմնավորել համապատասխան էմոցիոնալ պատկերներով և դրանով ուժեղացնել նրանց ազդեցությունը։ Գրական կուլտուրայի պակասը, լեզվի, պատկերների ու համեմատությունների թերությունները բացասաբար են անդրադառնում գրվածքի գաղափարական բովանդակության վրա։ Այդ նկատողություններն, ըստ էության, նշանակում էին պայքար՝ գրականության, հատկապես պրոլետարական գրականության գաղափարական ու գրական բարձր որակի համար։ Դրանումն է նրանց խորը արժանիքը և կարևոր նշանակությունը, նրանցից բխող անհրաժեշտ պահանջը։

Այս քննության բացի, պետք է նշել, որ Հակոբյանի շուրջը գեռ ուռուցիկորեն առաջ հավաքվեցին մի խումբ երիտասարդ գրողներ, որոնք նրա գլխավորությամբ հրատարակում էին իրենց ժողովածուները և այդպիսով սկիզբ դնում պրոլետարական գրական շարժման։ Հակոբյանի խմբագրությամբ 1914 թվին լույս տեսան պրոլետ-գրողների երեք ժողովածու («Կարմիր մեխակներ», I և II պրակ, և «Բանվորի ալբոմ»)։ Հակոբյանի հետ դրանց մասնակցում էին՝ բանվոր գրամատուրգ Ալ. Վարպետյանը՝ հեղինակ «Գործադուլ» պիեսի, որը գեռ այն ժամանակ հարցություն ուներ, երիտասարդ արձակագիր Պրոտիկ, բանաստեղծ Կամարին և ուրիշները։ Այս բանվորական հրատարակությունները արժանացել են նախահոկտեմբերյան «Պրավդա»-ի և «Վալչար»-ի դրական կարծիքին։ «Պրավդա»-ն իր երկտողում հաղորդում է, որ մի խումբ հայ բանվորների նախաձեռնությամբ ստեղծված հայ իրականության մեջ առաջին միակ պրոլետարական հրատարակությունը և որ վերջերս լույս տեսան երեք պրակ, այդ թվում և Գորկու երկու հեքիաթը և «Կարմիր մեխակներ» փոքրիկ ժողովածուն։ «Վերջինս հպող է կազմված հայ «բանատեղծ Գորկին»—Հ. Հակոբյանը արտաքուստ անամվոմն, բայց խոր զգացմունքով համակված բանաստեղծություններ մեջ պատկերում է Հզոր գործարանի՝ մեքենաների ղողրդ, Հնոցի բոց, բանվորների սիլուետներ և այն անզգրտում ժխորը, որ առուտ պոռիկումներ ու ձգտումներ է առաջացնում... Ժողովածուի մյուս աշխատակիցները սկսնակ գրողներ են։ Ժամանակակից կյանքի հակադրություններ, մեծ քաղաքի փողոցի դիշերը, պայքար, հանգրվան—ահա այն ժտրիմները, որ ուրվագծել են ժողովածուի հեղինակները մի քիչ անհարի, բայց խիստ անկեղծ ու ճշմարտացի։ Հետաքրքրական է երիտասարդ գրող Վարդանյանի «Լուրվականներ» էսքիզը։ Հեղինակն ընդհանուր գծերով ուրվանկարում է շուկաների ու բազարների պատկերները։ Այստեղ

---

1 «Воскресенская «Правда» об искусстве и литературе", 1937, стр. 76.

խոսքը ժողովածուի լոկ մի մասի մասին է։ Գալիքում Քնարը իր ուշադրության մեջ նույն ոգով է գնահատում հայ պրոլետարական գրողների երեք ժողովածուները.«Մեր դիմորոշ քանասաղծ Հակոբյանի նախաձեռնությամբ և խմբագրությամբ լույս տեսած այս փոքրիկ ժողովածուներն արժանի են խրախուսանքի։ Ժողովածուներում խմբված գրողները, բացի Հակոբյանից, նոր են մեր գրականության մեջ, նոր է և նրանց խոսքը։ Նրանք քաղաքի գրողներ են և արտահայտիչ բանվորական զեմոկրատիայի ոմնեղերին։ Սայս խոսելով, որ վերջերս պրոլետարական արվեստը քաղաքացիական իրավունք է ստացել, ինչպես Արևմտյան Եվրոպայում, այնպես էլ Ռուսաստանում, և ունի խոշոր ներկայացուցիչներ՝ Մաքսիմ Գորկին և ուրիշները, գրախոսականի հեղինակը ճիշտ նշում է. սկզբ անշուշտները բավական են, որ մենք հայտարանանք պրոլետարական գեղարվեստով և հավատանք նրա ապագային։ Մեր ժողովածուների երիտասարդ գրողները պրոլետարական արվեստի ասպարեզում համեստ ուժեր են, սակայն նկատի առնելով հայ իրականության սպանիչ մթնոլորտը, մենք ամբողջ սրտով ողջունում ենք նրանց առաջին քայլերը։

Անցնելով առանձին հեղինակների՝ գրախոսը բնութագրում է Հակոբ Հակոբյանի «Քաղաքը բանվորությունը, Արտաշես Մանր պատմվածքները (վերջն և այլն). Այս փոքրիկ պատմվածքները թարմ ու գեղեցիկ տաղանդի կնիքը են կրում... Արտաշես գույները թանձրացրել են, բայց և որոշ նրա ամեն մի տողից բուրում է ազնիվ, լավատես ձգտումներով լի տրամադրություն։ Արտաշես պետք է մշակի և զարգացնի իր համակրելի տաղանդը։ Նա սպասում ունի։»

Բոլշևիկ գրախոսի՝ Ա. Մռավյանի, գնահատությունն իրականացավ. Արտաշես, ինչպես և բանվոր գրամատուրգ Ան. Վարդանյանը՝ «Փորձադուշ և սրամիտ մի-երկսակնոցներ պիեսների հեղինակը, որ նույնպես գրական գնահատական էր ստացել գրախոսականում, դարձան լավ գրողներ և մինչև

---

1 «Գալիքը», № 3, 1913 թ.։

հիմա արդյունավետ աշխատում են այդ ասպարեզում։ Նրանք սովետահայ գրականության ակնառոր ներկայացուցիչներից են և Հ. Հակոբյանի հետ քիչ բան չեն արել նրա սիզբնավորման ու զարգացման համար։ Ժողովածուի մյուս մասնակիցներն էլ գրական ու խրախուսիչ գնահատական ստացան։

Այս փաստերը ցույց են տալիս, որ քե՛ բոլշևիկյան «Գրավոնան և քե՛ առոլական բոլշևիկները ուշադրությամբ հետևում էին պրոլետ-գրականության ծագմանը, ստեղծությունն էին դարձնում նոր կարդերին ու նպաստում նրանց գեղարվեստական զարգացման։ Շահոյանի դերն այս գործում հսկայական էր։ Իր մշտական խորհուրդներով ու քննադատություններով նա օգնում էր Հ. Հակոբյանին, ուղղորդում տալիս նրա տաղանդին, աջակցում Արտաշ ամեն, խրախուսում Վարդանյանի գրամատուրգիական փորձերը։ Եվ այժմ այդ երեք գրողներից յուրաքանչյուրը իր հատուկ տեղն է գրավում հայ գրականության պատմության մեջ։ Նրանց, մանավանդ Հ. Հակոբյանի, դերը երիտասարդ սովետահայ գրականության ձևավորման ու զարգացման գործում չափազանց մեծ էր Հ. Հակոբյանի պոեզիայի ազդեցությամբ են իրենց քանասաղծական գործունեությունն սկսել շատ երիտասարդ պոեմներ, որոնք անվանի են այժմ և դասական վայրերում են սովետահայ ընթերցողի սերը։

Շահոյանի աշխատանքն ու հոգատար վերաբերմունքը զուր չանցան գրականության ասպարեզում, իրենց հիանալի արդյունքը տվին, և դա բավական է։

Շահոյանը և Սուրեն Սպանդարյանը նոր երևույթ էին հայ իրականության մեջ։ Երբ մենք վերանայում ենք ամբողջ հայ գրականության զարգացման ուղին, նոր մարդու կերպարն ենք փնտրում այնտեղ՝ բոլշևիկ ռևոլյուցիոների կերպարը չենք գտնում։

Ռուս գրականության մեջ բոլշևիկի կերպարը արտահայտության գտավ Մաքսիմ Գորկու ստեղծագործության մեջ։ Այդպիսի երևույթ չկա նախահոկտեմբերյան հայ գրականության մեջ։ Գրոլետարական գրող Հակոբ Հակոբյանը մի-

ժիայն բանասաեղծություններ է գրել. ռևոլուցիների կեր-պար տալու փորձ նա չի արել։ Սնոր առավոտ պոեմը այդ հարցը չի շոշափում. այդպիսի խնդիր չի դրել Հնդիանուր Պոեմի հիմնական գաղափարը ձիրտ է բացահայտել Սպան-դարյանը իր գրախոսականի մեջ՝ անձնականի բախումը հա-սարակականի հետ. դա է պոեմի հիմնական գաղափարը։ Իսկ ձյուս պրոլետարական գրողների ի միմանի չէին այդպի-սի խորը, բարդ ու դժվարին գործ ստանձնել, ցույց տալ Նոր մարդու՝ բոլշևիկի կերպարը։ Իսկ մեր ականավոր վի-պասանները այդպիսի խնդիր չէին առաջադրում և չէին կա-րող առաջադրել։ Ինչո՞ւ, ո՞րն է դրա պատճառը։ Այս հար-ցին պատասխանում է Շահումյանը։ Սուրեն Սպանդարյանի մասին դրած բնութագրի մեջ նա ասում է. «Ամբ իրականու-թյան համար Սուրեն Սպանդարյանն իր կյանքով և իր ծա-ռով մի նոր երեույթ է, անսովոր ու անհասկանալի հին-հին գաղափարներով սնված մարդկանց համար։ Նրան չէր կա-րողանա հասկանալ մեր հազգային գործիչն ու հրապարա-կախոսը, նրա հոգին ու կյանքը չէր կարողանա բմբռնել ու ձիարագրել հայ վիպասանը»։

Չէ՞ որ Սպանդարյանը, ինչպես և Շահումյանը բացա-ռիկ երևույթներ չէին։ Նրանք ներկայացուցիչներն էին այն նոր սերնդի, որը XX դարի սկզբին արդեն պատվավոր տեղ էր գրավել այդ ժամանակվա հայ իրականության մեջ, ուժգին կրակ էին բաց արել սկերեցական խավարապաշտության, հետամնացության ու սահմանափակության դեմ։ Բոլշևիկների աշխատում էին բոլոր ժողովուրդներին, այդ թվում և հայ ժողովրդին, դուրս բերել զարգացման լայն ուղի, ազատել նրան ազգայնության ու ռդիտության ճանկերից։ Ժողովուրդ-ների ընդհանուր առաջադիմությունը, նրանց գիտությունների-ի ու կուլտուրաների ծաղկումը. ահա թե ինչին էին ձգտում և ինչ էին ուզում բոլշևիկները՝ XX դարու այդ մեր մարդիկը։ Եվ երբ տեսնում էին, որ հայերի պես հին ու կուլտուրական մի ժողովուրդ ընկել է ազգայնության ու ռդիտության մեջ, ամբողջ սրտով ցավում էին նրանց, պայքարում նրա հա-սարակա-քաղաքական հասունությունն արգելակողների դեմ,

հետադիմական գաղափարախոսության մերկացնողի դեմ, ժլատությանդեմ ու ազգայնականության դեմ, որը հայ բուրժուական ու մանր-բուրժուական ինտելիգենցիայի սահմանափակության հոմանիշն էր։ Սրտի ցավով Շահու-մյանը գրում էր.

«Մենք շատ անգամ լսել ենք առանձին հայ անհատների բոցկից մի հուսահատ բացագանչություն. «Ինչ սիրացու-ազգ ենք հայերս...» Եվ դա մի աղաղակող ճշմարտության է։ Տիրապետությունը մեզ խեղդում է։ Վերցրեք մեր ժողովրդական ուսուցչին, մեր հասարակական գործիչներին, հրապարակա-խոսներին, վիպասաններին և նույնիսկ բանասաեղծներին։ Վերցրեք մեր դպրոցը, մեր մամուլը։ Ամեն տեղ սարսափելի սիրացություն։ Մեր ամբողջ հասարակական կյանքը կազմ-ած է սերտերների փարատաներից, ամեն բան պատվում է ին-ձիամտի տուրքը։ Ու մի հետաքրքրություն դեպի քաղաքական հարցերը, դեպի պետական կյանքը, դեպի նուիրեալ սեռա-կան ինքնավարության օրգանները։ Թերթեցեք մեր պարբե-րական հրատարակությունները (մոտավոր մինչև 1905 ին-վը. այդ ինչ շատ բան փոխեց մեր կյանքում) և դուք կտեսնեք, որ բացի ծխական, հոգեաբանական, քահանայա-կան հարցերից ոչ մի հարց, ոչ մի հետաքրքրություն։ Ինչո՞վ բացատրել հայկական այս սիրացությունը, այս ապրի-սիրվը։ Համամասխեցեք, որ այդ բոլորը, մեծ չասենք ծնունդ է հայկական ազգային-կուլտուրական ավտոնոմիայի, դրան շատ ջնասական կերպով կապված է նրա հետ» (Երկեր, հատ. II, էջ 46)։

Շահումյանին քաջ հայտնի է, որ հայ իրականության այդ սիրացությունը, քաղաքացնությունը, ռուտինը սոցիալ-տնտեսական ու քաղաքական կռնկրետ պատճառներից ճե, յայլ և այնպես ևևկռնեցու՝ էլմիածնի, խավարամտության, քաղաքացնության ու սիրացության այդ սիմվոլի դեմ ան-վիճելի է։

Հանդես գալով հայկական ավանդական մեծամտության ու գոռոզության դեմ՝ Շահումյանը նշում է, որ վիրաիները

քեն իրենց էվոլիւծիոնը չեն ունեցել, բայց զգալիորեն ավելի առաջ են հայերից, և բացատրում է այդ հետաքննացության պատճառները։

Իհարկե, մեր համեմատությունը շատ սահմանափակ և պայմանական նշանակություն ունի։ Հայկական ու վրացական կյանքի տարբերությունները ամենից առաջ որոշ տնտեսական-դասակարգային հարաբերությունների և որոշ քաղաքական գործոնների արդյունք են։ Բայց որչափ դեր են կատարում առհասարակ դարերը, մասնավոր, ազգային-հոգեբանական հատատումների այս կամ այն ձևը, չի կարելի ժխտել, որ հայերի հետաքննացության, ապրիորիզմի և տիրացության մեջ մեծ դեր է խաղացել էվոլիւծիոնը, մեր տասդմայինս ազգային-կուլտուրական ավտոնոմիան (նույն տեղ, էջ 47)։

Այսպիսի անողոքությամբ էր պայքարում Շահումյանը հայկական քարացածության, հետամնացության ու նացիոնալիզմի դեմ, նրա կռիվները գրականության ու չափանիշների դեմ։ Այդ պայքարը բացառիկ մեծ նշանակություն ուներ, մի կողմից, բազմազգ Անդրկովկասի մարքսիզմ ուղղություն ուժերի կազմերն ամրացնելու ու նրանց համախմբելու, մյուս կողմից հայ ժողովրդի կուլտուր-քաղաքական վերելքի և առաջադիմության, նրա ժողովրդական և իրոք ազգային կուլտուրայի ու գրականության ծաղկման համար։

Շահումյանի այդ քննադատության մեջ անհամեմատ ավելի շատ ու անկեղծ հայրենասիրություն կա, քան բոլոր պաշտոնական դեկլամատոր գրչակների «ազգասիրական» ողբերում։ Խոսկան հայրենասերն ու ժողովրդասերը Շահումյանն է, որովհետև նա պայքարում է ժողովրդի առաջադիմությանը խոչընդոտող, արգելակող ռեակցիոն ուժերի և նրանց գաղափարախոսության դեմ։

Հայկական իրականության, հատկապես ինտելիգենցիայի հետամնացության, տգիտության ու հնամոլականի նացիոնալիզմի այս խիտ, բայց իրավացի քննադատությունը անհրաժեշտ նախապայման էր և հող էր պատրաստում մարքսիզմ-լենինիզմի տարածման և նրա դիրքերի ամրապնդման համար հայ իրականության մեջ։ Եվ այդ մեծ ու դժվարին աշխատանքը ծանրացած էր Շահումյանի, Սպանդարյանի, Մռիկյանի և ընկեր Սահակի պես մարտական գիտնականների ուսերին։

Հայերեն մարքսիական գրականությունը և հատկապես Շահումյանի ու Սպանդարյանի գործունեությունը իրենց խորը հետքերն են թողել հայ հասարակական կյանքի ու մտքի զարգացման վրա և մինչամանակ բարերար ազդեցություն են ունեցել հայկական ինտելիգենցիայի առաջադեմ տարրերի վրա, օգնել են նրանց՝ ազատագրվելու նացիոնալիզմի և այլ խորթ գաղափարների ազդեցությունից, իրենց բանակը կապելու պրոլետարիատի ազատագրական պայքարի հետ։

Այս առումով չափազանց կարևոր փաստ է նշանավոր հայ բանաստեղծ Վահան Տերյանի խոստովանությունը։ Նա իր մասին հանդիպումն հիշողությունների մեջ, գրված 1919 թվին՝ պատմում է, թե ինչպես իրեք լցված է նացիոնալիստական և մանր-բուրժուական նախապաշարումներով և խորթ է նրան Շահումյանի աշխարհայացքը, բայց և այնպես ...ժամ տարօրինակ ուժ գրավում է դեպի այդ զգանձելի մարդը։ Ես միշտ հիշել եմ նրան, մի տարօրինակ համակրանքի զգացմունքով, միշտ զգացել եմ նրա հմայքի ուժը» (Երկեր հ. IV, էջ 347)։ Շահումյանի հանդեպ տածած այդ անսահման համակրանքը և նրա հմայքի ուժը, որն ըստ Տերյանի վերջինիս աշխարհայացքի ուժն է եղել, թվի դեր չի խաղացել հավանաբար այն վճռական շրջադարձի մեջ, որ կատարեց պոետը, դուրս գալով խորթ ազդեցություններից և իր բանաստեղծությանը կապեց բանվոր դասակարգի, Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի բախտին։ Այս խոստովանությունը շատ պերճախոս է։ Նա որոշ առումով լույս է սփռում նաև այդ հարցի վրա, թե ինչպես հայ ինտելիգենցիայի, հատկապես գրողների առաջավոր մասը՝ Բուռնյան, Հովհ. Հովհաննիսյան, Իսահակյան, Երիվանդազան, Նար-Դոս և այլն,

Հանճարեղորեն հեղափոխական շրջադարձ կատարեցին դեպի Սովետական իշխանությունը՝ Հայաստանում։ Այս փաստի, հայ գրողների և ինտելիգենցիայի զգալի մասի այդ շրջադարձի մեջ չի կարելի չտեսնել բանվորական ռևոլյուցիոն շարժման, հատկապես 1917 թվի Հոկտեմբերյան Սոցիալիստական ռևոլյուցիաների ազդեցությունը։ Չի կարելի չհանձնել այդ փաստի մեջ և այն բարերար ազդեցության արդյունքը, որ ստորին շարժման գործել են հայ հասարակական ու մտավոր կյանքում Շահումյանը, Սպանդարյանը, Միհրյանը և միւս հայ մարքսիստները ու մարքսիստական մտավոր ընդհանրապես։ Այդ ազդեցությունն ավելի ուժեղ է եղել, քան նրա մասին խոսվել է։ Ավելի հիշում այդ հարցը միևնույն ալժմ էլ դեռ չի էլ բարձրացվել։

Շահումյանը և Սպանդարյանը, ինչպես և միւս բոլշևիկները, ոչ միայն հանդիսացել են հայ գրականության ու գեղարուեստի լավագույն առաջադիմական, դեմոկրատական ստղծողիչանների ժառանգորդները ու պաշտպանները,—այլ անկեղծ հրամում է ինկուզ Շահումյանի հոդվածներից, զեպի Նալբանդյանն ունեցած նրանց վերաբերմունքից,— այլև իրենց հերթին նպաստել են հայ գրականության առաջադիմական ձգտումների ու քննադատական ուժիմի զարգացմանը, սրելով գրողների ուշադրությունը հասարակական կարևոր հարցերի վրա։

Այս առումով չափազանց խոշոր է, բայց դեռևս չստուգնաիրված և ճանրաժեղա չափով չգնահատված, հայ մարքսիստական մտավոր և հատկապես Շահումյանի, Սպանդարյանի հրապարակախոսական քննադատական ելույթների դերն ու նշանակությունը։

Սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակը և Հայաստանում սովետական իշխանության հաստատվելը ուժեղ մեծ ժողովրդի օգնությամբ՝ վերջնականապես որոշեցին հայ ժողովրդի ճակատագիրը։ Նախկին հայ իրականության քարացածությունից ու հետամնացությունից, որ այնքան արգելարգել էր Շահումյանը, հետք անգամ չի մնացել։

Շահումյանի և հայ ժողովրդի միտս հավատարիմ գավակների պայքարը զուր չանցավ։ Հայ ժողովուրդը հաղթեց ազատ ու երջանիկ կյանքի համար մղած պայքարում։ Այդ պայքարի ճանապարհին, ինչպես ձիշտ նկատում է տաղանդավոր բանաստեղծ Նարեկ Զարյանը.

> Փայտատից մատաղուրում Նալբանդյանի բոց հոգին,
> Նաչեց անմահ Գարնյանի ծաղրի ժորանի ահագին,
> Մեծ Լոռեցին իր քրնարով և՛ թաղցրախոս, և՛ ցավոտ,
> Ուրացո՞ն երգեց ու երազեց բեզ մի խաղաղ առավոտ,—
> Միևնույն կամքի ծովից բոլշևիկյան մի սեռունդ,
> Անցած, գալիք սերունդների կարծաքի փայլն աչքերում,
> Սպանդարյանը բոցաղոյն և Շահումյանը պայծառ,
> Որ Լենինի ու Մայիսի պատգամներով փրկաբար
> Տարան կորած իր կարավանն ու մոլորված իր ուղին՝
> Միացնելու ազիիանաժուի դաստակերդի գրոհին։

Հաղթական «դասակարդի դարձը» Լենինի—Մայիսի մեծ պատերազմի ղեկավարությամբ՝ վերջնականապես փրկեց հայ ժողովրդին, Սովետական Միության ժողովուրդների առաքինյան բարեկամությունը ապահովեց հայ ժողովրդի ամենասիրական ու կուլտուրական վերելքը։ Առանձնապես անհամ-զարգանում են արվեստն ու գրականությունը։

Հայ ժողովրդի մեծ հաղթություններ սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում ցայտուն ապացուցել է այն բանի, որ միայն սովետական իշխանության գաղափարը կարող էր հայ ասատանին խաղաղություն և ազատություն բերել։ Հայաստանին խաղաղություն և ազատություն կարող էր բերել միայն սովետական իշխանությունը։ (ՍՏԱԼԻՆ)։

---

1 Ստալին, Երկեր, հ. IV, էջ 413։

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Ձեզ թերթելով Անդրկովկասի մինչհոկտեմբերյան բոլշևիկյան մամուլը՝ մենք համոզվեցանք հանդիսավոր պատճառաբանական ելույթների, հոդվածների, գրախոսությունների, հեռագրերի ու արժեքավոր ասույթների և կարծրերների առաձին գրուների և գրական երևույթների մասին։ Այդ ելույթների հավաքին ու ուսումնասիրելը հնարավորություն կտա ճիշտ որոշել Անդրկովկասի բոլշևիկների վերաբերմունքը նախահոկտեմբերյան Թուրատոյի գրական կյանքի խորը երևույթների, փոքր ժողովուրդների գրականության, և Տոլստոյի և Մաքսիմ Գորկու և, առհասարակ, պրոլետարական կուլտուրայի նկատմամբ։

Ընդհ. Սեպտեմբերի կռվից զգուշացված և մոռհեղում ծածկված Անդրկովկասի բոլշևիկները այդ հարցերը լուծելիս՝ ընթացել են լենինյան ուղիով, հանգես են եկել ուղիս լենինյան ճշտագրեների դեմ պաշտպանելու և ճեռնոպահանոթե ճեռնադրել են գրանք։

Բազմազգ Անդրկովկասում բոլշևիկները, ղեկավարելով Սոցիալիստ-դեմոկրատությամբ, բարձր պահեցին պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշը։ Անխնայորեն ջախջախելով և մերկացնելով ամեն փոխնի բուրժուական նացիոնալիստներին՝ նրանք այդ ազգությունների աշխատավոր մասսաներին համախմբեցին՝ ինքնակազության և կապիտալիզմի դեմ գրոհի նետնու համար։

Վինելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի իսկական կրողներ՝ բոլշևիկները խորը համակրանքով էին վերաբերվում փոքր ժողովուրդների ստեղծած կուլտուրական արժեքներին։ Անխնայորեն մարտնչելով բուրժուական նացիոնալիզմի դեմ՝ նրանք շատ լավ էին ըմբռնում, որ գրա հետ մեկտեղ չպետք է ղեն գցել ամբողջ ազգայինը» (Ստալին)։ Եվ նրանք հանդես էին գալիս այն ամենի պաշտպանի դեմ, ինչ արժեքավոր է և պրոգրեսիվ, ինչ ռևոլուցիոն է և դեմոկրատական՝ յուրաքանչյուր ազգի ազգային կուլտուրայի մեջ։ Բավական է վերհիշել բոլշևիկների և բոլշևիկյան մամուլի գործունեության այդ բնագավառից թեկուզ առանձին փաստեր հիշյալ դրույթը հաստատելու համար։

Բոլշևիկների կողմից ղեկավարվող հայկական սոցիալ-դեմոկրատական «Պայքար» թերթը, բնութագրելով բուրժուական նացիոնալիստներին, ասում էր անում, որ պատրոն նացիոնալիստները, ինչ ազգի էլ պատկանելիս լինեն, ընդանց էությունը, հոգին նույնն է, տարբերությունը մաշկի, ձևի մեջ է։ Մերկացնելով հայ նացիոնալիստներին հարևան ժողովրդի նկատմամբ զրպարտություններ տարածելու մեջ՝ թերթն իր առաջնորդողներից մեկում բարձր է գնահատում վրացական խորհ գրողներ Ի. Ճավճավաձեին և Ակ. Ցերեթելուն։

«Հայ ժողովուրդը,—կարդում ենք այնտեղ,—հայ ինտելիգենցիան շատ քիչ տեղեկություններ ունեն տաղանդավոր վիպագրող Ի. Ճավճավաձեի, վրաց ժողովրդի պարծանք բանաստեղծ Ակ. Ցերեթելու մասին, որոնց տաղանդը այնպիսի մարգարիտներ է տվել, որոնք պատիվ կբերեին ամեն մի կուլտուրական ժողովրդի։

Հայ մամուլը հնարավորություններ չունենաց հայ ժողովրդին՝ այդպիսի ծանոթության համար...

Հայ ազգայնական մամուլի համար ոչ մի նշանակություն չի ունեցել վերևում նշված հասարակական գործիչների կուլտուրական դերը վրացական կյանքում և այդ մամուլի շնորհիվ մեր ժողովուրդը նրանց ճանաչում է ոչ թե որպես խորհ

դրական գործիչների, այլ սոսկ որպես շովինիստների, որոնք ազգային ատելություն են սերմանել» («Պայքար», № 2, 1916 թ.)։

«Պայքար» թերթի առաջնորդող հոդվածից վերցված այդ խոսքերը տոգորված են իսկական ինտերնացիոնալիզմով, դեմ են եղբայրական ժողովրդի կուլտուրական արժեքները տածած սիրով և համակրանքով։ Այդպիսի սեր էին տածում բոլշևիկները և մյուս ճնշված ժողովուրդների նկատմամբ, որոնց կուլտուրական մեծ արժեքները փորձում էին մոռացության մատնել շահագործողի կոպիտ ուժի միջոցով կամ թե արատավորել գրանք շովինիստական աղաղակներով։ Բայց չհաջողվեց և՛ մեկը, և՛ մյուսը։ Ցարական Ռուսաստանի ժողովուրդները, չնայած ցարիզմի և նրա գործակալության բոլոր չարքերին, արդյունքում պահպանեցին իրենց ազգային կուլտուրայի գանձարանը։

Երբ անպատճառ դեպքանները խաղաթուղթի միջոցով ցանկացան գռեհկացնել ուկրաինական մեծ պոետ Տարաս Շևչենկոյին նվիրված երեկոն՝ «Հայտոկ-կապերկա» բանվորական ընտրը բոլշևիկ Ս. Սպանդարյանի հոդվածի միջոցով խիստ հանդիմարված ապեց այդ խաղատրշիկներին և Թիֆլիսի քաղաքային վարչության մեջ նստած նրանց հովանավորողներին։ Հանդիսավոր ներկայացման ժամանակ այդ դեպքանները, ինչպես նշում է հոդվածի հեղինակը, կատարեցին ամենագռեհիկ կաֆեշանտանային բովանդակության կուպլետներ և ժողովրդական բեմը վերածեցին կաֆե-շանտանի։ Այդ փաստի մասին Ս. Սպանդարյանը խոր վրդովմունքով գրում է.

«Եվ այդ գռեհկությունը տեղի է ունենում ուկրաինական մեծ բանաստեղծի, բազմատանջ պոետ, ժողովրդական գուսան Տարաս Շևչենկոյի մահվան հինսնամյակի օրը։ Այսպես մեծարեց հանճարեղ Կոբտի, գեղարվեստագետի ու գրողի հիշատակը ժողովրդական տունը, որ գանվում է Թիֆլիսի քաղաքային վարչության իրավասության տակ»[1]

Այդ խոսքերի մեջ արտահայտված է գերմ սեր դեպի եղբայրական ուկրաինական ժողովրդի կուլտուրայի մեծ ներկայացուցիչը։

Հարևան ժողովուրդների ազգային կուլտուրայի պաշտպանությանը նվիրված էջերը պատահական երևույթներ չէին. ընդհակառակը, միանդամայն օրինաչափ էին և բխում Լենինի—Ստալինի պարտիայի ազգային քաղաքականությունից։

Բայց առանձնապես կարևոր նշանակություն ուներ ռուս ժողովրդի առաջավոր և ռևոլյուցիոն կուլտուրայի պաշտպանությունն անդրկովկասյան բոլշևիկյան մամուլի էջերում։ Եթե բոլշևիկները կրքոտությամբ պաշտպանում էին ցարական Ռուսաստանի ճնշված ժողովուրդների իրավունքները և կուլտուրական արժեքները, ապա ավելի ուժգին պաշտպանում էին նրանք ռուս մեծ ժողովրդի կուլտուրական ժառանգությունը՝ հաշվի առնելով վերջինիս արտասովորական բացառիկ նշանակությունը բոլոր ազգերի աշխատավորական մասսաների համար։ Նրանք պաշտպանում էին ռուս մեծ ժողովրդի կուլտուրական հարստությունը ամենից առաջ հենց ցարական ռևանշիստներներից։ Բոլշևիկները, ղեկավար Ստալինի գլխավորությամբ, ռուս ժողովրդի ռևոլյուցիոն կուլտուրայի իսկական պահապանները և կրողները հանդիսացան Անդրկովկասում։

Ահա ինչ էր ասում ընկեր Ստալինի բարեկամ, աշակերտ և զինակից Ս. Սպանդարյանը 1911 թվին. «Մեր օրերում»,—արձագանքելով Լենինին գրում էր նա,—երբ Պետերբուրգում նիստեր է ունենում պետական երրորդ դուման, երբ ռուս գրականությունը նվաճել ու գրավել է ամբողջ աշխարհը, իսկ ռուսական գիտությունը պատվավոր տեղ է բռնել մյուս երկրների շարքում,—մեր համալսարանները, մեր պրոֆեսու-

---

1 Ս. Սպանդարյան, «Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր», 1939 թ., հրատ. էջ 283։

քան, մեր ուսանող երիտասարդությունը վերապրում են... Մոտալ ժամանակներ: Անցյալի բոլոր մութ ուժերը արշավանք են գործում համալսարանի դեմ, ազատ գիտության դեմ...

Սակը փորձություններ են պատրաստվում մեր գիտության, մեր համալսարանների դեմ, բայց և այնպես կենդանի ոգին, կենդանի սկզբունքը, անցնելով բոլոր տանջանքներից, դուրս կգան հաղթանակով և նորացած»[1]:

Այդ ֆոնի վրա Սունիան Շահումյանի՝ Լենինի—Մոսկվայի պարտիայի հավատարիմ զավակի գրա-քննադատական հոդվածները պատահական երևույթ չեն: Ռուս առաջավոր ու ռևոլյուցիոն կուլտուրայի պաշտպանության քնաքավառում բացառիկ տեղ են գրավում նրա գրա-քննադատական փայլուն հոդվածները ու արժեքավոր ասույթները Լև Տոլստոյի, Մաքսիմ Գորկու, ռուս ռևոլյուցիոն դեմոկրատների և առհասարակ գրական քաղաքականության մասին:

Բոլշևիկ քննադատը բարձր էր գնահատում գրականության և արվեստի դերն ու նշանակությունը մասսաների դաստիարակության գործում: Լինելով խորը գիտակ՝ նա իր քաղաքական պայքարում հմտորեն օգտագործում էր գրական երևույթները և կերպարները: Հոմերոսի, Գյոթեի, Պուշկինի, Նեկրասովի, Սայաթ-Նովայի, Հովհ. Թումանյանի և այլ գրողների առնչած պատկերները նա օգտագործում էր իր հրապարակախոսական ելույթներում՝ մեր պարտիայի թշնամիների դեմ: Նրա գրած հոդվածները բոլշևիկյան վերաբերմունքի պայծառ արտահայտություններ են դեպի փորձ ժողովուրդների գրականությունը, Լև Տոլստոյը և Մ. Գորկին և, առհասարակ, դեպի ռուսական գրականությունը:

Անդրկովկասի բոլշևիկները դաստիարակվել և աճել են ռուս մեծ ժողովրդի փառապանծ ռևոլյուցիոն ավանդությունների, ռուսական բանվորական շարժման հիման վրա:

Հայ ժողովրդի լավագույն զավակները՝ Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Ա. Մռկոյանը գրանցից են: Նրանք նույնպես զուգահեռ մասնակցում էին ռուսական ռևոլյուցիոն շարժման

1 Ս. Սպանդարյան, «Հոդվածներ, ճառեր, փաստաթղթեր», 1939 թ., Երևան, էջ 259:

ուղղությամբ և ընկեր Ստալինի ղեկավարությամբ անցնելով բոլշևիկյան դպրոցի միջով՝ դարձան մեր մեծ պարտիայի ականավոր գործիչներ: Նրանց առաջին ուսուցիչները եղել են Բելինսկին և Չերնիշևսկին: Պրոլ չէ, որ Շահումյանը, ինչպես և մյուս բոլշևիկները, այդպիսի անկեղծ սիրով և խոր հարգանքով էին վերաբերվում ռուս ժողովրդի այդ մեծ զավակներին:

Շահումյանի համար նրանք գրական մեծ հեղինակություններ են: Նա սրբությամբ պահում էր Բելինսկու և Չերնիշևսկու հիշատակը և հանդես գալիս որպես նրանց գրական-քննադատական ավանդների պահապան:

Շահումյանի գրա-քննադատական ժառանգության նշանակությունը մեծ է: Դա նախահեղափոխական բոլշևիկյան գրա-քննադատության փայլուն արտահայտություններից մեկն է: Շահումյանն Անդրիևիկյան իրականության մեջ, գրական քննադատության և մարքս-լենինյան գրականագիտության բնագավառում, խաղաց նույնպիսի դեր, որպիսին խաղաց Վ. Վորովսկին Ռուսաստանում, միայն այն տարբերությամբ, որ Շահումյանը գրականության հարցերում չունի մարքսիզմից կատարվող այն նահանջները, որ մասնացույց է արել Ա. Լունաչարսկին իր «Վարովսկին որպես գրական քննադատ» հայտնի հոդվածում:[1] Այդ նահանջները ամենևին էլ չեն նսեմացնում Վորովսկու հարուստ գրաքննադատական մեծ նշանակությունը, նրա մարտական հրապարակախոսական և բոլշևիկյան բնույթը: Ավելին. Լունաչարսկին այդ հարցին մոտեցել է միակողմանիորեն, չհաշտելով Վորովսկու քննադատական հոդվածների բնույթությունները՝ նա ուշադրություն չի դարձրել նրա քննադատության գրական կողմերին:

Վորովսկու համեմատությամբ Շահումյանի գրական-քննադատական ժառանգությունը կարող է զիջել քանակով, բայց ոչ որակով: Շահումյանը հանդես է բերում հետևողա-

1 Տե՛ս Վ. Վորովսկի, Երկերի ժողովածու, հ. II, 1931 թ., Լուսավորության Ներածական հոդված:

կան մարքս-լենինյան հայացքներ՝ գրական հարցերի լուծման ասպարեզում, և այդ հանգամանքը հատկապես արժեքավոր է գարձնում նրա գրա-քննադատական հոդվածներն ու ասուլիները։ Նրանք մտել են նախահեղափոխական բոլշևիկյան գրաքննադատության ոսկի ֆոնդի մեջ և պահպանում են իրենց նշանակությունը և մեր օրերում։

Շահումյանի այդ հոդվածների, ինչպես և այն ամենի հավաքումն ու հրատարակումը, ինչ արժեքավոր է անդրկովկասյան նախահեղափոխական բոլշևիկյան մամուլում՝ գրականության մասին, կօգնի ավելի խորը ուսումնասիրելու բոլշևիկյան քննադատության մարքս պատմությունը և համապիր կերպով ցույց կտա, որ ընկերը Ստալինի կողմից գաղտնաբարված Անդրկովկասի բոլշևիկները անց էին կացնում լենինյան գիծը գրականության բնագավառում, պաշտպանում էին պարտիական դիրքերը նաև կուլտուրայի հարցերում։

ՀԱՍԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
Նկիս խոսք	5
Ներածության փոխարեն	7
Գլուխ I. Սոնինան Շահումյանի գրական հայացքների ձևավորման մասին	16
Գլուխ II. Սա. Շահումյանի գրական հայացքների սեսական նախադրյալները	35
Գլուխ III. Գրականության ընդհանուր հարցերը Սա. Շահումյանի լուսաբանությամբ	62
Գլուխ IV. Լև Տոլստոյը Շահումյանի գնահատությամբ	103
Գլուխ V. Սա. Շահումյանը և Մաքսիմ Գորկին	125
Գլուխ VI. Սա. Շահումյանը և հայ գրականության պատմության մի քանի հարցեր	143
Ցուցակներ	224

Գլխ. խմբագիր՝ Ս. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
Շապիկը Կ. ՏԻՐԱՑՈՒՐՅԱՆԻ
Տեխ. խմբագիր՝ Հ. ՄԱՐՈՒՆՅԱՆ

Վ/Տ. 03574 Պատվեր № 386. տիրաժ 3000. Հեղ. 10,5, տպ. 14,5 մամ.։
Հանձնված է արտադրության 31/VII 1947 թ.
Ստորագրված է տպագրության 17/IX 1947 թ

ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պոլիգրաֆ. և Հրատ.վարչ.
№ 3 տպարան, Երևան, Աբաղյան № 65

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220031862

[In]
10 n.

II
A 31862